



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀՐԱՉՅԱ ԱԺԱՌՅԱՆ**

**ՔՆՆՈՒԹՅՈՒՆ  
ԿԻԼԻԿԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ**

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2003

Հրատարակության պատրաստեց  
**ՔՆԱՐԻԿ ԱԺԱՌՑԱՆԸ**

Խմբագիր՝ րան. գիտ. դոկտոր  
պրոֆեսոր **Ռ. Ս. ՂԱԶԱՐՑԱՆ**

Երևանի համալսարանի հրատարակչություն  
իր երախտագիտությունն է հայտնում  
**ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՑԱՆ**  
հիմնարկությանը, նրա Հայկական բաժանմունքի  
տնօրեն դր **ԶԱՎԵՆ ԵԿԱՎՑԱՆԻՆ**  
մեծանուն հայագետի անտիպ աշխատության  
տպագրությունը հովանավորելու համար:

**ԱԺԱՌՑԱՆ ՀՐԱՉՑԱ**

Ա 501

Քննությունն Կիլիկիայի բարբառի, Եր., Երևանի համալս.  
հրատ., 2003, 600 էջ:

*Մեծանուն հայագետի անտիպ աշխատություններից է: Առաջին մասում բնութ-  
քյան է առնվում Ջեյթունի և Հանրնի բարբառները, երկրորդում՝ Սվեդիայի  
(Մուսա լեռան) բարբառը: Բացի լեզվաբանական ուսումնասիրություն լինելուց  
այն պարունակում է աշխարհագրական և վիճակագրական համառոտ տեղեկու-  
թյուններ, գրական նմուշներ Կիլիկիայի բարբառից, բառարան, մատենագիտու-  
թյուն և այլն:*

Ա  $\frac{4602020100}{704(02)03}$  2003

ԳՄԴ 81.2 հ

197 209 128 1  
907 81 27  
108 1

## Ձ Ո Ն

ԵՐԵՎԱՆԻ ՀՈՅԱԿԱՊ ԲԱՐՁՈՒՆՔԻ ԳԼԽԻՆ,  
ՄԱՍԻՍԻ ԴԵՄ ՀԱՆԴԻՄԱՆ,  
ՆՈՐ ԶԵՅԹՈՒՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ՝  
ԶԵՅԹՈՒՆՑԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ  
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՍ



## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

# ԶԵՅԹՈՒՆԻ ԵՎ ՀԱՃԸՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ջեյթունի բարբառը քննության ձեռնարկել են 1910 թվականին, դեպի Պոլիս ամառային ճամփորդության ժամանակ: Պոլսում ծանոթացա Կեդրոնական վարժարանի բարձրագույն դասարանի աշակերտներ Օննիկ Մահտեսյանի և Հ. Յաղուբյանի հետ: Այս երկու երիտասարդները բնիկ զեյթունցի էին. առաջինը Պոզպայիր կամ Շորվայան թաղից, երկրորդը Ղարղըլար կամ Յաղուբյան թաղից, երկուսն էլ լավ հմուտ իրենց մայրենի բարբառին: Նրանց աջակցությամբ կազմեցի Ջեյթունի բարբառի բառարանը և քերականության ուրվագիծը:

14 տարի անց, երբ Երևանի պետական համալսարանում դասախոս էի, սկսեցի ուսումնասիրել Հաճընի բարբառը՝ պատմագրական բաժնի երկրորդ կուրսի ուսանող հաճընցի Արամ Գնդունի թոփչյանի և նրա քրոջ՝ Թագուհի Գնդունու աջակցությամբ: Նրանց հետ կազմեցի Հաճընի բարբառի բառարանը, որ նախորդի հետ դնում են աշխատությանս վերջում (1924թ.):

Հայկական ակադեմիայից, երկու տարի առաջ, առաջարկություն ստանալով կազմել Ջեյթունի բարբառի քննությունը, նորից ձեռնարկեցի կիսատ թողած աշխատությունս: Այս անգամ ինձ աջակից դարձավ նախ՝ Ջեյթունցի Դովլաթ Գարանֆիլյանը (նշանավոր գեղանկարիչ – գորգագործը) և երկրորդ՝ Լևոն Խաչատրյանը, Ջեյթունի Յաղուբյան թաղից: Հմուտ և սիրող իր մայրենի բարբառին, նա արդեն պատրաստած ուներ 164 էջից բաղկացած ձեռագիր մի տետրակ, ուր հավաքել էր Ջեյթունի բարբառում գործածական 1506 հայերեն և թուրքերեն բառեր, հանելուկներ, առածներ, քերականական տեղեկություններ (հոլովում և խոնարհում) և այլն: Այս տետրակը դրեց ամբողջապես իմ տրամադրության տակ:

Օգտվեցի նաև այն բոլոր հրատարակված գործերից, որոնց ցուցակը ընթերցողը պիտի գտնի աշխատությանս վերջում՝ մատենագիտության մեջ:

Ինքնին հայտնի է, հրատարակված նմուշները գիտական ճշգրտություն չունեն: Ես այդ բոլորը վերածել եմ գիտական ուղղագրության: Լ. Խաչատրյանը իմ ամբողջ աշխատությունը կարդացել է ուշադրությամբ, ինչպես նաև գրքի վերջում տրված նմուշները, և ուղղել նկատած բոլոր սխալները: Այնպես որ բոլոր բարբառային ձևերի ճշտության պատասխանատվությունն ընկնում է իր վրա, ինչպես որ ուղղագրության գիտական ճշտությունն իմ վրա: Ամբողջ չորս ամիս՝ իր շարունակական այցելությամբ օգնել է նա ինձ այս դժվար բարբառի ուսումնասիրության գործում: Առանց իր այս թանկագին աջակցության, աշխատությունս պիտի լիներ թերի և գիտական տեսակետից անճիշտ:

Հ. ԱՃԱՌԹԱՆ

Երևան,  
6 օգոստոսի 1948թ.:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ

Կիլիկիան հին հայկական մի տարածք էր, որ ձևավորվեց 11-րդ դարում: 1080 թվականին նա դարձավ անկախ պետություն, որ շրջակա բազմաթիվ թշնամիների դեմ համառ պայքար մղելով, շարունակեց իր գոյությունը 3 դար (295 տարի): Թագավորությունը կործանվեց 1375 թվականին, և Կիլիկիան եգիպտացիներին հպատակ դարձավ: 1482 թվականին օսմանցիները Կիլիկիային տեր դարձան և դեռ մինչև այսօր մնում են:

Օսմանյան շրջանում Կիլիկիայի գլխավոր քաղաքներն էին Ադանան և Մարաշը. մյուս գլխավոր ավաններն էին Սիսը, Հաճընը, Ջեյթունը. երկու նավահանգիստներն էին Մերսինը և Իսկենդերունը (Ալեքսանդրետը): Ամբողջ Կիլիկիայի հայ բնակչության թիվն էր 195000 շուրջ, որի մեծ մասը թրքախոս էր: Այսպես՝ թրքախոս էին դարձել Ադանա մայրաքաղաքը, Մարաշի կեսը, Սիսը, որ կաթողիկոսանիստ վայրն էր, Տարսոնը, Նիկտեն, Իսկենդերունը, Մերսինը և այլն: Հայախոս վայրերն էին Ջեյթունը, Հաճընը և Մարաշը. սրանց վրա ավելացնելով նաև Անտիոքի գյուղերը և Սվեդիայի (Մուսա լեռան) շրջանը, կարելի է կազմել մի բարբառային միություն՝ «Կիլիկիայի բարբառ» անվամբ:

Համաշխարհային պատերազմի ժամանակ տակնուվրա եղավ Կիլիկիան. հայության մեծագույն մասը չարաչար կոտորվեց: Հերոսական այն կովները, որ մղեցին Հաճընն ու Ջեյթունը, չփրկեցին նրանց: Մազապործ ազատված հայության վերջին մնացորդները քաշվեցին Սիրիա և Լիբանան:

Այսօր Կիլիկիայում ոչ մի հայ չի մնացել: Լիբանանում ապաստանած հայերը երկրի մայրաքաղաք Բեյրութում հիմնել են Նոր Հաճըն, Նոր Սիս, Նոր Ջեյթուն, Նոր Ադանա և այլ նման անուններով թաղամասեր: Նրանցից մի ստվար հատված գաղթեց Հայաստան: Նրանք Երևանի կողքին հիմնեցին Նոր Ջեյթունը, որ սկզբնական շրջանում ուներ 110 տուն և հետզհետե պիտի մեծանա նորանոր զեյթունցի հայրենադարձներով:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Զեյթունի բարբառը պատկանում է *կը* ճիւղին և գլխավոր անդամն է Կիլիկիայի բարբառի, որ իմ «Հայ բարբառագիտության» դասակարգության համաձայն գրավում է 10-րդ տեղը:

Կիլիկիայի բարբառի գլխավոր հատկանիշը *ա* ձայնավորը շեշտի տակ *օ*-ի վերածվելն է: Այս երևույթը ընդհանուր է Կիլիկիայի բարբառի բոլոր երեք անդամներին. այսպես, օրինակ, բանալ > Զթ. *բանալ*, կերթամ > Հճ. *գաշդոմ*, քաղաք > Մրշ. *քաղօք*: Սակայն Ադանան, որ Կիլիկիայի մեծագույն կենտրոնն է, չունի այս երևույթը: Ադանան թեև այժմ թրքախոս է, բայց հետևյալով այն մի քանի հայերեն բառերից, որոնք մնացել են դեռ Ադանայի թրքախոս հայոց բարբառում, *ա* ձայնավորը պահում է անփոփոխ: Այսպես են, օրինակ, *թելդրձանք* «թել-դերձան», *գառնդումբաք* «գառնադմակիկ», *յրդունգ մեղա՛* «եղուկ մեղա՛յ», *սգարանք* «զգացում», *ընքաքաք* «կնքահայր, կնքապապ», *հրամանքը* «հրամանքդ, Դուք», *հրաշք* «հրաշք», *ճար* «ճար», *մահ* «մահ», *մաս* «մաս (եկեղեցական)», *մատաղ* «մատաղ», *շար* «շղարշ», *սան* «կնքահոր սան», *տանձ* «տանձ» և հատկապես *զարգաթթար* «ծառզարդար, ծաղկազարդի տոնը», որ թեև Զթ. դարձել է *պտղիձե*, բայց Մրշ. մնում է դեռ *ձոնձաթթօր*:

Ա ձայնավորը *օ*-ի դարձնելու երևույթը մասամբ միայն գտնում ենք Ակնի և Համշենի բարբառներում, որոնց մեջ սակայն *ա*-ն դառնում է *օ՛* միայն ոնգայինից առաջ: Ա>օ հնչյունափոխությունն՝ իբրև ընդհանուր երևույթ, գոյություն ունի միայն Ագուլիսի բարբառում, որ քերականական կառուցվածքով բնավ կապ չունի Զեյթունի և ընդհանրապես Կիլիկիայի բարբառի հետ: Սրանից հետևում է, որ Զեյթուն-Հանըն-Մարաշ բարբառում ա>օ հնչյունափոխությունը Կիլիկյան գաղթից հետո առաջացած անկախ հնչյունաբանական երևույթ է, որին իբրև ապացույց է ծառայում այն հանգամանքը, որ Ադանայի բարբառում այդ հնչյունափոխությունը գոյություն չունի: Եթե Կիլիկիայի հայերը նախքան գաղթը ա>օ հնչյունափոխությունն ունեցած լինեին, այսօր մենք այդ երևույթը պիտի գտնեինք բուն Հայաստանի որևէ բարբառում, որ և իբրև միջոց պիտի ծառայեր մեզ որոշելու համար Կիլիկիայի հայոց սկզբնավայրը:

Անշուշտ, չի կարելի ասել, թե Կիլիկիայի հայերը բոլորը միասին միանգամից և միայն մի գավառից գաղթեցին: Ո՛չ: Բայց, այնուամենայնիվ,

կար մի որոշ մեծամասնություն, որ արդի Կիլիկիայի բարբառի կորիզը դարձավ:

Իմ «Հայոց լեզվի պատմության» մեջ (հատ. Բ, էջ 373 և այլն) ցույց է տրված, որ Ագուլիսի բարբառի ա>օ հնչյունափոխությունը թուրքերի ներխուժումից առաջ է տեղի ունեցել, ըստ որում Ագուլիսի բարբառում թեև պարսկերենից և արաբերենից փոխառյալ բառերը ենթարկվել են նույն հնչյունափոխության, սակայն թուրքերենից (ինչպես և ռուսերենից) փոխառյալ բառերը չեն ենթարկվել: Զեյթունի (ինչպես և Հանընի) բարբառում թուրքերեն բառերն էլ ենթարկվել են այդ հնչյունափոխության:

Զեյթունի բարբառն ունի բազմաթիվ այնպիսի գրաբար բառեր, որոնք չկան ուրիշ բարբառներում և կամ շատ հազվագյուտ են: Տալիս եմ մի փոքր ցուցակ այդ կարգի բառերի, որոնցից ոմանք պահպանվել են նույն իմաստով, իսկ մյուսները՝ փոփոխված նշանակությամբ:

ազոխ > *ազոխ*, *ամիլի*

աղտոր > *աղդիլ*. կա միայն Խրբ. *աղդօր* ձևով. Կովկասում ծանոթ *սմաղ* բուսափոշին է. լատիներեն *Rhus coriaria*.

անթ, անութ «թևի տակը» > *օնթ* «1. գիրկ. 2. կապոց, տրցակ», որից *անթիլ* «գրկել»

առաստաղ > *այըսդոխ*

արկանել > *այգընիլ* «անձրևել» (փոխված իմաստով. նույնպես և Մրշ. *արկնել*)

առաջ «երգ» > *ելամշք*, որից *ալչիլ* «երգել»

աքցան > *աքցօն* (Ալլհ. 117 ակցոնք)

բևեկնի > *բիբգիձե*

բևեռ «գամ, մեխ» > *բիբեռ*

գաք (խաշնդեղ բույսը) > *գօք՛*

գի, գիհի «արտուն ծառը» > *գ՛ե, գ՛եհ*

գոռոզ > *գոռեզ*

գոռզ > *գոռուզ*, որից էլ *գոռուզ խեղիք* «ազատքեղ, մաղադանոս»

դժնիկ, դժնկի > *դիժդեկնի*

երկանումք > *իլգօմ*, որ եզակի ձևն է

զգեստ > *ըսգից* «եկեղեցական շոր»

խուլիկ > *խըլլեկ* «խոց, վերք» (Ալլհ. 190)

կողկողիլ «ողբալ», կրկնական բայ է. արմատը պիտի լիներ \**կողիլ*, որ պահված է Զթ. *գօղօլ* «ողբալ» ձևով

կուզ «կատու»։ Ե դարի կեսից առաջ գործածված բառ, որին  
հաջորդելով կատու բառը, կուզը վերացավ կամ հատկացվեց «կզաքիս»  
կոչված կենդանուն։ Բայց մնացին Տիմոթեոս կուզ (հուն. αἴλουρος  
«կատու») և կզակն «կատվի աչք» քարը։ Զեյթունի բարբառը պահում է  
գուզ, բայց ավելի գուզ-փըսըզ բառը «կատու» իմաստով։

կոփել «կոել» > գիփիլ «տաշել», կիփիչ «թալ»  
հայիլ > հէյիլ «նայել, դիտել»  
հառաչել > հառչիլ  
հեծկլտալ > հէձգօլդօլ  
հիւլ > հուդ  
հրահանք > ըռահոնք (Ալլհ. 185)  
ձգոտալ > ձօգօոդօլ  
ճապաղիլ > ջարդիլ «աչքերը լայն-լայն բաց անել, չոել»  
մէտ «կշեռքի միջին կետը» > միդ «կշեռքի սլաքը» (սխալմամբ  
մնանցնելով մետ բառի հետ)

մուրտ «լտ. myrtus» > մուրդ  
մրուր > մոյույ  
մօր, որից մօրատ «ճահիճ» > մույօդ «ճահճաջուր»  
յատակ «տակը», որից կազմված են համարում Ջթ. ասկէնօլ «սուզվել  
ջրի տակ»

յուլանալ > ուլնօլ «ծուլանալ, ալարիլ», որ և Ղրբ. իլլանալ  
շղարշ > շլլշ  
որիզ «բրինձ» > օոուզ «բրինձ», որից էլ օոուզաքույ «փլավ»  
ոփ «խոռոչ կամ փոս, որի մեջ ջուր է հավաքվում» (Ե դարի կեսից  
առաջ գործածված բառ) > էօփ «լճացած ջուր»  
պան «մեղրահաց» > բօն  
պողել, պուղել > Ջթ. բուդիլ «ձյունը կտուրից ցած թափել» (նույնը և  
Ակն., տե՛ս Արմ. բռ. հատ. 5, էջ 1212)

uoso > սուսա  
ցրդի > ձիդի, ձիդիմէ  
փիճի > փիջի  
քաղիրթ > քաղըդի՛  
քարայր > քայլէօլ «քարքարոտ տեղ» (իմաստի փոփոխությամբ):  
Հետաքրքրական են հատկապես այն բառերը, որոնք հատուկ են  
միջին հայերենին և, գտնվելով նաև Զեյթունի բարբառում, իբր միջոց են

ծառայում ճշտելու այդ բառերի ձևն ու նշանակությունը։ Այդ կարգի  
բառերից հիշենք՝

օբոը, հոգն. արոհիլ «ուկան, որով ձուկ են բռնում» (տե՛ս Արմ. բռ. ասյո)  
ալիկ Ջթ. ալլզ «անասնակեր» < արար. ‘alīq  
գ՛էհիլ «հրել» (տե՛ս Արմ. բռ. գահել)  
գուդուլայձըզ «թափթփած, անկարգ» (տե՛ս Արմ. բռ. գօտի, գօտելար-  
ձակ)

դ՛էօդիշիւն «կոնք» (տե՛ս Արմ. բռ. դաստիշոն)  
թիթէխ «թիթեռնիկ» = միջ. հյ. թիթեղն (տե՛ս Արմ. բռ., հատ. Բ, էջ  
1225–1226)

խիվ, խըվ «խատուտիկ գույնով մի թռչուն է» = միջ. հյ. խի «սարյակ»  
(տե՛ս Արմ. բռ., հատ. Գ, էջ 504)

խըւօզ < միջ. հյ. խոչակ  
գիշիշ «հոտոց» = միջ. հյ. կշոշ  
գուշգօլ «կոշկակար» = միջ. հյ. կօշկար (տե՛ս Արմ. բռ., հատ. Գ, էջ  
1491)

ջօգուտ «կացին» = միջ. հյ. ճկուտ (տե՛ս Արմ. բռ., հատ. Դ, էջ 661)  
մաթուզ «մի պտուղ է. լտ. arbutus» = միջ. հյ. մաթուզ (տե՛ս Արմ. բռ.,  
հատ. Դ, էջ 721)

մօդ «բլուր» = միջ. հյ. մատն «բլուր» (տե՛ս Արմ. բռ., հատ. Դ, էջ 875)  
մջղէխ «մծխ» = միջ. հյ. մճղէխ (տե՛ս Արմ. բռ., հատ. Դ, էջ 1018)  
բախըլցա «փոթորիկ» = միջ. հյ. պարխըրցի «հյուսիսային ցուրտ քամի»  
(տե՛ս Արմ. բռ., հատ. Ե, էջ 981)  
վանց «համար, գրք. վասն» = միջ. հյ. վանց (տե՛ս Արմ. բռ., հատ. Ջ,  
էջ 563)

քըշքիլ «հանդիմանել» = միջ. հյ. քշփել (տե՛ս Արմ. բռ., հատ. Ջ,  
էջ 1498):

Կան մի խումբ բառեր էլ, որոնք զուտ հայերեն կազմություն ունեն,  
բայց չկան ուրիշ բարբառներում, ինչպես՝

անջըլդիս «ծարավի», որից անջըլդիլ, անջըլդիսօլ «ծարավել» (իբր գրք.  
անջրդի, անջրդիլ)

գողադիլ «գոռալ, իբր որոտալ ամպի»  
իլիխդել «աղաչել» (գրք. երախտել «երախտիքը երեսին տալ»)

ջարդըրք «կանացի զարդարանք» < զարդարք  
թընըթափիլ «ուշքը գնալ, ուշագնաց լինել»։ ըստ ձևի պետք էր  
ենթադրել գրք. թունաթափիլ, բայց այս բառի իմաստն է «բարկությունը



ուրիշի վրա թափել», որ սրան չի համապատասխանում, ուստի ավելի հարմար է ենթադրել *թուլաթափիլ*, որ իրոք էլ գտնում ենք Ղարաբաղի բարբառում «նվաղել, ուշագնաց լինել» իմաստով (տե՛ս իմ Գ.ո. բո., էջ 376):

*խեղվալ* «քիթը բերանը ծոմնելով ծաղրել, տնազ անել». արմատն է *խեն*, որից *խեղկատակ* և այլն. ընդարձակ տե՛ս Արմ. բո., հատ. Գ, էջ 455–457

*խաղասէլ* «շատ սիրածը», գրբ. *խստասէր* ձևից *գէձիփից* «կրակի վրա եփված մսով և ձավարով քուֆթա», գրբ. *կայծեփեաց*.

*հայից* «խնոցի», ծագում է *հարել* բայից, իբր *հարոց*

*ձանձոխ* «ձյունախառն անձրև»

*մէղվիւնից* «փեթակ» (որոշ բարբառներում այլուրի պահեստը կոչվում է *փեթակ*. Ջեյթունի բարբառում չկա այդպիսի բառ, այլ *ամբոյ* < ամբար)

*մայգնայջի* «եփած պտուղներով օշարակ, խոշաբ», որ է *մրգաջուր*

*ճիքս* «մատան». ծագում է *ճերքս* բառից

*ուլույօգ*. պատի վատարան (cheminée) եզերքին շինված կիսաշրջանակաձև մի քանի սանտիմետր բարձրությունը, որ արգելում է մոխիրը դուրս թափվելու. ըստ ձևի ենթադրում է հին *ուրրակ* բառը:

*բըղղիճէ* նշանակում է «Ծառզարդարի տոնը, Ծաղկազարդ», որ կոչվում է Մրշ. ձօնձառթօր, Ադն. զարգաթթար. նախաձևն է *պտղեճի*:

*ջըղջըռի* «տերևալից վայրի խոտ մ'է, գոր կը գործածեն վէրք պատանելու կամ ա՛յնպիսի վիրաց՝ որոց բերանն գոցուիլ չեն ուզեր» (Ալլի. 202): Նկարագրությունից երևում է, որ *գաղտիկուր* կամ *ջղախոտ* կոչված բույսն է, ուստի մայր ձևը պետք է դնել *ջղացախ* (Ջթ. *ցախ* նշանակում է «տերև»):

*ցիվիլիզացի* «քիվ»: Սրա արմատն է գրբ. *ցի*, որ պահպանված է Ջթ. *ցրվրք* ձևով (Ալլի. 205). նույնը աշխարհաբար ցիվեր > Ջթ. *ցիվիլ*, որի հետ բարդվելով *ծայր–ք* բառը՝ ստացվել է *ցիվիլիզացի*:

Ծատ հետաքրքրական է *ազնահոն* բառը, որ նշանակում է «անտառի կամ այգու մեջ, մանավանդ գիշեր ժամանակ լսված՝ մարդու կամ մանավանդ գազանի անորոշ ոտնաձայն»: Ենթադրում են գրաբար աքաբան, որ կազմված է *աք* «ոտք» + *հան*, *հանել* բառերից, իբր թե ոտքի հանած ձայն:

Իսկ ինչ որ ամենից ավելի հետաքրքրական և խրատական է մեզ համար, այդ այն սերտ կապն է, որ կա Ջեյթունի բարբառի և գրաբարի միջև: Կարծես թե Ջեյթունի բարբառն անկախ գոյություն չունի և նրա խոնարհման ու հոլովման ձևերը իրարից ածանցված չեն, այլ ամեն մեկն առանձին

առանձին գրաբարի այս կամ այն համապատասխան ձևից է առաջացած: Երկու օրինակ՝ առաջինը խոնարհումից և երկրորդը հոլովումից, բավական են ասածս ցույց տալու:

Գրբ. *մնալ* բայը դառնում է Ջթ. *մոնոլ*. այստեղ *ա–*ն իբրև վերջնավանկի ձայնավոր, դարձել է *օ*, և առաջին վանկի *ը–*ն իբրև անորոշ ձայնավոր, հետևելով երկրորդ վանկի *օ* ձայնավորին, դարձել է *օ*: Ջթ. *մոնոլ* բայը խոնարհվում է ներկա. *մոնօմ, մոնօս, մոնօ, մոնօնք, մոնօք, մոնօն*. այս բոլորը կանոնավոր կերպով առաջանում են *մոնոլ* ձևից:

Բայց հենց որ գալիս է կատարյալը, *մոնոլ* բայը դառնում է *մնացը, մնացրլ*, որոնք ոչ մի կապ չունեն *մոնոլ* բայի հետ, այլ առաջանում են գրբ. *մնացի, մնացեր* ձևերից՝ կանոնավոր հնչյունափոխությամբ: Եզակի Գ - դեմքը նորից դառնում է ետ և լինում է *մոնօգ*, որ նույնպես *մոնոլ* ձևից է. հոգնակիի դեմքերը լինում են *մնացօք, մնացրք, մնացըն*, որոնք բոլորն էլ առաջանում են գրբ. *մնացաք, մնացիք, մնացին* ձևերից: Երբ գալիս ենք հրամայականին, եզակին լինում է *մոնձ*, հոգնակին *մնացէք*: Այսպես նաև դերբայների և բոլոր խոնարհված ձևերի մեջ: Այս բոլոր անկանոնությունների պատճառն այն է, որ գրաբարի *ա* ձայնավորը շեշտի տակ դառնում է *օ*, անշեշտ մնում է *ա*. նմանապես *ը* անորոշ ձայնավորը, եթե հաջորդ վանկում կա *օ*, ինքն էլ դառնում է *ը*: Ուրեմն Ջեյթունի բարբառի ամեն մի ձևը առանձին-առանձին կախված է գրաբարից և նրա անմիջական հետևությունն է: Եթե Ջեյթունի բարբառն անկախ լիներ, պիտի լիներ ներկա *մոնօմ, մոնօս, մոնօ...* ձևերի դիմաց՝ կատարյալ \**մոնօցի, \*մոնօցրլ*, ինչպես որ լինում է *մոնօգ*, և հրամ. եզ. *մոնօ* ձևի դիմաց՝ հոգն. \**մոնօցէք*, մինչդեռ այդպես չի լինում, այլ *մնացէք*:

Մի օրինակ էլ հոլովումից: *Տղայ* բառը դառնում է Ջթ. *դօղօ*, որ խուլ *տ–*ն դարձել է թթօնուն *դ*, բառավերջի *յ–*ն վերացել է, վերջնավանկի *ա–*ն (շեշտի տակ) դարձել է *օ*, և առաջին վանկի անորոշ *ը* ձայնավորը հաջորդ վանկի *օ–*ի ազդեցությամբ դարձել է նույնպես *օ*: Այս բոլորը ծանոթ հնչյունական երևույթներ են: Սեռականում նույն բառը լինում է *դըղձ*, որ ոչ մի կապ չունի *դօղօ* ուղղականի հետ, այլ անմիջապես կախված է գրբ. սեռ. *տղայի* ձևի հետ, որ միջին *ա–*ն սղվելով՝ նախ ստացել է *տղի*, ապա վերջնահնչյուն *ի–*ն դարձել է ըստ օրինի *լի* որին հետևելով առաջին վանկի *ը* անորոշ ձայնավորը, նույնպես դարձել է *լի*: Եթե Ջեյթունի բարբառի սեռ. *դըղձ* ձևն անկախ լիներ, ուղղականի համեմատ պիտի լիներ \**դօղօյի* կամ առ առավելն \**դօղի*, որոնք գոյություն չունեն:

Պետք չէ կարծել, թե այս երկու օրինակները, որոնք մեջ բերինք, բացառիկ կամ հազվագյուտ բաներ են: Ընդհակառակը՝ բարբառը լի է մեծ օրինակներով:

Երևույթն իր ծայրագույն աստիճանին է հասնում լիճել և լճուլ բայերի մեջ, որոնք կորցնելով սկզբնահնչյուն լ-ն՝ դառնում են *ճիլ*, *ճօլ*. սրանց ստորադասական անկատարը լինում է հավասարապես *ճի*, ապառնին՝ *բի ճի*, ներկան՝ *գօճի* և այլն, որոնց իմաստը միայն տեղից է հասկացվում: Առաջինն է գրբ. *լիճէի*, որ կրճատվում, սղվում, դառնում է *Ջթ. ճի*, երկրորդն է գրբ. *լճուի*, որ նույնպես սղվելով դառնում է *Ջթ. ճի*: Կատարյալի մեջ առաջինը լինում է *էղօ*, երկրորդը՝ *լճցը*, հրամայականի մեջ առաջինը՝ *լճի*, երկրորդը՝ *լճց*: Այս բոլորը գրաբարի ստրկական հետևորդներն են. այսպես՝

լիճել > <i>ճիլ</i>	լճուլ > <i>ճօլ</i>
լիճէի > <i>ճի</i>	լճուի > <i>ճի</i>
եղէ (միջ. հյ. եղայ) > <i>էղօ</i>	լցի > <i>լճցը</i>
լեր > <i>լճի</i>	լից > <i>լճց</i>

Եթե գրաբարի ձևերը չլիճեին, ո՞ր գիտնականը պիտի կարողանար լուծել այս բոլոր ձևերի գաղտնիքը:

Ամենատարօրինակն այն է, որ *Ջթ. ճիլ*, *ճօլ* և *ճի* արմատ չունեն և ամբողջապես մասնիկ են. նրանց արմատը, ըստ գրաբարի, *լի* (լիճել, լեալ) և *լի* (լիքը) սղված անհետացած է, և մնում են միայն ածանցական մասնիկները կամ վերջավորությունները:

Ահա՛ տարօրինակ նոր երևույթ ընդհանուր լեզվաբանության մեջ:

## Ա Մ Ա Ս

### ՀՆՉՅՈՒՆ ԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

(Ձայնաբանական հնչյունաբանություն)

§1. Կիլիկիայի բարբառի հնչյունական համակարգը պարունակում է 48 հնչյուն՝ հետևյալ ձևով.

Ձայնավորներ՝ 10

ա, ա̄, է, ը, ը, ի, օ, ու, էօ, իւ.

Երկբարբառներ՝ 2

ե, ո.

Բաղաձայններ՝ 36

բ, բ', ա, փ

գ, գ', կ, ք

դ, դ', տ, թ

ձ, ձ', ծ, ց

ջ, ջ', ճ, չ

զ, ժ, ս, շ

յ, ու, ր, լ, մ, ն, ք, վ, ֆ

հ, դ, իս.

§2. Ձայնավորների մեջ նկատելի են *ա̄* (որ ունի *ա* և է հնչյունների միջին աստիճանը) և հատկապես *լի*.

Այս վերջինը (որ իմ Բարբառագիտության մեջ նշանակել եմ *Ճ* ձևով) մեր բոլոր բարբառների համար էլ անսովոր և ընդհանուր հնչյունախոսության համար նոր ու հետաքրքրական մի հնչյուն է:

Ինչպես գիտենք, ձայնավորներն ընդհանրապես ունեն երեք աստիճան. միջակ, բաց և փակ: Սրա լավագույն օրինակը տալիս է ֆրանսերենի *e* ձայնավորը, որ ունի *è*, *e*, *é* աստիճանները: Հայերենը հարուստ չէ մեծ աստիճաններով: Մեր բարբառները գիտեն զլիավորապես *ա* ձայնավորի երեք աստիճանները. միջակ *ա*, որ ընդհանուր է բոլորին, *ա̄* (*â*), որ գտնվում է բազմաթիվ բարբառներում և *â* (փակ *ա*), որ գտնվում է վանի բարբառում:

ը ձայնավորը հենց ինքը լինելով մի հազվագյուտ հնչյուն, չի ներկայացնում այս զանազան աստիճանները: Հայերենի սովորական ը ձայնավորը (որ գիտի նաև թուրքերենը) ներկայացնում է միջակ աստիճանը: Սրա փակ աստիճանն է ճ որ հայտնի է Մարադայի բարբառից և որի հետ նույն է ուս. եւ ձայնավորը: Բաց աստիճանը չկա ոչ մի տեղ. և ահա այդ բաց աստիճանն է, որ ներկայացնում է Կիլիկիայի բարբառի ը հնչյունը: Այս հնչյունը, որ հատուկ է թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառին, ը և ա ձայնավորների միջին աստիճանն է, ավելի բաց, քան հայերենի սովորական ը ձայնավորը: Հեշտությամբ նա անցնում է մի կողմից ը ձայնավորին և մյուս կողմից ա ձայնավորին, այնպես որ, օրինակ, Ջթ. աղվընը «աղավնի», փըլթըլ «բրդեղ», գուրը «գոտի», դէղձընը «դաղձ» և այլ բոլոր մասն բառերը հնչվում են նաև աղվընա՛, փըլթըլ, գուրա, դէղձանագ և այլն:

§3. Էօ հնչյունը ընդհանրապես միջակ աստիճանն ունի, բայց շեշտի տակ կարող է ստանալ նաև բաց էօ ձևը, որ հնչվում է մոտավորապես ծա. այսպես, օրինակ, թոնն > Ջթ. թէօն, խորթ > Ջթ. խէօթ, խուլինջ > Ջթ. խէօլէօնջ, խոով > Ջթ. խէօնտէօլ, խօսք > Ջթ. խէօսք և այլն: Այսպես է հատկապես օ ձայնավորով սկսվող միավանկ բառերի մեջ:

§4. Երկբարբառներից ո-ն (այն է ուօ) հատուկ է Ջեյթունի Ղարղըլար կամ Յաղուրյան թաղին: Մինչդեռ Ջեյթունի մյուս թաղերում վերջնավանկում (շեշտի տակ) գտնվող օ-ն հնչվում է օ, այս թաղում հնչվում է միշտ ո. այսպես, օրինակ, հաց > հոց, ագռաւ > ագհօվ, ազահ > ազօհ, խայտառակ > խայդառոց բառերը հնչվում են հոց, ագհով, ազհհ, խայդառոց և այլն: Գրքիս վերջում դրված բառարանում այս կարգի բառերը բերված են միայն օ ձևով, և ո հնչյունը չի նշանակված:

§5. Երկբարբառային Ե (կարդա իէ) հնչյունը նույնպես գտնում ենք Ջեյթունում և Հաճընում. այսպես՝ վէգ > Ջթ. վէգ՛, աղեղն > Հճ. աղեղ, աներ > Հճ. անեյ, անթեղ > Ջթ. ինթեղ, Հճ. անթեղ և այլն: Գրքիս վերջում դրված մոտաների մեջ գտնում ենք Ջեյթունի բարբառով քէլե, ձախե (իմա՛ քայլէ՛, ծախէ՛), ինչպես նաև մեչ, որ այլուր մէչ ձևն ունի: Սրանից հետևում է, որ Ե երկբարբառային արտասանությունը ընդհանուր չէ և որոշ թաղերի է հատուկ: Այսպես, Ջեյթունի Ղարղըլար կամ Յաղուրյան թաղում բառավերջի Ե-ն արտաբերվում է անխտիր մերթ է և մերթ Ե:

§6. Բաղաձայններից հետաքրքրական է խուլերի արտասանությունը: Գրքարի պարզ թիթոնն բաղաձայնները (բ, գ, դ, ձ, ջ) Ջեյթունի բարբառում ընդհանրապես դառնում են բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛, բայց որոշ թաղերում հնչվում են կովկասյան պ, կ, տ, ծ, ճ ձևով, հատկապես վերջին երկուսը (ծ, ճ): Օրինակ՝ Մահտեսյան թաղը արտասանում էր մերթ պարզ խուլ, մերթ շնչեղ թրթոն, ինչպես որ նշանակել են գրքիս վերջում դրված մոտաներ: Իսկ Յաղուրյան կամ Ղարղըլար թաղը արտասանում էր միշտ շնչեղ թրթոն:

Ահա օրինակներ երկու տեսակի արտասանության.

իջան	>	իճօն, իջօն
քշպել	>	քժշպիլ, քժշբիլ «հանդիմանել»
դու	>	տօն, դօն
«այսպես»	>	իճօն, իճօն
գրեցի	>	կըլիցի, գըլիցի
սպանել	>	ըսպանիլ, ըսբնանիլ
գոհանալ	>	կուհանօլ, գուհանօլ
Աստուած	>	ասպօձ, ասբօձ
ոսկի	>	իսկի, իսգի
դուրս	>	տօյս, դօյս
գնացին	>	կացըն, գնացըն
գնաց	>	կօնօց, գօնօց
բուրբիլ	>	պիլիլի, բիլիլի «ման գալ»
ձեռք	>	ձւոռ, ձւոռ
ձի	>	ձը, ձըլ
դէմ	>	տէմ, դէմ
բոնիլ	>	բընիլ, պընիլ:

§7. Ծատ ավելի զարմանալի է ո բաղաձայնի արտասանությունը: Թե՛ Ջեյթունում և թե՛ Հաճընում ո բաղաձայնը վերածվում է կիսաձայն յ հնչման: Սակայն սա չի նշանակում, թե գեյթունցիք և հաճընցիք անընդունակ են արտաբերելու ո հնչյունը. ո՛չ. այլ դա ձայնաբանական մի երևույթ է միայն: Հաճընցիք ընդունակ են արտասանելու ո. և ամեն հայերեն բառի մեջ, ուր կա ո հնչյունը, Հաճընի բարբառում դառնում է ո: Ավելի զարմանալիս այն է, որ թուրքերեն բառերն էլ ենթարկվել են այդ օրենքին և այն բոլոր թուրքերեն բառերը, որոնք ունեն ո հնչյունը, Ջեյթունի

և Հաճընի բարբառում այդ ր հնչյունը դարձնում են յ: Այսպես mayara > մադայո «քարայր», minare > մինայո «մզկիթի աշտարակ», vezir > վեզիր, tavur > թեվույ «կերպ, ձև», para > փայո «դրամ», çare > Ջթ. չայո «ճար, դարման», çavdar > Հճ., Ջթ. չավդոյ «հաճար», bardaq > Հճ., Ջթ. բայդոխ «գաւաթ», qaraqol > Ջթ., Հճ. դայադոլ «պահակ զինվոր» և այլն: Սակայն հնչյունափոխությունը սահմանափակված է միայն փոխառյալ բառերի մեջ. և երբ զեյթունցին կամ հաճընցին թուրքի հետ խոսում է թուրքերեն, այդ նույն բառերը արտասանում է ր հնչյունով: Երևույթը նույնն է, ինչ որ պոլսահայ բարբառում թրք. օ զ հնչյունը, որ հայոց փոխառյալ բառերում հնչվում է յ, իսկ թուրքերենում՝ k: Երբ պոլսեցի հայը խոսում է հայերեն, ասում է, օրինակ, խապախ առի «դդում առա», իսկ թուրքերեն խոսելիս ասում է kabak aldəm:

Կարելի չեղավ ինձ որոշել, թե Ջեյթունի ո՞ր թաղերում ր-ն դառնում է յ կամ մնում է անփոփոխ: Ոմանք ասում են, թե երևույթն ընդհանուր է. ուրիշներն ասացին, թե ր > յ հնչյունափոխությունը հատուկ է միայն Պոզաչյի կամ Ծորվայան թաղին, որի բնակիչները գաղթական են: Մյուս թաղերը արտասանում են ր-ն անփոփոխ ր և ծաղրում են սրանց: Եթե այդպես է, ր>յ արտասանող զեյթունցիք գաղթած պիտի լինեն Հաճընից, ուր ընդհանուր է ր>յ արտասանությունը: Յաղության թաղը պահում է անփոփոխ ր, որի համար էլ յ-ն Յաղությանը արտասանում էր միշտ անփոփոխ ր:

§8. Բաղաձայնների արտասանության համար կարևոր է նկատել նաև այն հանգամանքը, որ երբ նրանք գտնվում են երկու ձայնավորի միջև (և հատկապես թրթռուն բաղաձայնները), ստանում են կրկնակ արտասանություն: Այս երևույթը հատուկ է միայն Հաճընի բարբառին: Օրինակ՝ արթ > Հճ. արթթթ, ազահ > Հճ. ազզզոհ, ազի > Հճ. ազզի, այզի > Հճ. էզզի, հոզի > Հճ. հիզզի, ոջիլ > Հճ. իջջիլ, հաշիլ > Հճ. հէշիլ, պսակ > Հճ. քիսսոզ, վայթել > Հճ. վէդիլ և այլն: Նույնիսկ այն բառերը, որոնք վերջանում են ձայնավորին հաջորդող մի բաղաձայնով, սեռականում կրկնում են բաղաձայնը. ինչպես՝ օձ > Հճ. էձձ, սեռ. էձձի, վեզ > Հճ. վեզզ, սեռ. վեզզի և այլն: Խոսողները սակայն չեն զգում այստեղ բաղաձայնի կրկնությունը, ուստի պետք է ընդունել, թե սրանք երկար բաղաձայններ են:

§9. Այս բոլորից հետո պետք է հիշել Գ (կոկորդային Գ) հնչյունը, որ շատ հազվագյուտ մի արտասանություն է և գտնվում է միայն մի քանի բա-

ռերի մեջ: Այսպես՝ լոզանալ > Հճ. լիզնոլ, լիզնոլ, թրք, sonra > Հճ. սոնրո «հետո»: Երկուսի մեջ էլ Գ-ն գտնվում է կատկային գ կամ կոկորդային դ հնչյունի մոտ, որոնց ազդեցությամբ էլ դարձել է Գ:

Հիշենք վերջապես գ՛քմային արտասանությունը, որ գտնում ենք երբեմն Խձայնավորի մոտ. ինչպես՝ կայծ > Ջթ. գլիձ, կարճ > Ջթ. գլիջ, կաթողիկոս > Ջթ. գլիթողգիւ:

**Բ Մ Ա Ս**  
**Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**Զ Ա Ց Ն Ա Վ Ո Ր Ն Ե Ր Ի Փ Ո Փ Ո Ւ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ը**

**Ա**

§10. Միավանկ բառերի մեջ *ա*-ն (գտնվելով շեշտի տակ) դառնում է *օ*.  
ինչպես՝ ափ > Զթ. *օփ*, բակ > Զթ. *բօգ*, բան > Զթ., Հճ. *բօն*, բաց > Զթ., Հճ. *բօց*, ծառ > Զթ. *ձօռ*, Հճ. *ձօր*, կամ, կաս, կայ > Զթ., Հճ. *գօս*, *գօս*, *գօ*, կալ > Զթ. *գօլ*, պապ > Զթ., Հճ. *բօբ* «հայր», շատ > Զթ., Հճ. *շօղ*, ցալ > Զթ., Հճ. *ցօլ* և այլն:

Մեկ և կես վանկանի բառերն էլ մտնում են սրանց շարքը. ինչպես՝  
աստղ > Զթ. *օսղ*, Հճ. *օսթխ*, *օսխ*, բարձր > Զթ. *բօնձրը*, Հճ. *բօրհ*, թանձր > Զթ. *թօնձրը*, Հճ. *թօր*, ծանր > Զթ. *ձօնրը*, *ձօնդրը*, Հճ. *ձօր*, *ձօրը*, մանր > Զթ. *մօնրը*, սանր > Զթ. *սօնրը*, Հճ. *սօր*, քաղցր > Զթ. *քօխցրը*, Հճ. *քօցխ* և այլն:

§11. Ազուլիսի բարբառում, որտեղ ևս կա այս օրենքը, բացառություն է կազմում *ղ* բաղաձայնը, որից առաջ գտնվող *ա*-ն չի դառնում *օ*. ինչպես՝ աղ > Ազլ. *աղ*, խաղ > Ազլ. *հաղ*, մաղ > Ազլ. *մաղ* և այլն: Բայց Կիլիկիայի բարբառում նման բացառություն չկա և *ղ*-ից առաջ էլ *ա* ձայնավորը դառնում է *օ*. ինչպես՝ աղ > Զթ., Հճ. *օղ*, աղբ > Զթ., Հճ. *օխբ*, աղտ > Զթ., Հճ. *օղդ*, թաղ «թաղամաս» > Զթ., Հճ. *թօղ*, խաղ > Զթ., Հճ. *խօղ*, մաղ > Զթ., Հճ. *մօղ*, շաղ > Զթ. *շօղ*, պաղ > Զթ., Հճ. *բօղ*, տաղ «երգ» > Հճ. *ղօղ*, բաղցր > Զթ. *բօխցրը*, Հճ. *բօցխ*:

§12. Ազուլիսի բարբառում բացառություն են կազմում նաև ոնգային *ն*, *մ* բաղաձայնները, որոնցից առաջ գտնվող *ա* ձայնավորը վերածվում է ոչ թե *օ*-ի, այլ՝ *ու*. օրինակ՝ վանք > *վունք*, տանձ > *տունձ*, ճանձ > *ճունջ*, համ > *հում*:

Կիլիկիայի բարբառում այսպիսի բացառություն էլ գոյություն չունի և ոնգայինների մոտ էլ *ա*-ն հավասարապես դառնում է *օ*. ինչպես՝ ամպ > Զթ., Հճ. *օմք*, բան > Զթ., Հճ. *բօն*, գամ «մեխ» > Զթ. *գօմ*, թան > Հճ. *թօն*, ժամ > Զթ., Հճ. *իժօմ*, կամն > Զթ., Հճ. *գօմ*, համ > Զթ., Հճ. *հօմ*, պան > Զթ. *բօն* «մեղրահաց», վանք > Զթ., Հճ. *վօնք*, տանձ > Զթ., Հճ. *ղօնձ* և այլն:

§13. Բայց Կիլիկիայի բարբառում բացառություն են կազմում *ճ*, *ջ*, *ջ*, *ժ*, *շ* բաղաձայնները, որոնցից առաջ գտնվող *ա* ձայնավորը, եթե նույնիսկ *ն* կամ *ր* բաղաձայնով էլ բաժանված լինի, միշտ մնում է անփոփոխ (դառնում է *ա* կամ է և չի վերածվում *օ*-ի). այսպես են՝ աջք > Զթ. *էջվէ*, Հճ. *աջք*, աջ > Զթ. *աջ*, Հճ. *էջիգ*, արջ > Զթ. *արջ*, Հճ. *արջ*, խաջ > Զթ. *խաջ*, Հճ. *խաջ*, կարժ (թելի) > Զթ. *գաւժ*, կարճ > Զթ. *գաւջ*, *գաւրջ*, ճանձ > Զթ., Հճ. *ջաւնջ*, շարժ > Զթ. *ժաւժ*, փարջ > Հճ. *փաւրջ*:

Սրանց ավելացնենք նաև տաշտ > Զթ. *ղաւղի*, *ղաւրի*, որի մեջ թեև *շ*-ն դարձել է *յ* = *ր*, բայց *ա* ձայնավորն էլ մնում է անփոփոխ (չի դառնում *օ*):

Սրանցից դուրս ուրիշ օրինակ, բայց նաև բացառություն չկա, որով հաստատվում է այս զարմանալի օրենքի ճշտությունը:

§14. Մի քանի ուրիշ դեպքեր էլ կան, որոնց մեջ *ա*-ն չի դառնում *օ*, բայց օրինակների սակավության պատճառով չեն կարողացել ձևակերպել օրենքը: Այսպես՝

ա) – *անգ* հանգող բառերից մնում են անփոփոխ *անգղ* «ամանի ունկը» > Զթ. *անգ*, *էնգ*, ժանգ > Զթ. *ժաւնգ*, *ժէնգ* (սակայն Հճ. *ժօնգ*), իսկ գանկ > Հճ. *գօնգ*, ճանկ > Զթ. *ջօնգ*: Նույն վերջավորությամբ ուրիշ բառ չկա:

բ) – *արդ*-ով վերջավորվող բառերից յարդ > Զթ., Հճ. *էյդ*, *հէյդ*, նարդ > Զթ. *նարդ* չեն փոխում *ա* > *օ*, իսկ մարդ > Զթ., Հճ. *մօյդ* և վարդ > Զթ., Հճ. *վօյդ*՝ վերածում են *ա* > *օ*:

գ) – *ալ*-ով վերջավորվող բառերից երկուսը (խալ > Զթ. *խալ* և սալ > Զթ. *սալ* «դարբնի սալ») չեն փոխում *ա* > *օ*, սակայն մյուս բառերը փոխում են: Այսպես են՝ գալ > Զթ. *իգօլ*, Հճ. *գօլ*, լալ > Զթ., Հճ. *լօլ*, կալ (ցորենի) > Զթ., Հճ. *գղլ*, տալ (գոյ.) > Զթ., Հճ. *ղօլ*, տալ (բայը) > Զթ., Հճ. *ղօլ*:

դ) *վասն* բառը դառնալով Զթ. *վանց*, չի փոխում *ա* > *օ*: Չկա ուրիշ բառ – *անց* վերջավորությամբ: Իսկ «բաց, թաց, հաց, ինչպես նաև տանձ, մասն, տասն, բարձր» բառերը վերածում են *ա* > *օ* (տե՛ս §19):

ե) *հար* «բարձունք» բառը դառնալով Զթ. *հալ*, *հլի* «դաշտ», Հճ. *հալվել* «դարիվեր»՝ պահում է *ա* հնչյունը անփոփոխ: Սակայն նույն վերջավորությամբ մյուս բառերը (լար, կար, ճար, շար, չար, քար) դարձնում են *ա* > *օ* (լօլ, գօլ, ջօլ, շօլ, ջօլ, ջօլ, քօլ):

§15. Երկվանկ բառերի մեջ, երկրորդ վանկում գտնվող *ա*-ն (շեշտված ա) նույնպես դառնում է *օ*. ինչպես՝ աման > Զթ., Հճ. *ամօն*, բերան > Զթ.,

Հճ. *քիյօն*, դատարկ > Ջթ. *դիւյրօգ* «եղեգ», դերձան > Ջթ., Հճ. *դիյձօն*, երկաթ > Ջթ., Հճ. *հյգօթ*, երկանք > Ջթ., Հճ. *հյգօնք*, զաւակ > Ջթ., Հճ. *գաւօգ*, խրատ > Ջթ. *խօյօղ*, Հճ. *խըիօղ*, ծիծաղ > Ջթ. *ձօձօղ*, Հճ. *ձիձօղ*, կրակ > Ջթ. *գօյօք*, Հճ. *գաւիօգ*, հիւանդ > Ջթ., Հճ. *հիւօնդ*, ճակատ > Ջթ., Հճ. *ջագօղ* և այլն:

§16. Ինչպէս տրված մի քանի օրինակներից երևաց, *ն* և *դ* հնչյունափոխությունը կանոնավորապէս գործադրվում է նաև երկվանկ բառերի վերջնավանկում:

§17. Իսկ *ճ*, *ջ*, *չ*, *ժ*, *շ* բաղաձայնների օրենքը պահպանվում է նաև այստեղ. եղած օրինակները հետևյալներն են միայն.

*ականջ* > Ջթ. *անգէջ*, Հճ. *անգաւջ*

*առաջ* > Ջթ. *էռաւջ* (իսկ Հճ. գանազանություն դնելով բառիս կրկնակ իմաստների մեջ՝ դարձրել է *արաւջ* «avant, նախ» և *արօջ* «derant, առաջի, առջևը»):

*կանաչ* > Ջթ. *գէնաւջ*, Հճ. *գանօջ*

*շղարշ* > Ջթ. *շաւշ* (դ-ն ընկած)

Իրաւք բառը Ջեյթունի բարբառում *հիյօշք* ձևն ունի, իսկ Հաճընում դարձել է *հաւիօշք*:

Այս և վերի օրինակներից մի քանիսը (*առաջ*, *կանաչ*, *ժանգ*) ցույց են տալիս, որ Հաճընի բարբառն արդեն սկսել է բացառություն կազմող երևույթները ջնջել և կանոնը ընդհանուր դարձնել:

*Ջոքանչ* բառը ստանալով նոր կերպարանք (\*գոքանչմայր > Ջթ. *գըքըչմայր*, Հճ. *իքիչմօյ* «գոքանչ», \*գոքանչպապ > Ջթ. *գըքըչքօք*, Հճ. *իքիչքօք* «աներ»), անհետացրել է *ա* > *օ* ձայնափոխության երևույթը:

Ջ բաղաձայնը, ինչպէս նաև *ս*-ն, ոչ մի ազդեցություն չունի *ա* ձայնավորի պահպանման համար՝ ինչպէս միավանկ, այնպէս և երկվանկ բառերի մեջ. ինչպէս՝ մազ > Ջթ., Հճ. *մօզ*, հազ > Ջթ., Հճ. *հօզ*, երազ > Ջթ., Հճ. *հյօզ*, տնազ > Հճ. *թնօզ*:

§18. Բացառությունների մյուս շարքը, որ նկատեցինք միավանկ բառերի մեջ (*-անգ*, *-արդ*, *-ալ* հանգող բառեր), չի երևում այստեղ: Ընդհակառակը, ունենք օրենքին ենթարկվող կանոնավոր բառեր. ինչպէս՝ մակարդ > Ջթ. *մագօյթ*, Հճ. *մագոյթ*, տարգալ > Ջթ. *դօգօլ*, Հճ. *դաւգօլ* և *-ալ*-ով վերջացող բայերի մեծ շարքը. ինչպէս՝ մնալ > Ջթ. *մօնօլ*, Հճ. *մաւնօլ*,

խնդալ > Ջթ. *խօնդօլ*, Հճ. *խընդօլ*, մուր(ան)ալ > Ջթ., Հճ. *մույօլ*, մոռանալ > Ջթ. *մաւնօլ*, Հճ. *մօրնօլ* և այլն:

§19. Վասն > *վանց* ձևի համար հատկապէս կարևոր է հիշատակել > Հճ. *արանց*, որ հաստատում է, թե *-անց* վերջավորությունը մնում է անփոփոխ: Հիշենք նույնպէս *խինց*, *խընց*, *խանց* «հույժ», որի ծագումն անհայտ է: Երկվանկ բառերի մեջ էլ չկա *-անց*-ով հանգող ուրիշ բառ: Իսկ աղանձ > Հճ. *աղնձ*. նույնպէս *ջրաղաց* բառը դրափոխությամբ դառնալով *ջաղարց* և անեզաբար *ջաղարցք*, կանոնավոր կերպով տալիս է Ջթ. *ճաղօյցք*, Հճ. *ջաղօյցք*:

§20. Երկվանկ բառերի մեջ նոր բացառություններ են կազմում՝ մելան, ...

Մամակ > Ջթ. *մամագ* (իբրև նոր գրական փոխառություն).

բուրվառ > Ջթ. *բըրվառ* (անշուշտ, իբրև կրոնական բառ. սակայն, Հճ. լինում է կանոնավորապէս *փուրվօր*):

մացառ > Ջթ. *միցեն* «մսի մեջ խրված փայտի փուշ». (սակայն *-առ*-ով վերջավորվող ուրիշ բառեր կանոնավոր են. ինչպէս՝ ամառն > Ջթ. *ամօռ*, Հճ. *ամոյ*, աստառ > Հճ. *ասդօր*, պատառ > Ջթ. *բադօռ*, Հճ. *բադօր*):

ձագար > Հճ. *ձագգար*. հմմտ. հաջորդը.

կանկար > Ջթ. *գանգօլ* Հճ. *գանգար*. այս մասին հմմտ. նաև *ձագար*. ուրիշ դեպքերում *-ար*-ով վերջացող երկվանկ բառերը կանոնավոր են. ինչպէս՝ հագար > Ջթ. *հագօլ*, կամար > Ջթ. *գամօլ*, ծրար > Ջթ. *ձօյօլ*, Հճ. *ձըյօլ*, դալար > Ջթ. *դալօլ*, բանջար > Ջթ. *բէնջօլ* և այլն.

կաղանդ > Ջթ. *գաղունդ*. հմմտ. սրա հետ Հճ. *գաղընդէս*, > Ջթ. *գաղընդաս* «կաղանդէք», բյուզ. հուն. ἡ καλ'ανδης (Sophocles, էջ 621բ):

§21. Երկվանկ բացականչական բառերի վերջում *ա*-ն մնում է *ա*. ինչպէս՝ ահա > Հճ. *ահա* (Ջթ. *հասիգ*), հապա > Հճ. *հաւրաւ*, Ջթ. *հարը*:

§22. Երկվանկ բառերի մեջ, երբ երկու վանկերն էլ ունեն *ա* ձայնավորը, շեշտված *ա*-ն դառնում է *օ*, իսկ առաջին վանկի անշեշտ *ա*-ն մնում է *ա*. ինչպէս՝ աման > Ջթ. *ամօն*, ամառն > Ջթ. *ամօռ*, Հճ. *ամոյ*, արծաթ > Ջթ., Հճ. *արձօթ*, դանակ > Ջթ., Հճ. *դանօգ*, հագար > Ջթ., Հճ. *հագօլ*, ճակատ > Ջթ., Հճ. *ջագօղ*, մանգաղ > Ջթ. *մանգօղ*, Հճ. *մանգօղ*, շաբաթ > Ջթ. *շաբօթ*, Հճ. *շաբթօթ*, շաբար > Ջթ. *շանբօլ*, Հճ. *շաբօլ*, տախտակ > Ջթ., Հճ. *դախդօգ*, ցամաք > Ջթ., Հճ. *ցամօք* և այլն:

§23. Այս կանոնից շեղվում են հետևյալ բառերը, որոնց առաջին վանկի *ա* ձայնավորը չի մնում *ա*, այլ դառնում է *ա̄*, է կ այլն.

ականջ	> Ջթ. <i>անգէջ</i> ,	Հճ. <i>անգաւջ</i>
քարայր	> Հճ. <i>քաւյոյ</i>	
առաջ	> Ջթ. <i>էռաւջ</i> ,	Հճ. <i>արօջ, արաւջ</i>
առատ	> Ջթ. <i>օռօթ</i> ,	Հճ. <i>աւրօթ</i>
բանջար	> Ջթ. <i>բէնջօյ</i> ,	Հճ. <i>բէնջոյ</i>
ծարաւ	> Ջթ. <i>ձէօրէօլ</i> ,	Հճ. <i>ձէյէվ</i>
կանաչ	> Ջթ. <i>գէնաւջ</i> ,	Հճ. <i>գանօջ</i>
մացառ	> Ջթ. <i>միցեն</i> (տե՛ս վերը)	
պաշար	> Ջթ., Հճ. <i>բէշօյ</i> ,	Հճ. <i>բաշօյ</i>

(իսկ բառնալ > Հճ. *բէրնել* կազմված է *բենն* բառից, իբր \*բեննել. հին ձևը պահում է Ջթ. *բւննօյ*):

Սրանցից մի մասը բացատրվում է չ, ջ, շ բաղաձայնների ազդեցությամբ (ականջ, առաջ, բանջար, կանաչ, պաշար), մի մասը ձայնավորների ներդաշնակության օրենքով, մի մասն էլ անհայտ է:

§24. Երկվանկ բառերի մեջ, երբ առաջին վանկի ձայնավորն է *ա*, իսկ երկրորդ վանկի ձայնավորը *ա*-ից դուրս ուրիշ որևէ ձայնավոր, դարձյալ նույն անշեշտ *ա*-ն մնում է ընդհանրապես *ա*. Ինչպես՝ աղջիկ > Ջթ. *աշգիւն*, Հճ. *աշգիւն*, մածուն > Ջթ., Հճ. *մաձուն*, սամի > Ջթ. *սամի*, տարի > Ջթ. *դայի*, Հճ. *դայի* և այլն: Երկու հարյուրի չափ բառերի մեջ բացառությունն են կազմում հետևյալ 37 բառերը.

ազոխ	> Ջթ. <i>աւզիխ, աւձիխ</i> ,	Հճ. <i>ազոխ</i>
աթոռ	> Ջթ. <i>աւթէօռ</i> ,	Հճ. <i>աթոռ</i>
ալիւր	> Ջթ. <i>էլէյ</i> ,	Հճ. <i>էլիյ</i>
ախոռ	> Ջթ. <i>աւխէօռ</i> ,	Հճ. <i>ախոռ</i>
ակօս	> Ջթ. <i>աւգէօս</i>	
աղօթք	> Ջթ. <i>աւղէօթք, աւղէօցք</i> ,	Հճ. <i>աղօթք</i>
անուկ	> Ջթ. <i>էշուկ</i>	
անթեղ	> Ջթ. <i>իւնթեղ</i> ,	Հճ. <i>անթեղ</i>
աշուն	> Ջթ. <i>էշօնք</i> ,	Հճ. <i>էշունք</i>
առնել	> Ջթ. <i>էնիլ</i> ,	Հճ. <i>էնել</i>
արիւն	> Ջթ., Հճ. <i>էյիւն</i>	
արճիճ	> Ջթ. <i>էռճիճ</i>	

արօր	> Ջթ. <i>հաւյէօյ</i>	
աւել(ի)	> Ջթ. <i>իվիլ</i> ,	Հճ. <i>իվել</i>
բաժին	> Ջթ. <i>բէժին</i>	
գահել	> Ջթ. ....,	Հճ. <i>գէհել</i>
գատիկ	> Ջթ. <i>գադըգ</i> ,	Հճ. <i>գաւիկ</i>
ժանգոտ	> Ջթ. <i>ժէնգոհիդ, ջէնգոհիդ</i>	
լափել	> Ջթ. <i>լաւիփել</i>	
խաղող	> Ջթ. <i>խաւղիդ</i> ,	Հճ. <i>խաւրղ</i>
խարշել	> Ջթ. <i>խէշիլ</i> ,	Հճ. <i>խէշել</i>
կանգնիլ	> Ջթ. <i>գիւնօլ</i> ,	Հճ. <i>գայնել, գաննել</i>
կանչել	> Ջթ. ....,	Հճ. <i>գէնչել</i>
կաշի	> Ջթ., Հճ. <i>գէշի</i>	
կարօտ	> Ջթ. <i>գաւիդիդ</i> ,	Հճ. <i>գայօդ</i>
հայիլ	> Ջթ. <i>հէյիլ</i> ,	Հճ. <i>հէյել</i>
հանգոյց	> Ջթ. <i>հաւնգից</i>	
հաջել	> Ջթ. <i>հէյիլ</i> ,	Հճ. <i>հէյել</i>
հարիւր	> Ջթ., Հճ. <i>հէյիլ</i>	
մաշել	> Ջթ. <i>մէշիլ</i> ,	Հճ. <i>մէշել</i>
նարգիս	> Ջթ. <i>նէյգից</i>	
պահել	> Ջթ. <i>բէհիլ</i> ,	Հճ. <i>բէհել</i>
սալոր	> Ջթ. <i>սաւիլիյ</i>	
սաղմոս	> Ջթ. <i>սաւիլիս, սաւիլիս</i>	
վախկոտ	> Ջթ. <i>վաւխգիդ</i>	
տանիք	> Ջթ. <i>դիւնել</i> ,	Հճ. <i>դէնել</i>
քարշել	> Ջթ. <i>քէշիլ</i> ,	Հճ. <i>քէշել</i>

Սրանցից մի քանիսը բացատրվում են *ճ, չ, ջ, շ* բաղաձայնների օրենքով (տե՛ս վերը §13). այսպես են՝ «անուկ, աշուն, արճիճ, բաժին, խաշել, կանչել, կաշի, հաջել, մաշել, քաշել»: – *Առնել*–ը առաջանում է միջին հայերենի *այնել* ձևից. – *աւել*–ը առաջանում է *յաւել* ձևից, որ հատկապես ընտրված է՝ *աւել* բառի երկու նշանակությունների մեջ զանազանություն մտցնելու համար. – *ժանգոտ* կազմված է *ժանգ* > *ժէնգ* բառից. – մյուսների պատճառը հայտնի չէ, բայց ձայնավորների ներդաշնակության օրենքը մեծ դեր ունի:

Ձեյթունի բարբառում ընդհանուր հնչյունական օրենք է, որ որևէ բառի նախավերջին վանկում գտնվում է *ա* միայն այն դեպքում, երբ վերջին վանկի ձայնավորն է *ե* օ կամ *ի*: Ուրիշ դեպքում այս *ա*-ն դառնում է *է*. օրինակ՝ թրք. *lağın* անցնելով Ձեյթունի բարբառին, դառնում է ոչ թե \**լալալ*, այլ *լէգան*: Նմանապես այն բոլոր միավանկ բառերը, որոնք ուղղակիանում ունեն *ա* ձայնավորը, սեռականում դարձնում են *է*. Ինչպես՝ փափստ, սեռ. *փէդի*: (Այս մասին ավելի մանրամասն տե՛ս §319):

§25. Երկվանկ բառերի այս օրենքի պատճառով է, որ երբ մի բառի *ա* ձայնավորը դառնում է *օ*, սեռականի մեջ *ա*-ն վերականգնվում է. Ինչպես՝ հաց > հօց, սեռ. հացը, խաղ > խօղ, սեռ. խաղէ՝ Նույնպես բայերի մեջ. Ինչպես՝ սանտր > Ջթ. սօնդրը, Հճ. սօր, բայց Ջթ. սանդրիլ «սանրել», Հճ. սարվել «սանրվել»:

§26. Երեք և ավելի վանկով բառերի մեջ վերջնավանկի *ա* ձայնավորը դառնում է միշտ *օ*. Ինչպես՝ անառակ > Ջթ. անառօգ, անարատ > Հճ. անայօր, արեգակ > Ջթ. արիգօգ, բարեկենդան > Ջթ., Հճ. բայգիհօնը, գերեզման > Ջթ. գիյիզմօն, Հճ. գէլգմօն, գօտելարձակ > Ջթ. գիդուլայձօգ «թափթփած, շիխտի», երիկամն > Ջթ. հյզօմ, ծործորակ > Ջթ. ձիձիյօգ, Հճ. ձիթօգ, կաղապար > Ջթ., Հճ. գաղբօյ, ճանապարհ > Ջթ. ջամփօնը, Հճ. ջամփօք, յաւանակ > Ջթ., Հճ. ավանօգ, նապաստակ > Ջթ. լափուտօգ, անմման > Ջթ. աննօմօն, օրինակ > Ջթ. ույունօգ և այլն:

Սրանց են վերաբերում հատկապես երրորդ լծորդության բայերը՝ *-ալ*, *-անալ* վերջավորությամբ, որ վերածվում է *-օլ*, *-անօլ*, *-նօլ*՝ լինի դա հին գրաբարից մնացած կամ նոր բարբառի մեջ ձևացած. օրինակ՝ գողանալ > Ջթ. գիդնօլ, Հճ. գօդնօլ, խրխնջալ > Ջթ. խօրխօնջօլ, Հճ. խրիլիլնջօլ, հեծկլտալ > Ջթ. հէձգօլիօլ, ուսանիլ > Ջթ. ուսնօլ, ունենալ > Ջթ. ունցնօլ, Հճ. ուննօլ և այլն:

§27. Այս հնչյունական օրենքն այնքան ուժեղ է և այնպես ընդհանուր, որ լեզվի բոլոր բառերը, հին ու նոր, մինչև անգամ կրոնական և գրական փոխառությունները, ինչպես և նորագույն բարբառային բառերը ենթարկվում են նրան. այսպես՝

- աղաղակ > Ջթ. աղաղօգ
- ամբարտաւան > Հճ. ամբայդաւօմ
- անապատ > Ջթ. անաբօղ

- անզգամ > Ջթ. անըսգօմ
- աշտարակ > Ջթ. աշդարօգ «բերդ»
- առագակ > Հճ. ալագօգ
- աւետարան > Ջթ. ալդայօն, Հճ. ալիդայօն
- բարեկամ > Հճ. բայգօմ
- գանձանակ > Ջթ., Հճ. գանձանօգ
- գաւազան > Ջթ. գանվագօն
- դատաստան > Ջթ. դանդատօն
- ժամանակ > Ջթ., Հճ. ժամանօգ
- լույիաս > Ջթ. լըվիյօս
- խայտառակ > Ջթ. խայդառօգ
- խոտանալ > Ջթ. խըսդանօլ, Հճ. խօսդանօլ
- կերպարանք > Ջթ. գէլբայօնը
- հակատակ > Ջթ. հագառօգ, Հճ. հագարօգ
- հաւասար > Ջթ. հավասօյ
- հնազանդ > Ջթ. հնագօնի՛
- հրաման > Ջթ. հըլամմօն
- հրեշտակ > Ջթ. հիյիշդօգ, Հճ. հնիլէշդօգ
- յիշատակ > Ջթ. հիշադօգ
- նահատակ > Ջթ. նահադօգ
- նաւասարդ > Հճ. նավասօյի՛
- շատրուան > Ջթ. շադրուօն, Հճ. շնիւնրուօն
- շարական > Ջթ. շայագօն
- պատասխան > Ջթ. բադասխօն
- պատարագ > Ջթ. բադայօք
- պատիճան > Ջթ. բադիճօն, Հճ. բադըճօն, երկուսն էլ՝ «պոմիդոր»
- պատուհաս > Ջթ. բադուհօս
- պատրիարք > Ջթ. բադրիյօք, Հճ. բադիյօք
- սարկաւազ > Ջթ. սայգավօյք
- վարդավառ > Ջթ., Հճ. վայդիվօյ
- չիգիտամ > Ջթ. չիգիդօմ (ծաղիկը):

§28. Թուրքերենից փոխառյալ բառերը նույնպես ենթարկվում են շեշտված ա>օ հնչյունափոխության. օրինակ՝  
թրք. *čavdar* «հաճար» > Հճ. չավդօյ



bardaq	«գավաթ»	> Հճ. բայրոխ
šekva	«գանգատ»	> Հճ. շէքվո
ay	«ուռկան»	> Հճ. օղ
dal	«ճյուղ»	> Ջթ. դօլ
qaz	«սագ»	> Ջթ. դօզ
portuqal	«նարինջ»	> Ջթ. փըլթախօլ

մինչև անգամ չայ > չօյ. ա–ն մնում է՝ *ամմա* «բայց», *ա՞ջաբա* «մի՞ թե»:  
Թուրքերեն բառերի այս հնչյունաբանությունը պիտի միջոց ծառայի մեզ ա>օ հնչյունափոխության ժամանակը որոշելու համար: Միայն ամե-նանոր բառերն են, որ պահում են իրենց *ա* հնչյունը. ինչպես՝ *գազ* «նավթ» < թրք. *gaz*, ճիշտ այնպես, ինչպես ունենք *նամակ*, *ծիծեռնակ*, *մելան*, որոնք նոր փոխառություն են գրականից:

Նկատի պետք է ունենալ նաև այն երևույթը, որ Ջեթյունի բարբառում թեն *ա–ն* դառնում է *օ(ո)*, բայց *այ–ը* չի դառնում *օյ* (ինչպես պիտի տես-նենք), այլ *ա։* Ըիշտ այսպես թրք. փոխառյալ բառերն էլ թեն *ա–ն* դարձնում են *օ*, բայց *ա–ն* մնում է *ա։* ինչպես՝ *քէլա՞ջ* «գեղեցիկ», *ֆա՞ս* (թուրքական ծո-պավոր գլխարկ, ֆես), *լա՞ջ* «դիակ», *էսքա՞լ* «զինվոր», *էյա՞ր* «թամբ», *բէդա՞ն* «իրան», *լա՞ջա՞ն* «լագան, կոնք», *հէօքիմա՞ր* «կառավարություն»:

§29. Այս բացարձակ կանոնից բացառություն են կազմում երեք բառ, որոնք են՝

պատուհան > Ջթ. *բա՞րիհիհան*, Հճ. *բահադեհան*. երկուսն էլ ստացել են անսովոր ձևափոխություն. Հանընի ձևը շրջված է, իսկ Ջեթյունի ձևը *պա-տուհօն* ձևն ստանալուց հետո՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով երկրորդ անգամ դարձել է *բա՞րիհիհան*:

ճախարակ > Ջթ. *ջխա՞ր*, ունի նույնպես անսովոր ձև՝ առաջին վանկի *ա* ձայնավորի սղմամբ և միջին *ռ* բաղաձայնով, որ ենթադրում է հին *ռ*, իսկ վերջին *ա* ձայնավորը կարող է ծագել թե՛ *ա* և թե՛ մանավանդ *այ* ձևից:

*ծիծեռնակ*. ամենից զարմանալի է այս բառը, որ պահել է իր *ա* ձայնա-վորը և եռավանկ բառերի մեջ կազմում է միակ բացառությունը, ինչպես *նամակ–ը*՝ երկվանկ բառերի մեջ: Բայց *ծիծեռնակ–ը* գրական բառ է. ժո-ղովուրդը գործածում է նրա փոխարեն թրք. *դըրլանդը*:

§30. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ միջին *ա* ձայնավորն ընկնում է կամ դառնում է *ը*, որ կարող է ապա վերածվել ուրիշ ձայնավորի, ինչպես՝

ագանի	> Ջթ. <i>հագնըլ</i> ,	Հճ. <i>հագնել</i>
աղանձել	> Ջթ. <i>աղընձիլ</i>	
անալի	> Ջթ. <i>անըլ</i> ,	Հճ. <i>անլի</i>
անառել	> Ջթ. <i>ըջըռիլ</i> ,	Հճ. <i>էջէրել</i>
ամաչել	> Ջթ. <i>ամըշնօլ</i> ,	Հճ. <i>ամաշնօլ</i>
անագան	> Ջթ. <i>անգոն</i>	
անանուխ	> Ջթ., Հճ. <i>անուխ</i>	
անարգել	> Ջթ. <i>անըլգիլ</i>	
անկանի	> Ջթ. <i>ընգնըլ</i> ,	Հճ. <i>ընգնել</i>
անցանել	> Ջթ. <i>անցնըլ</i> ,	Հճ. <i>անցնել</i>
աշակերտ	> Ջթ. <i>էշգիշդ</i> ,	Հճ. <i>էշգէշդ</i>
ապարանջան	> Ջթ. <i>աբուրջօն</i> ,	Հճ. <i>աբաբրջօն</i>
ապսպարել	> Ջթ. <i>աբբաբրըրիլ</i>	
առաջեալ	> Հճ. <i>արջեվ</i>	
առաստաղ	> Ջթ. <i>այըստօխ</i>	
արածել	> Ջթ. <i>արձըլ</i> ,	Հճ. <i>այձել</i>
արձակել	> Ջթ. <i>աձգիլ</i>	
արտասուք	> Ջթ. <i>արցունք</i> ,	Հճ. <i>արձունք</i>
աւետարան	> Ջթ. <i>ավիդրօն</i> , <i>ավիդայօն</i> (Հճ. <i>ավիդայօն</i> )	
բաժանել	> Ջթ. <i>բէժնիլ</i> ,	Հճ. <i>բէժնել</i>
բաղանիք	> Ջթ. <i>բաղնըք</i>	
բանալիք	> Ջթ. <i>բալընք</i> ,	Հճ. <i>բալլիք</i>
բարձրանալ	> Ջթ. <i>բանձըլնօլ</i>	
բուսանիլ	> Ջթ. <i>փուսնօլ</i> ,	Հճ. <i>փուսնել</i>
գանգատիլ	> Ջթ. <i>գանգոըլլ</i>	
գտանել	> Ջթ. ....,	Հճ. <i>գըննել</i>
գողանալ	> Ջթ. <i>գոնընօլ</i> ,	Հճ. <i>գօնընօլ</i>
դադարիլ	> Ջթ. <i>դադըրլ</i> , <i>դադոըլլ</i>	
ելանել	> Ջթ. <i>իլլիլ</i> ,	Հճ. <i>իննել</i>
զարդարել	> Ջթ. <i>գայըրիլ</i> ,	Հճ. <i>գայըրել</i>
իջանել	> Ջթ. <i>իչնօլ</i> ,	Հճ. <i>իչնել</i>
թաթախել	> Ջթ. <i>թաթախիլ</i> , <i>թէթախիլ</i> ,	Հճ. <i>թաթախել</i>
թառամիլ	> Հճ. <i>թաթամել</i>	
թեզանիք	> Ջթ. <i>թէզնիք</i>	

թուլանալ > Ձթ. թօլնօլ  
 թրատել > Ձթ. թըլղիլ «կոխկոտել»  
 թքանել > Ձթ. թօքնօլ, Հճ. թւքնել  
 թօթափել > Ձթ. թութփիլ, Հճ. թէթփել  
 լոգանալ > Ձթ. լիզնօլ  
 խածանել > Ձթ. խաձնիլ, Հճ. խազնել  
 խարակել > Ձթ. խառզիլ  
 կաղապար > Ձթ. գաղթօլ  
 կայանալ > Ձթ., Հճ. գիճօլ  
 կատաղիլ > Ձթ. գաղղլլ, Հճ. գաղղիլ  
 կարկաջել > Ձթ. գայգըջել (հավի)  
 կարկատել > Ձթ. գայգըղիլ, Հճ. գայգըննել  
 կլանել > Ձթ. գօլնօլ, Հճ. գալնուլ  
 կոճակել > Ձթ. գուջգիլ  
 կօշկակար > Ձթ. գուշգօլ  
 համարել > Ձթ. համրիլ, Հճ. համրել  
 հառաչել > Ձթ. հառչիլ, Հճ. հարչել  
 հասանել > Ձթ. հասնըլ, Հճ. հասնել  
 հարսանիք > Ձթ. հայսնըք, Հճ. հաշնիք  
 հարցանել > Ձթ. հայցընիլ, Հճ. հայցըննել  
 հաւանիլ > Ձթ. հավնըլ, Հճ. հէվնել  
 հաւատալ > Ձթ. Հճ. ավդօլ  
 հաւաքել > Ձթ. հաֆգիլ, Հճ. հէվքել  
 հեծանել > Ձթ. հէձնօլ, Հճ. հիզնօլ  
 հիւանդանալ > Ձթ. հօվօնդնօլ  
 հիւանդութիւն > Ձթ. հըվընդութըն  
 ճախարակ > Ձթ. ջխուք  
 ճայ-ագոս > Ձթ. ջագոս ?  
 ճանաչել > Ձթ. ջէնչնօլ  
 ճանապարհ > Ձթ. ջամփօնք, Հճ. ջամփօք  
 ճապաղիլ > Ձթ. ջաբղիլ «աչքերը չոտել»  
 մատանի > Ձթ. մադնիլ, Հճ. մաննի  
 մեռանիլ > Ձթ. մէռնըլ, Հճ. մէրնել  
 մոռանալ > Ձթ. մառնօլ, Հճ. մօրնօլ  
 մտանել > Ձթ. մօդնուլ, Հճ. մադնել

ուսանիլ > Ձթ. ուսնօլ, Հճ. ուսնել  
 չորանալ > Հճ. չիյնօլ  
 պագանել > Ձթ. բաքնիլ, Հճ. բազնել  
 պառակիլ > Ձթ. բառզիլ, Հճ. բարզիլ  
 պատառել > Ձթ. բադդիլ «կողողատել»  
 սատակիլ > Ձթ. սադզիլ, Հճ. սադզիլ  
 պարապել > Ձթ., Հճ. բայբիլ  
 պարխարցի > Ձթ. բախըլցա  
 տապակել > Ձթ. դարզիլ, Հճ. դարզել  
 տեսանել > Ձթ. դիսնուլ, Հճ. դիսնել  
 ցուցանել > Ձթ. ցըցընիլ, Հճ. ցալցալնել  
 քառասուն > Ձթ. քառսուն, Հճ. քարսուն  
 քարաթոթօշ > Ձթ. քալթօշ, Հճ. քարթէշ  
 քարաման > Ձթ., Հճ. քայմօն  
 օծանել > Ձթ. ուզնէլ «քսել»:

§31. Բոլոր այս կարգի բառերի միջին ա ձայնավորը չի կորչում. կան շատ բառեր, որ պահում են այդ ձայնավորը: Այս կարգին են պատկանում առաջին հերթին գրական կամ ուսումնական բառերը, բայց կան և ուրիշ սովորական բառեր էլ: Ահա մի ընդարձակ ցուցակ այդ կարգի բառերի.

աղաղակ > Ձթ. աղաղօգ  
 աղաչել > Ձթ. աղաչիլ, աղըչիլ, Հճ. աղաչել  
 ամբարտաւան > Հճ. անբնդալոն  
 անապատ > Ձթ. անաթօդ  
 անդրանիկ > Ձթ. անդրանիգ  
 աշխատիլ > Ձթ. աշխադըլ  
 աշտարակ > Ձթ. աշդարօգ  
 ապաշխարել > Ձթ. աբաշխարըլ  
 անառակ > Ձթ. անառօգ  
 անասուն > Ձթ. անասուն  
 անարատ > Հճ. անայօդ  
 անարգել > Հճ. անայգնիլ  
 արագակ > Հճ. ավագօգ  
 բամբասել > Ձթ. բամբասիլ, Հճ. բամբասել  
 բարկանալ > Ձթ., Հճ. բնայգանօլ  
 բնակիլ > Ձթ. բնագըլ, Հճ. բնագել

գանձանակ > Ջթ., Հճ. գնձանոօգ  
 գօտելարձակ > Ջթ. գնդուլայձօգ  
 դատաստան > Ջթ. դնդաստոն, Հճ. դնդաստոն  
 դասնիլ > Ջթ. դնվանըլ  
 դիմանալ > Ջթ., Հճ. դիմանօլ  
 երանի > Ջթ. իյանի, Հճ. էյանի  
 զարմանալ > Ջթ. զայմանօլ  
 թշնամի > Ջթ. թշնամի  
 ժամանակ > Ջթ. ժամանօգ  
 իմանալ > Ջթ. իմանօլ  
 խայտառակ > Ջթ. խայդառոգ  
 խափանել > Ջթ., Հճ. խափանիլ  
 խնամի > Ջթ. խնամիչ, Հճ. խնամի  
 խոստանալ > Ջթ. խըսդանօլ, Հճ. խօսդանօլ  
 խոստովանիլ > Ջթ. խըստըվանըլ  
 խստասէր > Ջթ. խսդասէր «շատ սիրածը»  
 ծերանալ > Ջթ. ձէյանօլ  
 ծիծաղել > Ջթ. ձձաղըլ, ձղաղըլ, Հճ. ձիձաղէլ  
 կատարել > Ջթ. գադարիլ  
 կեռասեմի > Ջթ. գէռասիմե  
 կերպարանք > Ջթ. գէյբայօնք  
 կիրակել > Ջթ. գիյագի, Հճ. գիյագի  
 կնքապաս > Ջթ., Հճ. գնքաբօթ  
 կշտանալ > Ջթ. գշդանօլ, Հճ. գիշդանօլ  
 կործանել > Ջթ. գոյձանիլ  
 հալածել > Ջթ. հալածիլ, Հճ. հալածել  
 հակառակ > Ջթ. հագառօգ, Հճ. հագարօգ  
 հաւասար > Ջթ. հավասօյ  
 հնազանդ > Ջթ. հնագօնի՛  
 հրամայել > Հճ. հըյամել  
 հրաման > Ջթ. հըյամնօն  
 ձուածել > Հճ. ձվագեղ  
 մարգարէ > Ջթ. մայգայէ  
 մարգարիտ > Հճ. Մայգայիդ (անունը)  
 մխիթարել > Ջթ. մխիթայիլ

մրգաջուր > Ջթ. մարքարջուր  
 յաւանակ > Ջթ., Հճ. ավանօգ  
 յիշատակ > Ջթ. հիշադօգ  
 նահատակ > Ջթ. նահադօգ  
 նաւակաւոր > Ջթ. նավագադիք, Հճ. նավագադիգ  
 նաւասարդ > Հճ. նավասօյի՛  
 շարական > Ջթ. շայագօն  
 ուղարկել > Հճ. ւղււյգել  
 ուրանալ > Ջթ. ուրանօլ  
 չարչարել > Ջթ. չայչայիլ  
 պապանձիլ > Ջթ. բարբանձըլ, Հճ. բարբանձիլ  
 պատասխան > Ջթ. բադասխօն  
 պատարագ > Ջթ. բադայօթ  
 սատանայ > Ջթ., Հճ. սադանօ  
 վախճանիլ > Ջթ. վախջանըլ  
 վարագոյր > Ջթ. վառագօլ  
 վարդապետ > Ջթ. վայդնարիդ  
 վարժապետ > Ջթ. վայժարիդ  
 վճարել > Ջթ. վջայիլ  
 քահանայ > Ջթ. քահաննօ  
 քամահել > Հճ. քամայէլ «չարախօսել»:

§32. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ ամենից հաստատունն է ա-  
 նաջին վանկը, ուր ա ձայնավորը մնում է միշտ անփոփոխ՝ հակառակ մյուս  
 երկու վանկերի, որոնցից վերջնավանկի ա-ն դառնում է միշտ օ, միջնա-  
 վանկի ա-ն հաճախ ընկնում է կամ ը-ի վերածվում:

Ավելորդ եմ համարում այստեղ դնել օրինակներ այդ մասին. նախորդ  
 երկու ցանկերը լիովին բավական են դրա համար:

§33. Միջին ա ձայնավորի սղման ու պահպանման գեղեցիկ օրինակ-  
 ներ են՝

գաւազան, որ ունի երկու ձև. իբրև «վարդապետի գավազան»՝ համար-  
 վում է կրոնական բառ և, պահելով իր միջին ա ձայնավորը՝ լինում է Ջթ.  
 գնվազօն, իսկ «հովվի գավազան» իմաստով՝ համարվում է ժողովրդական  
 բառ և միջին ա ձայնավորի կորստով դառնում է Ջթ. գնգվօն կամ գնվգօն:

թագաւոր բառը «արքա» իմաստով պահում է իր միջին ա ձայնավորը  
 և դառնում է Ջթ. թագնւլիյ, Հճ. թաքաւոյ, իսկ «նորափեսա» իմաստով

կորցնելով *ա* ձայնավորը՝ դառնում է **Ջթ. թաքվիւյ, Հճ. դնագճի:**

*խանգարել* բառը իր սովորական իմաստով պահում է միջին *ա* ձայնավորը և լինում է **Ջթ. խանգարիլ, իսկ «գույնը փչանալ» իմաստով՝** կորցնում է այն և դառնում է *խանդրըլ* կամ *խանդորըլ* (**Պլ. խադորիլ**):

§34. Առաջին վանկի *ա* ձայնավորը կարող է երբեմն փոխել իր երանգը և դառնալ *աւ, է, էօ, ք:* Այսպես՝

ալևոր	>Ջթ. հալիվիւյ,	Հճ. հալիվոյ
աճառել	>Ջթ. էջըոհիլ,	Հճ. էջէրել
անկանիլ	>Ջթ. ընգնիլ,	Հճ. ընգնել
աշակերտ	>Ջթ. էջգիյո,	Հճ. էջգէյո
բաժանել	>Ջթ. բէժնիլ,	Հճ. բէժնել
թագաւոր	>Ջթ. թաքաւիւյ,	Հճ. թաքաւոյ. «արքա»
թագաւոր	>Ջթ. թաքվիւյ,	Հճ. դնագճի «նորափեսա»
թաթախել	>Ջթ. թաթխիլ, բայց նաև թէթխիլ	
թառամիլ	>Հճ. թաւրմել	
խալիզոն	>Ջթ. խէօլիզիւն,	Հճ. խալիզոն*
ծարաիլ	>Ջթ. ձարվիլ, ձէրվիլ	
կաթուղիկոս	>Ջթ. գնթէօղգիւս	
կասկարայ	>Ջթ. գէսգէրաւք	
ճախարակ	>Ջթ. ջրխոաւք	
ճանաչել	>Ջթ. ջէնչնոյ	
մագուաքէ	>Ջթ. մէգդէքի,	Հճ. մնդդաւքի
շատրուան	>Հճ. շաւրաւք	
պատուհան	>Ջթ. քաւրիհիւն,	Հճ. քահաղէն:
քարաթոթոշ	>Ջթ. քայթէօշ,	Հճ. քարթէշ

§35. Երկրորդ վանկի *ա* ձայնավորը սղվելու ժամանակ կարող է դառնալ *աւ, է, ի, ու, ղ, օ.* ահա սրանց օրինակները (չեմ բերում այնպիսիները, որ առաջին վանկի պատճառով արդեն հիշված են նախորդ ցանկում).

ամաչել	>Հճ. ամաչնոյ,	Ջթ. ամըշնոյ
--------	---------------	-------------

\* Մեր հին լեզվով *խալիզոն* նշանակում է «խխուճ»։ Չեյթունի բարբառում ստացել է «մողես» նշանակությունը՝ շփոթվելով *խէգ* բառի հետ, և կամ զուգե *խէգ*-ը առաջացել է *խալիզոն*-ից։

անարգել	>Հճ. անայգել	
անմամ	>Ջթ. աննօմօն	
ապարանջան	>Հճ. աքաքոն,	Ջթ. արուքօն
երախտել	>Ջթ. իրիխտել «աղաչել»	
երեխայ	>Հճ. էյէխօ	
խաւարածիլ	>Հճ. խաւիճիլ «որթի ծիլ»	
հասկանալ	>Ջթ. հասկնօն,	Հճ. հասկննօն
հարցանել	>Ջթ. հայցընիլ,	Հճ. հայցընել
հիւանդանալ	>Ջթ. հօվօնդնօն	
հիւանդութիւն	>Ջթ. հըվընդութըն	
յօրանջել	>Ջթ. էրէնջգըոյ,	Հճ. էյէնջջօյ
նապաստակ	>Ջթ. լափուսոգ	
պապանձիլ	>Հճ. քաքանձիլ,	Ջթ. քաքանձըլ
վարդավատ	>Ջթ., Հճ. վայրիվօյ:	

§36. Այս փոփոխություններից մի մասը բացատրվում է *ճ, ջ, չ, ժ, շ* բաղաձայնների ազդեցությամբ (աճառել, աշակերտ, բաժանել, ճանաչել, ամաչել, ապարանջան), մեծ մասը՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով (թագաւոր, կաթուղիկոս, խալիզոն, ալևոր, քարաթոթոշ, կասկարայ, պատուհան, երեխայ), մի քանիսը նմանողական կազմություններ են (հիւանդանալ, հիւանդութիւն, անմամ), մի քանիսն էլ առաջացել են անհայտ պատճառներով (ծարաիլ, թառամիլ և այլն):

*Մանրթ.* – Բառավերջում եղած *ա* ձայնավորը դառնում է **Ջթ. օ,** ինչպես՝

օսօ, օնօ
գնա, ասա
Աննա, Օվսաննա (տե՛ս Հոդի բաժնում):

**Ե**

§37. Միավանկ բառերի սկզբում *ե*-ն դառնում է *յէ*՝ Հաճընի բարբառում. սրա համար ունենք միայն երկու օրինակ՝ ես > Հճ. յէս և երբ > Հճ. յէր: («Եգր» հնչվելով *եգեր* և «եկ» վերածվելով *եկո՛* ձևին, չեն համարվում միավանկ և մտել են երկվանկ բառերի շարքը):

Չեյթունի բարբառը չի դնում խտրություն միավանկ և երկվանկ բառերի միջև և երկու դեպքումն էլ նախաձայն *ե*-ն վերածում է *ի*-ի. այսպես՝ ես>*իս*, երբ>*իբ*:

§38. Երկու և երեք վանկանի բառերի սկզբում *ե-ն* դառնում է *ի՝ թե՛* Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում: Այսպես են՝

երազ	>Ջթ., Հճ. <i>իյօզ</i>
երկաթ	>Ջթ., Հճ. <i>իյգօթ</i>
երեկ	>Ջթ., Հճ. <i>իյէգ</i>
երկայն	>Ջթ., Հճ. <i>իյգամ</i>
երկանք	>Ջթ., Հճ. <i>իյգօնք</i>
երկիր	>Ջթ., Հճ. <i>իյգիյ</i> «օտարական» (բայց Ջթ. նաև <i>ըյգիյ</i> ձևով)
երերալ	>Ջթ., Հճ. <i>իյայօլ</i>
երես	>Ջթ. <i>իյիս</i> , Հճ. <i>իյէս</i>
եփել	>Ջթ. <i>իփիլ</i> , Հճ. <i>իփել</i>
երկինք	>Ջթ. <i>իյգէնք</i> , Հճ. <i>իյգիճք</i>
երեկոյ	>Հճ. <i>իյիգում</i> , Ջթ. <i>իյգօն</i>
ելանել	>Ջթ. <i>իլիլ</i> , Հճ. <i>իճնել</i>
եզր	>Ջթ. <i>իզիյ</i> , Հճ. <i>իզէյ</i>
երախտել	>Ջթ. <i>իյիխէլ</i> «աղաչել»
երէց	>Ջթ. <i>իյէց</i>
երիցկին	>Ջթ. <i>իյիցգիճ</i>
երթալ	>Ջթ. <i>իյթօլ</i> , Հճ. <i>իշտօլ</i>
երիկամն	>Ջթ. <i>իյգօմ</i> :

§39. Մի քանի տեղ Ջեյթունի բարբառը կանոնավոր կերպով նախաձայն *ե-ն* դարձնում է *ի*, բայց Հաճընի բարբառն ունի է. այսպես են՝

երանի	>Ջթ. <i>իյանի</i> , էյանի
երկու	>Ջթ. <i>իյգու</i> , Հճ. էյգու
երեք	>Ջթ. <i>իյիք</i> , իսկ Հճ. <i>ր-ն</i> դարձնելով <i>ժ</i> և ջնջելով սկզբնահնչյունը՝ <i>ժեք</i> . հմմտ. ՆՆխ. <i>ժէք</i> :
երդումն	>Ջթ. <i>իյիճօմ</i> , բայց նաև <i>ույիճօմ</i> , որի դիմաց Հճ. ունի միայն <i>ույիճիմ</i> : իսկ բայն է երդնով >Ջթ. <i>օյիճօնօլ</i> :

Ընդհակառակը, մի քանի տեղ էլ Հաճընի բարբառն ունի կանոնավոր կերպով նախաձայն *ի*, իսկ Ջեյթունի բարբառը շեղվում է: Այսպես՝

երևիլ	> երևալ	>Հճ. <i>իյվիճօլ</i> , Ջթ. <i>օյվօնօլ</i>
եկ	> եկի	>Հճ. <i>իզի</i> , <i>իզճ</i> , Ջթ. <i>այզճ</i> , <i>այզի</i>

§40. *ղ* բաղաձայնից առաջ *ե-ն* չի դառնում *ի*, այլ պահպանվում է է ձևով, որ կարող է դառնալ նաև է, *ա*, *օ*. այսպես՝

եղայ	>Ջթ., Հճ. էղօ	
եղիճ	>Հճ. էղիջ,	Ջթ. <i>աղիջ</i>
եղունգն	>Հճ. <i>ամունգ</i> ,	Ջթ. <i>օղունգ</i>
եղջիւր	>Հճ. էյսջիյ (պտուղը),	Ջթ. <i>ախսջիյ</i> «կտտոշ»
եղբայր	>Ջթ. էյսբիյ,	Հճ. <i>ախբայ</i> :

§41. Մի քանի ուրիշ դեպքերում էլ նախաձայն *ե-ն* դառնում է է և չի վերածվում *ի-ի*. այսպես են՝

երեսուն	>Ջթ. էրսուն, Հճ. էրսուն
երեխայ	>Հճ. էյէխօ
երթ	>Ջթ. էթը (այժմ մեռած ձև)
եպիսկոպոս	>Ջթ. էթիսգիթիս:

§42. Եռալ «քոր գալ» բառի մեջ ավելանալով *կ* բալական մասնիկը՝ ստացվել է Հճ. *գէրօլ* (հմմտ. Պլ. *գէրալ*). ընդհակառակը, *եկեղեցի* բառից նախաձայն *ե-ն* ընկնելով՝ ստացվել է Ջթ. *գէղիցէ*:

§43. Բառավերջում չի կարող գտնվել *ե*. բայց վերջնավանկում գտնվող *ե-ն* դառնում է միշտ *ի* Ջեյթունի բարբառում, բայց մնում է *ե* կամ է Հաճընի բարբառում: Այսպես՝

աբեթ	>Ջթ. <i>աբիթ</i> , Հճ. <i>աբեթ</i>
աներ	>Ջթ. <i>անիյ</i> , Հճ. <i>անէյ</i>
աշակերտ	>Ջթ. էշգիյր, Հճ. էշգէյր
աւել (balai)	>Ջթ. <i>ավիլ</i> , Հճ. <i>ավել</i>
աւելի(ի)	>Ջթ. <i>իվիլ</i> , Հճ. <i>իվել</i>
բերդ	>Ջթ. ...., Հճ. <i>բէյրճ</i>
բևեկն	>Ջթ. <i>բիբիգ</i>
գետ	>Ջթ. ...., Հճ. <i>գէր</i>
գիշեր	>Ջթ. <i>գիշիյ</i> , Հճ. <i>գիշէյ</i>
գմբեթ	>Ջթ. ...., Հճ. <i>գիմբեթ</i>
դարիվեր	>Ջթ. ...., Հճ. <i>դայվէյ</i>
երես	>Ջթ. <i>իյիս</i> , Հճ. <i>իյէս</i>
երեք	>Ջթ. <i>իյիք</i> , Հճ. <i>ժեք</i>
զգեստ	>Ջթ. ըսգից
ընկեր	>Ջթ. ընգիյ, Հճ. <i>անգէյ</i>
թել	>Ջթ. <i>թիլ</i> , Հճ. <i>թել</i>

թեմ	>Ջթ. թիմ	
թեփ	>Ջթ. թիփ,	Հճ. թեփ
խելք	>Ջթ. խիլք,	Հճ. խելք
խեճեայ	>Ջթ. խեջիբ,	Հճ. ղաճեփ
խեճթ	>Ջթ. խիճթ	
ծեփ	>Ջթ. ձիփ	
կապերտ	>Ջթ. գայբիդ	
կեր	>Ջթ. ....	Հճ. գէյ
հետ	>Ջթ. ....	Հճ. հէդ
մեծ	>Ջթ. միճձ,	Հճ. մեճ
մերկ	>Ջթ. միյգիկ,	Հճ. մեյգ
մեք	>Ջթ. միճք,	Հճ. մեճք
յետ	>Ջթ. իդ,	Հճ. յեդ
նետ	>Ջթ. նիդ	
ներքս	>Ջթ. նիյս,	Հճ. նեյս
շերեփ	>Ջթ. շիյիփ,	Հճ. շիյեփ
չեչ	>Ջթ. չիչ	
պատկեր	>Ջթ. բադգիյ,	Հճ. բադգէր
սեկ	>Հճ. սեգ	
վարդապետ	>Ջթ. վարդարիդ	
վարժապետ	>Ջթ. վարժարիդ	
վերև, վերը	>Ջթ. վիյիվ,	Հճ. վեյ
վեց	>Ջթ. վից,	Հճ. վեց
ցերեկ	>Ջթ. ցիյիգ,	Հճ. ցիյեգ
փերթ	>Հճ. փեյթ:	

§44. Երբ վերջնավանկի է ձայնավորը գտնվում է *ռ* կամ *դ* բաղաձայն-ներից առաջ, չի դառնում *ի*, այլ թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում դառնում է *ե* կամ *է*. այսպես՝

աղեղն	>Ջթ. աղէդ,	Հճ. աղեղ
անթեղ	>Ջթ. հնթեղ, հնթեղ,	Հճ. անթեղ
ասեղն	>Ջթ. ասեղ, ասէդ,	Հճ. ասեղ
բաղեղ	>Ջթ. բաղէդ, աղէդ, աղէոդ	
բեռն	>Ջթ. բեռ, բէռ,	Հճ. բէր
բևեռ	>Ջթ. բիբեռ, բիբէռ,	Հճ. բիբեր
ղեղ	>Ջթ. ղեղ, ղէդ «վառոդ»,	Հճ. ղեղ «ճար»

ղեղձ	>Ջթ. ղէղձ,	Հճ. ղեղձ՝
ղեռ	>Ջթ. ղէռ	
թեռ	>Ջթ. թէռ «բրդե թել»	
կանթեղ	>Հճ. գանթեղ	
ձմեռն	>Ջթ. ձիմեռ,	Հճ. ձմէր
ձուածեղ	>Հճ. ձվագեղ	
ճեղք	>Հճ. ջեխք	
մեղք	>Ջթ. մէխք.	Հճ. մեխք
մեղր	>Ջթ. մեղուր,	Հճ. մեղր
նեղ	>Ջթ. նեղ	
շեղբ	>Ջթ. շեղբ՝	Հճ. խշբիգ
շեռ	>Ջթ. շէռ,	Հճ. շէր
շպլեղ	>Ջթ. շիբլեղ	
ուղեղ	>Ջթ. էղէդ	
սիսեռն	>Ջթ. սիսեռ,	Հճ. սիսէր
տեղ	>Ջթ., Հճ. դեղ:	

§45. Օրինակների սակավության պատճառով դժվարանում եմ, բայց համարձակվում եմ ասել, որ *խ* բաղաձայնից առաջ գտնվող *ե* ձայնավորն ևս պահպանվում է *ե* կամ *է* ձևով: Օրինակներն են՝

պատեխ «սեխ»	>Ջթ. բաղէխ
տառեխ	>Հճ. դայէխ
մժեխ	>Ջթ. մջղէխ (կամ < մեջղէխ):

Սրանց է պատկանում նաև *թիթէխ*, որ *թիթեռն* բառի միջին հայերեն ձևն է և Ջեյթունի բարբառում դարձել է *թիթէխ*:

Հիշենք վերջապես *ճեղք* և *մեղք* բառերը, որոնք արտասանվելով Ջթ., Հճ. ջեխք, մեխք, կարող են նույն հնչյունափոխության իբրև ապացույց ծառայել:

§46. Քիչ հնչյունական օրենք կա աշխարհում, որ այնքան կանոնավորությամբ և ճշտությամբ գործադրված լինի որևէ բարբառում, որչափ վերջնավանկի է ձայնավորի օրենքն այսպիսի պայմաններում:

Այնուամենայնիվ ունենք մի քանի տարակուսելի կետեր.

*Ձեռք* բառը դառնում է Ջթ. ծււռք, ձււռք, Հճ. ձւար, ինչպես նաև պոլսա-հայ բարբառում, բոլորովին անկանոն կերպով՝ *ձառք*: Թե՛ ինչու՞. չգիտենք:

Անձեղ (թռչունը) բառը թեև ՀՃ. լինում է կանոնավորապես *անձեղ*, բայց Ջթ. *անձիղ*: Թե ինչու՞ է-ն դառնում է այստեղ *իւ*՝ չզիտենք. հիշենք, սակայն, գրաբարի ուղեղ-*ուղիղ*, լող-*լիղ* գրչությունները:

Բաղեղն բառն էլ թեև տալիս է կանոնավոր կերպով Ջթ. *բաղեղ*, բայց նաև շատ անսովոր ձևով *աղեղ* և *աղէօղ*:

Գիշեր բառը թեև կանոնավոր կերպով դառնում է ՀՃ. *գիշէյ*, բայց նաև սղմամբ *շէյս* «այս գիշեր»: Ավելի հետաքրքրական է սակայն *շիյէգ* ձևը, որ *գիշէյ* ձևին հավասար գործածական է: Այստեղ վերջնավանկի է-ն, որ *գիշէյ* ձևի մեջ կանոնավոր կերպով տվել է է, ընդհակառակը՝ *շիյէգ* ձևի մեջ անկանոն կերպով դարձել է *ի*: Բայց անկանոնությունն էլ բացատրվում է *ցերեկ* > ՀՃ. *ցիյէգ* բառի նմանողությամբ: Հաճախ միասին գործածվում են *շիյէգ-ցիյէգ* «գիշեր-ցերեկ»:

Դեհ «կողմ» բառը տալիս է Ջթ. *դիհ*, *դիահ*, ուր է>ժ. *ա*. նույն ձևով չկա ուրիշ բառ, որպեսզի ճշտեցնեք կանոնը:

Մղեղ բառն անստույգ է:

Ներ բառը թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում տալիս է *նեյ*: Այստեղ անկանոն կերպով նկատում ենք է > Ջթ. է: Ուրիշ դեպքերում –եր վերջավորությունը տալիս է միշտ Ջթ. –իյ. ինչպես՝ աներ > Ջթ. *անիյ*, գիշեր > Ջթ. *գիշիյ*, ընկեր > Ջթ. *ընգիյ*, պատկեր > Ջթ. *բաղգիյ*: Միավանկ բառերից օրինակ չունենք, թեև կան գեր > Ջթ. *գէյ*, տեր > Ջթ. *դէյ*, բայց չնշված են Ջեյթունի բարբառից: Ծեր (Ջթ. *հւլվիյ*), կեր (ՀՃ. *գէյ*) բառերը, ինչպես նաև *վեր* (ՀՃ. *վէյ*), չշփոթելու համար վայր > Ջթ. *վւյ*, *իվւյ* բառի հետ: (Սրա փոխարեն դրվել է ուղեղ > *եղեղ* բառը, որ բացի իր սովորական իմաստից, ունի նաև «վրա» նշանակությունը):

Ցեց բառը դարձել է Ջթ. *ցաց*, թեև *վեց* լինում է Ջթ. *վից* և երեց > *իյէց*:

§47. Երկվանկ բառերի մեջ առաջին վանկի անշեշտ է ձայնավորը դառնում է թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում *ի*. այսպես՝

բերան	> Ջթ., ՀՃ. <i>բիյօն</i>	
բերել	> Ջթ. <i>բիրիլ</i> ,	ՀՃ. <i>բիյէլ</i>
գետին	> Ջթ. <i>գիղէն</i> ,	ՀՃ. <i>գիղին</i>
դերձան	> Ջթ., ՀՃ. <i>դիյձօն</i>	
թեթև	> Ջթ. <i>թիթիվ</i> ,	ՀՃ. <i>թիթել</i>
լեզու	> Ջթ. <i>լիզօ</i> ,	ՀՃ. <i>լիզու</i>
ծեծել	> Ջթ. <i>ծիծիլ</i> ,	ՀՃ. <i>ծիծել</i>

ծեփել	> Ջթ. <i>ծիփիլ</i> ,	ՀՃ. <i>ծիփել</i>
կեղև	> Ջթ. <i>գիղիվ</i>	
հեծան	> ՀՃ. <i>հիձօն</i>	
հերիւն	> Ջթ., ՀՃ. <i>հիյին</i>	
հերկել	> Ջթ. <i>հիյգիլ</i>	
հերու	> Ջթ., ՀՃ. <i>հիյու</i>	
ճերմակ	> Ջթ. <i>շիյմօգ</i>	
յետև	> Ջթ. <i>իղիվ</i> ,	ՀՃ. <i>իղել</i>
ներկել	> Ջթ. <i>նիյգիլ</i>	
ներքև	> Ջթ. <i>նիյքիվ</i> ,	ՀՃ. <i>նիյքել</i>
ներքսի	> Ջթ. <i>նիքսէ</i> «մառան»	
շերեփ	> Ջթ. <i>շիյիփ</i> ,	ՀՃ. <i>շիյէփ</i>
վերայ	> Ջթ. <i>վիյւ</i> ,	ՀՃ. <i>վիյօ</i>
վերև	> Ջթ. <i>վիյիվ</i>	
տերև	> Ջթ. <i>դիյիվ</i>	
ցերեկ	> Ջթ. <i>ցիյիգ</i> ,	ՀՃ. <i>ցիյէգ</i>
փետել	> Ջթ. <i>փիղիլ</i> ,	ՀՃ. <i>փիղել</i>
քերել	> Ջթ. <i>քիյիլ</i> ,	ՀՃ. <i>քիյէլ</i>
քերթել	> Ջթ. <i>քիյթիլ</i> ,	ՀՃ. <i>քիյթել</i>

*թեզանիք*–ը թեև եռավանկ, բայց նախ դարձել է *թեզանիք* և ապա իբրև երկվանկ՝ *թիզանէք*:

§48. Այս դեպքումն էլ *դ*, *ռ* բաղաձայններից առաջ է-ն չի դառնում *ի*, այլ մնում է. ինչպես՝

դեղին	> Ջթ. <i>դէղին</i> ,	ՀՃ. <i>դէղին</i>
լեղակ	> Ջթ. <i>լէղօգ</i>	
լեղի	> Ջթ. <i>լէղլ, լէղա</i> ,	ՀՃ. <i>լէղի</i>
խեղիլ	> Ջթ. <i>խէղվալ</i> «տնազ տալ»	
կեռաս	> Ջթ. <i>գէռօս</i>	
մեղու	> Ջթ. <i>մէղու</i> ,	ՀՃ. <i>մւլղու</i>
սեղան	> Ջթ., ՀՃ. <i>սէղօն</i>	
սեղմել	> Ջթ. <i>սէղմիլ</i>	
վեղար	> Ջթ. <i>վէղօյ</i>	
քեռի	> Ջթ. <i>քէռա</i> ,	ՀՃ. <i>քէրի</i> :

§49. Այստեղ էլ *խ* բաղաձայնի համար բավականաչափ օրինակներ չկան, սակայն մեր միակ օրինակը նեխիլ > Ջթ. *նէխիլ* կանոնավոր է և համապատասխանում է վերը նշանակած հնչյունական օրենքին:

§50. Չանազան պատճառներով այս կանոնից բացառություն են կազմում՝

- խեղդել > Չթ. *խըխդիլ*, Հճ. *խախդել*
- փեթակ > Չթ. *փեթոզ*
- ռեհան > Չթ. *ըռահոն*
- հերիք > Չթ. *հեչիք*
- ճեմճոտ > Չթ. *ջեօճջիդ*
- զենուլ > Չթ. *զեմիլ*
- փետուր > Չթ. *թօբուլ*, Հճ. *թուբուլ*
- խեճեպ > Չթ. *խեջիբ*, Հճ. *ղաջեփ*
- հեռի > Չթ. *խօռու*, Հճ. *հեբու*:

§51. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ միջին և ձայնավորը կորչում է. այսպես են՝

- աւելել > Հճ. *ավլել*
- աւետարան > Չթ. *ավդայօն* (բայց նաև *ավիդրօն*, իսկ Հճ. *ավիդայօն*)
- աւերել > Չթ. *ավլիլ*, Հճ. *այվել*
- բարեկամ > Հճ. *բայգօմ*
- բարեկենդան > Չթ. *բայգիմօնք* (երկու է-երից առաջինը սղված, մյուսը դարձած ի)
- բևեկնի > Չթ. *բիբգիմէ*
- գիտեճալ > Հճ. *գիմնօլ* (իսկ Չթ. *գիդանօլ*, ուր է-ն դարձել է ա)
- երեկոյ > Չթ. *իյգօն* (բայց Հճ. *իյգօնն*)
- երեսուն > Չթ. *էոսուն*, Հճ. *էրսուն*
- կարեճալ > Չթ. *գանըլ*, Հճ. *գանօլ*
- հայելի > Չթ. *հիլլէ*, Հճ. *հէլլի*
- ունեճալ > Հճ. *ուննօլ*, Չթ. *ունցնօլ*
- վայելել > Չթ. *վէլիլ*:

§52. Ուրիշ դեպքերում է ձայնավորը չի սղվում, այլ վերածվում է ի-ի. այսպես՝

- արբեճալ > Չթ. *հայբիմօլ*
- արեգակն > Չթ. *այիգօզ*
- աւետարան > Չթ. *ավիդրօն*
- բարեկենդան > Չթ. *բայգիմօնք*

- գերեզման > Չթ. *գիյիզմօն*, Հճ. *գէյէզմօն*
- եկեղեցի > Չթ. *գէդիցէ*
- երեկո > Հճ. *իյիգօն* (Չթ. *իյգօն*)
- կամեճալ > Չթ. *գամիմօլ*
- հրեշտակ > Չթ. *հիյիշդօզ*, Հճ. *հալէշդօզ*
- պարծեճալ > Չթ., Հճ *բայձիմօլ*:

§53. Քիչ անգամ այս դեպքում է-ն մնում է, հատկապես Հանրնի բարբառում. այսպես են՝

- գերեզման > Հճ. *գէյէզմօն* (Չթ. *գիյիզմօն*)
- ծիծեռնակ > Չթ. *ձիձէռնակ* (n-ի մտո)
- հրեշտակ > Հճ. *հալէշդօզ* (Չթ. *հիյիշդօզ*):

§54. Գլխավորապես հետևելով ձայնավորների ներդաշնակությանն օրենքին, միջին է-ն վերածվում է զանազան ձայնավորների. այնպես՝

- գօտելարձակ > Չթ. *գուդուլայձօզ*
- երերալ > Չթ., Հճ. *իյայօլ*
- ձմերուկ > Հճ. *ձամալուգ*
- գիտեճալ > Չթ. *գիդանօլ* (Հճ. *գիմնօլ*)
- ուռեճալ > Չթ. *ուռունօլ*, Հճ. *ուրունօլ*
- պարծեճալ > Հճ. *բայձամնօլ*
- սկեսուր > Չթ. *օսգօսուլ*
- ստեպղին > Չթ. *ըսքըդղին*:

§55. Բույսերի անուններ կազմող -ենի մասնիկը.

- բևեկնի > Չթ. *բիբգիմէ*
- կեռասեճի > Չթ. *գէռիսիմէ*, *գէռասիմէ*
- հաց(եճ)ի > Հճ. *հացամի*
- մորեճի > Չթ. *մըլմիմէ*:

§56. Մնում է խօսել երեք և ավելի վանկանի բառերի սկզբնավանկի է ձայնավորի մասին: Այս կարգի օրինակներն են՝

- գերեզման > Չթ. *գիյիզմօն*, Հճ. *գէյէզմօն*
- եկեղեցի > Չթ. *գէդիցէ*
- թեզամիք > Չթ. *թէզմիք*, *թիզմէք*
- ծերանալ > Չթ. *ձէյանօլ*



կեղծաւոր	> Ջթ. գեղծաւորի
կեռաս(եմ)ի	> Ջթ. գեռիս, գեռիսի
կերպարանք	> Ջթ. գէյբայօնք
հեծանել	> Ջթ. հէձնօլ, Հճ. հիձնել
հեծկլտալ	> Ջթ. հէձգօլիօլ
մեռանիլ	> Ջթ. մէռնիլ, Հճ. մէրնել
սերկկիլ	> Ջթ. սիճգիվիլ, Հճ. սիվուգալիլ
Սերովբէ	> Ջթ. Սըլըբբէ (անունը)
տեսանել	> Ջթ. դիսնուլ, Հճ. դիսնել:

Սրանց մեջ սկզբնականի ե-ն դարձել է մեծ մասամբ է (հատկապես ղ, ո բաղաձայններից առաջ), երեք դեպքում ի և մի անգամ ը:

Է

§57. Բառասկզբում եղած միակ օրինակն է էշ > Ջթ., Հճ. էշ, որ պահպանում է սկզբնահնչյունը անփոփոխ՝ թերևս շ-ի պատճառով:

§58. Վերջնականում գտնվող շեշտված է-ի օրինակները հետևյալներն են (մեծ մասամբ միավանկ).

անեծք	> Ջթ. անէքք, Հճ. անէքք, անեքք
բէջ	> Ջթ. բէջ «ուս»
գէշ	> Ջթ., Հճ. գէշ «վատ»
գէջ	> Հճ. գէջ «թաց»
գոմէշ	> Ջթ. գոմէշ
դէմ	> Ջթ., Հճ. դէմ
երէկ	> Ջթ., Հճ. իյէգ
երէց	> Ջթ. իյէց
խէժ	> Ջթ. խէժ
խէշ	> Ջթ. խէշ «կողքը, քովը»
խստասէր	> Ջթ. խստասէլ «շատ սիրածը»
կէս	> Ջթ., Հճ. գէս
կէտ	> Ջթ. գէտ
ձէթ	> Ջթ. ծէթ, ձէթ
մէջ	> Ջթ., Հճ. մէշ
մէջք	> Ջթ., Հճ. մէշք
շէն	> Ջթ., Հճ. շէն «ուրախ»

շրէշ	> Ջթ. շրէշ, Հճ. շալէշ
պարտէզ	> Ջթ. բայրէզ
պէտք	> Ջթ. բէթք, Հճ. բէրք
սէզ	> Ջթ. սէզ
վէգ	> Ջթ. վէգ, Հճ. վէգ՝
տէր	> Ջթ., Հճ. դէլ
տէրընայս	> Ջթ. դէլիճնէս, Հճ. դէլէճնէգ
քէն	> Ջթ. քէն, Հճ. քէն
օրէնք	> Ջթ., Հճ. ուլէնք:

Այս բոլորի մեջ է ձայնավորը դարձել է է (կամ ե):

§59. Մի դեպք ունենք միայն, երբ վերջնականի է-ն դառնում է ի. այդ է՝ աղուէս > Ջթ. աղվիս:

Իսկ մէտ բառը շփոթվելով (իմաստի նմանության պատճառով) նետ բառի հետ՝ դարձել է նիդ «կշեռքի սլաքը»:

§60. Բառավերջում է պատահում է հետևյալ բառերի մեջ.

եթէ	> Ջթ. էթը (այժմ մեռած ձև)
թէ	> Ջթ. թէ, թը, Հճ. թէ
կիրակէ	> Ջթ. գիյագի, Հճ. գիյաճի
մազտաքէ	> Ջթ. մէզդէքի, Հճ. մազդաքի
մարգարէ	> Ջթ. մայգալէ
պախրէ	> Ջթ. բախրէ, Հճ. բախրէ «եզ»
Սերովբէ	> Ջթ. Սըլըբբէ (անունը):

Ը

§61. Բառասկզբում գտնվող ը-ն ոչ մի անգամ անփոփոխ պահպանված չէ, այլ միշտ հետևելով ձայնավորների ներդաշնակության օրենքին, դարձել է ի, է, օ կամ չ. Եղած օրինակները հետևյալներն են.

է.- ընդ այլ խօսել > Ջթ. էնդալ խուսըլ «զատանցել», Ջթ. էնդ ձիգ էոնաք «ձեզնից առաջ»:

ը.- ընկեր > Ջթ. ընգի, Հճ. անգել, ընտրել > Ջթ. հընդդիլ, Հճ. հալըլ:

ի.- ընկոյգ > Ջթ. ինգէգ, Հճ. անգիգ, և հատկապես ընդ նախդիրը, որից կազմված են Ջթ. ինդան «այնպես», ինդան «այսպես», ինդիյօգ «երազում», ինդիրգոց «երեկոյան դեմ», ինդիրիսիդ «քո դեմ, քո առաջ»:

o.- ուրբ «դոշաք» > *onnur* (անցնելով *ռոուք* ձևից):

Բառավերջում գտնվում է միայն իբրև որոշիչ հոդ, որի մասին տե՛ս §328:

§62. Ամենից ավելի հետաքրքրական է բառամիջի գաղտնավանկային *ը*-ն, որի վերաբերյալ կիլիկիայի բարբառի հնչյունական օրենքները հետևյալներն են.

Երկվանկ բառերի մեջ, երբ բառն սկսում է երկու կամ երեք բաղաձայնով, որոնց հաջորդում է *ա* ձայնավորը, այս *ա*-ն դառնում է *o* և նրա ազդեցությամբ՝ երկու բաղաձայնի միջև գտնվող *ը* ձայնավորը դառնում է *o* (իսկ Հճ. *ա* կամ *ը*): Այսպես են՝

- գդակ > Ձթ. *գճոց*
- գնաց > Ձթ. *գճոց*
- դմակ > Ձթ. *դճոց*, Հճ. *դճոց*
- դրախտ > Ձթ. *դճոխտ*
- զնդան > Ձթ. *զոնոն*
- խոկալ > Ձթ. *խոոգոլ*
- խոչակ > Ձթ. ..., Հճ. *խոչոց*
- խրատ > Ձթ. *խոյոտ*, Հճ. *խոյոտ*
- ծմակ > Ձթ. *ծոմոց*
- ծրար > Ձթ. *ծոյոյ*, Հճ. *ծոյոյ*
- կթղայ > Ձթ. *գոթղո*, Հճ. *գոթղո*
- կնդակ > Ձթ. *գոքղոց*
- կոնակ > Ձթ. *գոոնոց*, Հճ. *գոոնոց*
- կտալ > Ձթ. *գոոսլ*, Հճ. *գոոսլ*
- կրակ > Ձթ. *գոյոք*, Հճ. *գոյոց*
- կրեայ > Ձթ. *գոյրո* «փականք», Հճ. *գոյրէշ* «կրյա»
- մղեղ > Ձթ. ..., Հճ. *մաղող*
- հնձան > Ձթ. *ոնձոն*
- հրաշք > Ձթ. ..., Հճ. *հոյոշք*
- մկրատ > Ձթ. *մոգյոտ*, Հճ. *մոյգոտ*
- նման > Ձթ. *նոմոն*
- պսակ > Ձթ. *քոսոց*, Հճ. *քոսոց*
- սրահ > Ձթ. *սոյոֆ*, *սորոֆ*

- վկայ > Ձթ. *վոգո*
- տարգալ>դգալ > Ձթ. *դճոգոլ*, Հճ. *դոճոգոլ*
- տղայ > Ձթ., Հճ. *դողո*
- տնագ > Ձթ. ..., Հճ. *թնոց*
- քսան > Ձթ. *քոսոն*, Հճ. *սոն*:

§63. Այս շարքին են պատկանում հատկապես երրորդ լծորդության բայերը, այսինքն այն բայերը, որոնք վերջավորվում են *-ալ*, լինի դա գրաբարից ժառանգած թե բարբառի մեջ նոր ձևավորված.

- բխիլ > Ձթ. ..., Հճ. *բճխոլ*
- թնձկալ > Ձթ. *թոնձոլ*
- թքանել > Ձթ. *թոքնոլ*, Հճ. *թոքնել*
- խնդալ > Ձթ. *խոնդոլ*, Հճ. *խոնդոլ*
- խրտիլ > Ձթ. *խոտոլ*, Հճ. *խոտոլ*
- կլանել> կլնալ! > Ձթ. *գոլնոլ*, Հճ. *գոլնոլ*
- նչալ > Ձթ. ..., Հճ. *չոչոլ*
- մնալ > Ձթ. *մոնոլ*, Հճ. *մոնոլ*
- մտանել>մտնալ > Ձթ. *մոննոլ*
- ցնծալ > Ձթ. *ցոնձոլ* «վճարել»:

§64. Երբեմն այս *o* ձայնավորի փոխարեն դրվում է մի ուրիշ ձայնավոր՝ *ի*, *ու* կամ *է*. այսպես՝

- դժուար > Ձթ. *դճոյ*
- դրամ > Ձթ. *դճրոմ*
- հպարտ > Ձթ. *հիքոյոյ*, *հուքոյոյ*
- մշակ > Ձթ. *մուշոց*, Հճ. *մոշոց*
- յստակ > Ձթ. *իսոց*
- նշան > Ձթ. *նիշոն*
- նշխար > Ձթ., Հճ. *նէշխոյ*
- չուան > Ձթ. *չուվոն*, Հճ. *չուվոն*:

§65. Երբ երկվանկ բառի առաջին վանկն ունի *ը* և երկրորդ վանկը *ե* կամ *է*, այս *ե*-ն կամ *է*-ն մնում է, իսկ առաջին վանկի *ը* ձայնավորը դառնում է *ը*. Այսպես՝

- գմբեթ > Ձթ. ..., Հճ. *գճմբեթ*
- ձմեռն > Ձթ. *ձճմեռն*, Հճ. *ձմեռն*

մծեխ > Ձթ. *միջդեխ*  
 շպլեղ > Ձթ. *շիբլեղ*  
 շրէշ > Ձթ. *շրէշ*, Հճ. *շաշէշ*  
 պճեղն > Ձթ. *բիջեղ*, Հճ. *բաշեղ*:

§66. Երբ երկվանկ բառի առաջին վանկն ունի ը և երկրորդ վանկը *ի*, այս *ի-ն* դառնում է ը կամ ա, կամ մնում է *ի*. Իսկ (գաղտնավանկային) ը ձայնավորը դառնում է չ որի համապատասխանն է ա. այսպես՝

թրիք > Ձթ. *թրյաք*, *թայաք*, Հճ. *թաշիք*  
 խլինք > Ձթ. *խլիլնք*, Հճ. *խալիլնք*  
 խնդիրք > Ձթ. *խնդիրք*  
 խրթին > Ձթ. *խրտթին*, Հճ. *խրթին*  
 ծղրիթ > Ձթ. *ծղիլիթ*  
 կծիկ > Ձթ. *գըծագ*, *գածագ*, Հճ. *գաձիգ*  
 կնիկ > Ձթ. *գընագ*, *գանագ*, Հճ. *գաձիգ*  
 կոխ > Ձթ. *գըռավ*, Հճ. *գառիվ*  
 կսկիծ > Ձթ. ...., Հճ. *գաձագիծ*  
 կտրիճ > Ձթ. *գըրոաջ*, *գադոաջ*  
 պղինձ > Ձթ. ...., Հճ. *բաղիճ*  
 քրտինք > Ձթ. *քըդանք*, Հճ. *քաղդինք*  
 քսվիս > Ձթ. ...., Հճ. *քաձվիս*:

§67. Այս դեպքում կան երկու բառեր, որոնց մեջ առաջին վանկի ը ձայնավորի փոխարեն դրվում է *ի*. Ինչպես՝

բրիչ > Ձթ. *փիյիչ*  
 կշիռք > Ձթ. *գիշէռք*, Հճ. *գիշէրք*:

Նկատելի է, որ սրանց մեջ դեր ունեն չ և շ բաղաձայնները:

§68. Երբ երկվանկ բառը վերջանում է *ի* ձայնավորով, իսկ առաջին բաց կամ փակ վանկում գտնվում է ը, *ի-ն* մնում է անփոփոխ, իսկ *ը-ն* դառնում է ը(ա), *ի* կամ ը:

կծծի > Ձթ. ...., Հճ. *գաձձի*,  
 ճճի > Ձթ., Հճ. *ջիջի*  
 յղի > Ձթ. *հղի*

ցրդի > Ձթ. *ձայդա*  
 ցուիք > Ձթ. *ցիվիյձա* «ցիւերի ծայրերը, քիվ»:

§69. Առաջին և երկրորդ լծորդության պատկանող երկվանկ բայերն էլ, որոնք սկսում են երկու կամ երեք բաղաձայնով, առաջին վանկում ը ձայնավորի փոխարեն դնում են չ, որին համապատասխանում է մի այլ տեղում ա. ինչպես՝

բոնել	> Ձթ. <i>բըննիլ</i> ,	Հճ. <i>բըրնել</i>
բրդել	> Ձթ. <i>փըրթըլ</i> ,	Հճ. <i>բըրդել</i>
գգել	> Ձթ. <i>գըգիլ</i>	
գրել	> Ձթ. <i>գըրիլ</i>	
դնել	> Ձթ. <i>դըննիլ</i> ,	Հճ. <i>դըննել</i>
զգուիլ	> Ձթ. ....	Հճ. <i>զըզվել</i>
զրկել	> Ձթ. ....	Հճ. <i>զըրկել</i>
թմրիլ	> Ձթ. <i>թըմըլ</i> , <i>թամըալ</i>	
թռչիլ	> Ձթ. <i>թըրչիլ</i> ,	Հճ. <i>թաւրչել</i>
թրջիլ	> Ձթ. <i>թըրջիլ</i> ,	Հճ. <i>դըւրջել</i>
լցնել	> Ձթ. ....	Հճ. <i>լաւցնել</i>
լցուիլ	> Ձթ. <i>լըցվըլ</i> , <i>լացվալ</i>	
լծել	> Ձթ. <i>լըծիլ</i>	
լոել	> Ձթ. <i>լըոիլ</i>	
լսել	> Ձթ. <i>լըսիլ</i> ,	Հճ. <i>լաւսել</i>
խլել	> Ձթ. <i>խըլիլ</i> ,	Հճ. <i>խաւլլել</i>
խծալել	> Ձթ. <i>խըծքիլ</i>	
խմել	> Ձթ. <i>խըմիլ</i> , <i>խումիլ</i> ,	Հճ. <i>խըմել</i>
խնդրել	> Ձթ. <i>խընդրիլ</i>	
խնչել	> Ձթ. <i>խընչիլ</i> ,	Հճ. <i>խընչել</i>
խփել	> Ձթ. <i>խըփիլ</i> «փակել»	
ծլիլ	> Ձթ. <i>ձըլիլ</i> ,	Հճ. <i>ձըլել</i>
ծծել	> Ձթ. <i>ձըծիլ</i> ,	Հճ. <i>ձըծել</i>
ծնիլ	> Ձթ. <i>ձընըլ</i> ,	Հճ. <i>ձընել</i>
կթել	> Ձթ. <i>գըթիլ</i> ,	Հճ. <i>գաւթել</i>

կկգել	>Ջթ. գըգգըի, գագգալ	
կնել	>Ջթ. գըըի	
կնդել	>Ջթ. ....	Հճ. գննդել
կշոել	>Ջթ. գըշըոի, գըշոի,	Հճ. գիշէրել
կոտել	>Ջթ. ....	Հճ. գանոդել
կտրել	>Ջթ. գըդրի,	Հճ. գարել
կտցել	>Ջթ. գըդցի, գցի,	Հճ. գանցցել
կրել	>Ջթ. գըի,	Հճ. գայել
կրծել	>Ջթ. գըյծի,	Հճ. գայծել
կցել	>Ջթ. գըցի	
հրել	>Ջթ. հըի	
ձգել	>Ջթ. ըձգի,	Հճ. ձնգգել
ճգնել	>Ջթ. ըձգնի	
մզիլի	>Ջթ. մըզիլի, Հճ. մնզիլ	
մրսիլ	>Ջթ. մըսալ,	Հճ. մնսել
ննջել	>Ջթ. նընջի	
նստիլ	>Ջթ. նըստըի, դըստըի,	Հճ. ննստել
շոջել	>Ջթ. շըշի «փոխել»	
շփել	>Ջթ. շըփի,	Հճ. շնփել
ջնջել	>Ջթ. ....	Հճ. ջննջել
սրբել	>Ջթ. ....	Հճ. սնրբել
տնկել	>Ջթ. ....	Հճ. տննկել
ցնկնել	>Ջթ. ցընկնալ,	Հճ. ցննկնել
ցնդիլ	>Ջթ. ցընդալ	
ցցուիլ	>Ջթ. ցըցվալ	
փւշիլ	>Ջթ. փըշիլ	
փշոել	>Ջթ. փըշըի,	Հճ. փնրշել
փչել	>Ջթ. փըչի,	Հճ. փնչել
փոել	>Ջթ. փըոի,	Հճ. փնրել
փտիլ	>Ջթ. փըտըի,	Հճ. փնտդիլ
փրթիլ	>Ջթ. ....	Հճ. փնրթել

փրկել	>Ջթ. փըլկել	
քծնիլ	>Ջթ. քըծնալ	
քննել	>Ջթ. քըննիլ	
քշպել	>Ջթ. ...	
քշտել	>Ջթ. ....	Հճ. քիշտել ? «քարնել»:

Բացառաբար ունենք փրթիլ >Ջթ. փոյթիլ, Հճ. փնրթել:

§70. Երբ երկվանկ բառի մեջ երկրորդ վանկն ունի ու ձայնավորը, իսկ առաջին վանկը (բաց կամ փակ) գաղտնավանկային ը, այս դեպքում ու ձայնավորը դառնում է ու կամ յ, իսկ ը ճնշյունը՝ օ (Հաճրնում նաև կամ ը)։

զլուխ	>Ջթ. զոլոխ,	Հճ. զնլուխ
գոուզ	>Ջթ. գոուուզ,	Հճ. գնուուզ
դդում	>Ջթ. դոդոմ,	Հճ. դնդդում
թրթուր	>Ջթ. թըրթուր, թոյթույ,	Հճ. թնրթույ
խլուրդ	>Ջթ. խոլոյդ	
ծնունդ	>Ջթ. ծոնունդ	
լնուլ	>Ջթ. ....	Հճ. նընուլ
կնունք	>Ջթ. կոնունք,	Հճ. կննունք
կտուց	>Ջթ. կոտուց, կտոդուց,	Հճ. կնտուց
կրունկ (ոսից)	>Ջթ. կոյունկ,	Հճ. կնյունկ
նկուտ	>Ջթ. ըոգուտ	
նննդուկ	>Ջթ. ըէըոգ	
մսուր	>Ջթ. մոսույ	
մրուր	>Ջթ. մոյույ,	Հճ. մնյույ
շշուկ	>Ջթ. ....	Հճ. շնշուկ
պլուզ	>Ջթ. ....	
պտուկ	>Ջթ. պոդուկ,	Հճ. պնդուկ
պտուկ (ծծի)	>Ջթ. պոդոգ,	Հճ. պնդոգ
պտուղ	>Ջթ. պոդուղ	
սնդուկ	>Ջթ. սոնդոգ,	Հճ. սննդուկ
ցոուկ	>Ջթ. ցոուուկ «կիսափուլ դար»	
փրփուր	>Ջթ. փոյփուր:	

Այս բոլորի մեջ անատելի է ը ձայնավորի դիմաց մի անգամ ը (թրթուր), մի անգամ էօ (կտուց) և մի անգամ էլ է (ճնճողուկ):

§71. Երբ ու ձայնավորը գտնվում է բառավերջում, հնչյունափոխությունը կատարվում է միևնույն ձևով: Այսպես են՝

թթու	>Ջթ. թօթու,	Հճ. թաթու
կծու	>Ջթ. գօծու,	Հճ. գածու
կկու	>Ջթ. գուգու,	Հճ. գուգուգ:

§72. Երկվանկ բառերի մեջ, երբ երկրորդ վանկն ունի *n* ձայնավորը, իսկ առաջին վանկը (գաղտնավանկային) ը, այս *n*-ն դառնում է *ի* (կամ էօ), իսկ ը ձայնավորը դառնում է Ջթ. էօ (Հճ. ը, է, ա):

գղթոր	>Ջթ. գէօխղիւյ	
դծոխք	>Ջթ. դէօծօխք,	Հճ. դծոխք
խմոր	>Ջթ. խէօմիւյ,	Հճ. խիմոյ
խնձոր	>Ջթ. խէօնձիւյ,	Հճ. խիւնձոյ
խոռով	>Ջթ. խէօռէօվ,	Հճ. խէլէվ
խստոր	>Ջթ. սէօխտիւյ	
կտոր	>Ջթ. գէօտիւյ,	Հճ. գաւոր
շնորհք	>Ջթ. շէօնիւյք,	Հճ. շաւորք
պղտոր	>Ջթ. քէօղղիւյ,	Հճ. քաւորոյ
սղոց	>Ջթ. սէօղիւց	
սրոց	>Ջթ. սէօյիւց	
տկճոր	>Ջթ. դէօգջիւյ,	Հճ. դաւգջօյ:

Սրանից դուրս ունենք վզնոց >Ջթ. վիզնիւց:

Երկու բառ ունենք Ջեյթունի բարբառում, որոնց մեջ այս դեպքում գտնում են *ի* և ոչ թե էօ, սրանք են՝ կշոշ >Ջթ. գիւշիւշ «հոտոց» և կլոր >Ջթ. գիւլիւ:

§73. Երկվանկ բառերից ունենք միայն նույն դիրքով երեք բառ, որոնց մեջ երկրորդ վանկի ձայնավորն է ոյ. սրանք են՝

գրոյց	>Ջթ. գըլըցք, գայացք,	Հճ. գէլից
ճկոյթ	>Ջթ. ջիգիթսօգ (այն է ճկոյթմատոց, որ բարդ ձևն ստանալով՝ վերածվել է բազմավանկի: Այստեղ էլ ը-ն (գաղտնավանկային) դարձել է <i>ի</i> ):	
պոռոգ «օժիտ»	>Ջթ. բիւրք,	Հճ. ...

§74. Այս բոլորից դուրս, իբրև երկվանկ բառ, կան նաև հետևյալները, որոնց մեջ գաղտնավանկային ը-ն դարձել է *ի* կամ *օ* (Հճ. ը կամ ա):

ծնծղայ	>Ջթ. ձիւնձղաք,	Հճ. ձընձղազ
մրջիւն	>Ջթ. մօոճօմ,	Հճ. մաւրջիւմ:

§75. Երեք և ավելի վանկով բառերը, որոնց մեջ գտնում ենք անշեշտ ը ձայնավորը, հետևյալներն են.

խրխնջալ	>Ջթ. խօրխօնջու,	Հճ. խիլիլնջել
բնակիլ	>Ջթ. բնագըլ,	Հճ. բնագել
գլորել	>Ջթ. գիլլիլի,	Հճ. գաւլլալլել
գլտորել	>Ջթ. գիլլիլիլի,	գիւնդըլիլի, գիւնդուլիլի
գտանել	>Ջթ. ....,	Հճ. գիւննել
թշնամի	>Ջթ. թշնամի	
թրատել	>Ջթ. թըլլդիլ «կոխկոտել»	
խղճմտանք	>Ջթ. խըղջմըղօնք,	Հճ. խաւղջմըղօնք
խստասէր	>Ջթ. խստասէլ «շատ սիրածը»	
խնամի	>Ջթ. խնամիլ	Հճ. խնամի
կնքապապ	>Ջթ. գընքաքօք	
կսկծալ	>Ջթ. գըսգըձօլ	
հեծկլտալ	>Ջթ. հեձգօլդօլ	
հնազանդ	>Ջթ. հնազօնդ	
հրամայել	>Ջթ. ....	Հճ. հըլլամել
հրաման	>Ջթ. հըլլամմօն	
հրեշտակ	>Ջթ. հիլիշդօգ,	Հճ. հաւիշդօգ
ճգնաւոր	>Ջթ. ջիգնաւիւր	
մկրտել	>Ջթ. միլգըլիլի	
մխիթարել	>Ջթ. մխիթայիլ	
կլայել	>Ջթ. գիլիգ,	Հճ. գիլլալգ
կշտանալ	>Ջթ. գշդանօլ,	Հճ. գիշդանօլ
ձգոտալ	>Ջթ. ձօգօոոդօլ,	Հճ. ձըգգըրդօլ
ձմերուկ	>Ջթ. ....	Հճ. ձաւմալլուգ
ճոնչել	>Ջթ. ....	Հճ. ջաւրաւնչօլ
մրգաջուր	>Ջթ. մարքարջիւր	

նգովել	>Ջթ. <i>նգովի</i>	
նմանիլ	>Ջթ. <i>ըմանիլ</i>	
շնորհաւոր	>Ջթ. <i>իշնահամիլիւյ.</i>	Հճ. <i>շնոյհաւոյ</i>
շատրուան	>Ջթ. <i>շաղընվօն.</i>	Հճ. <i>շնդարվօն</i>
աննման	>Ջթ. <i>աննօմօն</i>	
պրպտել	>Ջթ. <i>բըբըդիլ</i>	
սպրդիլ	>Ջթ. <i>սըփըդըլի.</i>	Հճ. <i>սնքարդել</i>
վճարել	>Ջթ. <i>վջայիլ</i>	
տէրընդայս	>Հճ. <i>դէյէնդէգ «Նոր տարի»,</i>	Ջթ. <i>դէյիճդէս</i>
փլուցանել	>Հճ. <i>փնյցանել</i>	
փոնգտալ	>Ջթ. <i>փոնօնքդօլ.</i>	Հճ. <i>փնրննքդօլ</i>
փոնչել	>Ջթ. ....	Հճ. <i>փնրննչել</i>
փրցնել	>Ջթ. <i>փնյցանիլ.</i>	Հճ. <i>փնյցանել</i>
քրքրել	>Ջթ. <i>քըբըլիլ.</i>	Հճ. <i>քնքքնյել:</i>

ընտրել բայի դերբայը լինում է թե՛ *հընդոըմոն* և թե՛ *հօնդոմօն*:  
Սուվական բաղաձայնով սկսվող այն բառերը, որոնց սկիզբը ավելանում է ը ձայնավորը, հետևյալներն են.

զգեստ	>Ջթ. <i>ըսզից</i> (եկեղեցական շոր)	
շնորհաւոր	>Ջթ. <i>իշնահամիլիւյ.</i>	Հճ. <i>շնօյհաւոյ</i>
սկեստր	>Ջթ. <i>օսզօտույ</i>	
սպանել	>Ջթ. <i>ըսքանիլ.</i>	Հճ. <i>սքանել</i>
սպիտակ	>Հճ. <i>իսքիդօգ</i>	
ստեպդիմ	>Ջթ. <i>ըսքըդըլիլ:</i>	

**Ի**

§77. Բառասկզբում պատահում է քիչ անգամ և ընդհանրապես մնում է *ի*. եղած օրինակներն են՝  
*ի* (նախդիրը) > *ի*, որ պահպանված է Ջթ. *իդուն* «նորահարսի առաջին այցելությունը դեպի իր հոր տունը» բառի մեջ.

իջանիլ	>Ջթ. <i>իչնօլ.</i>	Հճ. <i>իչնել</i>
իմանալ	>Ջթ. <i>իմանօլ</i>	
իմն	>Ջթ., Հճ. <i>իմը</i>	
իմքն	>Ջթ. <i>իմքը.</i>	Հճ. <i>իմք</i>
իշխան	>Ջթ. <i>իշխօն</i>	
իրաւ	>Ջթ., Հճ. <i>իյօվ</i>	

իրեար > իրար ձևով պահպանված է Ջթ. *իյայընել* «շարժել» բառի մեջ:

§78. *ի*-ն դառնում է *իւ*՝ միայն ինչ >Ջթ. *իւնչ* «ո՛ր» (=Հճ. *իւնչ*) բառի մեջ, դառնում է *ա* իշխուն «խավրժիլ» >Ջթ. *աշխանգօթ՛* բառի մեջ, որ սակայն ունի նաև *իշխօն* ձևը:

§79. Միավանկ բառերի մեջ գտնվող *ի* ձայնավորը Չեյթունի բարբառում դառնում է երբեմն *է*, *ը*, *ա* և երբեմն էլ մնում է անփոփոխ: Հաճընի բարբառում միշտ անփոփոխ մնում է *ի*: Կարելի չեղավ ինձ գտնել մի որևէ օրենք՝ որոշելու համար այս հնչյունափոխության պայմանները: Բազմավանկ բառերի մեջ, ինչպես պիտի տեսնենք հաջորդ էջերում, հնչյունափոխությունը կապված է ձայնավորների ներդաշնակության օրենքների հետ: Միավանկ բառերի մեջ չի կարող գտնվել նման երևույթ: Ուստի այստեղ պետք է սպասել բառասկզբի կամ բառավերջի բաղաձայնի ազդեցության արդյունքը: Դժբախտաբար օրինակների սակավությունը թույլ չի տալիս որոշելու նաև այս կետը, ուստի բավականանում են միայն տալով այստեղ եղած օրինակները.

*ի* > *է*, *ե*.

գիմ	>Ջթ. <i>գէմ.</i>	Հճ. <i>գիմ</i>
գիր	>Ջթ. <i>գէլ</i>	
լի(ք)	>Ջթ. <i>իլլէնքը</i>	
ճիպո	>Ջթ. <i>ջեքըր.</i>	Հճ. <i>ջեքր:</i>

*ի* > *ը* (*ա*), *ը*.

թիզ	>Ջթ. <i>թըզ.</i>	թագ,	Հճ. <i>թիզ</i>
լինդ	>Ջթ. <i>լընդ.</i>	լընդք,	լընդ
լիտր	>Ջթ. <i>լըդըր.</i>		Հճ. <i>լիր</i>
ծիլ	>Ջթ. <i>ծըլ.</i>		Հճ. <i>ծիլ</i>
ծիծ	>Ջթ. <i>ծաձ.</i>	ծըձ,	Հճ. <i>ծիձ</i>
ծիրտ	>Ջթ. <i>ծայդ.</i>	ծըրդ.	Հճ. <i>ծիդ</i>
միս	>Ջթ. <i>մըս.</i>		Հճ. <i>միս</i>
միտք	>Ջթ. <i>մըդք</i>		
պինդ	>Ջթ. <i>բընդ.</i>		Հճ. <i>բինդ</i>
սինձ	>Ջթ. <i>սընձ</i>		

սիրտ >Ջթ. սըրտ, Հճ. սիրտ  
 վիզ >Ջթ. վըզ  
 ցից >Ջթ. ցըց, ցաց:

ի > ի.

կիր >Ջթ., Հճ. գիյ  
 հիմն >Ջթ. հիմ, Հճ. հիմք  
 հիմ >Ջթ., Հճ. հիմ  
 հիմնգ >Ջթ., Հճ. հիմնգ  
 շիլ >Ջթ., Հճ. շիլ  
 շիշ >Ջթ. շիշ  
 չիր >Ջթ. չիյ  
 փիմ >Ջթ., Հճ. փիմ «աղբ»  
 քիթ >Ջթ., Հճ. քիթ  
 քիմք >Ջթ. քիմք:

Անհայտ են մնում հետևյալ բառերը, որոնք կան միայն Հաճընի բարբառում, ուր դառնում են միշտ ի (դ-ի մոտ է).

գիրկ >Հճ. գիյգ  
 ձիգ >Հճ. ձիգ'  
 ջիղ >Հճ. ջեղ  
 վիզ >Հճ. վիզ  
 տիկ >Հճ. դիգ:

§80. Երկվանկ բառերի մեջ երկրորդ վանկի ի ձայնավորը (շեշտված ի) կապված է ձայնավորների ներդաշնակության օրենքի հետ՝ հետևյալ պայմաններով.

ա) Եթե առաջին վանկի ձայնավորն է ա, երկրորդ վանկի ի ձայնավորը դառնում է շեշտված ը՝ Ջեյթունի բարբառում, իսկ Հաճընի բարբառում մնում է ի: Այսպես՝

աղիք >Ջթ. աղըք, Հճ. աղիք  
 ամիս >Ջթ. ամըս, Հճ. ամըս!  
 անիծ >Ջթ. անըձ, Հճ. անիձ  
 առիք >Ջթ. ...., Հճ. արիք  
 բաղանիք >Ջթ. բնղնըք  
 բանալի(ք) >Ջթ. բնալըք, Հճ. բնալիք  
 եղիճ >Ջթ. աղըք, Հճ. եղիք

գատիկ >Ջթ. գաղըգ, Հճ. գաղիգ  
 ծաղիկ >Ջթ. ձաղըգ, Հճ. ?  
 կաթիլ (գոյ.) >Ջթ. գաթըլ(ք)  
 կարմիր >Ջթ. գայմըլ, Հճ. գայմիյ  
 հարսանիք >Ջթ. հայանըք, Հճ. հաշանիք  
 նախիր >Ջթ. նախըր  
 շապիկ >Ջթ. շաբըք, Հճ. շաբիք  
 չամիչ >Ջթ. չամիչ, Հճ. չամիչ  
 պանիր >Ջթ. բանըլ, Հճ. բանիյ  
 վարտիք >Ջթ. վայդըք, Հճ. վայդիք  
 քաղիրթ >Ջթ. քաղըրի, Հճ. քաղեյթ:

Սրանց թվին են պատկանում նաև երկրորդ լծորդության մեջ մտնող (–իլ վերջավորությամբ) մի խումբ բայեր. ինչպես՝ հագնըլ «ագանիլ», անցնըլ «անցանել», աշխաղըլ «աշխատել», աբաշխարըլ «ապաշխարել», աբբըլ «ապրել», այձըլ «արածել», բնագըլ «բնակվել», գնագդըլ «գանգատվել», դնաղըլ, դնահըլ «դաղարել», դավանըլ «դավանել», թափըլ «թափվել», խըսդըլանըլ «խոստովանել», ձաղգըլ «ծաղկել», ձձաղըլ «ծիծաղել», գաղըլ «կատաղել», հավնըլ «հավանել», բաբանձըլ «պապանձվել», վախըանըլ «վախճանվել», դանըլ «տանել», փագզըլ «փակչել, կպչել»: (Այս օրինակներից մի մասը բազմավանկ է, բայց վերջավորությունը ճշտիվ համապատասխանում է մեր կանոնին):

§81. Կան մի քանի բառեր, որոնք այս կանոնից բացառություն են կազմում, այսինքն՝ առաջին վանկում թեև ունեն ա ձայնավորը, բայց երկրորդ վանկի ի ձայնավորը անփոփոխ պահում են (չեն վերածում շեշտված ը–ի): Այս բառերն են՝

մարմին >Ջթ. մայմինք  
 ակիշ >Ջթ., Հճ. ագիշ  
 աղջիկ >Ջթ. աշգին, Հճ. աշգին  
 արիշ >Ջթ. արիշի, Հճ. արիշենի «սարփինա»  
 գալիթ >Ջթ., Հճ. գնվիթ  
 հալիթ >Ջթ. հավգիթ  
 պատիծ >Ջթ. բաղիք  
 խալիծ >Ջթ. խավիձ  
 պատիւ >Ջթ. բաղիվ:

Սրանց մի մասը օտար է, մի մասը գրական փոխառություն, մնացյալը անհայտ պատճառով շեղվում է կանոնից:

§82. բ) Եթե առաջին վանկի ձայնավորն է ը (գաղտնավանկային), այս ը-ն դառնում է Ջեյթունի բարբառում ը' (Հաճընում ւծ), իսկ երկրորդ վանկի ի ձայնավորը դառնում է ա (Հաճընում մնում է ի): Այսպես են՝

կնիկ	>Ջթ. գընագ,	Հճ. գանիկ
կծիկ	>Ջթ. գըձագ,	Հճ. գանձիգ
կոիւ	>Ջթ. գըռավ,	Հճ. գանրիվ
կսկիծ	>Ջթ. ....,	Հճ. գանսգիծ
կտրիճ	>Ջթ. գըրոսջ	
թրիք	>Ջթ. թըլաք, թըրըք,	Հճ. թանլիք
քրտինք	>Ջթ. քըլդանք,	Հճ. քանդինք
քսվիս	>Ջթ. ....,	Հճ. քանսվիս:

Այս կանոնից բացառություն են կազմում՝

խրթին	>Ջթ. խըրթին,	Հճ. խրթին
խնդիրք	>Ջթ. խընդիրք,	
խլինք	>Ջթ. խըլընք,	Հճ. խանլինք
ծղրիթ	>Ջթ. ձըլխըթ	
նուիկ	>Ջթ. նըվըզ	
պղինձ	>Ջթ. բըղընձ,	Հճ. բանղինձ
բրիչ	>Ջթ. փիլիչ	
կշիռք	>Ջթ. գիշեռք,	Հճ. գիշեռք:

Սրանցից առաջին երկուսը գրական բառեր են, մյուսները հետևում են ուրիշ կանոնի:

§83.գ) Առաջին վանկում գտնվում են զանազան երանգի ձայնավորներ, երկրորդ վանկում ի, որ դառնում է ի, է, էօ, ը, ու՝ համաձայն ձայնավորների ներդաշնակության օրենքների: Այսպես են՝

ի > ի.

արճիճ	>Ջթ. էոջիջ	
բաժին	>Ջթ. բէժին	
կօշիկ	>Ջթ. գուշիք,	Հճ. գուշիգ
երկիր	>Ջթ. իյգիյ, ըյգիյ,	Հճ. իյգիյ «օտարական»
լուսին	>Հճ. լուսին	

հերիք	>Ջթ. հէլիք	
նարգիս	>Ջթ. նէլգիգ	
խորիսխ	>Ջթ. խէլիք	
կոծիծ	>Ջթ. Հճ. գիձիձ	
կոտիմն	>Ջթ. գիդիմ	
կոփիչ	>Ջթ. Հճ. կիփիչ «թակ».	

ի > է.

երկինք	>Ջթ. իյգէնք,	Հճ. իյգինք
գետին	>Ջթ. գիդէն,	Հճ. գիդին
ոջիլ	>Ջթ. իջէլ,	Հճ. իջջիլ:

թեզանիք բառն էլ թեև եռավանկ, բայց նախ դառնում է երկվանկ թեզանիք և ապա սրանց մեծն՝ թիզանք:

ի > էօ, ու, ը, ա.

խուլինջ	>Ջթ. խտլէժնջ	
որիգ	>Ջթ. օրուգ,	Հճ. արուգ
դեղին	>Ջթ. դէղըն,	Հճ. դէղին
մոխիր	>Ջթ. մսխըլ	
փոխինդ	>Ջթ. փէխանդ,	Հճ. փէխինձ:

§84. Եթե երկվանկ բառի առաջին վանկի մեջ կա ի ձայնավորը, իսկ երկրորդ վանկում որևէ ուրիշ ձայնավոր, այս ի-ն ընդհանրապես մնում է անփոփոխ. երբեմն էլ ազդվում է երկրորդ վանկի ձայնավորից՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով: Այսպես՝

գիշեր	>Ջթ. գիշիյ,	Հճ. գիշէյ
թիակ	>Ջթ. թիյօգ «կոնակ»	
սիսեռ	>Ջթ. սիսեռ,	Հճ. սիսէր
շիտակ	>Ջթ. ....,	Հճ. շիյօգ
լիսուն	>Ջթ. իսսօն,	Հճ. իսուն
հիւանդ	>Ջթ., Հճ. հիվօնդ	
թիթեռն	>Ջթ. թիթէխ	
պիծակ	>Ջթ. բիձիգ	
հիմայ	>Հճ. հումմօ	
միւնչև	>Ջթ. չիւյ,	Հճ. ինչի
լիմար	>Ջթ. իմօլ	
լիշել	>Ջթ. իշիլ	
լիզել	>Ջթ. լիզիլ,	Հճ. լիզել



հիմնել	>Ջթ. հիմնի,	Հճ. հիմել
սիրել	>Ջթ. սիյիլ,	Հճ. սիյել
շինել	>Ջթ. շիմիլ,	Հճ. շիմել
դիպմի	>Ջթ. դիբմի	
դիպչել	>Ջթ. դիբչիլ	
ծիծաղ	>Ջթ. ձօձօղ,	Հճ. ձիձօղ
փիլոն	>Ջթ. փիլիոն,	Հճ. փիլոն
յիշոցք	>Ջթ. յիշիցք	
վիշապ	>Ջթ. ուշօք	
վիճակ	>Ջթ. վոջորք:	

§85. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ վերջնավանկի *ի* ձայնավորը ընդհանրապես գտնվում է *ա* ձայնավորից հետո, ուստի մնում է *ի*. այսպես՝

անդրանիկ	>Ջթ. անդրանիգ
թեզանիք	>Ջթ. թեզանիք (բայց և թիզանք §47)
խաւարծիլ	>Հճ. խավիճիլ
մարգարիտ	>Հճ. Մայգանիդ (անունը)
նաւակատիք	>Ջթ. նավագադիք, Հճ. նավագադիգ:

Հաջորդ երեք բառերի մեջ *ի-ն* հարմարվել է նախորդ ձայնավորներին.

երեցկին	>Ջթ. իյիցգին
ստեպղին	>Ջթ. ըսքըղըն
սերկնիլ	>Ջթ. սինգիվիլ, Հճ. սիվուգալիլ:

§86. Միջին վանկերում գտնվող *ի-ն* հաճախ սղվում է կամ վերածվում *ը-ի*. այսպես՝

դարիվեր	>Հճ. դայվել
երիկամն	>Ջթ. իյգօմ
կաթուղիկոս	>Ջթ. գաթէօղգիս
հանդիպիլ	>Ջթ. հանդըբիլ:

Ուրիշ դեպքերում *ի-ն* պահպանվում է և նույնիսկ ենթարկվելով ձայնավորների ներդաշնակության օրենքին, դառնում է *ու* կամ *իւ*՝ վերջին վանկի ձայնավորի ազդեցությամբ. այսպես՝

անիծել	>Ջթ. անիճիլ
դաստիշոն	>Ջթ. դէօրդիշիւն

լովիաս	>Ջթ. լըվիյօս
խալիզոն	>Ջթ. խէօլիզիւն, Հճ. խալիզոն
մխիթարել	>Ջթ. մխիթայիլ
շանկիար	>Ջթ. շինգիոր
պատինճան	>Ջթ. բադինջօն, Հճ. բադընջօն
պատրիարք	>Ջթ. բադրիյօք, Հճ. բադիյօք
սարբիմայ	>Ջթ. սայբիմոն
սիմիներ	>Ջթ. սիմինդոն, Հճ. սիմիր
սպիտակ	>Հճ. իսբիդօգ
օրինակ	>Ջթ. ոյունօգ:

§87. Երբ երեք և ավելի վանկանի բառի առաջին վանկում գտնվում է *ի* ձայնավորը, թեև օրինակները քիչ են, բայց թվում է, թե այստեղ էլ *ի* ձայնավորը մնում է անփոփոխ: Ահա օրինակները.

գիտենալ	>Ջթ. գիդանօլ, Հճ. գիմնօլ
դիմանալ	>Ջթ., Հճ. դիմանօլ
ծիծեռնակ	>Ջթ. ձիձէռնագ
յիշատակ	>Ջթ. հիշադօգ:

Երբեմն էլ *ի-ն* սղվում է կամ ստանում նոր երանգ. այսպես՝

ծիծաղիլ	>Ջթ. ձձաղըլ, Հճ. ձիձաղել
հիւանդանալ	>Ջթ. հօվօնդնօլ
հիւանդութիւն	>Ջթ. հըվընդութիւն:

§88. Բառավերջում գտնվող *ի* ձայնավորի համար՝ միավանկ բառերից ունենք միայն չորս օրինակ, որոնք են.

թի	>Ջթ. թը, թա,	Հճ. թի
ձի	>Ջթ. ծը, ձը,	Հճ. ձի
մի՝ (արգելական)	>Ջթ. մի՛,	Հճ. մի՛
մի (անորոշ հոդ)	>Ջթ. մի:	

Հի բառը ստացել է *լիք* ձևը, որ ապա դարձել է Ջթ. *իլէնքը*, որով հետացել է միավանկ վիճակից:

Թեև օրինակները շատ սակավ են, բայց կարելի է եզրակացնել, թե Ջեթթունի բարբառում *ի* ձայնավորը միավանկ բառերի վերջում դառնում է *լի=ա*), իսկ Հաճընի բարբառում մնում է անփոփոխ:

§89. Բազմավանկ բառերի վերջում գտնվող *ի* ձայնավորը կապված է ձայնավորների ներդաշնակության օրենքի հետ՝ հետևյալ պայմաններով.

ա) Եթե նախորդ վանկի ձայնավորն է *ա*, վերջնահնչյունն *ի-ն* դառնում է Ջեյթունի բարբառում շեշտված *ը*, Հաճընում մնում է *ի*. Այսպես են՝

անալի	>Ջթ. <i>անլը</i> ,	Հճ. <i>անլի</i>
աղի	>Ջթ. <i>աղը</i>	
բարի	>Ջթ. <i>բայը</i> ,	Հճ. <i>բայի</i>
բարտի	>Ջթ. <i>բայդը</i>	
գարի	>Ջթ. <i>գայը</i> ,	Հճ. <i>գայի</i>
դրացի	>Ջթ. <i>դրյացըն</i>	
խնամի	>Ջթ. <i>խնամը</i> ,	Հճ. <i>խնամի</i>
կաղնի	>Ջթ. <i>գաղնը</i> ,	Հճ. <i>գաղնի</i>
մատանի	>Ջթ. <i>մաղնը</i> ,	Հճ. <i>մաղնի</i>
սամի	>Ջթ. <i>սամը</i>	
տարի	>Ջթ. <i>դայը</i> ,	Հճ. <i>դայի</i> :

Այս կանոնից բացառություն են կազմում՝

ագի	>Ջթ. <i>ագէ</i> , Հճ. <i>ագգի</i>
մաքի	>Ջթ. <i>մաքի</i>
ճապկի	>Ջթ. <i>ջաբգի</i>
երանի	>Ջթ. <i>իյանի</i> , Հճ. <i>էյանի</i>
թշնամի	>Ջթ. <i>թշնամի</i> :

բ) Եթե նախորդ վանկի ձայնավորն է *ի*, ինչ որ էլ լինի սրա ծագումը, վերջնահնչյունն *ի-ն* դառնում է Ջեյթունի բարբառում *է* (որ և *ե*), իսկ Հաճընի բարբառում մնում է *ի*: Այսպես են՝

բևեկնի	>Ջթ. <i>բիբգի</i>
գինի	>Ջթ. <i>գի</i> նէ, Հճ. <i>գի</i> նի
եկեղեցի	>Ջթ. <i>գէղից</i>
խնկեանի	>Ջթ. <i>խընգի</i> նէ
կեռասեանի	>Ջթ. <i>գէրիսէ</i> , <i>գէրիսի</i> նէ, <i>գէրասի</i> նէ
հայելի	>Ջթ. <i>հիլլէ</i> , Հճ. <i>հէլլի</i>
հոգի	>Ջթ. <i>հիգգէ</i> , Հճ. <i>հիգգի</i>
մորեանի	>Ջթ. <i>մըլմի</i> նէ
Աերքսի	>Ջթ. <i>Աիքսէ</i> «մատան»
ջորի	>Ջթ. <i>ճիյէ</i> , <i>ջիրէ</i> , Հճ. <i>ջիյի</i> :

Սրանց շարքում պետք է դնել նաև գի=գիհի. որ տվել է նախ \*գիհէ. այսպ. *գէ* (կա նաև *գէհ*):

գ) Եթե նախորդ վանկի ձայնավորն է *ը* կամ *ու*. վերջնահնչյունն *ի-ն* դառնում է Ջեյթունի բարբառում *ը* (որ է *ա*), իսկ Հաճընի բարբառում՝ *ի*. այսպես՝

աղանի	>Ջթ. <i>աղվընը</i> , <i>աղվըննա</i> ,	Հճ. <i>աղվանի</i>
գօտի	>Ջթ. <i>գիուը</i> , <i>գիուա</i> ,	Հճ. <i>գիուի</i>
թնոպի	>Ջթ. <i>թընըբը</i> , <i>թանաբն</i>	
սօսի	>Ջթ. <i>սուսա</i>	
մաթուզի	>Ջթ. <i>մաթուզա</i>	
ճօթի	>Ջթ. <i>անըթը</i> ,	Հճ. <i>անութի</i>
ուռի	>Ջթ. <i>ուրը</i>	
պախրցի	>Ջթ. <i>բախըցա</i>	
ցրդի	>Ջթ. <i>ձայրնա</i> , <i>ձըլդը</i> :	

Բացառություն է կազմում ունկի >Ջթ. *նուգի*, որ համարում են փոխառյալ բառ:

դ) Եթե նախորդ վանկի ձայնավորն է *է*, որ ծագում է *այ* երկբարբառից, վերջնահնչյունն *ի-ն* դառնում է *է* (Հաճընում դարձյալ մնում է *ի*). այսպես են՝

այգի	>Ջթ. <i>էգէ</i> , Հճ. <i>էգգի</i>
վայրի	>Ջթ. <i>վէյէ</i> «եղնիկ»:

Սրանց է պատկանում նաև *այրի*, որ նախապես տված պիտի լիներ \*էրէ, որ սակայն *կնիկ* բառի հետ բարդվելով՝ դարձել է Ջթ. *էրիգընը*:

ե) Եթե նախորդ վանկի ձայնավորն է նույնպես *է*, որ ծագում է *ե* ձայնավորից և գտնվում է *ը*, *ո* բաղաձայններից առաջ (տե՛ս §48-ի օրենքը), բառավերջի *ի* ձայնավորը դառնում է Ջթ. *ը* (=ա), Հճ. *ի*: Այսպես են՝

լեղի	>Ջթ. <i>լէղը</i> , <i>լէղա</i> , Հճ. <i>լէղի</i>
քեռի	>Ջթ. <i>քէոա</i> , Հճ. <i>քէրի</i>
թեղի	>Ջթ. <i>թէղա</i> :

զ) Բայց եթե այդ է ձայնավորը ծագում է *ա-ից*՝ շ բաղաձայնից առաջ գտնվելու պատճառով, վերջնահնչյունն *ի-ն* մնում է Ջեյթունի և Հաճընի բարբառներում *ի*: Սրա համար ունենք միայն մի օրինակ, որ է՝

կաշի >Ջթ., Հճ. *գէշի*:

է) Ունենք չորս բառ, որոնք գտնվում են վերի բ) և գ) դիրքերում, բայց վերջնահնչյունն ի-ն պահում են անփոփոխ ի, թե՛ Զեյթունում և թե՛ Հաճընում.

նսկի	>Զթ. <i>խզի</i> , Հճ. <i>օզի</i>
ճճի	>Զթ., Հճ. <i>ջիջի</i>
փիճի	>Զթ., Հճ. <i>փիջի</i>
կծծի	>Զթ. ...., Հճ. <i>գաձձի</i> :

ը) Օտառ անկանոն բառ է *հեռի*, որ թեև Հաճընում ունի *հերու* (= Պլ. *հերու*) ձևը, բայց Զեյթունի բարբառում դարձել է *խոնու*!:

**Ո**

§90. Միավանկ բառերի սկզբում *ո*-ն դառնում է ընդհանրապես *ի*՝ Զեյթունի բարբառում. ինչպես՝ նսպ >*իսպ*, ոստ >*իւտ*, ով >*իւվ*, որդն >*իւդ*:

Միայն *ոչ*, *ոռ*, *ոխ*, *ոփ* բառերը շեղվելով այս կանոնից՝ դառնում են *օչ*, *օռ*, *օխ*, *օփ* «փոքրիկ լճացած ջուր»։ Որ շաղկապը դառնում է Զթ. *յոյ*։

Հաճընի բարբառում միավանկ բառերում նախահնչյունն *ո*-ն՝ առանց բացառության դառնում է *վ*ո. ինչպես՝ ողբ > Հճ. *վոբ*, ոռ > Հճ. *վոր*, ոսպ > Հճ. *վոսբ*, ոստ > Հճ. *վոտ*, ով > Հճ. *վով*, ոտք > Հճ. *վոդք*, որ > Հճ. *վոյ*, որդն > Հճ. *վոյդ*:

Երկվանկ բառերի նախահնչյունն *ո*-ն Զեյթունի բարբառում, հետևելով ձայնավորների ներդաշնակության օրենքին, դառնում է՝ *ե*, *է*, *ի*, *իւ*, *ու*, *օ*։ Օրինակներն են՝

ուրրել	>Զթ. <i>ելլի</i>
ոջիլ	>Զթ. <i>իջէլ</i>
նսկի	>Զթ. <i>խզի</i>
ոտուի	>Զթ. <i>իոՎէ</i>
ոսկ(ո)ր	>Զթ. <i>իւզիւ</i>
որիզ	>Զթ. <i>օոուզ</i> :

Շոավանկ *ողորմիլ* և *ոլորակ* բառերի մեջ երկու *ո*-երն էլ դարձել են *ու* (*ուղոյմիլ*, *ուլոյօզ*):

Հաճընի բարբառում նույն օրենքը պահպանվում է մասամբ միայն. այնպես որ այստեղ ունենք հետևյալ օրինակները.

ուրրել	>Հճ. <i>իլլել</i>
ոջիլ	>Հճ. <i>իջէիլ</i>
նսկի	>Հճ. <i>օզի</i>

նսկոր	>Հճ. <i>ուզոր</i>
որիզ	>Հճ. <i>ուրուզ</i>
ողիճ «շրեշ»	>Հճ. <i>էղիճ</i>
որիճ «իմչու»	>Հճ. <i>էլիճ</i> :

§91. Միավանկ բառերի միջին *ո*-ն դառնում է Զեյթունի բարբառում ընդհանրապես *ի*, Հաճընի բարբառում՝ *ու*։ Օրինակներն են՝

բոզ	>Զթ. <i>բիզ</i> ,	Հճ. <i>բիզ</i>
բողկ	>Զթ. <i>բիւղկ</i> ,	Հճ. <i>բիւղկ</i>
բոր	>Զթ. <i>բիւ</i>	
գոգ	>Զթ. <i>գիւգ</i> ,	Հճ. <i>գիւգ</i>
գող	>Զթ. <i>գիւղ</i> ,	Հճ. <i>գիւղ</i>
դող	>Զթ. <i>դիւղ</i> ,	Հճ. <i>դիւղ</i>
թո՛ղ	>Զթ. <i>թի՛ւղ</i> ,	Հճ. <i>թող</i>
խոզ	>Զթ. <i>խիւզ</i> ,	Հճ. <i>խոզ</i>
խոտ	>Զթ. <i>խիւտ</i> ,	Հճ. <i>խոտ</i>
խոց	>Զթ. <i>խիւց</i> ,	Հճ. <i>խոց</i>
խոփ	>Զթ. <i>խիւփ</i> ,	Հճ. <i>խոփ</i>
ծոց	>Զթ. <i>ծիւց</i> ,	Հճ. <i>ծոց</i>
կոթ	>Զթ. <i>գիւթ</i> ,	Հճ. <i>գոթ</i>
կոծ	>Զթ. <i>գիւծ</i>	
կող	>Զթ. <i>գիւղ</i> ,	Հճ. <i>գող</i>
կոր «կարիճ»	>Զթ. <i>գիւյ</i> ,	Հճ. <i>գոյ</i>
հոզ	>Զթ. <i>հիւք</i>	
հող	>Զթ. <i>հիւղ</i> ,	Հճ. <i>ֆող</i>
հոտ	>Զթ. <i>հիւտ</i> ,	Հճ. <i>ֆող</i>
հոր	>Զթ. <i>հիւյ</i> ,	Հճ. <i>ֆոյ</i>
ձող	>Զթ. <i>ձիւղ</i> ,	Հճ. <i>ձող</i>
ձոր	>Զթ. <i>ձիւյ</i>	
մոմ	>Զթ. <i>միւմ</i> , <i>միւմ</i> ,	Հճ. <i>մոմ</i>
նոր	>Զթ. <i>նիւյ</i> ,	Հճ. <i>նոյ</i>
շող	>Զթ. <i>շիւղ</i> ,	Հճ. <i>շող</i>
չոր	>Զթ. <i>չիւյ</i> ,	Հճ. <i>չոյ</i>
չորս	>Զթ. <i>չիւս</i> ,	Հճ. <i>չոյս</i>
պորտ	>Զթ. <i>բիւդ</i>	Հճ. <i>բոյդ</i>
սոխ	>Զթ. <i>սիւխ</i> .	Հճ. <i>սոխ</i>

փոթ	>Ջթ. փիւթ,	Հճ. փոթ!
փոխ	>Ջթ. փիւխ,	Հճ. փոխ
փոկ	>Ջթ. փիւգ,	Հճ. փոգ
փոս	>Ջթ. փիւս,	Հճ. փոս
փոք	>Ջթ. փիւյ,	Հճ. փոյ
քոս	>Ջթ. քիւս:	

§92. Այս սքանչելի կանոնավորության դեմ կան մի քանի բացառություն կազմող ձևեր, ինչպես՝

գործ բառն ունի Ջեյթունում *գիւյձ* կանոնավոր ձևի դիմաց նաև *գիւյձ*, *գիյձ* և Հաճընում *գօյձ*, որոնք անկանոն են:

քող (քօղ) դառնում է Ջթ. *քուղ*

մոր (պտուղը) >Ջթ. *մույ*

մոմ բառը թեև ունի կանոնավոր ձևերը, բայց նաև Ջթ. *միւ*:

կոկ, կոկիկ >Ջթ. *գիգ*

ծոմ >Ջթ., Հճ. *ձօմ*՝ միանգամայն անկանոն, անշուշտ փոխառություն են կրոնական լեզվից: Չի կարող լինել *մ* ունգայինի ազդեցություն, ինչպես ցույց է տալիս *մոմ* բառը:

*մորթ*, *գորտ*, *կոպ. թոք*, *բոկ* բառերը երկվանկի վերածված լինելով՝ չեն պատկանում այստեղ:

*խոր* բառը, ինչպես այլուր, վերածվել է *խորունկ* ձևի, այստեղ էլ դարձել է Ջթ. *խունու*, Հճ. *խույու*:

§93. Այս ընդհանուր կանոնից դուրս ունենք նաև երկու երկրորդական կանոն.

ա) *վ* բաղաձայնից առաջ *ն*-ն դառնում է Ջեյթունի բարբառում *էօ*, Հաճընում՝ *է*. օրինակներն են՝

կով >Ջթ. *գէօվ*, Հճ. *գէվ*

հով >Ջթ. *հէօվ*, Հճ. *հէվ*:

(*Ծով* բառը ջնջվելով՝ փոխանակված է թրք. dengiz) բառով Ջեյթունի բարբառում:

բ) *ն* բաղաձայնից առաջ *ն*-ն դառնում է նույնպես Ջթ. *էօ*, բայց Հճ. մնում է *ն*.

թոռն >Ջթ. *թէօն*, Հճ. *թոր*

խորթ >Ջթ. *խէօթ*, Հճ. *խորթ*՝ (այս բառը, ինչպես այլուր, հնչվում է ուրեմն Ջթ. *խոթ*, իսկ Հճ. հնչվում է *խորթ*):

Այս հնչյունական օրենքի համաձայն է, որ նախահնչյուն *ն*-ն դարձել է *էօ*՝ միայն *ոռ* բառի մեջ (Ջթ. *էօռ*, Հճ. *վոր*):

§94. Երկվանկ բառերի մեջ վերջնավանկի *ն*-ն (շեշտված) դառնում է Ջեյթունի բարբառում *իւ*, Հաճընում մնում է *ո*: Այսպես են՝

ազոխ	>Ջթ. <i>աօիւխ</i> ,	Հճ. <i>ազոխ</i>
բուր	>Ջթ. <i>բիւիւ</i>	
բորոտ	>Ջթ. <i>բիւրիւր</i> ,	Հճ. <i>բիւյօր</i>
գլոր(կլոր)	>Ջթ. <i>գիւիւիւ</i>	
գղթոր	>Ջթ. <i>գէօխղիւ</i>	
ժանգոտ	>Ջթ. <i>ժէնգոիւր</i> , <i>ջէնգոիւր</i>	
լակոտ	>Ջթ. <i>լագիւր</i> ,	Հճ. <i>լագոդ</i>
խաղող	>Ջթ. <i>խաղիւր</i> ,	Հճ. <i>խալոդ</i>
խմոր	>Ջթ. <i>խէօմիւ</i> ,	Հճ. <i>խիմօյ</i>
խնձոր	>Ջթ. <i>խէօնձիւ</i> ,	Հճ. <i>խիւնձոյ</i>
խոշոր	>Ջթ. <i>խիւշիւ</i> ,	Հճ. <i>խուշոյ</i>
խստոր	>Ջթ. <i>սէօխղիւ</i>	
կշոշ	>Ջթ. <i>գիւշիւ</i> «հոտոց»	
կտոր	>Ջթ. <i>գէօդիւ</i> ,	Հճ. <i>գալորոյ</i>
կորկոտ	>Ջթ. <i>գիւգիւր</i> ,	Հճ. <i>գույգոդ</i>
հարոց	>Ջթ. <i>հայիւց</i> «խնոցի»	
ճենճոտ	>Ջթ. <i>ջէօնջիւր</i>	
յիշոցք	>Ջթ. <i>իւշիւցք</i>	
շնորհք	>Ջթ. <i>շէօնիւք</i> ,	Հճ. <i>շաւնոյք</i>
ուղղորդ	>Ջթ. <i>իւղիւրդ</i> ,	Հճ. <i>աղղորդ</i>
պղտոր	>Ջթ. <i>բէօղղիւ</i> ,	Հճ. <i>բաղղոյ</i>
սալոր	>Ջթ. <i>սալիւ</i>	
սաղմոս	>Ջթ. <i>սաղմիւ</i> , <i>սաղմից</i>	
սղոց	>Ջթ. <i>սէօղիւց</i>	
սրոց	>Ջթ. <i>սէօիւց</i>	
վախկոտ	>Ջթ. <i>վախիւր</i>	
վզոց	>Ջթ. <i>վիզիւց</i>	
տկճոր	>Ջթ. <i>դէօգիւ</i> ,	Հճ. <i>դաւգոյ</i>
փիլոն	>Ջթ. <i>փիւլիւն</i> ,	Հճ. <i>փիլոն</i>
օրոցք	>Ջթ. <i>իւիւցք</i> ,	Հճ. <i>ույյօցք</i> :

§95. *n* և *վ* բաղաձայններից առաջ գտնվող *n*-ն դառնում է *ն* և *զ* Եթե *n*-ն բարբառում, իսկ *Հ* ածընում *n*-ն դառնում է *n*-ից առաջ *n*, իսկ *վ*-ից առաջ՝ *է* այսպես՝

աթոռ	>Ջթ. <i>աթոժո</i> ,	Հճ. <i>աթոր</i>
ախոռ	>Ջթ. <i>ախէտո</i> ,	Հճ. <i>ախոր</i>
ծողովք	>Ջթ. <i>ծտղէտվք</i>	
խոռվ	>Ջթ. <i>խէտոժվ</i> ,	Հճ. <i>խէյէվ</i> :

§96. Այս երկու կանոնից դուրս գտնվող բացառիկ ձևեր են՝

ալոճ	>Հճ. <i>ալուջ</i>	
գոռոզ	>Ջթ. <i>գուռէզ</i> ,	Հճ. <i>գօրոզ</i>
դամոն	>Ջթ. <i>դամին</i>	
դժոխք	>Ջթ. <i>դէօժտխք</i> ,	Հճ. <i>դժոխք</i>
քար(աթո)թոշ	>Ջթ. <i>քալթէտշ</i> ,	Հճ. <i>քարթէշ</i>
կոկոն	>Ջթ. <i>գօգօն</i>	
կոշկոռ	>Ջթ. <i>գօշգօյ</i>	
կոտոշ	>Հճ. <i>գէդէշ</i>	
միտոն	>Ջթ. <i>մէտոն</i> ,	Հճ. <i>մէրոն</i>
շուտ	>Հճ. <i>շվէդ</i> :	

§97. Երբ երկվանկ բառի առաջին վանկում գտնվում է *n* ձայնավորը, առաջ է գալիս երկու պարագա: Առաջինն այն է, որ բառի երկու վանկերն էլ ունեն *n* ձայնավորը: Այս դեպքում երկու ձայնավորները նույնանում են (Հաճընի բարբառում մասամբ).

բոլոր	>Ջթ. <i>բիլիլ</i>	
բորոտ	>Ջթ. <i>բիւրիւդ</i> ,	Հճ. <i>բուրոդ</i>
ծողով	>Ջթ. <i>ծտղէտվք</i>	
խոշոր	>Ջթ. <i>խիւշիւլ</i> ,	Հճ. <i>խուշոյ</i>
կոկոն	>Հճ. <i>գօգօն</i>	
կոշկոռ	>Ջթ. <i>գօշգօյ</i>	
կոտոշ	>Հճ. <i>գէդէշ</i>	
կորկոտ	>Ջթ. <i>գիւլգիւլ</i> ,	Հճ. <i>գուլգոդ</i> :

§98. Երկրորդ պարագան այն է, որ առաջին վանկն ունի *n* ձայնավորը, իսկ երկրորդ վանկը որևէ ուրիշ ձայնավոր: Ձայնավորների փոխադարձ ազդեցությանը, այս դեպքում ստացվում են զանազան հնչյունափոխություններ, որոնք դասավորելով դնում են այստեղ.

*n-ա > n-օ.*

կոճակ	>Ջթ. <i>գուջօգ</i>	
կոշնակ	>Ջթ. <i>գուշնօգ</i>	
խորան	>Ջթ. <i>խույօն</i> ,	Հճ. <i>խօյօն</i>
խոնջան	>Ջթ. Հճ. <i>խունջօն</i>	
շողգամ	>Ջթ. <i>շուխգամ</i>	
խոնարհ	>Ջթ. <i>խունարհ</i>	
սողալ	>Ջթ. <i>սուղօլ</i>	
փորձանք	>Ջթ. <i>փույցօնք</i> ,	Հճ. <i>փօյցօնք</i> :

*n-ի > ի-է.*

հոգի	>Ջթ. <i>հիգգէ</i> ,	Հճ. <i>հիգգի</i>
ջորի	>Ջթ. <i>ջիյէ</i> ,	Հճ. <i>ջիյի</i>
բոկիկ	>Ջթ. <i>բիբէտգ</i> ,	Հճ. <i>բիբիգ</i>
սուլի	>Հճ. <i>դիլի</i> «որթ»:	

*n-ի > ի-ի.*

կոտիմն	>Հճ. <i>գիդիմ</i>	
կոծիծ	>Ջթ. Հճ. <i>գիծիծ</i>	
կոփիչ	>Ջթ. <i>գիփիչ</i> «թակ»	
մորթ(ի)	>Ջթ. <i>միյթի</i>	
*խոսակիլ	>Ջթ. <i>խիսիլ</i> «սուր ցավել»	
հոտիլ	>Ջթ. <i>հիդիլ</i> ,	Հճ. <i>հիդիլ</i> :

*n-ի > է-ա.*

փոխիմն >Ջթ. *փէխանդ*, Հճ. *փէխիմն*

*n-ի > ա-ը.*

մոխիր >Ջթ. *մախիլ*

*n-ի > ու-ը.*

շողիք >Ջթ. *շուղլք*, Հճ. *շողիք*

*n-ի > ու-ի.*

չոքիլ >Ջթ. *չուքիլ*

*n-ի > ը-ի.*

թո(ր)շ(ո)միլ >Ջթ. *թըշմիլ*

*n-ի > է-ի.*

խորիսի >Հճ. *խէյիգ*

*n-է > ու-ի.*

կոճկել >Ջթ. *գուջգիլ*

կողպել > Զթ. գուղբիլ, Հճ. գողբել  
 գովել > Զթ. գուվիլ, Հճ. գէվել, գիվել:

n-է > ու-է.

գովէշ > Զթ. գիւվէշ

n-ու > ու-ու.

խոստուկ > Զթ. խուստուգ «սուր ցավ»  
 թողուլ > Զթ. թուղուլ, Հճ. թողնել:

n-ա > օ-օ.

տոմար > Հճ. դօմօյ «երազահան»  
 կողկողիլ > կողալ > Զթ. գողօլ «ողբալ»:

n-ե > ի-ի.

ցորե(ա)ն > Զթ. ցիյիճ, Հճ. ցիյէճ  
 կոկել > Զթ. գիգիլ  
 կոպ(երք) > Զթ. գիբիք  
 կորե(ա)կ > Զթ. գիյիգ, Հճ. գիյէգ  
 կոփել > Զթ. գիփիլ, Հճ. գիփել «տաշել»  
 քորել > Հճ. քիյել  
 մորթել > Հճ. միյթել  
 հորդել > Հճ. հիյթել «ձյունը տանիքից թափել»:

(Վերջին երեքը միայն Հաճընի բարբառով են և ունեն բայական -ել վերջավորությունը, որին պիտի համապատասխաներ Զթ. -իլ):

n-ա > ի-օ.

սուկալ > Զթ. սիսգօլ  
 հոգալ > Զթ. հիգօլ  
 լոգ(ա)նալ > Հճ. լիգնօլ:

n-ե > է-ի.

կոխել > Զթ. գէխիլ, Հճ. գօխել  
 փոխել > Զթ. փէխիլ, Հճ. փէխել:

n-ե > ք-է.

մորելս > Զթ. մըլէխ

n-ա > ու-ի.

լողալ > Զթ. լուղիլ

n-ու > օ-ու.

թոք > Զթ. թօքուց

n-ի > ի-ի.

ծորիլ > Զթ. ձիւիլ:

Կարելի չեղավ ինձ գտնել ընդհանուր կանոն այս բոլորի մեջ. դասավորեցի ըստ տեսակի և համաձայն Զեյթունի բարբառի, որին երբեմն միանում է Հաճընը և երբեմն շեղվում: Զգուշալի են հատկապես բայական ձևերը, որոնք, ինչպես հայտնի է, կարող են շատ զանազան ձևեր ստանալ տարբեր բարբառներում (օրինակ՝ խօսիլ, խօսել, խօսալ):

Ընդհանրապես նկատելի է, որ Հաճընում երկվանկ բառերի մեջ եթե առաջին վանկում կա n ձայնավորը և հաջորդ վանկում է կամ ի, առաջին վանկի n-ն, նույնիսկ եթե բառակազմում լինի, դառնում է ի. ինչպես՝

կորել > գիյէգ  
 գովել > գիվել  
 բուպիկ > բիբիգ  
 սուլի > դիլի  
 կոփել > գիփել  
 ցորեն > ցիյէճ  
 ոջիլ > իջջիլ  
 մորթել > միյթիլ  
 խորիսիս > խէլիգ (որովհետև ի-ից հետո երկու բաղաձայն կա)  
 ոլորել > իլլել  
 կոտիմն > գիդիմ  
 չոր(ա)նալ > չիյնօլ (թեն չոր > չոյ)  
 յոտել > հիդել  
 հոտել > հիդել  
 ջորի > ջիյի  
 բոլորել > բիլլել (պտտվել)  
 կոծիծ > գիձիձ

§99. Երեք և ավելի վանկանի բառերի մեջ վերջնավանկի n-ն դառնում է միշտ իւ՝ Զեյթունի բարբառում, բայց ո՛ր Հաճընի բարբառում. այսպես են՝

ալևոր > Զթ. հւլվիլ, Հճ. հալիվոյ  
 դաստիշոն > Զթ. դէօրդիշիւն  
 դատաւոր > Հճ. դատաւոյ  
 թագաւոր > Զթ. թաճաւիլ, Հճ. թաքաւոյ «արքա»  
 թագաւոր > Զթ. թաքվիլ, Հճ. դիագոյ «նորափեսա»  
 կեղծաւոր > Զթ. գեղձաւիլ  
 ճգնաւոր > Զթ. ջիգնաւիլ  
 խալիզոն > Զթ. խէօլիզիւն, Հճ. խալիզոն  
 շնորհաւոր > Զթ. իշնահաւիլ, Հճ. շնօհաւոյ  
 կաթուղիկոս > Զթ. գաթէօղգիւս  
 եպիսկոպոս > Զթ. էբիսգիբիւս:

§100. Միջին վանկի *n* ձայնավորն ըստ օրինի սղվում կամ *ը-ի* է վերածվում. բայց *ը-ն* լինելով շատ թույլ ձայնավոր և ազդվելով շրջապատի ձայնավորներից, ստանում է միշտ նրանց երանգը. այսպես՝

- |            |                                  |                       |
|------------|----------------------------------|-----------------------|
| կաթուղիկոս | >Ձթ. <i>գ՛նթեօղգիւս</i>          |                       |
| եպիսկոպոս  | >Ձթ. <i>էքիսգիքիւս</i>           |                       |
| դողդողալ   | >Ձթ. <i>դ՛ողդ՛ողալ</i>           |                       |
| շնորհատր   | >Ձթ. <i>իշնանհնավիւյ,</i>        | Հճ. <i>շնօյհավոյ</i>  |
| ողորմիլ    | >Ձթ. <i>ուղույմիլ</i>            |                       |
| բորոտիլ    | >Ձթ. <i>բ՛իյիդիլ</i>             |                       |
| բորբոսիլ   | >Հճ. <i>բնյբնսել</i>             |                       |
| հոտոտել    | >Ձթ. <i>հօդփօդօլ,</i>            | Հճ. <i>հէդփըդօլ</i>   |
| ծոծորակ    | >Ձթ. <i>ծիծիյօգ,</i>             | Հճ. <i>ծիրօգ</i>      |
| գլորել     | >Ձթ. <i>գ՛լլլի,</i>              | Հճ. <i>գ՛նլլնլլել</i> |
| գլտորել    | >Ձթ. <i>գ՛լլդլլի</i>             |                       |
| ծանգոտիլ   | >Ձթ. <i>ջանգոըդիլ</i>            |                       |
| խոժոռիլ    | >Ձթ. <i>խըժըռիլ</i>              |                       |
| կողոպուտ   | >Ձթ. <i>գուղբույդ, գիւղբիւյդ</i> |                       |
| Սերովբէ    | >Ձթ. <i>Սըյըբբէ</i> (անունը):    |                       |

Իբրև գրական բառ, կամ սկզբնավանկի *ը-ի* պատճառով, անփոփոխ է մնում միայն նգովել >Ձթ. *նգօվիլ*:

§101. Միջին ձայնավորի սղման այս օրենքի և *ը>յ* հնչյունափոխության պատճառով –*ուր-* հնչյունախումբը վերածվում է *իլլ-ի*: Այսպես են՝

- |        |                             |                  |
|--------|-----------------------------|------------------|
| ուրել  | >Ձթ. <i>իլլի,</i>           | Հճ. <i>իլլել</i> |
| բուրիլ | >Ձթ. <i>բիլլի</i> «ման գալ» |                  |
| խուրիլ | >Ձթ. <i>խիլլի</i> :         |                  |

Զգիտեն ինչու՞ մոլորիլ բառը չի հետևում այս հետաքրքրական կանոնին և փոխանակ դառնալու \**միլլիլ*, լինում է Ձթ. *մ՛լլլիլ*: Արդյոք նախաձայն *մ-*ի որևէ ազդեցության պատճառով:

§102. Անկողից բառը զանազան տեղափոխություններով դարձել է Ձթ. *ուղունգուն* և նշանակում է ոչ թե «անկողին», այլ՝ «վերմակ»: Նկատելի է, որ հակառակ զեյթունցիների հնչյունական օրենքների, վերջնավանկի *ա-ն* չի վերածվել *օ-ի*: Արդյոք կա՞ այստեղ թրք. հոմանիշ *yoryan* բառի հետ որևէ կապ:

§103. Սկզբնավանկում գտնվող *n* ձայնավորը Զեյթունի բարբառում երեք և ավելի վանկանի բառերի մեջ, *օ* ձևով պահպանված է միայն երկու բառի մեջ, որոնք են.

հոտոտել >Ձթ. *հօդփօդօլ,* Հճ. *հէդփըդօլ* (որից երևում է, որ սկզբնավանկի *օ-ն* արդյունք է ձայնավորների ներդաշնակության):  
 գորտ Ձթ. *գ՛օյդօնօգ* (որ ծագում է \**գորտանակ* ձևից և նմանապես արդյունք է ձայնավորների ներդաշնակության օրենքի):  
 Տե՛ս ստորև նաև *գոհութիւն*:

Մնացյալ բոլոր բառերում սկզբնավանկի *n* ձայնավորը վերածվում է *ը, ի, ա, ու, իւ* ձևերի. այսպես՝

- |                     |   |                     |
|---------------------|---|---------------------|
| խուրիլ              | >Ձթ. <i>խիլլի</i>   |                     |
| խոժոռիլ             | >Ձթ. <i>խըժըռիլ</i>   |                     |
| խոստանալ            | >Ձթ. <i>խըսդանօլ,</i>   | Հճ. <i>խօսդանօլ</i> |
| խոստովանիլ          | >Ձթ. <i>խըսդըվանըլ</i> (իմ աղբյուրներից առաջինը տալիս է այս ձևը, վերջինը՝ <i>խուսդովանըլ</i> ): |                     |
| խորդալ              | >Ձթ. <i>խըդդադիլ,</i>   | Հճ. <i>խըդդադել</i> |
| լովիաս              | >Ձթ. <i>լըվիյօս</i>   |                     |
| գոքանչմայր          | >Ձթ. <i>գըքըչմար,</i>   | Հճ. <i>իքիչմօյ</i>  |
| գոքանչպապ           | >Ձթ. <i>գըքըչբօբ,</i>   | Հճ. <i>իքիչբօբ</i>  |
| մուրիլ              | >Ձթ. <i>մ՛լլլիլ</i>   |                     |
| մորենի              | >Ձթ. <i>մըյմիճէ</i>   |                     |
| գոռալ               | >Ձթ. <i>գըդդադիլ</i>  |                     |
| կորնչիլ, կորսուիլ   | >Ձթ. <i>գըշնըվիլ</i>  |                     |
| կորուսանել, կորցնել | >Ձթ. <i>գըշնել</i>  |                     |
| ուրել               | >Ձթ. <i>իլլի,</i>   | Հճ. <i>իլլել</i>    |
| բուրիլ              | >Ձթ. <i>բիլլի</i> «ման գալ»   |                     |
| բորոտիլ             | >Ձթ. <i>բ՛իյիդիլ</i>  |                     |
| չորանալ             | >Հճ. <i>չիյնօլ</i>  |                     |
| մոռանալ             | >Ձթ. <i>մառնօլ,</i>   | Հճ. <i>մօրնօլ</i>   |
| ծոծորակ             | >Ձթ. <i>ծիծիյօգ,</i>  | Հճ. <i>ծիրօգ</i>    |
| բորբոսիլ            | >Հճ. <i>բնյբնսել</i>  |                     |
| գոհութիւն           | >Ձթ. <i>գ՛օհօթըն, գ՛ուհութըն</i>  |                     |
| գողանալ             | >Ձթ. <i>գ՛ուղնօլ,</i>   | Հճ. <i>գ՛օղնօլ</i>  |
| կործանել            | >Ձթ. <i>գույձանիլ</i>   |                     |
| դողդողալ            | >Ձթ. <i>դ՛ողդ՛ողալ</i>  |                     |

կողոպուտ

>Ջթ. գուղբույդ, գիւղբիւյդ (բայց նաև գօղօբույդ «մեռելի իրերը»):

**ՌԻ**

§104. Բառասկզբում թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի մեջ *ու-ն* մնում է *ու* թե՛ Զեյթունի, թե՛ Հաճընի բարբառում: Այսպէս՝

- ու >Ջթ., Հճ. *ու*
- ութ >Ջթ., Հճ. *ութը*
- ուլ >Ջթ., Հճ. *ուլ*
- ունենալ >Ջթ. *ունցնօլ*, Հճ. *ուննօլ*
- ուտիլ >Ջթ. *ուտունօլ*, Հճ. *ուրունօլ*
- ուտել >Ջթ. *ուդիլ*, Հճ. *ուդել*
- ուրագ >Ջթ. *ույօք*, Հճ. *ույօգ՛*
- ուրար >Ջթ. *ույօյ* և այլն:

*դ* բաղաձայնից առաջ *ու-ն* վերածվում է *ը-ի*, որ համաձայնվելով հաջորդ ձայնավորին՝ դառնում է *է*, *ա*, *ի*՝ հետևյալ բառերի մեջ.

- ուղեղ >Ջթ. *էղէղ*
- ուղարկել >Ջթ. *աղաւյգել*
- ուղղորդ >Ջթ. *իւղիւյդ՛*, Հճ. *աղղոյդ՛*

Միայն *ուղտ* բառը, իբրև միավանկ, մնում է անփոփոխ:

*շ* բաղաձայնից առաջ *ու-ն* դառնում է Զեյթունի բարբառում *օ*, իսկ Հաճընում մնում է *ու*: Սրա համար ունենք միայն մի օրինակ, որն է՝ ուշ >Ջթ. *օշ*, Հճ. *ուշ*:

*ուլն*, *ուլունք* բառը դառնում է Հճ. *հալլու*, իսկ Զթ. ....:

*ուր* բառը դարձել է Զթ. *յօլ*, Հճ. *յուլ*. ուրիշ բառերի մեջ *ր-ից* առաջ *ու-ն* մնում է անփոփոխ. ուստի կարծում եմ, որ այս բառը ձևացել է գրաբարի *յո՞* և *ուր* բառերի խաչաձևմամբ:

§105. Թեև *ո* ձայնավորը վերջնավանկում, կանոնավոր կերպով, գրեթե միշտ դառնում է *ի*, սակայն *ու* ձայնավորը չունի այսպիսի կանոնավոր հնչյունափոխություն: Ընդհանրապես թե՛ վերջնավանկում, թե՛ բառավերջում և թե՛ բառի միջին վանկերում *ու-ն* մնում է *ու*. ինչպէս՝

- ածու >Ջթ. *աձուք*
- արմուկն >Ջթ. *արմունգ*, Հճ. *արմուգ*
- շուն >Ջթ., Հճ. *շուն*

- տուն >Ջթ., Հճ. *դուն*
- մօրուք >Ջթ., Հճ. *մույուք*
- մրուր >Ջթ. *մօյույ*, Հճ. *մալույ*
- հերու >Ջթ., Հճ. *հիյու*
- ձմերուկ >Հճ. *ձաձալուգ*
- մանուշակ >Ջթ. *մանուշօգ*
- մուրալ >Ջթ., Հճ. *մույօլ*
- շուշան >Ջթ. *շուշօն* և այլն:

Սակայն 170 այսպիսի օրինակների մեջ ունենք նաև 43 բառ, որոնց մեջ *ու-ն*՝ առանց որևէ մասնավոր կանոնի, դառնում է *ո*, *օ* կամ *ը*, *ի*՝ հետևյալ ձևով.

§106. *ու-ն* դառնում է *ո=օ*.

- ածուխ >Հճ. *անձոխ*
- աշուն >Ջթ. *էշօնք*, Հճ. *աշունք*
- արթուն >Ջթ. *այդօն*, Հճ. *այդիւն*
- բլուր >Ջթ. *բօլօյ*
- բուն(ձեռքի) >Ջթ. *բօո*, Հճ. *բուր*
- բուրդ >Ջթ. *բօյդ՛*, Հճ. *բիւյդ՛*
- գաղտուկ >Ջթ. *գաղղօգ*
- գարուն >Ջթ. *գալօն*, Հճ. *գալուն*
- գլուխ >Ջթ. *գօլօխ*, Հճ. *գըլուխ*
- գոհութիւն >Ջթ. *գօհօթըն*, *գիւհութըն*
- գուղձն >Ջթ. *գօխձ՛*
- գունդ(խմորի) >Ջթ. *գօնդ*
- դդում >Ջթ. *դօդօւ*, Հճ. *դըդիւն*
- դու >Ջթ. *դօն*, Հճ. *դիւն*
- դուն >Ջթ. *դօո*, Հճ. *դիւր*
- դուրս >Ջթ. *դօյս*
- երդումն >Ջթ. *ույդօւ*, *իյդօւ*, Հճ. *ույդիւմ*
- լեզու >Ջթ. *լիգօ*, Հճ. *լիզու*



լու	>Ջթ. լօ,	Հճ. լու
լուծ	>Ջթ. լօձք	
խլուրդ	>Ջթ. խօլօյդ՝	
ձուկն	>Ջթ. ձօգ,	Հճ. ձնօգ
ճնճղուկ	>Ջթ. ջէնջղօգ	
յիսուն	>Ջթ. իսսօն,	Հճ. իսուն
ջուր	>Ջթ. ջօր,	Հճ. ջնյ
սանդուխ	>Ջթ. սանդօխ,	Հճ. սանդուխ
սնդուկ	>Ջթ. սօնդօգ,	Հճ. սանդուգ
վաթսուն	>Ջթ. վաթծօն, Հճ. վաձձն:	

§107. ու-ն դառնում է ը.

բուրվառ	>Ջթ. բիւրվառ,	Հճ. փուրվօր
դունչ	>Ջթ. դիւնչ,	Հճ. թունչ
խուզել	>Ջթ. խըղդիլ «պատռել»	
մուն	>Ջթ. մըն «ռջի ձագ»	
մուրացկան	>Ջթ. մըյացգօն	
ջուլհակ	>Ջթ. ճհալօգ,	Հճ. ջուլհօգ
ցուցանել	>Ջթ. ցըցընիլ,	Հճ. ցւցւնել:

§108. ու-ն դառնում է էօ, իւ.

խուլիմջ	>Ջթ. խէօլէժ	
ծուփ	>Ջթ. ձէօփ	
կողոպուտ	>Ջթ. գուղբույդ, գիւղբիւյդ	
կտուց	>Ջթ. գօղուց, գէօղիւց, Հճ. գւղուց	
պատուհան	>Ջթ. բւղիւհիւն, Հճ. բահաղէն:	

§109. Առանձին դեպքեր են՝

ակոււր >Ջթ. ագան, ագէօն (ասվում է ագան օր «տոնական» հանդիսավոր օր», Պլ. ագում օր):  
 իշխուն «խավրժիլ» >Ջթ. իշխուն կամ աշխանգօբէ՛  
 պլուգ >Ջթ. բլուգ «տղա», բայց նաև կոչական բլէ՛գ, լըբլէ՛գ, լըբէ՛գ, բէ՛գ «ա՛յ տղա, տո՛»:

ԵՐԿԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱՅ

§110. Միավանկ բառերի սկզբում այ-ը դառնում է Ջեյթունի բարբառում ա՛ իսկ Հաճընի բարբառում ունի միաժամանակ երկու ձև՝ ա և է. այսպես են՝

այս	>Ջթ. ա՛ս,	Հճ. աւ, էս
այդ	>Ջթ. ա՛դ,	Հճ. ադ, էդ
այն	>Ջթ. ա՛ն,	Հճ. աճ, էճ
այլ	>Ջթ. ա՛լ, ա՛	Հճ. ալ, էլ
այծ	>Ջթ. ա՛ծ,	Հճ. աձ, էձ:

§111. Երկու և ավելի վանկանի բառերի սկզբում այ-ը դառնում է թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում է: Եղած օրինակներն են՝

այգի	>Ջթ. էգէ՛,	Հճ. էգգի՛
այր(իկ)	>Ջթ. էյիգ	
այրել	>Ջթ. էրիլ,	Հճ. էյել
այրի	>Ջթ. էրիգընըգ:	

§112. Հաճընի բարբառում նախահնչյուն այ-ը կարող է նաև դառնալ բազմավանկ բառերի սկզբում՝ ի. այսպես են՝ այս, այդ, այն >Հճ. իսօ. իդօ, ինօ:

§113. Միավանկ բառերի մեջ գտնվող այ-ը դառնում է Ջեյթունի բարբառում ա՛, Հաճընի բարբառում միաժամանակ ա կամ է: Այսպես են՝

գայլ	>Ջթ. գա՛լ,	Հճ. գալ, գէլ
լայն	>Ջթ., Հճ. լա՛ն	
խայտ	>Ջթ. խա՛տ «խատուտիկ»	
ծայր	>Ջթ., Հճ. ձա՛յ	
կայծ	>Ջթ. կա՛ծ «կայծ», իսկ Հճ. գաձ, նաև գօձ «վառված ածուխ»	
հայս	>Ջթ. հա՛ս	
ձայն	>Ջթ. ձա՛ն,	Հճ. ձա՛ն
մայր	>Ջթ. մա՛յ,	Հճ. մա՛յ
վայր	>Ջթ. վա՛յ,	Հճ. վա՛յ
տայգր	>Ջթ. դա՛ր,	Հճ. դէր
փայտ	>Ջթ. փա՛տ,	Հճ. փա՛տ:

§114. Բազմավանկ բառերի վերջնավանկում գտնվող այ երկբարբառը (երբ սրան հաջորդում է մի բաղաձայն), դառնում է Ջեյթունի բարբառում *ա*, է: Ահա այս կանոնի սակավաթիվ օրինակները.

երկայն	>Ջթ., Հճ. <i>իյգամ</i>	
եղբայր	>Ջթ. <i>էխբայ</i> ,	Հճ. <i>ախբայ</i>
ծնծղայ	>Ջթ. <i>ծիծղայք</i> ,	Հճ. <i>ծրծղազ</i> (առաջինը <i>ծնծղայք</i> , երկրորդը <i>ծնծղակ</i> ձևից)
կասկարայք	>Ջթ. <i>գեսգերայք</i>	
տերընդայս	>Ջթ. <i>դէյնդէս</i> «տեսոնընդատաջ»,	Հճ. <i>դէյնդէզ</i> «նոր տարի»:

§115. Իսկ նախորդ վանկերում գտնվող այ-ը դառնում է է թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում. այսպես են՝

խայթել	>Ջթ. <i>խէթի</i> ,	Հճ. <i>խէթել</i>
կայծակն	>Ջթ. <i>գէձօգ</i>	
նայթիլ	>Ջթ. <i>ջէթիլ</i> ,	Հճ. <i>ջէդիլ</i>
վայթել	>Ջթ. <i>վէդիլ</i> ,	Հճ. <i>վէդիլ</i>
վայրի	>Ջթ. <i>վէյէ, վէրէ</i> «եղնիկ»	
քայլել	>Ջթ. <i>քէլիլ</i> ,	Հճ. <i>քէլել</i>
փայլփլալ	>Ջթ. <i>փէլփէլօլ</i>	
ցայտել	>Ջթ. <i>ծէթիլ</i> «ծագել»	
ցայլել	>Ջթ. <i>ցէլօլ</i> «շեքել» (գրբ. <i>ցայլք</i> բառից կազմված բայ)	
վայելել	>Ջթ. <i>վէլիլ</i>	
հայիլ	>Ջթ. <i>հէլիլ</i> ,	Հճ. <i>հէյելիլ</i> :

Իսկ *հայելի* բառը թե՛ն Հճ. կանոնավոր կերպով տալիս է *հէլիլ*, Ջթ. լինում է *հիլլէ*:

Նմանապես *մայել* բայը անկանոն կերպով դառնում է Ջթ. *մայօլ* և նշանակում է «կատվի մայել»:

*կլայել(ա)կ* «անագ» բառը Հաճընի բարբառում դառնում է *գիլլայէզ*, ուր *այ>ալլ* և սրա պատճառով էլ առաջին վանկի *ը*-ն դարձել է *ի*: Իսկ Ջեյթունի բարբառում այ-ը վերանալով և առաջին ու վերջին վանկերը ներդաշնակվելով՝ ստացել է *գիլիզ*:

*կայանալ* և *կանգնիլ* բառերը շփոթվում են իրար հետ: Պոլսահայ բարբառում սրանք շատ որոշակի ձև ունեն. *կանգնիլ* տալիս է *գայնիլ*, իսկ

*կայանալ* > *գէնալ*: Ջեյթունի բարբառում ունենք *գիճօլ*, Հճ. *գայնել*, *գանել*: Հիմնվելով պոլսահայ ձևերի վրա՝ կարելի է ընդունել, որ սրանցից առաջինը (Ջթ. *գիճօլ*) ծագում է *կայանալ* բայից, երկրորդը՝ (Հճ. *գայնել*, *գանել*) *կանգնիլ* ձևից:

*խայտառակ* բառը, զուտ գրական փոխառություն լինելով, պահել է իր այ երկբարբառը (Ջթ. *խայդատօզ*):

Այս բոլոր դեպքերը միասին առնելով՝ կարող ենք վերածել մի ընդհանուր կանոնի և ասել, թե՛

Հին հայերենի այ երկբարբառը Ջեյթունի բարբառում շեշտի տակ լինում է *ա*, իսկ շեշտից առաջ՝ է: Սրա համար է, որ մինևույն բառը, որ ուղղակիանում ունի *ա*, հողովման ժամանակ կամ հոգնակի դառնալիս այդ այ-ը դարձնում է է. օրինակ՝

փայտ	> <i>փամ, փէդի, փէդիլ</i>
մայր	> <i>մայ, մէյիլ</i>
ծայր	> <i>ծայ, ձէյի, ձէյիլ</i> :

Նույնիսկ թուրքերենից փոխառյալ բառերը հետևում են նույն կանոնին. օրինակ՝

թրք. keleş «գեղեցիկ» Ջթ. *քէլլաշ*, որից *քէլլէշուրան* «գեղեցկություն»:

Այս կանոնի մասին ավելի մանրամասն տե՛ս §114:

§116. Բառավերջում գտնվող այ երկբարբառը թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում դառնում է միշտ *օ*. այսպես՝

բակլայ	>Ջթ. <i>բազլօ</i>
եղայ	>Ջթ. <i>էղօ</i>
երեխայ	>Ջթ. <i>էյէխօ</i>
կայ	>Ջթ., Հճ. <i>գօ</i>
ակոսայ	>Ջթ. <i>ազո</i>
սատանայ	>Ջթ., Հճ. <i>սադանօ</i>
քահանայ	>Ջթ. <i>քահաննօ</i>
վկայ	>Ջթ. <i>վօզօ</i>
տղայ	>Ջթ., Հճ. <i>դօղօ</i>
չուխայ	>Ջթ. <i>չուխօ</i>
սարբինայ	>Ջթ. <i>սայբինօ</i>
կթղայ	>Ջթ. <i>գօթղօ</i> , Հճ. <i>գալթղօ</i>
կանտարայ	>Ջթ. <i>գանդայօ</i> , Հճ. <i>գանդայօ</i> (նաև Ջթ. <i>գէնդէրէ</i> )

ճառայ	>Ջթ. ջառօ, Հճ. ջարօ
կրեայ	>Ջթ. գօյրօ «փականք» (Հճ. գալէշ «կրլա», որի ծագումն անհայտ է)
հիմայ	>Հճ. հումսմօ
ապրայ	>Հճ. աքրօ

Բացառաբար վերայ բառն է, որ թեև Հճ. լինում է վիյօ, բայց Ջթ. վիյաւ մնանապես շուկայ >Հճ. շուգաւ:

Քարայր բառը, որ ըստ օրինի պիտի լիներ \*քալալ (հմմտ. մայր >Ջթ. մալ, Հճ. մայ), այս ձևն ստանալուց հետո՝ երկրորդ անգամ հնչյունափոխվելով դարձել է Հճ. քալոյ:

### ԱԻ

§117. Ձայնավորի մոտ դարձել է ալ կ կրում է այն բոլոր հնչյունափոխությունները, որոնք հատուկ են ա ձայնավորին: Այսպես՝

առաօտուն	>Ջթ. առավդուն
առաչ	>Ջթ. էվալչք, էվէչք «երգ»
առել	>Ջթ. ալիլ, Հճ. ալել
առելել	>Հճ. ալլել
առելի	>Ջթ. իվիլ, Հճ. իվել
առերել	>Ջթ. ալլիլ, Հճ. այվել
գառազան	>Ջթ. գալզօն
գառակ	>Ջթ. գալօգ
թագաւոր	>Ջթ. թալգալիլ, Հճ. թաքալոյ «արքա»
թագաւոր	>Ջթ. թալքալիլ, Հճ. դալգալ «նորափեսա»
ծարաւիլ	>Ջթ. ծարվիլ, ձերվիլ
կեղծաւոր	>Ջթ. գեղձալիլ
հաւանիլ	>Ջթ. հալանլիլ, Հճ. հէվանել
հաւաքել	>Ջթ. հալքիլ, Հճ. հէվքել
ճգնաւոր	>Ջթ. ջիգնալիլ
շնորհաւոր	>Ջթ. իշնալիլ, Հճ. շնօյհալօյ
տաւար	>Հճ. դալօյ «հոտ»:

Այս բոլորի մեջ տեսնում ենք ալ>ալ, աւ, էվ, իվ, աֆ, ինչպես և կրճատում ու տեղափոխություն:

§118. Բառասկզբում, բաղաձայնից առաջ, արդեն աւ-ը դարձել է օ, և իբրև ձայնավոր՝ դառնում է.

ա) Միավանկ բառերի սկզբում՝ Ջեյթունի բարբառում, էձ, Հաճընի բարբառում՝ է. այսպես՝

օձ	>Ջթ. էձձ՝	Հճ. էձ՝
օղ	>Ջթ. էձղ,	Հճ. էղ
օր	>Ջթ. էձլ,	Հճ. էլ:

բ) Բազմավանկ բառերի սկզբում՝ Ջեյթունի բարբառում, դառնում է ու, Հաճընի բարբառում՝ է, ու, ձայնավորների ներդաշնակության օրենքով էլ՝ իւ, ի: Այսպես՝

օգտիլ	>Ջթ. ութգիլ,	Հճ. էթգել «բավել»
օծել	>Ջթ. ուձիլ	
օծանել	>Ջթ. ուզնել «քսել»	
օտար	>Ջթ. ութօյ	
օրէնք	>Ջթ., Հճ. ուլէնք	
օրինակ	>Ջթ. ուլունօգ	
օրհնիլ	>Ջթ. ուլանիլ, ուլհնիլ	
օրոցք	>Ջթ. իլիլցք	
օրօրել	>Ջթ. իլլիլ:	

§119. Բառամիջում բաղաձայնից առաջ դառնում է օ և կրում է այն հնչյունափոխությունները, որ ընդունում է ո ձայնավորը: Այսպես՝

ակօս	>Ջթ. ալգէօս	
աղօթք	>Ջթ. ալղէթք,	Հճ. աղօթք
ամօթ	>Հճ. ալօթ	
անօսք	>Ջթ. ալէօսք,	Հճ. ալէս
արօր	>Ջթ. հալլէօյ	
գօտի	>Ջթ. գալղէ,	Հճ. գալղի
գօրութիւն	>Ջթ. գօրութիւն	
թափօր	>Ջթ. թափոյլ,	Հճ. թափուր
թօթափել	>Ջթ. թութփիլ,	Հճ. թէթփել
խօսք	>Ջթ. խէօսք	
խօսիլ	>Ջթ. խուսալ,	Հճ. խօսել
կարօտ	>Ջթ. գալլիղ, գալղէօթ,	Հճ. գալլօթ
կարօտանալ	>Ջթ. գալլընօլ	
կօշիկ	>Ջթ. գուշիք,	Հճ. գուշիգ

կօշկակար	>Ջթ. գուշգոյ	
մօտ	>Ջթ. մօդ	
մօրատ	>Ջթ. մույօդ «ցեխ»	
մօրուք	>Ջթ., Հճ. մույուք	
յօտ	>Ջթ. հէօդ	
յօտել	>Ջթ. հուդիլ, Հճ. հիդել	
յօտոց	>Ջթ. հիդից, Հճ. հէդոց	
յօնք	>Ջթ. ընքվը	
յօրանջել	>Ջթ. էրէնջգրդօյ, Հճ. էյէնգջօյ	
նարօտ	>Ջթ. նարօդ	
նօթի	>Ջթ. անըթը, Հճ. անութի	
սօսի	>Ջթ. սուսա	
սօն	>Ջթ. դէօն:	

Նաև սեռ. մօր, եղբոր ձևերը դառնում են Ջթ. մէօյ, էխքէօյ, Հճ. մէյ, ախքէյ (երկուսի մեջ էլ հայր բառը ջնջված է՝ փոխարինվելով պապ > բօբ ձևով):

Նույնիսկ թրք. ծօր «ժանտախտ» բառը, որ «հարբուխ» նշանակությամբ մտել է բարբառիս մեջ, հնչվում է Հճ. չէր:

Այս բոլորի մեջ տեսնում ենք օ-ն դարձած օ, էօ, է, ու, իւ, ի, ը, նաև կրճատված կամ ձայնավորների ներդաշնակության օրենքին ենթարկված:

§120. Միայն աղաւնի բառը առիթ է տալիս դիտողության: Հին հայերենում սա միակ բառն է, որ աւ-ը բաղաձայնի մոտ գտնվելով հանդերձ չի դարձել օ, ուստի Հյուբշմանը ենթադրում էր, թե հները հնչում էին այս բառը աղաւընի: Կիլիկիայի բարբառում ունենք Ջթ. աղվընը և Հճ. աղվննի, որոնք կարող են ծագած լինել սույն աղաւընի ձևից՝ միջին ա ձայնավորի սփորական կորստով:

§121. Բառավերջում էլ աւ-ը դառնում է ալ և կրում ա ձայնավորի ն հատուկ հնչյունափոխությունը վ-ի մոտ: Այս ձևով ունենք՝

ագոալ	>Ջթ. ազնօլ, Հճ. ազրօլ	
իրալ	>Ջթ., Հճ. իյօլ	
ծարալ	>Ջթ. ձէօրտօլ, Հճ. ձէյէլ	
կալ	>Ջթ. գօլ	
կաքալ	>Ջթ. գնգօլ, Հճ. գաքօլ	
կտալ	>Ջթ. գօդօլ, Հճ. գանդօլ	

հալ	>Ջթ., Հճ. հօլ	
պառալ	>Ջթ. բառօր, Հճ. բարօր	
ցալ	>Ջթ., Հճ. ցօլ:	

Նախավերջին բառի մեջ կարևոր է նկատել վ>բ հնչյունափոխությունը, որ առաջին բ-ի ազդեցությամբ է:

### ԵԱ

§122. Այս երկբարբառը գտնում ենք միայն բառամիջում: Այս դիրքով եա-ն դառնում է Հաճընի բարբառում է, Ջեյթունի բարբառում՝ ի: Եղած օրինակները հետևյալներն են.

ատեան	>Ջթ. ադիւն «ժամանակ»	
կլայե(ա)կ	>Հճ. գիլայէգ, Ջթ. գիլիգ	
կորե(ա)կ	>Հճ. գիլէգ «եգիպտացորեն», Ջթ. գիլիգ «կորեկ»	
սեամ	>Ջթ. շիմիճք	
վառե(ա)կ	>Ջթ. վառիգ	
ցորեան	>Հճ. ցիլէն, Ջթ. ցիլիճ	

սեռ. բաղանեաց, հարսանեաց, վարտեաց >Ջթ. բաղնից, հայսնից, վայրից:

Սրանցից դուրս ունենք՝

լեառն, որ եա-ն դառնում է է՝ թե՛ Հաճընի և թե՛ Ջեյթունի բարբառում. այսպես՝ Հճ. լէր, Ջթ. լէր:

իրեար. գործածական չէ Կիլիկիայի բարբառում, բայց պահպանված է Ջթ. իյայցընիլ< իրարցնել բայի մեջ, որ նշանակում է «շարժել» (հմմտ. Ղրբ. դիւրիւր տալ), որի մեջ եա երկբարբառը դարձել է ա:

–ուրիւն–ով վերջացող բառերի սեռականում եա-ն դառնում է Ջթ. օ. օրինակ՝ մեծութեան > միճձութօն, ինչ որ ցույց է տալիս, թե նախաձևն է մեծութեան, ինչպես ուրիշ բարբառներում:

Բառավերջում եա-ն դարձել է է՝ գոնեա >Հճ. գճէ բառի մեջ, որ սակայն գրական փոխառություն է:

### ԵԱՅ

§123. Այս երկբարբառով ունենք միայն մի բառ՝ կրեայ, որի հին գրչությունն էլ անորոշ է. այսպես նաև նրա ձևափոխությունը Կիլիկիայի բարբառում, որ ունենք մի կողմից Ջթ. գօյրո և մյուս կողմից՝ Հճ. գայէշ: Առաջինը նշանակում է գեղջկական դոների փականքը, որ ուրիշ տեղեր կոչվում է կրեայ և ներկայացնում է նրա փոխաբերական իմաստը: Այս-

տեղ, անշուշտ, տեղի է ունեցել հնչյունների տեղափոխություն և Ջթ. գօյրո աներկայացնում է կորեա < կրեա: Երկրորդի մեջ թեև «կրեայ» իմաստը անփոփոխ պահված է, բայց անհայտ է -էշ վերջավորությունը: Ինչ թվում է, թե այս վերջավորությունն էլ փոխ է առնված Հճ. քարթէշ «մողես» բառից, որ է «քարաթոթոշ»:

### ԵԱԻ

§124. Բառակզբում ունենք միայն մի օրինակ, այն է՝ եաթն > եօթն, որ Ջեյթունի բարբառում դառնում է յէօթը, իսկ Հաճընի բարբառում՝ յօթը:

Բառամիջում պակասում է:

Բառավերջում եաւ-ը դառնում է Հաճընի բարբառում էվ, եվ, իսկ Ջեյթունի բարբառում՝ հվ: Սրա համար ունենք ընդամենը երկու օրինակ, որոնք են՝

բարեաւ	>Հճ. բւյէվ,	Ջթ. բւյիվ
սեաւ	>Հճ. սեվ,	Ջթ. սիվ:

### ԵԻ

§125. Այս երկբարբառը այժմ գտնվում է միայն երկու դիրքով, այն է բառամիջում՝ ձայնավորից առաջ, և բառավերջում: Երկու դեպքումն էլ դարձել է ձայնավորից ու վ բաղաձայնից կազմված մի վանկ, և դառնում է Հաճընի բարբառում էվ, Ջեյթունի բարբառում՝ հվ, երբեմն էլ՝ էվ, հբ: Այսպես՝

Բառամիջում՝

ալևոր	>Ջթ. հւլվիլ,	Հճ. հալիվոյ
բևեկնի	>Ջթ. բիբիգ, բիբգիճէ	
բևեռ	>Ջթ. բիբեռ, բիբեռ,	Հճ. բիբեր
երևիլ	>Ջթ. օյվօնօլ,	Հճ. իլվընօլ
հևալ	>Ջթ. հիվօլ	
սերկևիլ	>Ջթ. սիևգիվիլ,	Հճ. սիվուգւլիլ:

Բառավերջում՝

անձրև	>Ջթ. անձիվ,	Հճ. արեվ
արև	>Ջթ. այիվ,	Հճ. այեվ
դև	>Ջթ., Հճ. դէվ	
թեթև	>Ջթ. թիթիվ,	Հճ. թիթեվ
թև	>Ջթ. թիվ,	Հճ. թեվ

խև	>Ջթ. խէվ	
կեղև	>Ջթ. գիղիվ	
ձև	>Ջթ. ծիվ, ձիվ	
յետև	>Ջթ. իղիվ,	Հճ. իղեվ
ներքև	>Ջթ. նիքիվ,	Հճ. նիքեվ
տերև	>Ջթ. դիլիվ:	

### ԻԱ

§126. Կորցնելով իր երկբարբառային կազմությունը՝ դարձել է հյա, որ ապա գտնվելով շեշտի տակ, դարձել է հյօ. այսպես են՝

թիակ	>Ջթ. թիյօգ «կոնակ»
լովիաս	>Ջթ. լըվիյօս «լոբի»
պատրիարք	>Ջթ. բադրիյօյք, Հճ. բադիյօյք:

Միայն միակ բառն է, որ հին ձևով՝ հա խառնուրդից ստանալով է ձևը, դառնում է Ջթ. մէգ:

### ԻԻ

§127. Բառակզբում այս երկբարբառով ունենք միայն երկու բառ՝ իւր և իւղ. առաջինը դառնում է Ջթ. և Հճ. իյ, իսկ երկրորդը՝ Ջթ. էղ, Հճ. յէղ:

§128. Բառամիջում ստանում է երեք դիրք. նախ՝ կարող է գտնվել ձայնավորից առաջ և այն ժամանակ ՚ մասը դառնալով բաղաձայն վ, անցնում է հաջորդ ձայնավորին. իսկ ի-ն մնալով սուկ ձայնավոր, կարող է ենթարկվել ձայնավորների մեանության օրենքին: Այսպես է հիւանդ > Ջթ., Հճ. հիվօնդ, որից հիւանդանալ > Ջթ. հիվօնդնօլ և հիւանդութիւն > Ջթ. հիվընդութիւն:

Երկրորդ՝ իւ-ը գտնվում է բաց վանկի մեջ. այդ դեպքում դառնում է ի, ինչպես՝

կիրակէ	>Ջթ. գիյագի,	Հճ. գիյաօգի
հիւսել	>Ջթ. հիսիլ,	Հճ. հիսսել
միւտոն	>Ջթ. մէտօն,	Հճ. մէրոն:

Երրորդ՝ իւ-ը գտնվում է վերջնավանկում, բաղաձայնից առաջ և շեշտի տակ: Այս դեպքում Հաճընի բարբառում դառնում է միշտ ի, իսկ Ջեյթունի բարբառում՝ է, ը, ը կամ ի. այսպես են՝

ալիւր	>Ջթ. էլէլ,	Հճ. էլիլ
-------	------------	----------

աղբիւր	>Ջթ. ախբըն, Հճ. ախբիյ
արիւն	>Ջթ., Հճ. էյիւն
եղջիւր	>Ջթ. ախջէյ, Հճ. էխջիյ
հարիւր	>Ջթ., Հճ. հէյիյ
հերիւն	>Ջթ., Հճ. հիյիւն
ձիւթ	>Ջթ. ձիթ, Հճ. ձիթ
ձիւն	>Ջթ. ձիւն, Հճ. ձիւն
սիւն	>Հճ. սիւն

Ասև –թիւն անաւցի մեջ, ինչպէս՝

գոհութիւն	>Ջթ. գոհութիւն
զօրութիւն	>Ջթ. զօրութիւն
հիւանդութիւն	>Ջթ. հիւանդութիւն
մեծութիւն	>Ջթ. մեծութիւն

Պ բաղաձայնից առաջ գտնվող հւ-ը դառնում է Ջթ., Հճ. ե. այսպէս են՝

գիւղ	>Ջթ., Հճ. գեղ
ճիւղ	>Հճ. ջեղ

Սրա համեմատ է Ասև՝

իւղ	>Ջթ. էղ, Հճ. յէղ
-----	------------------

Որպէս բացառություն՝ հիւղ-ը լինում է Ջթ. հուղ:

Մըջիւն (որ և մըջիւն) բառը անկանոն կերպով դառնում է՝ Ջթ. մոնճօւ, մոնջօւ, Հճ. մարջիւ:

Գրաբարից մնացած մի դարձված է բիր բիրուց, որ միայն ը-ի փոփոխությամբ պահպանվել է բիւ բիւուց ձևով:

§129. Բառավերջում հւ-ը՝ իբր ոչ երկբարբառ, տալիս է հվ. ինչպէս՝

ազնի	>Հճ. ազնիվ
արծի	>Հճ. այծիվ
խի	>Ջթ. խիվ «սարեակ»
պատի	>Ջթ. բաղիվ
ցի	>Ջթ. ցիվիլիզացիա «քիվ» (իբր ցիվերի ծայրերը):

Փոքր տարբերություն են ներկայացնում՝

կոի	>Ջթ. գըռավ, Հճ. գարիվ
շի	>Ջթ. շիվ, Հճ. շիփ:

### ՈՅ

§130. Բառասկզբում օրինակ չունենք:

Բառամիջում, բաղաձայնից առաջ, շատ օրինակներ կան շեշտի տակ: Այս բոլորի մեջ էլ Հաճընի բարբառը ոչ երկբարբառը կանոնավորապէս դարձնում է հ: Անկանոն է միայն Ջեյթունի բարբառը, որ ներկայացնում է ը, ը, ու, է, օ, հ, հւ ձևերը. այսպէս՝

անոյշ	>Ջթ. անուշ	
բոյթ (մատ)	>Ջթ. բիթ, բօթ, Հճ. բիթմօղ	
բոյն	>Ջթ. բիւն, բւն	
գոյգ	>Ջթ. գըք, գաք	
գրոյց	>Ջթ. գըլըցք, Հճ. գէլից	
ընկույզ	>Ջթ. ինգէգ, Հճ. անգիգ	
թոյլ	>Ջթ. թըլ, Հճ. թուլ	
լոյս	>Ջթ. լիւ, Հճ. լուս, լիս	
խոյլ (մսի)	>Ջթ. ...., Հճ. խիլ	
կապոյտ	>Ջթ. ...., Հճ. գաբիդ	
կոյզ (ողկոյզ)	>Ջթ., Հճ. գիգ	
կոյր	>Ջթ. գիյ	
հանգոյց	>Ջթ. հանգից	
հոյն (պտուղը)	>Ջթ. ...., Հճ. հիւն	
ճկոյթ	>Ջթ. ջիգիթմօղ	
պատրոյզ	>Ջթ. բաղըք	
պատրոյս (թելի)	>Ջթ. բաղըս	
պոյզ «օժիտ»	>Ջթ. բըղք, Հճ. պրիգ	
փոյթ	>Ջթ. փըթ «ուշադրություն»	
քոյր	>Ջթ., Հճ. քիյ:	

Գրականից փոխառյալ ձևեր են՝ կոյս >Ջթ. գույս, վարագոյր >Ջթ. վա-նագօլ, որոնք ներկայացնում են ույ, օ հնչյունափոխությունները:

§131. Բառավերջում ոյ երկբարբառը գտնվում է միայն երկու դեպքում, այն է՝

Աստուած >Ջթ. ասթօժ, Հճ. ասվօժ, սեռ. Աստուծոյ >Ջթ. ասուծու երեկոյ, որ ձևափոխվելով դառնում է Ջթ. իյգօն, Հճ. իյիգուն:

§132. *ուա, ուէ, ուի, ուո* երկբարբառներով շատ քիչ օրինակ ունենք. բոլորի մեջ էլ *ու*-ն համարվում է բաղաձայն. այսպես՝

Աստուած	>Ջթ. <i>ասթօձ, ասսօձ,</i>	Հճ. <i>ասվօձ</i>
դժուար	>Ջթ. <i>դիժօյ</i>	
լուալ	>Ջթ. <i>վօլօլ,</i>	Հճ. <i>վլլօլ</i>
չուան	>Ջթ. <i>չուվօն,</i>	Հճ. <i>չօվօն</i>
շատրուան	>Հճ. <i>շաթաթրվօն</i>	
ձուածեղ	>Հճ. <i>ձվլազեղ</i>	
աղուէս	>Ջթ. <i>աղվիս</i>	
զգուիլ	>Հճ. <i>զղզվել</i>	
ցցուիլ	>Ջթ. <i>ցղցվալ</i>	
նուիկ	>Ջթ. <i>նրվրկ</i>	
շուտս	>Հճ. <i>շվէր:</i>	

**ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

§133. Բառակզբում *բ*-ն դառնում է *բ'* ինչպես՝ բան >Ջթ., Հճ. *բօն*, բանալ >Ջթ., Հճ. *բանօլ*, բաց >Ջթ., Հճ. *բօց*, բանալի >Ջթ. *բնալընք*, Հճ. *բնալընք*, բերան >Ջթ., Հճ. *բիյօն*, բարձր >Ջթ. *բօնձըր*, Հճ. *բօրճ*, բերել >Ջթ. *բիբիլ*, Հճ. *բիլէլ*, բուրդ >Ջթ. *բօյդ*, Հճ. *բույդ'*ն այլն:

Իբրև օտար բառ՝ բեխ, բեխեր ձևի մեջ (Ջթ. *բէխի*) նախահնչյունն *բ*-ն մնացել է *բ*:

Նախահնչյունն *բ*-ն դառնում է *բ'* հետևյալ բառերի մեջ.

բրիչ	>Ջթ. <i>բիիիչ</i>
բուսանիլ	>Ջթ. <i>բուսնօլ</i> , Հճ. <i>բուսնել</i>
բուրվատ	>Հճ. <i>բուրվօր</i> (բայց Ջթ. մնում է <i>բիւրվատ</i> )
բրդիլ	>Ջթ. <i>բիլթիլ</i> (բայց Հճ. <i>բիլդել</i> ):

§134. Բառամիջում *բ*-ն դառնում է նույնպես *բ*. սրա համար անկախ դիրքով օրինակներ են՝

արեթ	>Ջթ. <i>արիթ</i> ,	Հճ. <i>արբեթ</i>
շաբաթ	>Ջթ. <i>շաբօթ</i> ,	Հճ. <i>շաբբօթ</i>
Սերովբէ	>Ջթ. <i>Սըրըբբէ</i> (անձնանուն):	

Ինչպես տեսնում ենք, Հաճընի բարբառում այս դեպքում *բ*-ն կրկնված է:

Խաբել բառը, ինչպես շատ բարբառներում, նույնպես և այստեղ դառնում է Ջթ. *խափիլ*, Հճ. *խափել*, վերածելով *բ>բ'*:  
Մնացյալ օրինակներում *բ*-ն անկախ չէ. գտնվելով *ր* բաղաձայնից հետո՝ դառնում է *բ'* այսպես են՝

արբենալ	>Ջթ. <i>հայթինօլ</i> , <i>հայթօլ</i>
բորբոսիլ	>Ջթ. <i>բնրբնսել</i>
ուրբաթ	>Ջթ., Հճ. <i>ույթօթ</i>
սրբել	>Ջթ. <i>սնրբել</i> :

Գտնվելով *ղ* բաղաձայնից հետո՝ դառնում է *բ'*

աղբիւր	>Ջթ. <i>ախբիլ</i> ,	Հճ. <i>ախբիլ</i>
եղբայր	>Ջթ. <i>էխբնլ</i> ,	Հճ. <i>ախբնլ</i> :

Գտնվելով մոնոգայնից հետո՝ մնում է թրթռուն *բ*. ինչպես՝

ամբար	>Ջթ. <i>ամբօլ</i> ,	Հճ. <i>ամբոյ</i>
բամբակ	>Ջթ., Հճ. <i>բնամբօզ</i>	
բամբասել	>Ջթ. <i>բնամբասիլ</i> ,	Հճ. <i>բնամբասել</i>

կամ նաև *բ'* ինչպես՝

ամբարտաւան	>Հճ. <i>անբնայրավոն</i>
գմբեթ	>Հճ. <i>գիմբեթ</i> :

Գտնվելով խուլ *ս* հնչյունից հետո՝ դառնում է *բ'* ինչպես ցույց է տալիս միակ օրինակը՝ ազբել >Ջթ. *ասբիլ* «ոստայնի ազբերը ձգել»:

§135. Բառավերջում ունենք միայն մի անկախ օրինակ, ուր տալիս է *բ'* այսպես՝ գաբ >Ջթ. *գօբ'* (բույսը):

Մյուս դեպքերում անկախ չէ:

Գտնվելով *ր* բաղաձայնից հետո՝ դառնում է *բ'* կամ *բ*. ինչպես՝

սուրբ	>Ջթ. <i>սույբ'</i>
երբ	>Ջթ. <i>իբի</i> , Հճ. <i>յէբի</i> :

Գտնվելով *ղ* բաղաձայնից հետո՝ դառնում է *բ'* այսպես՝

աղբ	>Ջթ., Հճ. <i>օխբ'</i>
ողբ	>Հճ. <i>վոխբ</i>
շեղբ	>Ջթ. <i>շեղբ'</i> , Հճ. <i>խշբիզ</i> :

Գտնվելով խուլ *ս* հնչյունից հետո՝ նույնպես դառնում է *բ*. ինչպես՝ ազբն >Ջթ. *օսբ'*

§136. Բառասկզբում դառնում է միշտ գ՛ ինչպես՝

գագաթն	>Ջթ. գ՛ագոթ	
գալ (բայ)	>Ջթ. իգ՛նօլ,	Հճ. գ՛օլ
գաղտուկ	>Ջթ. գ՛աղոօգ	
գամ (գոյ.)	>Ջթ. գ՛օմ	
գարի	>Ջթ. գ՛այլ՛,	Հճ. գ՛այի
գետիճ	>Ջթ. գ՛իդէն,	Հճ. գ՛իդիճ
գիճի	>Ջթ. գ՛իճէ,	Հճ. գ՛իճի
գիշեր	>Ջթ. գ՛իշիյ,	Հճ. գ՛իշէյ
գլուխ	>Ջթ. գ՛օլօխ,	Հճ. գ՛լլուխ
գող	>Ջթ. գ՛իղ,	Հճ. գ՛ող
գործ	>Ջթ. գ՛ույձ, գ՛իւյձ,	Հճ. գ՛օյձ
գօտի	>Ջթ. գ՛ուղք,	Հճ. գ՛ուղի և այլն:

Ջարմանալի է կլոր (կլորիկ) բառը, որ գրեթե ամեն տեղ, նույնիսկ Երևանի բարբառում, ունի նախաձայն կ (կլոր, կոլոլ): Միմչդեռ ըստ ծագման պիտի լիներ գլոր (գլորիկ արմատից): Ջեթունի բարբառում գտնում ենք ճշտիվ գ՛իւլիւյ ձևը «կլոր» իմաստով:

§137. Բառամիջում թե՛ անկախ դիրքով (երկու ձայնավորի միջև) և թե՛ այլ դիրքերում տալիս է ընդհանրապես գ՛: Եղած օրինակները ճետկայլներն են.

ագահ	>Ջթ. ագ՛օհ,	Հճ. ագ՛օհ
ագանիլ	>Ջթ. հագ՛նլլ,	Հճ. հագ՛նլլ
ագի	>Ջթ. ագ՛է,	Հճ. ագ՛գի
ագուա	>Ջթ. ագ՛ուփ,	Հճ. ագ՛ուփ
անզգամ	>Ջթ. անըսգ՛օմ	
անարգել	>Ջթ. անըլգ՛իլ,	Հճ. անըլգ՛նլլ
արեզակ	>Ջթ. արիգ՛օգ	
գագաթն	>Ջթ. գ՛ագօթ	
դագաղ	>Հճ. դագ՛գող	
զգեստ	>Ջթ. ըսգ՛ից (կրոնավորի)	

հոգալ	>Ջթ. հիգ՛օլ	
հոգի	>Ջթ. հիգ՛գէ,	Հճ. հիգ՛գի
ձգել	>Ջթ. ըձ՛գիլ,	Հճ. ձմագ՛նլլ
ձագար	>Ջթ. ձագ՛գուր	
ձգոտալ	>Հճ. ծօգ՛օոոոլ,	Հճ. ձըգ՛գըրոոլ
ճգնել	>Ջթ. ջըգ՛նիլ	
ճգնաւոր	>Ջթ. ջիգ՛նմլլիւր	
մարգարէ	>Ջթ. մայգ՛այէ	
Մարգարիտ	>Ջթ. Մայգ՛այիդ (անունը)	
մզլիլ	>Ջթ. մըգ՛լիլ,	Հճ. մմգ՛լել
նարգիս	>Ջթ. նէյգ՛ից	
շողգամ	>Ջթ. շուլգ՛օմ	
վարագոյր	>Ջթ. վատագ՛օլ	
տարգալ	>Ջթ. դօգ՛օլ.	Հճ. դմագ՛օլ:

§138. Ը ոնգայիցից հետո բառամիջի գ–ն դառնում է թրթոուն գ. ինչպես՝

գանգատիլ	>Ջթ. գանգոդըլլ	
ժանգոտ	>Ջթ. ժէնգոդիւղ, ջէնգոդիւղ	
ժանգոտիլ	>Ջթ. ջանգոդըդիլ	
հանգոյց	>Ջթ. հմնգ՛ից	
մանգաղ	>Ջթ. մանգօղ (բայց Հճ. մանգ՛օղ):	

Բայց ունենք նաև գ՛կամ ք. այսպես՝  
անագան >Ջթ. անգ՛օն  
փոնգոտալ >Ջթ. փօոօնըդօլ, Հճ. փմրմնըդօլ  
խանգարել >Ջթ. խանգ՛արիլ, բայց նաև խանդըրըլ «գույնը փչանալ»:  
«Կանգնիլ» բայի դիմաց ունենք Ջթ. գիճօլ, Հճ. գայնել, գանել:

§139. Ուրիշ դեպքերում բառամիջի գ–ն դառնում է ք. այսպես՝  
պագանել >Ջթ. բաքնիլ (Հճ. բագ՛նել),  
տայգր >Ջթ. դմքըլ, Հճ. դէքը  
մրգաջուր >Ջթ. մարքաջօր:



«Թագավոր» բառը ստացել է երկու ձև. բուն իմաստով լինում է թագավոր (Հճ. թագավոր), ուր գ-ն դարձել է գ' (կամ ք), իսկ «Աորափեսա» իմաստով լինում է թագավոր (Հճ. դագճի), ուր գ-ն դարձել է ք (կամ փ):

Օգտել բայը դարձել է Ջթ. ութգիլ, Հճ. էթգել և նշանակում է «բավել, բավականանալ»:

Լոգանալ բայը դարձել է Հճ. լիգնոլ, լիկնոլ, որոնցից առաջինի մեջ գ-ն մնում է թրթռուն գ, երկրորդի մեջ՝ ազդվելով հաջորդ Գ-ից, դառնում է ոնգային գ:

Բառավերջում գ-ն դառնում է ձայնավորից հետո գ' կամ ք. այսպես՝

գ > գ'.

աւագ	>Ջթ. աւօգ'
գոգ	>Ջթ. գհիգ', Հճ. գոգ'
ձագ	>Ջթ. ծօգ', Հճ. ձօգ'
ձիգ	>Ջթ. ձիգ'
վեգ	>Ջթ. վեգ', Հճ. վեգ'

նաև՝ ազգ >Ջթ. օսգ':

գ > ք.

գոյգ	>Ջթ. գըք, գաք
թագ	>Ջթ. թօք
հոգ	>Ջթ. հիք
ուրագ	>Ջթ. ույօք, Հճ. ույօգ'
պատրոյգ	>Ջթ. բադրըք
սարկաւագ	>Ջթ. սայգավօյք
փափագ	>Ջթ. փափօնք
պոոյգ	>Ջթ. բառաք, Հճ. ...:

§141. Ռնգայինից հետո բառավերջի գ-ն մնում է. ինչպես՝

եղունգն	>Ջթ. օղունգ, Հճ. միղունգ
ժանգ	>Ջթ. ժանգ, ժէնգ (Հճ. ժօնգ)
հինգ	>Ջթ., Հճ. հինգ

նաև անգղ «ամանի ունկ», որ վերջնահնչյունի անկումով դարձել է Ջթ. անգ, էնգ:

§142. Բառասկզբում դ-ն դառնում է միշտ դ': ինչպես՝ դանակ >Ջթ., Հճ. դանօգ, դատարկ >Ջթ. դայդօգ «եղեգ», դարիվեր >Հճ. դայվեյ, դառնալ >Ջթ. դանօլ, Հճ. դարնոլ, դդում >Ջթ. դօդօս, Հճ. դըդհում, դեղին >Ջթ. դէղըն, Հճ. դէդիս, դնել >Ջթ. դընիլ, Հճ. դընեյ, դուռն >Ջթ. դօռ, Հճ. դուր, դող >Ջթ. դիղ, Հճ. դող և այլն:

Միայն դունչ բառն է, որ թեև Ջթ. լինում է դընչ, Հճ. դառնում է թունչ (արդյոք թուշ բառի ազդեցությամբ):

§143. Բառամիջում՝ իբրև անկախ օրինակ, ունենք միայն դադար >Հճ. դանոյ, դադարիլ >Ջթ. դանդրլ, դդում >Ջթ. դօդօս, Հճ. դըդհում, որոնց մեջ դ-ն դառնում է դ':

Բայց դադարիլ բայն ունի երկու ձև և երկու նշանակություն: Սովորական «դադարել, վերջ տալ, կանգնել» իմաստով դառնում է Ջթ. դանդրլ, դանդրլ, իսկ «հոգնել» իմաստով՝ Ջթ. դահրլլ, դահրլլ, դահրիօլ: Սրանց մեջ դ-ն հաջորդ դ-ից առաջ տալիս է հ (հմմտ. տր հնչյունախումբը):

Բառամիջում ունենք նաև գղակ >Ջթ. գօղօգ, որ սակայն հիմնվում է գղակ ձևի վրա:

§144. Ոչ անկախ լինելու դեպքում դ-ն գտնվում է նախ Ը ոնգայինից հետո, ուր տալիս է դ կամ դ' այսպես՝

դ > դ.	զնդան	>Ջթ. զօնդօն
	կնդել	>Ջթ. կննդել «մազերը խուզել»
	հանդիպել	>Ջթ. հանդըքլլ
	հիանդանալ	>Ջթ. հօվօնդնօլ
	հիանդութիւն	>Ջթ. հըվընդութըն
	սանդոխ	>Ջթ. սանդօխ, Հճ. սանդոխ
	սիմհնդր	>Ջթ. սիմհնդր (Հճ. սիմիր. տե՛ս նոր)
	տէրընդայս	>Հճ. դէյէնդէգ «Նոր տարի»
	ցնդիլ	>Ջթ. ցընդալ
	խնդալ	>Ջթ. խօնդօլ (Հճ. խընդօլ):

դ > դ'.

անդամ (ժողովի)	>Ջթ. <i>անդոմ</i>
անդունդ	>Ջթ. <i>անդունդ'</i>
անդրանիկ	>Ջթ. <i>անդրանիգ</i>
դանդաղ	>Ջթ. <i>դանդող</i>
խնդիրք	>Ջթ. <i>խընդիրք</i>
խնդրել	>Ջթ. <i>խընդիրիլ</i> :

§145. Երկրորդ դեպքում գտնվում է *ը* բաղաձայնից հետո, ուր տալիս է դ', թ կամ դ.

դ > դ'.

արդար	>Ջթ. <i>այդոյ</i> , Հճ. <i>այդիյ</i>
երդումն	>Ջթ. <i>ույդոմ</i> , Հճ. <i>ույդիմ</i>
երդնուլ	>Ջթ. <i>ոյդնուլ</i>
զարդարել	>Ջթ. <i>ջայդիլի</i> , Հճ. <i>զայդայել</i>
խորդալ	>Հճ. <i>խըրդանիլ</i> (բայց Ջթ. <i>խըրդադիլ</i> )
կարդալ	>Ջթ. <i>գայդոլ</i> , Հճ. <i>գայդոլ</i>
մարդակ	>Ջթ., Հճ. <i>մայդոգ</i>
ջարդել	>Ջթ. <i>ճայդել</i>
վարդապետ	>Ջթ. <i>վայդաբիդ</i>
վարդավառ	>Ջթ., Հճ. <i>վայդիվոյ</i>
ցրդի	>Ջթ. <i>ճայդիս</i> :

դ > թ.

բրդել	>Ջթ. <i>փըրթիլ</i> , Հճ. <i>բըրդել</i>
հորդել	>Հճ. <i>հիյթել</i> «ձյունը տանիքից թափել»:

դ > դ.

սպրդիլ	>Ջթ. <i>սըփրդոդիլ</i> , Հճ. <i>սաբրարդել</i>
խորդալ	>Ջթ. <i>խըրդադիլ</i> (բայց Հճ. <i>խըրդանիլ</i> ):

Մի օրինակ էլ ունենք, ուր *դ*-ն գտնվում է *դ* բաղաձայնից հետո և տալիս է դարձյալ *դ'* այս է՝ խեղդել >Ջթ. *խըլխդիլ*, Հճ. *խալխդել*:

§146. Բառավերջում չկա անկախ *դ*. գտնվում է *ճ* կամ *ը* բաղաձայնից հետո:

Գտնվելով *ճ* ու *ճ* ձայնից հետո՝ դառնում է՝

դ > դ.

գունդ	>Ջթ. <i>գոնդ</i> «խմորի գունդ»
ընդ (նախդիրը)	>Ջթ. <i>ինդ, էնդ</i> (տե՛ս նախդիրների բաժնում)
լինդ	>Ջթ. <i>լընդ</i>
ծնունդ	>Ջթ. <i>ձոնունդ</i>
կաղանդ	>Ջթ. <i>գաղունդ</i> , Հճ. <i>գաղընդէս</i>
հիւանդ	>Ջթ., Հճ. <i>հիվոնդ</i>
պինդ	>Ջթ. <i>բընդ</i> , Հճ. <i>բինդ</i>
փոխինդ	>Ջթ. <i>փեխանդ</i> (Հճ. <i>փեխիճ</i> , ուր <i>դ</i> > ձ):

դ > դ'.

հնազանդ

>Ջթ. *հնազոնդ'*

Բառավերջում *ը* բաղաձայնից հետո դառնում է *դ'* այսպես՝

դ > դ'.

բերդ	>Ջթ. <i>բեյդ'</i>
բուրդ	>Ջթ. <i>բիյդ'</i> , Հճ. <i>բիւյդ'</i>
խլուրդ	>Ջթ. <i>խուլոյդ'</i>
մարդ	>Ջթ., Հճ. <i>մոյդ'</i>
յարդ	>Ջթ., Հճ. <i>էյդ'</i>
նաւասարդ	>Հճ. <i>նավասոյդ'</i>
որդն	>Ջթ. <i>իւյդ'</i> , Հճ. <i>վոյդ'</i>
ուղղորդ	>Ջթ. <i>իւղիւյդ'</i> , Հճ. <i>աւղոյդ'</i>
վարդ	>Ջթ., Հճ. <i>վոյդ'</i>
մակարդ	>Ջթ. <i>մագոյդ'</i> , սակայն Հճ. <i>մագոյթ</i> :

Բառավերջումն է նաև *այդ*, որ դառնում է Ջթ. *աւդ*, Հճ. *ադ*, *էդ*, *իդ*օ:

Ջ

§147. Բառասկզբում *զ*-ն մնում է *զ*. ինչպես՝ զատ >Հճ. *զոդ*, *իզոդ* (ո-րից և զատել >Ջթ. *իզադիլ*), Ջատիկ > Ջթ. *զադիզ*, Հճ. *զադիզ*, զաւակ >Ջթ., Հճ. *զաւիզ*, զենուլ >Ջթ. *զեհիլ*, զերդ? >Ջթ. *զեհիլ* «քան թե», զրկել >Հճ. *զըլգել*, զնդան >Ջթ. *զոնոն*, զոյգ >Ջթ. *զըք*, *զաք*, զրոյց >Ջթ. *զըլըքք*, *զայաքք* «խոստում», Հճ. *զէյից*, զօրութիւն >Ջթ. *զօրութիւն*, զոքանչ >Ջթ. *զըքըչմար* և այլն:

Ջարմանալի է, որ Ջեյթունի բարբառում բառասկզբի *զ*-ն դարձել է *ջ* միմիայն զարդարել > *ջայդճյի* բառի մեջ (նույն բառը Հճ. պահում է *զայդճյէլ* ձևով): Ուրիշ նման հնչյունափոխության օրինակ չկա:

Ջգեստ «եկեղեցական զգեստ» բառի մեջ *զ*-ն հանդիպելով *գ՛* բաղաձայնին՝ դարձել է *ս*. այնպես որ *զգեստ* լինում է *ըսգից*:

§148. *զ*-ն բառամիջում մնում է նույնպես *զ*. եղած օրինակները հետևյալներն են. լեզու >Ջթ. *լիզօ*, Հճ. *լիզու*, թեզանիք >Ջթ. *թէզանիք*, խալիզոն >Ջթ. *խէօլիզին*, Հճ. *խալիզոն* «մողես», հազար >Ջթ., Հճ. *հազօյ*, հազալ >Ջթ., Հճ. *հազօլ*, վազել >Ջթ. *վազիլ*, Հճ. *վազել*, լիզել >Ջթ. *լիզիլ*, Հճ. *լիզել*, եզր >Ջթ. *իզիլ*, Հճ. *իզել*, գաւազան >Ջթ. *գնւվազօն* (վարդապետի), *գնւվօն* (հովվի), գազան >Ջթ. *գնազօն*, աւազակ >Հճ. *աւվազօզ*, բազմիլ >Հճ. *բնազմել*, գերեզման >Ջթ. *գիլիզմօն*, Հճ. *գէլէզմօն*, Այն. *գէզման*, գզել >Ջթ. *գիզիլ*, *գզիլ*, կազմել >Ջթ. *գազմիլ*, կկզել >Ջթ. *գրգզիլ*, *գազգալ*, հնազանդ >Ջթ. *հնազօնի՛*, յուզել >Ջթ. *ուզիլ*, Հճ. *ուզել*, մարզի (ծառը) >Ջթ. *մարզի*, ազատ >Ջթ., Հճ. *ազօդ*, խզտել «պատռել» >Ջթ. *խըզդիլ*:

Երբ բառամիջի *զ*-ն շնչեղ թրթռուն բաղաձայնի մոտ է, այդ շնչի ազդեցությամբ վերածվում է *ւ*-ի. այսպես են՝ անգամ >Ջթ. *անըսգօմ*, ազբն >Ջթ. *օսբ՛* (ուստայնանկի), որից ազբել >Ջթ. *ասբիլ* «ուստայնի ազբերը ձգել», ազգ >Ջթ. *օսգ՛* (զրական փոխառություն): Ծիշտ սրա հակառակն է տեղի ունեցել *մազտաքէ* «ծամոն» բառի մեջ, որ թեն ծագում է հունարեն մաստիչ բառից, ուր *զ*-ն համապատասխանում է հունարեն  $\sigma$  հնչյունին, բայց գտնվելով հաջորդ *դ*-ի մոտ (Ջթ. *մէզդէքի*, Հճ. *մնզդմքի՛*)՝ դարձել է *զ*:

Բառամիջի *զ*-ի անսովոր փոփոխություն է ներկայացնում *ազոխ* բառը, որ թեն դառնում է Հճ. *ազոխ*, Ջթ. *ազիխ*, ուր *զ*-ն անփոփոխ է մնում, բայց լինում է նաև Ջթ. *աձիխ*, ուր *զ*-ն անսովոր կերպով դարձել է *ձ*:

§149. Բառավերջում *զ*-ն մնում է անփոփոխ *զ*. եղած օրինակներն են՝ բոզ >Հճ. *բիզ*, Ջթ. *բիզ*, գազ (բույսը) >Ջթ. *գօզ*, գոուզ >Հճ. *գիուզ* «գոուզ», Ջթ. *գիտուզ խէդիր* «ազատքեղ», ընկույզ >Ջթ. *ինգէզ*, Հճ. *անգիզ*, թիզ >Հճ. *թիզ*, Ջթ. *թիզ*, թագ, թուզ >Ջթ., Հճ. *թուզ*, խոզ >Հճ. *խոզ*, Ջթ. *խիզ*, ողկույզ >Ջթ., Հճ. *գիզ*, կուզ «սապատող» >Ջթ. *գուզ*, հազ >Ջթ., Հճ. *հօզ*, մազ >Ջթ., Հճ. *մօզ*, մարուզ (պտուղը) >Ջթ. *մարուզ*, նազ >Ջթ., Հճ. *նօզ*, որիզ (բրինձ)

>Ջթ. *օրուզ*, Հճ. *արուզ*, Սվեդիա (Մուսա լեռ) *ըրրօզ*, պարտէզ >Ջթ. *բայդէզ* (վարունգի), պուուզ >Ջթ. *բլուզ* «տղա, երեխա», սէզ (խոտ) >Ջթ. *սեզ*, վիզ >Հճ. *վիզ*, Ջթ. *վիզ*, սնազ >Հճ. *թնօզ*:

Միայն *երագ* բառն է, որ դառնալով Հճ. *իյօզ*, Ջթ. *իյօզ*, *իյօձ*, ներկայացնում է *զ* > *գ*, բայց նաև *ձ* հնչյունափոխությունը (հմմտ. երագ > Պլ. *երաձ*):

թ

§150. Այս բաղաձայնը ամեն դիրքում էլ ընդհանրապես մնում է անփոփոխ. ինչպես՝

Բառասկզբում՝ թաթ >Ջթ., Հճ. *թօթ*, թաղել >Ջթ. *թաղիլ*, Հճ. *թաղել*, թաց >Ջթ., Հճ. *թօց*, թանձր >Ջթ. *թօնձոր*, Հճ. *թօր*, թարախ >Ջթ., Հճ. *թայօխ*, թռչիլ >Ջթ. *թրռչիլ*, Հճ. *թմրչել*, թուզ >Ջթ., Հճ. *թուզ*, թոռն >Ջթ. *թէժ*, Հճ. *թոր*, թուլանալ >Ջթ. *թօլնօլ*, թրիք >Ջթ. *թայաք*, Հճ. *թայիք* և այլն:

Երկու բառի մեջ նախաձայն *թ*-ն վերածվում է *դ*-ի: Առաջինն է *թագաւոր*: Այս բառը երկու իմաստ ունի. «1. թագավոր, արքա. 2. փեսա, նորափեսա». զանազանության համար առաջին իմաստով Ջեյթունի բարբառում ունենք *թնգնմիլիլ*, երկրորդ իմաստով՝ *թնքվիլիլ*: Իսկ Հանրնի բարբառում առաջին իմաստով ունենք *թաքավոր*, երկրորդ իմաստով՝ *դնգնիլ*:

Երկրորդն է *թրջել* «ջրով թացացնել», որ Ջեյթունի բարբառում ունի *թըջիլ* կամ *դըջիլ* ձևը, իսկ Հանրնի բարբառում՝ *դնջել*: Այս բառը, ինչպես հայտնի է, ձևով նման է *թռչել* «թռնել» բառին: Չանազանությունը *դջ-րջ* հնչյունախմբերի մեջ է: Թերևս զանազանությունն ավելի մեծացնելու համար է, որ ստեղծվել է \**դրջել* ձևը Կիլիկիայի բարբառում:

§151. Բառամիջում *թ*-ն նույնպես մնում է *թ*. ինչպես՝ աթոռ >Ջթ. *աթթօն*, Հճ. *աթոր*, անթել >Ջթ. *ինթել*, Հճ. *անթել*, թաթախել >Ջթ. *թաթխիլ*, Հճ. *թաթիլ*, թեթև >Ջթ. *թիթիվ*, Հճ. *թիթել*, թթու >Ջթ. *թօթու*, Հճ. *թնթու*, խայթել >Ջթ. *խէթիլ*, Հճ. *խէթել*, կաթիլ «կալլակ» >Ջթ. *գաթլլ*, *գաթլլե*, կաթիլ «կաթկթել» >Ջթ. *գաթլլ*, Հճ. *գաթել*, կթղայ >Ջթ. *գօթիօ*, Հճ. *գնթիօ*, մարուզ (պտուղը) >Ջթ. *մարուզ*, մորթել >Հճ. *միյթել*, յաղթել >Ջթ. *հախթիլ*, նօթի >Ջթ. *անըթիլ*, Հճ. *անութի*, շանթել >Հճ. *շանթել* «դևերի հարվածելը», փեթակ >Հճ. *փէթօզ*, փրթիլ >Հճ. *փնթիլ*, քերթել >Ջթ. *քիթիլ*, Հճ. *քիյթիլ* և այլն:

Այսպես նաև –ութիւն ածանցի մեջ. ինչպես՝ գոհութիւն >Ջթ. գոհութիւն, գորութիւն >Ջթ. գորութիւն, հիւանդութիւն >Ջթ. հիւանդութիւն և այլն:

§152. Բառամիջի թ–ն ունի նաև հետևյալ բացառություն կազմող հնչյունափոխությունները.

1) թ>g. այսպես ունենք միայն աղօթք >Ջթ. *աղտօք*, որ Ջթ. *աղտօթք* և Հճ. *աղօթք* ձևերի հետ գործածական է. ասվում է *աղտօք գիւժօլ* «յաղօթս կալ, աղօթել»:

2) թ>տ՝ միայն որ >շտ հնչյունախմբի մեջ և միայն երթալ > իշտօլ բաների մեջ՝ որ հատուկ է Հաճընի բարբառին (Ջեյթունի համապատասխան ձևն է *իյթօլ*): Ուրիշ դեպքեր էլ կան, երբ պատահում է որ հնչյունախումբը Ջեյթունի կամ Հաճընի բարբառում, բայց նման հնչյունափոխություն տեղի չի ունենում: Տայիս եմ այստեղ այդ բաների ցանկը.

արթուն	>Ջթ. <i>այդժն</i> ,	Հճ. <i>այդիւն</i>
թրթուր	>Ջթ. <i>թօյթույ</i> ,	Հճ. <i>թաւթույ</i>
խորթ	>Ջթ. <i>խէժոթ</i> ,	Հճ. <i>խոյդի՛</i>
խրթին	>Ջթ. <i>խլոթին</i> ,	Հճ. <i>խրթին</i>
մորթ	>Ջթ. <i>միյթի</i>	
մորթել	>Ջթ. <i>միյթել</i>	
փերթ	>Ջթ. <i>փեյթ</i>	
փրթիլ	>Ջթ. <i>փաւթել</i>	
քաղիրթ	>Ջթ. <i>քաղըյդի՛</i> ,	Հճ. <i>քաղեյթ</i>
քարաթոթոշ	>Ջթ. <i>քաւթէօշ</i> ,	Հճ. <i>քարթէշ</i>
քերթել	>Ջթ. <i>քիյթիլ</i> ,	Հճ. <i>քիյթել</i> :

3) թ>դ՝ միայն մի բանի մեջ, որ է՝ արթուն > Ջթ. *այդժն*, Հճ. *այդիւն*:

§153. Բառամիջի թ–ն գտնվելով երկու ձայնավորի միջև՝ արտաբերվում է իբր գույզ դ՛: Հաճընի բարբառին հատուկ մի երևույթ է սա, որի համար ունենք 3 օրինակ. այն է՝ կթել > *գաւդիլ*, ճայթիլ > *ջէդիլ* և վայթել > *վէդիլ*: Ջեյթունի բարբառում նույն երևույթը չկա, և այս բաներն ունեն Ջթ. *գիլթիլ*, *ջէթիլ* և *վէդիլ* ձևերը:

Բայց Հաճընի բարբառում էլ ամեն թ, որ գտնվում է երկու ձայնավորի միջև, չի դառնում միշտ *դի՛*: Այսպես՝ թ–ն մնում է աթոռ >Հճ. *աթոր*, եօթն >Հճ. *յօթը*, ութ >Հճ. *ութը*, նօթի >Հճ. *անութի*, փեթակ >Հճ. *փէթօգ*, թթու >Հճ. *թաւթու*, թեթև >Հճ. *թիթել*, և նույնիսկ կաթիլ «կայլակել» >Հճ. *գաթել* և խայթել >Հճ. *խէթել* բաների մեջ, որոնք ձևով բոլորովին նման են վերի երեք բաներին:

§154. *Վաթսուն* բառը դառնում է Ջթ. *վաթժօն*, *վաթճիւն*, Հճ. *վաճճիւն*, որոնց հետ հմմտ. յիսուն >Ջթ. *իսսօն*, Հճ. *իսուն*: – «Ութսուն» բառը ջնջված է և նրա փոխարեն գործ է ածվում թրք. *seksen* բառը՝ թե՛ Ջեյթունի և թե՛ Հաճընի բարբառում:

§155. Բառավերջում թ–ն մնում է անփոփոխ թ. ինչպես՝ արեթ >Ջթ. *արիթ*, Հճ. *արբիթ*, ամօթ >Հճ. *ամօթ*, անութ, անթ >Ջթ. *օնթ* «գիրկ», Հճ. *օնթ* «տրցակ, կապոց», արծաթ >Ջթ., Հճ. *այձօթ*, գազաթ >Ջթ. *գազօթ*, գալիթ >Ջթ., Հճ. *գալիթ*, գմբեթ >Հճ. *գլմբեթ*, երկաթ >Ջթ., Հճ. *իյգօթ*, եօթն >Ջթ. *յէօթը*, Հճ. *յօթը*, թաթ >Ջթ., Հճ. *թօթ*, թույթ >Ջթ., Հճ. *թույթ*, թուղթ >Ջթ. *թուխթ*, լաթ >Ջթ., Հճ. *լօթ*, խանութ >Ջթ. *խանութ*, խենթ >Ջթ. *խիւնթ*, ծղրիթ >Ջթ. *ձլլիլիթ*, կաթ «կաթիլ», Հճ. *գօթ*, կաթն >Ջթ., Հճ. *գօթ*, կոթ >Ջթ. *գիւթ*, Հճ. *գոթ*, ձեթ >Ջթ. *ձեթ*, ձիթ, ձիւթ >Ջթ. *ձիթ*, Հճ. *ձիթ*, ճկոյթ >Ջթ. *ջիգիթմօդ*, մախաթ >Ջթ., Հճ. *մախօթ*, մութ >Ջթ. *մունթ*, Հճ. *մութ*, շաքաթ >Ջթ. *շաքօթ*, Հճ. *շաքօթ*, ութ >Ջթ., Հճ. *ութը*, ուրբաթ >Ջթ., Հճ. *ույթօթ*, փերթ >Հճ. *փեյթ*, փոթ «ծալք» >Ջթ. *փիւթ*, Հճ. *փօթ*, քիթ >Ջթ., Հճ. *քիթ*:

Թ և դ՛ հնչյունների միջև տատանվում են՝ բոյթ (մատը) >Ջթ. *բիլթ*, բօդի՛, Հճ. *բիթմօդ*, խորթ >Ջթ. *խէժոթ*, Հճ. *խոյդի՛* քաղիրթ >Ջթ. *քաղըյդի՛*, Հճ. *քաղեյթ*: Իսկ մորթ բառն ստացել է Ջթ. *միյթի* (Երևան *մորթի*) ձևը:

Ժ

§156. Ամեն դիրքով էլ մնում է ժ. այսպես՝ Բառասկզբում՝ ժամ «եկեղեցի» >Ջթ., Հճ. *իժօմ*, ժամանակ >Ջթ., Հճ. *ժամանօգ*, ժանգ >Ջթ. *ժաւնգ*, *ժէնգ*, Հճ. *ժօնգ*, ժողովք >Ջթ. *ժէօղէօլք*:

Բառամիջում՝ բաժանել >Ջթ. *բէժնիլ*, Հճ. *բէժնել*, բաժին >Ջթ. *բէժիլ*, դժոխք >Ջթ. *դէժտօխք*, Հճ. *դիժխք*, դժուար >Ջթ. *դիժօյ*, խժոռիլ >Ջթ. *խլժռիլ*, վարժապետ >Ջթ. *վաժաբիդ*:

Բառավերջում՝ խեժ >Ջթ. *խեժ*, կարժ (թելի) >Ջթ. *գաժ*, շարժ «երկրա-  
շարժ» >Ջթ. *ժաժ*:

Մի քանի տեղ, բայց ոչ հնչյունաբանական պատճառներով, դառնում  
է ջ. այսպես են՝ ժանգո(ր)ոտ >Ջթ. *ջէնգոհոյ* (բայց նաև *ժէնգոհոյ*), ժանգո-  
տիլ >Ջթ. *ջանգոռոյի*, մծեխ >Ջթ. *մջոնիս*, պատիժ >Ջթ. *բառիջ*:

## Լ

§157. Բառասկզբում լ-ն սովորաբար պահպանվում է. ինչպես՝ լալ  
>Ջթ., Հճ. *լոլ*, լակել >Հճ. *լագել*, Ջթ. *լագիլ*, լալն >Ջթ., Հճ. *լալն*, լար >Ջթ.  
*լոր*, լեան >Ջթ. *լեռ*, Հճ. *լեռ*, լեզու >Ջթ. *լիզո*, Հճ. *լիզու*, լու >Ջթ. *լո*, Հճ. *լու*,  
լուսալ >Ջթ. *վոլոլ*, Հճ. *վալոլ*, լոյս >Ջթ. *լիս*, Հճ. *լուս*, լիս, լսել >Ջթ. *լիսիլ*, Հճ.  
*լալսել* և այլն:

Լնուլ >Ջթ. *լիլնցընի* «ավարտել», Հճ. *նրնուլ*:

§158. Բառամիջում նույնպես մնում է անփոփոխ լ. ինչպես՝ ալիւր >Ջթ.  
*էլէլ*, Հճ. *էլիլ*, ալևոր >Ջթ. *հալվիլ*, Հճ. *հալիվոյ*, բլուր >Ջթ. *բոլոլ*, բուր  
>Ջթ. *բիլիլ*, գլորել >Ջթ. *գըլըլիլ*, Հճ. *գալըլալ*, գլուխ >Ջթ. *գոլոխ*, Հճ.  
*գըլուխ*, դալար >Ջթ. *դալոլ*, թուլանալ >Ջթ. *թոլնոլ*, խլուրդ >Ջթ. *խոլոյրդ*,  
հեծկտալ >Ջթ. *հեծգոլոյրդ*, հայելի >Ջթ. *հիլլէ*, Հճ. *հէլլի*, մուրիլ >Ջթ.  
*մըլըլիլ*, շալակ >Ջթ., Հճ. *շալոգ*, քայլել >Ջթ. *քէլիլ*, Հճ. *քէլել*, փլշիլ >Ջթ.  
*փըլշիլ*, \*փլուցանել >Հճ. *փալցալնել*, սալոր >Ջթ. *սալիլ*, վայելել >Ջթ. *վէլիլ*  
«սագ գալ», հալել >Ջթ. *հալիլ*, Հճ. *հալլել* և այլն:

Իբրև բացառություն՝ գլտորել բայը *գըլոլըլիլ* ձևից բացի ունի *գընըլիլ*  
և *գունըլիլ* ձևերը:

§159. Բառավերջում մնում է դարձյալ անփոփոխ լ. ինչպես՝ աւել (գոյ.)  
>Ջթ. *ավիլ*, Հճ. *ավել*, առաւել >Ջթ. *իվիլ*, Հճ. *իվել*, գալլ >Ջթ. *գալլ*, Հճ. *գալ*,  
գէլ, թել >Ջթ. *թիլ*, Հճ. *թել*, թոյլ >Ջթ. *թըլ*, Հճ. *թուլ*, ուլ >Ջթ., Հճ. *ուլ*, սալ  
>Ջթ. *սալլ* «դարբնի սալ», սերկևիլ >Ջթ. *սիկիվիլ*, Հճ. *սիվուգալիլ*, խուլ  
>Ջթ. *խուլ*, ոջիլ >Ջթ. *իճէլ*, *իջէլ*, Հճ. *իջըլիլ*, շիլ >Ջթ., Հճ. *շիլ*, ծիլ >Ջթ. *ձալ*,  
Հճ. *ձիլ*, կալ (գոյ.) >Ջթ., Հճ. *գոլ*, տալ (գոյ.) >Ջթ., Հճ. *դոլ*, տարգալ >Ջթ.  
*դոգոլ*, Հճ. *դալգոլ* և այլն, հատկապես բայերի անորոշի վերջավորությունը՝  
ինչպես ասել >Ջթ. *ասիլ*, Հճ. *ասել*, ուտել >Ջթ. *ուռիլ*, Հճ. *ուռել* և այլն:

## Խ

§160. *խ* բաղաձայնը մնում է բառասկզբում անփոփոխ *խ*. ինչպես՝  
խաբել >Ջթ. *խափիլ*, Հճ. *խափել*, խածանել >Ջթ. *խագնիլ*, Հճ. *խագնել*,  
խակ >Ջթ., Հճ. *խոգ*, խաղ >Ջթ., Հճ. *խող*, խնդալ >Ջթ. *խոնդոլ*, Հճ. *խընդոլ*,  
խմոր >Ջթ. *խէօփիլ*, Հճ. *խըմոյ*, խնձոր >Ջթ. *խէօնձիլ*, Հճ. *խընձոյ*, խոգ  
>Ջթ. *խիւգ*, Հճ. *խոգ*, խոտ >Ջթ. *խիւր*, Հճ. *խոռ*, խօսիլ >Ջթ. *խուսալ*, Հճ.  
*խօսել* և այլն:

Միայն *խեճեպ* «կճեպ» բառն է, որ Ջթ. դառնում է *խէջիթ*, բայց Հճ.  
դառնալով *դաճեպի*, *խ* հնչյունը վերածել է *դ*-ի:

§161. Բառամիջում *խ*-ն նույնպես մնում է *խ*. ինչպես՝ ախոռ >Ջթ.  
*ախտոռ*, Հճ. *ախոր*, աշխարհ >Ջթ., Հճ. *աշխոյ*, բղիխիլ >Հճ. *բըլիլ*, երեխայ  
>Հճ. *էլէխօ*, երախտել >Ջթ. *իրիխտել* «աղաչել», թուխս >Հճ. *թուխս*, ծախել  
>Ջթ. *ձախիլ*, Հճ. *ձախել*, կախել >Ջթ. *գախիլ*, Հճ. *գախել*, կոխել >Ջթ.  
*գէխիլ*, Հճ. *գօխել*, մախար >Ջթ., Հճ. *մախօթ*, մոխիր >Ջթ. *մախըլ*, նէխիլ  
>Ջթ. *նէխիլ*, նշխարք >Ջթ., Հճ. *նէշխոյ*, փոխել >Ջթ. *փէխիլ*, Հճ. *փէխել*,  
փոխինդ >Ջթ. *փէխանդ*, Հճ. *փէխիճ* և այլն:

Հանրահ բարբառում բառամիջի *խ*-ն երկու դեպքում դարձել է *դ*, թեև  
Ջեյթունի բարբառում անփոփոխ է մնում: Այդ երկու բառերն են՝ թաթախել  
>Ջթ. *թաթիլ*, Հճ. *թաթել*, խրխնջալ >Ջթ. *խօրխոնջոլ*, Հճ. *խըրընջել*:

Մախր բառի դիմաց ունենք Ջթ. *ջօրըլ*, Հճ. *ջօրի*, *ջօրի*:

§162. Բառավերջում *խ*-ն մնում է դարձյալ *խ*. եղած օրինակներն են՝  
ագոխ >Ջթ. *ագիլ*, Հճ. *ագոխ*, անանուխ >Ջթ., Հճ. *անուխ*, գլուխ >Ջթ.  
*գոլոխ*, Հճ. *գըլուխ*, թարախ >Ջթ., Հճ. *թայոխ*, կանուխ >Ջթ., Հճ. *գանուխ*,  
մարախ >Ջթ. *մըրըլ*, մարխ >Ջթ. *մօխըլ*, Հճ. *մօխըլ*, մծեխ >Ջթ. *մջոնիս*,  
մուխ >Ջթ., Հճ. *մուխ*, ոխ >Ջթ. *էօխ*, ուրախ >Ջթ., Հճ. *ույոխ*, սանդուխ >Ջթ.  
*սանդոխ*, Հճ. *սանդուխ*, սոխ >Ջթ. *սիլ*, Հճ. *սոխ*, փոխ >Ջթ. *փիլ*, Հճ.  
*փոխ*:

Ածուխ բառի դիմաց Հճ. դնում է *անձող*, իսկ Ջթ. գործածում է  
«գործելի» ձևը:

## Մ

§163. Ամեն դիրքով էլ դառնում է թրթոուն *մ*: Այսպես՝  
Բառասկզբում՝ ծալել >Ջթ. *ձալլիլ*, Հճ. *ձալլել*, ծախել >Ջթ. *ձախիլ*, Հճ.  
*ձախել*, ծակ >Ջթ., Հճ. *ձոգ*, ծամել >Ջթ. *ձամիլ*, Հճ. *ձամել*, ծայր >Ջթ., Հճ.

ծայ, ծանր >Ջթ. ձօնրը, ձօնորը, Հճ. ձօր, ձօրը, ծառ >Ջթ. ձօռ, Հճ. ձօր, ծարաւ >Ջթ. ձտօրէօվ, Հճ. ձէյէվ, ծեփեւ >Ջթ. ձիփի, Հճ. ձիփեւ, ծիրտ >Ջթ. ձայր, Հճ. ձիդ, ծոս >Ջթ., Հճ. ձօս, ծոց >Ջթ. ձից, Հճ. ձոց, ծունգ >Ջթ., Հճ. ձունգ, ծոտ >Ջթ. ձոտ, Հճ. ձուր, ծրար >Ջթ. ձօյօյ, Հճ. ձիյօյ և այլն:

§164. Բառամիջում ծ-ն նույնպէս դառնում է ձ. ինչպէս՝ ածել >Ջթ. ածի, Հճ. ածել, ածու >Ջթ. ածուք, ածուխ >Հճ. աճճող, աճճեղ >Ջթ. աճճիղ, Հճ. աճճեղ, արածել >Ջթ. այճըլ, Հճ. այճել, արծաթ >Ջթ., Հճ. այճօթ, լծիլ >Ջթ. լիճիլ, խաւարծիլ >Հճ. խալիճիլ «խաղողի որթի ծիլ», ծեծել >Ջթ. ձիճիլ, Հճ. ձիճել, ծիծաղ >Ջթ. ձօձօղ, Հճ. ձիձօղ, կայծակն >Ջթ. գէձօգ, կեղծատր >Ջթ. գէղձալիւ, կծու >Ջթ. գօձու, Հճ. գաձու, կսկծալ >Ջթ. գըսգըձօյ, կրծել >Ջթ. գըլճիլ, Հճ. գալճել, պարծենալ >Ջթ., Հճ. բայճիճօյ, ցնծալ >Ջթ. ցօնձօլ «վճարել» և այլն:

§165. Կան բարբառներ, որոնց մեջ ծ-ն, գտնվելով բաղաձայնից առաջ, դառնում է գ. այսպէս է Պոլսի բարբառում: Կիլիկիայի բարբառում էլ կա այս երևույթը, բայց միայն ն ռնգայինից առաջ և այն էլ մասամբ: Այսպէս՝ ունենք խածանել >Ջթ. խաճնիլ, խազնիլ, Հճ. խազնել, հեծանել >Ջթ. հէճնօլ, Հճ. հիճնել, հիզնել, հիզնօլ, օծանել >Ջթ. ուզնել «քել»: Այս երեքից դուրս ունենք ծնծղայ >Ջթ. ձիճճիւք, Հճ. ձըճճիւք և քծնիլ >Ջթ. քիճնալ, որոնց մեջ դարձյալ ծ-ն գտնվում է ռնգայինից առաջ, բայց չի դարձել գ: Ուրիշ բաղաձայնի մոտ են ծածկել >Ջթ. ձաճգիլ, Հճ. ձաճգել, խծակ >Ջթ. խիճքիլ, հեծկտալ >Ջթ. հէճօլօլ, որոնց մեջ նույնպէս փոփոխություն տեղի չի ունեցել:

Հետաքրքրական են ծիծաղել և ծոծրակ բառերը: Առաջինն ուրիշ բարբառներում միջին ձայնավորը կորցնելով՝ ենթարկվել է ծ>զ հնչյունափոխության (օրինակ՝ Մրդ. Ն.Բ. Սլմ. ծղզալ <\* ծղղալ), իսկ այստեղ, ձայնավորը պահելով, դարձել է Ջթ. ձձաղըլ, Հճ. ձիձաղել: Սակայն կա նաև Ջթ. ձղաղըլ, որի մեջ ծ-ն դարձել է ղ՝ նմանությամբ հաջորդ ղ-ի:

Երկրորդը դարձել է Ջթ. ձիճիյօգ, իսկ Հճ. արագաբանության օրենքով, առաջին վանկը կորցնելով, եղել է ձիթօգ:

Կծծի >Հճ. գաճճի բառի մեջ զույգ ծ-երը մնում են անփոփոխ:

Ձուածեղ բառը դառնում է Հճ. ձիլազեղ:

Հիշատակենք նաև աճէծք >Ջթ., Հճ. աճէցք և կուրծք >Ջթ., Հճ. գույճք:

§166. Բառավերջում ծ-ն դարձյալ դառնում է թրթոուն ձ. այսպէս՝ այծ >Ջթ. աճ, Հճ. աճ, էճ, անիծ >Ջթ. աճըճ, Հճ. աճիճ, Աստուած >Ջթ. սարծճ,

Հճ. սալօճ, լուծ >Ջթ. լօճք, խալիծ >Ջթ. խալիճ, ծիծ >Ջթ. ձաճ, ձիճ, Հճ. ձիճ, կայծ >Ջթ. գլաճ «կայծ», Հճ. գաճ, գօճ «վառված ածուխ», կոծ >Ջթ. գիճ, կոծիծ >Ջթ., Հճ. գիճիճ, կսկիծ >Ջթ. գալսգիճ, մեծ >Ջթ. միճն, Հճ. մեճ, ցած >Ջթ., Հճ. ցօճ:

#### Կ

§167. Կ բաղաձայնը բառակազմում դառնում է թրթոուն գ. ինչպէս՝ կաթն >Ջթ., Հճ. գօթ, կախել >Ջթ. գախիլ, Հճ. գախել, կակուղ >Ջթ., Հճ. գագուղ, կաշի >Ջթ., Հճ. գէշի, կարկուտ >Ջթ., Հճ. գայգուղ, կարմիր >Ջթ. գայմիլ, Հճ. գայմիլ, կիրակէ >Ջթ. գիյագի, Հճ. գիյագի, կով >Ջթ. գէօվ, Հճ. գէվ, կոի >Ջթ. գլոսալ, Հճ. գալրիվ և այլն:

§168. Բառամիջում կ-ն նույնպէս դառնում է թրթոուն գ. ինչպէս՝ ա-կանջ >Ջթ. աճգէջ, Հճ. աճգալ, անկանիլ >Ջթ. ղնգնիլ, Հճ. ղնգնել, բարեկենդան >Ջթ., Հճ. բայգիճնօք, բեկնիլ >Ջթ. բիբգիճել, երեկոյ >Ջթ. իյգօն, Հճ. իյգուճ, երկկանն >Ջթ. իյգօս, երկայն >Ջթ., Հճ. իյգալ, երկու >Ջթ. իյգու, Հճ. էյգու, ընկոյգ >Ջթ. ինգէգ, Հճ. աճգիգ, ծածկել >Ջթ. ձաճգիլ, Հճ. ձաճգել, ծաղկիլ >Ջթ. ձաղգըլ, Հճ. ձաղգել, կիրակէ >Ջթ. գիյագի, Հճ. գիյագի, կոճակել >Ջթ. գուջգիլ, սատակիլ >Ջթ. սաղգիլ, Հճ. սաղգիլ, տապակել >Ջթ. դարգիլ, Հճ. դարգել և այլն:

Թրթոուն գ լսվում է նույնիսկ խուլ բաղաձայնների մոտ. ինչպէս՝ աշակերտ >Ջթ. էշգիդ, Հճ. էշգէդ, աղջիկ >Ջթ. աշգիճ, Հճ. աշգիճ, ոսկի >Ջթ. իսգի, Հճ. օսգի, ոսկր >Ջթ. իսգիլ, Հճ. ուսգոյ, սկեսուր >Ջթ. օսգօսույ, վախկոտ >Ջթ. վալսգիդ, եպիսկոպոս >Ջթ. էքիսգիքիս, երեցկին >Ջթ. իրիցգիճ, կասկարայ >Ջթ. գէսգէրալ, կոշկոտ >Ջթ. գօշգօյ «ցեխի կոշտ», կսկիծ >Հճ. գալսգիճ, փակչիլ >Ջթ. փագչըլ «կաշի», կօշկակար >Ջթ. գուշգօյ և այլն:

§169. Բառավերջում կ-ն նույնպէս դառնում է թրթոուն գ. ինչպէս՝ արմուկն >Ջթ. արմունգ, այմուգ, բակ >Ջթ. բօգ, բամբակ >Ջթ., Հճ. բամբօգ, բարակ >Ջթ., Հճ. բայօգ, բողլ >Ջթ. բիղդ, Հճ. բիղդ, գրակ >Ջթ. գօղօգ, գիրկ >Հճ. գիյգ, դանակ >Ջթ., Հճ. դիւնօգ, դատարկ >Ջթ. դիւղօգ «եղեգ», երէկ >Ջթ., Հճ. իյէգ, ցերեկ >Ջթ. ցիյիգ, Հճ. ցիյէգ, խակ >Ջթ., Հճ. խօգ, ծակ >Ջթ., Հճ. ձօգ, կնիկ >Ջթ. գընազ, Հճ. գալնիգ, կորեկ >Ջթ. գիյիգ, Հճ.

գիյէզ, կոնակ >Ջթ. գօռնօզ, Հճ. գաւրնօզ, ձուկն >Ջթ. ձօզ, Հճ. ձուգ, նանկ >Ջթ., Հճ. ջօնզ, մուկն >Ջթ., Հճ. մուգ և այլն:

§170. Մասնավոր դեպքեր.

Կ-ն դառնում է գ' հետևյալ բառերի մեջ. եկեղեցի >Ջթ. գ'եղիցէ, կկու >Ջթ. կուգում, գուգում, Հճ. գուգուգ, կարդալ >Հճ. գայրոյ (բայց Ջթ. գայրոյ):

Կ-ն դառնում է ք հետևյալ բառերի մեջ.

- կրակ >Ջթ. գօյօք (թեև Հճ. գայօզ)
- կօշիկ >Ջթ. գուշիք (բայց նաև գուշիզ, ինչպես է Հճ.):
- նախարակ >Ջթ. ջխոււք
- շապիկ >Ջթ. շաքքք, Հճ. շաքիք (ազդեցութեամբ վարտիք բառի)
- տակ >Ջթ. դօք (թեև Հճ. դօզ), իսկ «նակնդեղ» իմաստով մնում է Ջթ. դօզ
- վիճակ (Համբարձման տոնը) >Ջթ. վոճորք (բոլորովին կերպարանափոխված ձև)
- բոկ, բոկիկ >Ջթ. բիբէզ, Հճ. բիբիզ բառի մեջ միջին կ-ն դարձել է բ' նախաձայնի նմանությամբ:

Կճեպ «կեղև» բառի մասին տե՛ս §160:

Հ

§171. Բառասկզբում հ-ն ընդհանրապես մնում է հ. բազմաթիվ օրինակներից հիշեցնք մի քանիսը. ինչպես՝ հայիլ «նայել» >Ջթ. հէյիլ, Հճ. հէյեյել, հայելի >Ջթ. հիլլէ, Հճ. հէյլի, հարիր >Ջթ., Հճ. հէյիլ, հազար >Ջթ., Հճ. հազօյ, հազալ >Ջթ., Հճ. հազօյ, համ >Ջթ., Հճ. հօս, համար «վասն» >Ջթ. հասօյ, Հճ. հասօ, հարսանիք >Ջթ. հայսնըք, Հճ. հաշնիք, հաց >Ջթ., Հճ. հօց և այլն:

§172. Միավանկ բառերի մեջ, երբ նախաձայն հ-ն գտնվում է *n* ձայնավորից առաջ, վերածվում է ֆ-ի. այսպես են՝ հոր > ֆոր, հոտ > ֆոր, հող > ֆող: Այս երևույթը հատուկ է միայն Հաճընիս և չկա Ջեյթունում: Սույն երեք բառերն էլ պատկանում են Հաճընիս, որոնց համապատասխաններն են՝ Ջթ. հիլ, հիլդ, հիլդ: Հաճընն էլ այս երեքից դուրս ուրիշ օրինակ չունի: Միավանկ բառեր են նաև հոզ, որ գոյություն չունի Հաճընում և հոլ, որ դառնում է Հճ. հէլ, Ջթ. հէօլ: Գիտենք, որ հ>ֆ հնչյունափոխությունը պայ-

մանավորված է նախ միավանկ լինելով և երկրորդ *n* ձայնավորով: Ըստ այսմ՝ թեև հող, հոտ տալիս են ֆող, ֆող (իբրև միավանկ), բայց նրանց ածանցված ձևերը՝ հողվեղի «գերեզման, հողվորդի», հիլդ «հոտիլ», հէղվըղոլ «հոտոտել» (Ջթ. հօղվօղօլ) ունեն հ նախաձայնը (իբրև բազմավանկ): Հայտնի չէ, սակայն, թե *n* ձայնավորի պայմանը միայն գրաբարի՞ համար է, թե՞ նաև բարբառի համար. այսինքն՝ ամեն միավանկ բառ, որ գրաբարում սկսվում է հ-՝ դառնում է այստեղ ֆո՞ (ուր *n* ձայնավորը անհրաժեշտ է), թե՞ կարող է նաև *n* դառնալ մի ուրիշ ձայնավորի, և հ-ն դարձյալ կվերածվի ֆ-ի: Դժբախտաբար առանց *n* ձայնավորի մենք ունենք միայն մի բառ, այն է՝ հոլ > Հճ. հէլ բառը, ուր *n*-ի դիմաց գտնում ենք է (և ոչ օ): Բայց այստեղ էլ բառավերջում ունենք վ, որ կարող է արգելիչ պատճառ հանդիսանալ. այնպես որ մենք չգիտենք, թե հոլ բառի մեջ հ-ն չի դարձել ֆ՝ հաջորդ ձայնավորի պատճառով, թե՞ վ բաղաձայնի տարմանությամբ:

Միևնույն պատճառաբանությամբ չգիտենք նույնպես, թե Ջեյթունի բարբառում հոր, հոտ, հոլ, հող, նաև հոզ բառերը եթե դառնում են հիլ, հիլդ, հէօլ, հիլդ և հիլք, որոնց մեջ հ-ն չի դառնում ֆ հաջորդ իւ, էօ ձայնավորի՞ (ոչ թե ո>օ) պատճառով, թե՞ առհասարակ Ջեյթունը չգիտի հ>ֆ հնչյունափոխությունը:

Մի դեպք միայն կա, երբ Ջեյթունի բարբառը նախաձայն հ-ն դարձնում է խ. այդ է հեռի >Ջթ. խօռու, որի դիմաց Հճ. ունի անփոփոխ՝ հէրու: Բայց Ջթ. հող բառը դառնում է թե՛ հիլդ և թե՛ խիլդ:

§173. Բառամիջում հ-ն դարձյալ մնում է հ. ինչպես՝ ահա >Հճ. ահա, գոհութիւն >Ջթ. գօհօթիւն, գուհութիւն, նահատակ >Ջթ. նահադօզ, շնորհաւոր >Ջթ. իշնաւորիւ, Հճ. շնօյհաւոր, պահել >Ջթ. բէհիլ, Հճ. բէհել, պատուհան >Ջթ. բաւիհիւն, Հճ. (շրջմամբ) բահադէն, ջուլհակ >Ջթ. ճհալօզ, Հճ. ջուլհօզ, ուհան >Ջթ. ըրահօն, քահանայ >Ջթ. քահաննօ:

Օրինել բառը պահպանված է Ջեյթունի բարբառում երկու ձևով՝ ոյհհիլ կամ ուրհհիլ և ուխհիլ. առաջինի մեջ հ-ն մնում է, երկրորդի մեջ վերածվում է խ-ի:

Քամահել «արհամարհել» բառի դիմաց Հճ. ունի քամայէլ «չարախոսել», որ կարելի է բացատրել երկու ձևով. կամ հ-ն դարձած յ, և կամ ավելի լավ՝ քամահրել ձևից, ուր հ-ն ջնջվել է և ր-ն դարձել է ըստ օրինի յ (իբր \*քամարել):

Գ-ի կամ գիհի «արտըն, juniperus» բառի դիմաց Ջեյթունի բարբառն ունի գէ, որ կարելի է մեկնել երկու ձևով. նախ՝ պարզապես գի ձևով (ինչպես

ունենք Բիսկյանի բարբառով *գի* «նոճի», երկրորդ՝ *գիհի* ձևով (ինչպես ունենք խոշ. *գիհի* «արտըն»), որի մեջ *հ*-ն ջնջվել է, երկու *ի* միացել են և վերածվել է-ի:

§174. Բառավերջում *հ*-ն մնում է *հ*. այսպես են ազան >Ձթ. *ագօհ*, Հճ. *ագգօհ*, ահ >Ձթ., Հճ. *օհ*, դահ >Ձթ. *դօհ*, դեհ «կողմ» >Ձթ. *դիլհ*, մահ >Հճ. *մօհ*, շահ >Ձթ., Հճ. *շօհ*:

Բառավերջում *հ* հնչյունը՝ *ր* բաղաձայնից հետո կամ նաև հաջորդ *ք*-ի մոտ, երբեմն մնում է, երբեմն՝ ջնջվում: Եղած օրինակները հետևյալներ են.

աշխարհ	>Ձթ. <i>աշխօրք</i> , <i>աշխօյ</i> ,	Հճ. <i>աշխօյ</i>
խոնարհ	>Ձթ. <i>խոնոյհ</i>	
ճանապարհ	>Ձթ. <i>ջամփօնք</i> ,	Հճ. <i>ջամփօք</i>
շնորհք	>Ձթ. <i>շէօնիւք</i> ,	Հճ. <i>շւնոյք</i>
պահք	>Ձթ., Հճ. <i>քօք</i> :	

Իսկ ջահ բառի դիմաց Ձթ. *ջօհյը* կամ *ջօհրը*, որ ենթադրում է հին \**ջարհ* ձևը:

Առանձնապես հետաքրքրական է սրահ >Ձթ. *սօյօֆ* կամ *սօրօֆ*, ուր *հ*-ն դարձել է *ֆ*:

## Ձ

§175. Բառասկզբում *ժ* բաղաձայնը դառնում է *ժ* (Ջեյթունի Յաղության թաղում) կամ *ծ* (Ջեյթունի Թորվայան թաղում), իսկ Հաճընում՝ *ձ*: Օրինակ՝ ձագ >Ձթ. *ձոգ*, *ծօգ*, Հճ. *ձօգ*, ձայն >Ձթ. *ձւն*, *ծէն*, Հճ. *ձւն*, ձեռք >Ձթ. *ձւտք*, *ծւտք*, Հճ. *ձւտք*, ձև >Ձթ. *ձիւ*, *ծիւ*, ձէթ >Ձթ. *ձէթ*, *ծէթ*, ձի >Ձթ. *ձի*, *ծի*, Հճ. *ձի*, ձգել >Ձթ. *ձգիլ*, *ծգիլ*, Հճ. *ձւգգիլ*, ձիթ >Ձթ. *ձիթ*, *ծիթ*, Հճ. *ձիթ*, ձիւն >Ձթ. *ձիւն*, *ծիւն*, Հճ. *ձիւն*, ձմեռ >Ձթ. *ձիւտ*, *ծիւտ*, Հճ. *ձիւտ*, ձող >Ձթ. *ձիւղ*, *ծիւղ*, Հճ. *ձիւղ* «գերան», ձոր >Ձթ. *ձիւր*, *ծիւր*, ձուկն >Ձթ. *ձօգ*, *ծօգ*. Հճ. *ձուգ* և այլն:

§176. Բառամիջում շունենք անկախ օրինակ. եղած օրինակներում *ձ*-ն հաջորդում է *ն* և *ր* բաղաձայններին: Առաջին դեպքում տալիս է թրթռուն *ձ*. ինչպես՝ աղանձել >Ձթ. *աղընձիլ*, գանձանակ >Ձթ., Հճ. *գանձանօգ*, թնձկալ >Ձթ. *թնձօյ*, խնձոր >Ձթ. *խէօնձիւ*, Հճ. *խընձոյ*, հնձան >Ձթ. *օնձօն*, պապանձիլ >Ձթ. *բաբանձիլ*, Հճ. *բաբւնձիլ*:

Այս պարագային, եթե *նձ* հնչյունախումբը գտնվում է հաջորդական *ր*-ից առաջ, Հաճընի բարբառում ամբողջապես վերանում է և մնում է միայն

*ր*. իսկ Ջեյթունի բարբառում *նձ*-ն մնում է: Այսպես են թանձր >Ձթ. *թօնձրը*, *թօնձորը*, Հճ. *թօր*, բարձր >բանձր >Ձթ. *թօնձիլը*, *թօնձողը*, Հճ. *թօրի*, անձրև >Ձթ. *անձիւլ*, Հճ. *արեւլ* (առաջինի մեջ *ր*-ն վերածվելով ըստ օրինի *յ*-ի, հաջորդ *ի* ձայնավորի մեջ հավելել է, իսկ երկրորդի մեջ զարմանալի կերպով «անձրև»-ը դարձել է «արև», բայց այս երկուսը բնավ չեն շփոթվում իրար հետ, որովհետև *արև* բառը դարձել է Հճ. *այեւլ*, որով *արև* և *անձրև* բառերը դառնում են *այեւլ* և *արեւլ*: Ի՛նչ գեղեցիկ օրինակ հնչյունական օրենքների կուրություն):

Երկրորդ դեպքում, այսինքն՝ *ր* բաղաձայնից հետո՝ *ձ*-ն դառնում է *ձ'* կամ *ց*. այսպես են՝ արձակել >Ձթ. *այձգիլ*, գօտելարձակ >Ձթ. *գոտուլայձօգ* «թափթփած, շխտի», դերձան >Ձթ., Հճ. *դիձօն*, փորձանք >Ձթ. *փույցօնք*, Հճ. *փօյցօնք*:

§177. Բառավերջում ունենք միայն մի անկախ օրինակ, ուր գտնում ենք *ձ* > *ձ'* կամ *ծ*, ինչպես բառասկզբում, այն է՝ *օձ* >Ձթ. *էօձ*, *էօծ*, Հճ. *էձ*: Մյուս դեպքերում գտնվում է *ն*, *ր*, *ղ* բաղաձայններից հետո: Առաջին պարագային տալիս է *ձ*. ինչպես՝ աղանձ >Հճ. *աղոնձ*, պղինձ >Հճ. *բւղիձ*, սինձ >Ձթ. *սընձ*, տանձ >Ձթ., Հճ. *ղօնձ*: Երկրորդ պարագային տալիս է *ձ'* կամ *ց*. ինչպես՝ բարձ >Ձթ., Հճ. *թօյձ*, խորձն >Հճ. *խուրց*, քուրձ >Ձթ. *քույց* «պարկ»: Երրորդ պարագային տալիս է *ձ'* այսպես են՝ գուղձն >Ձթ. *գօխձ*, դեղձ >Ձթ. *դէղձ*, Հճ. *դեխձ*, դաղձն >Ձթ. *դէղձընթ*, *դէղձանագ*:

## Ղ

§178. Բառասկզբում պատահում է միայն մի քանի հատուկ անունների մեջ. ինչպես՝ Ղուկաս, Ղևոնդ, Ղունկիանոս, Ղերութնա, Ղովտ և այլն:

§179. Բառամիջում ձայնավորից և թրթռուն բաղաձայնից առաջ մնում է միշտ *ղ*. ինչպես՝ աղալ >Ձթ., Հճ. *աղօյ*, աղաղակ >Ձթ. *աղաղօգ*, ժողով >Ձթ. *ժէօղէօվք*, թողով >Ձթ. *թողուլ*, Հճ. *թօղնել*, թաղել >Ձթ. *թաղիլ*, Հճ. *թաղել*, լեղակ >Ձթ. *լէղօգ*, լեղի >Ձթ. *լէղի*, *լէղա*, Հճ. *լէղի*, կեղև >Ձթ. *գիղիւ*, աղանի >Ձթ. *աղվընթ*, Հճ. *աղվւնի*, անկողին >Ձթ. *ուղունգան* «վերմակ», դեղին >Ձթ. *դէղան*, Հճ. *դէղին*, եկեղեցի >Ձթ. *գէղիցէ*, եղայ >Ձթ., Հճ. *եղօ*, եղիճ >Ձթ. *աղեք*, Հճ. *եղիք*, եղունգն >Ձթ. *օղունգ*, Հճ. *ւղունգ*, ծնծղայ >Ձթ. *ձիւնձիւք*, Հճ. *ձընձիւք*, ողարկել >Հճ. *ւղայգել*, ողեղ >Ձթ. *եղեղ*, ողորմիլ >Ձթ. *ուղույմիլ*, ուղտ >Ձթ. *ուղո*, պղտոր >Ձթ. *բէօղիւյ*, Հճ.



բառերը, պղինձ >Ջթ. բրդընձ, չճ. բառիճձ «մեծ կաթաս», ուղղորդ >Ջթ. ի-  
ղիպի, չճ. արդյո՞ր «շիտակ, ճշմարիտ», ստեպղին >Ջթ. ըսքըղընձ «գազար»,  
տուղտ >Ջթ. դուղղ, կողպել >Ջթ. գուղբի, չճ. գողբել, կճղակ >Ջթ. գօջոօգ,  
ճճնղուկ >Ջթ. ջէճջոօգ, կաղասպար >Ջթ., չճ. գաղբոյ, կաղնի >Ջթ. գաղնի,  
չճ. գաղընի, բողկ >Ջթ. բիղգ, չճ. բիղգ, աղուէս >Ջթ. աղվիս, աղտ >Ջթ.,  
չճ. օղղ, խեղիլ >Ջթ. խեղվալ «տնագ տալ, ծաղրել», ծաղկիլ >Ջթ. ծաղգըլ,  
չճ. ծաղգել, հողվորիի >ճճ. հողվէրի «գերեզման», խղճմտանք >Ջթ.  
խղղջմրղոնք, չճ. խաղղջմրղոնք և այլն:

§180. Բառամիջում երբ *ղ*-ն գտնվում է խուլ կամ թավ բաղաձայնից  
առաջ, ինքն էլ վերածվում է խուլ *խ*-ի. ինչպես՝ աղբ >Ջթ., չճ. օխբ՛,  
աղբիր >Ջթ. ախբի՛ր, չճ. ախբի՛ր, աղքատ >Ջթ., չճ. ախքօղ, գուղճն >Ջթ.  
գօխճ՛, եղբայր >Ջթ. էխբի՛ւր, չճ. ախբիւյ, եղջիր >Ջթ. ախջէ՛յ «կտտոշ», չճ.  
էխջիյ «պտուղը», թուղթ >Ջթ. թուխթ, խեղդել >Ջթ. խըխդիլ, չճ. խախդել,  
ճեղք >Ջթ., չճ. ջեխք, մեղք >Ջթ. մէխք, չճ. մեխք, յաղթել >Ջթ. հախթիլ,  
շողգամ >Ջթ. շոխգօմ, ողբ >ճճ. վոխբ՛, քաղցր >Ջթ. քօխցրը, չճ. քոխց,  
քօցիւ:

Վերահիշյալ օրինակներից երևում է, որ շնչեղ թրթռուն կոչված բաղա-  
ձայններն էլ խուլների հաշվում են: Ուստի այն մի քանի օրինակներում, ուր  
շնչեղ թրթռուն բաղաձայնների մոտ գտնում ենք *ղ* հնչյունը, պետք է կար-  
դալ *խ*. այսպես են՝ դաղճն >Ջթ. դէղճնազ, դեղճ >Ջթ. դէղճ՛ (չճ. ունի ար-  
դեն դեխճ՛), շեղք >Ջթ. շեղք՛ (որի դիմաց չճ. ունի խշքիզ, ինչ որ շրջված  
ձևն է շխբիկ փաղաքշականի):

§181. Ուշադրության արժանի են գղթօր, ծղրիթ և կթղայ բառերը:

Առաջինը տատանվում է գղթօր և գխտոր գրչությունների միջև. և  
որովհետև բառի ծագումը հայտնի չէ, ուստի հայտնի չէ նաև ճիշտ  
գրչությունը: Ջթ. ունի գէօխղիկ ձևը, որ հիմնվում է գխտոր գրչության  
վրա:

Երկրորդը՝ թեև հայտնի է միայն ծղրիթ գրչությամբ, բայց բարբառնե-  
րում կա նաև *խ* ձևով. այսպես՝ Ջթ. ձըխըթ հիմնվում է ծրխիթ ձևի վրա:  
Երրորդն ունի կթղայ կամ կթխայ գրչությունները, բայց սրանցից ուղղա-  
գույնն է համարվում առաջինը. Ջթ. գօթղօ և չճ. գաթղօ հիմնվում են  
կթղայ ձևի վրա, որից երևում է, որ թեև *ղ*-ն գտնվում է խուլ բաղաձայնից  
հետո և ձայնավորից առաջ, բայց այդ խուլ բաղաձայնը չի ազդել *ղ*-ի վրա:

§182. Բառամիջում գտնվող *ղ* բաղաձայնի հնչյունափոխությունները  
վերջացնելու համար մնում է խոսել նաև բղխիլ, խաղող և մղեղ բառերի  
մասին:

Սրանցից առաջինը Հանրնի բարբառում ունի բղխօլ ձևը, որից երևում  
է, որ *ղխ*-ն վերածվել է *խ*-ի:

Երկրորդը (խաղող) Ջեյթունի բարբառում ունի խաղիղ ձևը, որի մեջ  
երկու *ղ*-երը անփոփոխ մնում են: Բայց սրա հետ միասին կա նաև խաղ  
ձևը. ուր *-ող* վերջավորությունը բոլորովին վերացել է արագաբանության  
օրենքով: Հանրնի բարբառում խաղողը դարձել է խավող, ուր *ղ*-ն վերած-  
վել է *վ*-ի: Սրա մասին ավելի մանրամասն տե՛ս «Քննություն Պոլսահայ  
բարբառի», §§151 և 172:

Երրորդը (մղեղ) Հանրնի բարբառում պահպանված է մաղող ձևով,  
ուր երկու *ղ*-երը մնում են անփոփոխ: Բայց Ջեյթունի բարբառում ունենք  
այս բառից մրեղիլ ? բայը, ուր երկու *ղ*-երից առաջինը տարմանության  
օրենքով վերածվել է *ր*-ի:

Բառավերջում *ղ*-ն դառնում է միշտ *ղ*. ինչպես՝ աղ >Ջթ., չճ. օղ, ան-  
թեղ >Ջթ. ինթեղ, չճ. անթեղ, անծեղ >Ջթ. անճիղ, չճ. անճեղ, ասեղն  
>Ջթ., չճ. ասեղ, բաղեղ >Ջթ. բաղեղ, աղէօղ, աղէղ, գիղ >Ջթ., չճ. գեղ,  
գող >Ջթ. գիղ, չճ. գեղ, դագաղ >ճճ. դագգող, դանդաղ >ճճ. դանդող, դեղ  
>Ջթ. դեղ «վառօղ», չճ. «ճար, դարման», դող >Ջթ. դիղ, չճ. դիղ, թաղ >Ջթ.  
թօղ «թաղամաս», իղ >Ջթ. էղ, չճ. յէղ, խաղ >Ջթ., չճ. խօղ, խուղ, հուղ  
«խրճիթ» >ճճ. խուղ, Ջթ. հուղ, ծիծաղ >Ջթ. ձօձող, չճ. ձիձօղ, կակուղ >Ջթ.,  
չճ. գագուղ, հող >Ջթ. հիղ, չճ. ֆող, ձող >Ջթ. ձիղ, չճ. ճող «գերան»,  
ձուածեղ >ճճ. ձվագեղ, մանգաղ >Ջթ. մանգօղ, չճ. մանգօղ, մաղ >Ջթ., չճ.  
մօղ, մատաղ >Ջթ., չճ. մաղօղ, մղեղ >ճճ. մաղող, օղ >Ջթ. էօղ, չճ. էղ.  
այսպես նաև խաղող >ճճ. խավող, Ջթ. խաղիղ կամ կրճաղ՝ խաղ:

Բառավերջում *ղ*-ն դարձել է *խ*՝ միայն առաստաղ >Ջթ. այըստօխ և  
աստղ >ճճ. օսթխ, օսխ (սակայն Ջթ. օսղ) բառերի մեջ:

## Ծ

§184. Բառասկզբում դառնում է թրթռուն ջ. ինչպես՝ ճակատ >Ջթ., չճ.  
ջագօղ, ճայթիլ >Ջթ. ջէթիլ, չճ. ջէղիել, ճանաչել >Ջթ. ջէնչօլ, ճանկ >Ջթ.,  
չճ. ջօնգ, ճերմակ >Ջթ. ջիմօգ, ճիղ >ճճ. ջեղ, ճկույթ >Ջթ. ջիգիթմօղ և  
այլն:

§185. Բառամիջում դարձյալ դառնում է թրթռուն ջ. ինչպես՝ անուկ >Ջթ. էջուգ, անուել >Ջթ. էջրոհի, Հճ. էջերել, խեճեպ >Ջթ. խեջիթ, Հճ. դիւքեպի, խղճմտանք >Ջթ. խրղջմրղոճք, Հճ. խւիղջմրղոճք, կճել >Ջթ. գջի, կճղակ >Ջթ. գոջղոգ, կոճակ >Ջթ. գուջոգ, կոճակել >Ջթ. գուջոգի, ճեճճոտ >Ջթ. ջեճճիւղ, ճճի >Ջթ., Հճ. ջիջի, ճճճղուկ >Ջթ. ջեճճիւղ, պճեղն >Ջթ. քիջեղ, Հճ. քւիջեղ «կճղակ», վախճանիլ >Ջթ. վախջանըլ, տկճոր >Ջթ. դեճոջիւլ, Հճ. դազոյ, փիճի >Ջթ., Հճ. փիջի և այլն:

Ուրիշ բարբառներում ճ-ն բաղաձայնից առաջ դառնում է ժ. օրինակ՝ Պլ. կոճկել > գոճկել, խղճմտանք > խրճմրղանք: Կիլիկիայի բարբառում նման երևույթ չկա, և միակ բառը, ուր ճ-ն գտնվում է բաղաձայնից առաջ (կոճակել > կոճկել), պահում է այստեղ ճ>ջ ձևը և լինում է գուջոգի:

§186. Բառավերջում ճ-ն դառնում է նույնպես թրթռուն ջ. ինչպես՝ արճիճ >Ջթ. էոջիջ, եղիճ >Ջթ. աղիջ, Հճ. էղիջ, կարճ >Ջթ. գիւյջ, կտրիճ >Ջթ. գիղոսաջ, ճանճ >Ջթ., Հճ. ջւիւջ և այլն:

## Մ

§187. Բառասկզբում մնում է միշտ մ. ինչպես՝ մազ >Ջթ., Հճ. մոզ, մախար >Ջթ., Հճ. մախօթ, մաճուն >Ջթ., Հճ. մաճուն, մայր >Ջթ. մւյ, Հճ. մայ, մանր >Ջթ. մոնրը, մատանի >Ջթ. մադնի, Հճ. մաննի, մեծ >Ջթ. միճճ, Հճ. մեճ, մեղու >Ջթ. մէղու, Հճ. մւիղու, մերկ >Ջթ. միլգիգ, Հճ. մեյգ, մեք >Ջթ. միճք, Հճ. մեճք, միս >Ջթ. միս, Հճ. միս, մուկն >Ջթ., Հճ. մուգ, մտանել >Ջթ. մոնուլ, Հճ. մւիւնել, մսուր >Ջթ. մոսուլ, մօրուք >Ջթ., Հճ. մուլուք և այլն:

Իբրև բացառություն՝ միայն մէտ «կշեռքի սլաքը» բառն է, որ նմանությամբ նետ > նիդ «աղեղի նետ» ձևի, դարձել է նույնպես նիդ:

§188. Բառամիջում մ-ն մնում է անփոփոխ մ. ինչպես՝ զարմանալ >Ջթ., Հճ. գայմանոյ, արմուկն >Ջթ. արմունգ, Հճ. այմուգ, բազմիլ >Հճ. բնգմել, բամբակ >Ջթ., Հճ. բնմբոգ, բամբակել >Ջթ. բնմբասիլ, Հճ. բնմբասել, գամել >Ջթ. գնմիլ, գերեզման >Ջթ. գիլիզմոն, Հճ. գէլէզմոն, գմբեթ >Հճ. գիմբեթ, գոմէշ >Ջթ. գոմէշ, դամոն >Հճ. դնմիճ, դիմանալ >Ջթ., Հճ. դիմանոյ, դմակ >Ջթ. դիմոգ, իմանալ >Ջթ. իմանոյ, խղճմտանք >Ջթ. խրղջմրղոճք, Հճ. խւիղջմրղոճք, խմոր >Ջթ. խեօմիւլ, Հճ. խիմոյ, ծմակ >Ջթ. ձոմոգ, կարմիր >Ջթ. գայմիլ, Հճ. գայմիլ, համար «վասն» >Ջթ. համոյ,

Հճ. համո, համարել >Ջթ. համրիլ, Հճ. համրել, ձմեռն >Ջթ. ձիմեռ, Հճ. ձմէր, յիմար >Ջթ. իմոյ, նմանիլ >Ջթ. ըյմանիլ, շամփուր >Ջթ., Հճ. շամփուլ, չամիչ >Ջթ. չամիչ >Հճ. չւիւիչ, քամել >Ջթ. քամիլ, Հճ. քամել և այլն:

Երկու օրինակ կա, ուր բառամիջի մ-ն վերածվել է ւ-ի. դրանք են ա-կումբ և ամբարտաւան: – Առաջինը, ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ կորցրել է վերջնաձայն բ-ն և մ-ն վերածվելով ւ-ի՝ դարձել է Ջթ. ագան կամ ագեօն. նշանակում է «տոնական, հանդիսավոր (օր)». նույնը Պոլսի բարբառով ասվում է ալում օր:

Երկրորդի մեջ մ-ն դարձել է ւ, և բառը վերածվել է Հճ. անբնդալոն, թերևս իբր բացասական գաղափար՝ աւ- մասը վերածելով աւ մասանկի:

§189. Բառավերջում գտնվող մ-ն մնում է անփոփոխ. ինչպես՝ անգզամ >Ջթ. անըսգոմ, բարեկամ, Հճ. բնայգոմ, գամ «մեխ» >Ջթ. գոմ, դդում >Ջթ. դոդոմ, Հճ. դիդիում, դեմ >Ջթ., Հճ. դէմ, դրամ >Ջթ. դիլոմ ? երդումն >Ջթ. ուլոմ, Հճ. ուլում, երկկամն >Ջթ. իյգոմ, թեմ >Ջթ. թիմ, ժամ «եկեղեցի» >Ջթ., Հճ. իժում, ծոմ >Ջթ., Հճ. ձոմ, կամն >Ջթ. գոմ, կոտիմն >Հճ. գիլիմ, համ >Ջթ., Հճ. հոմ, հիմն >Ջթ. հիմ, Հճ. հիմք, հում >Ջթ., Հճ. հում, մոմ >Ջթ. միմ, միւմ, Հճ. մոմ, շողգամ >Ջթ. շուխգոմ, սեամ >Ջթ. շիմիճք:

## Յ

§190. Ե-ն իբրև բաղաձայն, գտնվում է միայն բառասկզբում, իսկ բառամիջում և բառավերջում՝ միանալով ա, ո ձայնավորների հետ, կազմում է երկբարբառ, ուստի տե՛ս երկբարբառների բաժնում:

Բառասկզբի Ե-ն ստանում է Կիլիկիայի բարբառում երկու ձև.

Նախ՝ վերանում է. այսպես են՝ յիսուն >Հճ. իսուն, Ջթ. իսուն (նակ հիսուն), յիշել >Ջթ. իշիլ, յիշոցք >Ջթ. իշիւցք, յիմար >Ջթ. իմոյ, յուզել >Ջթ. ուզիլ, Հճ. ուզել, յստակ >Ջթ. իսոգ, յօնք >Ջթ. ընքվիլ, յօրանջել >Հճ. էլէնգջօլ, Ջթ. էրէնգջօլ, յետև >Ջթ. իղիվ, Հճ. իղեվ, յետ >Ջթ. իղ (Հճ. յէր), յաւանակ >Ջթ., Հճ. ավանոգ, յարդ >Ջթ. էյդ, իէրդ, Հճ. էյդ, հէյդ, յատակ >Հճ. աոգ «եղի տականքը», յատակիլ >Ջթ. աղգէնոյ «սուզվել», յուլանալ >Ջթ. ուլնոյ «ծուլանալ, ալարիլ»:

Ուշ ժամանակի հայերենում, թուրքերենից փոխառյալ բառերի մեջ, հնագույն օրինակներում գտնում ենք բառասկզբում Եթ > ա. օրինակ՝ անձ-նանուններից՝ Կայմուր > Աղմուր, Կազբ > Աղուր, Կազտ > Աղուր, Կաչի > Ախչի, որոնց հնագույն հիշատակությունը 1260 թվականից է և գնում է

մինչև 1619թ., իսկ Գրանց ավելի Գոր ձևերն են՝ Եաղմուր, Եաղուր, Եաղութ, Եախշի (Գոր ուղղագրությամբ՝ Յաղմուր, Յաղուր, Յաղութ, Յախշի), որոնց հնագույն հիշատակությունը 1506 թվականից է և այժմ էլ կան: Ջեյթունի բարբառում ունենք հին ձևով *yapraq* > *ափյոխ* «տերևով դոմա», *yaylaq* > *աղլէխ* «թաշկիճակ», իսկ Գոր ձևով կան *yazlaq* *յազլըխ* «ամառանոց», *yazəq* > *յազըխ* «ափսոս», *yaraq* > *յառօխ* «զենք», *yara* > *յայօ* «վերք» և այլն:

Վերևի օրինակներից երևաց, որ երկու դեպքում էլ նախաձայն *յ-ն* մնում է. այսպես են՝ *Հճ. յէր* «յետ» (որի դիմաց *Ջթ. ունի իր*) և *Ջթ. իէրո՛* «հարդ», որի հետ կան նաև *Ջթ., Հճ. էյր՛ն* *Հճ. հէյր՛ն* ձևերը:

Երկրորդ՝ բառասկզբի *յ-ն* դառնում է *հ*. եղած օրինակները հետևյալներն են՝ *յաղթել* > *Ջթ. հախթիլ*, *յօտ* > *Ջթ. հէօր*, *յտոց* > *Ջթ. հիւղից*, *Հճ. հէղոց*, *յօտել* > *Ջթ. հուղիլ*, *Հճ. հիղել*, *յիշատակ* > *Ջթ. հիշադօգ*, *յղի* > *Ջթ. հղի*:

§191. Կանոն չկա որոշելու համար, թե ո՞ր դեպքում նախաձայն *յ-ն* վերանում է և ո՞ր դեպքում դառնում *հ*: Ուրիշ բարբառների այն օրենքը, որով բարբառի բնիկ բառերի մեջ *յ-ն* վերանում է, իսկ գրական բառերի մեջ մնում է՝ չի կարելի հաստատել այստեղ. որովհետև, թեև յիշատակ > *Ջթ. հիշադօգ* բառի մեջ *յ-ն* լինում է *հ*, իսկ *յիշել* > *Ջթ. իշիլ* բառի մեջ *յ-ն* վերանում է, սակայն միևնույն ժամանակ *յօր*, *յօտել*, *յտոց* > *Ջթ. հէօր*, *հուղիլ*, *հիւղից* բառերի մեջ, որոնք բուրրովին ժողովրդական բարբառային ձևեր են, *յ-ն* դառնում է *հ*:

Ավելացնենք նաև այն, որ Հաճընի բարբառում *յարդ* բառը ստանում է թե՛ *էյր՛ն* թե՛ *հէյր՛ն* ձևը, իսկ Ջեյթունի բարբառում նույն բառը դառնում է *էյր՛* կամ *իէրո՛* – Յիսուն բառը *Ջթ.* լինում է *իսսօն* և *հիսսօն*:

Ն

§192. Բառասկզբում մնում է անփոփոխ, ինչպես՝ *ներքս* > *Ջթ. նիյս*, *Հճ. նէյս*, *նոթի* > *Ջթ. անըթիլ*, *Հճ. անութի*, *նոր* > *Ջթ. նիւլ*, *Հճ. նոյ*, *նուռն* > *Ջթ. նուռ*, *Հճ. նուր*, *նման* > *Ջթ. նօմօն*, *նշան* > *Ջթ. նիշօն*, *ներ* > *Ջթ., Հճ. նեյ* և այլն:

Նստիլ բառն ունի երկու ձև. *Ջթ. նըսդիլ*, *դըսդիլ*, *Հճ. նմսդել*. առաջինում *ն-ն* մնում է անփոփոխ, երկրորդի մեջ՝ նմանությամբ հաջորդ առանձնային, դարձել է *դ*:

Նապաստակ (հինը ենթադրում են \**նապարստակ*) բառի մեջ նախաձայն *ն՝* տարանմանությամբ հաջորդ *ր-ի*, դարձել է *լ* (*Ջթ. լափուսդօգ*):

Նմանիլ բառը դարձել է նախ *ըմանիլ*, որ և գործածական է բարբառում, ապա *ր>լ* սովորական օրենքով առաջացել է *ըմանիլ*: Ուրիշ բարբառներում ունենք *ըմանիլ*: Բայց նման > *Ջթ. նօմօն* և անման > *Ջթ. աննօմօն* բառերի մեջ այսպիսի հնչյունափոխություն չկա:

Նետուաղեղ բառը մի կողմից դարձել է *Ջթ. նիդընդեղ*, մյուս կողմից՝ զարմանալի կերպով *Ջթ. լըմընդեղ*: Այս մասին տե՛ս §245:

§193. Բառամիջում *ն-ն* նմանապես մնում է անփոփոխ *ն*. ինչպես՝ *ննճղուկ* > *Ջթ. ջէնջղօգ*, *նանաչել* > *Ջթ. ջէնջնօլ*, *նենճոտ* > *Ջթ. ջէնջիւղ*, *մնալ* > *Ջթ. մօնօլ*, *Հճ. մմնօլ*, *տնկել* > *Ջթ. դընգիլ*, *Հճ. դմնգել*, *յօնք* > *Ջթ. ընքվը*, *յօրանջել* > *Ջթ. էրէնջգրդօլ* > *Հճ. էյէնջջօլ*, *պանիր* > *Ջթ. բանիլ*, *Հճ. բանիլ*, *պապանձիլ* > *Ջթ. բաբանձըլ*, *Հճ. բաբանձիլ*, *պագանել* > *Ջթ. բաքնիլ*, *Հճ. բագնել*, *ցնկնել* > *Ջթ. ցընգնալ*, *Հճ. ցմնգնել*, *փոնգտալ* > *Ջթ. փօնօնգրդօլ*, *Հճ. փմրմնքրդօլ*, *օրհնել* > *Ջթ. ուխնիլ*, *օրինակ* > *Ջթ. ույունօգ*, *օծանել* > *Ջթ. ուզնել* «քսել», *ջնջել* > *Հճ. ջմնջել*, *պղինձ* > *Ջթ. բըղընձ*, *Հճ. բմղինձ* «մեծ կաթսա», *մատանի* > *Ջթ. մադնիլ*, *Հճ. մաննիլ* և այլն: Հիշելի են հատկապես բույսերի անունները, ինչպես՝ *կաղնի* > *Ջթ. գաղնիլ*, *Հճ. գաղընիլ*, *կեռասնի* > *Ջթ. գէռասնիլ*, *մորեմի* > *Ջթ. մըմիմիլ*, *հացի* *Հճ. հացմնիլ*, *հունի* *Հճ. հնընիլ* (իմա՝ \**հուննիլ*) և այլն:

Մանապարհ բառի մեջ *ա-ն* ընկնելով՝ *ն* ոնգայինը միացել է շրթնայինին, ուստի վերածվել է *ս-ի*. այսպես՝ *Ջթ. ջամիօնք*, *Հճ. ջամփօք*:

§194. *Նլ*, *լն* և *նն* գտնվելով բառամիջում՝ ստանում են զանազան ձևեր. այսպես՝

բանալիք	>Ջթ. բնալըք, բնալըք, Հճ. բալիքը
ելանել	>Ջթ. իլիլ, Հճ. իննել
լնուլ	>Հճ. նընուլ
լինիլ	>Ջթ. նըլ, նալ:

Սակայն անփոփոխ են մնում՝

ննջել	>Ջթ. ննջիլ	
նման	>Ջթ. նօմօն, աննման,	Հճ. աննօմօն
ունենալ	>Ջթ. ունցնօլ,	Հճ. ուննօլ
կալուլ	>Ջթ. գալնօլ «վերցնել»	
կլանել	>Ջթ. գօլնօլ,	Հճ. գմընուլ

թուլանալ	>Ջթ. թուլալ	
խլիւք	>Ջթ. խլիլիւք,	Հճ. խալիւք
ծնունդ	>Ջթ. ձոնունդ	
կնունք	>Ջթ. գոնունք	Հճ. գաւնունք
ուլունք	>Հճ. հաւլու:	

Նձր հնչյունախմբի հնչյունափոխության մասին տե՛ս §176:

Ջթ. թընըթափիլ «ուշագնաց լինել» բառի մեջ *ն*-ն առաջանում է *լ*-ից (թուլաթափիլ):

§195. Բառավերջում դարձյալ մնում է անփոփոխ. ինչպես՝ անուն >Ջթ., Հճ. *անուն*, մուն «ճանճ» >Ջթ. *մըն* «ոջի ձագ», լիսուն >Ջթ. *խսուն*, Հճ. *խուն*, սին >Հճ. *սին*, քան >Ջթ. *քուն*, Հճ. *սուն*, տուն >Ջթ., Հճ. *դուն*, ցոռեան >Ջթ. *ցոյիւն*, Հճ. *ցոյէն*, պարան >Հճ. *բայուն*, չուան >Ջթ. *չուվուն*, Հճ. *չովուն*, պատուհան >Ջթ. *բաթիւհիւն*, Հճ. *բահադէն* և այլն:

Մրջին բառը դարձել է Ջթ. *մոնձոս*, *մոնջոս*, Հճ. *մաթիւս*, որոնց մեջ վերջնահնչյուն *ն*-ի կա՛մ նախաձայնի ազդեցությամբ և կա՛մ *մրջիմ* ձևից կրճատմամբ դարձել է *մ*:

**Ը**

§196. Բառասկզբում *չ*-ն մնում է միշտ *չ*. օրինակ՝ շաբաթ >Ջթ. *շաբօթ*, Հճ. *շաբթօթ*, շալակ >Ջթ., Հճ. *շալոգ*, շահ >Ջթ., Հճ. *շոհ*, շաղ >Ջթ. *շող*, շաղել >Ջթ. *շաղիլ*, Հճ. *շաղել* «թրել ալյուրը», շաղգամ >Ջթ. *շուխգամ*, շամփուր >Ջթ., Հճ. *շամփույ*, շանթել >Հճ. *շանթել* «ղետրի հարվածելը», շապիկ >Ջթ. *շաքք*, Հճ. *շաքիք*, շատ >Ջթ., Հճ. *շոդ*, շար «շղարշ» >Ջթ. *շոյ*, շարական >Ջթ. *շայագուն*, շաքար >Ջթ. *շանքոյ*, Հճ. *շաքոյ*, շերեփ >Ջթ. *շիյիփ*, Հճ. *շիյէփ*, շէն «ուրախ» >Ջթ., Հճ. *շէն*, շիլ >Ջթ., Հճ. *շիլ*, շղարշ >Ջթ. *շաշ*, շնորհք >Ջթ. *շէօնիլք*, Հճ. *շանոյք*, շնորհաւոր >Ջթ. *իշնահաւորիլ*, Հճ. *շնորհաւոյ*, շուն >Ջթ., Հճ. *շուն*, շուք >Ջթ., Հճ. *շուք* և այլն:

Միայն շարժ բառն է, որի նախահնչյուն *չ*-ն ազդվելով վերջնահնչյունից՝ դառնում է *ժ*. այսպես՝ շարժ > Ջթ. *ժաժ*:

§197. Բառամիջում *չ*-ն մնում է նույնպես *չ*. ինչպես՝ աշակերտ >Ջթ. *էշգիյդ*, Հճ. *էշգէյդ*, աշխարհ >Ջթ., Հճ. *աշխոյ*, աշուն >Ջթ. *էշունք*, Հճ. *էշունք*, գարշիլ >Հճ. *գարշել*, գիշեր >Ջթ. *գիշիլ*, Հճ. *գիշէլ*, թշնամի

>Ջթ. *թշնամի*, թորշոմիլ >Ջթ. *թըշմիլ*, իշխան >Ջթ. *իշխուն*, կաշի >Ջթ., Հճ. *գէշի*, կշոնել >Ջթ. *գըշոնիլ*, *գըշոնիլ*, Հճ. *գիշէրէլ*, կոշկոն >Ջթ. *գոշգոյ* «ցեխի կոշտ», կոշիկ >Ջթ. *գուշիք*, Հճ. *գուշիգ*, կոշկակար >Ջթ. *գուշգոյ*, հրաշք >Հճ. *հաւշոք*, մանուշակ >Ջթ. *մանուշոգ*, մաշել >Ջթ. *մէշիլ*, Հճ. *մէշել*, մշակ >Ջթ. *մուշոգ*, Հճ. *մաշոգ*, մուշկ >Ջթ. *մուշկ*, յիշատակ >Ջթ. *հիշադոգ*, յիշել >Ջթ. *իշիլ*, յիշոց >Ջթ. *իւշիցք*, նշան >Ջթ. *նիշուն*, նշխարք >Ջթ., Հճ. *նէշոյ*, շշուկ >Հճ. *շաշուկ*, շուշան >Ջթ. *շուշուն*, պաշար >Ջթ., Հճ. *քէշոյ*, փշապ >Ջթ. *ուշոք*, փշրել >Ջթ. *փըշիլ*, քարշել >Ջթ. *քէշիլ*, Հճ. *քէշել* և այլն:

§198. Երբ *չ*-ն գտնվում է *տ* բաղաձայնից առաջ, դառնում է *ր*, որ և հնչվում է *յ*, իսկ հաջորդ *տ* բաղաձայնն էլ դառնում է *ր*: ըստ այսմ *չտ*-ն դառնում է *րր*: իր: Բայց այս երևույթը գտնում ենք միայն միավանկ բառերում (բառավերջում): Ունենք միայն երկու օրինակ. կուշտ «հագեցած» >Ջթ. *գուրր*, *գույր*, տաշտ >Ջթ. *դաւրր*, *դարր*: Այս հնչյունափոխությունը գտնվում է միայն Ջեյթունի բարբառում, իսկ Հաճընի բարբառում *չտ*-ն դառնում է *շդ*. այսպես՝ կուշտ >Ջթ. *գուշդ*:

Իսկ երբ *չտ*-ն գտնվում է բառամիջում, այս փոփոխությունը տեղի չի ունենում. այսպես՝ աշտարակ >Ջթ. *աշդարոգ* «բերդ», կշտանալ >Ջթ. *գշդանալ*, Հճ. *գիշդանալ*, հրեշտակ >Ջթ. *հիյիշդոգ*, Հճ. *հաւշդոգ*, պաշտել >Ջթ. *բաշդիլ*, *քշտել* >Հճ. *քիշտել* «զարնել»: Ուրիշ օրինակ չկա:

§199. Ծատ հետաքրքրական օրինակ է Ջեյթունի *դէօրդիշիւն* բառը, որ նշանակում է «պղնձե մեծ տաշտ, որի մեջ կլողանան կամ ոռոք կեփեն և այլն»: Այս բառը, անշուշտ, փոխառյալ է պրսկ. *dastšūy* հումանիշ մի ձևից, որ Պարսկերեն բառարանում մեկնվում է «ջուր լուացման ձեռաց, կամ կոնք և ջրկիճ լուացման ձեռաց, և այլ այլ նման իրք»: Այս բառի մեջ նախ *ս*-ն հետևելով հաջորդ *ձ*-ին՝ ինքն էլ դարձել է *չ*. ձայնավորների նմանությամբ առաջացել է *դէօրդիշիւն*, որի մեջ *շդ*>*չտ*-ն նախորդի նման վերածվելով *րր*: ստացվել է վերջապես *դէօրդիշիւն*:

Մի քիչ առաջ նկատեցինք, որ բառամիջում *չտ*> *րր*՝ հնչյունափոխությունը տեղի չի ունենում, ուստի հայտնի չէ, թե ինչու՞ այս օտար և արտասովոր բառի մեջ պահված է:

§200. Բառավերջում *չ*-ն մնում է նույնպես անփոփոխ. եղած օրինակներն են՝ ակիշ >Ջթ., Հճ. *ագիշ*, անոյշ >Ջթ. *անուշ*, գէշ «վատ» >Ջթ., Հճ.

գէշ, գովէշ >Ձթ. գովմէշ, էշ >Ձթ., Հճ. էշ, քարադոդոշ >Ձթ. քարթէշ, Հճ. քարթէշ, թուշ >Ձթ., Հճ. թուշ, կշոշ «հոտոց» >Ձթ. գիշիշ, կոտոշ >Հճ. գեղէշ, նուշ >Հճ. նուշ, շղարշ >Ձթ. շաշ, շրէշ >Ձթ. շիշ, Հճ. շաշ, ուշ «անազան» >Ձթ. օշ, Հճ. ուշ, փուշ >Հճ. փուշ:

2

§201. Բառասկզբում մնում է անփոփոխ չ. ինչպես՝ չամիչ >Ձթ. չամիչ, Հճ. չամիչ, չար >Ձթ., Հճ. չօյ, չափ >Ձթ., Հճ. չօփ, չոր >Ձթ. չիւյ, Հճ. չոյ, չորս >Ձթ. չիւս, Հճ. չոյս, չուան >Ձթ. չուփօն, Հճ. չօփօն և այլն:

§202. Բառամիջում չ-ն մնում է դարձյալ չ. ինչպես՝ աղաչել >Ձթ. աղըչիլ, Հճ. աղաչել, դիպչել >Ձթ. դիբըչիլ, թոչիլ >Ձթ. թընչիլ, Հճ. թարչել, խնչել >Ձթ. խընչիլ, Հճ. խընչել, խոչակ >Հճ. խըչօգ, կանչել >Հճ. գէնչել, հառաչել >Ձթ. հառչիլ, Հճ. հարչել, ճչալ >Ձթ. ճենչել?, Հճ. ջաշօլ, ճոնչել >Հճ. ջարմանչօլ, մինչև >Հճ. ինչի, Ձթ. չիւյ, չարչարել >Ձթ. չայչայիլ, փախչել >Ձթ. փախչիլ, Հճ. փախչել, փակչիլ >Ձթ. փագչըլ, փլչիլ >Ձթ. փըլչիլ, փչել >Ձթ. փըչիլ, Հճ. փաչել և այլն:

Ուրիշ բարբառներում չ-ն գտնվելով բաղաձայնից առաջ՝ դառնում է շ. այս երևույթը կա նաև կիլիկիայի բարբառում, բայց միայն ն ռնգայինից առաջ և այն էլ մասամբ. ինչպես՝ ամաչել >Ձթ. ամըչնօլ, ամըշնօլ, Հճ. ամաշնօլ, կոչնակ >Ձթ. գուչնօգ, գուշնօգ, ինչպես նաև գըշնըլ «կորցնել» և գըշնըվըլ «կորչել», որոնք ծագում են կորնչիլ > շրջված \*կորնչիլ, կրավորական \*կորնչուիլ ձևերից: – Ծանաչել >Ձթ. ջէնչնօլ բայի մեջ չ>շ հնչյունափոխություն տեղի չի ունեցել, թեև չ ռնգայինից առաջ է:

Ուրիշ բաղաձայնի մոտ չ>շ հնչյունափոխություն չի նկատվում. այսպես՝ աչք >Ձթ. էչվէ, Հճ. աչք, ինչպես և գոքանչ բառից կազմված բարդությունները՝ գոքանչմար >Ձթ. գըքընմար, Հճ. իքիչմօյ, և \*գոքանչպապ «աներ» >Ձթ. գըքընքօթ, Հճ. իքիչքօթ, Մրշ. ըգքիչքօթ:

Կարկաչել բայը, որի մեջ բաղաձայնները իրենց աստիճանը փոխելով, դարձել է գնայգըջել «հատի կշկշալը», որ է \*գարկաջել:

§203. Բառավերջում չ-ն մնում է չ. ինչպես՝ աւաչ >Ձթ. էվաշք, էվէշք «երգ», բրիչ >Ձթ. փիլիչ, դունչ >Ձթ. դիւնչ, Հճ. թունչ, ինչ >Ձթ. իւնչ, Հճ. ինչ, խաչ >Ձթ. խաշ, Հճ. խաչ, խէչ > «կողքը» >Ձթ. խէչ, կանաչ >Ձթ. գէնաշ, Հճ. գանօշ, ոչ >Ձթ. օշ, չամիչ >Ձթ. չամիչ, Հճ. չամիչ, փարչ >Ձթ. փարչ:

Պ

§204. Ամեն դիրքով էլ դառնում է թրթռուն բ. ինչպես՝ Բառասկզբում՝ պագանել >Ձթ. բարնիլ, Հճ. բագնել, պախրէ >Ձթ. բախրէ, Հճ. բախրէ «եգ», պակաս >Ձթ. բագօս, պաղ >Ձթ., Հճ. բօղ, պան >Ձթ. բօն, «մեղրահաց», պանիր >Ձթ. բանըլ, Հճ. բանիլ, պղտոր >Ձթ. բէօղ-դիլ, Հճ. բաղդոյ, պսակ >Ձթ. բօսօգ, Հճ. բոսսօգ, պար(ս) «մեղուների» >Ձթ. բօյս, Հճ. բօյ, պատուհան >Ձթ. բաղիհիւն, Հճ. բահաղէն և այլն:

§205. Բառամիջում կաղապար >Ձթ., Հճ. գաղբօյ, կապերտ >Ձթ. գայբիդ, հպարտ >Ձթ. հիբօյդ, հուբօյդ, հապա >Ձթ. հարը, Հճ. հաբա, ճապա-դիլ >Ձթ. ջարդիլ «աչքերը լայն բանալ», հանդիպիլ >Ձթ. հանդըրըլ, խծպել >Ձթ. խըճըրիլ, անապատ >Ձթ. անաբօդ, ապարանջան >Ձթ. արուռօն, Հճ. արարօն, ապուր >Ձթ., Հճ. արույ, շապիկ >Ձթ. ջարբը, Հճ. ջարբը, ճիպո >Ձթ. ջերբը, Հճ. ջերբ, տապակել >Ձթ. դարգիլ, Հճ. դարգել, ստեպիդն >Ձթ. ըսըդդըլն «գազար», ապսպարել >Ձթ. արըսըրիլ, սպիտակ >Հճ. իսբիդօգ, դիպչել >Ձթ. դիբըչիլ, դիբնօլ:

Վերջին օրինակները ցույց են տալիս, որ նույնիսկ խուլ բաղաձայնից հետո լսվում է պ > բ. այսպես, օրինակ՝ սպանել բառը լսվում է Հճ. սբանել, Ձթ. սբանիլ, սբանիլ կամ սպանիլ:

Երեք օրինակի մեջ պ-ն դարձել է փ. այսպես են՝ ճանապարհ >Ձթ. ջանփօնք, Հճ. ջանփօթ, նապաստակ >Ձթ. լափուսթօգ և սպրդիլ >Ձթ. սըփըդըլ (թեև Հճ. ունի սաբարդըլ):

§206. Բառավերջում պ-ն դառնում է բ. ինչպես՝ ամպ >Ձթ., Հճ. օմբ, խեճեպ >Ձթ. խէջիբ (Հճ. դաշեփ ցույց է տալիս պ>փ), կապ >Ձթ., Հճ. գօթ, կոպ >Ձթ. գիբիք (որ առաջանում է \* կոպերք կրկնակ հոգնակի ձևից. հմմտ. աղջկերք, մէջերքը, այն տեղերքը), ոսպ >Ձթ. իւսբ, Հճ. վոսբ, պարապ >Ձթ., Հճ. բայթ, վիշապ >Ձթ. ուշօթ:

Ջ

§207. Չ բաղաձայնը բառասկզբում դառնում է (ճիշտ ճ բաղաձայնի համաձայն) ջ՝ կամ ճ (Ջեյթունի բարբառում): Այսպես ունենք՝ ջոր >Ձթ. ջօր, Հճ. ջիւյ, ջրաղացք >Ձթ. ջիւղոցք, ճաղօյցք, Հճ. ջիւղօյցք, ջարդել >Ձթ. ջարդել, ճայդել, ջիղ >Հճ. ջեղ, ջնջել >Հճ. ջննջել, ջորի >Ձթ. ջիրէ,

ճիշտ, Հճ. ջիշի, ջուխակ >Ջթ. ջիալոգ, ճիալոգ, Հճ. ջուլիոգ կամ ջուլիոգ (ջ կամ ջ' թուրքերենի ազդեցությամբ):

§208. Բառամիջում ջ-ն դառնում է ջ', ճ կամ չ, որոնց համար ունենք շատ սակավաթիվ օրինակներ, այն է՝ հաջել >Ջթ. հէչիլ, Հճ. հէչել, իջանել >Ջթ. իչնուլ, Հճ. իչնել! ոջիլ >Ջթ. իջէլ, իճէլ, Հճ. իջջիլ: Սրանց վրա ավելացնենք աղջիկ, որ անցնելով \*աղջկին > ախջգին ձևից (Բիւրակն, 1899, էջ 18, գտնում են ախջգին միջին ձևը), դարձել է Ջթ. աջգին, Հճ. աչգին: Այս առթիվ պետք է նկատել, որ ուրիշ բարբառներում բառամիջի ջ-ն գտնվելով բաղաձայնից առաջ՝ տալիս է շ (օրինակ՝ Պլ. իջնել > իշնալ): Իսկ Կիլիկիայի բարբառում այս երևույթը (ինչպես ցույց են տալիս նաև չ, ձ և այլն բաղաձայնները) կանոնավոր չէ: Ըստ այսմ՝ վերևում ունենք մերթ չ մերթ շ:

Բառամիջի այս օրինակները անկախ չեն, այլ ջ-ն գտնվում է *ն*, *ր* բաղաձայններից հետո:

*ն* ունգայինից հետո ջ-ն դառնում է ջ. այսպես են՝ ապարանջան >Ջթ. աքուոջոն, Հճ. արարոջոն (նույնիսկ *ն* ունգայինի անկումից հետո), բանջար >Ջթ. բէնջոյ, Հճ. բէնջոյ, խոնջան >Ջթ., Հճ. խունջոն, խրխնջալ >Ջթ. խոխոնջոլ, Հճ. խրրիլնջել, յօրանջել >Ջթ. էրէնջոգոյ, Հճ. էլէնգջոյ, մնջել >Ջթ. մնջիլ:

Ջնջել բառի դիմաց Հճ. ունի ջննջել, ուր երկրորդ ջ-ն (փոխանակ ջ) կարծում են նախաձայնի նմանությամբ է:

Տանջել բառի մեջ (Ջթ. դանջիլ, տանճիլ) ջ-ն դարձել է նախաձայնի նման ջ' կամ ճ:

Բառամիջում *ր*-ից հետո ջ-ն դառնում է ջ' կամ ճ. ինչպես՝ մրջին >Ջթ. մոնճոմ, մոնջոմ, Հճ. մարջիմ, թրջել >Ջթ. դրջիլ, Հճ. դարջել, առջև >Հճ. արջանեգ:

Բառամիջում գտնվող ջ բաղաձայնի օրինակ է նաև եղջիր >Ջթ. ախջէլ «կոտոշ», Հճ. էխջիյ «պտուղը», որի մեջ ջ-ն գտնվելով *ղ*-ից հետո՝ տվել է ջ':

Իբրև բառամիջի օրինակ՝ հիշենք նաև մէջք >Ջթ., Հճ. մէչք, ուր ջ-ն գտնվելով հաջորդ ջ-ի մոտ՝ խլացել և դարձել է չ:

§209. Բառավերջում, անկախ դիրքի մեջ ջ-ն տալիս է ջ (նաև ջ). այսպես՝ առաջ >Ջթ. էոնյ, Հճ. արոյ, արաւ, մէջ >Ջթ., Հճ. մէչ, գէջ >Հճ. գէջ «թաց»:

Աջ բառը Ջեյթունի բարբառում դառնում է արջ: Իսկ Հաճընի բարբառում ստանալով *-իկ* փաղաքշական մասնիկը՝ դարձել է էջջիգ:

Բառավերջի մյուս օրինակները անկախ չեն, ըստ որում գտնվում են *ն* կամ *ր* բաղաձայնից հետո: Առաջին դեպքում ջ-ն մնում է ջ. այսպես են՝ մունջ >Ջթ., Հճ. մունջ, խուլից >Ջթ. խուլիճոջ, ականջ >Ջթ. անգէջ >Հճ. անգարջ: Իսկ երկրորդ դեպքում ջ-ն դառնում է ջ': ինչպես է արջ >Ջթ. առջ', Հճ. արջ':

Թ

§210. Կիլիկիայի բարբառում ընդհանուր օրենքով *ր* բաղաձայնը ամեն դիրքով էլ մնում է *ր* Ջեյթունի բարբառում, իսկ Հաճընի բարբառում դառնում է միշտ *ր*:

Բազմաթիվ օրինակներից մեջ ենք բերում այստեղ մի քանիսը.

Բառակազմում՝ ռեհան >Ջթ. ըրահոն, Հճ. ?, ուր «մաթ. դոշաբ» >Ջթ. օնուր, Հճ. էրուր:

§211. Բառամիջում՝ ազուս >Ջթ. ազոս, Հճ. ազոս, առնուլ >Ջթ. առնուլ, Հճ. արնել, առաջ >Ջթ. էոնյ, Հճ. արոյ, առատ >Ջթ. օնոթ, Հճ. արոթ «էժան», առու >Ջթ. առու, Հճ. արու, բառնալ >Ջթ. բաննուլ, Հճ. բէրնել, բուրվառ >Ջթ. բրիվառ, Հճ. փուրվօր, բոնել >Ջթ. բրիոնիլ, Հճ. բրիոնել, գոռոգ >Ջթ. գոռոգ, Հճ. գորոգ, թոչել >Ջթ. թրիչիլ, Հճ. թարչել, կշոնել >Ջթ. գրշոնիլ, Հճ. գիշերել, կոնի >Ջթ. գրիավ, Հճ. գարիվ, հեռի >Ջթ. խօնու, Հճ. հէրու, մեռանիլ >Ջթ. մէրանիլ, Հճ. մէրնել, ուռիլ, ուռեճալ >Ջթ. ուռուճուլ, Հճ. ուրունուլ, պառաւ >Ջթ. բարօր, Հճ. բարօր և այլն:

§212. Բառավերջում՝ աթոռ >Ջթ. արթոն, Հճ. աթոր, ախոռ >Ջթ. արխտոն, Հճ. ախոր, բեռն >Ջթ. բէր, Հճ. բէր, բեռն >Ջթ. բիրբեռ, Հճ. բիրբեր, բունն (ձեռքի) >Ջթ. բոն, Հճ. բուր, դուռն >Ջթ. դոն Հճ. դուր, թոռն >Ջթ. թէժո, Հճ. թոր, լեռան >Ջթ. լէր, Հճ. լէր, ծառ >Ջթ. ձօր, Հճ. ձօր, ծուռ >Ջթ. ձուռ, Հճ. ձուր, ձեռն, ձեռք >Ջթ. ձարք, Հճ. ձար, ձմեռն >Ջթ. ձրմեռ, Հճ. ձմէր, ճիպո >Ջթ. ջեբոջ, Հճ. ջերբ, նունն >Ջթ. նուռ, Հճ. նուր և այլն:

§213. Այս օրենքն այնպես ընդհանուր և սովորական է, որ տարածված է նույնիսկ կրոնական հին բառերի, նոր բարբառային բառերի, ինչպես և օտար փոխառյալ բառերի վրա: Այսպես՝ միտոն >Ջթ. *մէոսն*, Հճ. *մէրոն*, ճառայ «եղի կարաս» >Ջթ. *ջասո*, Հճ. *ջարօ*, փուռն >Ջթ. *փուռ*, Հճ. *փուր*, աճեղ >Ջթ. *էջըրիլ*, Հճ. *էջէրել*, թրք. առաբա >Ջթ. *սուարօ* «սալլ» և այլն:

Այս հնչյունափոխությանը, բնականաբար, առաջանում են բարբառում բազմաթիվ համանուն բառեր, բայց սրանք բնավ չեն խանգարում, որովհետև կամ նախկին համանունները ջնջված են լինում և կամ հնչյունական նոր ձև են ստացած լինում բարբառի մեջ. օրինակ՝

համանունը			
առատ	>Հճ. <i>արօղ</i>	–	արօտ ջնջված է
առու	>Հճ. <i>արու</i>	–	արու
բեռն	>Հճ. <i>բէր</i>	–	բե՛ր
դուռն	>Հճ. <i>դհուր</i>	–	դուր
ծուռ	>Հճ. <i>ծօր</i>	–	ծոր
կշռել	>Հճ. <i>գիշէրէլ</i>	–	գիշերել
հեռի	>Հճ. <i>հէրու</i>	–	հերու > հիյու
ձեռն	>Հճ. <i>ձար</i>	–	ձար
պառաւ	>Հճ. <i>բարօր</i>	–	պարապ > բայօր

§214. Երկու բառ ունենք, որ միջին հայերեն մի ձևի վրա հիմնվելով՝ շեղվում են այս կանոնից. այսպես են՝ առնել >Ջթ. *էնիլ*, Հճ. *էնել* (միջ. հյ. *թիթեղն* ձևից):

Սրանցից դուրս կան նաև մի քանի բառեր, որոնք շեղվում են այս կանոնից: Այսպես են՝

ամառն	>Ջթ. <i>ամօռ</i> , բայց Հճ. <i>ամոյ</i>
առաստաղ	>Ջթ. <i>այըսոթս</i>
դառնալ	>Հճ. <i>դհարնոլ, դհայնոլ</i>
խոով	>Ջթ. <i>խէօռէօվ</i> , բայց Հճ. <i>խէլէվ</i>
խոչակ	>Հճ. <i>խըլչօգ</i>
կոշկոռ	>Ջթ. <i>գօշգօյ</i> «ցեխի կոշտ»
կոտել	>Ջթ. <i>գըլդիլ</i> , Հճ. <i>գարդել</i>
մոռանալ	>Ջթ. <i>մառնօլ</i> , Հճ. <i>մօրնօլ, մօյնօլ</i>

վարդավառ >Ջթ., Հճ. *վայրիվօյ* (վերջնահնչյունը չի դարձել *n'* euphémisme-ի՝ բարեձևության պատճառով):

տառեխ >Հճ. *դայէխ*:

## Ս

§215. Բառասկզբում *ս–*ն մնում է անփոփոխ. ինչպես՝ սանտր >Ջթ. *սօնդոր*, Հճ. *սօր*, սատակիլ >Ջթ., Հճ. *սարգիլ*, սանդուխ >Ջթ. *սանդօխ*, Հճ. *սանդուխ*, սաւան >Ջթ., Հճ. *սալօն*, սեւալ >Ջթ. *սիվ*, Հճ. *սեվ*, սիրել >Ջթ. *սիլիլ*, Հճ. *սիլլէլ*, սկեսուր >Ջթ. *սօգօսույ*, սրահ >Ջթ. *սօյօֆ*, ստեպղին >Ջթ. *ըսըրդըրն* և այլն:

Միայն սեւան >Ջթ. *շիսհնք* բառի մեջ է, որ նախաձայն *ս–*ն դարձել է *շ*:

§216. Բառամիջում *ս–*ն մնում է նույնպես անփոփոխ. ինչպես՝ ասեղն >Ջթ., Հճ. *ասեղ*, ասել >Ջթ. *ասիլ*, Հճ. *ասել*, ապրսպարել >Ջթ. *արըսըրիլ*, անօսր >Ջթ. *անօյսը*, Հճ. *անյս*, երեսուն >Ջթ. *էրսուն*, Հճ. *էրսուն*, բուսանիլ >Ջթ. *փուսնօլ*, Հճ. *փուսնել*, ոսկր >Ջթ. *իսգիլ*, Հճ. *ուսգօլ*, ոսկի >Ջթ. *իսգի*, Հճ. *օսգի* և այլն:

§217. Բառավերջում *ս–*ն նույնպես մնում է անփոփոխ, ինչպես՝ չորս >Ջթ. *չիյս*, Հճ. *չոյս*, ամիս >Ջթ., Հճ. *ամրս*, աղուես >Ջթ. *աղվիս*, ակօս >Ջթ. *արգէօս*, հայս >Ջթ. *հարս*, կեռաս >Ջթ. *գէրօս*, կարաս >Հճ. *գայօս*, լոյս >Ջթ. *լիս*, լաս, Հճ. *լուս*, լիս, երես >Ջթ. *իլիս*, Հճ. *իլես*, ես >Ջթ. *իս*, Հճ. *լես*, դուրս >Ջթ. *դոյս*, միս >Ջթ. *միս*, Հճ. *միս* և այլն:

Սաղմոս բառը Ջեյթունի բարբառում դառնում է *սարմիս* կամ *սարմից*. վերջինիս մեջ *ս>ց* հնչյունափոխության մասին տե՛ս իմ «Քննութիւն Պոլսահայ բարբառի», §244:

Լոբի = լովիաս բառի դիմաց Ջեյթունի բարբառն ունի *լըվիյօս*, որի մեջ բառավերջի *ս–*ն համապատասխան է ճիշտ հունականին:

Նարկիս բառի դիմաց Ջեյթունի բարբառն ունի *նէլգիգ*, որի մեջ բառավերջի *գ–*ն առաջացել պարսկերեն *nergiz* ձևի համաձայն:

Տէրընդայս «տեառնընդառաջ» բառը, որ ուրիշ բարբառներում պահված է *դէրընդաս*, *դըրընդէգ* և այլն ձևերով, Հաճընի բարբառում դարձել է *դէլէնդէգ* և նշանակությունն էլ փոխելով՝ եղել է «Նոր տարի»!

Բառավերջի *ս>զ* հնչյունափոխությունն ի հարկե առաջացել է նախորդ մի քանի թրթռում բաղաձայնների ազդեցությամբ: Իսկ *Ջթ.* ունի *դէյիմդէս*՝ «Տեառնընդառաջ» նշանակությամբ:

§218. Ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ արտասուք բառի մեջ, միջին *ա* ձայնավորի անկմամբ, *տ-ն* և *ս-ն* հանդիպելով միմյանց, տվել են *ց.* այսպես՝ *Ջթ. արցունք, Հճ. արձունք:*

Նույն հնչյունափոխությունը գտնում ենք նաև զգեստ *>Ջթ. ըսզից* «եկեղեցական զգեստ» և խիստ *>Ջթ. խընց* «շատ, հույժ» (իբրև մակբայ գործածված) բառերի մեջ: Սակայն սրանց մեջ նախաձևը *տս* չէ, որ ընդհանուր հնչյունաբանական օրենքով դառնում է *ց.* այլ *ստ.* որ ամեն տեղ էլ պահպանվում է *ստ:* Այսպես ունենք բարբառիս մեջ նստիլ *>Ջթ. նըստըլ, դըստըլ, Հճ. նստըլ,* առաստաղ *>Ջթ. այըստոխ, սստոլ >Ջթ. օսոլ, Հճ. օսթխ, օսխ, Աստուած >Ջթ. սսթօձ, Հճ. սսվօձ,* հաստ *>Ջթ., Հճ. հօսոլ* և նույնիսկ *Ջթ. խստասէլ* «շատ սիրածը» (նույն *խիստ* բառից): Ուստի անհասկանալի է, թե ինչու այս երկու բառերի մեջ *ստ-ն* դարձել է *ց:*

*ս>զ* հնչյունափոխությունը գտնում ենք վասն *>Ջթ. վանց* (շրջված) բառի մեջ, որ հիշեցնում է խիստ *>Ջթ. խանց* ձևը: Այս հնչյունափոխության պատճառն էլ հայտնի չէ:

Խորիխս *>Հճ. խէյիզ* բառի մեջ բառավերջի *խ-ն* ընկել է և *ս-ն* մնալով բառավերջում՝ վերածվել է թրթռուն *զ-ի:*

**Վաթսուն** բառի դիմաց ունենք *Ջթ. վաթծոն, վաթձոն, Հճ. վաձձոն,* որով *թս > թծ, թձ* կամ *ձձ*՝ սակայն *յիսուն* բառի դիմաց գտնում ենք *Ջթ. իս-սօն, Հճ. իսուն:* (եթթանասուն և ութսուն բառերը թուրքերեն են):

§219. Բառամիջում *ս-ն*՝ հաջորդական *ն-ի* մոտ դարձել է *շ*՝ միայն հարսանիք *>Հճ. հաշնիք* (հմմտ. նաև Ադն. *հաշնուկ* «հարսնուկ») բառի մեջ, որի դիմաց *Ջթ. ունի հայսնըք:* *-սն-* հնչյունախումբը գտնում ենք նաև չորս ուրիշ բառի մեջ, այն է՝

հասանել	<i>&gt;Ջթ. հասնըլ,</i>	<i>Հճ. հասնել</i>
բուսանիլ	<i>&gt;Ջթ. փուսնօլ,</i>	<i>Հճ. փուսնել</i>
ուսանիլ	<i>&gt;Ջթ. ուսնօլ,</i>	<i>Հճ. ուսնել</i>
տեսանել	<i>&gt;Ջթ. դիսնուլ,</i>	<i>Հճ. դիսնել:</i>

Սրանց բոլորի մեջ *-սն-* հնչյունախումբը մնում է անփոփոխ:

**Վ**

§220. *Վ* բաղաձայնը գտնում ենք նախ բառասկզբում: Այս դեպքում *վ-ն* մնում է միշտ անփոփոխ. օրինակ՝ *վազել >Ջթ. վազիլ, Հճ. վազել,* վեց *>Ջթ. վից, Հճ. վեց,* վաթսուն *>Ջթ. վաթծօն, վաթձոն, Հճ. վաձձոն,* վախ *>Ջթ., Հճ. վօխ,* վաղի *>Ջթ., Հճ. վօղը,* վայելել *>Ջթ. վէլիլ,* վարդ *>Ջթ., Հճ. վոյրդ,* ի վերայ *>Ջթ. վիյաւ, Հճ. վիյօ* և այլն:

Երկրորդ՝ գտնվում է բարդ բառերի մեջ, իբրև երկրորդ տարր կամ այսպես է համարվում: Այս դեպքում էլ *վ-ն* մնում է անփոփոխ. ինչպես՝ բուրվառ *> Ջթ. բըրվառ, Հճ. փուրվօր,* վարդավառ *> Ջթ., Հճ. վայրդիվօլ,* դարիվեր *> Հճ. դնայվեյ, հօղվարք > Հճ. հողվէդի* «գերեզման»:

Կա նաև քսվիս «մուկ» բառը, որի ծագումը հայտնի չէ և որի դիմաց *Հճ. ունի քնսվիս* ձևը:

Երրորդ՝ *վ* բաղաձայնը գտնում ենք բառամիջում կամ բառավերջում՝ *ո* ձայնավորից հետո, երբ միշտ էլ մնում է *վ:* Այսպես են՝ գուվել *>Ջթ. գուվիլ, Հճ. գէվել, գիվել,* լուվիսս (լոբի) *>Ջթ. լըվիյօս,* խոստովանիլ *>Ջթ. խըստըր-վանըլ,* խոով *>Ջթ. խտօտօվ, Հճ. խէյէվ,* կով *>Ջթ. գէօվ, Հճ. գէվ,* հով *>Ջթ. հէօվ, Հճ. հէվ,* ով *>Ջթ. հիվ, Հճ. վոլ:*

Սերովքե անձնանվան մեջ, ինչպես այլուր, նույնպես և այստեղ *վ-ն* վերանում է և դառնում է *Ջթ. Սըըրքէ* (հմմտ. Պլ. *Ստօրէօփէ*):

Ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ բառասկզբի *վ-ն* կամ *վի-ն* դարձել է *ու* միայն վիշապ *>Ջթ. ուշօր* բառի մեջ:

**Տ**

§221. Բառասկզբում դառնում է թրթռուն *դ.* բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. ինչպես՝ տուն *>Ջթ. դուն,* տղայ *> Ջթ., Հճ. դօդօ,* տեղ *>Ջթ., Հճ. դեղ,* տասն *>Ջթ., Հճ. դօսը,* տանձ *>Ջթ., Հճ. դօնձ,* տատրակ *>Ջթ. դադոյօզ,* տերև *>Ջթ. դիյիվ,* տանել *>Ջթ. դանըլ, Հճ. դանել* և այլն:

Ինչպես ամեն տեղ, նույնպես և Կիլիկիայի բարբառում, տարգալ բառը ձևափոխվելով՝ դարձել է *Ջթ. դօգօլ, Հճ. դնօգօլ:*

Տնագ բառը արաբերենից նոր փոխառությամբ դարձել է *Հճ. թնօզ:*

§222. Բառամիջում *տ-ն* դառնում է նույնպես *դ.* օրինակ՝ ուտել *>Ջթ. ուդիլ, Հճ. ուդել,* օտար *>Ջթ. ուրօլ,* գատել *>Ջթ. իզադիլ, Ջատիկ >Ջթ. զադիզ, Հճ. զնիզ,* թրատել *>Ջթ. թըըրդիլ* «կոխտել», դատարկ *>Ջթ. դնայ-*



նոգ «եղեգ», գաղտուկ >Ջթ. գնաղոց, գետին >Ջթ. գիղէն, Հճ. գիղին, գլտո-  
րել >Ջթ. գըրըրիլ, գընըրիլ, գօտի >Ջթ. գուղը, Հճ. գուղի, գանգատիլ >Ջթ.  
գանգողը, հոտիլ >Ջթ. հիղիլ, Հճ. հիղել և այլն:

Նույնիսկ խոլ բաղաձայններից հետո լսում ենք թրթունն ղ՝ փոխա-  
նակ տ-ի. ինչպես՝ աստառ >Հճ. ասոթ, աշտարակ >Ջթ. աշդարոց  
«բերդ», առաստաղ >Ջթ. այրսոխ, երախտել >Ջթ. իրիխել «աղաչել»,  
հրեշտակ >Ջթ. հիլիշոց, Հճ. հալիշոց, նստել >Ջթ. նիսող, Հճ. նաաղել,  
լստակ >Ջթ. իսոց, խստոր >Ջթ. սեօխիլ, կշտանալ >Ջթ. գըշդանօլ, Հճ.  
գիշդանօլ և այլն:

§223. տ-ն գտնվելով ն ռնգայինից առաջ՝ Ջեյթունի բարբառում դառ-  
նում է դարձյալ ղ, իսկ Հաճընի բարբառում՝ ն. ինչպես՝ մատանի >Ջթ.  
մաղնը, Հճ. մաննի, գիտ(են)ալ >Ջթ. գիղանօլ, Հճ. գիննօլ, գտանել >Ջթ.  
գօղնօլ, Հճ. գըննել, կարկատել >Ջթ. գայգըղիլ, Հճ. գայգըննել:

Միայն մտանել բառն է, որ թեև Սվեդիայի (Մուսա լեռան) բարբառում  
լինում է մննիլ, բայց Կիլիկիայի բարբառում տալիս է Ջթ. մօղնուլ, Հճ. մաղ-  
նել:

Խրտչիլ բայը, որ այլուր լինում է խրտնիլ, այստեղ լինում է խրտիլ  
>Ջթ. խօողօլ, Հճ. խաղօլ, ուստի չի ներկայացնում –տն– հնչյունախումբը:

Կարօտիլ բայը, որ այլուր լինում է կարօտնալ, այստեղ տալիս է Ջթ.  
գարընօլ կամ գայընօլ, իսկ Հճ. գայըղնօլ. օրինակ՝ Ջթ. գայըցիլ իմ «կարո-  
տել եմ»:

§224. Երբ տ-ն գտնվում է ղ-ից առաջ, թեև Ջեյթունի բարբառում  
մնում է, բայց Հաճընի բարբառում վերանում է: Իսկ եթե այս տ-ից առաջ  
կա ն ռնգայինը, նույնպես ընկնում է Հաճընի բարբառում, թեև Ջեյթունի  
բարբառում մնում է: Եղած օրինակները հետևյալներն են. լիտր >Ջթ. լաղ-  
ոը, Հճ. լիթ, կտրել >Ջթ. գըրոթիլ, Հճ. գալթել (որ է թե՛ «կտրել» և թե՛ կտրել),  
ընտրել >Ջթ. հընդոթիլ, Հճ. հալթել, ծանր >Ջթ. ձօնըր, ձօնդըր, Հճ. ձօր, ձօրը,  
սանտր >Ջթ. սձնդոը, Հճ. սօր, սանտրոիլ >Հճ. սարվել, սիմիտր >Ջթ. սի-  
միմոը, Հճ. սիմիթ, մանր >Ջթ. մօնդոը, Հճ. ..., պատառել >Ջթ. բաղոթիլ «գո-  
ղանալ, կողոպտել», Հճ. ..., տատրակ >Ջթ. դաղոց, Հճ. ..., պատրոյգ  
>Ջթ. բաղոըր, Հճ. ..., պատրոյս >Ջթ. բաղոըս, Հճ. ..., կտրիճ >Ջթ. գըրոաջ,  
Հճ. ....:

Նոր ձև ստանալով՝ այս հնչյունափոխության չեն ենթարկվում շատ-  
րուան >Հճ. շալալօսն փատրիարք >Ջթ. բաղոթիօյր, Հճ. բաղիօյր:

Բառի վերջում գտնվող տք-ն հնչվում է գրեթե թք. ինչպես՝ հաաաթ  
>Ջթ. հալօթք, պետք >Ջթ. բեթք, ոտք >Ջթ. իղվե, Հճ. վոդք, միտք >Ջթ.  
մըդք:

տս հնչյունախմբի մասին տե՛ս §218:

շտի հնչյունախմբի մասին տե՛ս §198:

§225. Բառավերջում գտնվող տ-ն դառնում է դարձյալ թրթունն ղ. նույ-  
նիսկ խոլ բաղաձայններից հետո լավում է թրթունն. ինչպես՝ գետ >Հճ.  
գեթ, խոտ >Ջթ. խիդ, Հճ. խոդ, խրատ >Ջթ. խօյոթ, Հճ. խիյոթ, շատ >Ջթ.,  
Հճ. շօդ, կուտ >Ջթ., Հճ. գուդ, կարկուտ >Ջթ., Հճ. գայգուդ, լակուտ >Ջթ. լա-  
գիդ, Հճ. լագոդ, սիրտ >Ջթ. սըր, Հճ. սիդ, ծիրտ >Ջթ. ձայդ, Հճ. ձիդ, արտ  
>Ջթ., Հճ. օյդ, աղտ >Ջթ., Հճ. օդդ, ուղտ >Ջթ. ուդդ, բախտ >Ջթ. բեօխդ,  
հաստ >Ջթ., Հճ. հօսդ և այլն:

## Բ

§226. Արդեն խոսել ենք ղ հնչյունի արտաբերման մասին վերը՝ §7 և  
§210. թե՛ Ջեյթունում և թե՛ Հաճընում ղ-ն դառնում է յ, իսկ ղ-ն դառնում է  
Հաճընում ղ, Ջեյթունում՝ ո: Այս հնչյունափոխությունը հատուկ է ոչ միայն  
հայերեն, այլև թուրքերեն բառերին:

Այստեղ պիտի ավելացնենք հետևյալը: Հայտնի է, որ գանազան բար-  
բառներում երբեմն ղ բաղաձայնը դառնում է ո՝ իմաստի ուժգնության հա-  
մար: Նույն երևույթը կա նաև Կիլիկիայի բարբառում և որոշ բառեր, ան-  
շուշտ, նախապես ստանալով ո, դարձել են այստեղ Ջթ. և Հճ. ո:

Կան բառեր էլ, որ անկախ այս պայմանից ստացել են ո:

Ստորև հավաքում ենք այս կարգի բառերը.

անարատ	>Ջթ. անարոդ (Հճ. անայոթ)
անդրանիկ	>Ջթ. անդրանիգ
ապարանջան	>Ջթ. արուջօն, Հճ. ալալոջոն
արճիճ	>Ջթ. էոջիջ
արջ	>Ջթ. աոջ՝ Հճ. աոջ՝
դադարիլ	>Ջթ. դադիլ «դադարել», Հճ. դաճիլ «հոգնել»
երեսուն	>Ջթ. եոսուն, Հճ. երսուն

գօրութիւն	>Ջթ. գօրութիւն
ընտրել	>Ջթ. հիճնդիլ, Հճ. հաւրել
խանգարիլ	>Ջթ. խանդողը (գույնը փչանալ)
խարակել	>Ջթ. խառգիլ
խնդիրք	>Ջթ. խընդիրք
խնդրել	>Ջթ. խընդիրիլ
խոր	>Ջթ. խուռու (Հճ. խուլու)
խորդալ	>Ջթ. խըրդադիլ, Հճ. խըրդադել
խորթ	>Ջթ. խէժթ (Հճ. խոյթ)
խրտնիլ	>Ջթ. խօռոյլ, Հճ. խաւրոյլ
խուրձն	>Հճ. խուրց
խրթիւն	>Ջթ. խրթիւն, Հճ. խրթիւն
ծարաւ	>Ջթ. ձէօրէօլ, բայց ավելի <i>անջընդիւն</i> (Հճ. ձէյէլ)
ծոծորակ	>(Ջթ. ձիձիյօգ), Հճ. ձիրօգ
կատար «աքլորի»	>Հճ. գադօր
կտրիճ	>Ջթ. գըդոաջ
կտրել, կտրել	>Ջթ. գըդոհիլ, Հճ. գաւրել
համարել	>(Ջթ. համիլ), Հճ. համրել
ձագար	>Ջթ. ձագգոնր
ճախարակ	>Ջթ. ջըխոաւք
մարսել	>(Ջթ. մայսիլ), Հճ. մարսել
մրջիւն	>Ջթ. մօռճօմ, Հճ. մաւրջիմ
ճախիր	>Ջթ. ճախրո
ճարօտ	>Ջթ. ճարօտ
շատրուան	>Ջթ. շադրուփօն, Հճ. շաւրաւրփօն
որիզ	>Ջթ. օռուզ, Հճ. աւրուզ
պատրիարք	>Ջթ. բադրիյօք, բադրիյօք, Հճ. բադրիյօք
սպրդիլ	>Ջթ. սըփըդիլ, Հճ. սաւրաւրդիլ
վարագոյր	>Ջթ. վառագօլ, վառագօր
փարչ	>Հճ. փաւրչ
փշրել	>(Ջթ. փըշըլիլ), Հճ. փաւրշել
քարաթոթոշ	>Ջթ. քաւրթէօշ, Հճ. քարթէշ:

§227. Երկու բարբառներն էլ առանձին վերաբերմունք են ցույց տալիս բաղաձայնին հաջորդող վերջնահնչյուն *ր*-ի նկատմամբ. ահա եղած օրինակները, որոնց մեջ ընդհանրապես *ր*-ն դարձել է *ռ*.

բարձր	>Ջթ. բօնձիւր, Հճ. բօրի
թանձր	>Ջթ. թօնձոք, Հճ. թօր
ծանր	>Ջթ. ձօնդոք, Հճ. ձօր, ձօրը
մանր	>Ջթ. մօնդոք
սիմիճոր	>Ջթ. սիմիճոք, Հճ. սիմի
սանտր	>Ջթ. սօնդոք, Հճ. սօր
սանտրել	>Ջթ. սանդոհիլ, Հճ. սարվել
լիտր	>Ջթ. լադոք, Հճ. լի
փուխր	>Ջթ. փուխ, Հճ. փուխր
տայգր	>(Ջթ. դաւքըլ), Հճ. դէքը
մեղր	>Ջթ. մեղոք, Հճ. մեղր:

§228. Կան մի քանի բառեր, որոնք տատանվում են երկու ձևերի միջև, այսինքն՝ կան թե՛ *ռ*-ով և թե՛ *ր*-ով, կամ եթե մի բարբառում ունեն *ռ*, մյուսում ունեն *լ* (այսինքն՝ *ր*): Այսպես՝

պախրէ	>Ջթ. բախրէ, բախյէ, Հճ. բախրէ «եգ»
պատրոյզ	>Ջթ. բադրք, բադրք (բամբակի)
պատրոյս	>Ջթ. բադրու, բադրու
մկրատ	>Ջթ. մօգյօտ, մօգրոդ, Հճ. մաւրգօտ, մաւրգօտ
մոռանալ	>Ջթ. մառնօլ, Հճ. մօրնօլ, մօյնօլ
քաղցր	>Ջթ. քօխցըլ, քօխցըր (Հճ. քօխ, քոխց):

Մյուսները տե՛ս առաջին ցանկում, ուր տարբեր ձևերը նշանակված են փակագծով:

**Կանկար** (բույսը) կա երկու ձևով. *ճախ՝ գանգօլ* (սեռ. *գանգըլ, գանգըլ-յա*), երկրորդ՝ *գանգօն* (սեռ. *գանգոք*), որ երևի թե սովորական ձև չէ:

§229. *ր*-ն դառնում է *լ* հետևյալ մի քանի բառերի մեջ.

խրխնչալ	>Ջթ. խօրխօնջոլ, խօլխօնջօլ, խօխօնջօլ, Հճ. խըլըլնջել
վարագոյր	>Ջթ. վառագօլ, վառագօր
փետուր	>(Ջթ. թօրուլ), Հճ. թուրուլ:



>Ձթ., Հճ. ձօփ, ծեփ >Ձթ. ձիփ, ծուփ >Ձթ. ձէօփ, շերեփ >Ձթ. շիփիփ, Հճ. շիլլեփ, չափ >Ձթ., Հճ. չօփ, տուփ >Ձթ. դուփ:

Ք

§239. Բառասկզբում մնում է անփոփոխ *ք*. քսան >Ձթ. քօսոն, քոյր >Ձթ., Հճ. քիյ, քուն >Ձթ., Հճ. քունն, քիթ >Ձթ., Հճ. քիթ, քառասուն >Ձթ. քառսուն, Հճ. քարսուն, քար >Ձթ., Հճ. քօյ և այլն:

Բառամիջում նույնպես մնում է *ք*. ինչպես՝ աղքատ >Ձթ., Հճ. ախքօր, արքան >Ձթ. արքօն, գոքանչ >Ձթ. գոքոչմար, Հճ. իքիչմօյ, թքանել >Ձթ. թօքնօլ, Հճ. թարքնել, կնքապապ «կնքահայր» >Ձթ., Հճ. գնքաքօր, մաքի >Ձթ. մաքի «ոչխար», մաքուր >Ձթ. մաքուր, ներքև >Ձթ. նիքիվ, Հճ. նիքելվ, \*ներքսի >Ձթ. նիքստ «մատան», շաքար >Ձթ. շանքօյ, Հճ. շաքօյ, քրքրել >Հճ. քարքարել և այլն:

Երկու բառ ունենք, որոնց մեջ միջնահնչյունն *ք*-ն դարձել է *գ*. դրանք են՝ կաքալ >Ձթ. գազիվ, գազօվ (բայց Հճ. գաքօվ), հաւաքել >Ձթ. հաֆգիլ (բայց Հճ. հելքել):

Բառավերջում էլ *ք*-ն մնում է անփոփոխ *ք*. ինչպես՝ բուք >Հճ. բուք, թոք >Ձթ. թօքոց «սպիտակ թոք», թուք >Ձթ., Հճ. թուք, թրիք >Ձթ. թրյաք, Հճ. թարյիք, ինքն >Ձթ. ինքը, Հճ. ինք, կնուք >Ձթ. գօնուք, Հճ. գամուք, հերիք >Ձթ. հելիք, շուք >Ձթ., Հճ. շուք, ցամաք >Ձթ., Հճ. ցամօք, փուք >Ձթ. փուք, քաղաք >Ձթ., Հճ. քաղօք:

§240. Այստեղ են պատկանում նաև այն բառերը, որոնք գրաբարից ժառանգություն են մնացել նոր բարբառներից, իբրև անեզական բառեր:

- Սրանք կարելի է բաժանել երեք կարգի.
  - ա) Այն բառերը, որոնք իրենց անեզական լինելու հանգամանքը այնպես են կորցրել, որ բնավ զգալի չեն բարբառում իբրև անեզական. այսպես են, օրինակ՝ առիք «առաստաղ», երեք, յօնք և այլն:
  - բ) Այն բառերը, որոնք իրենց հարակից որևէ բառի կամ բարդության միջոցով զգալ են տալիս, թե իրենց *ք* վերջավորությունը հավելված է. ինչպես՝ երկիք, խելք, հարսանիք և այլն:
  - գ) Այն բառերը, որոնք գրաբարում ընդհանրապես անեզական չեն և այս կամ այն բարբառում դարձել են անեզական՝ ստանալով հավելվածական *ք*. ինչպես՝ բանալիք, կասկարայք, հիմք և այլն:
- Թեև բացարձակ ճշտությամբ չի կարելի կատարել այս բաժանումը, բայց, այնուամենայնիվ, տալիս ենք հետևյալ ցուցակը.

§241. Օրինակներ առաջին խմբի համար.

աղիք	>Ձթ. աղքք,	Հճ. աղիք
աչք	>Ձթ. էչվէ,	Հճ. աչք
առիք	>Հճ. առիք	
արտասուք	>Ձթ. արցունք,	Հճ. արձունք
երեք	>Ձթ. հիք,	Հճ. ժեք
խլիք	>Ձթ. խլիլք,	Հճ. խալլիք
մեք	>Ձթ. միք,	Հճ. մեք
մօրուք	>Ձթ., Հճ. մուրուք	
յօնք	>Ձթ. ղնքվլ	
նաւակատիք	>Ձթ. նավագաղիք,	Հճ. նավագաղիգ
շողիք	>Ձթ. շուղք,	Հճ. շօղիք
պահք	>Ձթ., Հճ. բօք	
վանք	>Ձթ., Հճ. վօնք	
վարտիք	>Ձթ. վայղիք,	Հճ. վայդիք
քիմք	>Ձթ. քիմք:	

Ջարմանալի է, որ տանիք բառի մեջ *ք* վերջավորությունը վերածվելով աշխարհաբարի՝ ստացել է *ք*. դինեյ, Հճ. դէնեյ: Նույն ոճով ցուիք բառն էլ վերածվել է նախ *ք*. \*ցիվիյ «ցիւեր», որից բարդությամբ ցիվիյմայք < \*ցիւերծայրք «քիվ»:

§242. Օրինակներ երկրորդ խմբի համար.

աղօթք	>Ձթ. աղէթք,	Հճ. աղօթք
անէծք	>Ձթ., Հճ. անէցք	
աշխարհք	>Ձթ. աշխօթք,	Հճ. աշխօյ
ապրանք	>Ձթ., Հճ. արբօնք	
դժոխք	>Ձթ. դէօժէօխք,	Հճ. դժոխք
երկիք	>Ձթ. հյգէք,	Հճ. հյգիք
գրոյց	>Ձթ. գրլլցք	
թեզանիք	>Ձթ. թէզնիք	
լուծ	>Ձթ. լօժք	
խելք	>Ձթ. խիլք,	Հճ. խելք
խղճմտանք	>Ձթ. խղղջմղղօնք,	Հճ. խաղղջմղղօնք
կշիռք	>Ձթ. գիշէռք,	Հճ. գիշէռք
կուրծք	>Ձթ., Հճ. գուլձք	
հարսանիք	>Ձթ. հայսնրք,	Հճ. հաշնիք

ճեղք	>Ջթ., Հճ. ջեխք	
մեղք	>Ջթ. մեխք,	Հճ. մեխք
մեշք	>Ջթ., Հճ. մէշք	
նշխարք	>Ջթ. նէշխօյք (նաև նէշխօյ)	
շնորհք	>Ջթ. շէօնհօյք,	Հճ. շննոյք
ոտք	>Ջթ. իղվէ,	Հճ. վոդք
պարտք	>Ջթ., Հճ. բօյդք	
պէտք	>Ջթ. բէթք,	Հճ. բէդք
փորձանք	>Ջթ. փոյցօնք,	Հճ. փօյցօնք
քրտինք	>Ջթ. քըյդանք,	Հճ. քալդինք
օրէնք	>Ջթ. ույէնք:	

§243. Օրինակներ երրորդ խմբի համար.

աճու	>Ջթ. աճուք	
աշուն	>Ջթ. էշօնք,	Հճ. էշունք
աւաչ	>Ջթ. էվէշք «երգ»	
բանալի	>Ջթ. բնալընք,	Հճ. բնալիք
բարեկենդան	>Ջթ., Հճ. բնայգինդօնք	
երկան	>Ջթ., Հճ. իյգօնք	
իմչ իրք	>Ջթ. չի՞րք «ի՞նչ»	
լի	>Ջթ. իլլէնքը	
լինդ	>Ջթ. լընդ, լընդք	
կաթիլ	>Ջթ. գաթըլլ, գաթըլլք	
կասկարայ	>Ջթ. գէսգէրնք	
հիմն	>Ջթ. հիմ, Հճ. հիմք	
մարմին	>Ջթ. մայմիք	
յիշոց	>Ջթ. իշիցք	
ճանապարհ	>Հճ. ջամփօք, Ջթ. ջամփօնք	
պախուրց	>Ջթ. բախույցք	
ջրադաց	>Ջթ. ճադօյք, Հճ. ջնադօյք	
սեամ	>Ջթ. շիմիք	
օրորոց	>Ջթ. իւիցք, Հճ. ույցօք:	

**ՍՂՈՒՄ**

§244. Սղում կոչում ենք այն երևույթը, երբ մի ձայնավոր կրճատվում է բառի միջից: Ամենից ավելի եռավանկ և քառավանկ բառերի միջին

ձայնավորն է, որ սղվում է բառի միջից՝ խճողման դեպքում փոխարինվելով ը ձայնավորով: Ձայնավորների սղման օրենքներն ու օրինակները տե՛ս «Ձայնավորների փոփոխությունը» բաժնում:

Ամենից ուժեղ սղումը կատարվել է Ջթ. *սողըվօնց* «ստավոտուն» բառի մեջ, ուր երկու անգամ ջնջված է *ա* երկբարբառը: Սրանից պակաս է Ջթ. *ստավորուն*, ուր *ա* երկբարբառը կրճատված է միայն մի անգամ.

Սղման անսղվոր ձևեր են՝

եկեղեցի	>Ջթ. գէղիցէ
երեք	>Հճ. ժեք (բայց Ջթ. իյեք)
իմ արևը	>Ջթ. մայիվը «հավատա՛ ինձ»
մինչև որ	>Ջթ. չիւ:

**ԱՆԿՈՒՄ**

§245. Անկում կոչում ենք այն երևույթը, երբ մի բաղաձայն կրճատվում է բառի միջից և նրա փոխարեն մի ուրիշ հնչյուն չի դրվում: Ամենից ավելի *ն* հնչյունն է, որ ընկնում է բառավերջից, ինչպես՝ ակն >Հճ. օգ, ամառն >Ջթ. ամօռ, Հճ. ամոյ, բուռն (ձեռքի) >Ջթ. բօռ, Հճ. բնուր, գառն >Ջթ. գօռ, երկկամն >Ջթ. իյգօս, ձուկն >Ջթ. ձօգ, Հճ. ձուգ և այլն:

Բաղաձայնների անկման ուրիշ օրինակներ են՝

բ.– ակումբ >Ջթ. ագան, ագէօն (հանդիսավոր՝ տոնական օր):

բաղեղ >Ջթ. բնղէղ, նաև աղէղ, աղէղ. գարմանալի կերպով այս երկու բառերը շփոթվում են իրար հետ. այնպես որ *նետ ու աղեղ* բառն էլ դառնում է Ջթ. *նիղբնղէղ, լըմբնղէղ*, որի մեջ հայտնի չէ, թե ինչ է *լըմ*–

գ.– գիշեր >Ջթ. գիշի, Հճ. գիշէյ, բայց նաև Հճ. շիշէգ, որ ձևացած է անշուշտ ցերեկ >Հճ. *ցիլլէգ* բառի նմանությամբ: Ավելի կրճատ է *շէյս* «այս գիշեր», այն է < *գիշէյս*:

գ.– գոքանչ իգական բառը վերածվելով ընդհանուրի՝ Ջեյթունի բարբառում տվել է *գըքըչմնչ* «գոքանչ» և *գըքըչբօբ* «աներ»: Նույնը կա նաև Մարաշի բարբառում, ուր դարձել է *ըգքիչբօբ*: Հաճընի բարբառում, երկու դեպքում էլ *գ*–ն կամ *ըգ*–ը կրճատվելով՝ ստացվել է *իքիչմօյ* «գոքանչ» և *իքիչբօբ* «աներ»: (Այս կրճատումը տեղի է ունեցել արդյոք *գ*–ն նախդի՞ր կարծելով):

գ–ի անկում կա նաև պստիկ բառի մեջ, որ *բգդիկ* ձևից անցնելով՝ դարձել է *բըդիգ*:

լ.– Սովորական է այլ շաղկապի վերջում, որ դառնում է Ջթ. *ալ, ալ, չն*, *ալ, էլ, ա*. հմմտ. Պլ. *ալ, ալ*: Սրա հետ նույնն է Ջթ. *էվա* «դարձյալ, նորից», որ առաջանում է միջ. հյ. *ալլուի* ձևից:

լիներ >Ջթ. *ալլ, ալ*

պլուզ «տղա» >Ջթ. *բլուզ*, որի կոչականն է *բլէ՛զ, լըբլէ՛զ, լըբէ՛զ, բէ՛զ* «ա՛յ տղա, տո՛»:

թ.– քարաթորոշ >Ջթ. *թաթթէօշ*, Հճ. *քարթէշ*, Ատն. *քրթիշ*. բոլորն էլ նշանակում են «մողէս». *թ*–ն ընկել է արագաբանության օրենքով:

խ.– խորիսխ >Հճ. *խէխիզ*:

կ.– կոշկակար >Ջթ. *գուշգոյ* (արագաբանության օրենքով):

կնքապապ «կնքահայր» >Հճ. *գնքաբոբ* կամ *ընքաբոբ*:

հ.– հաւատալ >Ջթ., Հճ. *ավդոլ* (բայց հաւատք >Ջթ. *հավօթք* պահում է *հ* նախահնչյունը):

հնձան >Ջթ. *օնձօն*

դ.– անգղ «ամանի ունկ» >Ջթ. *անգ, էնգ*:

խաղող >Ջթ. *խաղիղ*, բայց և *խաղ*

ծ.– ծոծորակ թեն տալիս է Ջթ. *ձիձիջօգ* կամ *ձիձիջօգ*, բայց Հճ. *ձիրօգ* (արագաբանության օրենքով):

ն.– անանուխ >Ջթ., Հճ. *անուխ*:

ցորենմաղ >Ջթ. *ցիմիղ*

ապարանջան >Ջթ. *աբուռջօն*, Հճ. *աբաբուռջօն*

ինչ իրք >Ջթ. *չիչք* «բան»

մինչև >Ջթ. *չիւյ*, Հճ. *ինչի*

պարոնպապ «կեսրայր» >Հճ. *բայէնթօթ, բայթօթ*

ր.– խարշել >Ջթ. *խէշիլ*, Հճ. *խէշել*

քարշել >Ջթ. *քէշիլ*, Հճ. *քէշել*

թորշումել >Ջթ. *թըշմիլ*

խաւարծիլ >Հճ. *խավիձել* «որթի ծիլ»

խրխնջալ >Ջթ. *խօրխօնջոլ, խօլխօնջօլ, խօխօնջոլ*, Հճ. *խըրընջել*

երբ >Ջթ. *իի*, Հճ. *լէի*

տարգալ >Ջթ. *դօգօլ*, Հճ. *դաձգօլ*

մրսիլ >Ջթ. *մըսալ*, Հճ. *մաւել*

համար բառն ունի երկու իմաստ. առաջին իմաստով (որ է «դաս») վերջնահնչյունն *ր*–ն մնում է (Ջթ. *համօյ*, Հճ. *համօյ*), իսկ երկրորդ իմաստով («վասն, համար») թեն Ջթ. լինում է *համօյ*, բայց Հճ. *համօ*:

շղարշ >Ջթ. *շաւշ*

քաղցր թեն Ջթ. լինում է *քօխցրը*, բայց Հճ. *քիխց, քօցխ* (ուր *ր*–ն ջնջված է):

ջրաղացք բառը տեղափոխությամբ դառնում է *ջաղօրցք*, ապա *ր*–ի կորստով *ջաղօցք*:

պախրցի (իմա՛ *պարխրցի* «Պարխար լեռներից փշող քամի») >Ջթ. *բախրցա*:

շնորհատր >Ջթ. *իշնաիւնիւյ* (Հճ. *շնօյհավոյ*)

կարծ >Ջթ. *գաւծ*

\*ճերքսի «մառան» >Ջթ. *ճիքսէ*

կարենալ >Ջթ. *գանըլ*, Հճ. *գանօլ*

բ.– ճերքս >Ջթ. *ճիխ*, Հճ. *ճէխ*

քսան >Հճ. *սօն* (թեն Ջթ. *քօսօն*)

տ.– Աստուած >Ջթ. *ասթօձ*, Հճ. *ասվօձ*

Աստուծոյ (սեռ.) >Ջթ. *ասուձու*

աստղ >Ջթ. *օսը*, Հճ. *օսի*

կարօտիլ >Ջթ. *գայընօլ, գարընօլ* (իմա՛ կարօտանալ)

կոցել >Ջթ. *գըրցիլ*, որ և *գցիլ*, անցնելով *գաւցցել* ձևից, որ կա չաճընում:

*ն*.– առնել, որ միջին հայերենում արդեն դարձել էր *այնել*, որից էլ առաջացավ Ջթ. *էնիլ*, Հճ. *էնել*:

ճանապարհ բառն իր երկարության պատճառով կրճատվելով դառնում է *ջամիօ*, *ջամիօնք*, Հճ. *ջամիօք*. իսկ *ճանապարհել* (4 վանկ) դառնում է Ջթ. *ջամիիլ* (երկու վանկ):

## ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

§246. Տեղափոխություն ենք կոչում այն երևույթը, երբ բառերի մեջ հետ ու առաջ են տեղափոխվում տառեր կամ վանկեր. այսպես՝

ականց >Ջթ. *անգէջ*, Հճ. *անգաւջ*

աղջիկ >Հճ. *աչգին*, Ջթ. *աշգին*

անկողին >Ջթ. *ուղունգան* «վերմակ»

անօտր >Ջթ. *նէօյար, նէօար*, Հճ. *նէխ*

գաւագան >Ջթ. *գաւգօն*

դատարկ >Ջթ. *դայրօգ* «եղեգ»

լուալ	>Ջթ. <i>վօլօլ</i> , Հճ. <i>վալօլ</i>
խստոր	>Ջթ. <i>սէօխդիյ</i>
ծղրիթ	>Ջթ. <i>ծըլխըթ, ձըրխըթ</i>
կապերս	>Ջթ. <i>գայքիդ, գարքիդ</i>
ճիպո	>Ջթ. <i>ջեքոը, Հճ. ջեքք</i>
մարխ	>Ջթ. <i>մճխոը, Հճ. մճխըը</i>
մկրատ	>Ջթ. <i>մօյգօդ, Հճ. մալյգօդ</i>
շեղք	>Ջթ. <i>խշքիգ</i>
ունկի	>Ջթ. <i>նուգի</i>
պատուհան	>Ջթ. <i>բահադէն</i>
ջրաղացք	>Ջթ. <i>ջնղօյցք</i>
սերկևիլ	>Հճ. <i>սիվուգալիլ</i>
ստեպղին	>Ջթ. <i>խսքիդըն</i>
փետուր	>Ջթ. <i>թօթույ, Հճ. թուրույ</i>
փշրել	>Հճ. <i>քալրշել</i>
քաղցր	>Հճ. <i>քօխց, քօցխ</i>
օգտել «բավել»	>Ջթ. <i>ութգիլ, Հճ. էթգել:</i>

### ՀԱՎԵԼՈՒՄ

§247. Ձայնավորների հավելումներ քիչ են պատահում և հատկապես դրվում են ներդաշնակության համար:

Եղած օրինակները հետևյալներն են.

*ա.*– նօթի >Ջթ. *անըթըլ*, Հճ. *անութի*

*ը.*– ձգել >Ջթ. *ըձգիլ*

*ի.*– գալ >Ջթ. *իգօլ*

գատ >Ջթ., Հճ. *իգօդ*

գատել >Ջթ. *իգադիլ*

ժամ «եկեղեցի» >Ջթ., Հճ. *իժօմ*

լի >Ջթ. *իլլէնըը*

մորթ >Ջթ. *միյթի*

շնորհատր >Ջթ. *իշնաիւնիլիլ*

*ո, ու.*– ոսկր >Հճ. *ուսգույ, Ջթ. հիսգիլ*

*ու.*– խոր >Ջթ. *խուռու, Հճ. խույու*

§248. Բաղաձայններից ամենից ավելի գտնում ենք *ն*, որի օրինակները հետևյալներն են.

ածուխ >Հճ. *անձող*

արմուկն >Ջթ. *արմուկ* (տեղի է ունեցել ոչ թե *կ, ն* բաղաձայնների տեղափոխություն, այլ նախ՝ *ն* բաղաձայնի անկում, ապա անկախաբար *ն* բաղաձայնի հավելում, նախորդ *մ*-ի ազդեցությամբ): Առանց հավելման *արմուկ* ձևը ներկայացնում է Հճ. *այմուգ*:

արտասուք >Ջթ. *արցունք, Հճ. արձունք*

բանալի >Ջթ. *բալընք, Հճ. բալլիք*

երեկոյ >Ջթ. *իյգօն, Հճ. իյիգուն*

մասուր >Հճ. *մանսույ*

մեծ >Ջթ. *միճճ*

մեք >Ջթ. *միճք, Հճ. մենք*

մութ >Ջթ. *մուճք*

շաքար >Ջթ. *շանքօյ* (իրբ թե լիներ *շանքար*). – բյուրեղացած շաքարի մնացեցումը քարի կամ ավազի հետ՝ հատուկ է շատ լեզուների: Երբ հնդիկները առաջին անգամ տեղական ժողովուրդներից ստացան շաքարը (*sakkara*), մնացեցնելով սանս. *çarkara* «խիճ, քարի կտորտանք» բառին, այսպես էլ կոչեցին (ըստ Meillet MSL, 22, 208): Այս կարգին է նաև Ջթ. *շան քարը*:

սեամ >Ջթ. *շիմիճք*

նչալ >Ջթ. *ջէնչիլ*

փափազ >Ջթ. *փափօնք*

նանապարհ >Ջթ. *ջամիօնք:*

§249. Երկրորդ հերթին գալիս է բառավերջի *ք* հավելումը, որի օրինակները տե՛ս *ք* բաղաձայնի հնչյունափոխությունների մեջ:

Ավելի հազվադեպ են՝

*հ.*– ազանիլ >Ջթ. *հագնըլ, Հճ. հագնել*

ալևոր >Ջթ. *հալվիլիլ, Հճ. հալիվոյ*

արբեճալ >Ջթ. *հայքիճօլ*

արօր >Ջթ. *հալէօյ*

ուճղ >Ջթ., Հճ. *հուճղ*

*յ, ռ.*– կողոպուտ >Ջթ. *գուդքույդ* (մեռելի)

մրգաջուր >Ջթ. *մարքարջուր*

սարկաւազ >Ջթ. *սայգավօյք*

մ.– մորենի > Զթ. *մըյմհնէ*

բ.– անտուաղեղ > Զթ. *նիդքնաղեղ*

դ.– ծանր > Զթ. *ձօնդրը*, մանր > Զթ. *մօնդրը*

Բացի սրանից ունենք՝

կկու > Զթ. *գնուգնու*, Հճ. *գնուգնուգ*

ծնծղայ > Զթ. *ձիւծղայք*, Հճ. *ձըւծղայգ*

ուր > Զթ. *յօյ*, Հճ. *յույ*:

§250. Զեյթունի բարբառին հատուկ հետաքրքրական մի ձև է նաև կ բաղաձայնի հավելումը մի խումբ բայերի վրա:

Այսպիսի հավելում գիտի Պոլսի բարբառը միայն մի դեպքում. – *եռայ* բայն ունի երկու իմաստ. «չրի եռայը, եփվելը» և «մարմնի եռայը, մարմաջել, քոր գալ»: Առաջին իմաստով *եռայ*–ը մնում է *եռայ*, իսկ երկրորդ իմաստով դառնում է *գեռայ*, որի մեջ *գ* հավելումը սահմանականի կ մասնիկն է՝ այնպես միացած բառին, որ խոնարհման ժամանակ կրկնվելով՝ լինում է *գը գեռա*, *գը գեռար* «քոր է գալիս, քոր էր գալիս», *գեռաց* «քոր եկավ»:

Նույն բայը գտնում ենք նաև Հճ. *գեթօլ* «քոր գալ» ձևով:

### ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

§251. Կրկնությունը հաճախ նման բաղաձայնների պատահական հանդիպման արդյունք է. այսպես՝ *ան* ժխտականով նման բառից ունենք *աննման* > Զթ. *աննօմօն*, Պլ. *ալլըման* կամ թե փաթաթել բայից *ա* ձայնավորի սղմամբ Պլ. *փաթթել*, որոնց նաև բուն կրկնահնչյունի տպավորություն են թողնում մեզ վրա:

Բուն կրկնականը այն է, երբ բառի մեջ գտնվող մի բաղաձայն կրկնվում է՝ իմաստի աստկություն առաջ բերելու համար: Սրա լավագույն օրինակն է *ամենայն* > Հճ. *ամմէն* բառը, որ գրեթե բոլոր բարբառներում էլ կա:

Այսպիսի մի բառ կարելի է համարել նաև *հիմա*, որ Պոլսում աստկության համար հնչվում է *հիմմա*, այն է «ճիշտ այս բուպեխս» (սովորական ձևն է *հիմա*), իսկ Հճ. ունի *հումմօ* ձևը:

§252. Բայց Հանընի բարբառն ունի նաև բաղաձայնների մի ուրիշ տեսակ կրկնություն, որի մասին խոսել ենք արդեն (§134): Այստեղ դնում ենք այդ կարգի բառերի ցուցակը, Զեյթունի համապատասխան ձևի հետ միասին.

	Հճ.	Զթ.
արեթ	> <i>արթեթ</i>	<i>արիթ</i>
ագափ	> <i>ագգօփ</i>	<i>ագօփ</i>
ագի	> <i>ագգի</i>	<i>ագէ</i>
այգի	> <i>էգգի</i>	<i>էգէ</i>
աջ	> <i>էջջիգ</i>	<i>աջ՛</i>
գլորել	> <i>գնլլնլել</i>	<i>գըլըլի</i>
դագաղ	> <i>դնագղող</i>	
դդում	> <i>դընդդում</i>	<i>դօդօմ</i>
թրիք	> <i>թմթիք</i>	<i>թըլաք</i>
լափել	> <i>լմթթել</i>	
խլինք	> <i>խմլլինք</i>	<i>խըլընք</i>
ծալել	> <i>ծալլել</i>	<i>ծալլի</i>
կթել	> <i>գմթիլ</i>	<i>գըթիլ</i>
կկու	> <i>գնուգնուգ՛</i>	<i>գնուգնու</i>
հայիլ	> <i>հէյել</i>	<i>հէյիլ</i>
հերու	> <i>հիյու</i>	<i>հիյու</i>
հիսել	> <i>հիսսել</i>	<i>հիսիլ</i>
հոգի	> <i>հիգգի</i>	<i>հիգգէ</i>
ձագար	> <i>ձնագար</i>	
ձգտալ	> <i>ձըգգըրդօլ</i>	<i>ձօգօրդօլ</i>
ձգել	> <i>ձնագգել</i>	<i>ըձգիլ</i>
նայթիլ	> <i>ջէդիլ</i>	<i>ջէթիլ</i>
շաբաթ	> <i>շաթթօթ</i>	<i>շաթթօ</i>
շերեփ	> <i>շիյյէփ</i>	<i>շիյիփ</i>
ոջիլ	> <i>իջջիլ</i>	<i>իջէլ</i>
ուլունք	> <i>հմլլու</i>	
պսակ	> <i>բմսսօգ</i>	<i>բօսօգ</i>
սիրել	> <i>սիյլել</i>	<i>սիյիլ</i>
վայթել	> <i>վէդիլ</i>	<i>վէդիլ</i>
տարգալ	> <i>դնագգօլ</i>	<i>դօգօլ</i>
ցերեկ	> <i>ցիյլէգ</i>	<i>ցիյիգ</i>

Սրանցից դուրս պետք է հիշել նաև՝



յիսուն	>Ջթ. <i>խսսօն</i> ,	Հճ. <i>խսուն</i>
վաթսուն	>Ջթ. <i>վաթճօն</i> ,	Հճ. <i>վաճճուն</i>
հրաման	>Ջթ. <i>հրյամմօն</i>	
փտիլ	>Ջթ. <i>փրիդիլ</i> ,	Հճ. <i>փամդիլ</i>
քահանայ	>Ջթ. <i>քահաննօ</i>	

§253. Վերոհիշյալ ցուցակից երևում է, որ՝

1) Հաճընի բարբառի կրկնության այս ձևը հատուկ է միայն *բ, գ, դ, ձ, ջ, ս, լ, յ* բաղաձայնների: Ուրիշ ոչ մի բաղաձայն չի կրկնվում (բացի *փտիլ* բառից):

2) Եթե մի թավ բաղաձայն հարկ լինի կրկնել, կրկնությունը կատարվում է համապատասխան շնչեղ բաղաձայնով: Այսպես ունենք՝

լափել	>Հճ. <i>լամբբել</i>
կթել	>Հճ. <i>գամդդել</i>
ճայթիլ	>Հճ. <i>ջեդդիլ</i>
վայթել	>Հճ. <i>վեդդել</i> :

Հետաքրքրական օրինակ է լաթ բառը, որ Ջեյթունի և Հաճընի բարբառում եզակի լօթ ձևով նշանակում է «քուրջ», իսկ հոգնակի լաթեր ձևով նշանակում է «զգեստ»: Բայց այս *լաթեր* ձևը, որ Ջթ. *լաթիյ* ձևն ունի, դարձել է Հճ. *լադդիլ* և երկուսի մեջ էլ համարվում է եզակի:

3) Վերոհիշյալ 8 բաղաձայններից բոլոր շնչեղ թրթռումները (*բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛*) ամեն դեպքում էլ կրկնվում են. և Հաճընի բարբառում չկա մի բառ, ուր երկու ձայնավորի միջև գտնվի նրանցից մեկը, որ կրկնված չլինի: Բացառություն է միայն դադար բառը, որ դառնում է *դադոյ* (և ոչ *\*դադդոյ*):

4) Այսպես չեն սակայն մյուս երեք բաղաձայնները (*ս, յ, լ*), որոնց կրկնության համար որևէ կանոն չգտա: Այնպես որ թեև վերևում կրկնված օրինակների մեջ ունենք 12 դեպք *ս, յ, լ* բաղաձայններով, բայց դրանց հակառակ ունենք նաև՝

ալևոր	>Հճ. <i>հալիվոյ</i>
ալիւր	>Հճ. <i>էլիլ</i>
հերիւն	>Հճ. <i>հիլիւն</i>
մօրուք	>Հճ. <i>մուլլուք</i>
բորբոսիլ	>Հճ. <i>բմբմասել</i>
խօսիլ	>Հճ. <i>խօսել</i>
լսել	>Հճ. <i>լմսել</i>
ուրախ	>Հճ. <i>ուլօխ</i> :

Նույնիսկ *յիսուն* և *տասն* բառերը, որոնց *ս* հնչյունը ուրիշ բարբառներում կրկնվում է (նույնիսկ Ջթ. *խսսօն*), Հաճընի բարբառում մնում են առանց կրկնության (*խսուն*, *դօսը*):

## ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ

§254. Այս անունով հասկանում են այն երևույթը, որով մի բառ իմաստի տարբերացում ստացած լինելով, արտաքին ձևի մեջ էլ տարբերություն է մտցնում:

Այս երևույթի մի քանի օրինակներ կան արևմտահայ գրականում. այսպես՝

աշակերտ (դպրոցի) – աշկերտ (խանութի)  
 վայելել (հաճույք) – վայլել (սազել, սազական լինել)  
 համարել (ենթադրել) – համրել (հաշվել)  
 Արևելահայ գրականում էլ՝  
 վերացնել (ջնջել) – վերցնել (առնել):

Ջեյթունի բարբառը տարբերակում է մտցրել մի քանի ուրիշ բառերի մեջ, որոնք են՝

թագաւոր «արքա» նշանակությամբ մնում է *թագաւորիւյ* ձևով, որ նաև մի տեսակ խաղողի անուն է, իսկ «նորափեսա» իմաստով՝ սղմամբ դարձել է *թաքվիւյ* կամ նաև *դագվիւյ* (Հճ. *դագգիյ*):

գաւազան «կրոնավորի գավազան» նշանակությամբ մնում է Ջթ. *գաւազօն* ձևով, իսկ «հովվի գավազան» իմաստով դարձել է սղմամբ *գաւզօն* կամ *գաւզօն*:

օծել «ձեռնադրել, մեռոն քսել» նշանակությամբ ստանում է *ուծիլ* ձևը, իսկ «քսել *мазать*» իմաստով ստանում է հնագույն *օծանել* ձևը, որ դարձնում է *ուզնել*:

ուզել բայը սովորական իմաստով լինում է Ջթ. *ուզիլ*, կտր. *ուզիցի*, հրմ. *ուզե՛*, իսկ «փափագել» իմաստով լինում է *ուզանօլ*, կտր. *ուզացո*, հրմ. *ուզացէ՛*:

ուռալ «ուռել, ուռչել», իսկ *ուռուձօլ* «նեղանալ, վշտանալ», որից և *ուռցունիլ* «փչելով և այլն ուռցնել», իսկ *ուռուցունիլ* «վշտացնել»:

բիլիլի «ման գալ, շրջագայել» բայը առաջանում է *բոլորիլ* նախաձևից, ճիշտ այնպես, ինչպես ոլորել > *իլիլ* և խոլորել > *խիլիլ*: Բայց նույնի տարբերակն է *բըլիլի* «փաթաթել», որ այս ձևով (*բըլիլել*) և իմաստով գործածական է նաև պոլսահայ բարբառում:

վարդապետ բառը, ինչպես ամեն տեղ, նույնպես և այստեղ, կրոնական իմաստով լինում է Ջթ. վայդարիդ, իսկ աշխարհական իմաստով վարդապետ ձևը դարձել է բայբիդ:

Ամենից հետաքրքրականն է տաք բառը, որ բարբառիս մեջ ստացել է երեք ձև կամ իմաստ: Առաջինն է «տակը, հատակը, ներքևը», որի համար հատկացվել է *ոօք* ձևը, երկրորդն է «նակնդեղ», որի համար պահվել է *ոօգ* (< տակ) ձևը, իսկ որպեսզի սրանք չշփոթվեն տաք «չերմ» բառի հետ, սրա համար հատկացվել է *շոդ* բառը, որ պահպանվում է ՀՃ. *ճիշտ* շոդ ձևով, իսկ Ջթ. *շիդ* ձևով: (Այս բառը գործածված է միջին հայերենում. Վստկ. 17, Սմբ. պտմ. 70, Տաթև. հարց. 211, իսկ նոր բարբառներից գիտենք Խրբ. շոդ «տաքություն», Սվեդ. *շիդ*, Ասլ. *շեժ* «տաք» և Հնձ. *շեժ* «շատ տաք»):

Վերջին օրինակը ցույց տվեց, որ տարբերակման միջոցներից մեկն էլ բառը ջնջել և նրա տեղ մի ուրիշ հոմանիշ ձև դնելն է: Սրա ամենալավ օրինակն է *հայր* ամենասովորական բառը, որ Ջեյթունի բարբառում վերանալով՝ փոխարինվել է *բօբ* < պապ և դադա < թրք. *dede* բառերով:

Արդարև, *հայր*-ը Ջեյթունի հնչյունաբանական օրենքներով պիտի տար *հւյ*, հմմտ. մայր > *մւյ*, ի վայր > *վւյ*, ի վւյ, ծայր > *ծւյ*: Բայց *հւյ* ձևը, որ ըստ այսմ պիտի նշանակեր «հայր», շարունակ պիտի շփոթվեր *հայ* ազգային անվան հետ, որ նույնպես դառնում է *հւյ*: Քանի որ չէր կարելի ջնջել ազգային անունը, ջնջեցին հազարավոր տարիների սովորական և սիրելի բառը և տեղը դրին *պապ*, նույնիսկ թրք. *dede*:

### ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

§255. Աշխատությանն ընթացքում շատ անգամ առիթ ունեցանք հիշելու ձայնավորների ներդաշնակության օրինակներ, որոնք, սակայն, մասնակի դեպքեր էին, ուստի հարկ ենք համարում տալ այստեղ մի քիչ ավելի ընդհանուր ծանոթություն:

Ձայնավորների ներդաշնակության օրենքը սովորական երևույթ է թուրքական լեզուներում: Նրանցից որոշ չափով ազդվել են մեր բարբառներից մի քանիսը, հատկապես Մարաղայի բարբառը և Ագուլիսի բարբառը (տե՛ս իմ *Քննութ.* Մարաղայի բարբ., 144-147 և *Քննութ.* Ագլ. բարբ., 153-165):

Մենք չենք ուզում կրկնել այստեղ այն բոլորը, ինչ որ ասված է այնտեղ: Ընթերցողը կարող է դիմել նույն աղբյուրներին: Միայն ընդհանուր

հաշվեկշիռ ուզում ենք տալ այստեղ Ջեյթունի բարբառում ձայնավորների ներդաշնակության օրենքի տված արդյունքներին:

Ջեյթունի բարբառում ձայնավորների ներդաշնակության օրինակները կարող ենք հետևյալ ձևով դասավորել.

ա) Կան բառեր, որոնք ծանր են եղել հին հայերենում, Ջեյթունի բարբառում էլ կամ բնավ չեն փոփոխվել և կամ փոխվել են այն ձևով, որ դարձյալ մնացել են ծանր: Այսպես են, օրինակ՝ մածուն > *մաձուն*, մատուր > *մա-սույ*, մատաղ > *մադոդ*, հակառակ > *հագառոգ*, ագռաւ > *ագհոզ* և այլն:

բ) Կան բառեր, որոնք ընդհակառակը թեթև են եղել հին հայերենում, Ջեյթունի բարբառում էլ մնացել են թեթև, կամ բնավ չփոփոխվելու պատճառով և կամ փոփոխվելով այնպես, որ արդյունքը եղել է դարձյալ թեթև: Օրինակ՝ գին > *գինէ*, գիշեր > *գիշի*, գետին > *գիդէն*, սիսեռ > *սիսեռ*:

գ) Կան բառեր, որոնք հին հայերենում ծանր ու թեթևի խառնուրդ են եղել և հնչյունափոխությունն էլ այնպես է ընթացել, որ նրանք մնում են Ջեյթունի բարբառում նույնպիսի խառն դրության մեջ: Օրինակ՝ յիսուն > *իս-սուն*, լուտել > *իուդիլ*, պարծենալ > *բայձիճուլ*, երկաթ > *իյգօթ* և այլն:

դ) Կան բառեր, որոնք հին հայերենում խառն ձայնավորներ են ունեցել, իսկ Ջեյթունի բարբառում վերածվել են ամբողջապես թեթևի: Օրինակ՝ ալիւր > *էլէյ*, արևոր > *հւլվիլի*, աթոռ > *ւթթոռ*, ազոխ > *ւզիլի* և այլն:

ե) Կան բառեր, որոնք հին հայերենում խառն ձայնավորներ են ունեցել, իսկ Ջեյթունի բարբառում վերածվել են ամբողջապես ծանրի: Օրինակ՝ ազանիլ > *հագնըլ*, աղիք > *աղըք*, ամիս > *ամըս*, աղբիւր > *ախբըլ*, հարսանիք > *հայսնըք* և այլն:

զ) Կան բառեր, որոնք հին հայերենում ամբողջապես ծանր են եղել, բայց Ջեյթունի բարբառում դարձել են ամբողջապես թեթև. օրինակ՝ կանաչ > *գէննիչ*, կասկարայ > *գէսգէրւք*, կորկոտ > *գիլգիլ*, ուղղորդ > *իւ-դիլդիլ* և այլն:

է) Կան բառեր, որոնք հին հայերենում ամբողջապես թեթև են եղել, բայց Ջեյթունի բարբառում, ընդհակառակը՝ դարձել են ամբողջապես ծանր. օրինակ՝ հեռի > *իսոռու*, դիպչիլ > *դիքչիլ*, եղին > *աղըք*, երկիլ > *օյլօ-ձուլ*:

Ըստ այսմ՝ բոլոր տեսակի երևույթները կան: Եթե խառն ձևերի մի մասը դառնում է ամբողջապես թեթև կամ ծանր, այդ ինքնին ապացույց է, որ Ջեյթունի բարբառում գոյություն ունի ձայնավորների ներդաշնակության օրենքը: Բայց որովհետև խառն ձևերը կարող են մնալ նաև խառն, ուստի և այդ օրենքը իր կատարելության չի հասել:

Ձայնավորների ներդաշնակությունն բնորոշ օրինակներ են.  
 կաթն > Ջթ. գոթ, բայց գաթիդ «կաթնոտ»  
 ծածկել > Ջթ. ձածգիլ, բայց ծածկոց > ձածգից  
 թաթախել > Ջթ. թաթխիլ և թէթխիլ, որովհետև չէր կարելի ասել թաթ-

խիլ:

Ձայնավորների նույնացման բնորոշ օրինակներ են.  
 մերկ > միյգ, միյգիգ, մերկանալ > մոյգոնոյ  
 մեծաւոր բառն ունի երկու ձև՝ միանալից և միանալից:

Ձայնավորների ներդաշնակություննից բացի կան նաև ձայնավորների  
 նույնացման օրենքը, որի մասին կխոսենք §326:  
 Բնորոշ օրինակներ.  
 յարդանոց > էյդճնից, էոյդճնից  
 ընտրեալ > հընդդըմօն, հօնդոմօն  
 խալիզոն > խէօլիզիւն, հոգնակի խէօլիզնիք փոխանակ խէօլիզնիք:

## Գ ՄԱՍ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§256. Միավանկ բառերի հոգնակին կազմվում է –իյ մասնիկով, որ հա-  
 մապատասխանում է մյուս բարբառների –եր ձևին. օրինակ՝

թուր	>	թույ, թըլիյ
դեղ	>	դէղ, դէղիյ
թուղթ	>	թուխթ, թղթիյ
միս	>	միս, մըսիյ
խոտ	>	խիտ, խուդիյ, խիդիյ
կով	>	գէօվ, գուվիյ
ջուր	>	ջօյ, ջըլիյ
հող	>	խիտ, խուդիյ
տէր	>	դէյ, դիյիյ
գիւղ	>	գէղ, գէղիյ
իւղ	>	էղ, էղիյ
թուփ	>	թուփ, թըլփիյ
թուզ	>	թուզ, թըլզիյ
ոսպ	>	իւսբ, իւսբիյ
յարդ	>	էյդ, իյդիյ:

Այսպես նաև թուրքերենից փոխառյալ բառերը. օրինակ՝

fes «գլխարկ»	>	ֆաւս, ֆէսիյ
buy «գուրջի»	>	բուդ, բուդիյ
reng «գույն»	>	ռաւնգ, ռէնգիյ
leš «դիակ»	>	լաւշ, լէշիյ
qoç «խոյ»	>	դէօշ, դէօշիյ:

Նույնիսկ այնպիսի մի բառ, որ գրաբարում բազմավանկ է, իսկ  
 բարբառում վերածվել է միավանկի, հոգնակիում ստանում է դարձյալ –իյ  
 մասնիկը: Այսպես է խաղող > խաւղ, խէղիյ և նույնիսկ դդում > դճոճօւ, դըդմիյ:

§257. Մեկ և կես վանկանի բառերն էլ, մասն միավանկներից, հոգնակիում ստանում են *-իյ* մասնիկը. ինչպես՝

- մեղր > մեղյը, մեղիյ
- բարձր > բճճնը, բննճիյը
- թանձր > թոճնը, թանճոիյ
- աստղ > օսղ, ասղիյ
- քաղցր > քողցըյ, քաղցիյ:

§258. Այն միավանկ բառերը, որոնց մեջ *ա* ձայնավորը դարձել է *օ* (կամ *ո*), հոգնակի *-իյ* մասնիկը դրվելու դեպքում վերստանում են իրենց *ա* ձայնավորը. այսպես՝

- հաց > հօց, հացիյ
- քար > քօր, քայիյ
- վարդ > վօյդ, վայդիյ
- տանձ > դօնձ, դանձիյ
- կաթն > գօթ, գաթիյ
- աղ > օղ, աղիյ
- մազ > մօզ, մազիյ:

Այսպես են մինչև իսկ թուրքերենից փոխառյալ բառերը. ինչպես՝

- dal > դօլ, դալիյ «ոստեր»
- av > օվ, ավիյ «որսեր»
- qaz > դօզ, դազիյ «սագեր»

մինչև անգամ չայ > չօյ, չայիյ «թեյեր»:

Իսկ այն միավանկ բառերը, որոնց ձայնավորն է եզակիում *ա*, հոգնակիում վերածում են *է-ի*. օրինակ՝

- ճանճ > ջանճը, ջէնճիյ
- մայր > մայ, մէյիյ
- ծայր > ձայ, ձէյիյ
- հայս > հայս, հէսիյ:

§259. Մի քանի միավանկ բառ կա, որոնք գրաբարում ունենալով *ճ* հանգը, հոգնակիում պահում են, որով հոգնակին լինում է *-ճիյ* ձևով. այսպես են՝

- մատն > մօղ, մաղնիյ
- դուռն > դճո, դճոնիյ
- հարսն > հօյս, հայսնիյ

- մուկն > մուգ, մղգնիյ
- լեառն > լէռ, լէռնիյ
- բեռն > բէռ, բէռնիյ
- նունն > նուռ, նըռնիյ

Բացառաբար նաև՝ ծառ > ձօռ, ձառնիյ:

§260. Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է *ք* մասնիկով. օրինակ՝

- մորթ > միյթի, միյթիք
- ագի > ագէ, ագէք
- այգի > էգէ, էգէք
- գինի > գիճէ, գիճէք
- ջորի > ջիյէ, ջիյէք
- մաքի > մաքի, մաքիք
- եկեղեցի > գէղիցէ, գէղիցէք
- լեղի > լէղա, լէղաք,
- արիշ > ալիշէ «սարփինալ», ալիշէք
- բարտի > բնայըն, բնայընք
- գարի > գնայն, գնայնք
- գօտի > գհուղա, գհուղաք
- պախրէ > բախտէ, բախտէք:

Այսպես նաև թուրքերենից փոխառյալ բառերը. ինչպես՝

- xalə «գորգ» > խալը, խալըք
- zavallə «խեղճ» > զավալը, զավալըք
- dişi «էգ» > դիշի, դիշիք
- sürü «խումբ» > սիւիւ, սիւիւք
- gemi «նավ» > գէմի, գէմիք:

§261. Այն բառերը, որոնք Չեյթունի բարբառում վերջանում են *օ(ո)-ով*, որ առաջացել է նախկին *ա* ձայնավորից, հոգնակիում այս *օ* ձայնավորը դարձնում են *է* և սրա վրա էլ ավելացնում են *նի* կամ *նիք* մասնիկը. օրինակ՝

- ակոայ > ակոօ, ակոէնիք
- սատանայ > սադանօ, սադանէնիք
- արբայ > արբօ, արբէնի

բակլայ	>	բնազլօ, բնազլէնի
միջ. հայ. կանդարայ	>	գանդայո «կամորջ», գանդայէնիք
կթղայ	>	գօթղօ
կրեայ	>	գօյյօ «փականք», գըյլէնիք
ճառայ	>	ջառօ, ջէռէնի
շուշմայ	>	շուշմօ, շուշմէնի
չուխայ	>	չուխօ, չուխէնի
սարբինայ	>	սայրինօ, սայրինէնի
վկայ	>	վօգօ
տղայ	>	դօղօ, դէղէնի
քահանայ	>	քահանօ, քահանէնիք:

Այս խմբին են պատկանում նաև բազմաթիվ թուրքերեն բառեր.

ինչպես՝

arabo	>	առաբօ «սայլ», առաբէնի, առաբէնիք
başqa	>	բաշխօ «ուրիշ», բաշխէնիք
qa'la	>	դալօ «բերդ», դալէնիք
mengene	>	մէնգէնօ «մամուլ», մէնգէնիք
zabtiye	>	զաբդիյօ «ոստիկան», զաբդիյէնիք
mayara	>	մաղայօ «քարայր», մաղայէնի, մաղայէնիք
maşa	>	մաշօ «ունելի», մաշէնիք
oda	>	ոդօ «սենյակ», ոդէնիք
buya	>	բուդօ «ցուլ», բուդէնի
çenge	>	չանգո «ծնոտ», չէնգէնի, չէնգէնիք
para	>	փայօ «դրամ», փայէնիք
çorba	>	շուվրօ «ապուր», շուվրէնի
kise	>	քէսա «քսակ», քէսէնի
enişte	>	էնիշթօ «քեռայր», էնիշթէնի
zahre	>	զահրօ «դնդեղեն», զէհրէնի
qaya	>	դայօ «ծայր», դայէնիք
xafiye	>	խաֆիյօ «լրտես», խաֆիյէնիք
yare	>	յայօ «վերք», յայէնի
qahve	>	դայֆօ «սուրճ», դայֆէնի
nusxa	>	մուսխօ «պատետղ», մուսխէնի
kesme	>	քասմօ «խմորեղեն», քասմէնի:

§262. Այս էնի մասնիկը կազմված է հետևյալ ձևով. –*նի*–ն բնականաբար միջին հայերենի –*նի* մասնիկն է = գրաբար –*անի*: Ի՞նչ է է նախաձայնը:

Գիտենք, որ Ջեյթունի բարբառում այ երկբարբառը բազմապատկառների սկզբում դառնում է է (տե՛ս §111). ինչպես՝ այգի >Ջթ. էգէ, այր(իկ) >Ջթ. էյրգ, այրել >Ջթ. էրիլ և այլն: Բառավերջում այ–ը թեև դառնում է օ (տե՛ս §116), օրինակ՝ բակլայ > բնազլօ, եղայ >էղօ, ակոայ > ագոօ), բայց նախորդ վանկերում գտնվող այ–ը նմանապես դառնում է է. ինչպես՝ խայթել >Ջթ. խէթիլ, կայծակն >Ջթ. գէճօգ, քայլել >Ջթ. քէլիլ և այլն (§115): Ըստ այսմ –*էնի* հոգնակերտը ծագում է –*այնի* ձևից և այս էլ բացատրվում է հին հայերեն *ա*–ով վերջացող բառերի այ հնչմամբ: Մինչև այսօր Երևանի բարբառում, բառավերջի այ–ը թեև հնչվում է *ա* (օրինակ՝ տղայ > տղա, երեխայ > էրէխա), բայց հենց որ ընկնում է բաղաձայնի մոտ, դառնում է է. այսպես՝ որոշիչ հոդ ստանալու դեպքում. օրինակ՝ էրէխէն < երախայն, տղէն < տղայն, մինչև իսկ տրամվէն, մաշիգէն, որ է տրամվայն, մաշիգայն՝ ըստ հին հայերենի: Նույնպես հոգնակի կազմելու դեպքում էրէխէք, տրամվէք, մաշիգէք, իբր «երախայք, տրամվայք, մաշիգայք»: Նմանապես Ջեյթունի բարբառում –*այնի* ձևը տվել է –*էնի*, որով շուշմէնի < շուշմայնի և այլն:

§263. Այս կարգի (օ ձայնավորով վերջացող) բառերը կարող են երբեմն էլ ստանալ –*աթ* վերջավորությունը՝ պարզ ձայնավորով վերջացող բառերի նման. այսպես են՝

xazine	>	խազնօ «գանձ», խազնաթ
sille	>	սիլլօ «ապտակ», սիլլաթ
aba	>	աբօ «վերարկու», աթաթ
qərantā	>	խոտանթօ «ընտանիք», խոռլնթաթ

իսկ teneke > թէնէքօ «թիթեղ» բառը դառնում է հոգնակի թէնէքէնի:

Այս –*աթ* վերջավորությունը ծագում է գրաբարի –*այթ* ձևից, ըստ որում վերջնավանկի –*այ*–ը (շեշտի տակ) դառնում է Ջեյթունի բարբառում *ա* (և ոչ է. տե՛ս §114):

§264. *մ* ձայնավորով վերջացող բազմապատկառ բառերը հոգնակիում ստանում են կամ պարզապես *ք* և կամ ավելացնելով *վր* վանկը, ստանում

են –*նա*, –*նաք*, –*նիք* մասնիկները, որոնք հատուկ են բաղաձայնով վերջացող բառերին, ինչպես պիտի տեսնենք քիչ հետո: Այսպես են՝

- մեղու > *մեղու*, *մեղուք*, *մեղվընա*, *մեղվընաք*
- լեզու > *լիզո*, *լիզվըք*, *լըզվընա*, *լըզվընաք*
- առու > *առու*, *առվընա*, *առվընաք*
- ածու > *աձուք*, *աձվընաք*
- կծու > *զօձու*, *զըձվընիք*:

Մրանցից դուրս են մնում՝ թթու > *թօթու*, կկու > *գուգու* և *կատու*, որ վերացել է Ջեյթունի բարբառից, փոխարինվելով *փըսըզ* բառով:

–*ու*–ով վերջացող թուրքերեն բառերն ստանում են սովորական ձևի հոգնակին. օրինակ՝

- havlu > *հավլու* «բակ», *հավլուք*
- quzu > «գառնուկ» *դուզու*, *դուզունի*, *դուզունաք*:

Իսկ *լու* բառը լինելով միավանկ՝ դառնում է *լու* > *լօ*, *լըվի*:

§265. Մարմնի զույգ անդամների անունները, եթե միավանկ են, հոգնակիում ստանում են –*վը* կամ *նա* –*վընը* մասնիկը: Այսպես են՝

- ձեռք > *ձււտ*, *ձըուվընը*, *ծէռքվընա*
- մատն > *մօդ*, *մադվընա*
- ծունկ > *ձուգօ*, *ձընգվընը*, *ձընգվընա*, *ձընգվընաք*
- ծիծ > *ձըձ*, *ձըձվա*, *ձըձվընը*, բայց *նա* *ձըձի*
- ծոց > *ձից*, *ձըցվընը*, բայց *նա* *ձըցվի*, *ձիցվի*, *ձուցի*:

Ջեյթունի բարբառում աչք բառը ջնջվել է (թեև Հճ. մնում է *աչք*) և նրա փոխարեն գործածվում է իբրև եզակի՝ *էչվէ*, որ ուրիշ բարբառների հոգնակի *աչվի* ձևին է համապատասխանում, իսկ այստեղ հոգնակին լինում է *էչվէք*՝ ըստ § 259, կամ *էչվընա* կամ *էչվէնա*:

Մրան նման են *նա* *յօնք*, որ դարձել է եզակի *ընքվա*, *ընքվընը*, հոգնակի *ընքվընը*, *ընքվընա*, և ոտք > *իդվէ*, հօ. *իդվէնա*, *իդվինա* կամ *ուդվընա*, *ուդվունա*:

Անկանոն կերպով *նա* ականջ > *անգէք* բառը, թեև միավանկ չէ, բայց հետևելով նախորդներին՝ դարձել է հոգնակի *անգըջվընա*:

Ուրիշ օրինակներ տե՛ս § 285:

§266. Բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերն առհասարակ ստանում են հոգնակիում –*նի*, –*նը*, –*նա*, –*նը* մասնիկները: Այս բոլորը միևնույն ժառանգում են և առաջանում են միջին հայերենի –*նի* մասնիկից, որ գրաբարի –*անի* (*աւագանի* և այլն) հավաքական մասնիկի սղված ձևն է:

Այս –*նի*, –*նը*, –*նա*, –*նը* մասնիկները հետևում են ներդաշնակության օրենքին. երբ բառի վերջնավանկի ձայնավորն է *ի* կամ *է*, հոգնակիի մասնիկը պահում է –*նի* ձևը. — երբ վերջնավանկի ձայնավորն է *ու*, մասնիկը դառնում է –*նա*. — երբ վերջնավանկի ձայնավորն է *ա*, մասնիկը դառնում է –*նը*. — իսկ երբ վերջնավանկի ձայնավորն է *ը*, մասնիկը դառնում է –*նը* կամ –*նա*:

Այս օրենքն ընդհանուր է թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն բառերի համար. օրինակ՝

§267. Վերջնավանկում *ի* (*նա* և *իւ*) ձայնավոր. հոգնակի –*նի*.

- կորեկ > *գիյիգ*, *գիյիգնի*
- գլգիլ > *գիլգիլ*, *գիլգիլնի*
- բևեկն > *բիբիգ*, *բիբիգնի*
- բադիգնից > «պատուտակ» *բնդիգնիցնի*
- dengiz > «ծով» *դէնգիգնի*
- լակոտ > *լաօիւդ*, *լաօիւդնի*
- տանիք > *դիճէլ*, *դիճիլնի*
- yemiş > «միրգ» *յէմիշ*, *յէմիշնի*
- վզնոց > *վըզնից*, *վըզնիցնի*
- ապրշում > *էօբրիշիւմ*, *էօբրիշիւմնի*
- եզր > *իզիլք*, *իզիլքնի*
- մեղուանոց > *մէղվիւնից*, *մէղվիւնիցնի*
- ոջլոտ > *իջլիւդ*, *իջլիւդնի*
- ակնոց > *աօնից*, *աօնիցնի*
- սալոր > *սալիլ*, *սալիլնի*
- թագաւոր > *թաօթալիլ*, *թաօթալիլնի*
- ոսկր > *իւօգիլ*, *իւօգիլնի*
- փոխանորդ > *փիլիսնիլիւդ*, *փիլիսնիլիւդնի*:

§268. Վերջնավանկում է ձայնավոր. հոգնակի –*նի*.

- ուտելիք > *ուդիլէք*, *ուդիլէքնի*
- böyrek > *բէօյրէք*, *բէօյրէքնի* «մսով խմորեղեն»

խմելիք	> խումիլէք, խումիլէքմի
bezr (արաբ.)	> բիռէյ «սերմ», բիռէյնի
կորկոտ	> գիւյգիւր, գիւյգէդնի
qadeh	> դադէհ «բաժակ», դադէհնի
asker	> էսքայ, էսկէյնի
eyer	> «թամբ» էյայ, էյէյնի
գոքանչ[մայր]	> գըքըչմայ, գըքըչմէյնի
մէկ-այլ	> մէգայլ, միգէյնի
sened	> «մուրհակ» սէնայթ, սէնէթնի
հայելի	> հիլլէ, հիլլէնի:

§269. Վերջնավանկում ու ձայնավոր. հոգնակի – նա.

պտուղ	> բողուղ, բողուղնա
մօրուք	> մուլուք, մուլուքնա
bulyur	> բուլուլ «ձավար», բուլուլնա
սոյսոյ	> սուջուխ «շարոց», սուջուխնա
մաձուն	> մաձուն, մաձուննա
որիզ	> օռուզ, օռուզնա
ապուր	> աքուր, աքուրնա
ճոկուր	> ջօգուր, ջօգուրնա:

Այստեղ է պատկանում նաև՝ կօշիկ > գուշիք, գուշգուրնա.

§270. Վերջնավանկի ձայնավորն է ը. հոգնակի – նի

հալկիթ	> հավգիթ, հավգըթնը
փիսիկ	> «կատու» փիշիկ, փիշիկնը
ոռուպ	> օռուք, ըռքընը
bulğur	> բողուլ, բողուլնը
սնդուկ	> սօնդօգ, սընդօղնը:

§271. Վերջնավանկի ձայնավորն է ը. հոգնակի – նա.

ագուս	> ագոս, ագոսնա
աղբիւր	> ախբիլ, ախբիլնա
աղքատ	> ախքօդ, ախքըդնա
բաղանիք	> բնղնըք, բնղնըքնա
բաղեղ	> բնղէղ, բնղըղնա

բամբակ	> բնմբօգ, բնմբըգնա, բնմբօղնա
բանալիք	> բնալընք, բնալըք, բնալըքնա
վարտիք	> վայրըք, վայրըքնա
եղջիւր	> ախջէյ, ախջըյնա
շապիկ	> շաքըք, շաքօղնա
աւճար	> ավջօյ «լոբի», ավջըյնա
ծաղիկ	> ձաղըգ, ձաղօղնա
ճակատ	> ջագօդ, ջագօղնա
շաքար	> շանքօյ, շանքըյնա
պանիր	> բանըլ, բանըլնա
սնդուկ	> սօնդօգ, սընդօղնա
քաղաք	> քաղօք, քախքընա
բերան	> բիյօն, բիլլընա
մանգաղ	> մանգօդ, մանգըղնա
արծաթ	> այձօթ, այձիթնա
čavdar	> չավդօյ «հաճար», չավդըյնա
qaməš	> դամըշ «եղեգ», դամըշնա
xaber	> խաբօյ «լուր», խաբըյնա
šerbet	> շայթօթ «օշարակ», շայթըթնա
qaraqələcəq	> դարաղըլլըլի «ցորենի տեսակ», դարաղըլլըլինա:

Ծանոթ. — Մրջին բառը, որ դառնում է մօնճօս կամ մօնջօս, հոգնակիում ստանալով – նա մասնիկը՝ դառնում է ոչ թե մրոչըմնա, այլ մրոչընա, ուր մ–ն՝ հաջորդ ոնգայինի հետ կրկնակ չկազմելու համար ընկել է: Այս երևույթը համապատասխանում է ճիշտ այն կանոնին, որով հոգնակիում, մի մասնիկը գործածելու դեպքում, կրկնակ և–երից մեկը վերանում է (տե՛ս §274):

§272. Վերջնավանկի ձայնավորն է ա. հոգնակի – նը.

լոբի	> լըվիյօս, լըվիյասնը
araq	> այօխ «օղի», այախնը
դմակ	> դոմօգ, դմագնը
երկաթ	> իյգօթ, իյգաթնը
աշխարհ	> աշխօյ, աշխայնը
damar	> դամօյ «երակ», դամայնը

tüfeng	> թիֆօնը «հրացան», թիֆանքնը
silah	> սիլօն «զենք», սիլահնը
duzaq	> դուզօխ «թակարդ», դուզախնը
kebab	> քէբօբ «խորոված», քէբաբնը
hisab	> հէսօբ «հաշիվ», հէսաբնը
soqaq	> սուխօխ «փողոց», սուխախնը
qaymaq	> դօյմօխ «սեր», դըյմախնը
կոնակ	> գօռնօգ, գըռնագնը
մկրատ	> մօգյօդ, մըգյադնը:

§273. Բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը կարող են նաև իրենց հոգնակին կազմել –*նիյ* մասնիկով, որ համապատասխանում է գրական լեզվի –*ներ* վերջավորության, այն է՝ *նի+եր*. օրինակ՝

երազ	> իյօզ, իյազնիյ
երես	> իյիս, իյիսնիյ
վարժապետ	> վայժաբիդ, վայժաբիդնիյ
վարդապետ	> վայրճաբիդ, վայրճաբիդնիյ
ոջլոտ	> իւնլիդ, իւնլիդնիյ
աղուէս	> աղվիս, աղվիսնիյ
աշխարհ	> աշխօյ, աշխօյնիյ
լոբի	> լօվլօս, լօվլօսնիյ
փայտատ	> փիդօդ, փիդդանիյ
գդակ	> գձոճօգ, գըդճագնիյ
գիշեր	> գիշիյ, գիշիյնիյ
եզր	> իզիյք, իզիյքնիյ
երիկամն	> իյգօմ, իյգամնիյ
թեզանիք	> թիզնէք, թիզնէքնիյ
մկրատ	> մօգյօդ, մըգյադնիյ
ականջ	> անգէջ, ըզընջնիյ
գագաթն	> գնագձթ, գնագիդնիյ
խանութ	> խանութ, խանութնիյ
հակիթ	> հավգիթ, հավգըթնիյ
նապաստակ	> լափուսդօգ, լափըսդգընիյ
մատնոց	> մմդնիյ, մմդնիյցնիյ
լակոտ	> լմգիդ, լմգիդնիյ
նակատ	> ջագօդ, ջագդընիյ

աղքատ	> ախքօդ, ախքըդնիյ
աշակերտ	> էզգիյդ, էզգիյդնիյ
բորոտ	> բիւյիդ, բիւյիդնիյ
մայրապետ	> մայյաբիդ, մայյաբիդնիյ
պղիճ	> բըդընճ, բըդընճնիյ
տերտեր	> դէյդէյ, դէյդէյնիյ
շապիկ	> շաբըք, շաբըքնիյ
ոսկր	> իւսգիւյ, իւսգիւյնիյ
պլուզ (իկ)	> «տղեկ» բըլըզըգ, բըլըզգընիյ
քուռակ	> քուռօգ, քուռգուճիյ:

Բացառությամբ դրացի >*դըյսացը* բառն էլ, որ ձայնավորով է վերջանում, հոգնակիում լինում է *դըյսացընիյ*. այսպես նաև թուրք. *teneke* «թիթեղ» > *թէնէքէնիյ* (տե՛ս վերը):

*ջրաղաց* բառն ստանալով *ճաղօցք* ձևը, դառնում է հոգնակի *ճախճընիյ* (ց > ճ):

Եղունգ > *օդունգ* բառը *ու* ձայնավորի կրկնությամբ դառնում է հոգնակի *օդունգունիյ*:

§274. Այն բազմավանկ բառերը, որոնք վերջանում են *ն* բաղաձայնով, հոգնակիում թեև ստանում են –*նիյ* մասնիկը, բայց կրկնակ *ն*–երից մեկը ջնջում են: Այսպես՝

անկողին	> ուղունգան, ուղունգանիյ
ցորեան	> ցիյին, ցիյինիյ
մածուն	> մածուն, մածընիյ
օղին «շրեշ խոտը»	> ուղան, ուղանիյ
հօնդօսդօն «եգիպտացորեն»	> հընդըսդանիյ
ստեպղին	> ըսբըդըլն, ըսբըդըլնիյ
չուան	> չուվօն, չուվուճիյ
պատուհան	> բմդիհիին, բմդիհիինիյ
գաւազան	> գնավգօն, գնավզընիյ
գերեզման	> գիյիզմօն, գիյիզմանիյ
գնդան	> գօնդօն, գընդանիյ
իշխան	> իշխօն, իշխանիյ
շուշան	> շուշօն, շուշանիյ
մուրացկան	> մըյսցգօն, մըյսցգընիյ
մանրիկ	> մանդըյգընիյ



ապարանջան	> արուոջօն, արըոջընիյ
խալիզոն	> խէօլիզիւն, խէօլիզիւնիյ
նշան	> նիշօն, նիշանիյ
düman «մշուշ»	> դումօն, դումանիյ
düşmen «թշնամի»	> դուշմօն, դուշմանիյ
kelpetin «աքցան»	> քէլփէթին, քէլփէթինիյ
ayran «մածնաթան»	> էյրօն, էյրընիյ:

Բացառություն են՝

դերձան > դիճօն, դիճաննիյ

բերան > բիյօն, բիյաննիյ:

Այսպես նաև *աման* > հոգնակի *ամըննաք*, որ կտեսնենք §280:

§275. Վերոհիշյալներից դուրս կա նաև *-դւք* մասնիկը, որ մեծ մասամբ գործ է ածվում անձ ցույց տվող բառերի համար. օրինակ՝

ալևոր	> հւլվիւ, հւլվիւյդւք
բարեկամ	> բայ(ի)զօն, բայզըմիւք
աղջիկ	> աշգէն, աշգընդւք
եղբայր	> էխբնի, էխբիդւք, էխբէյդւք
ընկեր	> ընգիյ, ընգիյդւք
Ժամակոչ	> ժամգիւչ, ժամգիւչդւք
պլուզ «մանուկ»	> բօլուզ, բըլըզդւք
կտրիճ	> գըղոըջ, գըղոըջդւք
տէրտէր	> դէյդէյ, դէյդէյդւք
կնիկ	> գընըզ, գընգըդւք
քեռի	> քէռա, քէռիդւք
կնքաբայր	> ընքաբօբ, ընքաբօբդւք
կնքամայր	> ընքէմնի, ընքէմնիդւք
զօթօմ	> խըսըմ «ազգական», խըսըմիւք
asker	> էսքնի «զինվոր», էսքէյդւք
emmi «հորեղբայր»	> էմմի, էմմիդւք:

§276. Մի քանի դեպքեր կան, երբ անշունչ առարկաներն էլ ստանում են *դւք* ձևով հոգնակի. ինչպես՝

պղինձ	> բըղընձ, բըղընձդւք
բուրվառ	> բըրվառ, բըրվըրդւք
խոշոր	> խիշիւ, խիշիւյդւք
շամփուր	> շամփուր, շամփըրդւք
ոռուր	> օռուր, ըռըրդւք
պիծակ	> բիձիզ, բիձիզդւք
սայսզ «շարոց»	> սուջուխ, սուջուխդւք:

§277. Երբ բառը վերջանում է *դ(տ)* բաղաձայնով, *-դւք* մասնիկն ստանալու դեպքում, կրկնակ *դ-*երից մեկը վերանում է: Այսպես ունենք՝

աղքատ > ախքօդ, ախքըրդւք

աշակերտ > էշգիյդ, էշգիյդդւք:

*Ծանոթ.* — Այս *-դւք* մասնիկը ձևացած է գրաբարի *-տի* հավաքական մասնիկից (*մանկտի, ծակտտի, ոսկրտտի*), որի վրա ավելացել է *-ք* - հոգնակերտ մասնիկը, ճիշտ ինչպես *-նի, -նաք, -նւք*:

§278. Բաղաձայնով վերջացող բառերը կարող են իրենց հոգնակին կազմել նաև *-նաք, -նւք, -նըք, -նիք* մասնիկներով, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ նախորդ *-նա, -նը, -նի* մասնիկները + *ք*: Ըստ այսմ՝ սրանք կրկնակի հոգնակի են, ինչպես հենց *-նեք* (որ կազմված է *նի+եք* հոգնակերտ մասնիկներից) և կամ Երևանի բարբառի *-եքք* (օրինակ՝ *տղեքք, աղջկեքք, երեխեքք*), որ կազմված է *եք+ք* մասնիկներից:

Վերոհիշյալ չորս մասնիկները բաշխվում են ձայնավորների ներդաշնակության օրենքների համաձայն: Այսպես՝

§279. *-նիք* մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջնավանկի ձայնավորն է *է, ի* կամ *իւ*. օրինակ՝

աղուէս	> աղվիս, աղվիսնիք
բրիչ	> փիյիչ, փիյիչնիք
գիշեր	> գիշիւ, գիշիւնիք
աշակերտ	> էշգիյդ, էշգիյդնիք
ծածկոց	> ձւձգիւց, ձւձգիւցնիք
մորեխ	> մըլէխ, մըլէխնիք
մեղաւոր	> մէղւնվիւ, մէղւնվիւնիք
ոջլոտ	> իւճիւդ, իւճիւդնիք

ուխտաւոր	> ըխդւմփիւ, ըխդւմփիւնիք
պատկեր	> բադգիյ, բադգիյնիք
ոսկր	> իւագիւ, իւագիւնիք
վարդապետ	> վայդնաբիդ, վայդնաբիդնիք
վարժապետ	> վայժաբիդ, վայժաբիդնիք
վարպետ	> բայբիդ, բայբիդնիք
keleş	> «գեղեցիկ» քէլւն, քէլէշնիք
erkeg	> «արու» էյքւն, էյքէզնիք
legen	> «կոնք» լւնգւն, լէգէննիք
tembel	> «ծուլ» թէմբւլ, թէմբէլնիք
nerjis (արաբ.)	> «նարգիս» նրոջէս, նրոջէսնիք
gayəq	> «նավակ» դայէխ, դայէխնիք
badem	> «նուշ» բադւն, բադէմնիք
կշոշ (միջ. հայ.)	> «հոտոց» գիշիշ, գիշիշնիք:

Սրանց հակառակ ծանր ձայնավոր (*ա, ու*) ունեն հետևյալ երկու բառերը.

նշխար	> նէշխոյ, նէշխայնիք
mektub	> «նամակ» մէքթուր, մէքթուրնիք:

**Ծանոթ.** — խալիզոն > խէօլիզիւն բառը հոգնակիւմ ստանում է — *նիք*, —*նիյ* մասնիկները: Երկուսն էլ սկսում են *ն* բաղաձայնով, որ խալիզոն բառի վերջնահնչյունի հետ կազմում է կրկնակ: Այս դեպքում, երկու *ն*-երից մեկը վերանալով, ստացվում է հոգնակի խէօլիզիւնիյ կամ խէօլիզնիւք (վերջինը փոխանակ խէօլիզիւննիւք):

§280. — *նաք* հոգնակերտ մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջնավանկի ձայնավորն է *ը, ու, օ*. այսպես՝

ադուէս	> ադվիս, ադվըսնաք
արդար	> այդոյ, այդըյնաք
աղբատ	> աղբօդ, աղբըդնաք
արծաթ	> այձօթ, այձըթնաք
բաղեղ	> բնաղէղ, բնաղըղնաք
գաւակ	> գնավօզ, գնավզընաք
աման	> ամօն, ամըննաք
գաւազան	> գնավզօն, գնավզընաք
գոմէշ	> գոմէշ, գոմշունաք

ծաղիկ	> ձաղըզ, ձաղզընաք
թրթուր	> թօյթույ, թօյթույնաք
կախլանկ	> «դուլլ» գախլօնգ, գախլընգնաք
համար	> «դաս» համօյ, համըյնաք
նակատ	> ջագօդ, ջագըդնաք
մանգաղ	> մանգօդ, մանգըդնաք
պղինձ	> բըղընձ, բըղընձնաք
սկեսուր	> օսկօսույ, օսկօսույնաք
շապիկ	> շաբըք, շաբըքնաք
պառաւ	> բառօբ, բառբընաք
մրջին	> մօռջօմ, մօռջօմնաք
čekij	> «մուրճ» չաքույ, չաքույնաք
yaլəq	> «թաշկինակ» աղլէխ, աղլըխնաք
portuqal	> «նարինջ» փըյթախօյ, փըյթախըյնաք:
Այստեղ էլ <i>ն</i> -ի կրկնութեան դեպքում մեկը կորչում է. ինչպես՝	
անկողին	> ուղունկան, ուղունկանաք:

§281. — *նըք* դրվում է այն բառերի վրա, որոնց վերջնավանկի ձայնավորն է *ա*. ինչպես՝

աշխարհ	> աշխօյ, աշխայնըք
փայտատ	> փիդօդ, փիդադնըք
բերան	> բիյօն, բիյաննըք
գդակ	> գձօզ, գըդազնըք
երիկամն	> իյզօմ, իյզամնըք
մկրատ	> մօզօդ, մըզյադնըք
մշակ	> մուշօզ, մըշակնըք
ուրազ	> ույօք, ույաքնըք
qurbān	> «գոհ» դույբան, դույբաննըք
jellad	> «դահին» ջէլլաթ, ջէլլաթնըք
solaq	> «թեզնիք» սըլաքնըք:

§282. — *նւք* մասնիկը դրվում է այն բառերի վրա, որոնց վերջնավանկի ձայնավորն է *ի, իւ, էօ*.

անխելք	> անխիւք, անխիւքնւք
աշակերտ	> էշգիյդ, էշգիյդնւք
բորոտ	> բիւիիդ, բիւիիդնւք

- ուտող > ուղէօղ, ուղէօղնաք
- լակոտ > լաօհուղ, լաօհուղնաք
- ազոխ > աձիխ, աձիխնաք
- աթոռ > աթէօռ, աթէօռնաք
- փոխանորդ > փիխանիյդ, փիխանիյդնաք
- ոսկր>ոսկոր > իսգիւյ, իսգիւյնաք
- մեղուանոց > մէղվիւնից, մէղվիւնիցնաք:

§283. Այն բարդ բառերը, որոնց երկրորդ եզրը միավանկ է, հոգնակիում կարող են ստանալ միավանկներին հատուկ –իյ մասնիկը, կամ երբեմն էլ բազմավանկներին հատուկ –նիյ մասնիկը. ինչպես՝

- մօրաքոյր > մույքիյ, մույքիյիյ
- հօրաքոյր > հույքիյ, հույքիյիյ
- մայրապետ > մայրաբիդ, մայրաբիդնի, մայրաբիդնիյ
- կնքահայր > գնքաբօբ, գնքաբաբիյ
- արդարեղ > այդօյէղ, այդօյէղիյ
- զոքանչ > զըքընչմայ, զըքընչմէյիյ
- սանամայր > սէնէմայ, սէնէմէյիյ
- վարժապետ > վայժաբիդ, վայժաբիդնիյ

դագաղ = լաձփաւղ («դիակի փայտ»), լէշփէդիյ կամ լէշփէդնիյ  
սկետրայր > օսգօսույբօբ, օսգօսույբաբիյ:

§284. Թեև վերևում մենք դրինք զանազան կանոններ հոգնակի կազմության համար, բայց դրանցից հաստատուն է միայն միավանկ բառերի կանոնը և սակավ բացառությամբ նաև ձայնավորով վերջացող բառերի կանոնը: Մնացյալները բացարձակ չեն: Ջեյթունի բարբառում դեռ չի ձևավորված հոգնակի կազմության համար բացարձակ մի կանոն, ինչպես արդի գրականում ունենք, և միևնույն բառը կարող է բազմատեսակ ձևեր ընդունել: Այսպես, օրինակ՝

- աշակերտ > էշգիյդ, էշգիյդնաք, էշգիյդնիք, էշգիյդնիյ, էշգիյդնաք
- աղքատ > ախքօդ, ախքըդնաք, ախքըդնաք, ախքըդնիյ, ախքըդնա, մինչև անգամ՝ ախքիւղնաք
- ոսկր > իսգիւյ, իսգիւյնաք, իսգիւյնիք, իսգիւյնիյ

- շապիկ > շաբըք, շաբըքնաք, շաբըքնա, շաբըքնիյ
- պղինձ > բըղընձ, բըղընձնաք, բըղընձնիյ, բըղընձնաք
- ճակատ > ջագօդ, ջագդընա, ջագդընիյ, ջագդընաք
- լակոտ > լաօհուղ, լաօհուղնի, լաօհուղնիյ, լաօհուղնաք
- աղուէս > աղվիս, աղվիսնիք, աղվիսնիյ, աղվիսնաք
- աշխարհ > աշխօյ, աշխայնըք, աշխայնը, աշխայնիյ
- բերան > բիյօն, բիյաննըք, բիյըննա, բիյաննիյ
- մկրատ > մօգյօդ, մըգյադըք, մըգյադնիյ, մըգյադնաք
- ոչլոտ > իւնիւղ, իւնիւղնիք, իւնիւղնա, իւնիւղնիյ
- վարժապետ > վայժաբիդ, վայժաբիդնիյ, վայժաբիդնիք, վայժաբիդնա
- քուտակ > քուոօգ, քուոգունաք, քուոգունի, քուոգունիյ, քուոգունիք:

Ես մեջ բերեցի միայն այն բառերը, որոնք մինչև երեք ձև հոգնակի ունեն, իսկ երկու ձև միայն ունեցող բառերը շատ ավելի են: Նույնիսկ ձայնավորով վերջացող մի բառ կարող է ստանալ հոգնակիում –նի, ինչպես՝ հալի > հիլլէ, հիլլէնի:

#### Անկանոն հոգնակիներ

§285. Այս բոլորից դուրս Ջեյթունի բարբառում կան հետևյալ բացառիկ ձևով հոգնակիները.

- մարդ > մօյդ, մայդըք
- ձի > ձի, ծի, ծիստանք, ձիստանք
- էշ > էշ, իշվիք
- այծ > աձ, էձվաք
- շուն > շուն, շընվըք
- տուն > դուն, դընվաք, դընվըք
- գետին > գիդէն, գիդէնք
- քոյր > քիյ, քըվըդնաք
- տեղի > դեդ, դեդվանք, դեդվընը
- փրսըգ «կատու», հոգ. փրսգըվընըք:

Անկանոն հոգնակիների մի ուրիշ շարք են կազմում այն բառերը, որոնք կազմվում են –էք մասնիկով. ինչպես՝

- քաղաք > քաղօք, քախքէք

գետիճ > գիդէճ, գիդճէք  
 դանակ > դանօզ, դանօզէք  
 տղայ > դօդօ, դէդօք:

Ունենք վերջապես՝ պոկունք «շրթունքներ» > *քիռզընիք*, որ առաջանում է *պոկընիք* ձևից, ուր հավաքված են երեք հոգնակի մասնիկների՝ *նի, եր, ք*:

Հետաքրքրական են լաթ, բէխ և կոպ բառերը Ջեյթունի բարբառում:

Լաթ բառը «շորի կտոր» իմաստով, իբրև միավանկ բառ, հոգնակիում լինում է *լաթիյ*: Բայց *լաթիյ* նշանակում է նաև «զգեստ». այս իմաստով *լաթիյ* բառը համարվում է եզակի և նրա հոգնակին լինում է *լաթիյնէք* «զգեստներ»:

Սրա մասն է նաև բէխ II բէղ, որ չի գործածվում եզակի ձևով, այլ միշտ հոգնակի *բէխիյ* ձևով, ըստ որում բէխը երկու բաժանմունք ունի և ինքնին անեզական է: Բայց երբ հարկ է լինում մի քանի մարդկանց բէխերի մասին խոսել, հոգնակին լինում է *բէխիյնաք, բէխիյնիք* կամ *բէխիյդաք, բէխիյնի*:

Նույնն է նաև կոպ բառը, որ զույգ լինելու պատճառով ասվում է *գիքիյքնի* և նշանակում է մի մարդու մի աչքի կոպը. հոգնակին լինում է *գիքիյքնիյ, գիքիյքնի*:

Տե՛ս նաև վերևում, §265:

### ՀՈԼՈՎՆԵՐ

§287. Կը ճյուղի բոլոր բարբառների մասն Կիլիկիայի բարբառն էլ ունի 6 հոլով՝ թե՛ եզակի և թե՛ հոգնակի. դրանք են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Պակասում է ներգոյականը:

Սրանց գործածության մեջ պիտի նկատել, որ՝

1) Ուղղականը գործածվում է նաև իբրև կոչական:

2) Հայցականը թե՛ որոշյալ և թե՛ անորոշ, թե՛ շնչավոր և թե՛ անշունչ առարկաների համար նույն է ուղղականի հետ: Օրինակ՝ *Իմ քիյը դիսօ* «Իմ քրոջը տեսա». *Օսօ գէօլը բիդի գիճիմ* «Այս կովը պիտի գնեմ». *Օսօ մաքիճ գէճիճք քիյթիճք* «Այս ոչխարը կտրենք մորթենք»:

3) Տրականը թե՛ որոշյալ և թե՛ անորոշ նույնն է սեռականի հետ:

4) Հայցականը գործածվում է նաև իբր ներգոյական և նախդրիվ հայցական: Օրինակ՝ *գիշիյնիյը խանութը գօ գիճօ*. *Ամեճն էօյ խանութ գօյթօ*. *Էճէճ շօդ խան գօ* (այգում շատ խաղող կա). *Էճէճ իյթօմ, դում դառնօմ*:

### ՀՈԼՈՎՈՒՄ

§288. Ջեյթունի բարբառում գոյականները, ինչպես նաև գոյականաբար առնված ածականները ունեն 7 հոլովում՝ հետևյալ ձևով.

#### Առաջին հոլովում

Առաջին հոլովման վերջավորություններն են ուրիշ բարբառներում սեռ.—տր. —ի, բց. է, գրծ. —ոյ: Ջեյթունի բարբառում, ձայնավորների ներդաշնակության օրենքների համաձայն, առաջին հոլովումը ստանում է հինգ ձև, որոնց համար օրինակ ենք վերցնում հաց > *հօց*, խոփ > *խիւփ* և խօսք > *խէօսք* բառերը:

	Ա ձև	Բ ձև	Գ ձև	Դ ձև	Ե ձև
ՈՒ.Հ.	<i>հօց</i>	<i>խիւփ</i>	<i>խէօսք</i>	<i>իճգէգ</i>	<i>անձիվ</i>
Ս.Տ.	<i>հացը</i>	<i>խիւփի, խիփի</i>	<i>խէօսքա</i>	<i>ունգուզը</i>	<i>անձիվէ</i>
Բ.	<i>հացե</i>	<i>խիփե</i>	<i>խէօսքե</i>	<i>ունգուգէ</i>	<i>անձիվէ</i>
Գ.	<i>հացէօլ</i>	<i>խիւփէօլ</i>	<i>խէօսքէօլ</i>	<i>ունգուգէօլ</i>	<i>անձիվէօլ</i>

Հոգնակիում հինգն էլ միատեսակ և կանոնավոր ձևով հոլովվում են այսպես՝

	Ա ձև	Բ ձև	Գ ձև	Դ ձև	Ե ձև
ՈՒ.Հ.	<i>հացիյ</i>	<i>խիփիյ</i>	<i>խէօսքիյ</i>	<i>իճգէգիյ</i>	<i>անձիվնիյ</i>
Ս.Տ.	<i>հացիյու</i>	<i>խիփիյու</i>	<i>խէօսքիյու</i>	<i>իճգէգնիյու</i>	<i>անձիվնիյու</i>
Բ.	<i>հացիյե</i>	<i>խիփիյե</i>	<i>խէօսքիյե</i>	<i>իճգէգնիյե</i>	<i>անձիվնիյե</i>
Գ.	<i>հացիյէօլ</i>	<i>խիփիյէօլ</i>	<i>խէօսքիյէօլ</i>	<i>իճգէգնիյէօլ</i>	<i>անձիվնիյէօլ</i>

Երբ բառի մեջ կա սղված ձայնավոր (ը), կարող է դրվել թե՛ առաջ և թե՛ հետո. ինչպես՝ *ձաղիգ* < ծաղիկ բառից՝

<i>ձաղըզնիյ</i>	<i>ձաղզընիյ</i>
<i>ձաղըզնիյու</i>	<i>ձաղզընիյու</i>
<i>(ձաղըզնիյե)</i>	<i>ձաղզընիյե</i>
<i>ձաղըզնիյէօլ</i>	<i>ձաղզընիյէօլ</i>

Բայց նաև՝

<i>ձաղըզնա</i>	<i>ձաղզընա</i>
<i>ձաղըզնու</i>	<i>ձաղզընու</i>
<i>ձաղըզնէ</i>	<i>ձաղզընէ</i>
<i>(ձաղըզնէօլ)</i>	<i>ձաղզընէօլ</i>

§289. Առաջին ձևն ունի բազմաթիվ օրինակներ, որոնք չեն կարող ամբողջությամբ մեջ բերել այստեղ. կտամ միայն մի քանի բնորոշ օրինակներ. ինչպես՝

աղ	> օղ, աղը
աղբ	> օխբ, ախբը
ագահ	> ագօհ, ագահը
ամպ	> օմբ, ամբը
անապատ	> անաբօղ, անաբաղը
աշխարհ	> աշխօյ, աշխայը
աստղ	> օսղ, ասղը
արտ	> օյր, այրը
բարձ	> բօյձ, բայձը
գերեզման	> գհյիզմօն, գհյիզմանը
երկաթ	> իյգօթ, իյգաթը
կեռաս	> գէռօս, գէռասը
հարսն	> հօյս, հայսը
շար	> շօյ, շայը «շղարշ»
ուրար	> ույօյ, ույայը

Ժամ «եկեղեցի» բառը, որ ուղղականում լինում է *իծօմ*, սեռականում պահելով նախկին ձևը՝ լինում է *ժամը*։

§290. Կան մի խումբ մեկուկես վանկանի բառեր, որոնք Ջեյթունի բարբառում ուղղականի մեջ ստանալով ը ձայնավորը, սեռականում միայն շեշտն են փոխում. ինչպես՝

սանդր	> սճնդր, սանդրը
մարխ	> մճխը, մախը
մանր	> մճնդր, մանդրը
ծանր	> ձճնդր, ձանդրը
տասն	> դճսը, դասը
քաղցր	> քճխցը, քաղցը

§290. Կան մի խումբ երկվանկ բառեր, որոնք սեռական հոլովում եռավանկի վերածվելով՝ կորցնում են միջնավանկի *ա>օ* ձայնավորը կամ այն վերածվում է *ը-ի*: Օրինակ՝

ապրանք	> աբյօնք, աբյրնքը
բամբակ	> բնամբօգ, բնամբօր

գաւազան	> գնազվօն, գնազվընը
գաւակ	> գնավօգ, գնավգը
երիկամն	> իյգօմ, իյգըմը
մախաթ	> մախօթ, մախթը
կամար	> գամօյ, գամյը
կանկար	> գանգօյ, գանգյը
ճակատ	> ջագօղ, ջագղը
մատաղ	> մաղօղ, մաղղը
պակաս	> բագօս, բագսը
ռեհան	> ըռահօն, սեռ. ըռահանը կամ ըռահնը:

Այն բառերը, որոնք իրենց առաջին վանկում ունեն *օ* ձայնավորը, որ առաջացել է հաջորդ վանկի *օ* (կամ *ո*) ձայնավորների նմանությամբ, սեռականում կորցնում են այդ *օ* ձայնավորը և վերստանում ը հնչյունը: Օրինակ՝

սրահ	> սօյօֆ, սըյաֆը
մկրատ	> մօգյօղ, մրգյաղը
տարգալ	> դօգօյ, դգնալը
դրախտ	> դճյօխտ, դըյախը
զնդան	> զօնդօն, զընդանը
կտավ	> գօղօվ, գըղավը
քսան	> քօսօն, քըսանը
ծրար	> ձօյօյ, ձիյայը (ը դարձած ի):

Սրանց շարքում առանձնապես հետաքրքրական է՝

հնձան	> օնձօն, ընձանը
-------	-----------------

§292. Այն բառերը, որոնք բացառություն կազմելով չեն փոխում իրենց վերջնավանկի *ա* ձայնավորը և պահում են *ա* ձևով, սեռականի մեջ էլ մնում են այդպես: Օրինակ՝

բուրվատ	> բըրվատ, բըրվատը
դար «դաշտ»	> դնայ, դնայը
ծիծեռնակ	> ձիձէռնագ, ձիձէռնագը:

§294. Այս բոլոր օրինակները վերաբերում են այն դեպքին, երբ վերջնավանկի *ա* ձայնավորը դարձել է *օ*: Բայց Ջեյթունի բարբառում կան ուրիշ բառեր էլ, որոնք վերջնավանկում չունեն *ա*, այլ ուրիշ որևէ ձայնավոր և

հետևում են նույնպես Ա հոլովման առաջին ձևին: Տալիս եմ այդ կարգի բառերի ցուցակը.

ապուր	> <i>աբույ, աբյը</i>
ասեղն	> <i>ասեղ, ասղը</i>
գաւիթ	> <i>գնավիթ, գնավթը</i>
դար «դաշտ»	> <i>դնի, դնիք</i>
եղիճ	> <i>աղըջ, աղըջը</i>
ծոց	> <i>ձից, ձուցը, ձիցի</i>
միտք	> <i>մըղք, մըղքը</i>
մածուն	> <i>մածուն, մածնը</i>
շամփուր	> <i>շամփույ, շամփըլը, շամփյը</i>
շողիք	> <i>շուղթք, շուղթքը</i>
պանիր	> <i>բանիչ, բանոչ, բանըյա:</i>

§295. Առաջին հոլովման երկրորդ ձևն է *ի*, որ նույնպես ունի բազմաթիվ օրինակներ: Միջոց տալու համար նրանց, ովքեր կուզենային ուսումնասիրել բոլոր հինգ ձևերի կազմության հնչյունական օրենքները, դնում եմ այստեղ *ի* ձևով հոլովման բոլոր օրինակները.

աբեթ	> <i>աբիթ, աբիթի</i>
ազոխ	> <i>աձիխ, աձիխի</i>
ակիշ	> <i>ազիշ, ազիշի</i>
աղուէս	> <i>աղվիս, աղվիսի</i>
աղօթանոց	> <i>աղիթնից «համրիչ», աղիթնիցի</i>
աղօթք	> <i>աղթօթք, աղթօթքի</i>
աճուկ	> <i>էջուգ, էջուգի</i>
անանուխ	> <i>անուխ, անուխի</i>
անուն	> <i>անուն, անունի</i>
աշակերտ	> <i>էշգիդ, էշգիդի</i>
ապարանջան	> <i>աբուռջօն, աբրուջանի</i>
արև	> <i>այիվ, այիվի</i>
արիւն	> <i>էյիւն, էյիւնի</i>
արճիճ	> <i>էոջիջ, էոջիջի</i>
արմուկն	> <i>արմունգ, արմընգի</i>
արտասուք	> <i>արցունք, արցունքի</i>
արօր	> <i>հնղէօյ, հնղիյի</i>
բաժին	> <i>բէժին, բէժինի</i>

բանալիք	> <i>բնալընք, բնալընքի</i>
բարեկենդան	> <i>բնայգիճոնք, բնայգիճոնքի</i>
բոգ	> <i>բիւգ, բիւգի</i>
բողկ	> <i>բիւղգ, բիւղգի</i>
բոր	> <i>բիւյ, բիւյի, բիւյիւ</i>
բրիչ	> <i>փիյիչ, փիյիչ կամ փըչը</i>
գանձանակ	> <i>գնանձանօգ, գնանձանագի</i>
գղթոր	> <i>գէօխդիւյ, գէօխդիւյի</i>
գոգ	> <i>գիւգ, գիգի, գուգի, գուգա</i>
դանակ	> <i>դնանօգ, դնանգի</i>
դև	> <i>դէվ, դիվի</i>
եզր	> <i>իզիւք, իզիւքի</i>
եպիսկոպոս	> <i>էբիսգիբիւս, էբիսգիբիսի</i>
երեք	> <i>իյիք, իյիքի</i>
երկու	> <i>իյգուք, իյգուքի</i>
թագաւոր	> <i>թնքվիւյ «փեսա», թնքվիյի</i>
թել	> <i>թիլ, թիլի</i>
թեմ	> <i>թիւ, թիւի</i>
թև	> <i>թիվ, թիվի</i>
թեփ	> <i>թիփ, թիփի</i>
թրիք	> <i>թըլաք, թըլքի</i>
ժանգ	> <i>ժննգ, ժէնգի</i>
խաչ	> <i>խնչ, խէչի</i>
խաղող	> <i>խնղ, խէղի (որ և խնղիւղ, խնղիղէ)</i>
խեճեպ	> <i>խէջիք «կճեպ», խէջիքի</i>
խլիճք	> <i>խըլընք, խըլընքի</i>
խնդիրք	> <i>խընդիրք, խնդիրքի</i>
խստոր	> <i>սէօխդիւյ, սէխդիւյի</i>
խոտ	> <i>խիւդ, խիդի</i>
ծաղիկ	> <i>ձաղըգ, ձաղգի «մոխիր»</i>
ծայր	> <i>ձնյ, ձէյի</i>
ծնծղայ	> <i>ձիճնղնք, ձիճնղէքի</i>
ծոց	> <i>ձից, ձիցի կամ ձուցը</i>

ծուճկ	> ձուճգ, ձըճգի
կաթողիկոս	> գևթտողգիւս, գևթտողգիւսի
կայծ	> գևծ, գևծի կամ գէծի
կանաչ	> գէճաւ, գէճէչի, գէճչի
կապերտ	> գայքիդ, գայքիդի
կասկարայ	> գէսգէրաւք, գէսգէրէքի
կարծ	> գաւծ, գէժի
կարճ	> գևայք, գէչքի
կեղև	> գիդիվ, գիդիվի
կեղծաւոր	> գէդձաւիւյ, գէդձաւիւյի
կիր	> գիւ, գիւի
կլայել	> գիլիգ, գիլիգի
կնունք	> գօճունք, գօճունքի
կոթ	> գիւթ, գիւթի
կոծ	> գիւձ, գիւձի
կոծիծ	> գիձիձ, գիձիձի
կոյզ	> գիզ «ողկոյզ», գիզի
կոյր	> գիւ, գիւի
կոպ	> գիբիւք, գիբիւքի
կորեկ	> գիւիգ, գիւիգի
կորկոտ	> գիւգիւդ, գիւգիւդի
կոր «կարիճ»	> գիւ, գիւի
կոճիկ	> գըռքիգ, գըռքիգի
կտոր	> գէտդիւ, գէտդիւի
կրունկ	> գօյունգ, գըլըճգի
կօշիկ	> գուշիք, գուշգի
հայս	> հաւս, հէսի
հանգոյց	> հաւնգիւց, հաւնգիւցի, հաւնգիցի
հարիւր	> հէչիւ, հէչիւի
հերիւն	> հիւիւն, հիւիւնի
հին	> հիւն, հիւնի
հինգ	> հիւնգ, հիւնգի
ձայն	> ձաւն, ձէնի
ճախարակ	> ջըխտաւք, ջըխտէքի
ճգնաւոր	> ջիգնաւիւյ, ջիգնաւիւյի

մարգարէ	> մայգնայէ, մայգնայէի
մարմին	> մայմինք, մայմինքի
միտոն	> մէտոն, մէտոնիւն, մէտոնի, մէտոնիւնի
մէտ	> «կշտքի սլաքը» միդ, միդի
մոմ	> միւմ, միւմ, միմի
նամակ	> նամագ, նամագի
նարգիզ	> նէյգիգ, նէյգիգի
նաւակատիք	> նաւագատիք, նաւագատիքի
նուիկ	> նըվըգ, նըվըգի
շապիկ	> շաբըք, շաբգի
շարժ	> ժաւծ, ժէժի
շերեպ	> շիւիպ, շիւիպի
շիշ	> շիշ, շիշի
շիւ	> շիվ, շիվի
շնորհք	> շէօնիւք, շէօնիւքի
շուք	> շուք, շուքա, շըքի
ոսկր	> իւսգիւ, իւսգիւի
ոսպ	> իւսք, իսքի
ոստ(դ)	> իւսդ, իսդի
չամիչ	> չամըչ, չամչի, չամըչա
չիր	> չիւ, չիւի
չոր	> չիւ, չիւի
չորս	> չիւս, չիւսի
պատիժ	> բադիք, բադիքի
պատիւ	> բադիվ, բադիվի
պատկեր	> բադգիւ, բադգիւի
պատուհան	> բադիւհիւն, բադիւհիւնի
պարս(ատիկ)	> բայսիգ, բայսիգի
պիծակ	> բիձիգ «մոծակ», բիձիգի
պղտոր	> բէտդդիւ, բէտդդիւի
պտուկ (ամանը)	> բօդուգ, բօդուգի
պտուկ (ծծի)	> բօդուգ, բօդուգի
սալ (դարբան)	> սալ, սէլի
սալոր	> սալիւ, սալիւի
սաղմոս	> սալմիւս, սալմիւսի, սալմիցի
սեամ	> շիմինք, շիմինքի

սեաւ	> սիվ, սիվի
սերկևիլ	> սինգիվիլ, սինգիվիլի
սէզ	> սեզ, սիզի
սղոց	> սէօղից, սէղիցի
սոխ	> սիխ, սիխի, սէխա
սունկ	> սունգ, սընգի
վախկոտ	> վախգիտ, վախգիտի
վառեակ	> վատիգ, վատիգի
վարդապետ	> վարդաբիդ, վարդաբիդի
վարժապետ	> վա(յ)ժաբիդ, վա(յ)ժաբիդի
տաշտ	> դաշտ, դէշտի
տերև	> դիշիվ, դիշիվի
տկճոր	> դէօզջիւ, դէզջիւի
տնտես	> դընդիս, դընդիսի
ցորեան	> ցիշին, ցիշինի
փայտ	> փաւ, փէդի
փիլոն	> փիլին, փիլինի
փոխ	> փիխ, փիխի
փոկ	> փիգ, փիգի
փոս	> փիս, փիսի
փոր	> փիւ, փիւի
փութ	> փութ, փլքի
քաղաք	> քաղաք, քախքի
քարաճիկ	> քալքիգ, քալքիգի
քիմք	> քիմք, քիմքի:

§296. Ինչպէս առաջին ձևի մեջ, նույնպէս և այստեղ կան դիտելու արժանի մի քանի կետեր, որոնք մեկ առ մեկ մեջ եմ բերում այստեղ:

Այն բառերը, որոնք վերջնավանկում ունեն ա-ից դարձած օ ձայնավորը, սեռականի մեջ վերստանում են իրենց նախկին ա ինչպէս: Այսպէս են՝

ծակ	> ձօգ, ձագի կամ ձագի
ծոծրակ	> ձիձիօգ, ձիձիյագի, ձիձիյգէ
կայծակ	> գէձօգ, գէձագի
կերպարանք	> գէյբայօնք, գէյբայանքի
կոչնակ	> գուչնօգ, գուչնագի
հակ	> հօգ, հագի

հակառակ	> հագառօգ, հագառագի
ճանկ	> ջօնգ, ջանգի
ճերմակ	> ջիյմօգ, ջիյմագի
մշակ	> մուշօգ, մըշագի
յաւանակ	> ափանօգ, ափանագի
յիշատակ	> հիշադօգ, հիշադագի
նահատակ	> նահադօգ, նահադագի
ուրագ	> ույօք, ույաքի
պահք	> բօք, բաքի
պատանք	> բադօնք, բադանքի
պատարագ	> բադայօք, բադայաքի
պատրիարք	> բադրիյօք, բադրիյաքի
պարկ	> բօյգ, բայգի, բայգը
պարտք	> բօյդք, բայթքի
սարկաւագ	> սայգափօք, սայգափայքի
վախ	> վօխ, վախի
վանք	> վօնք, վանքի
փափագ	> փափօնք, փափանքի
փորձանք	> փույցօնք, փույցանքի
օրինակ	> ույունօգ, ույունագի:

§297. Եթե նախավանկում գտնվի օ ձայնավորը, որ առաջացել է Զեյթունի բարբառում վերջնավանկի օ ձայնավորի նմանողությամբ, սեռականում վերանում է. ինչպէս՝

խրատ	> խօյօդ, ... կամ խըյադը
ծմակ	> ձօմօգ, ձըմագի
կճղակ	> գօջդօգ, գըջդագի
կոնակ	> գօննօգ, գըննագի
կրակ	> գօյօք, գըյաքի
պսակ	> բօսօգ, բըսագի
տղայ	> դօդօ, դըդի

§298. Կան երկվանկ բառեր, որոնք սեռականում ստանալով ի վերջավորությունը՝ վերածվում են եռավանկի և այդ դեպքում կորցնում են իրենց ձայնավորը: Այսպէս նաև եռավանկ բառեր: Օրինակ՝

կոճակ	> գուչօգ, գուչգի
մանուշակ	> մանուշօգ, մանըշգի
նահատակ	> նահադօգ, նահադագի կամ նահադգի



նապաստակ	> լափուսդօգ, լափըսդըգի, լափըսդգի
շալակ	> շալօգ, շալգի
ուրագ	> ույօք, ույաքի, ույքի
պաշար	> բէշօյ, բէշիյի
պատինջան	> բադինջօն, բադինջնի
ջուլիակ	> ջըհալօգ, ջըհալգի
սնտուկ	> սօնդօգ, սընդգի
վաստակ	> վասդօգ, վասդգի
տախտակ	> դախդօգ, դախդգի
տապակ	> դաքօգ, դաքգի
տատրակ	> դադույօգ, դադըյգի
քաղաք	> քադօք, քախքի:

§299. Երբ բառը վերջանում է *օ, ո, ը* ձայնավորներով, սեռականի ի վերջավորության մոտ սրանք վերանում են: Այսպես՝

ակուայ	> ագոօ, ագոի
բակլայ	> բնագլօ, բնագլի
լուսնկայ	> լուսունգօ, լուսունգի
կրեայ	> գօյրո «փականք», գօյրի
ճառայ	> ջառօ «տակառ», ջառի
չուխայ	> չուխո, չուխի
սատանայ	> սադանո, սադանի
սարբինայ	> սայբինօ, սայբինի
սիմինդր	> սիմինդրո, սիմինդրի
տղայ	> դօդօ, դըդի
քահանայ	> քահանօ, քահանի:

Հաջորդների մեջ պիտի գտնենք նույնպես՝

մեղր	> մեղրո, մեղրա
ույթ	> ույթը, ույթա:

§300. Առաջին հոլովման երրորդ ձևի վերջավորությունն է *ա*, որից ունենք հետևյալ օրինակները.

ագուա	> ագոսով, ագոսովա
աթոռ	> մթէօն, մթրոա, մթրոնէ
ադիք	> ադըք, ադըքա
աղջիկ	> ազգին, ազգընա
աղքատ	> ախքօդ, ախքըդա

աման	> ամօն, ամընա
ամբար	> ամբօյ, ամբըյա
անկողիմ	> ուղունգան, ուղունգնա
արծաթ	> այծօթ, այծըթա
բանջար	> բէնջօյ, բէնջըյա
գդակ	> գօդօգ, գըդգա
գոգ	> գիւգ, գուգն, գուգի
գող	> գիւղ, գուղա
գոմէշ	> գումէշ, գումշա
գործ	> գիւծ, գուծա
գուղձն	> գօխձ, գուխձա
գունդ	> գօնդ, գունդա
դեղ	> դէղ, դէղա
դեղձ	> դէղձ, դէղձա
երդումն	> ույդօմ, ույդումա
երեսուն	> էրսուն, էրսունա
թեռ	> թէռ, թէռա
թիթեռն	> թիթէխ, թիթէխա
թոռն	> թէժո, թուռա
իւղ	> էղ, էղա
խէժ	> խէժ, խէժա
խլուրդ	> խօլօյդ, խօլօյդնա, խօլօյդը
խոնջան	> խունջօն, խունջունա, խունջանը
խոշոր	> խիւշիւ, խիւշիւյա, խիւշիւյը
խորան	> խույօն, խույունա, խույանը
խորթ	> խէօթ, խէօթա
խոց	> խիւց, խուցա
խուլ	> խուլ, խուլա
խուլինջ	> խէլէօնջ, խուլունջա
խօսք	> խէօսք, խէօսքա
ծիլ	> ձալ, ձիլա
ծիրս	> ձայդ, ձըյդա
ծղրիթ	> ձըխրիթ, ձըխրիթա
ծոմ	> ձօմ, ձումա

ծիծ	> ձրձ, ձրձա
կաթիլ	> գաթըլք, գաթըլքա
կաղանդ	> գաղունդ, գաղընդա
կաղապար	> գաղթոյ, գաղթըյա
կանկար (բույսը)	> գանգոյ, գանգըյա, գանգըլ
կապալ	> գաթոլ, գաթըլա
կարկուտ	> գայգուդ, գայգուդա
կարմիր	> գայմըլ, գայմըլա
կծու	> գօձու, գօձուվա
կող	> գիւղ, գուղա, գուղը
կողոպուտ	> գիւղբիւյդ, գուղբույդա
կոյս	> գույս, գույսա
կոխ	> գըռաւ, գըռըվա
կտուց	> գօղուց, գօղուցա
կտրիճ	> գըրոաջ, գըրոըջա
հազար	> հազոյ, հազըյա, հազայը
հաւկիթ	> հաւվգիթ, հաւվգըթա
հիւանդ	> հիւվօնդ, հըվընդա, հիւվանդը
հող	> հիւղ, հուղա
հում	> հում, հումա
ձէթ	> ծէթ, ծէթա
ձի	> ձը, ձըվա
ձիւթ	> ձըթ, ձըթա
ձիւն	> ձըն, ձընա
ձոր	> ձիւ, ձիւյա, ձույա
ճեղք	> ճեխք, ճեխքա
մէջ	> մէչ, մէչս, մըչը
միս	> մըս, մըսա
մնջդեխ	> մըջդեխ, մըջդըխա «մժեղ»
մրուր	> մօյու, մօյույա
մրջիւն	> մօճօմ, մըրճըմա
մակարդ	> մագօյթ, մագըլդն
մանգաղ	> մանգօղ, մանգըղա
մարդակ	> մայդօգ, մայդըգա

մացառ	> միցեռ, մըցըռա
մեղր	> մեղոը, մեղոա
մոր «պտուղը»	> մույ, մըյա
մորեխ	> մըլէխ, մըլըխա
մուխ	> մուխ, մըխա
մունջ	> մունջ, մընջա
մուր	> մույ, մըյա
մսուր	> մօսույ, մօսույա
լիշոց	> իշիցք, իշիցքա
լիսուն	> իսսօն, իսսանա
շարական	> շայագօն, շայագնա, շայագընը
շաքար	> շանքօյ, շանքըյա
շողգամ	> շուխգօմ, շուխգումա
շուք	> շուք, շուքա, շըքի
շպլեղ	> շըլլեղ, շըլլեղա
ոջիլ	> իճէլ, ուճյա
ոռ	> էօռ, ուռա, ուռու
որդն	> իւյդ, ույդն
ութ	> ութը, ութա
ուլ	> ուլ, ուլա
ուխտ	> ուխդ, ուխդա
ուղտ	> ուղդ, ուղդա
ունդ	> հունդ, հընդը
չաման	> չամօն, չամընա
չամիչ	> չամիչ, չամըչա, չամչի
չուան	> չուվօն, չուվունա
պանիր	> բանըլ, բանըլա, բանըր
պատրոյս	> բաղոըս, բաղոըսա
պարտէզ	> բայդէզ, բայդըզա
պինդ	> բընդ, բընդա
պճեղն	> բըջեղ, բըջըա
պորտ	> բիւյդ, բույդա
պտուղ	> բօղուղ, բըղդա
ջուր	> ճօյ, ճըյա

ոուպ	> <i>օոուք, ըոքա</i>
սանդուխ	> <i>սանդօխ, սանդրխա</i>
սինձ	> <i>սընձ, սընձա</i>
սիսեռ	> <i>սիսեռ, սըսըռա</i>
սիրտ	> <i>սըրդ, սըրդա</i>
սկեսուր	> <i>օսգօսուր, օսգօսույա</i>
սոխ	> <i>սիւխ, սէխա, սիւխի</i>
սուղ	> <i>սուղ, սըղա</i>
սուտ	> <i>սուդ, սըդա</i>
սուր	> <i>սույ, սըյա</i>
սուրբ	> <i>սույբ, սըյբն</i>
ստեպղին	> <i>ըսքըդղըն, ըսքըդղընա</i>
վաթսուն	> <i>վաթծօն, վաթծընա</i>
վարագոյր	> <i>վառագձօր, վառագըլա</i>
վարդավատ	> <i>վայդիվօյ, վայդըվյա</i>
վիշապ	> <i>ուշօք, ուշքա</i>
տուղտ	> <i>դուդդ, դըդդա</i>
տուփ	> <i>դուփ, դըփա</i>
տօն	> <i>դէօն, դունա</i>
ցեց	> <i>ցաց, ցըցա</i>
ցից	> <i>ցաց, ցըցա</i>
փետուր	> <i>թօքույ, թօքույա</i>
փոխինդ	> <i>փէխանդ, փէխանդա</i>
փրփուր	> <i>փօյփուր, փօյփույա</i>
քաղիթ	> <i>քաղըրդ, քաղըրդա</i>
քառասուն	> <i>քառսուն, քառսունա</i>
քարման	> <i>քայմօն, քայմընա</i>
քէն	> <i>քէն, քէնա</i>
քիթ	> <i>քիթ, քըթա</i>
քող	> <i>քուլ, քուղա</i>
քոս	> <i>քիւս, քիւսա</i>
քուն	> <i>քուն, քընա</i>
քորձ	> <i>քույց, քըցա</i>

օձ	> <i>էօձ, ուձա</i>
օղ	> <i>էօղ, ուղա</i>
օտար	> <i>ուդօյ, ուդույա:</i>

§301. Առաջին հոլովման չորրորդ ձևն է լ, որի օրինակները շատ չեն.  
ձեռքիս տակ ունեմ հետևյալները.

անդունդ	> <i>անդունդ, անդունդը</i>
բուն (ձեռքի)	> <i>բօն, բըրը</i>
բրիչ	> <i>փիյիչ, փիյիչի կամ փըյիչը</i>
դղում	> <i>դօդօմ, դըդմը</i>
դեմ	> <i>դըմ, դըմը</i>
դունչ	> <i>դընչ, դընչը</i>
եղունգ	> <i>օղունգ, ըղընգը</i>
երկիր	> <i>ըյգիյ «օտար», ըյգընը</i>
ընկույզ	> <i>ինգէզ, ունգուզը</i>
թիզ	> <i>թըզ, թըզը</i>
թուզ	> <i>թուզ, թըզը</i>
թութ	> <i>թութ, թըթը</i>
թուղթ	> <i>թուխթ, թըխթը</i>
թուշ	> <i>թուշ, թըշը</i>
թուր	> <i>թուր, թըրը</i>
թուփ	> <i>թուփ, թըփը</i>
թուք	> <i>թուք, թըքը</i>
լինդ	> <i>լինդ, լընդը</i>
լու	> <i>լօ, լըվը</i>
լոյս	> <i>լըս, լըսը</i>
խանութ	> <i>խանութ, խանութը</i>
կով	> <i>գէօվ, գուվը</i>
նկուռ	> <i>ջօգուռ, ջըգուրը</i>
կող	> <i>գիղ, գուղը, գուղա</i>
կուտ	> <i>գուդ, գըդը, գուդը</i>
հարսանիք	> <i>հայսնըք, հայսնըքը</i>

մեղու	> մեղու, մեղվը, բցու. մեղվեւ
մէջ	> մէջ, մըջը, մէջա
մօրուս	> մույօղ, մույղը
նախիր	> նախըր, նախըրը
նարօտ	> նարօղ, նարըղը
շարական	> շայագօն, շայագընը, շայագնա
շեղբ «անկոթ դանակ»	> շեղբ, շեղբը
շեռ	> շեռ, շեռը
ունդ	> հունդ, հընդը, հունդա:

§302. Առաջին հոլովման հիմններող ձևն է է, որին հետևում են ոչ բազմաթիվ բառեր: Ձեռքիս տակ ունեմ միայն 25 բառ, որոնք հետևյալներն են.

աթոռ	> արթե՛ռ, արթրե՛տ, նաև արթրոս
ալևոր	> հալվիւյ, հալվիյէ
ալիւր	> էլէյ, էլիյէ
ախոռ	> ախե՛տ, ախրե՛տ
ականջ	> անգէջ, անգըջէ
աղբիւր	> աղբըյ, ախբըյէ
աղեղ	> աղէղ, աղիղէ
անիծ	> անըձ, անձէ
անձրև	> անձիվ, անձիվէ
գետիմ	> գիղէն, գիղնէ
գորտ	> գօյղօնօգ, գըյղընգե
եղջիւր	> ախջէյ, ախջիյէ
երես	> իյիս, իյիսէ
երէց	> իյէց, իյիցէ
թագաւոր	> թաճաւիւյ, թաճաւիյէ
լեզու	> լիզօ, լիզվէ
խաղող	> խաղիղ, խաղիղէ (որ և խաղ, խէղի)
խոզ	> խիզ, խիզէ
խունկ	> խունգ, խընգե
ծոծրակ	> ձիձիւօգ, ձիձիյգե, որ և ձիձիյագի
յարդ	> էյդ, էյդէ

շոէշ	> շոէշ, շոիշե
շուխտակ	> ջիւխոգ «պաստեղ», ջիւխոգէ
վեգ	> վեգե, վիգէ
քարաթոթոշ	> քաթթօշ, քաթթիշե

§303. Ահա թե ինչպիսի բազմազանություն է ներկայացնում միևնույն *ի* հոլովումը կամ որ նույնն է ասել, ինչպիսի հնչյունական փոփոխություններն է ենթարկվում բառավերջի *ի* ձայնավորը:

Բառավերջի *ի* հնչյունի փոփոխությունները մենք արդեն տեսել ենք §89-ում, որտեղ ասված է, թե այդ փոփոխությունները կապված են ձայնավորների ներդաշնակության օրենքի հետ: Այնտեղ ցույց է տրված 7 պայման, որոնցից գլխավորները ամփոփում ենք այստեղ. ա) Եթե նախորդ վանկի ձայնավորն է *ա*, վերջնահնչյուն *ի*-ն դառնում է *լ* — բ) Եթե ձայնավորն է *ի*, վերջնահնչյուն *ի*-ն դառնում է *է* (որ և *ե*). — գ) Եթե ձայնավորն է *ը* կամ *ու*, *ի*-ն դառնում է *ը* (որ է *ա*):

Առաջին հոլովման հիմն գներից առաջինը (*լի*, համապատասխանում է ճիշտ *ա* պայմանին. — երրորդը և չորրորդ ձևերը (*լի*, *ա*) իրոք որ գտնվում են մեծագույն մասմաբ *ը*, *ը* կամ *ու* ձայնավորներից հետո, ուրեմն համապատասխանում են *գ* պայմանին. — հիմններող ձևը (*է*) 2/3 չափով գտնվում է *ի* ձայնավորից հետո, ուստի համապատասխանում է *բ* պայմանին: Մնում են առաջին ձևի մի տասնյակ բացառությունները և մասնավորապես ամբողջ երկրորդ ձևը իր շուրջ 200 օրինակներով: Այստեղ ձայնավորները բոլոր երանգներն էլ ներկայացնում են (նույնիսկ *ա*), ինչու՞ են ուրեմն ստանում *ի* վերջավորությունը: Ինչու՞ խոզ > խիզ բառը հիմններող ձևով լինում է սեռ. խիզէ, իսկ միևնույն ձևն ունեցող բոզ > բիզ բառը երկրորդ ձևով դառնում է բիզի:

Ամենից ավելի աչքի ընկնող երևույթն այն է, որ մի խումբ բառեր ունեն երկու ձևով սեռական. ինչպես՝ բրիչ > փիլիչ, փիլիչի կամ փլիչը, ծոց > ձից, ձիցի կամ ձուցը և այլն (բոլոր կրկնակ ձևերը նշանակված են վերևի ցանկերում): Կա բառ, որ երեք տեսակ սեռական ունի. այսպես է՝

գոգ > գիւգ, գիգի, գուգի, գուգա:

Այս փոփոխությունների պայմանները մեզ հայտնի չեն:

**Երկրորդ հոլովում**

§304. Հին հայերենի *ոյ* և նոր բարբառների *ու* հոլովումն է, որ Ջեյթունի բարբառում ստացել է մեծ մասամբ *ու*, քիչ անգամ էլ *ո* ձևը: Թե ինչո՞ւ մերթ *ու*, մերթ *ո* վերջավորությունն է դրվում, այս մասին չկարողացա գտնել որևէ կանոն:

Սեռականում – *ու* ստացող բառերը կարելի է բաժանել չորս խմբի.

ա) Ծառ կամ բույս ցույց տվող և եզակի ուղղականում – *ի*–ով վերջացող բառեր. ինչպես՝

բարտի	> բ՛այրը, բ՛այրու
գիհի	> գ՛է, գ՛էհ, գ՛իյու
կաղնի	> գաղ՛նը, գաղ՛նու
դժնիկ, դժնկի	> դ՛ժժնգէնի, դ՛ժժնգէնու
ուռի	> ուռ՛ը, ուռու
կեռասենի	> գէռասի՛նե, գէռիսե, գեռիսի՛նե, սեռ. գէռիսնու
տանձենի	> դանձի՛նե, դանձընու
մաթուզ, մաթզի	> մաթըզա, մաթըզու
մազտաքի	> մէզդէքի, մէզդէքու
սօսի	> սուսա, սուսու
խնկենի	> խընգի՛նէ, խընգընու:

Ջարմանալի է, որ ճապկի > ջաբգի ծառը լինում է սեռ. ջաբգըվա:

բ) –*ի*–ով վերջացող այլ կարգի բառեր. ինչպես՝

աղաւնի	> աղվընը, աղվընու
նօթի	> անըթը, անօթու
գարի	> գ՛այը, գ՛այու
գիւնի	> գ՛իւնէ, գ՛իւնու
գօտի	> գ՛ուդը, գ՛ուդա, գ՛ուդու
դրացի	> դ՛ըյացըն, դ՛ըյացնու
խնամի	> խնամը՛, խնամու
կաշի	> գէշի, գէշու
հայելի	> հիլլէ, հիլլու
մատանի	> մադնը՛, մադնու
մաքի	> մաքի, մաքու
ճճի	> ջիջի, ջիջու

մազտաքի	> մէզդէքի, մէզդէքու
մորթ	> միյթի, միյթու
*ներքսի	> հիքսէ «մատան», հիքսու
սկի	> հագի, հագու
ունկի	> նուգի, նուգու
պարխրցի	> բախըցա, բախըցու
սամի	> սամը, սամու
քեռի	> քեռա, քեռու:

գ) Ուրիշ տեսակ վերջավորություններ ունեցող զանազան բառեր. ինչպես՝

այծ	> ա՛ծ, է՛ծու
առու	> առու, առվու
Աստուած	> ասք՛օձ, ասուձու
էշ	> է՛շ, ի՛շու
կաքաւ	> կագ՛օվ, կագ՛վու (բայց և կագ՛վը)
կէս	> գէս, գիսու
պապ	> բօբ «հայր», բաբու
կնքապապ	> գընքաբօբ, գընքաբաբու
հերու	> հիյու, հիյվու
հով	> հէօվ, հուվու
հոտ	> հիւդ, հուդու
հոր	> հիւյ, հույու
մեծ	> մի՛նձ ու մի՛նձու
մէկ	> մէգ, միգու
ճանապարհ	> ջամիօնը, ջամիու
ճանճ	> ջա՛նջ, ջէնջու
շահ	> շօհ, շահու
ոռ	> էօռ, ուռա կամ ուռու
պախրէ	> բախոէ, բախոու
պառաւ	> բառօբ, բառբու:

դ) Այն բառերը, որոնք սեռականում ստանում են *ո* վերջավորությունը, հետևյալներն են (ոմանք ուղղականում *ի* վերջավորությամբ, ոմանք էլ այլ վերջավորությամբ).

ագի	> ագ՛է, ագ՛հ
ցրդի	> ձըյդը, ձըյդի՛նէ, ձըյդի՛նու
այգի	> էգ՛է, էգ՛հ

- արջ > *մոջ, էոջն*
- լուսնտերևի > *լուսընդորվընէ, լուսընդորվըն*
- գայլ > *գ՛ւլ, գէլո*
- գլուխ > *գ՛օլօխ, գ՛օլխօ*
- եկեղեցի > *գէղիցէ, գէղիցո*
- ձող > *ձիւղ, ձուղո*
- հոգի > *հիգգէ, հուգգն*
- պտղեցի > *բըղղիցէ, «ծաղկազարդ», բըղղիցն*
- մարդ > *մօյդ, մայդո, մայդէն, մայդէօվ*
- ջորի > *ջիլէ, ջիյօ:*

Այս բոլորի հոլովումը կատարվում է հետևյալ ձևով.

**Ու.Հ.** *իսգի մօյդ՛*

**Ս.Տ.** *իսգու մայդո՛*

**Բ.** *իսգե մայդնէ՛*

**Գ.** *իսգէօվ մայդէօվ՛*

Երկրորդ հոլովման մեան է հոլովվում նաև բոլոր բառերի *նա* ձևով հոգնակին. ինչպես՝

*ընքվընա «հոնքեր»*

*ուղվընա «ոտքեր»*

*ձաղզընա, ձաղըգնա «ծաղիկներ»*

սեռ.

*ընքվընու*

*ուղվընու*

*ձաղզընու, ձաղըգնու:*

Նմանապես *փըսըգ* «կատու» բառի հոգնակին, որ լինում է *փըսգըվընըք*, հոլովվում է նույն ձևով.

	<i>փըսըգ</i>	<i>տուն</i>
հոգն.	<i>փըսգըվընըք</i>	<i>դընվըք</i>
սեռ.	<i>փըսգըվընու</i>	<i>դընվընու</i>
բաց.	<i>փըսգըվընէն</i>	<i>դընվընէն</i>
գործ.	<i>փըսգըվընէօվ</i>	<i>դընվընէօվ</i>

Այս –*n* հոլովումն են ցույց տալիս նաև մի խումբ տեղանուններ. ինչպես՝

		սեռ.
Այնթաք	> <i>Անթոք</i>	<i>Անթուքո</i>
Հալեպ	> <i>Հալոք</i>	<i>Հալքո</i>

Բայց սա ոչ թե հին հայերենի ու կամ ոչ հոլովումն է, այլ տեղանունների *այ* հոլովումը, որ ըստ օրինի տվել է ո:

Ուրիշ տեղանուններ հոլովվում են սովորական կարգով. ինչպես՝

Շամ > *Շոմ*, սեռ. *Շամնչ*

### Երրորդ հոլովում

§305. Երրորդ հոլովման օրինակներ են՝

ամառն > *ամօո, ամըոպոն*

ամիս > *ամսըվօն*

գարուն > *գ՛այօն, գ՛այնուվոն, գ՛այնօն*

գիշեր > *գի՛շիյ, գի՛շիյվոն*

երեկոյ > *իյգօն, օյգօվոն*

երէկ > *իյէգ, իյիգվոն*

Զատիկ > *Զաղըգ, զաղզըվոն*

կիրակի > *գիյագի, գիյագվը*

ձմեռն > *ձըմեռ, ձօմոռն, ձօմօուվօն*

շաբաթ > *շաթօթ, շաթիըվօն*

տարի > *դայը, դայվօն*

ցերեկ > *ցիյիգ, ցիյիգվօն (նաև ցիյիգի):*

Սրանք հոլովվում են հետևյալ ձևով.

**Ու.Հ.** *գի՛շիյ*

**Ս.Տ.** *գի՛շիյվոն*

**Բ.** *գի՛շիյվընէ, գի՛շիյէ*

**Գ.** *գի՛շիյէօվ:*

### Չորրորդ հոլովում

§306. Չորրորդ հոլովման հետևում են գրաբարի –*ութիւն* վերջածանցով վերացական բառերը: Այս մասնիկը Զեյթունի բարբառում դառնում է –*ութըն* կամ –*ութան*, որ հոլովման ժամանակ ստանում է սեռ. –*ութօն*, բաց. –*ութօնը*, –*ութիւնէն*, գործ. –*ութօնք* ձևերը: Այսպես՝

**Ու.Հ.** *մի՛նձութան* *մի՛նձությունիյ*

**Ս.Տ.** *մի՛նձութօն* *մի՛նձությունիյու*

**Բ.** *մի՛նձութօնը* *մի՛նձությունիյէ*

**Գ.** *մի՛նձութօնք* *մի՛նձությունիյէօվ*

**Հիմնգերրոյ հոլովում**

§307. Հիմնգերրոյ հոլովման օրինակներ են՝

- այրիկ > էյիգ, էյգօն
- աշուն > էշօնք, էշնօն, էշնըվօն
- գառն > գօն, գօնօն
- դաղձն > դէդձընըգ, դէդձընգօն
- դուն > դօն, դօնօն, դըննէն, դըննէտօլ
- էշ, իշուն > սեն. իշգօն
- թի > թը, թիօն
- լեառն > լէռ, լէռօն
- ձմեռն > ձըմէռ, ձօմնօն (նաև ձօմնօտօն)
- ձուկն > ձօգ, ձօգօն
- մուկն > մուգ, մօգօն (բայց և մըգը)
- նուն > նուն, նոնօն
- պատիկ > բըդիգ, բըդիգօն
- տեղ > դէդ, դէդօն (որ և դէդօց)
- փիսիկ «կատու» > փըսըգ, փօսգօն, փըսգէն, փըսգէտօլ
- փուն > փուն, փոնօն

Այսպես նաև թամուզ «ամառ», սեն. թամգօն (արաբ. tammuz «հուլիս»

ձևից փոխառյալ):

Հոլովումը հետևյալ ձևով է.

- Ու.Հ. փուն
- Ս.Տ. փոնօն
- Բ. փընէն
- Գ. փընէտօլ

Բաց լինում է նաև -մէ. ինչպես՝ ծգէ, ծօգօնմէ «ձկնից», փօսգօնմէ «կատվից»:

Այստեղ ենք դնում նաև կնիկ, որ այլուր լինում է սեն. կնկան, իսկ այստեղ՝

- կնիկ > գընըգ
- գօնգօ, գօնգօն
- գընգէն
- գընգէտօլ:

**Վեցերրոյ հոլովում**

§308. Վեցերրոյ հոլովման մեջ սեն.—տր. հոլովածը կազմվում է ուղղակաճի շեշտված ձայնավորը դարձնելով էօ. իսկ բաց. և գործ. հոլովները կազմվում են սեն.—տր. հոլովածի վրա ավելացնելով ն, էտօլ կամ —մն, —մէտօլ վերջավորությունները: Հոգնակին նույնն է առաջին հոլովման հետ: Այսպես՝

- Ու.Հ. մայ «մայր» մէյիյ
- Ս.Տ. մէօյ մէյիյու
- Բ. մէօյմն, մէյն մէյիյն
- Գ. մէօյմէտօլ, մէյտօլ մէյիյէտօլ

տնկել  
ցանել  
փետել  
փշրել  
փոխել  
փչել  
փոել  
փրկել  
քակել  
քաղել  
քամել  
քարշել  
քերել  
քերթել

> շիճիլ, շիճիցի, շիճ  
> շըջիլ «փսխել», շըջիցի, շըջ  
> շըփիլ, շըփիցի, շըփ  
> իլլիլ, իլլիցի, իլլ  
> չայչայիլ, չայչայիցի, չայչայ  
> բէհիլ, բէհիցի, բէհ  
> բաշղիլ, բաշղիցի, բաշղ  
> բադմիլ, բադմիցի, բադմ  
> բայբիլ, բայբիցի, բայբ  
> բըբըղիլ, բըբըղիցի, բըբըղ  
> ճայդիլ, ճայդիցի, ճայդ  
> սէղմիլ, սէղմիցի, սէղմ  
> սիյիլ, սիյիցի, սիյ  
> ըսպանանիլ, ըսպանանիցի, սպանան  
> վագիլ, վագիցի, վագ  
> վէլիլ, վէլիցի, վէլ  
> վէղիլ, վէղիցի, վէղ  
> վառիլ, վառիցի, վառ  
> վայիլ, վայիցի, վայ  
> վջայիլ, վջայիցի, վջայ  
> դաբգիլ, դաբգիցի, դաբգ  
> դընզիլ, դընզիցի, դընզ  
> ցանիլ, ցանիցի, ցան  
> փիղիլ, փիղիցի, փիղ  
> փըշըլիլ, փըշըլիցի, փըշըլ  
> փէխիլ, փէխիցի, փէխ  
> փըչիլ, փըչիցի, փըչ  
> փըռիլ, փըռիցի, փըռ  
> փըզիլ, փըզիցի, փըզ  
> քագիլ, քագիցի, քագ  
> քաղիլ, քաղիցի, քաղ  
> քամիլ, քամիցի, քամ  
> քէշիլ, քէշիցի, քէշ  
> քիյիլ, քիյիցի, քիյ  
> քիյթիլ, քիյթիցի, քիյթ

- քննել > քննհիլ, քննհիցի, քննեն
- քսել > քսիլ, քսիցի, քսեն
- օծել > ուծիլ, ուծիցի, ուծեն
- օրհնել > ույհնիլ, ույհնիցի, ույհնեն
- որհնել > ուխնիլ, ուխնիցի, ուխնեն
- օրորել > իյիլ, իյիցի, իյեն

§360.

**Ա լծորդություն**  
(Բ տիպար)

բաքնիմ	բաքնը, բաքնի	բաքո
բաքնիս	բաքնըյ, բաքնիյ	բաքոյ
բաքնե	բաքնէլ	բաքով
բաքնիմք	բաքնըմք, բաքնիմք	բաքոմք
բաքնիք	բաքնիք, բաքնըք	բաքոք
բաքնիմ	բաքնըմ, բաքնըմ	բաքոմ

Հրամայական՝ բոք (բաքէլ), բաքէք

դերբայներ՝ բաքնիլ, բաքոձ, բաքիյ, բաքնիլո, բաքնիլէք

պագանել	> բաքնիլ, բաքո, բաքէլ (բօք)
տեսանել	> դիսնուլ, դիսո, դիս
քաքնել	> քաքնիլ, քաքո, քօք
խածանել	> խաձնիլ, խաձո, խօձ կամ խաձէլ
թքանել	> թօքնալ, թոքո, թոք

*Մանր.* — տեսանել բայը թեև անորոշում ստացել է դիսնուլ ձևը, բայց խոնարհվում է կանոնավորապես Ա լծորդության Բ տիպարի ձևով. ապառնի դերբայում լինում է դիսնալո, դիսնիլէք կամ դիսնալէք:

§361.

**Բ լծորդություն**  
(Ա տիպար)

մըսըմ	մըսի	մըսիցո
մըսըս	մըսիյ	մըսիցոյ
մըսը	մըսէլ	մըսոց
մըսըմք	մըսոմք	մըսիցոմք
մըսըք	մըսիք	մըսիցոք
մըսըմ	մըսիմ	մըսիցոմ

Հրամայական՝ մըսե, մըսիցէք

դերբայներ՝ մըսըլ, մօսօձ, մըսիլ, մըսիլո, մըսիլէք

գադըմ	գադըլ	գադիցո
գադըս	գադիյ	գադիցոյ
գադը	գադէլ	գադիցօլ
գադըմք	գադիմք	գադիցոմք
գադըք	գադիք	գադիցոք
գադըմ	գադիմ	գադիցոմ

Հրամայական՝ գադդե, գադդիցէք

դերբայներ՝ գադդըլ, գադդօձ գադդիլ, գադդիլո, գադդիլէք

դադարիլ	> դահրըլ, դահրիցո, դահրե
խոստովանիլ	> խըստըվանըլ, խըստըվանիցո, խըստըվանեն
ծարաիլ	> ձայվիլ, ձէլվիլ, ձայվիցո, ձայվիցե
ծիծաղիլ	> ձըձաղըլ, ձըձաղիցո, ձըձախըլ, ձըձաղե
ծլիլ	> ձըլիլ, ձըլիցի կամ ձըլիցո, ձըլե
ծնիլ	> ձընըլ, ձընիցո, ձընե
կանգնիլ	> գանըլ, գանիցո, գանե՝
կատաղիլ	> գադդըլ, գադդիցո, գադդե
կկզիլ	> գըզգըլ, գըզգիցո, գըզգե
հայիլ	> հէլիլ, հէլիցօ, հէլե՝
հալվիլիլ	> հալվիլիլ, հալվիլիցո, հալվիլիյե
հանդիպիլ	> հանդըբըլ, հանդըբիցո, հանդիթե
հաւանիլ	> հավանըլ, հավանիցո, հավանե
ճայթիլ	> ջէթիլ, ջէթիցո, ջէթե
մզիլ	> մըզիլիլ, մըզիլիցո, մըզիլե
մոլորիլ	> մըլըլիլ, մըլըլիցո, մըլըլե
մրսիլ	> մըսըլ, մըսիցո, մըսե
նեխիլ	> նէխիլ, նէխիցո, նէխե
նստիլ	> դըստըլ, դըստիցո, դըստե
նմանիլ	> ըլմընիլ, ըլմընիցո, ըլմընե
ողորմիլ	> ուղույմիլ (կամ ուղույմալ), ուղույմիցո, ուղույմե
պապանձիլ	> բաբանձըլ, բաբանձիցո, բաբանձե
պառ(ա)կիլ	> բառգիլ, բառգիցո, բառգե

- սատակիլ > սադգիլ, սադգիցո, սադգե
- վախճանիլ > վախճանըլ, վախճանիցո, վախճանե
- ցնդիլ > ցընդալ, ցընդիցո, ցընդե
- ցնկնիլ > ցընկնըլ, ցընկնիցո, ցընկնե
- փտիլ > փըտըլ, փըտիցո, փըտե
- քծնիլ > քըծնալ, քըծնիցո, քըծնե
- քրտնիլ > քըրտնըլ, քըրտնիցո, քըրտնե

Բ լծորդության առաջին տիպարը ունի 4 տեսակ վերջավորություն, այն է՝ անորոշում ըլ, ըլ, իլ, ալ. սրանց հետևելով՝ ստորադասական ներկան էլ լինում է ըմ, ըմ, իմ, ամ. բայց բոլորի էլ կատարյալը լինում է -իցո, որով բոլորը միանում են մի լծորդության մեջ:

Այսպես, օրինակ, խօսիլ > խուսալ հանգում է -ալ, բայց դա չի նշանակում Գ լծորդություն, որովհետև այդ դեպքում պիտի լիներ ա>օ ձայնափոխությամբ խուսօլ:

ստոր. ներկա	ստոր. անկատար	կատարյալ
խուսամ	խուսի	խուսիցո
խուսաս	խուսիյ	խուսիցոյ
խուսա	խուսէյ	խուսիցոյ
խուսանք	խուսիք	խուսիցոք
խուսաք	խուսիք	խուսիցոք
խուսան	խուսին	խուսիցոն

**Բ լծորդություն (Բ տիպար)**

ստոր. ներկա	ստոր. անցյալ	կատարյալ
հագնըմ	հագնի	հագի
հագնըս	հագնիյ	հագիյ
հագնը	հագնէյ	հագիվ
հագնըք	հագնիք	հագիք
հագնըք	հագնիք	հագիք
հագնըն	հագնին	հագոն

հրամայական՝ հագէ՛յ, հագէ՛ք

դերբայներ՝ հագնըլ, հագիձ, հագիյ, հագնըլէք, հագնիլո  
հասանիլ > հասնըլ, հաստ, հասէլ

- մեռանիլ > մէռնըլ, մէռո, մէռէյ
- մտանել > մօղնոլ, մօղո, մղոէյ
- ուսանիլ > ուսնօլ, ուսո, ուսէյ
- կարեանալ > գանըլ,

§363. չիլ-ով վերջացող բայերը, եթե չ-ն արմատական չէ, կորցնում են այն և խոնարհվում են Բ լծորդության երկրորդ տիպարի համաձայն: Այսպես են՝

- փակչիլ > փագչըլ, փագո, փագէյ
- փախչիլ > փախչիլ, փախո, փախէյ
- փուչիլ > փըւչիլ, փօլո, փըւէյ

§364. Պոլսահայ բարբառի քննության մեջ (§375) խոսել ենք այն մասին, թե ինչպես միևնույն բայից առաջին լծորդությամբ ստացվում է ներգործական, իսկ երկրորդ լծորդությամբ՝ չեզոք բայ: Այսպես, օրինակ, վառել «մի բան վառել», վառիլ «ինքնին վառվել»: Իսկ կրավորականը լինում է վառվիլ:

Այս երևույթը կա նաև Ջեյթունի բարբառում:

Ստորև դնում են ցանկը այն բայերի, որոնք երկու լծորդությամբ էլ խոնարհվում են, առաջինը էլ >-իլ (կտր. -իցի), երկրորդը -իլ > -ըլ, -ալ (կտր. իցո):

Ներգործական		չեզոք	
ազատել	> ազադիլ	ազատիլ	> ազադըլ
աղանձել	> աղընձիլ	աղանձիլ	> աղընձալ (իսկ «քոր գալ իմաստով» աղընձըլ)
արածել	> այձիլ	արածիլ	> այձըլ
աւ(ե)րել	> աւյիլ	աւ(ե)րիլ	> աւյըլ
գլորել	> գըլըլիլ	գլորիլ	> գըլըլիլ
գլտորել	> գըլտըլիլ	գլտորիլ	> գըլտըլիլ
եփել	> իփիլ	եփիլ	> իփալ
թափել	> թափիլ	թափիլ	> թափըլ
թրջել	> թըջիլ	թրջիլ	> թըջըլ
	> դըջիլ		> դըջըլ
խանգրել	> խանդրիլ	խանգրիլ	> խանդրըլ
խարակել	> խարգիլ	խարագիլ	> խարգըլ

խարշել	> խէշիլ	խաշիլ	> խէշըլ, խէշալ
խաւարել	> խաւայիլ	խաւարիլ	> խաւայըլ
խափանել	> խափանիլ	խափանիլ	> խափանըլ
ծակել	> ձագիլ	ծակիլ	> ձագըլ
կտրել	> գըղրիլ	կտրիլ	> գըղրըլ
կործանել	> գույծանիլ	կործանիլ	> գույծանըլ
կոտել	> գըլղիլ	կոտիլ	> գըլղըլ
(լոբիւն)			
հալել	> հալիլ	հալիլ	> հալըլ
հալածել	> հալածիլ	հալածիլ	> հալածըլ
ճեղքել	> ջէխքիլ	ճեղքիլ	> ջէխքըլ
մանրել	> մանրիլ	մանրիլ	> մանրըլ
մաշել	> մէշիլ	մաշիլ	> մէշալ
մոլորել	> մըլըլիլ	մոլորիլ	> մըլըլըլ
ճեխել	> ճէխիլ	ճեխիլ	> ճէխալ
չոքել	> չոքիլ	չոքիլ	> չոքալ
(չոքեցնել)			
պատառել	> բադրիլ	պատառիլ	> բադրըլ
պարպել	> բայբիլ	պարպիլ	> բայբըլ
վառել	> վառիլ	վառիլ	> վառըլ
փշրել	> փշըլըլիլ	փշրիլ	> փշըլըլըլ
քրքրել	> քըլքըլիլ	քրքրիլ	> քըլքըլըլ

—որ մասնիկով կազմված բայերը այս երկու ձևով էլ գործածվում են (առաջինը ներգործական, երկրորդը չեզոք)։ Ինչպես՝

հողոտել	> հուղուղիլ	հողոտիլ	> հուղուղալ
ալիւրոտել	> ալլըղիլ	ալիւրոտիլ	> ալլըղըլ
ձիթոտել	> ձըթըղիլ	ձիթոտիլ	> ձըթըղըլ
մրոտել	> մըլըղիլ	մրոտիլ	> մըլըղըլ
ջրոտել	> ջըլըղիլ	ջրոտիլ	> ջըլըղըլ

Երկու բայ ունենք, որ հասարակ են, այսինքն՝ միևնույն վերջավորութիւնսբ թե՛ ներգործական և թե՛ չեզոք։ Սրանք են՝

ծնել > ձընըլ, որ է «ծնել և ծնվել»։ Ինչպես՝ գէօվը դանօ ձընիցօվ «կովը հորթ ծնեց», դանամ ի՞փ ձընիցօվ «հորթը ե՞րբ ծնվեց»։

ցնկնել > ցընգըլ։ օրինակ՝ փըսըզը ցընգընիցօվ «կատուն ձագ բերեց» կամ «կատվի ձագը ծնվեց»։

Ինչպես հայտնի է, Երևանի բարբառը և արևելահայ գրական լեզուն վերևի բոլոր չեզոքների դիմաց դնում են —վել (հալվել, կտրվել, ձիթոտվել և այլն), որով չեզոքը ըստ ձևի խառնվում է կրավորականի հետ։

Ք լծորդութիւն

ստոր. ներկա	ստոր. անցյալ	կատարյալ
հագօս	հագի	հագացըլ
հագօս	հագիլ	հագացըլ
հագո	հագէլ	հագոց
հագօնք	հագիւնք	հագացոնք
հագւք	հագիք	հագացըք
հագօն	հագիւն	հագացըն

հրամայական՝ հագո, հագացէք

դերբայներ՝ հագօլ, հագըցոձ, հագըցիլ կամ հագացիլ, հագալո, հագըլէք։

խնդալ	> խնդօլ, խընդացըլ, խոնդո
խրխնջալ	> խօխօնջօլ, խօխօնջօց, խօխօնջօ
խրտշիլ	> խօոդօլ, խըոդացըլ, խօոդո
կաղալ	> գաղօլ, գաղացըլ, գաղո
կարդալ	> գայդօլ, գայդացըլ, գայդո
կսկծալ	> գըսգըձօլ, գըսգըձիցո, գըսգըձէ
հաւատալ	> ավդօլ, ավդացըլ, ավդո
հեծկլտալ	> հէձգօլդօլ, հէձգօլդացըլ, հէձգօլդօ
հւալ	> հիվօլ, հիվացըլ, հիվո
հոգալ	> հիգօլ, հիգացըլ, հիգո
հոտոտալ	> հօդվօդօլ, հըդվըդացըլ, հօդվօդո
ձգոտալ	> ծօգօոդօլ, ծըգըոդացըլ, ծօգօոդո
ճոալ «հոսել»	> ջօոօլ, ջոացըլ, ջօոո
մայել	> մայօլ, մայօց, մայօ
մնալ	> մօնօլ, մնացըլ, մօնօ
մուրանալ	> մուլօլ, մըլյացըլ, մուլո
մոմոալ	> մօոմօոօլ, մըոմըոացըլ, մըոմըոո
յօրանջել	> գէլէնջգէդօլ, գէլէնջգէդացըլ, գէլէնջգէդո
սողալ	> սողօլ, սողացըլ, սողո
սոսկալ	> սիսգօլ, սիսգացըլ, սիսգո
ցատկել	> ծօտկօլ, ծըտկացըլ, ծօտկո
փոնգտալ	> փօոնքըլօլ, փըոընքըդացըլ, փօոնքըրո

ցնծալ > ցոնծօլ բայը լինում է զարտուղի կերպով՝ կտր. *ցընծիցո*, հրմ. *ցօնծմ*:

§366.

Գ լծորդություն (Բ տիպար)		
ստոր. ներկա	ստոր. անցյալ	կատարյալ
<i>գուղնոմ</i>	<i>գուղնի</i>	<i>գուղցո</i>
<i>գուղնոս</i>	<i>գուղնիյ</i>	<i>գուղցոյ</i>
<i>գուղնո</i>	<i>գուղնեյ</i>	<i>գուղցօվ</i>
<i>գուղնօնք</i>	<i>գուղնինք</i>	<i>գուղցոնք</i>
<i>գուղնւնք</i>	<i>գուղնիք</i>	<i>գուղցւնք</i>
<i>գուղնօն</i>	<i>գուղնին</i>	<i>գուղցոն</i>

հրամայական՝ *գուղցէյ, գուղցէք*  
 դերբայներ՝ *գուղնօլ, գուղցօձ, գուղցիյ, գուղնալո, գուղնուլեք*:

խոստանալ	> <i>խըսդանօլ, խըսդացո, խըսդացէյ</i>
ծերանալ	> <i>ձէյանօլ, ձէյացօ, ձէյացէյ</i>
կամենալ	> <i>գամինօլ, գամիցօ</i>
կարենալ	> <i>գանըլ, գանցո</i>
կենալ	> «դադար տալ, էլ չգնալ» <i>գինօլ, գիցո, գիցի՛յ</i>
անջրդիանալ	> <i>անջըլդինօլ, անջըլդիցո, անջըլդիցէյ</i>
կլանել	> <i>գօլնօլ, գօլցո, գըլցէյ</i>
հասկանալ	> <i>հասգունօլ, հասգուցօ, հասգուցէյ</i>
հաստանալ	> <i>հասդնօլ, հասդցո, հասդցէյ</i>
հեծանիլ	> <i>հէձնօլ, հէձօ, հէձէյ</i>
հեռանալ	> <i>խօսվօնօլ, խօսվօցո, խըվըցէյ</i>
հիւանդանալ	> <i>հօվօնդնօլ, հըվընդցո, հըվընդցէյ</i>
հպարտանալ	> <i>հիբայդնօլ, հիբայդցօ, հիբայդցէյ</i>
նանաչել	> <i>ջէնչնօլ, ջէնչացը, ջէնչացէյ</i>
մեծանալ	> <i>միմձնօլ, միմձցո, միմձցէյ</i>
մոռանալ	> <i>մառնօլ, մառցո, մառցէյ</i>
մօտենալ	> <i>մըդանօլ, մուդցո, մուդցէյ</i>
ուռչիլ	> <i>ուռոնօլ, ուռիցո, ուռիցէյ</i>
ուրանալ	> <i>ույանօլ, ույացո, ույացէյ</i>
ունենալ	> <i>ունցնօլ, ունցօ, ունցէյ</i>
պարծենալ	> <i>բայձիմօլ, բայձիմցո, բայձիմցէյ</i>

Բարբառը լավ զանազանում է *գիմօլ* «դադրիլ, կենալ» և *գանըլ* «կանգնել, տեղից վեր բարձրանալ»:

§367.

Դ լծորդություն		
ստոր. ներկա	ստոր. անկատար	կատարյալ
<i>թուղում</i>	<i>թուղի</i>	<i>թուղա</i>
<i>թուղոս</i>	<i>թուղիյ</i>	<i>թուղայ</i>
<i>թուղո</i>	<i>թուղէյ</i>	<i>թուղօվ</i>
<i>թուղունք</i>	<i>թուղինք</i>	<i>թուղոնք</i>
<i>թուղւնք</i>	<i>թուղիք</i>	<i>թուղւնք</i>
<i>թուղուն</i>	<i>թուղին</i>	<i>թուղւն</i>

հրամայական՝ *թուղ, թուղէք*  
 դերբայներ՝ *թուղուլ, թուղիյ (թուղուցիյ), թուղօձ (թուղուցօձ), թուղուլո, թուղուլէք*:

Նկատելի է կտր. հոգն. Ա դեմքը, որ նույնն է ներկայի հոգն. Բ դեմքի հետ:

Դ լծորդության մեջ, բացի սրանից, կան ևս երեք բայ՝ *առնուլ, դիսնուլ* «տեսնել», *մօղնուլ* «մտնել» բայց սրանք խոնարհվում են սովորական ձևով. վերջինը *մօղնօլ* ձևի վրա է խոնարհվում:

**Լծորդության փոփոխություն**

§368. Պոլսահայ բարբառի քննության մեջ (§355) խոսել ենք արդեն այն պայմանների մասին, որոնց համեմատ կատարվում են լծորդության փոփոխության դեպքերը բարբառներում: Մենք այստեղ հավաքում ենք այն դեպքերը, երբ Ջեյթունի բարբառում գործածված բայերը տարբերվում են գրաբարի ձևից և հետևում են տարբեր լծորդության:

ամաչել	> <i>ամըչնօլ</i>
արբենալ	> <i>հայբիմօլ, հայբիլ</i>
բառնալ	> <i>բնտնօլ, բնտըրնիլ</i>
բուսանիլ	> <i>փուսնօլ</i>
գիտել	> <i>գիդանօլ</i>
գտանել	> <i>գօդնօլ</i>
դադարիլ	> <i>դնարիլ, դնարիմօլ</i>
դիպչիլ	> <i>դըբչըլ, դիբնօլ</i>



դողալ	> դողացրնիլ
երդնուլ	> օյնկօնուլ
երևիլ	> օյվօնուլ
զենուլ	> զէնիլ
թռչիլ	> թրոչիլ, թրոնըլ
թքանել	> թօքնուլ
իջանել	> իչնուլ
լնուլ	> նուլ
լողալ	> լուղիլ
խեղիլ	> խէղվալ
խորդալ	> խըրդաղիլ
խրտչիլ	> խօրոջուլ
խօսիլ	> խուսալ
կալուլ	> գալնուլ
կամիլ	> գամիճուլ
կարենալ	> գանըլ
կարօտիլ	> գայընուլ
կողկողիլ	> գօղօլ «ողբալ»
կլանել	> գօլնուլ
հեծանել	> հէձնուլ
հոտոտել	> հօղվօղալ
նանաչել	> ջէնչնուլ
նչալ	> ջէնչիլ
մայել	> մայօլ «մլալել»
մուրանալ	> մույօլ
մտանել	> մօղնուլ, մօղնուլ
յօրանջել	> էրէնջգըղօլ
ունել, ունենալ	> ունցնուլ
ուռիլ	> ուռունուլ
ուսանիլ	> ուսնուլ
պարծիլ	> բայձիճուլ
տեսանել	> դիսնուլ
ցատկել	> ծօտկօլ
ցալլ-ել	> ցէլօլ «շեքել»

Իմաստի փոփոխություն կրած բայեր են՝  
կոփել «զարնել, տաշելով շինել» > Զթ. գիփիլ «տաշել»:

ճապաղել «տարածել, ցրվել» > Զթ. ջարդիլ «աչքերը լայն բաց անել, չնել»:

շրջել «շուռ տալ», շրջիլ «ման գալ» > Զթ. շըրջիլ «սիրտը թափել, փսխել»:

պատառել «ճղել» > Զթ. բարդիլ «տուն կողոպտել»:

պարապիլ «զբաղվել» > Զթ. բայքիլ «դատարկել, 2. մեղհիլ»:

մթրթել բայը մեր մեջ իմաստը փոխել է, միջնդեռ Զթ. միթիլ նշանակում է «մորթը հանել» (որ հնագույն իմաստն է), իսկ զէնիլ «գլուխը կտրել» (որ է զենուլ):

### Զարտուղի բայեր

§369. Չորս լծորդության մեջ, սովորական խոնարհման ձևից որոշ դեպքերում շեղվող բայերը հետևյալներն են.

կատարյալ		
բիյա	ասը	առը
բիյայ	ասըլ	առըլ
բիյօվ	ասօց	առօվ
բիյօնք	ասօնք	առոնք
բիյաք	ասըք	առըք
բիյան	ասըն	առըն, առօն

հրամայական		
բիյ	աստ	ոռ
բիյէք	ասէք	առէք

դերբայներ		
բիյօձ	ասօձ	առօձ
բիյիյ	ասիյ	առիյ
բիյէօղ	ասէօղ	առնէօղ
բիյիլո	ասիլո	առնիլո
բիյիլէք	ասիլէք	առնիլէք

**Ծանոթ.** — Ուրիշ բարբառներում *զարնել* բայն էլ մտնում է այս բայերի շարքը, բայց Ջեյթունի բարբառում այն շարքից դուրս է եկել՝ փոխարինվելով *կացընիլ* բառով:

§370. Ա լծորդության Բ տիպարին պատկանող «ստանել, ելանել, իջանել, մտանել» բայերը թեև ստացել են անորոշի մեջ *զօղնուլ, իլլիլ, իչնուլ, մօղնուլ* կամ *մօղնուլ* ձևերը, բայց խոնարհման մեջ կանոնավոր կերպով հետևում են Ա լծորդության Բ տիպարին: — *թքանել* և *տեսանել* բայերը տե՛ս վերը՝ §360:

կատարյալ			
<i>զօղոյ</i>	<i>իլո</i>	<i>իջո</i>	<i>մօղո</i>
<i>զօղոյ</i>	<i>իլոյ</i>	<i>իջոյ</i>	<i>մօղոյ</i>
<i>զօղօվ</i>	<i>իլօվ</i>	<i>իջօվ</i>	<i>մօղօվ</i>
<i>զօղօնք</i>	<i>իլօնք</i>	<i>իջօնք</i>	<i>մօղօնք</i>
<i>զիղաք</i>	<i>իլաք</i>	<i>իջաք</i>	<i>մօղաք</i>
<i>զօղօն</i>	<i>իլօն</i>	<i>իջօն</i>	<i>մօղօն</i>

հրամայական			
<i>զօղ</i>	<i>ի՛լ</i>	<i>իջէ՛յ</i>	<i>մօղ</i>
<i>զիղէք</i>	<i>իլէք</i>	<i>իջէք</i>	<i>միղէք</i>

դերբայներ			
<i>զիղնէտօղ</i>	<i>իլլէտօղ</i>	<i>իչնէտօղ</i>	<i>միղնէտօղ</i>
<i>զօղնէտօղ</i>			<i>մօղնէտօղ</i>
<i>զօղօձ</i>	<i>իլօձ</i>	<i>իջօձ</i>	<i>մօղօձ</i>
<i>զիղիյ</i>	<i>իլիյ</i>	<i>իջիյ</i>	<i>միղիյ</i>
<i>զիղնալո</i>	<i>իլլիլո</i>	<i>իչնալո</i>	<i>միղնիլո</i>
<i>զիղնալէք</i>	<i>իլլալէք</i>	<i>իչնիլէք</i>	<i>միղնիլէք</i>
		<i>իչնալէք</i>	

§371. Բ լծորդության Բ տիպարին վերաբերող *անկանիլ* բայը, որ Ջեյթունում *լնգնիլ* ձևն է ստացել, անխահնչյունը դարձնում է շարունակ ը՛ն օ: Ահա այս բայի խոնարհումը.

կատարյալ	հրամայական	դերբայներ
<i>օնգօ</i>		<i>լնգնէտօղ</i>
<i>օնգոյ</i>	<i>լնգէյ</i>	<i>լնգօձ</i>
<i>օնգօվ</i>		<i>լնգիյ</i>
<i>օնգօնք</i>		<i>լնգնիլո</i>
<i>օնգաք</i>	<i>լնգէք</i>	<i>լնգնիլէք</i>
<i>օնգօն</i>		

§372. Գ լծորդության պատկանող բանալ > *բննուլ* բայը խոնարհվում է հետևյալ ձևով.

կատարյալ	հրամայական	դերբայներ
<i>բննը</i>		<i>բննէտօղ</i>
<i>բննըյ</i>	<i>բնն</i>	<i>բննօձ</i>
<i>բննօվ</i>		<i>բննիյ</i>
<i>բննօնք</i>		<i>բննիլո</i>
<i>բննըք</i>	<i>բննէք</i>	<i>բննիլէք</i>
<i>բննըն</i>		

§273. Գրաբարի Դ լծորդության պատկանող *լնուլ* բայը, որ Ջեյթունում ստացել է *նուլ* ձևը, խոնարհվում է շատ անկանոն ձևով, որ հետևյալն է.

ստոր. ներկա	ստոր. անկատար	կատարյալ
<i>նօմ</i>	<i>նի</i>	<i>լնըն</i>
<i>նօս</i>	<i>նիյ</i>	<i>լնընի</i>
<i>նո</i>	<i>նէյ</i>	<i>լնըսօվ</i>
<i>նօնք</i>	<i>նիք</i>	<i>լնըսօնք</i>
<i>նօք</i>	<i>նիք</i>	<i>լնըսաք</i>
<i>նօն</i>	<i>նին</i>	<i>լնըսան</i>

հրամայական՝ *լնը, լնցէք*  
 դերբայներ՝ *նէտօղ, նօձ, լնցիյ, նալո, նալէք:*

## Անկանոն բայեր

§374.

1. առնել > էնիլ
- Անրկա — էնիմ, էնիս, էնէ, էնիճէ, էնէք, էնիճ  
 անկատար — էնա, էնայ, էնէյ, էնանք, էնաք, էնան  
 կատարյալ — էյա, էյայ, էյօվ, էյօնք, էյաք, էյան  
 հրամայական — էյօ, էյէք  
 դերբայներ — էօնէտօղ, էյօձ, էյիյ, էնիլէք, էնիլո
2. գալ > իգնիլ
- Անրկա — իգնմ, իգնս, իգն, իգննք, իգնաք, իգն  
 անկատար — իգի, իգիյ, իգէյ, իգինք, իգիք, իգին  
 կատարյալ — իգի, իգիյ, իգիք, իգոնք, իգաք, իգիճ  
 հրամայական — այգո, իգէք  
 դերբայներ — իգէտօղ կամ իւգէտօղ, իգօձ, իգիյ, իգալո, իգալէք
3. դնել > դընիլ
- Անրկա — դընիմ, դընիս, դըննէ, դընինք, դըննաք, դընն  
 անկատար — դընա, դընայ, դընէյ, դընոնք, դըննք, դընն  
 կատարյալ — դըյա, դըյայ, դօյօվ, դօյօնք, դըյաք, դըյան  
 հրամայական — դըյ, դըյէք  
 դերբայներ — դօնէտօղ կամ դէօնէտօղ, դօյօձ, դըյիյ, դընիլէք, դընիլո
4. երթալ > իյթօլ
- Անրկա — իյթօմ, իյթօս, իյթո, իյթօնք, իյթաք, իյթոճ  
 անկատար — իյթի, իյթիյ, իյթէյ, իյթինք, իյթիք, իյթին  
 կատարյալ — գնացը, գնացիյ, գօնոց, գնացոնք, գնացըք, գնացըճ  
 հրամայական — գօնո, գնացէք  
 դերբայներ — իյթէտօղ, գնացօձ, գնացիյ, իյթալէք, իյթալո
5. լալ > լոլ, լօլ
- Անրկա — լօմ, լօս, լո, լօնք, լաք, լոճ  
 անկատար — լի, լիյ, լէյ, լինք, լիք, լին

- կատարյալ — լացը, լացըյ, լացօվ, լացոնք, լացաք, լացոճ  
 հրամայական — լոց, լացէք  
 դերբայներ — լացէտօղ, լացոձ, լացիյ, լալիք, լալօ

6. լիճել > անլի
- Անրկա — անլմ, անլս, անլկամ ան, անլնք, անլք, անլճ  
 անկատար — անի, անիյ, անէյ, անինք, անիք, անին

(Նկատելի է, որ անկատարը բոլորովին նույնն է լնուլ բայի հետ, որ տե՛ս §373):

- կատարյալ — էղո, էղոյ, էղօվ, էղոնք, էղաք, էղոճ  
 հրամայական — լնի, էղէք  
 դերբայներ — էղէտօղ, էղէտօղ, էղոձ, էղիյ, անլէք, անլո

7. ուտել > ուդիլ
- Անրկա — ուդիմ, ուդիս, ուդն, ուդինք, ուդէք, ուդին  
 անկատար — ուդա, ուդայ, ուդէյ, ուդոնք, ուդիք, ուդան  
 կատարյալ — գիյո, գիյոյ, գիյօվ, գիյօնք, գիյաք, գիյոճ  
 հրամայական — գիյ, գիյէք  
 դերբայներ — ուդէտօղ, գիյօձ, գիյի, ուդիլէք, ուդիլո

8. տալ > դօլ
- Անրկա — դօմ, դօս, դո, դօնք, դաք, դօճ  
 անկատար — դի, դիյ, դէյ, դինք, դիք, դըն կամ դին  
 կատարյալ — դըվը, դըվըյ, դօվօվ, դօվօնք, դըվըք, դըվըճ  
 հրամայական — դոյ, դըվըք  
 դերբայներ — դօվէտօղ կամ դէօվէտօղ, դօվօձ, դըվիյ, դալէք, դալո

9. տանիլ > դանըլ
- Անրկա — դանըմ, դանըս, դանը, դանընք, դանըք, դանըճ  
 անկատար — դանը, դանըյ, դանէյ, դանինք, դանիք, դանին  
 կատարյալ — դայը, դայըյ, դայօվ, դայօնք, դայըք, դայըճ  
 հրամայական — դոյ, դայէք  
 դերբայներ — դանէտօղ, դայօձ, դայիյ, դանիլէք, դանիլո

երթալ և գալ բայերի խոնարհումը  
Հանրնի բարբառով  
(Բիրակն, 1898, էջ 779-780)

**Ճերկա**

կաշտոմ	կագկոմ
կաշտոս	կագկոս
կաշտո	կագկո
կաշտոնք	կագկոնք
կաշտէք	կագկէք
կաշտոն	կագկոն

**անկատար**

կաշտի, կաշտի իտի	կագկի, կագկի իտի
կաշտի իտիյ	կագկիյ
կաշտէյ իտի	կագկէյ
կաշտինք իտի	կագկինք
կաշտիք իտի	կագկիք
կաշտին իտի	կագկին

**կատարյալ**

գացցի	իկի
գացցիյ	իկիյ
գնոց	իկէք
գացցոնք	իկոնք
գացցիք	իկիք
գացցին	իկին

**ապառնի**

պիշտոմ	պիգկոմ
պիշտոս	պիգկոս
պիշտո	պիգկո
պիշտոնք	պիգկոնք
պիշտէք	պիգկէք
պիշտոն	պիգկոն

**անցյալ ապառնի**

պիշտի իտի	պիգկի
պիշտիյ իտի	պիգկիյ

պիշտէյ իտի	պիգկէյ
պիշտոնք իտի	պիգկինք
պիշտէք իտի	
պիշտին իտի	պիգկին

**հրամայական**

գնո	եկո
մ'իշտո	մ'իգկո
գացցէք	եկէք
մ'իշտէք	մ'իգկէք

**ստորադասական ճերկա**

իշտոմ	գոմ
իշտոս	գոս
իշտո	գո
իշտոնք	գոնք
իշտիք	գէք
իշտին	գէն

**դերբայներ**

իշտոլ	գոլ
իշտող	իկող
գացցոծ	իկոց
իշտալու	գալու

**Պակասավոր բայեր**

§375.

	1. եմ > իմ
ճերկա	— իմ, իմ, է, ինք, էք, ին
անկատար	— ա, այ, էյ, անք, ընք, աք, ան
կամ	ա, իյ, էյ, օնք, անք, ան

(առաջին շարքը ծանր ձայնավորով վերջացող բառերի կողքին, երկրորդ շարքը թեթև ձայնավորների հետ):

	2. կամ > գօմ
ճերկա	— գոմ, գոս, գո, գոնք, գանք, գօն
անկատար	— գի, գիյ, գէյ, գինք, գիք, գին

3. ունիւմ > ունամ

ներկա	— ունամ, ունաս, ունա, ունանք, ունաք, ունան
անկատար	— ունի, ունիյ, ունէյ, ունինք, ունիք, ունին
(մնացյալը կազմվում է ունենալ > ունցնոյ ձևից):	
կատարյալ	ունցո, ունցոյ, ունցօվ, ունցոնք, ունցաք, ունցօն
ներկա	ունցնօս, ունցնոս, ունցնո, ունցնոնք, ունցնաք, ունցնօն
անցյալ	ունցնի, ունցնիյ, ունցնէյ, ունցնինք, ունցնիք, ունցնին
հրամայական	ունցէյ, ունցէք
դերբայներ	ունցնոյ, ունցնէօղ, ունցօձ, ունցիյ, ունցնիլէք, ունցնիլո

4. գիտեմ > գիդիւմ

ներկա	— գիդիւմ, գիդիս, գիդե, գիդինք, գիդէք, գիդին
անկատար	— գիդա, գիդիյ, գիդէյ, գիդոնք, գիդաք, գիդան
(մնացյալը կազմվում է գիդնոյ «գիտենալ» ձևից):	
կատարյալ	գիդցո, գիդցոյ, գիդցօվ, գիդցոնք, գիդցաք, գիդցօն կամ միջին ա ձայնավորը պահելով՝ գիդացո, գիդացոյ, գիդացօվ, գիդացոնք, գիդացաք, գիդացօն
հրամայական	գիդցէյ, գիդցէք կամ գիդացէյ, գիդացէք
դերբայներ	գիդցէօղ (գիդացէօղ), գիդցօձ (գիդացօձ), գիդցիյ (գիդացիյ), գիդնալէք, գիդնալո

**Բարդ ժամանակներ  
Սահմանական ներկա**

§376. Սահմանական ներկան կազմվում է ստորադասական ներկայի սկզբում դնելով զօ մասնիկը, եթե բայն սկսվում է բաղաձայնով. ինչպես՝  
 զօ սիյիւմ «սիրում եմ», զօ բիյիւմ «բերում եմ»  
 զօ ձիձիւմ «ծեծում եմ», զօ դիսնում «տեսնում եմ»  
 զօ խաղօս «խաղում եմ», զօ հիշիւմ «հիշում եմ»  
 զօ նօս «լնում, լցնում եմ»:

Միավանկ բայերը (գամ, լամ, տամ), որ ուրիշ բարբառներում բացառություն կազմելով՝ ներկայի կազմության ընդհանուր կանոնից շեղվում

են, Զեյթունի բարբառում ստանում են նույնպես զօ մասնիկը. ինչպես՝  
 զօ գօօս, զօ դօս, զօ լօս:

(Նկատենք, որ այս երեք բայերն էլ բաղաձայնով են սկսվում):

Ձայնավորով սկսվող բայերը ներկայի կազմության համար երկու ձև ունեն.

ա) Մեծագույն մասամբ ստանում են բաղաձայններին հատուկ նույն զօ մասնիկը. ինչպես՝

իջանել	— զօ իջնօս
առնուլ	— զօ առնում
անցանել	— զօ անցնըս
ազատել	— զօ ազադըս
աշխատել	— զօ աշխադըս
անիծել	— զօ անիձիս
անարգել	— զօ անըյգիս
ուրախանալ	— զօ ույախնօս
օծել	— զօ ուձիս
օրհնել	— զօ ույհնիս
օրորել	— զօ իյյիս

բ) Ուրիշ բայեր, բնականաբար, ամենից սովորականներն ու գործածականները, այս զօ մասնիկից հետո կրճատում են բայի նախահնչյուն ձայնավորը: Օրինակ՝

ասել	— ասիլ	— զօ՝ սիս
ուտել	— ուդիլ	— զօ՝ դիս
երթալ	— իյթօլ	— զօ՝ յթօս
առնել	— էնիլ	— զօ՝ նիս
եփել	— իփիլ	— զօ՝ փիս
ելանել	— իլլիլ	— զօ՝ լլիս
երերալ	— իյայնօլ	— զօ՝ յայնօս

Ծանոթ. — ուրախանալ — ույախնօլ բայը, որ առաջին ձևով դառնում է զօ ույախնօս, կարող է նախահնչյուն ու ձայնավորը փոխելով ստանալ նաև զօ իյախնօս և զօ ըյախնօս ձևերը:

**Ապառնի (Ա ձև)**

§377. Ապառնի Ա ձևը կազմվում է բաղաձայնով սկսվող բայերի ստորադասական ներկայի սկզբում դնելով գու (< կու) մասնիկը. ինչպես՝

տեսանել	> դիսնուլ	— գու դիսնուս
խաղալ	> խաղօլ	— գու խաղօս
քերել	> քիյիլ	— գու քիյիս
բերել	> բիյիլ	— գու բիյիս
ծեծել	> ձիձիլ	— գու ձիձիս
յիշել	> հիշիլ	— գու հիշիս

Միավանկ բայերի ապառնիճ էլ կազմվում է նույն ձևով. այսպես՝ *գու գօս* «կը գամ», *գու դօս* «կը տամ», *գու լօս* «կը լամ»:

Ձայնավորով սկսվող բայերի ապառնիճ Ա ձևը կազմվում է ստորադասական ներկայի սկզբին ավելացնելով պարզապես *գ* մասնիկը, որ ուրիշ բան չէ, եթե ոչ նույն *գու* մասնիկի կրճատ ձևը. ինչպես՝

առնուլ	> առնուլ	— գառնուս
եփել	> հիփիլ	— գհիփիս
անցանել	> անցնըլ	— գանցնըս

§378. Ըստ այսմ սահմանական ներկա և ապառնի ձևերը, որ *կը* նյունի բոլոր բարբառներում միևնույն ձևն ունեն, Ջեյթունի բարբառում տարբեր են իրարից և տարբերվում են նրանով, որ բաղաձայնով սկսվող, ինչպես և միավանկ բայերի մեջ ներկան ստանում է *գօ* մասնիկը, ապառնիճն *գու* մասնիկը, թեև այս երկուսը միևնույն բաներն են և երկուսն էլ ծագում են *կու* նախավոր ձևից: Իսկ ձայնավորով սկսվող բայերի մեջ ներկան դարձյալ կազմվում է նույն *գօ* մասնիկով, ապառնիճ էլ սղված *գ* ձևով:

Այստեղ դնում են մի խումբ բայերի ներկա և ապառնի ձևերի ցուցակը՝ տարբերությունն ավելի ցայտուն կերպով ցույց տալու համար.

	ներկա	ապառնի
աշխատիլ	> աշխադըլ	— գօ աշխադըս
անցանել	> անցնըլ	— գօ անցնըս
առնուլ	> առնուլ	— գօ առնուս
օրհնել	> ույհնիլ	— գօ ույհնիս
օծել	> ուձիլ	— գօ ուձիս
ազատել	> ազադըլ	— գօ ազադըս
իջանել	> իչնօլ	— գօ իչնօս
ուրախանալ	> ույախնօլ	— գօ ույախնօս
	> իյախնօլ	— գօ իյախնօս
	> ըյախնօլ	— գօ ըյախնօս
անիծել	> անիձիլ	— գօ անիձիս
անարգել	> անըլգիլ	— գօ անըլգիս

գալ	> գօլ	— գօ գօս	գու գօս
տալ	> դօլ	— գօ դօս	գու դօս
լալ	> լօլ	— գօ լօս	գու լօս

§379. Վերևում տեսանք՝ ձայնավորով սկսվող մի խումբ բայեր, որոնց ներկան կազմելու ժամանակ *գօ* մասնիկի մոտ սղվում է բայի առաջին ձայնավորը: — Այս նույն բայերի ապառնիճ կազմելու ժամանակ սղում տեղի չի ունենում, այլ ձայնավորով սկսվող մյուս բայերի նման, սովորական կարգով դրվում է *գ*. այսպես՝

	ներկա	ապառնի
ուտել	> ուդիլ	— գօ՝ դիս
առնել	> էնիլ	— գօ՝ նիս
եփել	> հիփիլ	— գօ՝ փիս
ելանել	> իլլիլ	— գօ՝ լլիս
երերալ	> իյայնօլ	— գօ՝ յայնօս

Բացառություն են կազմում երկու բայ, որոնց ներկան թեև կանոնավոր է, բայց ապառնիճ շեղվում է ընդհանուր կանոնից: Այդ բայերն են՝

ասել	> սսիլ	— գօ՝ սիս	գհսիս
երթալ	> իյթօլ	— գօ՝ յթօս	գույթօս

(փոխանակ լինելու ըստ օրինի \*գասիս, \*գիյթօս):

Իսկ օրորել > *իյիլ* բայը չունի առանձին ներկա, ապառնիճ լինում է ըստ օրինի *գիյիս*. ներկայի մասին տե՛ս §381:

### Շարունակական ներկա

§380. Պոլսահայ բարբառի քննության մեջ, էջ 134, բացատրված է սովորական կամ ընդհանուր ներկայի և շարունակական ներկայի (*կը սիրեմ կոր*) տարբերությունը:

Շարունակական ներկան գոյություն ունի նաև Ջեյթունի բարբառում, բայց միայն ձայնավորով սկսվող բայերի և միավանկ բայերի համար: Զարմանալի կերպով կազմվում է ապառնի Ա ձևից՝ ավելացնելով նրա վրա *գօ* մասնիկը (ուրիշ խոսքով շարունակական ներկան՝ գումարն է ներկայի և ապառնի):

Ստորև դնում են ձայնավորով սկսվող մի խումբ բայերի և միավանկ բայերի ներկայի, ապառնի և շարունակական ներկայի ձևերը.

		ճերկա	ապառնի	շարունակական
ուտել	> ուղիլ	– գուղիս	գօղիս	գօգուղիս
իջանել	> իջնօլ	– գիջնօս	գօիջնօս	գօգիջնօս
առնել	> էնիլ	– գէնիս	գօնիս	գօգէնիս
եփել	> իփիլ	– գիփիս	գօփիս	գօգիփիս
ելանել	> իլիլ	– գիլիս	գօլիս	գօգիլիս
առնուլ	> առնուլ	– գառնուս	գօառնուս	գօգառնուս
անցանել	> անցնըլ	– գանցնըս	գօանցնըս	գօգանցնըս
ազատել	> ազադըլ	– գազադըս	գօազադըս	գօգազադըս
աշխատիլ	> աշխադըլ	– գաշխադըս	գօաշխադըս	գօգաշխադըս
երերալ	> իյայնօլ	– գիյայնօս	գօյայնօս	գօգիյայնօս
օծել	> ուծիլ	– գուծիս	գօուծիս	գօգուծիս
օրհնել	> ույրհնիլ	– գույրհնիս	գօույրհնիս	գօգույրհնիս
անիծել	> անիծիլ	– գանիծիս	գօանիծիս	գօգանիծիս
անարգել	> անըլգիլ	– գանըլգիս	գօանըլգիս	գօգանըլգիս

ուրախանալ բայը կազմում է երեք ձև. երեքն էլ նույն ոճով կազմում են՝

ույախնօլ	– գույախնօս	գօույախնօս	գօգույախնօս
իյախնօլ	– գիյախնօս	գօիյախնօս	գօգիյախնօս
ըյախնօլ	– գըյախնօս	գօըյախնօս	գօգըյախնօս

Միավանկ բայերը երեքն են. սրանցից երկուսը հետևյալ ձևերն են ստանում.

լալ	>լօլ	– գուլօս	գօլօս	գօգուլօս
տալ	>դօլ	– գուդօս	գօդօս	գօգուդօս

§381. Այս ամբողջ ցուցակի մեջ չորս բացառություն կա: Նախ գալ միավանկ բայը թեև կանոնավոր կերպով կազմում է ներկան գօգօս, ապառնին գուգօս, բայց շարունակականը չի լինում \*գօգուգօս, ինչպես սպասելի էր, այլ նրա տեղ գործածվում է սովորական ներկան գօգօս: Այս կորուստը տեղի է ունեցել նրա համար, որ խուսափեն երեք անգամ գ կրկնելուց:

ասել >ասիլ բայից ունենք ներկա գօսիս, ապառնի գիսիս, բայց շարունակականը, որ ըստ օրինի պիտի լիներ \*գօգիսիս, չի գործածվում և նրա փոխարեն դրվում է սովորական ներկան գօսիս:

երթալ >իյթօլ բայից կազմվում է ներկա գօյթօս, ապառնի գույթօս, իսկ շարունակականը ոչ թե լինում է \*գօգույթօս, ինչպես պահանջում էր օրենքը, այլ բացառաբար գօգիյթօս:

Վերջապես օրորել >իյիլ բայը թեև ունի կանոնավոր կերպով ապառնի գիյիլ, նույնիսկ շարունակական ներկա գօգիյիլ, բայց չունի սովորական ներկա (որ պիտի լիներ ըստ օրինի \*գօիյիլ) կամ մանավանդ \*գօ'յիլ) և նրա փոխարեն գործ է ածվում շարունակական ձևը:

§382. Բաղաձայնով սկսվող բայերը չունեն շարունակական ներկա. օրինակ՝ բերել >բիյիլ բայից ունենք ներկա գօբիյիլ, ապառնի գու բիյիլ, բայց շարունակական ներկան, որ ըստ օրինի պիտի լիներ \*գօ գու բիյիլ, գոյություն չունի և նրա փոխարեն գործածվում է սովորական ներկան (գօ բիյիլ):

Ստորև դնում են մի միավանկ բայի, մի ձայնավորով սկսվող բայի և մի հատ էլ բաղաձայնով սկսվող բայի ներկայի, ապառնի և շարունակական ներկայի խոնարհման վեց եզրերի պատկերը.

		ճերկա	ապառնի	շարունակական
տալ	>դօլ	գօդօս	գուդօս	գօգուդօս
		գօդօս	գուդօս	գօգուդօս
		գօդօ	գուդօ	գօգուդօ
		գօդօնք	գուդօնք	գօգուդօնք
		գօդօք	գուդօք	գօգուդօք
		գօդօն	գուդօն	գօգուդօն
առնուլ	>առնուլ	գօ առնուս	գառնուս	գօգառնուս
		գօ առնուս	գառնուս	գօգառնուս
		գօ առնու	գառնու	գօգառնու
		գօ առնունք	գառնունք	գօգառնունք
		գօ առնուք	գառնուք	գօգառնուք
		գօ առնուն	գառնուն	գօգառնուն
բերել	>բիյիլ	գօ բիյիս	գու բիյիս	գօ բիյիս
		գօ բիյիս	գու բիյիս	գօ բիյիս
		գօ բիյէ	գու բիյէ	գօ բիյէ
		գօ բիյինք	գու բիյինք	գօ բիյինք
		գօ բիյէք	գու բիյէք	գօ բիյէք
		գօ բիյին	գու բիյին	գօ բիյին

Ծանոթ. — Ջարտուղի ձև է ներկայացնում էղիլ «յուղել, յուղ քսել» բայը, որի ներկան լինում է ըստ օրինի գօ էղիս (տե՛ս վերը՝ §376), շարունակական ներկան գօ գէղիս (տե՛ս §380), ապառնին գէղիս (§378), բայց նաև

գիղիս, որ կարող ենք իբրև երրորդ բացառություն կցել §379-ում հիշված երկու բացառություններին (գիսիս, գույթօս): Բացի սրանցից, ունենք նաև երկու ձևով ապառնի՝ գու էղիս և գու գէղիս, որոնք շեղվում են ապառնիի սովորական կանոններից: Երկրորդ ձևը (գու գէղիս) կարող է արդարանալ, եթե ենթադրենք, որ էղիլ բայը նաև գէղիլ ձևն ունի, իսկ առաջինը (գու էղիս) հակառակ է ամեն կանոնի:

§383. Կը մասնիկի գործածության այս ձևերը իրենց մասնն ունեն խոտորջուրի և Կարհնի բարբառներում: Խոտորջուրի բարբառում միավանկ բայերը, ինչպես և ձայնավորով սկսվող բայերն ունեն ներկայում կը մասնիկի գործածությունը, իսկ բաղաձայնով սկսվող բայերը չունեն. ինչպես՝ գուգամ, գուգաս, գուգա, բայց նօ՞յ տանիս «ո՞ր կտանես»: Կարհնի բարբառումն էլ միավանկ բայերը և ձայնավորով սկսվող բայերը կը մասնիկը դնում են երկու անգամ (մի նախադաս և մի հետադաս), իսկ բաղաձայնով սկսվող բայերը միայն մի անգամ (հետադաս). օրինակ՝

կուլամ կը	կէնէմ կը	սիրէմ կը
կուլաս կը	կէնէս կը	սիրէս կը
կուլա կը	կէնէ կը	սիրէ կը

Իսկ ինչ որ չափազանց զարմանալի է, և որին չեն հանդիպել մինչև այժմ որևէ բարբառում, այդ այն է, որ հորանջը (hiatus) գործածվում է այստեղ իբրև բայական երկու հակառակ ժամանակներ կազմելու մի ձև.

ներկա	գօ առնում, գօ առնուս, գօ առնու
ապառնի	գառնում, գառնուս, գառնու

Այս երևույթը նշանակալի է ընդհանուր լեզվաբանության համար էլ, ուր մտցնում է բոլորովին նոր մի միջոց ձևաբանության մեջ:

### Սահմանական անկատար

§384. Սահմանական անկատարը, անցյալ ապառնի Ա ձևը և անկատարի շարունակական ձևը կազմվում են ճիշտ սահմանական ներկայի ձևով՝ գօ, գու մասնիկներով և նրանց կրկնությամբ:

Այստեղ ունենք, սակայն, ամեն մի բայից մինչև չորս ձև, որոնց համար տալիս ենք հետևյալ օրինակները.

եփել	գօ իփա,	գու իփա	գիփա	գօգիփա
	գօփա			
ալել	գօ ալլը	գու ալլը	գալլը	գօգալլը
իջնել	գօ իչնի	գու իչնի	գիչնի	գօգիչնի
երթալ	գօյթի	գու իյթի	գույթի	գօգույթի

անել	գօ էնի,	գու էնի	գօնի,	գօգէնի,
	գէնա		գօնա	գօգէնա
առնել	գօ առնի	գու առնի	գառնի	գօգառնի
տալ			գուդա	գօգուդի
ամաչել	գօ ամչնի	գու ամչնի	գամչնի	գօգամչնի
օրհնել	գօ ոյհնի	գու ոյհնի	գույհնի	գօգույհնի
անարգել	գօ անըլգն	գու անըլգն	գանըլգն	գօգանըլգն
			գանըլգի	
օծել	գօ ուծա	գու ուծա	գուծի	գօ գուծի
անցնել	գօ անցնի	գու անցնի	գանցնի	գօգանցնի
ազատել	գօ ազատի	գու ազատի	գազատի	գօգազատի
աշխատել	գօ աշխատի	գու աշխատի	գաշխատի	գօգաշխատի
	աշխատը	աշխատի		
անիծել	գօ անըծա	գու անըծի	գանիծի	գօգանիծի
ելանել	գօ իլլա	գու իլլա	գիլլա	գօգիլլա
երերալ	գօ յայնի	գույայնի	գիյայնի	գօգիյայնի
	գօ ույայնի	գու ույայնի		
ուտել	գօդա	գու ուդա	գուդա	գօգուդա
սիրել	գօ սիյա	գու սիյա	գուսիյա	գօսիյա
պագանել	գօ բաքնի	գու բաքնի	գու բաքնը	գօ բաքնի
մրսել	գօ մըսի	գու մըսա	գու մըսի	գօ մըսի
կատարիլ	գօ գադըլը	գու գադըլը	գու գադըլը	գօ գադըլը
ազանիլ	գօ հազնի	գու հազնը	գու հազնի	գօ հազնի
հազալ	գօ հազի	գու հազը	գու հազի	գօ հազի
գողանալ	գօ գուղնի	գու գուղնը	գու գուղնի	գօ գուղնի
թողուլ	գօ թուղի	գու թուղը	գու թուղի	գօ թուղի
տալ	գօ ուդի	գու ուդա	գուդի	գօ գուդի
լալ	գօ ուլի	գու գուլը	գուլի	գօ գուլի
գալ	գօ իգի	գու իգի	գօգի	—
լինել	գօնի	գունի	գունի	գօ գունի
լցնել	գօնի	գունի	գունի	գօ գունի

Այս չորս շարքից առաջինը անցյալ անկատարի ընդհանուր ձևն է. օրինակ՝

էոնը ամնէն էօյ ուդնն գօ ալլը. «առաջ ամեն օր սենյակը ավլում էի»: Երկրորդը անցյալ ապառնիի Ա ձևն է. վօխը ունցնի նը ուդան գու կալլը.



«ծամանակ եթե ունենայի, սենյակը ավլելի»:  
Երրորդը պայմանականի անկատարն է.

ավիլ ունցնի նը ուղան գավլը. «ավել եթե ունենայի, սենյակը կավլելի»:  
Չորրորդ ձևը անցյալ անկատարի շարունակականն է.

ուղան գո գավլը, դ՛օն իգիլ. «սենյակը ավլելիս էի, դու եկար»:  
Ահա և սրանց վեց եզրերի խոնարհման պատկերը.

գօղի	գուղի	գօղի	գօ գուղի
գօղիյ	գուղիյ	գօղիյ	գօ գուղիյ
գօղէյ	գուղէյ	գօղէյ	գօ գուղէյ
գօղիճք	գուղիճք	գօղիճք	գօ գուղիճք
գօղիք	գուղիք	գօղիք	գօ գուղիք
գօղիճ	գուղիճ	գօղիճ	գօ գուղիճ

գօ առնի	գու առնի	գառնի	գօ գառնի
գօ առնիյ	գու առնիյ	գառնիյ	գօ գառնիյ
գօ առնէյ	գու առնէյ	գառնէյ	գօ գառնէյ
գօ առնիճք	գու առնիճք	գառնիճք	գօ գառնիճք
գօ առնիք	գու առնիք	գառնիք	գօ առնիք
գօ առնիճ	գու առնիճ	գառնիճ	գօ գառնիճ

գօ բիյա	գու բիյա	գօ բիյա	գօ բիյա
գօ բիյայ	գու բիյայ	գօ բիյայ	գօ բիյայ
գօ բիյէյ	գու բիյէյ	գօ բիյէյ	գօ բիյէյ
գօ բիյօճք	գու բիյօճք	գօ բիյօճք	գօ բիյօճք
գօ բիյաք	գու բիյաք	գօ բիյաք	գօ բիյաք
գօ բիյաճ	գու բիյաճ	գօ բիյաճ	գօ բիյաճ

### Պարզ ապառնի

§385. Պարզ ապառնին կազմվում է ստորադասական ներկայի վրա դնելով *պիտի*, որ աշխարհաբարի և բարբառների սովորական ձևն է: Բայց այս պիտի >բիդի ձևը Ջեյթունի բարբառում դառնում է կրճատմամբ՝ բա-դաձայնով սկսվող բայերի մոտ *բի*, ձայնավորով սկսվող բայերի մոտ *բիդ* կամ *բ՛*, իսկ միավանկ բայերի մոտ *բի*, երբեմն նաև *բիդի*: Այսպես՝ *բի սիյիմ* «պիտի սիրեմ», *բիյթօմ* կամ *բիդ հյթօմ* «պիտի երթամ», *բիլլիմ* կամ *բիդ իլ-*

*լիմ* «պիտի ելնեմ», *բիդ առնում* կամ *բառնում* «պիտի առնեմ», *բի դօմ* կամ *բիդի դօմ* «պիտի տամ»:

Ստորև դնում ենք երեք բայի պարզ ապառնիի ամբողջական խոնարհումը.

<i>բի սիյիմ</i>	<i>բիյթօմ</i>	<i>բի դօմ</i>
<i>բի սիյիս</i>	<i>բիյթօս</i>	<i>բի դօս</i>
<i>բի սիյէ</i>	<i>բիյթո</i>	<i>բի դո</i>
<i>բի սիյիճք</i>	<i>բիյթօճք</i>	<i>բի դօճք</i>
<i>բի սիյէք</i>	<i>բիյթաք</i>	<i>բի դօք</i>
<i>բի սիյիճ</i>	<i>բիյթօճ</i>	<i>բի դօճ</i>

Ուրիշ բարբառներում *պիտի*-ն կարող է լինել նաև հետադաս, իսկ Ջեյթունի բարբառում չկա այդպիսի բան: Սրա պատճառն այն է, որ *պիտի*-ն կրճատվելով՝ հասել է իսկական նախամասնիկի աստիճանին, մինչև իսկ պարզ բ հնչման:

Երբ մի քանի ապառնի հաջորդում են իրար, կարող է մասնիկը միայն մի անգամ դրվել. ինչպես՝ *բիյթօմ դիսնում առնում* (որ և *բիյթօմ, բի դիսնում, բառնում*):

### Անցյալ ապառնի

§386. Կազմվում է պարզ ապառնիի ձևով, բայց մասնիկները դնելով ստորադասականի անցյալ անկատար ձևի վրա: Այսպես՝

<i>բի սիյա</i>	<i>բիյթի</i>	<i>բիդի</i>
<i>բի սիյայ</i>	<i>բիյթիյ</i>	<i>բիդիյ</i>
<i>բի սիյէյ</i>	<i>բիյթէյ</i>	<i>բիդէյ</i>
<i>բի սիյօճք</i>	<i>բիյթիճք</i>	<i>բիդիճք</i>
<i>բի սիյաք</i>	<i>բիյթիք</i>	<i>բիդիք</i>
<i>բի սիյաճ</i>	<i>բիյթիճ</i>	<i>բիդիճ</i>

Պարզ ապառնիի նման այստեղ էլ *բի* մասնիկը չի կարող հետադաս լինել, իսկ կրկնության դեպքում կարող է կրճատվել. ինչպես՝ *բիյթի դիսնի առնի* (որ և *բիյթի բի դիսնի բառնի*):

### Հրամայական Բ ձև

§387. Հրամայականի պարզ ձևը գործածական է միայն եզակի և հոգ-նակի Բ դեմքի համար, իսկ Ա և Գ դեմքերը, ինչպես և անցյալը կազմելու համար գործ է ածվում բարդ ձևը, որ կազմվում է ուրիշ բարբառների սովորական թող ձևով, որ Ջեյթունի բարբառում դառնում է խոլ բաղաձայնից

առաջ թուխ, ձայնավորից առաջ՝ թուղ, կարող է և կրճատվելով դառնալ թու:

Ահա սիրել, երթալ և գալ բայերի բարդ հրամայականի ներկան և անցյալը.

ներկա			
թուխ սիյիմ	թու սիյիմ	թուղ հյթօս	թուխ գօս
թուխ սիյէ	թու սիյէ	թուղ հյթօն	թուխ գի
թուխ սիյիմք	թու սիյիմք	թուղ հյթօնք	թուխ գօնք
թուխ սիյիմ	թու սիյիմ	թուղ հյթօն	թուխ գօն

անցյալ			
թուխ սիյա	թու սիյա	թուղ հյթի	թուխ գի, թուխ ի գի
թուխ սիյէյ	թու սիյէյ	թուղ հյթէյ	թուխ գէյ, թուխ ի գէյ
թուխ սիյանք	թու սիյանք	թուղ հյթիմք	թուխ ի գիմք, թուխ գիմք
թուխ սիյան	թու սիյան	թուղ հյթիմ	թուխ ի գիմ, թուխ գիմ

Ուրիշ բարբառներում թող մասնիկը կարող է բայից հետադաս լինել. ինչպես՝ Պլ. թող էրթա կամ էրթա՝ թող. բայց Ջեյթունում մնան երևույթ չկա. թող մասնիկը թե՛ ներկայում և թե՛ անցյալում բայից նախադաս է միշտ:

### Բաղադրյալ ժամանակներ

§388. Պուսի բարբառի մնան՝ Ջեյթունի բարբառն էլ ընդունակ է կազմելու բազմաթիվ բաղադրյալ ժամանակներ, որոնք առաջանում են անցյալ և ապառնի դերբայների և էական բայի հարադրությամբ: Ըիշտ մնան պուսահայ բարբառի ձևերին, ամփոփում ենք դրանք այստեղ, պոլսահայ համապատասխան ձևերի հետ միասին.

#### սահմանական

- հարակատար. — սիյօձ իմ «սիրած եմ» ...
- հարակատար անորոշ. — սիյիյ իմ «սիրեր եմ» ...
- գերակատար. — սիյօձ ա «սիրած էի» ...
- գերակատար անորոշ. — սիյիյ ա «սիրեր էի» ...
- կիկին կատարյալ. — սիյօձ էղօ «սիրած եղայ» ...
- հարակատար ապառնի. — սիյօձ բիմամ «սիրած պիտի ըլլամ» ...
- հարակատար ապառնի անցյալ. — սիյօձ էղօձ բիմամ «սիրած եղած պիտի ըլլամ» ...

գերակատար ապառնի. — սիյօձ բիմի «սիրած պիտի ըլլայի» ...  
 գերակատար ապառնի անցյալ. — սիյօձ էղօձ բիմի «սիրած եղած պիտի ըլլայի» ...

- պարտավորական ներկա. — սիյիլո իմ «սիրելու եմ» ...
- պարտավորական անկատար. — սիյիլոյ ա «սիրելու էի» ...
- պարտավորական կատարյալ. — սիյիլոյ էղո «սիրելու եղայ» ...
- պարտավորական հարակատար. — սիյօձ մալու իմ «սիրած ըլլալու եմ» ...
- պարտավորական գերակատար. — սիյօձ մալու ա «սիրած ըլլալու էի» ...
- պարտավորական ապառնի. — սիյիլո բիդի մամ «սիրելու պիտի ըլլամ» ...
- պարտավորական ապառնի անկատար. — սիյիլո բիդի մի «սիրելու պիտի ըլլայի» ...
- պայմանական հարակատար. — սիյօձ գումամ «սիրած կըլլամ» ...
- պայմանական հարակատարի շարունակական. — սիյօձ գօգումամ «սիրած կըլլամ կոր» ...
- պայմանական գերակատար. — սիյօձ գումի «սիրած կըլլայի» ...
- պայմանական գերակատարի շարունակական. — սիյօձ գօգումի «սիրած կըլլայի կոր» ...
- պայմանական ապառնի անորոշ. — սիյիլո գումամ «սիրելու կըլլամ» ...
- պայմանական ապառնի շարունակական. — սիյիլօ գօգումամ «սիրելու կըլլամ կոր» ...
- պայմանական անկատար ապառնի անորոշ. — սիյիլո գումի «սիրելու կըլլայի» ...
- պայմանական անկատարն ապառնի շարունակական. — սիյիլո գօգումի «սիրելու կըլլայի կոր» ...

#### ստորադասական

- հարակատար. — սիյօձ մամ «սիրած ըլլամ» ...
- ապառնի հարակատար. — սիյօձ մալո մամ «սիրած ըլլալու ըլլամ» ...
- գերակատար. — սիյօձ մի «սիրած ըլլայի» ...
- ապառնի գերակատար. — սիյօձ մալո մի «սիրած ըլլալու ըլլայի» ...

ապառնի. — սիյիլոն *նամ* «սիրելու ըլլամ» ...  
 անկատար ապառնի. — սիյիլոն *նի* «սիրելու ըլլայի» ...  
 հարակատար ապառնի անկատար. — սիյոձ էղոձ *նամ* «սիրած եղած ըլլամ» ...  
 գերակատար ապառնի անկատար. — սիյոձ էղոձ *նի* «սիրած եղած ըլլայի» ...  
 հարակատար ապառնի անկատար. — սիյոձ էղոձ *նամ* «սիրած եղած ըլլամ» ...  
 գերակատար ապառնի անկատար. — սիյոձ էղոձ *նի* «սիրած եղած ըլլայի» ...

կատարյալ. — հրամայական  
 հարակատար. — սիյոձ լայ «սիրած եղիր» ...  
 գերակատար. — սիյոձ թու(ղ) *նամ* «սիրած թող ըլլամ» ...  
 ապառնի. — սիյոձ լայ «սիրելու եղիր» ...

հարակատար. — դերբայ  
 ապառնի անորոշ. — սիյիլոն *նամ* «սիրելու ըլլամ» ...

Ավելորդ ենք համարում այս բոլոր ձևերի վեց եզրերը դնել այստեղ և բավականանում ենք միայն դնելով հարակատարի և գերակատարի խոնարհումը.

հարակատար	գերակատար
սիյիյ իմ	սիյիյ ա
սիյիյ իս	սիյիյ այ
սիյիյ է	սիյիյ էյ
սիյիյ ինք	սիյիյ օնք
սիյիյ էք	սիյիյ օնք
սիյիյ ին	սիյիյ ան

Ընդհանուր սրանց նման են նաև սիյոձ իմ, սիյոձ ա և այլն:

§389. Այս բոլոր պարզ, բարդ և բաղադրյալ ձևերը (բացի հրամայականից և դերբայներից) ունեն իրենց թեական եղանակը, որ կազմվում է բայի վերջում ավելացնելով *նը* (= Պլ. *նէ*) մասնիկը: Բոլոր ձևերը մեկ առ մեկ հիշել ավելորդ համարելով, տանք մի քանի օրինակ՝  
*խաղօս նը* «խաղամ նէ, եթե խաղամ», *դիսօձ նի նը*՝ *գիսս* «եթե տեսած լինեի, կասեի»:

*գիյօձ էղօձ նամ նը* «կերած եղած ըլլամ նէ, եթե կերած եղած լինեմ»:  
*գիյօձ էղօձ նի նը* «կերած եղած ըլլայի նէ, եթե կերած եղած լինեի»:  
*դիսնայոն նի նը*՝ *գիսս* «եթե տեսնելու լինեի, կասեի»:  
 Այս նույն *նը* մասնիկը, պոլսահայ բարբառի նման, ունի նաև մի ուրիշ գործածություն. նշանակում է մի այնպիսի վիճակ կամ գործողություն, որի մասին խոսողը բոլորովին վստահ է և ուզում է խոսակցի սխալը հերքել: Օրինակ՝

— *Ըողոն գիդիմ յույ ան չէ գուխի* «լավ գիտեմ, որ նա գողացած չէ»:

— *Իս էօչվեճքիս դիսս նը*՝

Այսպիսի *նը*—ն խոսակցության մեջ տարբերվում է թեականի *նը*—ից մի երկարացման նշանով:

§390. Պատմողական եղանակը կազմվում է բոլոր նախորդ ձևերից (թեականն էլ միասին)՝ ավելացնելով բայի վրա *էղիյ է*, որ համապատասխանում է ճիշտ 'Նոր Նախիջևանի *էղիյ է* «եղել է» ձևին և տարբերվում է պոլսահայ բարբառի *էղէր* «եղել» դերբայական ձևից՝ միայն էական բայի հարադրությամբ: Պատմողական եղանակը ցույց է տալիս. 1) ուրիշից լսված մի դեպք, որին շատ վստահություն ցույց չի տալիս պատմողը. 2) հեզմանք կամ ծաղր:

Համեմատել հետևյալ օրինակները.

*Իս լըսիցի յույ իյիք դուն փըլիյ է էղիյ է* «Ես լսեցի, որ երեք տուն փուլ է եկել եղեր» (վերապահություն)

*Ու բըդիգ բօլուզը էօյը չիյս հոց գուդի էղիյ է* «Այն փոքրիկ երեխան օրը չորս հաց կուտե եղեր» (ծաղր կամ հեզմանք):

Այստեղ էլ ավելորդ ենք համարում հիշել պատմողական եղանակի ձևերի անվերջանալի շարքը, և տալիս ենք միայն մի քանի օրինակ.

*Վօղը բիդի գի էղիյ է* «Վաղը պիտի գայ էղեր»:

*Բի հասնը էղիյ է, ամմա չէ հասի* «Պիտի հասնի էղեր, բայց չէ հասել»:

*Հասնիլոն վիյո գունա էղիյ է* (= Պլ. Հասնելու վրա կըլլա էղեր):

*Սիյօձ էղօձ նի նը էղիյ է* (= Պլ. Սիրած եղած ըլլայի նէ էղեր):

*Բիյիլոն բի նի նը էղիյ է* (= Պլ. Բերելու պիտի ըլլայի նէ էղեր):

*Անօձ էղօձ նի նը էղիյ է, գուդի էղիյ է* (= Պլ. Անած եղած ըլլայի նէ էղեր, կու տայի էղեր) = թուրք. *Almāš olmāš olsayōdēm əmāš, verir idim imiş*.

Երբ նախադասության մեջ մի քանի բաղադրյալ բայեր հաջորդում են իրար, էական բայը կարելի է դնել միայն մի անգամ. օրինակ՝

*Առիյ գնացիյ ու ծախիյ է* «Առել, գնացել ու ծախել է»:

Առօժ բիյօժ ձախօժ Գիհք Գը, ըոընդ գուճէյ «Առած բերած ծախած եթէ լիճեհնք, լալ կլիճեր»:

**Անցողական բայեր**

§391. Անցողական (կամ պատճառական) կոչվող բայերը կազմվում են երկու ձևով. կա՛մ բայի վրա ավելացնելով –*ցընի* մասնիկը և կա՛մ բայի հետ խոնարհելով տալ > *դօլ* բայը: Օրինակ՝

մոռանալ	> մառնօլ	— մառցընի
ապրիլ	> աքըլ	— աքըցընի
իմանալ	> իմնօլ	— իմնացընի
լուալ	> վօլօլ	— վլացընի

**Բայց նաև՝**

լուալ տալ	> վօլօլ դօլ
բերել տալ	> բիյիլ դօլ
բանալ տալ	> բննօլ դօլ

Կանոն չկա իմանալու համար, թե երբ է դրվում տալ բայը և երբ *ցնել* մասնիկը: Այս վերջինն էլ երբեմն ունենում է –*ցընի* ձևը, երբեմն էլ –*ացընի*, –*ըցընի*, ինչպես երևաց վերի օրինակներից:

§392. Անցողական բայի խոնարհումը կատարվում է հետևյալ ձևով. օրինակ ենք բերում *խմցնել* բայը.

ստոր. ներկա	ստոր. անկատար	կատարյալ
<i>խումցունիմ</i>	<i>խումցունա</i>	<i>խումցուցա</i>
<i>խումցունիս</i>	<i>խումցունայ</i>	<i>խումցուցայ</i>
<i>խումցունե</i>	<i>խումցունէյ</i>	<i>խումցուց</i>
<i>խումցունիք</i>	<i>խումցունոք</i>	<i>խումցուցոք</i>
<i>խումցունէք</i>	<i>խումցունաք</i>	<i>խումցուցաք</i>
<i>խումցունիմ</i>	<i>խումցունամ</i>	<i>խումցուցամ</i>

հրամայական՝ *խումցու* (կամ *խումցույ*), *խումցուցէք*  
 դերբայներ՝ *խումցունիլ*, *խումցուցօժ*, *խումցուցիլ*, *խումցունէօղ*,  
*խումցունիլո՛ղ*, *խումցունիլէք*:

§393. Հաջորդ ցուցակով տալիս ենք մի խումբ բայերի կատարյալի ձևը, ապա անցողականի անորոշը և կատարյալի եզակի Ա դեմքը.

կլանել	> գըլլիլ	գըլլիցի	գըլլըցընիլ	գըլլըցըցա
դառնալ	> դնառնօլ	դնառոց	դնառցընիլ	դնառցըցա

քնել	> քընանօլ	քնացո	քընացընիլ	քընացըցա
ուտել	> ուդիլ	գիյո	գընցընիլ	գընցըցա
լուսանալ	> լուսնօլ	լուսոց	լըսացընիլ	լըսացըցա
վազել	> վազիլ	վազիցի	վազցընիլ	վազցըցա
դաշիլ	> դիբնօլ	դիբո	դըբըցընիլ	դըբըցըցա
հասանել	> հասնօլ	հասո	հասցընիլ	հասցըցա
հեռանալ	> խօսվօնօլ	խօսվօցո	խըռվըցընիլ	խըռվըցըցա
փայտանալ	> փէդնօլ	փէդոց	փէդցընիլ	փէդցըցա
վախենալ	> վախնօլ	վախոց	վախցընիլ	վախցըցա
գողանալ	> գուղնօլ	գուխոց	գուխցուցիլ	գուխցուցա
հիւանդանալ	> հիվընդնօլ	հիվընդոց	հըվընդըցընիլ	հըվընդըցըցա
ամաչել	> ամուչնօլ	ամըչոց	ամըչըցընիլ	ամըչըցըցա
ճանաչել	> ջէնչնօլ	ջէնչոց	ջէնչըցընիլ	ջէնչըցըցա
խլանալ	> խուլնօլ	խուլոց	խուլցուցիլ	խուլցուցա
կակղանալ	> գագուղնօլ	գագուղոց	գագըղըցընիլ	գագըղըցըցա
երդնուլ	> օյղնվօնօլ	օյղնվօնոց	ըղնվընցընիլ	ըղնվընցըցա
ուռնուլ	> ուռնօլ	ուռոց	ուռցուցիլ	ուռցուցա
ուռենալ	> ուռոննօլ	ուռիցո	ուռոցուցիլ	ուռոցուցա
փլչիլ	> փլչէլիլ	փօլո	փլըցընիլ	փլըցըցա
մտանել	> մօդնօլ	մօդո	մըդըցընիլ	մըդըցըցա
անցանել	> անցընլ	անցո	անցընիլ	անցըցա
աղտոտել	> աղդիդիլ	աղդիդիցի	աղդիդըցընիլ	աղդիդըցըցա
աշխատիլ	> աշխադըլ	աշխադիցո	աշխադըցընիլ	աշխադըցըցա
երերալ	> իյիյօլ	իյիյոց	իյայըցընիլ	իյայըցըցա
գլտորել	> գըլդըլիլ		գըլդըլըցընիլ	գըլդըլըցըցա
երկիլ	> օյօլնօլ		ըլըվըցընիլ	ըլըվըցըցա
իջանել	> իչնօլ		իչացընիլ	իչացըցա
խաղալ	> խաղօլ		խախըցընիլ	խախըցըցա
խմել	> խումիլ		խըմըցընիլ(ու)	խումցուցա
խոստովանիլ	> խոստովանըլ		խըստըլըվընցընիլ	խոստովանցուցա
կսկծալ	> գըսգըլճոլ		գըսգըլճըցընիլ	գըսգըլճացուցա
հանդիպիլ	> հանդըբալ		հանդըբըցընիլ	հանդըբըցուցա
հրամ(ա)յել	> հրամայիլ		հըլյամըցընիլ	հըլյամըցըցա

Ամանիլ > օյմօննօյ  
 Արմանցընիլ Արմանցըցա  
 օյմօնցընիլ օյմօնցըցա

§394. Հետաքրքրական է Ջթ. բարբընիլ բայը, որ համապատասխանում է ուրիշ բարբառների հատցնել բային՝ «սպատել, վերջացնել, 2. դատարկել» նշանակությամբ: Այս բայը գրաբարի պարսպ > բայօթ «դատարկ» բառից է և պարպիլ > բայբընօլ «սպատել» բայի անցողականն է, որ կանան բայբընցընիլ ձևով և բարեձևության (euphémisme) համար դարձել է պա բարբընիլ, կտր. բարբընը, հրմ. բարբույ:

Գրաբար լնուլ բայը կորցնելով իր նախաձայնը՝ դառնում է Ջթ. նօլ, որ կատարյալում տալիս է լնցա՝ գրբ. լցի ձևին համապատասխան: Գրբ. լցուցանել անցողականի դիմաց Ջթ. չունի համապատասխան ձև. կարևոր դեպքում կարելի է ասել իլիհնը նօլ:

Թուրքերեն բառերից էլ կարելի է կազմել անցողական բայ. ինչպես՝ սաղընիլ «կենդանացնել», թէմիզընիլ «մաքրել», քուրոունցունիլ «անդամալույծ դարձնել», բայըընցընիլ «հաշտեցնել»:

Անցողական բայերի շարքին են դասվում նաև հարցանել > հայցընիլ, հայցընը, հայցույ և ցուցանել > ցըցընիլ, ցըցըցա, ցօցու:

### Կրավորական բայեր

§395. Կազմվում են ներգործական բայերից, երբեմն էլ նույնիսկ չեզոք բայերից: Կրավորականը կազմվում է առաջին և երկրորդ լծորդության անորոշի վերջավորությունը դարձնելով վալ, իսկ երրորդ լծորդության կրկին տիպարների մեջ կատարյալի եզակի առաջին դեմքի ը, ո վերջավորությունը ջնջելով և մնացյալի վրա դնելով վալ կամ վըլ (բաղաձայնների խճողման դեպքում ըվալ) մասնիկը: Այսպես՝

սիրել	> սիյիլ	— սիյվալ
խածանել	> խաձնիլ	— խաձնըվալ
խօսիլ	> խուսալ	— խուսվալ
անցանել	> անցնըլ	— անցնըվալ
հաւաքել	> հաֆքիլ	— հաֆքըվալ
ուտել	> ուդիլ	— ուդվալ
խմել	> խումիլ	— խումվալ
կլանել	> գըլիլ	— գըլիվալ
մաշել	> մէշիլ	— մէշվալ
բանալ	> բննօլ	— բննցվըլ

լուալ	> վօլօլ	— վըլացվըլ
գիտել	> գիդնօլ	— գիդընվալ
դիմանալ	> դիմանօլ	— դիմանցվըլ
իմանալ	> իմնօլ	— իմանցվըլ
լալ	> լօլ	— լացվըլ
լնուլ	> նօլ, լնցա	— լնցվըլ
կենալ	> գինօլ	— գիցվալ
մոռանալ	> մառնօլ	— մառնըվալ

Կորչել բայն ստացել է գըընըվըլ ձևը, որ կրավորականի ձևն ունի. սրա ներգործականն է գըընըլ, որ է «կորցնել». այս էլ անցողական է դառնում գըընընցընիլ ձևով:

§396. Անցողական բայերն էլ կարող են ունենալ իրենց կրավորական ձևը. օրինակ՝

խմել	> խումիլ	— խումցունիլ	— խումցուվալ
կլանել	> գըլիլ	— գըլիլնցընիլ	— գըլիլնցվալ
մաշել	> մէշիլ	— մէշընցընիլ	— մէշընցվալ
խօսիլ	> խուսալ	— խուսուցունիլ	— խուսուցվալ
ուտել	> ուդիլ	— գըլնցընիլ	— գըլնցըվալ

§397. Կրավորական բայերը խոնարհվում են հետևյալ ձևով.

ստոր. ներկա	ստոր. անկատար	կատարյալ
սիյվաս	սիյվա, սիյվի	սիյվիցո
սիյվասս	սիյվիյ	սիյվիցոյ
սիյվա	սիյվէյ	սիյվիցօվ
սիյվանք	սիյվօնք	սիյվիցի(ն)ք
սիյվաք	սիյվիք	սիյվիցիք
սիյվան	սիյվին	սիյվիցօն

հրամայական՝ սիյվե, սիյվիցէք  
 դերբայներ՝ սիյվալ, սիյվօձ, սիյվիյ, սիյվէօդ, սիյվիլո, սիյվիլէք:

### Ժխտական բայ

§398. Բայերի ժխտականը կազմելու համար գործածվում են չ, չօ, չէ մասնիկները, որոնք դրվում են դրական ձևերի վրա:

Ամենից պարզը կատարյալ ժամանակը և դերբայներն են, որոնք ստանում են չ մասնիկը՝ նախամասնիկի ձևով. ինչպես՝

	կատարյալ	
չսիյիցի	չսիյիցոճք	
չսիյիցիյ	չսիյիցոճք	
չսիյից	չսիյիցոճ, չսիյիցիճ	

Կարելի է նաև չի սիյիցի և այլն:

դերբայներ՝ չսիյիլ, չսիյեօղ, չսիյօձ, չսիյիլո, չսիյիլէք:

Այսպես են նաև ստորադասականի ներկա և անցյալ ձևերը, ինչպես նաև հրամայականի Բ ձևի ներկան ու անցյալը: Այսպես՝

չսիյիմ	չսիյա
չսիյիս	չսիյայ
չսիյէ	չսիյէյ
չսիյիճք	չսիյօճք
չսիյէք	չսիյաք
չսիյիճ	չսիյաճ

թուխ չսիյիմ	թուխ չսիյա
թուխ չսիյէ	թուխ չսիյայ
թուխ չսիյիճք	թուխ չսիյէյ
թուխ չսիյիճ	թուխ չսիյօճք
	թուխ չսիյաք
	թուխ չսիյաճ

§399. չօ ձևը դրվում է սահմանական ներկայի և անկատարի վրա, որոնք այս դեպքում ստանում են շարունակականի նշանակություն: ինչպես՝

չօ սիյիմ	«չեմ սիրեր կոր»
չօ սիյա	«չէի սիրեր կոր»

ներկա	անկատար
չօ սիյիմ	չօ սիյա
չօ սիյիս	չօ սիյայ
չօ սիյէ	չօ սիյէյ
չօ սիյիճք	չօ սիյօճք
չօ սիյէք	չօ սիյաք
չօ սիյիճ	չօ սիյաճ

§400. Պարզ ապառնից, ինչպես և անցյալ ապառնից կազմվում են ըն - մասնիկի հարադրությամբ՝ հետևյալ ձևով:

ըն բիդէ սիյիս	ըն բիդէ սիյայ
ըն բիդէ սիյիս	ըն բիդէ սիյայ
ըն բիդէ սիյէ	ըն բիդէ սիյէյ
ըն բիդէ սիյիճք	ըն բիդէ սիյօճք
ըն բիդէ սիյէք	ըն բիդէ սիյաք
ըն բիդէ սիյիճ	ըն բիդէ սիյաճ

Այս ձևերի սկզբում դրված ըն ժխտականը շեշտված է միշտ (իբր ին):

Դիտելի է, որ բիդի մասնիկը թեև դրականում ունի ի վերջնահանգումը, բայց ժխտականում միշտ էլ դառնում է է:

§401. Մնացյալ ժամանակները կազմվում են էական բայի ներկայի և անկատարի օժանդակությամբ: Այսպես՝

Ներկայի սովորական ձևը, որ նաև ապառնից նշանակություն ունի, կազմվում է եմ էականով, որի հետ միանում է անփոփոխ դերբայական -ի ձևը (իմա՝ -իյ, որ նույնն է Պլ. -եր և ուրիշ բարբառների -ել ձևի հետ).

չիմ սիյի	չիճք սիյի
չիս սիյի	չէք սիյի
չէ սիյի	չիճ սիյի

Հարակատարը կազմվում է -օձ դերբայով, որ կարող է թե՛ նախադաս լինել եմ էականից և թե՛ հետադաս.

չիմ սիյօձ	սիյօձ չիմ
չիս սիյօձ	սիյօձ չիս
չէ սիյօձ	սիյօձ չէ
չիճք սիյօձ	սիյօձ չիճք
չէք սիյօձ	սիյօձ չէք
չիճ սիյօձ	սիյօձ չիճ

Ապառնից դերբայով կազմված ժխտականն էլ ունի նույն կազմությունը, բայց ավելի սովորական ձևն է դնել նախ դերբայը, ապա էական բայի ժխտականը. այսպես՝

սիյիլօ չիմ	սիյիլօ չիճք	սիյիլօ չի	սիյիլօ չոճք
սիյիլօ չիս	սիյիլօ չէք	սիյիլօ չայ	սիյիլօ չճք
սիյիլօ չէ	սիյիլօ չիճ	սիյիլօ չէյ	սիյիլօ չճ

Անկատարի սովորական ձևը կազմվում է նույնպես -ի-ով հանգող դերբայով, որի հետ խոնարհվում է էական բայի անկատարը. այսպես՝

չը սիյի	չոնք սիյի
չայ սիյի	չըք սիյի
չէյ սիյի	չըն սիյի

Գերակատարը կազմվում է –*օձ* դերբայով՝ հարադրությամբ էական բայի անկատարի, որ կարող է դերբայից թե՛ առաջ դրվել և թե՛ հետո. օրինակ՝

չը սիյօձ	սիյօձ չը
չայ սիյօձ	սիյօձ չայ
չէյ սիյօձ	սիյօձ չէյ
չոնք սիյօձ	սիյօձ չոնք
չըք սիյօձ	սիյօձ չըք
չըն սիյօձ	սիյօձ չըն

Արգելականը լինում է *մի՛ սիյի, մի՛ սիյէք*: Հետադաս *մի՛* չի գործածվում բնավ:

§402. Միավանկ լայ, տայ, գայ բայերի ժխտականը լինում է հետևյալ ձևով.

**ստորադասական ցերկա**

չի լօմ	չի դօմ	չի գօմ
չի լօս	չի դօս	չի գօս
չի լո	չի դո	չի գո
չի լօնք	չի դօնք	չի գօնք
չի լւք	չի դւք	չի գւք
չի լօն	չի դօն	չի գօն

**ստորադասական անկատար**

չի լի	չի դի	չի գի
չի լիյ	չի դիս	չի գիյ
չի լէյ	չի դէյ	չի գէյ
չի լինք	չի դինք	չի գինք
չի լիք	չի դիք	չի գիք
չի լին	չի դին	չի գին

	կատարյալ	
չի լացը	չի դըվը	չի գի
չի լացըյ	չի դըվըյ	չի գիյ
չի լացօվ	չի դօվօվ	չի գիք
չի լացոնք	չի դօվօնք	չի գօնք
չի լացըք	չի դըվւք	չի գւք
չի լացըն	չի դըվըն	չի գին

**դերբայներ**

չի լօլ	չի դօլ	չի գօլ
չի լացտոյ	չի դըվէտոյ	չի գէտոյ՝
չի լացօձ	չի դօվօձ	չի գոձ
չի լալո	չի դալո	չի գալո
չի լալէք	չի դալէք	չի գալէք

**սահմանական ցերկա**

չօ լօմ, չօ իլօմ	չօ դօմ	չօ գօմ
չօ գուլօմ	չօ գուդօմ	չօ գօմ

**ապառնի առաջին**

չիմ իլօ	չիմ իդօ	չիմ իգօ
չիմ լօ	չիմ դօ	չիմ գօ

**անկատար**

չօ լի	չօ դի	չօ գի
չօ գուլի	չօ գուդի	չօ գի
չի լի	չի դի	չի գի

**պարզ ապառնի և անցյալ ապառնի**  
չօ գուլի (ապառնի անկատար շարունակական)  
ըչ բիդէ լօմ    ըչ բիդէ դօմ    ըչ բիդէ գօմ

\* Ջարմանալի են իգէտոյ, չիգէտոյ «եկող, չեկող» ձևերը, որոնց մեջ 4-ն դարձել է ապօրինի կերպով գ՞ հետևելով գօյ բայի նախահնչյունին:

Ըն բիդէ իլօս *Ըն բիդէ իդօս* *Ըն բիդէ իգօս*  
 Ըն բիդէ լի *Ըն բիդէ դի* *Ըն բիդէ գի*  
 Ըն բիդէ իլի *Ըն բիդէ իդի* *Ըն բիդէ իգի*

**Տրամայական**

մի՛ լո *մի՛ դո* *մի՛ գո*  
 մի՛ լաք *մի՛ դվէք* *մի՛ գաք*  
                   *մի՛ դաք*

թու չի լօս *թու չի դօս* *թու չի գոս*  
 թուխ չի լօս *թուխ չի դօս* *թուխ չի գոս*  
 թու չի լի *թու չի դի* *թու չի դի*  
 թուխ չի լի *թուխ չի դի* *թուխ չի դի*

**Տարակատար**

չիմ լացի *չիմ դըվի* *չիմ իգի*  
 չիս լացի *չիս դըվի* *չիս իգի*  
 չէ լացի *չէ դըվի* *չէ իգի*  
 չիք լացի *չիք դըվի* *չիք իգի*  
 չէք լացի *չէք դըվի* *չէք իգի*  
 չիմ լացի *չիմ դըվի* *չիմ իգի*

**Գերակատար**

չը լացի *չը դըվի* *չը իգի*  
 չըն լացի *չըն դըվի* *չըն իգի*  
 չէյ լացի *չէյ դըվի* *չէյ իգի*  
 չընք լացի, չօնք լացի *չընք դըվի, չօնք դըվի* *չընք իգի, չօնք իգի*  
 չըք լացի *չըք դըվի* *չըք իգի*  
 չըն լացի *չըն դըվի* *չըն իգի*

**Բ ձև**

չիմ լացօձ *չիմ դօվօձ* *չիմ իգօձ*  
 չը լացօձ *չը դօվօձ* *չը իգօձ*

Սրանց վրա ավելացնում ենք լիմել և լնուլ բայերի գլխավոր ձևերը.

<b>ստոր. Գերկա</b>	<b>ստոր. անկատար</b>	<b>կատարյալ</b>
չի ասմ	չի ցի	չէդո
չի ասս	չի ցիյ	չէդոյ
չի աս	չի ցէյ	չէդօվ
չի ասնք	չի ցիք	չէդօնք
չի ասք	չի ցիք	չէդաք
չի ասն	չի ցից	չէդոն

Տրամայական՝ մի՛ աս, մի՛ ասք,  
 դերբայներ՝ ասլ, էդէօդ, ցօձ (էդօձ), էդիյ, ասլո, ասլէք:

<b>սահմ. Գերկա</b>	<b>ապառնի</b>	<b>Տարակատար-գերակատար</b>
չիմ աս	ըն բիդէ ասմ	չիմ էդի
չօ ասմ	ըն բիդէ ցի	չիմ էդօձ
չօ գուսմ		չը էդի
		չը էդօձ

Ուլ «լնուլ» բայից.

<b>ստոր. Գերկա</b>	<b>ստոր. անկատար</b>	<b>կատարյալ</b>
չի ցօս	չի ցի	չի լըցը
չի ցօս	չի ցիյ	չի լըցըն
չի ցո	չի ցէյ	չի լըցօվ
չի ցօնք	չի ցիք	չի լօցօնք
չի ցաք	չի ցիք	չի լըցաք
չի ցօն	չի ցից	չի լըցօն

Տրամայական՝ մի՛ ցօ, մի՛ ցաք,  
 դերբայներ՝ ցուլ, ցէօդ, ցօձ, լըցիյ, ցալո, ցալէք:

<b>սահմ. Գերկա</b>	<b>ապառնի</b>	<b>Տարակատար-գերակատար</b>
չիմ ցօ	ըն բիդէ ցօս	չիմ ցօձ
լեղ	> <i>լիդ</i> «շիք»
խելք	> <i>խիլք</i>
ծեփ	> <i>ծիփ</i>

հեշտ	> <i>հիշդ՛</i>
հետ	> <i>հիդ</i>
հետք	> <i>հիթք</i>
մեծ	> <i>միմձ</i>
մեղր	> <i>միդր</i>
մեղք	> <i>միխք</i>
մերկ	> <i>միրգ</i>
մեք	> <i>միմք</i>
յետ	> <i>յիդ</i>
նեղ	> <i>նիդ</i>
ներ	> <i>նին</i>
ներկ	> <i>նիրգ</i>
շեղք	> <i>շիխք՛</i>
շեռ	> <i>շիռ</i>
շերտ	> <i>շիռդ՛</i>
սեր	> <i>սին</i>
սերմն	> <i>սիրմ</i>
վեր	> <i>իվիր</i>
վեց	> <i>վիցց</i>
տեղ	> <i>դիդ</i>
ցեց	> <i>ցից</i>

Միավանկ բառերից միայն երեքն ունեն նոր ձև. այն է՝ դեմ > *դիմն* «կողմ», ձեռք > *ձիւռք* (ինչպես Պոլսի բարբառով *ձառք*), իսկ *ի ներքս* բառը ձևափոխվելով՝ դարձել է *նրգձէ*:

§33. Երկվանկ բառերի մեջ էլ *ե-ն* դառնում է *ի*.

աբեթ	> <i>աբիդ՛</i>
աղեղն	> <i>աղիդ</i>
ասեղ	> <i>աիիդ</i>
աւել (գոյ.)	> <i>աւիլ</i>
բերան	> <i>բիրուն</i>
բևեկն	> <i>բիվիգ</i>
բևեռ	> <i>բիվիռ</i>
բուեղ	> <i>բիգիդ</i>
գետիճ	> <i>գիդէճ</i>

գիշեր	> գիշիր
դեղել	> դիղիլ
դեղիմ	> դիղէմ
դերձան	> դիրձան
երես	> իրիս
թեզանք	> թիզանք
թեթև	> թիթիվ
լեզու	> լիզո
լեղի	> լիղա
ծեծել	> ձիձիլ
ծեփել	> ձիփիլ
կեղև	> գիղիվ
համեմ	> համիմ
հեծան	> հիձան
հեռի	> հիրո
հերիք	> հիրք
հերկել	> հիրգիլ
հերու	> հիրո
ձմեռն	> ձրմին
մեղու	> միղո
յետև	> իղիվ
նետել	> նիղիլ
ներկել	> նիրգիլ
շերեփ	> շիրփի
շերտել	> շիրդիլ
պատեխ	> բարիխ
պճեղն	> բջիղ
սեղան	> սիղուն
սիսեռն	> սիսին
վեղար	> վիղուր
տերև	> դիրիվ
ցերեկ	> ցիրիգ
փեթակ	> փիթիգ
փեսայ	> փիսո
փեսել	> փիղիլ
փեսուր	> փիղէոր

քերել	> քիրիլ
քերթել	> քիրդիլ
քթեթ	> քթիթ

§34. Մի քանի օրինակ ունենք երկվանկ բառերից, որոնց մեջ *ե-ն* սղվում է այսպես են՝

երեք	> ըրք
զենուլ	> զընիլ «մորթել»
խեղդել	> խիղդիլ, խիդիլ
խեճեպ	> խիջիք, խջիք
ճեղքել	> ջըխգիլ
վերայ, ի վերայ	> ըրվա

Մի քանի տեղ էլ *ե-ն* դառնում է *ի, էօ, օ*.

հերիւն	> հիրէն, հիրէօն
ուղեղ	> դիւղ, ըղէօղ
ումեկ	> ումօգ «հույս»

§35. Երեք և չորս վանկանի բառերի միջնավանկի *ե* ձայնավորը հաճախ սղվում է, իսկ առաջին և վերջին վանկում գտնվող *ե-ն* կանոնավոր կերպով դառնում է *ի*, երբեմն էլ՝ *ը* և այլն: Ահա բոլոր օրինակների ցուցակը.

աղեղնել	> աղըննիլ «զգել»
անթեղել	> անթիղիլ
աւելի	> ավիլա
աւետարան	> ավիդարուն
բարեկենդան	> բարգըննա, բարգըննիք
բևեկնի	> բիվգիճնա
գերեզման	> գըրըզմուն
եկեղեցի	> գիղիցա
երեկոյ	> իրիգօն, իրգօն
երեսուն	> յառսօն
թեզանք	> թիզանք
թիթեռնիկ	> թիթըռնա
խեչափառ	> խիչիփուր, խչիփուր
ծիծեռնակ	> ձիձըռնագ
կարենալ	> գառնիլ

հայելի	> հիլիլա
հաց(եմի)	> հացիհնա
հեծանել	> հիզմիլ
հոսելի	> հիսսիլա
հրեշտակ	> հրըշդիւզ
ձմեռուկ	> ձըմհիրիզ, ձըմէօրիզ
մաթուզեմի	> մաթօսիհնա
մանանեխ	> մանիխ
մեծանալ	> միզմիլ
մեռանիլ	> միռնիլ
մորեմի	> մորմենհի>մըրմիհնա
մրտեմի	> մըրողիհնա
նեղանալ	> նիղանիլ
ուռեմի	> ուռիհնա
պատեղւոր	> բաթաթիլ
սկեսուր	> հիսգիսէօր
վախեմալ	> վախանիլ
վայելել	> վիլլիլ
վարդապետ	> վարդաբիդ
վարժապետ	> վարժաբիդ
տեսանել	> դիսանիլ
փերեզակ	> փիրիզալ
փրփրեմ	> փրփրէօմ, փրփրէմ

Է

§36. Բառասկզբում ունենք միայն էշ, որ դառնում է հշ:

§37. Բառամիջումն էլ է-ն, ճիշտ ինչպես ե-ն, դառնում է առհասարակ հ. եղած օրինակներն են՝

Միավանկ բառերի մեջ՝

զէր	> զիռ
դէմ	> դիմ
կէս	> զիս
հէնք	> հիհնք, հիհնք
ձէթ	> ձիթ

մէջ	> միջ՝
մէջք	> միջք
պէտք	> բիդք
սէզ	> սիզ
տէն	> դիհն «ցող»
տէր	> դիռ
քէն	> քիհն

Որպես բացառություն՝ խէ «կողքին» բառը դառնում է խաշ, իսկ մէկ-ը լինում է միզ, միյ մը և մէդ՝

§38. Երկվանկ բառերից կան միայն հետևյալ օրինակները.

աղէկ	> աղէլ
ասէ՛ն	> ասմէ՛ն
անէծք	> անհիծք
գոմէշ	> գիմիշ
եղէզն	> իղիզ՝
երէկ	> իրիզ՝
երէց	> իրից
խլէզ	> խլիզ
շահէն	> շահան «բազէ»
պարսէտ	> բարսէթ

Մրանց մեծ մասն ունի է >ի: Ծահէն բառը համարվում է թուրքերեն: Բզէզ բառն էլ կրճատվելով՝ դարձել է բըզ:

§39. Բառավերջում ունենք միայն երկու բառ՝ միավանկ թէ >թէ և երկվանկ պախրէ > բախրէ «եզ». երկուսի մեջ էլ է-ն մնում է է:

Այսպես նաև կիրակի >գիրալէ ծագում է ոչ թե ի-ով հանգող ձևից, այլ՝ կիրակէլ ձևից:

Ը

§40. Բառասկզբում ունենք միայն ընջող >ընջէօղ, ընտանի >ընդաննօ, ընտրել >հընդըրիլ «չոկել», ինչպես և ըոզակ >ըոզուզ, ռեհան >ըոռիհում, ոռպ >ըոռօթ «դոշաթ»: Այս բոլորի մեջ ը-ն մնում է անփոփոխ:

§41. Բաղաձայնների կուտակման ժամանակ ը ձայնավորի ներմուծու-մը համապատասխան է գրական լեզվին. ինչպես՝ սկրտել >մըզըրդիլ,

մկրատել > մկրամի, գտանել > դ՛ընճի, գղթոր > գըխդիւր և այլն: Ուր որ տարբերություն կա՝ դնում եմ այստեղ.

աղանձի	> աղվընա
անձրև	> անձըրիվ
բևեկնի	> բիվգիճա
երևալ	> ըրվընի, իրվընի
ընտրել	> հընդըրի
խառնակել	> խամընգիլ
խտղտել	> դըդդըդի
ծղրիդ	> ձըդըրդոգ
կշռել	> գիշըրի
ճնճողուկ	> ջընջըդուգ
մօտիկանալ	> մուդգընի
անանի	> ըլմանի
տատրակիկ	> դամըրգամ
փշրանք	> փըշըրէօք

§42. ը ձայնավորի փոխարեն, իբր թարմատար, դրված է մի այլ ձայնավոր՝ հետևյալ բառերի մեջ.

անգղ	> հունգիդ «կանթ»
անօսր	> անսուր, անուր
գլորիլ	> գիլըրիլ
դժուար	> դիժուր
եզր, եզերք	> հզզիր, իզզիրք
լկամ	> լիզիւնք, լգիւնք
կշտանալ	> գիշդանիլ
ճճի	> ջիջա «շերամ»
յստակ	> հիսդիզ
նշան	> անշուն
շնորհք	> շիճիրք, շիճիրք
ոսկր	> հիսգիր
պտուկ	> բուդիզ (ծծի)
սկեսուր	> հիսգիւտօր
սպիտակ	> հիսբիդիզ
տարգալ	> դիգիլ
քշտել	> քիշդիլ «հարու տալ»

ի

§43. Բառակազմում ի-ն ներկայացնում է շատ անորոշ մի վիճակ (օրինակների սակավության պատճառով): Այսպես՝

ի>ի. —ի (նախդիր), իմանալ > իմնի, իշխել > իշխի, իխշիլ «համարձակվել», իջանել > իշնել:

ի>է. —իքն > էնք, ինն > էնը:

ի>էօ. —ինձ > էօնձ (զազանը):

§44. Միավանկ բառերի միջին ի ձայնավորը դառնում է միշտ է. այսպես են՝

գիճ	> գէճ
գիր	> գէր
գիրկ	> գէրգ
թիզ	> թէզ
լիտր	> լէդր
խիճ	> խէջ
խի	> խէվ (թոչունը)
ծիլ	> ձէլ
ծիծ	> ձէձ
ծիրտ	> ձէրդ, ձիրդ
կիճ	> գէճ
հիմն	> հէմ
հիճ	> հէճ
հիճգ	> հէճգ
միս	> մէս
միտք	> մէդք
շիլ	> շէլ
չիտ	> շէդ
պիճ	> քէճ
վիզ	> վէզ
վիթ	> վէթ
ցից	> ցէց
քիթ	> քէթ
քիլ	> քէլ
քիչ	> քէչ
քիստ	> քէս

Միայն ճիպո բառն է, որ բացառաբար դառնում է ջաբո, և սիրտ բառը, որ լինում է սիրո:

§45. Բազմապատկեր բառերի վերջնապատկերի ի ձայնավորը նույնպես դառնում է է. եղած օրինակներն են՝

ամիս	> ամես
անիծ	> անէծ
անկողին	> ունգողէն
արիշ	> անոռէշ
արճիճ	> արջէջ
գետին	> գիդէն
դեղին	> դիդէն
երիցկին	> իրիցգէն
երկինք	> իրգէնք
թոնիր	> թիճէր
խլինք	> խլէնք
ծարիր	> ձիրէր
կարմիր	> գէրմէր
կոծիծ	> գձէծ
կոտիմն	> գոդէմ, գդէմ
հանգիստ	> հանգէտի՛
հովի	> հուվէվ
մարմին	> մարմէնք
մոխիր	> մախիտէր
ոջիլ	> իջէլ
չամիչ	> չամէչ
պանիր	> բանէր
պատիճ	> բջէջ
պղինձ	> բղէնձ
տիկին	> դիգէն
քրտինք	> քրոդէնք
օժիտ	> ուժէդք

Սկիհ բառը նախ դարձել է սկիհ, որից էլ սրգէն:

§46. Այս դիրքում մի քանի բառ անկանոն են. այսպես՝  
կաղին > գաղէօն, գնդէօն

հաւկիթ	> հավգայթ (իսկ Յողուն-օլուկ՝ հավգէթ)
կշիռք	> գիշիռք
նախիր	> նախիւր (անշուշտ թուրքերեն)
նարինջ	> լառանջ «թուրինջ»
որիզ	> ըրոօզ (արաբերեն aruz) «բրինձ»
պատիժ	> բադիժ
սպրիլ	> սքրիլ (ամիսը)

§47. Այս դիրքում -իկ, -իք-ով վերջացող բառերը (նույնիսկ միապատկերներն) ի ձայնավորը փոխում են (ւնգ, ւնք, ազ, աք).

ալիկ	> ւնլւնգ
աղիք	> ւնդւնք
բշտիկ	> փշդնւնգ
բոկիկ	> բիգւնք «բոքիկ»
Ջատիկ	> Ջւնդւնք
թեզանիք	> թիզւնք
թիթեռնիկ	> թիթըրոնւնք
թրիք	> թրւնք
ժանիք	> ջւնդւնք
ծաղիկ	> ձւնդւնք
կծիկ	> գըձձւնք
կնիկ	> գննւնք
հարսանիք	> հարսանաք
հերիք	> հիրւնք
մերկ-իկ	> միրգւնք
շապիկ	> շւնքւնք
ուլիկ	> ուլւնք
սինձ	> սնձւնք (<*սնձիկ)
վարտիք	> վարդաք
տանիկ	> դիջւնք
տատրակ-իկ	> դւնդըրգւնք
տիկ	> դւնք

§48. Փերեզակ բառի դիմաց ունենք *փիրիզաթ*. և որովհետև *ակ-ը* չի տալիս այս բարբառում *ազ, աթ, այլ՝ ուզ, էօզ*, ուստի *փիրիզաթ* ձևն էլ առաջացած պիտի լինի ոչ թե փերեզակ-ից, այլ փերեզիկ ձևից, որ գործածական է նաև այլուր:

Սրա նման է նաև *ծիճընազ*, որ առաջացել է ծիծեռնիկ ձևից: Բացառություն է քարաճիկ, որ տալիս է այստեղ *քիրջօզ*:

Բացառություն է նաև պարիկ, որ բարդությամբ տալիս է *ջիրըբաղիզ*. տե՛ս այս մասին վերը՝ §19:

Շողիք «լորձունք» բառը տալիս *շուղէնք*, ուստի գալիս է ոչ թե *շողիք*, այլ *շողիճք* ձևից, ճիշտ ինչպես ունենք քրտիճք > *քրտիճք*:

§49. Բազմավանկ բառերի մեջ գտնվող անշեշտ *ի* ձայնավորը մնում է առհասարակ *ի*. այսպես են՝

անիծել՝	> <i>անիծիլ</i>
գինի	> <i>գինա</i>
գիշեր	> <i>գիշիր</i>
գիտենալ	> <i>գիդաճիլ</i>
դիմանալ	> <i>դիմաճիլ</i>
դիպիլ	> <i>դիրիլ</i>
երիցկիճ	> <i>իրիցգէճ</i>
թիթեռնիկ	> <i>թիթըռնաթ</i>
լիզել	> <i>լիզգիլ</i>
խիպար	> <i>խիրուր</i>
ծիծաղիլ	> <i>ծիճաղիլ</i>
ծիծեռնակ	> <i>ծիճըռնազ</i>
կիրակի	> <i>գիրաթէ</i>
հինել	> <i>հինիլ</i>
հիւանդ	> <i>հիվուճդ</i>
հիւանդանալ	> <i>հիվըճնիլ</i>
յիսուն	> <i>յիսուն</i>
շինել	> <i>շինիլ</i>
պատիճջան	> <i>բաղիճջուն</i>
պաքսիմատ	> <i>բաքսիմութ</i>
պիծակ	> <i>բիճճուզ</i>
սիսեռն	> <i>սիսիռ</i>

սիրել	> <i>սիրիլ</i>
փիճի	> <i>փիջա</i>
փիլոճ	> <i>փիլիլոճ</i>
քրիստոնեայ	> <i>քրիսդիճէ</i>

§50. Տեղ-տեղ բառամիջի *ի*-ն սղվում է. այսպես են՝

երիկամն	> <i>իլգամնէօզ</i>
լիմոն	> <i>լըմսոն</i>
լինել	> <i>լըճիլ</i>
սիմիճոր	> <i>սըմըճըրաթ</i>
կաթողիկոս	> <i>գաթաղիզիւս</i>

կամ ենթարկվում է անկանոն հնչյունափոխության. ինչպես՝

հիմայ	> <i>հիմօ</i>
սպիտակ	> <i>իւսքիտիզ</i>

§51. Բառի վերջում գտնվող *ի*-ն դառնում է կանոնավոր կերպով *ա*. օրինակներն են՝

ագի	> <i>ագա</i>
աղաւնի	> <i>աղվընա</i>
աղի	> <i>աղա</i>
անալի	> <i>ալլա</i>
աւելի	> <i>աւիլա</i>
բւենկի	> <i>բիվգիճա</i>
գարի	> <i>գարա</i>
գինի	> <i>գինա</i>
գիւղացի	> <i>գիղացա</i>
գօտի	> <i>գուդա</i>
եկեղեցի	> <i>գիղիցա</i>
եղի	> <i>իղա</i>
լեղի	> <i>լիղա</i>
խնամի	> <i>խնամա</i>
կաշի	> <i>գիշա</i>
հայելի	> <i>հիլիլա</i>
հացեմի	> <i>հաճցիճա</i>
հոգի	> <i>հիգգնա</i>
հոսելի	> <i>հիսսիլա</i>



ճճի	> ջիջա
մաթուզեմի	> մաթսիմա
մատանի	> մադնա
մաքի	> մազնա
մոզի	> միզզա
մորեմի	> մըրմիմա
մրտեմի	> մըրորիմա
յղի	> աղղա
նօթի	> աճութա
ոսկի	> իսզնա
ունկի	> նուզա
ուտեմի	> ուտիմա
ջորի	> ջիրա
սամի	> սամա
սօսի	> սուսա
տարի	> դարա
տոլի	> դիլլա
փիճի	> փիջա
փնթի	> փնթա
փոշի	> փիշա:

§52. Ի-ով վերջացող բառերից մի քանիսը արժանի են առանձին ուշադրության.

ա) մի՛ արգելական բառ-մասնիկը և քանի՞՞ հարցականը կրճատելով իրենց վերջնաձայնը, դառնում են *մի՛, քի՛նքի՛*:

բ) հեռի բառը անցնելով ժողովրդական *հեռու* ձևից՝ դառնում է *հիրո*, ճիշտ ինչպես *հերու* «անցած տարի» դառնում է *հիրո*:

գ) թի և ձի բառերը բարբառիս մեջ ստացել են *թէ՛ն* և *ձէ՛ն* ձևերը, որոնք ուրիշ կերպ չեն կարող բացատրել, եթե ոչ ենթադրելով, թե նախ՝ նրանք ստացել են *թի՛ն*, *ձի՛ն* ձևերը՝ որոշիչ *ն* հոդի միակցումով, և ապա այս թի՛ն, ձի՛ն բառաձևերը դարձել են *թէ՛ն*, *ձէ՛ն* (հմմտ. հին > *հէ՛ն*, գին > *գէ՛ն*):

դ) խնոցի բառը նախ կորցրել է իր վերջնահնչյունն *ի* ձայնավորը և ապա *խնոց*-ը դարձել է *խնից*:

ե) լի բառը շատ կարճ լինելու պատճառով ամեն բարբառի մեջ էլ նոր ձևերով ընդարձակվել է. այսպես՝ Երևանի բարբառով *լիջը*, Պոլսի բարբա-

ռով *լեցուն*, *լեցունկ*: Այս բարբառում ունի *լլլլլլ* ձևը, որ կարող ենք հանել \**իլիկ* նախաձևից. հմմտ. ուլիկ > *ուլլլլ*:

զ) ընտանի բառը դառնում է այստեղ *ընդամնո*, որի վերջնահնչյունը չի կարող առաջանալ *ի-ից*, այլ՝ *այ-ից*, ուստի նախաձևը պետք է դնել \**ընդանա*. հմմտ. սատանայ > *սադանո*:

է) բանալի > *բնլէճը* նույնպես չեն համապատասխանում իրար, ուստի նախաձևը պետք է դնել \**բանլիճը*. հմմտ. *շողիճը*, *քրտիճը*:

ը) երանի բառը դառնում է *իռնիզ*, որ ըստ օրինի կարող է ծագել \**երանեկ* ձևից (հմմտ. Պոլսի բարբառի երնեկ = *երանեակ*), ինչպես ունենք բևեկն > *բիվիզ*:

թ) այրի բառը բարդվելով կնիկ բառի հետ, և *ի-ն* վերածվելով *ը-ի* (հմմտ. *մի՛, քանի՞*)՝ դարձել է *իրջոնազ* (*ը-ն* շեշտված՝ *մի* և *քանի՞*՝ բառերի պես). և սակայն այս բառը ճշանակում է ոչ թե «այրի կին», այլ ընդհանրապես «այրի» և գործ է ածվում թե՛ կնոջ և թե՛ տղամարդու համար:

ժ) Հրամայական արի՛ ձևը դառնում է *արէ՛*:

§53. Եթե այժմ ամփոփենք *ի* ձայնավորի վերաբերյալ բոլոր օրենքները, կգտնենք հետևյալ ընդհանուր կանոնը. — Ամեն բառի մեջ շեշտված *ի-ն* դառնում է *է*, անշեշտ *ի-ն* մնում է անփոփոխ, բառի միջին վանկում կարող է սղվել, բառավերջում *ի-ն* դառնում է *ա*: Այս կանոնին է հետևում նաև բառասկզբի *ի* ձայնավորը, որի մասին խոսեցինք վերը՝ §43-ում, և սրա մի քանի անկանոն երևույթներն էլ այս կանոնով բացատրվում և հարթվում են:

## Ո

§54. Բառասկզբում, միավանկ բառերի մեջ *ո-ն* դառնում է *վը*. այսպես են՝ ոռ > *վըռռ* «բունոց», ոռք > *վըրք* «մի բանի հատակը», ոսպ > *վըսպ*, ոտք > *վըդդ*, որձ > *վըրզ*. միայն որդն բառը դառնում է *վիրո՞*: Ով-ը դառնում է *ուվ*:

Երկվանկ բառերի մեջ սկզբնահնչյունն *ո-ն* դառնում է *ի*. այսպես են՝ ոլորել > *իլլիլ*, ոջիլ > *իջէլ*, ոսկի > *իսզնա*, որոնալ > *իրջիլ*, որսալ > *իոսիլ*. — այս *ի-ն* ձևափոխված է ողկոյզ > *ուղգայզ* և ոսկր > *իւզգիր* բառերի մեջ:

Իբրև եռավանկ մնում է միայն ողորմիլ, որ դառնում է *վուղուրմիլ*, ողորմիլ:

§55. Միավանկ բառերի մեջ միջնահնչյուն *n*-ն դառնում է *h*. այսպես են՝

գոգ	> գհիգ՝
գոլ	> գհիլ «բոց»
գործ	> գհիոճ
գորտ	> գհիոդ
լող	> լհիլ «լողքար»
խոզ	> խհիզ
խոտ	> խհիդ
խոփ	> խհիփ
ծոց	> ճհից
կոթ	> դհիթ
հոգ	> հհիք
հող	> խհիլ
հոտ	> հհիդ
հոր	> հհիդ
ձող	> ձհիլ
նոր	> նհիդ
շող	> շհիլ «տաք»
հորթ	> հհիոթ
չոր	> չհիլ
պորտ	> բհիոդ
սոխ	> սհիխ
փոթ	> փհիթ
փոխ	> փհիխ
փոս	> փհիս
փոր	> փհիլ:

§56. Այն դեպքում, երբ բառը վերջանում է *վ* բաղաձայնով, *n*-ն դառնում է *m*. այսպես ունենք ծով > ձուվ և կով > գուվ. սրա համար է, որ ով բառն էլ տալիս է ուվ. տե՛ս վերը, §54:

§57. Անկանոն են կող > գէօղ, կոպ > գուք, մոմ > միմ և չորս > չորս, որոնք *n*-ի դիմաց ունեն էօ, ու, հ:

Կարևոր է հիշել թող ձևը, որի բայը ամբողջ խոնարհման մեջ դառնում է թուղիլ (անշեշտ), իսկ հրամայականը լինում է թէ՛օղ (շեշտված), բայց, իբր մասնիկ, այս թո՛ղ բառն էլ կրճատվելով՝ դառնում է թո՛ղ: — Թոռն բառն էլ լինում է թուռըն:

խոր բառը ձևափոխվելով՝ դառնում է խուո:

§58. Երկվանկ բառերի մեջ առաջին վանկի *n* ձայնավորը դառնում է մեծ մասամբ *h*. եղած օրինակներն են՝

բոկ-իկ	> բհոկիկ
բոկեղ	> բհոկիղ
գոմէշ	> գհոմիշ
թոնիր	> թհոնիր
խոզան	> խհոզան
խոթել	> խհոթիլ
կոխել	> կհիխիլ, գէխիլ
կորեակ	> կհորիգ
կոփել	> կհփիլ «տաշել»
հոգի	> հհոգիս
մոզի	> մհոզա
ջորի	> շհորա
տոլի	> դիլլա «որթատունկ»
ցորեան	> ցհորեան
փոխել	> փհիխիլ
փոշի	> փհիշա
փորել	> փհորիլ

(Որովհետև *h* ձայնավորն էլ մեծան դեպքում դառնում է *h*, ուստի քերել և քորել բայերը հավասարապես լինում են քիրիլ):

§59. *վ* և *ղ* բաղաձայններից առաջ այս *n* ձայնավորը դառնում է *m*. եղած օրինակներն են՝

գովել	> գհովիլ
դողալ	> դհողիլ
թողուլ	> թհողիլ
լողալ	> լոողիլ
հովի	> հուվիլ
շողիք	> շուղէնք
սողալ	> սուղիլ:

§60. Ունենք նաև մի քանի օրինակ, որոնց մեջ այս *n*-ն դառնում է *m*, *h*, *ը*, *աւ* սրանք են՝

բոլոր	> բհոլոր
բորբոս	> բհորբոս
բորոտ	> բհորիտ

խոնջան	> խընջում
խորան	> խուրում
կոծիծ	> գձէձ
կողպել	> գըղբիլ
կողպէք	> գըղբաք, գըղբանք
կոճակ	> գուջիք
կոտիմն	> գօդէմ, գդէմ
կորկոտ	> գըրգիւղ
մոխիր	> մախիւէր
տոպրակ	> դըբրիւգ
փորձանք	> փուրցումնք

§61. Երկվանկ բառերի երկրորդ վանկի *n* ձայնավորը մեծ մասամբ դառնում է *խ*. եղած օրինակներն են՝

ազոխ	> աագզիխ
աղուոր	> աաղվիւր
*չաղուոր	> չաաղվիւր
ափսոս	> աափսիւս
բոլոր	> բբոլիւր
բորոտ	> բբորիւղ
գոթոր	> գգոթիւր
լակոտ	> լլազիւղ
խաղող	> խաաղիւղ
խմոր	> խաժիւր
խնձոր	> խաճիւր
խստոր	> սըխադիւր
կորկոտ	> գըրգիւղ
շնորհք	> շիճիւրք
ուղղորդ	> իւղիւրթ
պարոն	> բաբրիւն
պղտոր	> բըղիւր
սաղմոս	> սաաղմիւս
սղոց	> սղիւց
փիլոն	> փիլլիւն
օրոցք	> իւրիւսգ:

Սրանց վրա ավելացնենք –*ող* ձևով դերբայները, որոնք դառնում են – *իւղ*. ինչպես՝ *աախիւղ, աաղիւղ, բբորիւղ, բբաղիւղ* և այլն:

(Խնոցի և ոսկր բառերը ձևափոխվելով՝ վերածվել են երկվանկի (*խոնց* և *ոսկոր*) և ըստ այսմ դարձել է *խոնց, իւսգիւր*):

§62. Կա տասը երկվանկ բառ, որոնց մեջ երկրորդ վանկի *n* ձայնավորը դառնում է *էօ, էօյ, է, ու, օ*. սրանք են՝

ալոջ	> իլէօյձ «ուլիկ»
աղտոր	> աաղէօր
բորբոս	> փըրփէս
դամոն	> դաամէն
փքոց	> փքէօց «փուքս»
կարոս	> կաարոս
քարոզ	> քաարօզ
միտոն	> միտոօն
լիմոն	> լլիմօն
դպրոց	> դաբրօց

§63. Երեք և ավելի վանկով բառերի մեջ միջնավանկի *n*-ն ընդհանրապես սղվում է կամ վերածվում *ը*-ի. եղած օրինակներն են՝

անկողին	> ունգըղէն
բոլորել	> բլլիլ
գլորել	> գղուղղիլ
ժողովել	> ժուղվիլ
խոստովանիլ	> խուսողըվանիլ
խորովել	> խիուվիլ
հոտոտել	> հիողվողիլ
մոլորիլ	> մըլըրիլ
ուլորել	> իլլիլ
որոճալ	> իրջիլ, իորջիլ
սովորիլ	> սուրվիլ
քարաթոթոջ	> քարթոթոջ
քարաթոջ	> քարթոթոջ
քրիստոնեայ	> քիսողիճէ:

§64. Այսպիսի ձևով բառը կրճատվելուց հետո, առաջին վանկի *n* ձայնավորը, նախկին կանոնների համեմատ, կդառնա կա՛մ *ի* (հմմտ. §54, 58), ինչպես՝

խորովել > խիռվիլ  
 հոսելի > հիսսիլա  
 հոտոտել > հիդդիլ, հիդվըդիլ  
 ոլորել > իլիլ  
 որոճալ > իրջիլ, իռջիլ

կա՛մ կդառնա ու (հմմտ. §59), ինչպես՝

ժողովել > ժուղվիլ  
 խոստովանիլ > խուսդըվանիլ  
 հոտոտել > հուդվըդիլ  
 սովորիլ > սուրվիլ

կա՛մ կդառնա ը (հմմտ. §63), ինչպես՝

բուրել > բլիլ  
 մորենի > մրմինա

կա՛մ կդառնա ա, ինչպես՝

մոռանալ > մառնիլ

§65. Մի քանի դեպքում միջնավանկի *n*-ն չի կորչում և դառնում է ու այսպես են՝

դողդողալ > դուղդուղիլ  
 ողորմիլ > վուղուրմիլ, ուղուրմիլ

§66. Բազմավանկ բառերի վերջնավանկի *n*-ն ընդհանրապես դառնում է *ի*, *ու*.

դատաւոր > դ՛ւտ՛ւտվիւր  
 թագաւոր > թ՛ւագ՛ւտվիւր  
 կաթողիկոս > գ՛ւթթ՛ւտղգիւս  
 պատեղւոր > բ՛ւտթ՛ւտվիւր «հղի»  
 քարաթոշ > քարթոշ  
 քարաթոթոշ > քարթոթոշ

§67. Բառավերջում միայն մի բառ ունենք, այն է՝ յո՞ > յէօ՞ «ու՞ր»:

Ու

§68. Միավանկ բառերի սկզբում ու-ն դառնում է էօ այսպես են՝

ութ > էօթթը  
 ուլ > էօլ

ունդ, հունդ > հէօնդ  
 ուս > էօս

Սրանցից դուրս մնում են՝

ու > ու  
 ունկն > իւնգ «ամանի կոթ»

§69. Բազմավանկ բառերի սկզբում ու-ն սովորաբար մնում է այսպես են՝

ուլիգ > ուլմգ  
 ումեկ > ումօգ  
 ունիս > ունէս  
 ուռենի > ուռինա  
 ուսանիլ > ուսնիլ  
 ուտել > ուդիլ  
 ուրագ > ուրիգ՛  
 ուրբաթ > ուրբիթ

Ունկի բառը շրջմամբ դարձել է նուկի, որից և նուգա:

Ուլն, ուլունք բառը դառնում է հըննէօգ, հոգնակի հըննիթ:

Պ բաղաձայնից առաջ ու-ն սղվում է կամ վերածվում իւ-ի այսպես՝

ուղեղ > դիւղ, դէօղ  
 ուղարկել > դըրգիլ, դուրգիլ  
 ուղղորդ > իւղիւրթ

§70. Միավանկ բառերի մեջ ու-ն դառնում է էօ կամ օ: էօ-ն գտնում ենք հետևյալ բառերի մեջ.

բու > բէօգ  
 բուք > բէօք  
 դուր > դէօն  
 թուգ > թէօգ  
 թութ > թէօթ  
 թուղթ > թէօխթ  
 թուր > թէօր  
 թուք > թէօք  
 լուծ > լէօծք  
 խուլ > խէօլ  
 խունկ > խէօնկ  
 խուփ > խէօփ

ծուկ	> ձէօնգ
կուծ	> գէօժ
կուշտ	> գէօշդ «կող»
կուշտ	> գէօշդ «հագ»
կուտ	> գէօդ
ձուկն	> ձէօգ
մութ	> մէօթ
մութս	> մէօխ
մուկն	> մէօգ
մութ	> մէօր
նուշ	> նէօշ
նութ	> նէօրփ
շութ	> շէօթ
հունդ	> հէօնդ
ուս	> էօս
ուլ	> էօլ
ջութ	> ջէօր
սուղ	> սէօղ
սուտ	> սէօդ
սութ	> սէօր
սութ	> սէօրփ
փուշ	> փէօշ
փութ	> փէօթ

Այս բառերի մեջ ու ձայնավորը գտնվում է գ, ք, նգ, նդ, ժ, շ, ս, զ, խ, ր, յ, լ, տ, թ, ծ բաղաձայններից առաջ:

§71. Օ գտնում ենք հետևյալ բառերի մեջ.

բուն	> բօն
բութ	> բօրդ՝
դու	> դօն
դուն	> դօն
թուշ	> թօշ
թութ	> թօփ
լութ	> լօնշ
խութ	> խօրձ՝
խութն	> խօփ
ծուտ	> ձօն

կութծք	> գօնծք
հում	> հօմ
նուն	> նօն
շուն	> շօն՝
ոուս	> ըոոթ
տուն	> դօն
ցութ	> ցօդդ
քուն	> քօն

Այս բառերի մեջ ու ձայնավորը գտնվում է ո, ր, շ, փ, մ, ն բաղաձայններից առաջ:

§72. Երկու և ավելի վանկանի բառերի մեջ շեշտված ու-ն դառնում է մեծ մասամբ էօ. ահա օրինակները.

անուն	> աննշտոն
անասուն	> անաստն
աշուն	> աշտն
ապութ	> ապտոթ
արմուկն	> արմտնգ
գաղտուկ	> գաղտնկ
գարուն	> գարտն
գլուխ	> գլտխ
եղունգն	> եղտնգ՝
երկամն-ուկ	> ըրկամնտգ
երկու	> ըրգտթ
ընջուղ	> ընջտղ
թմբուկ	> թմբտգ, թմբիգ
թնջուկ	> թնջտգ
թրթութ	> թրթտոթ
խախտ	> խախտո
ծածուկ	> ձածտգ
կակուղ	> կակտղ
կարկուտ	> կարկտո
կնունք	> կնտնք
կտուց	> կտտ(ն)ց
կրունկ	> կրտնկ
հարուստ	> հարտստ՝

մաթուզ	> մաթուզ
մամուխ	> մամուխ
մասուս	> մասուս
մատուոն	> մադետոն
մսուր	> մըսստօր
մօրուք	> մուրեք
շամփուր	> շամբետոն
շշուկ	> շշեօգ
ուլունք	> հըննեօգ
պտուղ	> բըղետո
սկեսուր	> իսգիստօր
սնդուկ	> սնդեօգ, սնդիգ
փաթաթուկ	> բնդդեօգ
փետուր	> փիդետո
փշրուք	> փըշրեք
փրփուր	> փրփետո

§73. Ուրիշ անգամ այս *ու* ձայնավորը դառնում է *օ* և քիչ անգամ էլ *ու*, *իւ*. այսպես են՝

ակումբ	> աօուն (օր)
անուն	> աուն
արտասուք	> առցօնք
դդում	> դդդիօմ
երդումն	> ուֆիօմ
երեսուն	> յասուն
զամբուռ	> զամբուռ
թմբուկ	> թմբիգ, թմբեօգ
խլուրդ	> խլօրդ
ձմերուկ	> ձըմըրիգ
ճնճղուկ	> ջընջըղուգ, ջընջըղօգ
մածուն	> մամձուն
մօրուտ	> մուռուդ
յիսուն	> յիսուն
պախուրց	> բախօրցք
պոուկ	> բօնգ
պտուկ	> բուդիգ (ծծի)

սանդուղք	> սանդղ
սնդուկ	> սնդիգ, սնդեօգ
վաթսուն	> վաթցօն
քառասուն	> քասուն

§74. Բազմավանկ բառերի առաջին վանկում գտնվող *ու*-ն ընդհանրապես մնում է, միջին վանկերում այն հնչյունափոխվում կամ սղվում է:

բուսանիլ	> բիսանիլ
բուրվառ	> բուրվուռ
թուլանալ	> թուլանիլ
*լուսնալոյս	> լուսընալոյս
խուպագ	> խութագ «մոլոշ»
կապուտկիլ	> գնքըրդգիլ
մաթուզեանի	> մաթսիանա
մանուշակ	> մամիշիլիգ
մուրալ	> մուռիլ
(յ)ուզել	> ուզիլ
շումրայ	> շումբրա
չուխայ	> չուխօ
պատուհան	> բնդիհուն, բնդնհնեօգ
պատուհաս	> բնդիհուս, բնդիհիս
ջուլհակ	> ջըլիհիգ
սուլել	> սլվիլ
ցուցանել	> ցըցըննիլ
քուշնայ	> քուշնօ
քուտաթ	> քուռութ
քուտակ	> քուռօգ

§75. Մնում է տեսնել բառավերջի *ու* ձայնավորը, որ միշտ էլ դառնում է *օ*. այսպես են՝

առու	> առօ
թթու	> թըրդիօ
լեզու	> լիզօ
լու	> լօ
կատու	> գնդօ
կծու	> գըձօ

հերու	> հիրո
հեոու	> հիոոո
մեդու	> միդո

Բու, դու, երկու բառերը ձևափոխվելով՝ դարձել են *բժօզ, դժօն, ըրգէօք*:

**ԵՐԿԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՁՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

այ

§76. Միավանկ բառերի սկզբում թե միջին դիրքում *այ* երկբարբառը դառնում է ա. եղած օրինակներն են՝

այծ	> ած
գայլ	> գալ
լայն	> լան
ծայր	> ծար
կայծ	> կաձ
հայս	> հաս
ձայն	> ձան
մայր	> մար
վայր ի	> ի վար
տայգր	> դաքր
փայտ	> փադ

Նաև բազմավանկ բառերի մեջ շեշված *այ*-ը դառնում է *ա*, որի համար ունենք երկու օրինակ՝ եղբայր > ախբւր, երկայն > իրգան:

(Չարմանալի է ժայռ > շէր, որոնք ոչ մի ձևով չեն համապատասխանում իրար, ուստի և կարծում են, թե շէր արաբական փոխառություն է):

§77. Բազմավանկ բառերի մեջ անշեշտ *այ*-ը դառնում է ի. եղած օրինակներն են՝

այգի	> իգգա
այրի	> իրըգնա
գայլ հոգն.	> գիլիր
խայթել	> խիթիլ
խայծիլ	> խիձիլ
կայծկտալ	> գիգգրդիլ «փայլատակել»
հայիլ	> հիլիլ «սպասել»

հայելի	> հիլիլա
ճայթիլ	> շիթիլ
մայր մտնել	> միրիլ (արևի)
պայծառ	> բիձձոռ
վայելել	> վիլիլ
վայթել	> ֆիթիլ
ցայտել	> ձիթիլ
փայտանալ	> փիդդիլ
փայտատ	> փիդդոդ
քայլել	> քիլիլ

§78. Այս, այդ, այն դերանունները աճելով՝ ստացել են *ըսսօ, իդօ, ինօ* ձևերը, որոնց մեջ *այ*-ը դարձել է ըստ օրինի *ի* (ապա և՛ *ը*):

Այլ «էլի» շաղկապն էլ աճելով՝ դարձել է *ալի*, ուր *այ* երկբարբառի դիմաց գտնում ենք *ալ*:

Բառավերջում գտնվող *այ* երկբարբառի մասին տե՛ս §22:

ալ

§79. Բառասկզբում, բաղաձայնից առաջ, *ալ*-ը, իբրև երկբարբառ, դարձել է գրականում *օ*, իսկ Սվեդիայի բարբառում դառնում է միշտ *ու*: Օրինակներն են՝

Միավանկերից՝

օր	> ուր,
օձ	> ուձ:

Բազմավանկերից՝

օժիտ	> ուժէդք
օժտել	> ուժդիլ
օծել	> ուձիլ
օղակ	> ուղալ
օրհնել	> ուշնիլ
օտար	> ուդը՛ր (քը՛շ քը՛շ)

Միայն օրորոց (սղված օրոցք) բառի մեջ այս *ու*-ն դառնում է *իւ*, և բառը լինում է *իւրիւսգ*:

§80. Բառամիջում, բաղաձայնից առաջ, *աւ*-ը նույնպես իբրև երկբարբառ դառնում է գրականում *օ*, իսկ Սվեդիայի բարբառում՝ մեծ մասամբ *ու*, քիչ անգամ էլ՝ *էօ*, *իւ*: Ահա եղած օրինակները.

աղօթել	> <i>աղութիլ</i>
աղօթք	> <i>աղութք</i>
անօտր	> <i>անուտր</i>
արօր	> <i>(հ)արուր</i>
գօտի	> <i>գուդա</i>
թօթափել	> <i>թութփիլ</i>
խօսիլ	> <i>խուսիլ</i>
մօտ	> <i>մուդ</i>
մօտկանալ	> <i>մուդգընիլ</i>
մօրուտ	> <i>մուռուդ</i>
մօրուք	> <i>մուրէօք</i>
նօթի	> <i>անութա</i>
սօսի	> <i>սուսա</i>
քօշ	> <i>քուշ</i> «արու այծ»

Այս 14 օրինակների մեջ *օ*-ն դառնում է *ու*. բայց նրանցից երեքը կան նաև *իւ*, *էօ*, *օ* ձևով.

աղօթք	> <i>աղութք, աղիթք</i>
անօթի	> <i>անօթա, անութա</i>
քօշ	> <i>քուշ, քէօշ</i>

Սրանցից դուրս ունենք նաև՝

ակօս	> <i>ազէօս, ազիս</i>
թօշնիլ	> <i>թիշմիլ</i>
յօնք	> <i>էօնք, ունքվա</i>
յօրանջել	> <i>ըրըժգըրիլ</i>

Սրանցից *յօնք*-ը՝ իր *էօնք* և *ունքվա* ձևերով, ցույց է տալիս, որ նախաձևն է *ունք*, ըստ որում *ու* ձայնավորը միավանկ բառերի սկզբում դառնում է *էօ*, բազմավանկների սկզբում՝ *ու* (տե՛ս վերը՝ §68 և §69):

Հնչյունական օրենքների պատմության համար շատ կարևոր է նկատել, որ *օ*-ն և *ո*-ն տարբեր հնչյունափոխությունների են ենթարկվում (տե՛ս վերը՝ §79), ըստ այսմ՝ թօշնիլ > *թիշմիլ* ենթադրում է ոչ թե *թօշնիլ*, այլ *թուշնիլ* կամ մանավանդ *թոշմիլ* նախաձևը:

§81. *աւ*-ը գտնվելով ձայնավորից առաջ, այլևս երկբարբառ չէ և հանգում է *ալ* հնչյունախմբին: Եղած օրինակներն են՝

աւազան	> <i>ալվազուն</i>
աւաչ	> <i>ալվաչ</i> «երգ»
աւաչել	> <i>ալչիլ</i>
աւել (գոյ.)	> <i>ալիլ</i>
աւելի	> <i>ալիլա</i>
աւետարան	> <i>ալիդարուն</i>
գաւազան	> <i>գ՛ալվազուն</i>
դատաւոր	> <i>դ՛ալաւոր</i>
դաւանիլ	> <i>դ՛ալանիլ</i>
թաւաւոր	> <i>թա՛ւաւոր</i>
հաւանիլ	> <i>հա՛ւանիլ</i>
հաւատալ	> <i>ալդդիլ</i>
պատեղ(ա)ւոր	> <i>բա՛ւաւոր</i>
պատեղւորիլ	> <i>բա՛ւաւորիլ</i>
սարկաւազ	> <i>սա՛րկաւազ</i>
սաւան	> <i>սա՛ւան</i>

Այստեղ կարևոր է հիշել աղանձի բառը, որ Սվեդիայի բարբառում ստանում է *աղվընա*, *աղվընա* ձևը:

§82. Բառավերջում *աւ*-ը՝ նույնպես իբր ոչ երկբարբառ, դառնում է *ալ*, որ Սվեդիայի բարբառի օրենքների համաձայն դառնում է *ուլ*: Եղած օրինակներն են՝

ագոաւ	> <i>ալգոուլ</i>
լաւ	> <i>լուլ</i>
ծարաւ	> <i>ծալուլ</i>
կաւ	> <i>գուլ</i> (նաև <i>գալ</i> )
կաքաւ	> <i>գալքուլ</i>
կտաւ	> <i>գդուլ</i>
հաւ	> <i>հուլ</i>
պառաւ	> <i>բառուլ</i>
ցաւ	> <i>ցուլ</i>

Իսկ հաւկիթ բառը, բարդված լինելով, պահում է բառասկզբի *ալ* հնչյունախումբը և լինում է *հալգայթ*:



եա

§83. Գտնվում է միայն բառամիջում և դառնում է միշտ *ի*. եղած օրինակներն են՝

- լեանն > *լին*
- կորեակ > *գիրիգ*
- սեամք > *շիմք*
- վառեակ > *վառիգ*
- ցորեան > *ցիրից*

Երանի՛ բառը անցնելով *երանեակ*, *երանեկ* ձևից՝ դարձել է *իռնիգ*:

եայ

§84. Այս եռաբարբառով կա միայն քրիստոնեայ բառը, որ Սվեդիայի բարբառում ստանալով «հայ» նշանակությունը, դարձել է *քիսդիսե*. սրանցից էլ կազմվել է *քիսդիսիգ* «հայերեն լեզու, որ է Սվեդիայի բարբառը»:

եաւ

§85. Այս եռաբարբառը բառասկզբում գտնվում է միայն եաւթն > *եօթն* բառի մեջ, որ դառնում է *յութթը*, *յութը*: Բառավերջում բաղաձայն է և դառնում է *իվ*. եղած օրինակներն են՝

- սեաւ > *սիվ*
- բարեաւ > *բնրիվ*
- առաջեաւ > *առչիվ, յառչիվ*

եւ

§86. Բառամիջում գտնվելով ձայնավորից առաջ և բառավերջում անկախ՝ դառնում է միշտ *իվ*. ահա եղած օրինակները.

- ալևոր > *հնլիվիր*
- անձրև > *անձրիվ*
- արև > *արիվ*
- բևեկն > *բիվիգ*
- բևեկնի > *բիվգինա*
- բևեռ > *բիվիռ*
- թեթև > *թիթիվ*

- թև > *թիվ*
- խև > *խիվ*
- կեղև > *գիղիվ*
- ձևել > *ձիվիլ*
- յետև > *իղիվ* «հետույք»
- տերև > *գիրիվ*
- տևել > *դիվիլ* «ուշանալ»

Նկատելի են հետևյալ բառերը.

Ձևք > *ձիֆք*, ուր *վ*-ն հանդիպելով *ք*-ի հետ, ստացել է նրա աստիճանը:

Դև բառը ազդվելով թուրքերենից՝ ստացել է *դիվ, դեվ, դնվ* ձևերը:

Երևիլ բայը, ստանալով *երևնալ* ձևը, դարձել է ապա *իրվընիլ, ըրվընիլ*:

իա

§87. Այս երկբարբառով ունենք լուվիսս «լոբի» բառը, որ Սվեդիայի բարբառում ստացել է *լըվյուս*, *լէյվյուս* ձևերը:

իւ

§88. Բառասկզբում ունենք միայն երկու բառ, այն է՝ *իղ* > *իղ* և *իւր* > *էր*. այս երկուսի ակնհայտ հակասությունը վերանում է, եթե ենթադրենք, որ երկուսն էլ ծագում են միջին հայերենյան *եղ* և *իւր* ձևերից. ե>*ի* հնչյունափոխության օրենքը տե՛ս վերը §35 և շաշտված *ի>է* հնչյունափոխության օրենքը տե՛ս §43:

§89. Միավանկ բառերի մեջ փակ վանկի *իւ* երկբարբառը ստանում է *այ*. այսպես են՝ սիւն > *սայն*, ձիւն > *ձայն*, ձիւթ > *ձայթ*:

Եթե վանկը վերջանում է *դ* բաղաձայնով, *իւ*-ը դառնում է *էօ*. այսպես են՝ ճիւղ > *ջէօղ* և շիւղ > *շէօղ*: — Միայն *գիւղ* բառը դառնում է *գիղ*, որ ծագում է անշուշտ միջին *գեղ* ձևից (տե՛ս վերը՝ *իւղ* > *եղ* > *իղ*):

§90. Բազմավանկ բառերի մեջ փակ վանկում գտնվող շեշտված *իւ*-ը դառնում է *է*. այսպես են՝ ալիւր > *իլէր*, եղջիւր > *նիլէր*, հարիւր > *հնրէր*, հերիւն > *հիրէն* (որ և *հիրէօն*), արիւն > *վիրէն*. — Բացառաբար միայն *աղբիւր*-ը դառնում է *աղբէլըր* (ճիշտ նման միավանկերի):

Մրջիւն բառը անկանոն կերպով դառնում է *մրջօւն*:

§91. Բազմավանկ բառերի մեջ աճեշտ *ի-ը* բաղաձայնից առաջ դառնում է *ի*. այսպես են՝

գիղացի	> <i>գիղացա</i>
հիսել	> <i>հիսսիլ</i>
կիրակէ	> <i>գիրաւօտ</i>
միտոն	> <i>միտոն</i>

Իսկ ձայնավորից առաջ տալիս է *իվ*. այսպես են՝ հիւանդ > *հիվունդ*, հիւանդանալ > *հիվըննիլ*:

§92. Բառավերջում *ի-ը* բաղաձայն է և դառնում է *էվ*. այսպես են՝ խի (թոշունը) > *խէվ*, հովի > *հուվէվ*:

**ոյ**

§93. Վերջնավանկում, բաղաձայնից առաջ, շեշտված *ոյ-ը* դառնում է *այ*. եղած օրինակներն են՝

բոյթ (մատ)	> <i>բայթ</i>
բոյն	> <i>բայն</i>
գոյգ	> <i>գայգ՛</i>
թոյլ	> <i>թայլ</i>
լոյս	> <i>լայս</i>
կոյր	> <i>կայր</i>
հանգոյց	> <i>հանգայց</i>
կոյզ	> <i>կայզ</i>
ողկոյզ	> <i>ուղգայզ</i>
քոյր	> <i>քայր</i>

Կապոյտ բառը ունի *գաբբէթ*, բայց նաև կանոնավոր *գաբբայթ* ձևը:

§94. *ոյ* երկբարբառի տարբեր հնչյունավորություններն են ներկայացնում՝

անոյշ	> <i>անէօշ</i>
արտոյտ	> <i>արդէդ</i>
ճկոյթ	> <i>ջրգրդ, ջրգուդ</i>
շոյտ	> <i>ուշէդ</i>
պատրոյզ	> <i>բադրէք, բադրաք</i>
պատրոյս	> <i>բադրէս(դ)</i>
երեկոյ	> <i>իրգօն, իրիգօն</i>

**ուա**

§95. Այս երկբարբառով ունենք միայն հետևյալ բառերը.

Աստուած	> <i>Ասդիւծ</i>
դժուար, դժար	> <i>դիժուր</i>
լուանալ	> <i>լիվանիլ</i>
չուան	> <i>չիւան</i>

**ուո**

§96. Այս երկբարբառով ունենք միայն մի բառ՝ աղուոր > *ադիլիւր* «գեղեցիկ», որի ժխտականն էլ է *չադիլիւր* «տգեղ»:

**ԲԱՂԱԶԱՅՆ ՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ**

**Բ**

§97. Բառասկզբում *բ-ն* դառնում է *բ՛*. ինչպես՝

բաժանել	> <i>բիժնիլ</i>
բան	> <i>բն</i> «իր»
բանալի	> <i>բնլէնք</i>
բարակ	> <i>բնրիզ</i>
բերան	> <i>բիրուն</i>
բոյն	> <i>բայն</i>
բուռն	> <i>բոն</i> (ձեռքի)
բուրդ	> <i>բորդ՛</i> և այլն:

§98. Նախահնչյուն *բ-ի* փոխարեն գտնում ենք *փ՛* հետևյալ բառերի մեջ.

Բալասան > *փալասդէօն* կամ *փալասդիւն*, որ թուրքերենն էլ ստացել է pelesenk ձևը. հայտնի չէ սակայն, թե ինչ է հայերենի մեջ *-դէօն* կամ *-դիւն* վերջավորությունը:

Բշտիկ > *փշդիւգ*, որի մեջ *փ-ն* հաջորդ *շ-ի* ազդեցության արդյունք է. նույնը գտնում ենք նաև ուրիշ մի քանի բարբառներում. ինչպես՝ Նոբ Նախիջևան *փշդէլ*, Երևան *փշտէլ*, Ռոդոսթոն *փշդիլ*:

Բուսանիլ > *փուսնիլ*, թեև կա նաև *բուսնիլ*, ինչպես ունենք ուրիշ բարբառներում էլ. Ջեյթուն *փուսնօլ*, Հաճըն *փուսնել*, Ռոդոսթոն և Տիգրանա-

կերտ *փուսնի*, Պոլիս *փուսնի*, *փսնի*, Ղարաբաղ, Նոր Նախիջևան *փսնէլ*,  
Շամախի *փսնի*. այս բոլորի մեջ *փ*-ն հաջորդ *ս*-ի պատճառով է:

Բորբոս >*փըրփէս*, ինչպես ունենք նաև ուրիշ բարբառներում՝ Պոլիս  
*փորփոս*, Ղարաբաղ *փըրփէշն*, Նոր Նախիջևան *փորփսնէլ* և այլն:

Բոհնչ, բոհնչնի >*փոռնջիհնա*, ինչպես ունենք Ղարաբաղ *փոշնէ*,  
*փոշնէնէ*, Ղազախ *փոշ*:

§99. Սկզբնահնչյուն *բ*-ի փոխարեն գտնում ենք *բ'* հետևյալ բառերի  
մեջ.

Բառաչել >*բառչի*, բզեզ >*բըզ*, երկուն էլ բնաձայն բառեր, և բոլորել  
>*բլլի* «փաթաթել»:

§100. Բառամիջում *բ*-ն անկախ դիրքով, այսինքն՝ երկու ձայնավորի  
միջև դառնում է նույնպես *բ'* այսպես են՝ արեթ >*արբիթ*, խաբել >*խարբի*,  
*խարբիդի*, շաբաթ >*շարբիթ*:

§101. Բառամիջում *բ* բաղաձայնից հետո դառնում է նույնպես *բ'* օրի-  
նակներն են՝ արբենալ >*արբիլ*, ուրբաթ >*ուրբիթ*, քարթ օձ >*քարբից*, և  
բացառաբար բորբոս >*փըրփէս*, ուր *բ*-ն դարձել է *փ*' նման նախահնչյունի:

§102. Բառամիջում *բ*-ն գտնվելով *մ* ոնգայինից հետո, դառնում է *բ*.  
այսպես են՝ ամբար >*ամբոտ*, բամբակ >*բամբոզ*, զամբուտ >*զամբոտ*  
«պիծակ», թմբուկ >*թմբիզ*, թմբէօզ, թմբա, և բացառաբար բամբասել >  
*բամբասիլ*, ուր *բ*-ն դարձել է *բ'* նման նախաձայնի:

§103. Բառամիջում *բ*-ն գտնվելով *ղ*-ից հետո, դառնում է *բ'* ինչպես՝  
աղբիւր >*ախրնայր* և եղբայր >*ախրնար*, որոնց մեջ *ղ* բաղաձայնն էլ դարձել է  
*խ*:

§104. Բառավերջում անկախ դիրքով *բ* չկա, եղած օրինակներն էլ *ղ*-  
ից կամ *ր*-ից հետո են. առաջին դեպքում ստացվում է *բ'*, երկրորդ դեպքում՝  
*փ*. օրինակներն են՝

*ղ*-ից հետո. — աղբ >*խիւբ*, շեղբ >*շիիւբ*

*ր*-ից հետո. — երփ >*յիփ*, նոփ >*նէփ* «նեղ», սուրբ >*սէփ*:

#### Գ

§105. Բառակզբում *գ*-ն դառնում է միշտ *գ'* ինչպես՝ գայլ >*գնլ*, գիմ  
>*գիմա*, գետին >*գիդէն*, գիշեր >*գիշիր*, գնա >*գիւն*, գօտի >*գիւդա* և այլն:

Երբ այս *գ*-ն գտնվի մի այնպիսի *ա* ձայնավորի մոտ, որ բարբառում  
դարձել է *ա*, այս *գ'* հնչյունն էլ քնայնացածով դառնում է *գ'*։ Սրա համար  
ունենք միայն երեք օրինակ, որոնք են գաղտուկ >*գ'աղդէօզ*, գարուն >  
*գ'արդէօն*, գաւազան >*գ'աւաւազան*:

§106. Նախահնչյուն *գ*-ն երկու բառի մեջ դառնում է *գ'* գլուխ >*ղիւտիս* և  
գտանել >*ղըննիլ* (կատարյալ *ղըրո*, հրամայական *ղօց*): Թե ի՛նչ  
պատճառով է առաջացել այս հնչյունափոխությունը՝ հայտնի չէ ինձ:

§107. Բառամիջումն էլ *գ*-ն դառնում է *գ'* այսպես են՝ ագի >*ագնա*,  
ագուս >*ագոնուկ*, այգի >*իգնա*, թագաւոր >*թագնաւոր*, հոգի >*հիգնա*,  
ձագար >*ձագնոր* (այլ գ. *զագար*), ձգտալ >*ձիգնորի*, տարգալ >*դիգնուկ*:

Մի քանի տեղ այս դեպքում դառնում է *ք*. ինչպես են՝ ագանիլ  
>*հարքնիլ*, պագանել >*քարքնիլ*, տայգր >*դարքր*, փափագել >*փարքիլ*. իսկ  
ձգտել, ձգտեցուցանել >*ձրգորքընիլ* «քաշելով երկարացնել» բառի մեջ *գ*-ն  
մնում է *գ* (հավասարվելով հաջորդ թրթռունին):

§108. Բառամիջում գտնվելով *ն* ոնգայինից հետո՝ ընդհանրապես  
մնում է *գ*. ինչպես՝ անգղ >*ինգիղ* «ամանի կոթ», ժանգառ >*ժանգառ*  
«կապույտ քարը», հանգիստ >*հանգէստ*, հանգոյց >*հանգայց*, մանգաղ  
>*մանգիղ*, փոնգաւալ >*փորնգիլ*:

Մնում է *գ'* միայն անագան >*անգոն* բառի մեջ, իսկ եթե *նգ*-ն գտնվում  
է *ն*-ից առաջ, դառնում է *յ*, որի համար ունենք միայն մի օրինակ, այն է՝  
կանգնիլ >*կնյնիլ*:

§109. Բառամիջի *գ*-ն գտնվելով *ր* բաղաձայնից հետո՝ դառնում է *գ'*  
կամ *ք*. ինչպես՝ մարգարէ >*մարգնարա*, թարգմանել >*թարքմանիլ*: Այս  
երկուսից դուրս ուրիշ օրինակ չունենք բարբառում:

§110. Բառավերջում գտնվող *գ*-ն դառնում է *գ'* կամ *ք*. այսպես են՝  
*գ* >*գ*. — *գոգ* >*գիգ*, եղէգն >*իղիգ*, զոյգ >*զայգ*, ձագ >*ձիգ*, ճրագ  
>*ջրիգ*, ուրագ >*ուրիգ*:

*գ* >*ք*. — հոգ >*հիք*, պատարագ >*քարքարիք*, պատրոյգ >*քարիք*, *քար*-  
*րաք*, սարկաւագ >*սարգարիք*:

§111. Երբ բառավերջի գ-ն գտնվում է ունգայիցից հետո, ընդհանրապես մնում է գ. ինչպես՝ ժանգ >ժէօնգ, ժինգ, ժառանգ >ժառունգ, հինգ >հէնգ. մի օրինակ էլ ունենք գ՛ որ է եղունգն >ղէօնգ՛:

§112. Կարագ բառը ստացել է բարբառում *ք'արիղ* ձևը, որ բարդված է պարսկերեն *kara* «կարագ» + հայերեն իղ >իղ բառերից:

Դ

§113. Բառասկզբում դ-ն դառնում է դ՛ օրինակ՝ դեղին >դիղէն, դեղ >դիղ «մկնդեղ», դատարկ >դանդուգ, դանակ >դանիգ, դուն >դոն, դուն >դոն, դուր >դէօն և այլն:

§114. Սկզբնաբաղաձայն դ-ն մնում է անփոփոխ հայերեն դարիվայր > դուովար, դարիվեր >դուովիր (թեև դար «բարձրավանդակ» լինում է դիտ), դուրս >դուրուձէ բառերի մեջ և թուրքերենից փոխառյալ դաֆ «դափ (երաժշտական գործիքը)», դումաղա «հարբուխ» (միջին հայերեն դում, Նոր Նախիջևան դումօվ), և դիմվ (դէվ, դիվ) «դև» (պարսկերեն *div*) բառերի մեջ:

§115. Բառամիջում դ բաղաձայնը դառնում է ընդհանրապես դ՛ եղած օրինակներն են՝ դադար >դանդուր, դադարիլ >դանդիհիլ «հոգնել», դդում >դդիձոմ, դողողալ >դուղղուղիլ, խեղդել >խիղդիլ, խխիլ: Առանձին ուշադրության արժանի են երդումն >ուֆդոմ և երդնուլ >ուֆդըվնիլ, ուֆդըմնիլ:

§116. Բառամիջում դ-ն գտնվելով ռ բաղաձայնից հետո՝ նույնպես դառնում է դ՛ օրինակներն են՝ արդար >առդիտ, բրդել (հաց) >բըռդիլ, ծաղարդար >զարզարդիտ, կարդալ >զառդիլ, մարդակ > մարդուգ, մարդօգ, սարդիլ > սըբըռդիլ «ձեռքիցը սահել՝ սարդել» (որ և սըբըռըցնիլ «ձեռքիցը թողնել», որտեղ դ-ն դառնում է ց), վարդապետ >վառդաբիդ:

§117. Բառամիջում դ-ն գտնվելով ունգայիցից հետո՝ մնում է դ, և կամ միանալով և-ի հետ, տալիս է կրկնակ և. եղած օրինակներն են՝ բարեկենդան(ք) >բնրգընդիք, բնրգըննա, գնդել >գնդիլ «խմորից կամ թրիքից գնդեր շինել», գնդան >գունդուն «1. բան. 2. խոտոչ կամ փոս տեղ, որ հեղեղն է բացել» (այս երկրորդ իմաստը ներկայացնում է իմաստի չափազանցություն), խնդալ >խնդիլ «ուրախանալ», հիւանդանալ >հիվըննիլ, սան-

դուղք >սանդոդ՛, սիմինդր > սըմընդըրնա՞ «ձավարի մանրուք», սնդուկ >սընդէօգ, սընդիւգ, պնդիլ >բըննիլ «պնդանալ»:

§118. Բառավերջում գտնվող դ-ն անկախ օրինակ չունի, այլ կա՛մ գտնվում է և-ից հետո և կա՛մ ռ-ից հետո. առաջին դեպքում մնում է դ, երկրորդ դեպքում դառնում է դ՛ կամ թ. եղած օրինակներն են՝

և-ից հետո. — կաղանդ >գնդունդ, հիւանդ >հիվունդ, ունդ >հէօնդ, սանդ > սունդ, իսկ հնագանդ բառը տալիս է հնագօնդ՛, որ, անշուշտ, գրական փոխառություն է:

ռ-ից հետո. — բուրդ >բորդ՛, խլուրդ >խըլօրդ՛, մակարդ >մագուրդ՛, մարդ >մուրդ՛, յարդ >իորդ՛ «դարման», որդն >վիորդ՛, իսկ թ վերջնահնչյունով էլ ուղղորդ >իւղիւրթ «շիտակ, ճշմարիտ», վարդ >վուրթ:

§119. Երկու բառ ունենք, որոնց մեջ վերջնահնչյուն դ-ն անցել է բառամեջ. դրանք են՝ այդ >իդօ և ծղրիդ >ծըղըրիօգ. երկուսն էլ ունեն դ:

Ջ

§120. Ամեն դիրքում էլ մնում է զ. այսպես՝

Բառասկզբում՝ զենուլ >զընիլ «մորթել», զոյգ >զայգ՛, զատ >իզզուդ և այլն:

Բառամիջում՝ ազոխ > ազզիլիս, եզր >իզզիր, իզզիրք, լեզու >լիզզօ, լիզել >լիզզիլ, խարազան >խարզուն «եզ կամ էշ քշելու փայտ՝ ծայրը մախաթով», հազար >հազզուր, մոզի >միզզա «էզ հորթ», վազել > վազզիլ «ցատկել» և այլն:

Բառավերջում՝ երագ >իրուգ, թիզ >թեզ «մի քիլ», թուզ >թէօզ, խոզ >խիւզ, հազ >հուզ, մագ >մուզ, վարագ >վառուգ, վիզ >վէզ, ողկուզ >ուղկայզ և այլն:

§121. Միայն մի բառ կա, որի մեջ գ-ն դարձել է ս, այն է՝ մաթուզ >մաթէօս, որից էլ ծառը կոչվում է մաթզենի > մաթսիհնա. Բայց այս փոփոխությունը հնչյունաբանական չէ, այլ ժողովրդական ստուգաբանությամբ կապելով բառը Մաթէոս (Մաթոս) անվան հետ:

Թ

§122. Բառասկզբում մնում է թ. օրինակ՝ թաթախել >թաթախիլ, թաղ >թիւղ «գյուղի թաղը», թաց >թուց, թանձր >թունձրր, թեզանիք >թիզանք, թի >թէն, թուք >թէօք, թուշ >թօշ, թուլանալ >թուլնիլ և այլն:

Երկու բառ միայն կա, որոնք այս դեպքում ներկայացնում են *դ՛* դրանք են՝ թաս > *դիս* և թրջել > *դ՛րոջիլ*։ առաջինը ավելի հարազատ ներկայացնողին է արաբերեն *ṯas* հոմանիշի, երկրորդը ձևավորվել է զանազաներու համար համանուն *թոչիլ* (թոնիլ) բայից։

§123. Բառամիջում *թ*-ն մնում է նույնպես *թ*. օրինակ՝ անթեղել > *ամթիղիլ*, թաթախել > *թաթխիլ*, թարթել (աչքը) > *թարթիլ*, թեթև > *թիթիվ*, թիթեռնիկ > *թիթըռնուկ*, թօթափել > *թութփիլ*, խայթել > *խիթիլ*, ճայթել > *ջիթիլ*, վայթել > *ֆիթիլ*, փաթաթել > *փաթթիլ*, փեթակ > *փիթիւգ*, փնթի > *փնթա*, քարաթոթոշ > *քարթոշ* և այլն։

§124. Այս պարագայում երբեմն *թ*-ն դառնում է *դ՛* ինչպես՝ բաթաթունկ (բույսը) > *բ՛նարիճօգ խիւր*, թթու > *թըրիճօ* (սրանից էլ *թըրիճիվգէջ*, որ հայերեն *թրթնջուկ* բույսն է, այլուր կոչված *թթուկիչ*, *թթուտիչ*, *թրթուիչ*, *թթուարաշ* և այլն. բարդության երկրորդ մասը հայտնի չէ ինձ), փրթիլ > *փրոդիլ* «պոկվել», քերթել > *քիոդիլ*։ — Վերացական բառերի — *ութիւն* մասնիկը դառնում է միշտ — *ուդէն*. տե՛ս 4-րդ հոլովումը։

— *Գդթոր* բառը, որ զանազան բարբառներում տարբեր ձևեր է ստացել, այստեղ ունի *գ՛րխիդիր* ձևը։

— *Ծոթոր* բուսանունն էլ տարբեր ձևեր ունի, իսկ այստեղ ունի *գիդիրէն* ձևը, որին ամենից ավելի մոտ է խարբերդի բարբառով *գաթիրէն*։

§125. «Երթալ» բայը Սվեդիայի բարբառում բացատրվում է *ուդդիլ* ձևով. այս բառը առաջանում է *երթալ* ձևից. նախահնչյուն *ե*-ն դարձել է *ու՛* նմանությանը գալ > *ուգիլ* բայի, որի հետ գործածվում է հաճախ։

§126. Բառավերջում *թ*-ն ընդհանրապես մնում է անփոփոխ. ինչպես՝ արծաթ > *առձութ*, երկաթ > *իրգութ*, եօթն > *յութթը*, թութ > *թէթթ*, կաթ > *գութ* «կաթիլ», կաթն > *գէթ*, հալկիթ > *հավգայթ*, ձիւթ > *ձայթ*, որթ, հորթ > *հիոթ*, ութ > *էօթթը*, փիթ > *վէթ*, քիթ > *քէնթ* և այլն։

§127. Բացառություն են կազմում արբթ, բոյթ, կոթ և ճկոյթ բառերը, որոնք դառնում են բարբառիս մեջ *արբիդ՛*, *բայնթ մուդ* կամ *բայնթ մուդ*, *դիք* և *ջըգուդ*. ըստ իս՝ առաջինը և վերջինը ազդված են նախորդ *բ*, *գ* բաղաձայններից, երկրորդի մեջ *ք*-ն անբացատրելի է, իսկ երրորդը առաջացել է շրջմամբ, ինչպես՝ պուտ > Ղարաբաղ *ուօպ*։

Ժ

§128. Ամեն դիրքով էլ մնում է անփոփոխ *ժ*. ինչպես՝ Բառասկզբում՝ ժամ > *ժում* «եկեղեցի», ժանգ > *ժէօնգ*, *ժիւնգ*, ժանգառ > *ժանգառ* «կապույտ քարը», ժառանգ > *ժառունգ*, ժողովել > *ժուղվիլ*։

(Այստեղ բացառություն են կազմում ժայռ > *շէր* և ժանիք > *ջաննիք* (խոզի), որոնց հնչյունափոխության պատճառը հայտնի չէ)։

Բառամիջում արժել > *իժիլ*, բաժանել > *բիժնիլ*, դժուար > *դիժուր*, պատժել > *բարժիլ*, վարժապետ > *վարժաբիդ*, օժտել > *ուժդիլ* «հարսին նվերներ տալը», օժիտ > *ուժէդք* «հարսին տրված նվեր»։

Բառավերջում՝ կարծ > *գաժ* (թելի), կոծ > *գէօժ*, պատիժ > *բարիժ*։

Լ

§129. Բառասկզբում *լ*-ն մնում է *լ*. ինչպես՝ լար > *լուր*, լայն > *լան*, լալ > *ուլիլ*, լու > *լօ*, լուանալ > *լլվանիլ*, լեզու > *լիզգօ*, լիզել > *լիզգիլ*, լոյս > *լայս*, լսել > *լըսսիլ* և այլն։

Բառամիջում նույնպես մնում է *լ*. ինչպես՝ ալիւր > *իլէր*, բակլայ > *բնայօ*, գլուխ > *դլէօխ*, թուլանալ > *թուլնիլ*, խլուրդ > *խլօրդ*, ծալել > *ծնլիլ*, ծիլ > *ծլլիլ*, հալել > *հնլիլ*, հայելի > *հիլիլա*, հոսելի > *հիսսիլա*, ոլորել > *իլլիլ*, ուլիկ > *ուլլա*, ջուլհակ > *ջըլիհիւգ*, վայելել > *վիլլիլ*, փլիլ > *փլլիլ*, քայլել > *քիլիլ* և այլն։

Բառավերջում նույնպես մնում է *լ*. ինչպես՝ գալլ > *գալ*, գոլ > *գիլ* «բոց», դալ > *դիլ* «առաջին կաթ», թել > *թիլ*, թոյլ > *թայլ*, խոլ > *խէօլ*, ծիլ > *ծէլ*, կալ > *գուլ*, շիլ > *շէլ*, ուլ > *էօլ*, սալ > *սուլ*, տալ > *դուլ*, *դալըրգէն* (տալ-տիկիւն), տարգալ > *դիդուլ*, քիլ > *քէլ* «բթամատից ցուցամատ բացվածքը» և այլն։

§130. Կարևոր է նշել *լճ* հնչյունախմբի դիրքը այս բարբառում. *լճ* դառնում է *ճճ* (առաջին *լ*-ն նմանվելով *ճ*-ի հետ). սրա լավագույն երկու օրինակներն են՝ լիճել > \**ըլճիլ* > *ըճնիլ* և ելանել > *իլճիլ* > *ըլճիլ* > *ըճնիլ*. նույնն է նաև ուլունք, ուլնիկ > *հըճնէօգ* և հոգնակի ուլներ > *հըճնիդ*, մէկալն օրը > *միգննուրը*. կա և անալի > *անլի* > *ալլա*. իսկ բանալիք > *բանլիք* > *բալիք* > *բնլէնք*։

խ

§131. Բառասկզբում *խ*-ն մնում է *խ*. Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. ինչպես՝ խնձոր > *խնձիր*, խոնջան > *խնջուն*, խմոր > *խմիր*,

խաբել >խաբբիլ, խաբբըղիլ, խրատ >խրուդ, խօսիլ >խուսիլ, խոզ >խիւզ, խիճ >խէջ և այլն:

Բացառությունն են խոչակ >խրոչօզ, դրոչօզ և խողտել >ղըղըղըիլ, որոնց մեջ նախահնչյուն խ-ն դարձել է ղ, դ՛:

§132. Բառամիջում խ-ն նմանապես մնում է խ. ահա մի քանի օրինակ. — թաթախել >թաթախիլ, իշխել >իխշիլ «համարձակվել», խախուտ >խախխտիլ, ծախել >ծախիլ, կախել >զախիլ, կոխել >զոխիլ, մախաթ >մախութ, մոխիր > մախիլ, պախրէ >բախրէ «եզ», պախուրց >բախուրց «սաճ», վախենալ >վախանիլ, փոխել >փոխիլ և այլն:

Գղթո՞ր թե գխտոր բառի մասին տե՛ս վերը՝ §124:

Վախճա՞ն թե վաղճան բառի մասին բարբառու ոչ մի վճռական ցուցմունք չի տալիս, ըստ որում ունի վաղջաճիլ «կրոնավորի մեռնել» ձևը:

Քացախիլ բառի դեմ բարբառու հանում է քաճախիլ և քաճղիլ ձևերը, որոնցից երկրորդի մեջ խ-ն դարձել է դ:

§133. Բառավերջում խ-ն մնում է խ՝ առանց բացառության. ինչպես՝ ազոխ >ազոխիլ, գլուխ >ղլտօխ, թարախ >թարախիլ, մամուխ >մամտօխ, մանանեխ >մանախիլ, մորեխ >միրիխ, մարխ >մի՛խըր, մուխ >մտօխ, պատեխ >բաղիխ «սեխ», սոխ >սուխ, վախ >վիխ, ցախ >ցիխ, փոխ >փիխ, քացախ >քաճցիխ:

## Մ

§134. Բառասկզբում ծ-ն դառնում է միշտ ձ. օրինակ՝ ծալել >ձալլիլ, ծախել >ձախիլ, ծակ >ձտօզ, ծառ >ձուռ, ծաղիկ >ձաղաձ, ծարալ >ձարուլ, ծեծել >ձիձիլ, ծեփել >ձիփիլ, ծունկ >ձտնօզ, ծրար >ձրուր և այլն:

Բացառությունն են կազմում երկու բառ՝ ծառզարդար >զարզարդար և ծոթոր >զոթորէն. առաջինում նախահնչյունն ծ-ն, հետևելով հաջորդ գ-ին, դարձել է զ, երկրորդը արաբերենի ազդեցությամբ:

§135. Բառամիջումն էլ ծ-ն դառնում է ձ: Ահա մի քանի օրինակ. ածել > աձձիլ (հավի), անիծել >աձիձիլ, արածել >առձիլ, արծաթ >առձութ, լծել >լձձիլ, խայծիլ >խիձիլ «պտուղը հասնել սկսել», ծեծել >ձիձիլ, կծու >զրձ-ձօ, պայծառ >բիձձուռ, պիծակ >բիձձուզ, օծել > ուձիլ և այլն: — Բացառությամբ պարծիլ բառի, որ դառնում բարզընիլ, ուր ծ > զ:

§136. Ուրիշ բարբառների այն օրենքը, որով ծ-ն գտնվելով բաղաձայնից առաջ՝ դառնում է զ, կա նաև այս բարբառում: Սրա օրինակներն են՝ հեծանել >հիզճիլ (միհչդեռ հեծան >հիձձուձ), մեծանալ >միզճիլ (միհչդեռ մեծ >միհձ), կայծկլտալ >զիզզըղիլ «փայլատակել» (միհչդեռ կայծ >զաձ), ործկալ >ըրըզզըղիլ (վերջինը հազվագույտ ձև է և ձևով ու կազմությամբ նման յօրանջել >ըրըժզըղիլ բային. այս պատճառով էլ վերացել է՝ ասպարեզը թողնելով ձըզըղիլ բային):

Ուրիշ բարբառներում այստեղ են պատկանում նաև «խածանել, ծածկել, ծիծաղել, ցածանալ և կծկել» բայերը, բայց Սվեդիայի բարբառում սրանք դուրս են մնում շարքից. խածանել >խաձձիլ և ծիծաղիլ >ձիձաղիլ բայերի մեջ ծ-ն չի ընկել բաղաձայնի մոտ. ծածկել >ձաձզիլ և ցածանալ >ցաձձիլ չեն ենթարկվել օրենքին. կծիկ բառը թեև կա զրձձաձ ձևով, բայց նշանակում է «մազի հյուսք», ուստի կծկել բայը վերացել է՝ տեղի տալով սովորական հիսել >հիսսիլ բային. վերջապես կուրծք-ը մնում է գօռձք ձևով:

§137. Բառավերջում ծ-ը մնում է միշտ ձ. եղած օրինակներն են՝ այծ >աձ, անիծ >անէձ, Աստուած >աստիւձ, գործ >գիւձ, լուծ >լտօձ, ծիծ >ձէձ, կայծ >զաձ, կոծիծ >զձէձ, մեծ >միհձ, ցած >ցուձ, քաղցած >քաղցուձ և սրա նման բոլոր տեսակի անցյալ դերբայները:

## Կ

§138. Բառասկզբում ընդհանրապես դառնում է զ. ահա մի քանի օրինակ զանազան ձայնավորներից և բաղաձայններից առաջ գտնվող դեպքում. — կանաչ >զանաչ, կաշի >զիշա, կապ >զուք, կալ >զուլ, կաթն >զէթ, կէս >զիս, կոճակ >զիջիւզ, կոյր >զայր, կայծ >զաձ, կուտ >զտօր, կուժ >զտօժ, կորեակ >զիրիզ, կրակ >զրրիք, կտուց >զրդտօնց, կծու >զրձօ և այլն:

§139. Եթե ընկնում է աձ ձայնավորից առաջ, դառնում է զ՝ այսպես են՝ կաքալ >զաքուլ, կարոս >զարուս (մի տեսակ բույս, որ, սակայն, մաղաղաճուր չէ), կարմիր >զարմէր, կարկուտ >զարգտօր, կարաս >զարուս, կարել >զարիլ, կարկատել > զարգըղիլ, կատաղիլ >զառղիլ, կատու >զառօ, կապուտկիլ >զաքըղգիլ (թեև կապույտ >զաքքէր, զաքքայթ), կապել > զաքիլ, կանգնիլ >զաճնիլ, կաղին >զաղտօնը, կաղանդ (Նոր տարի) > զաղունդ, —

բացառաբար նաև կակուղ > գնալու, կախել > գնալի, կաթողիկոս > գնալու-  
գիւ:

Այս գ' հնչյունը գտնում ենք նաև կնունք > գնալու, և կնիկ > գնալու բա-  
ների մեջ:

§140. Բառասկզբի կ-ն դառնում է գ' միայն կոծիծ > գնալու բառի մեջ, և  
դառնում է ք' միայն կարագ > քնալու բառի մեջ, որի մասին տե՛ս Գ:

§141. Օտար փոխառություն են կեռաս > քրքուր (= թուրքերեն kiras քի-  
րազ) և կլայել > դալա (թուրքերեն qalay):

§142. Բառամիջում էլ կ-ն դառնում է գ. ինչպես՝ ակու > ակու, անգու, ծածկել > ծածկել, եկեղեցի > քիչիցա, բոկեղ > քիչից, երկաթ > քիչուր, երե-  
կո > քիչու, քիչու, խառնակել > խառնակել, անկողին > անկողին, հերկել  
> քիչից, – նաև բոկ բառը, որ ուրիշ բարբառներում բոկիկ ձևն ստանալուց  
հետո՝ նախահնչյունի ազդեցությամբ դարձել է բոբիկ, բոպիկ, այստեղ  
պահում է իր հարազատ ձևը և դառնում է քիչուր (որ է ճշտիվ բոկիկ):

§143. Ուրիշ բարբառների մեջ, այստեղ էլ բառամիջի ակ հնչյունա-  
խումբը գտնվելով կ-ից առաջ՝ դառնում է յ. սրա համար ունենք երկու գե-  
ղեցիկ օրինակ, որոնք են՝ անկանիլ > իյնիլ և ցնկնիլ > ճնյնիլ (նախահնչյուն  
ձ-ով):

§144. Բառամիջում ս բաղաձայնին հաջորդող կ-ն մի քանի տեղ դառ-  
նում է գ' այսպես են՝ ոսկի > քիչու, ոսկր > քիչուր, հասկաքաղ > քիչուր  
(արագաբանության օրենքով մի վանկ կրճատված, բայց հասկ բառն էլ լի-  
նում է հուսո):

Սրանց հակառակ՝ կ-ից հետո կ-ն դառնում է գ' հետևյալ բառերի մեջ.  
— հասկանալ > քիչուր, սկեսուր > քիչուր, և, վերջապես, «հերկել» ի-  
մաստով վիչիցի բայը, որ, ըստ իս, վեցկին > վիչիցի բառից առաջացած պի-  
տի լինի, թեև այժմ վեցկի բառը իսպառ անհետացել է բարբառից:

§145. Բառավերջում գտնվող կ-ն նույնպես դառնում է գ. ինչպես՝ ծակ  
> ճեզ, սպիտակ > քիչիցից, արմուկն > քիչուր, տանիկ > քիչուր, փե-  
թակ > քիչից, մարդակ > մարդից, խակ > խեզ, խունկ > խեզ, ձուկն  
> ճեզ, ճնճուկ > քիչիցից, մուկն > մեզ, պիծակ > քիչից և այլն:

§146. Բացառությամբ տակ բառը դառնում է դիւ, և շապիկ > շապիկ  
(վերջինս, ինչպես ամեն տեղ, ազդվել է վարտիք > վարդաք բառից). աղէկ  
բառն էլ լինում է աղէկ:

§147. Հետաքրքրական են երեկ > քիչից և մեկ > մից, մեկ մը, մի՛ մը, բայց  
նաև մեկ՝ սրանց մեջ կ-ն դարձել է դ'. ուրիշ բառերի մեջ բառավերջի –եկ-ը  
մնում է –ից. ինչպես՝ ցերեկ > քիչից, վառեակ, վառեկ > վառից, կորեկ >  
քիչից և այլն:

Դիտողություն. — Բառավերջի կ>գ բաղաձայնը, գտնվելով մը անո-  
րոշ հոդի մոտ, կորչում է անհետ. օրինակ՝ կամացուկ > գնացուց, գնացու  
մը «կամացուկ մը», ծաղիկ > ճաղիկ, ճաղիկ մը, պսակ > քիչից, քիչից մը.  
տանիկ > քիչից, դիւ մը. հացիկ > քիչից, հացից մը. մկնիկ > մըգնից,  
մըգնից մը. կատուկ > գնացուց, գնացու մը:

Ուրիշ դեպքում գ-ն մնում է. ինչպես՝ հացից բէ «հացիկ բեր». քիչից  
չիստով «պսակ չտեսավ». գնացուց քիչից «կամացուկ քիչից». դիւ մը –  
գուգո «տանիկ է գալիս». ճաղիկ դէօր «ծաղիկ տուր»:

## Հ

§148. Բառասկզբում հ-ն մնում է հ. ինչպես՝ հաց > հուց, հարսանիք >  
հարսանք, հարցանել > հարցընիլ, հեծան > հիծում, հոտ > հիւր, հոր > հիւր,  
հում > հու, համ > հում, հասանել > հասնիլ, հարիւր > հարիւր, հիմն > հեմ, հե-  
րու > հիւր, հերկել > հիւրից, հերիւն > հիւրիւն և այլն: Բացառաբար հող  
բառն է, որ դառնում է խիւղ (նախահնչյուն խ-ն ձևացել է բառավերջի դ-ի  
ազդեցությամբ):

§149. Բառամիջում հ-ն մնում է նույնպես հ. եղած օրինակներն են՝ գա-  
հել > գիհիլ «վարել անասունը», շահեմ > շահան «բազե», պահել > քիհիլ,  
պատուհան > քիհիլ, պատուհաս > քիհիլ, ջուրհակ > ջիլից, ռեհան  
> ջիլից:

§150. Բառամիջում միանալով որոշ բաղաձայնների հետ, ձևավորում  
է նոր բաղաձայններ կամ վերանում է: Այսպես են՝ օրհնել > ուրհիլ, քաղի-  
ան > քիլից, պահք > քիւք, շնորհք > ջիլից:

§151. Բառամիջում հետաքրքրական է հ>ֆ հնչյունափոխությունը, որ  
ցույց է տալիս սահիլ > սիֆիլ բայը: Ուրիշ մեջ օրինակ չկա:

§152. Բառավերջում պահպանվում է դահ >դիւհ «հնացած», դեհ >դիւհ «կողմ» բառերի մեջ, իսկ ձևափոխության է ենթարկվում կամ վերանում է՝ ճանապարհ >ջամբօգ, ջամբինգ, սկիհ >սըգէն, աշխարհ >աիւշուր, աիւշուրք բառերի մեջ:

Ձ

§153. Բառասկզբում ձ-ն դառնում է ձ՛ ինչպես՝ ձայն >ձան, ձուկն >ձէօգ, ձող >ձիւղ (արորի), ձիւն >ձայն, ձմեռն >ձիւմիւ, ձմերուկ >ձիւմըրիւգ, ձիւք >ձայք, ձի >ձէն, ձեռք >ձառք, ձգտալ >ձըգըողիլ և այլն:

Ձագար բառը թեն կանոնավոր կերպով դառնում է ձագգար, բայց մի ուրիշ գյուղում էլ լինում է գագգար, իսկ ձարմաղ բառը, շփոթվելով ցորեն բառի հետ, դարձել է ցիւրմիւղ (այժմ այս մաղը շինում են փոկից քաշված բարակ շերտերից և ոչ թե ձիու ձարից, ինչպես եղել է ժամանակին):

§154. Բառամիջում անկախ օրինակ չունենք ձ հնչյունի համար, որ գտնվում է միշտ և կամ ր բաղաձայնից հետո:

Ա-ից հետո դառնում է սովորաբար ձ. օրինակներն են՝ անձրև >անձըրիւ, թանձր >թունձըր, խանձել >խանձիլ «բովել», խնձոր >խնձիր, հնձել >ընձիլ, սինձ (պտուղը) >սնձաօ, սնձեհի (ծառը) >սընձիւս:

Միայն գանձանակ >գանձանագ բառի մեջ գտնում ենք ձ>ձ՛, որը գրական փոխառության արդյունք է. այդ երևում է նաև վերջին վանկի ա ձայնավորից՝ փոխանակ ու-ի:

§155. ր բաղաձայնից հետո ձ-ն դառնում է ձ՛ օրինակներն են՝ դերձան >դիւմձուն, դարձնել >դիւմձընիլ, իսկ բարձր բառը ր հնչյունը փոխելով և-ի՝ դարձել է րիւնձըր:

Սրանցից դուրս ունենք նաև փորձանք >փուրցունք և համարձակիլ >համարգգիլ, որոնց մեջ ձ-ն դարձել է ց և գ (վերջինը հաջորդ թրթոռն բաղաձայնի պատճառով):

§156. Բառավերջում գտնվող ձ-ն անկախ է օձ > ուձ՛ բառի մեջ, որից էլ բարդված է քարք օձ >քարքիւց, քարքիւց, իսկ մյուս օրինակներում գտնվում է ւ, ր և ղ նայ բաղաձայններից հետո:

Ա-ից հետո դառնում է միշտ ձ. ինչպես՝ ինձ (կենդանին) >էօնձ, պղինձ >բղէնձ «կաթսա», տանձ >դունձ:

ր-ից հետո ունենք բարձ >բիւնձ՛, խուրձն >խօրձ՛ և որձ >վըրց. իսկ ղ-ից հետո կա միայն դեղձ >դիւլձ՛:

Ղ

§157. Բառասկզբում օրինակ չունենք:

Բառամիջում ձայնավորից և թրթոռն բաղաձայններից առաջ մնում է ղ: Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. — աղալ >աղիլ, աղանի > աղվընա, աղիք >աղիւք, աղտ >իւղի «կեղտ», աղտոր >աղիէօր «սու-մաղ», անթեղել >անթիղիլ, անկողին >ունգըղէն, գիւղացի >գիւղացա, գաղ-տուկ >գ՛աղիէօգ, գողանալ >գիւղնիլ, դեղին >դիւղէն, դողդողալ >դիւղդիւ-ղիլ, եկեղեցի >գիղիցա, եղէգն >իղիգ՛, ժողովել >ժուղվիլ, ծաղիկ >ձաղագ, ծղրիղ >ձըղըրիօգ, կողպել >գըղբիլ, ձաղկել >ձաղգիլ, մակաղ >մանգըղ-նից, մեղու > միղօ, մեղր >միղր, յղի >աղիա, ողկույց >ուղգայց, ուղղորդ >իւղիւրթ, պղտոր >բղիւր և այլն:

§158. Բառամիջում խուլ բաղաձայններից առաջ գտնված ժամանակ դառնում է խ. ինչպես՝ աղաչել >աիւջիլ, աղբ >իւլբ՛, աղբիւր >աիւբայր, աղ-քատ >աիւքուր, դեղձ >դիւլձ՛, եղբայր >աիւբար, եղջիր >աիւջըր, թուղթ >թէօխթ, խեղդել >խիղդիլ, խխիլ, ճեղքել >ջիլիլ, մեղք >միլք, շեղք >շիլք՛ քաղցած >ք՛աիւցում, քաղցր >քիւլցըր: — Քաղհանել բայի մեջ ղ-ն միանալով՝ տվել է խ և դարձել ք՛աիւցիլ. — սեղմել >սիւմիլ ձևի մեջ պետք է տեսնել թուրքերեն seq-maq բառի ազդեցությունը (տե՛ս Քննութիւն Պոլ-սի բարբառի, §177). — ղ-ն դառնում է խ նաև այն դեպքում, երբ բայերի խո-նարհման մեջ արմատի ղ հնչյունը ց-ի մտտ է հանդիպում. օրինակ՝ աղալ >աղիլ, կատարյալ աիւցա և այլն: — Աղեղնել >աղըննիլ բառի մեջ ղ-ն, մասնավորապէս հաջորդ ւ-ին, դարձել է ւ:

§159. Բառավերջում գտնվող ղ-ն մնում է միշտ ղ. ինչպես՝ աղ >իւղ, աղեղն >աղիղ, անգղ >իւնգիւղ «ամանի կանթ», ասեղն >ասիղ, աստղ >ուսղ, բոկեղ >բիգիղ, գիւղ > գիղ, դեղ >դիղ «մկնդեղ», ընջուղ >ընջէօղ «չկոտած հորթ», թաղ >թիւղ, թո՛ղ >թիղ, իւղ > իղ, խաղող >խաղիւղ, կա-կուղ >գիւգէօղ, կող >գէօղ, հող >խիւղ, ձարմաղ >ցիւրմիւղ, ձող >ձիւղ, ճիւղ >ջէօղ, մաղ >միւղ, մանգաղ >մանգիւղ, մատաղ >աղաղ, նեղ >նիղ, շիւղ >ջէօղ, շող >շիւղ «տաք», ուղեղ >ղէօղ «ոսկորի ծուծ», պաղ >բիւղ, պնեղն



>բջիղ (սխտորի), պտուղ >բղէօղ «ծիրթապտուղ», սուղ >սէօղ «թանկ». իսկ սանդուղ(ը) բառը դարձել է սանդող, որով դ>ղ:

Ծ

§160. Բառասկզբում Գ-ն դառնում է Զ. ինչպես՝ ճակատ >ջաօուղ, ճայթիլ >ջիթիլ, ճանապարհ >ջասթօգ, ճանն >ջանն, ճիպո >ջաթո, ճիւղ >ջէօղ, ճկոյթ >ջըգուղ, ճճի >ջիջա «շերամ», ճճճուկ >ջընջըղօգ, ճրագ >ջրիւզ:

§161. Բառամիջում Գ-ն դառնում է նույնպես Զ. ինչպես՝ անոել >ջըրգիլ «վագքի շորը կամ ծեծած միսը տրորել», արճիճ >արջէջ, խեճեպ >խիջիբ «կճեպ», կոճակ >գուջիւզ, ճճի >ջիջա «շերամ», որոճալ >իոըջիլ, պճեղն >բջիղ (սխտորի), վճարել >ջաթիլ, տաճիկ >դիջանկ, փիճի >փիջա, քարաճիկ >քիթջօգ:

§162. Ուրիշ բարբառների մեան, այստեղ էլ, եթե բառամիջում Գ-ն գտնվում է բաղաձայնից առաջ, իր ատամնային մասը կորցնելով՝ դառնում է Ժ. սրա համար ունենք միայն մի օրինակ, որ է՝ կոճակել, միջին ձայնավորի կորստով դառնում է կոճկել, սա էլ դառնում է գուջգիլ, գուժգիլ (երկու ձևերն էլ գործածական են): Չկա ուրիշ բառ, որի մեջ Գ-ն գտնվի բաղաձայնից առաջ, բացի ճճճուկ բառից, որ այստեղ, նոր ձայնավոր ստանալով, դառնում է ջընջըղօգ:

§163. Բառավերջում գտնվող Գ-ն դառնում է միշտ Զ. ինչպես՝ արճիճ >արջէջ, խիճ >խէջ, կարճ >գարջ, ճանճ >ջանն, պատիճ >բջէջ «լորու՝ բակլայի կանաչ պատյանը»:

Մ

§164. Բառասկզբում Կ-ն մնում է Կ. ինչպես՝ մագ >մուգ, մածուն >մաձձօն, մաղ >միւղ, մանանեխ >մաննիխ, մանր >մուճոր, մատն >մուղ, մարմին >մարմէնը, մաքի >մագա «ոչխար», մեռանել >միոճի, մոռանալ >մաոճի, մուր >մէօր, մուկն >մէօկ և այլն:

§165. Բառամիջում նույնպես մնում է Կ. ինչպես՝ ամառն >ամառո, ամաչել >ամըշնիլ, աման >ամուն, ամիս >ամէս, ամպ >ումբ, արմանալ >լամրմընիլ «ուտըը թմրել», բամբակ >բամբուգ, երիկամունք >իլգամնէօգ, ծամել

>ձամիլ, համար >համուր «վասն», համարել >համբրիլ, քամել >քամիլ, ցամաքիլ >ցամքիլ, նմանիլ >ըլմանիլ, յամել >իմիլ «ուշանալ» և այլն:

Թ

§167. Անկախ է միայն բառասկզբում. ուրիշ դեպքերում նա մաս է կազմում երկբարբառների:

§168. Բառասկզբում ընդհանրապես վերանում է կամ վերածվում է բաղաձայն Ե-ի. օրինակներն են՝

Վերացած — յամել >իմիլ «ուշանալ», յարդ >իոդ, յետև >իդիվ «հետույք», յղի >աղղա, յստակ >իսդիւզ, յօք >էօք, ունքվա, յօրանջել >ըրըժգըղիլ, յիշելիք >իշիլք «ժամուց»:

Դարձած Ե. — յետ >յիդ, յիսուն >յիսսուն, յո՞ >յէօ՞ «ու՞ր»:

Դարձել է Բ միայն յօտել >հիդիլ բայի մեջ:

Ն

§169. Բառասկզբում Լ-ն մնում է Լ. ինչպես՝ նոր >նիւր, նուրբ >նէօրի «նեղ (ճանապարհ, ժապավեն և այլն)», նօթի >անութա, նուշ >նէօշ, ներկել >նիրգիլ, նշխարք >նիխշուր, նստիլ >նսդիլ և այլն:

§170. Երեք բառ կա, որոնց մեջ նախահնչյուն Լ-ն, գտնվելով ուրիշ ճակատից առաջ, տարմամաւորյան օրենքով դառնում է Լ: Սրանք են՝ նմանիլ >ըլմանիլ, նարինջ >լառաննջ «թուրինջ» (որից նարնջենի >լառընջիճա «թուրինջի ծառ») և նեղանալ >լիդիճիլ «ձանձրանալ, սիրտը նեղանալ»:

§171. Բառամիջում Լ-ն մնում է Լ. ինչպես՝ ականջ >ազանն, աղաւնի >աղվըճա, այն >իճօ, անագան >անգոն, անգղ >իւնգիւղ «կանթ», անձրև >անձրիվ, անուշ >անէօշ, անցանել >անցնիլ, առնուլ >առնիլ, բաժանել >բիժնիլ, բանալ >բանիլ, բանիլ >բանիլ, բարեկենդան >բարգըճա, բարգըճիւք, բեւեկնի >բիվգիճա, գտանել >դըճնիլ, դանակ >դանիւզ, եղունգն

>դէօնգ, երանի >իռնիգ, գենուլ >զընիլ, ընտրել >հընդըրիլ «ջոկել», թանձր >թունձըր, ծունկ >ձէօնգ, հարսնիք >հատսնաք, մատանի >մադնա, պանիր >բւնէր, տանձ >դունձ, քանի՞ >քննը՞ և այլն:

§172. Բառամիջում *նկ* կամ *նգ* հնչյունախումբը, գտնվելով *ն* բաղաձայնից առաջ, դառնում է *չ*. այսպես են՝ անկանիլ > \*անկնիլ > *իյնիլ*, կանգնիլ > *գնկնիլ*, ցնկնիլ > *ձըյնիլ*:

§173. Բառամիջում *նլ* հնչյունախումբը վերածվում է *լը*-ի կամ *լ*-ի. առաջինի համար ունենք մի ապահով օրինակ, այն է՝ անալի > անլի > *ալլա*, իսկ երկրորդի համար ունենք *բանալիք*, որ թերևս \**բանլիք* > բալլիք ձևից անցնելով՝ տվել է *բնլէնք*:

– Ծանապարհ բառը, ինչպես շատ տեղերում, նույնպես և այստեղ ձևափոխվելով՝ դարձել է *ջամբունգ*:

– Թօշնիլ բայն էլ, նմանությամբ *թառամիլ* հոմանիշի, դարձել է *թիշմիլ*:

§174. Բառավերջում գտնվող *ն*-ն մնում է նույնպես *ն*: Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. ինչպես՝ աման > *ամնոն*, անագան > *անգոն*, անասուն > *անստոն*, անուն > *անոն*, անկողին > *ունգըղէն*, ապարանջան > *աբըրջոն*, արին > *վիրէն*, բան > *բոն*, բերան > *բիրոն*, բոյն > *բնայն*, ձիւն > *ձնայն*, լայն > *լան*, ձայն > *ձան*, մարմին > *մարմէնք* և այլն: Միայն *մրջին* բառն է, որ անցնելով *մրջիմն* ձևից՝ տվել է *մոջոն*:

## Ծ

§175. Ամեն դիրքում էլ մնում է միշտ *չ*. ինչպես՝ Բառասկզբում՝ շուն > *չուն*, շինել > *չինիլ*, շատ > *չիտ*, շուտ > *ուշէր*, շենքի > *չիրիի* և այլն:

Բառամիջում՝ աշուն > *իշէտոնք*, աշխարհ > *միշուր*, փշրանք > *փըշըրէտք*, փոշի > *փիշա*, քարշել > *քիշիլ*, մաշել > *միշիլ*, գիշեր > *գիշիր* և այլն:

Բառավերջում՝ էշ > *իշ*, քարաթոթոշ > *քարթոշ*, թուշ > *թօշ*, նուշ > *նէշ*, անոշ > *անէշ*, փուշ > *փէշ*, գոմէշ > *գիմիշ* և այլն:

## Չ

§176. Բառասկզբում մնում է միշտ *չ*. ինչպես՝ չափ > *չուփ*, չամիչ > *չնիւմէշ*, չար > *չուր*, չոր > *չիւր*, չորս > *չուս*, չուան > *չվուան*: — Ունենք միայն *ջէր*

«ծտի նման մի թռչուն», որ եթե հին հայերեն *չիտ* բառն է, ուրեմն *չ*-ն դարձել է *ջ*:

§177. Բառամիջում *չ*-ն նույնպես մնում է ընդհանրապես *չ*. ինչպես՝ աւաչել > *անլչիլ* «երգել», բառաչել > *բաուչիլ*, փչել > *փչիլ*, չարչարել > *չարչարիլ*, կանչել > *գիւնչիլ*, խոչակ > *դրոչօգ*, խեչեփառ > *խիչիփուր*:

Քիչ անգամ դառնում է *ջ*. այսպես են՝ աղաչել > *միւջիլ*, խնչել > *խնջիլ*:

Մի անգամ էլ բռնչ պտղի փոխարեն ունենք *փոռնջիւն* ծառի անունը (բռնչենի), որ *չ*-ն դարձել է *ջ*՝ նախորդ *ն*-ի մտո:

§178. Ուրիշ բարբառներում գտնվող այն օրենքը, որով *չ*-ն, գտնվելով բաղաձայնից առաջ, դառնում է *չ*, կա նաև այս բարբառում, բայց դրա համար ունենք միայն երեք օրինակ, որոնք են՝ ամաչել > *ամըշնիլ* և աչք > *աշք* (սակայն հոգնակին լինում է *իչվա*), *քիշգէօ մը* «քշիկ մը»:

§179. Բառավերջում մնում է միշտ *չ*, որի համար եղած օրինակներն են՝ խաչ > *խաչ*, աւաչ > *ալվաչ* «երգ», խէչ > *խաչ*, կանաչ > *գանաչ*, չամիչ > *չամէշ*, քիչ > *քէշ*:

## Պ

§180. Բառասկզբում դառնում է միշտ *բ*: Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. ինչպես՝ պագանել > *բնքնիլ*, պակաս > *բնգուս*, պահել > *բիհիլ*, պաղ > *բիւղ*, պայծառ > *բիձնուր*, պաս > *բուր* «քահանա, կնքահայր», պատա > *բառուվ*, պատ > *բուղ*, պարան > *բարոն*, պիծակ > *բիձձէօգ*, պղինձ > *բղէնձ* «կաթսա», պորտ > *բիւրղ*, նույնիսկ պանիր > *բննէր* և պսակ > *բսսիւգ*, որոնք ուրիշ բարբառներում այլափոխված ձևով են պահված:

§181. Բառամիջում *պ*-ն նույնպես դառնում է *բ*. ինչպես՝ ապարանջան > *աբըրջոն*, ապուր > *աբէօր*, դիպիլ > *դիրիլ*, կապել > *գնքիլ*, կապոյտ > *գաբբէր*, հպարտ > *հաբուրղ*, ճիպո > *ջաբո*, շապիկ > *շնքնք*, սպիտակ > *խսքիւրիւգ*, սպրդիլ > *սբըրրիլ*, տապակել > *դնքգիլ*:

Միայն երկու բառի մէջ *պ*-ն շնչեղ դառնալով՝ վերածվում է *բ*-ի. այսպես են՝ ճանապարհ > *ջամբօգ* և սպանանել > *սբննիլ*:

§182. Բառավերջում *պ*-ն դառնում է միշտ *բ*. եղած օրինակներն են՝ ամպ > *ումբ*, խեճեպ > *խիջիբ*, խջիբ, կապ > *գուր*, կոպ > *գուր*, գիբ, պապ >

բութ «քահանա, կնքահայր», պարապ >բարութ: — Իսկ մի անգամ էլ ունենք ոսպ >վրսբ, որի մեջ բ' հնչյունը նախորդ ս-ի պատճառով է, ինչպես սպահանել >սբանիլ բայի մեջ:

Ջ

§183. Բառասկզբում ջ-ն դառնում է ջ': եղած օրինակներն են՝ ջոր >ջէօր, ջրադացք >ջնդուցք, ջորի >ջիրա, ջուլհակ >ջելհիօզ և ջիղվա «ծուկից վերև եղած մասը», որ կազմված է -վա հոգնակերտ մասնիկով՝ ջիղ բառից. հմմտ. Ակնի բարբառով ջիղ «ոլոք»:

§184. Բառամիջում, անկախ լինելու դեպքում, ունենք միայն երկու օրինակ. երկուսն էլ դառնում են ջ >ջ'. հաջել >հիջջիլ և ոջիլ >իջէլ:

Մյուս դեպքերում գտնվում է՝

Ա-ից հետո, երբ դառնում է ջ. ինչպես՝ ապարանջան >աբրոջուն, ընջուղ >ընջէօղ «չկուտած հորթ», թնջուկ >թիմջէօզ (մազ), խոնջան >խնջուն. — տանջել >դանջիլ բառի մեջ ջ-ն դառնում է ջ'. — Իսկ յօրանջել >ըրըժօղ-դիլ բառի մեջ, որ ծագում է \*յօրանջկտալ ձևից, ջ' ոնգայինից հետո և բաղաձայնից առաջ՝ դարձել է ժ:

Դ-ից հետո, երբ դառնում է ջ', որի համար ունենք երկու օրինակ, որոնք են՝ թրջել >դրոջիլ և մրջիւն >մոջճոմ:

Ղ-ից հետո, երբ դառնում է ջ', որի համար ունենք միայն մի օրինակ, այն է՝ եղջիր >միջէր:

Բաղաձայնից առաջ, երբ դառնում է ջ, որի համար ունենք միայն երկու օրինակ, որոնք են՝ մէջք >միջք և իջանել >իջնիլ:

§185. Բառավերջում, անկախ լինելու պարագայում, կա 3 օրինակ, որոնք են՝ այոջ >իլէօյէ «ուլիկ», յառաջ >յառաչ, յառանջ (որից էլ առաջեալ >յառչիվ), մէջ > միջ': Սրանց մեջ ջ-ն դարձել է չ կամ ջ':

§186. Բառասկզբում գտնվում է նաև՝

Ա-ից հետո, երբ դառնում է ջ. այսպես են՝ ականջ >ագանջ, նարինջ >լառանջ «թուրինջ», որից և լառընջիմա «թուրինջենի»:

Դ-ից հետո, երբ դառնում է ջ' կամ չ. այսպես են՝ արջ >ուրջ', լուրջ >լօռ՝ «կապույտ» և բաղարջ >բնարջ': Վերջինը ստանում է նաև բնարջընա ձևը, որ ջ-ն, գտնվելով բաղաձայնից առաջ, դարձել է ջ' ըստ վերի §178:

Ռ

§187. Բառասկզբում չկա հայերեն ռ. այս բարբառում ունենք միայն 2 բառ ուսպ >րոոոբ «դոշաբ» և ռեհան >րոոիհուն, որոնք փոխառյալ են արաբերենից և երկուսն էլ ունեն ջ ձայնավոր հավելվածը:

§188. Բառամիջում ռ-ն ընդհանրապես մնում է ռ: Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. ինչպես՝ ազոալ >անոուվ, առանց >առունց, յառաջ >յառանչ, առաջեալ >յառչիվ, առատ >րոոոդ «էժան», առնուլ >առնիլ, առու >առոո, բառաչել >բառչիլ, գոալ >գոոիլ, թիթեռնիկ >թիթըռննագ, խառնակել >խանընգիլ, կշիռք >գիշիռք, հեռի >հիռոո, ձգոտալ >ձգըռդիլ, ձեռք >ձանք, պառ(ա)կիլ >բառգիլ, փոնգոտալ >փոնգոիլ, քառասուն >քառսօն, քուռակ >քուռուգ և այլն:

§189. Երեք բառ ունենք, որոնց մեջ բառամիջի ռ-ն դառնում է ր. դրանք են՝ աճառել >ջրրգիլ «տրորել», ծառզարդար >զարզարդիւր, ոռք >վրոք «մի բանի հատակը»:

Գրաբար առնել բայը, ինչպես ամեն տեղ, նույնպես և այս բարբառում, միջին ռ-ն կորցնելով՝ դարձել է անիլ, ինիլ = Պոլիս ընել:

Կենաս բառը թուրքերենից նոր փոխառությամբ դարձել է քրուզ (թուրքերեն kiraz):

§190. Բառամիջում ռ-ն մնում է նույնպես ռ. օրինակ՝ ամառն >ամոռ, աստառ >ասդոռ, բեռն >բիռ, բևեռ >բիվիռ, բուռն >բօռ, դուռն >դօռ, զամբուռ >զամբոռ «պիծակ», թառ >թոռ (հավի), թոռն >թոռիլն, ժանգառ >ժանգառ (կապույտ քարը), լեռն >լիռ, ծառ >ձոռ, ծոռ >ձօռ, ձմեռն >ձմիռ, ճիպոտ >ջաբոտ, մատուռն >մադէօտ, նուռն >նօռ, շեռ >շիռ, ոռ >վրոռ «բունոց», պայծառ >բիձձոռ, պատառ >բադոռ, սիսեռն >սիսիռ և այլն:

§191. Բառավերջում ռ-ն դառնում է ր՝ երկու բառի մեջ, այն է՝ ժայռ >ձէր և խեչափառ >խիչիփուր:

Ս

§192. Բառասկզբում ս-ն մնում է միշտ ս. օրինակ՝ սեալ >սիվ, սերմն >սիրմ, սալ (քար) >սուլ, սամի >սամա, սանդ >սունդ, սանոր >սունդր, սոդոց >սդից, սիւն >սայն, սիրել >սիրիլ և այլն: — Միայն սեամ >շիմք բառի մեջ է, որ նախահնչյուն ս-ն դառնում է ջ:

§193. Բառամիջում էլ *ւ*-ն մնում է *ւ*. ինչպես՝ անասուն > *անասուն*, ասել > *անիլ*, ասեղն > *անիղ*, ասող > *ուսող*, բամբասել > *բամբասիլ*, բուսանիլ > *փուսանիլ*, երեսուն > *յսնասուն*, լսել > *լրսսիլ*, կէս > *գիս*, հասանիլ > *հասանիլ*, հարսանիք > *հասնաք*, հոսելի > *հիսսիլա*, յիսուն > *յիսասուն*, ոսկի > *իսգա*, սօսի > *սուսա*, փեսայ > *փիսո* և այլն:

Միայն վաթսուն բառի մեջ *ւ*-ն դառնալով *ց*' տալիս է *վաթսոց*:

§194. Բառավերջում *ւ*-ն նույնպես մնում է *ւ*. օրինակ՝ ակօս > *անգէօս*, ամիս > *անմէս*, ես > *իս*, երես > *իրիս*, լոյս > *լայս*, կարաս > *գարրուս*, հայս > *հաս*, հարսն > *հուոս*, միս > *մէս*, ուս > *էօս*, չորս > *չուոս* և այլն:

## Վ

§195. Բառասկզբում մնում է *վ*. ինչպես՝ վազել > *վանգզիլ*, վաթսուն > *վաթսոց*, վախ > *վիլիս*, վախենալ > *վանխանիլ*, վաղի > *վիլղը* «էգուց», վայելել > *վիլլիլ*, վեց > *վիցց*, ի վերայ > *ըրվա* և այլն:

Միայն վաթել բայն է, որ տալիս է *ֆիթիլ* «թափել», որ նախահնչյուն *վ*-ն, ազդվելով հաջորդ *թ*-ից, դարձել է *ֆ*:

§196. Բառամիջում և բառավերջում գտնվում է միայն բարդ բառերի երկրորդ եզրում և կան *n* ձայնավորից հետո: Այս երկու դեպքում էլ դառնում է *վ*: Եղած օրինակները հետևյալն են. բուրվառ > *բուրվառ*, գովել > *գուվիլ*, դարիվեր > *դուրվիլ*, դարիվայր > *դուրվար*, ժողովել > *ժուղվիլ*, լուրհաս > *լըվյուս*, լէլյուս, խոստովանիլ > *խուսողըվանիլ*, խորովել > *խիղովիլ*, հովի > *հուվէլ*, սովորիլ > *սուրվիլ*. — Իսկ բառավերջում ծով > *ձուվ*, կով > *գուվ*, ով > *ուվ*:

## Տ

§197. *տ*-ն բառասկզբում լինում է ընդհանրապես *դ*. ինչպես՝ տերև > *դիրիվ*, տուն > *դուն*, տանիկ > *դիջանգ*, տանիլ > *դանիլ*, տանձ > *դունձ*, տալ > *դվիլ*, ուղիլ, տայգր > *դաքր* և այլն:

§198. Երկու բառ կա, որոնց մեջ նախահնչյուն *տ*-ն չի համապատասխանում այս օրենքին. առաջինն է տարգալ, որ դարձել է նախ *դգալ* և ապա *դիգուլ*: Երկրորդն է միջին հայերեն տասակ «կապոց» բառը, որ այս բարբառում դարձել է *թսիւց*, *թըսէօգ*. սրանց նախաձևն է պարսկերեն

dasta, որ թուրքերեն դարձել է նախահնչյունի փոփոխությամբ՝ tesde «կապոց»:

§199. Բառամիջում, երկու ձայնավորի միջև գտնվող *տ*-ն դառնում է *դ*. ինչպես՝ գետին > *գիդէն*, գիտել > *գիդանիլ*, գօտի > *գուդա*, դատաւոր > *դանդաւիլ* «վաստակավոր», Ջատիկ > *Ջանդիկ*, կատու > *գանդո*, մատակ > *մանդիւց* «էգ անասուն», մատաղ > *ադաղ*, մկրատել > *մըգրադիլ*, յօտել > *հիդիլ*, նետել > *նիդիլ*, ուտել > *ուդիլ*, պատանք > *բանդանք*, փտիլ > *փըդիլ*, կտաւ > *գըդուվ* և այլն:

§200. Այսպես նաև ձայնավորից (նաև *ը*-ից) կամ թրթռուն բաղաձայնից հետո և մի ուրիշ թրթռուն բաղաձայնից առաջ. ինչպես՝ պատառել > *բադդիլ*, պատժել > *բադժիլ*, պղտոր > *բըղդիլ*, պատրոյգ > *բանդրէք*, պատրոյս > *բանդրէս*, քիրտն > *քըրդէնք*, օծտել > *ուծդիլ* «հարսին օծիտ տալ», փոնգտալ > *փըրդնգդիլ*, կատաղել > *գանդիլ*, մօտենալ > *մուդգընիլ*, մրտենի > *մըրդիենա*, յօրանջել > *ըրըժգըդիլ* (= *յօրանջկտիլ*), փայտանալ > *փիդանիլ*, սանտր > *սունդր*, մատանի > *մադնա*, խտղտել > *ղըղըդիլ*, ընտանի > *ընդանո* «ոչ օտար», ընտրել > *հընդըրիլ*, տատրակ > *դանդըրգանգ* (իբր *տատրկիկ*) և, վերջապես, «ուրի» իմաստով բայը, որ բարբառումս *ուդիցիլ* ձևն ունի և, ըստ իս, ծագում է *այտուցիլ* բայից (որ է *այտնուլ*):

§201. Արտասուք բառը ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ դառնում է *տ*-ն հնչյունների միացումով *սոցօնք*:

§202. Պատիճ բառի մեջ երեք խուլ բաղաձայնները, ըստ օրինի, թրթռունի վերածվելուց հետո (\*բադիջ), *դ*-ի նմանությամբ վերջնահնչյունը դարձել է նույնպես *ջ*, որով ստացվել է (*տ*-ի անկումով) *բէջէ* «լոբու կամ բակլայի կանաչ պատյանը»:

§203. Պատիլ բայի դիմաց ունենք *բանվիլ* «շրջել, զբոսնել, ման գալ, որոնել», որ, աճընշտ, առաջացած պիտի լինի *պտտուիլ* ձևից, միջին *տ*-ի անկումով:

§204. Երբ *տ* > *դ* գտնվում է *ն*-ից առաջ՝ նրան նմանվելով դառնում է *ն*, որով առաջանում է կրկնակ *ն*. այսպես են՝ մտանել > *մաննել* > *մաննիլ* և գտանել > *գտնել* > *դըննիլ* (թեև կատարյալը *դըրո*): Սրանց հետ հմմտ. բարեկենդան > *բանդըննա*, հիւանդանալ > *հիւընդանալ* > *հիվըննիլ*: Բայց մյուս կող-

մից ունենք մատանի > մաղնա, գիտենալ > գիտնալ > գիտնիլ և փայտանալ > փիղնիլ: Սրանցից երևում է, որ տն > ան հնչյունափոխության պայմանն է նախավոր ը ձայնավորը: Թերթելով ամբողջ բառացանկը՝ դն, տն հնչյունախմբի ուրիշ օրինակ չգտա:

Ընդհակառակը՝ ան, նտ հնչյունախմբը մնում է միշտ անփոփոխ, ինչպես ցույց են տալիս ընտրել, ընտանի, գնդել, խնդալ, գնդան, ծանոր, մանոր, սանորել և այլն:

§205. Կտցել բայի մեջ թեև գտնում ենք տց, ուր տ-ն պիտի տար դ, բայց այս դ-ն փոխանակ հարմարվելու խույճ բաղաձայնի հետ, նրան էլ ձգել է իրեն և ստացվել է գըղձիլ «կտուցով կտցահարել»:

§206. Անեզականի ք բաղաձայնից առաջ տ-ն ստանում է անորոշ հնչում. այսպես՝ հետք > հիթք, միտք > մեդք, պարտք > բորթք և պետք > բիդք:

§207. Ունենք այս բարբառով ձիդիլ «ույսը ծագել, ցուլալ» բայը, որի համապատասխանն է Պոլսի բարբառով ծաթիլ, ցաթիլ. այստեղ երևում է, որ ցայտել և ծագել բայերի խաչաձևում կա:

§208. Ունենք նաև շիռիլ «կացիճով ճղտել, քարով գլուխը շարդել», որի արմատն էլ կա շերտ > շիռդ՝ ձևով, ուստի գտնում ենք այստեղ տ > դ հնչյունափոխությունը, որ անսովոր է. արդյոք քերթել բառի ազդեցությամբ՞ չէ պիտի տեսնել (իրոք էլ այս բառը արտասանվում է քիռիլի):

§209. Բառամիջում խտ կապակցությամբ կա միայն մի բառ, որ է՝ տախտակ > դախդիզ, ուր խտ-ն դարձել է խդ, իսկ սխտոր տե՛ս հաջորդը:

§210. Բառամիջում հետաքրքրական է ստ կապակցությունը, որ ընդհանրապես դառնում է սդ. այսպես են՝ աստառ > ասդոռ, Աստուած > Ասդոձ, դաստառակ > դասդոռուզ «թաշկինակ», դատաստան > դադասդոն, խոստովանիլ > խոսդովանիլ, յստակ > իսդիզ, նստիլ > նսդիլ: — Սրանց պիտի կցենք նաև խստոր, որ պիտի տար խըսդիդ, բայց ինչպես այլուր, այստեղ էլ շրջվելով՝ դարձել է սրիդիդ:

Սրանց հակառակ՝ ստ > սդ հնչյունափոխությամբ ունենք հետևյալ բառերը. — աստղ > ուսդդ, առքսդդազ!, տստակ > թըսդիզ, թըսդեզ «կապոց, տրցակ» և քրիստոնեայ > քիսդիճէ «հայ», որից և քիսդիճիզ «հայերեն»:

§211. Նախորդին ճիշտ մնան՝ բառամիջի շտ կապակցությունն էլ տալիս է միշտ շդ՝ այսպես են՝ բշտիկ > փշդնձ, կշտանալ > գիշդնձիլ, հաշտուիլ > հիշդնձիլ, հրեշտակ > հրըշդիզ, պաշտել > բաշդիլ, քշտել > քիշդիլ «հարու տալ, եղջերցել»: — Բացառություն չունենք:

§212. Բառավերջում տ-ն դառնում է ընդհանրապես դ: Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. աղտ > իղդ «կեղտ», առատ > ըռռոդ «էծան», արտոյտ > արդդդ, բորոտ > բիւրիդ, գորտ > գիւրդ, գատ, ի գատ > իզզոդ, լակոտ > լազիդ, խախոտ > խախտոդ, խոտ > խիդ, խրատ > խրոդ, ծիրտ > ծիռդ, կարկոտ > գալքգալքոդ, կորկոտ > գըրգիդ, կուտ > գտոդ, հատ > հոդ, մօտ > մոդ, սիրտ > սիռդ, ցուրտ > ցոռդ, փայտ > փադ և այլն: Բոլոր դեպքերում էլ տ-ն հաջորդում է ձայնավորի կամ թրթունք բաղաձայնի:

§213. Իբրև բացառություն՝ բառավերջի տ-ն դառնում է թ՝ հետևյալ բառերի մեջ. — կապոյտ > գաբբայթ (այսպես է Յոլուն-օլուն գյուղում, այլ գյուղերում՝ գաբբեթ կամ պրսկ., թուրք. լաբբայթ), պարսէտ > բարսեթ, պաքսիմատ > բաքսիմութ:

§214. Մի դեպքում բառավերջի տ-ն դառնում է դ՝ այն է՝ շերտ > շիուդ՝ Ուն բառը դառնում է վըդդ (կրկնակ դ):

§215. Խույճ բաղաձայնից հետո ունենք միայն ստ և շտ կապակցության մեջ, ուր մեծ մասամբ գտնում ենք դ՝ այստեղ՝ հաստ > հուսդ, հարուստ > հաւրտոսդ, հանգիստ > հանգէսդ, հեշտ > հիշդ:

Բացառություն է միայն կուշտ, որ թե՛ «հագեցած» և թե՛ «կող» իմաստով դառնում է գէշդ. բայց բայական ձևն է գիշդնձիլ:

§216. Խ բաղաձայնից հետո կա երկու օրինակ, այն է՝ բախտ > բախդ, որի վերջնահնչյունը վերագրում են թուրքերենի ազդեցության (baxt), և անստույզ մի բառ՝ դիւխդ ձևով և «խաղողի սարփինա» նշանակությամբ. այսպիսի բառ չունենք հայերենում, որովհետև իւ-ը ծագում է ու ձայնավորից, ենթադրում են, որ սրա նախաձևը պիտի լինի \*տախտ:

Բ

§217. Բառասկզբում չկա դ. առատորեն գտնվում է բառամիջում, և բառավերջում և մնում է դ. ինչպես՝ ալիդ > իլեդ, աղբիւր > ախբայր, աղուր

>աղվիր «գեղեցիկ» (որից և չաղվիր «տգեղ»), երկաթ >իրգուրթ, երկայն >իրգամ, երկու >ըրգէօք, կարմիր >գւրմէր և այլն, բայց շատ դեպքերում հնչվում է իբրև *n*. Ինչպես՝ ամբար >ամբուն, ապարանջան >աբըըուն, արածել >անծիլ, արդար >անդիւտ, արծաթ >անձուրթ, գէր >գիւտ, գլորիլ >գուլըրիլ, դար >դիւտ «բարձրավանդակ», դուր >դէտ, երեսուն > յաւսօճ (անշուշտ, քառսօճ «40» բառի ազդեցությամբ), խոր >խունօ, մայր >մաւտ, մուրալ > մուրիլ, նարինջ >լաւանջ, ներ >նիւտ, սեր >սիւտ, տէր >դիւտ և այլն: Արանց մի մասը տատանվում է *p* կամ *n* արտաբերման մեջ:

§218. Հին հայերենի այն օրենքը, որով *g*-ից առաջ *p*-ն դառնում է *n*, գտնում ենք նաև այստեղ. օրինակներն են՝ երանի >իննիգ, երնել >իննիլ «ցորենը քամու տալ», կարենալ >գաւնիլ. ուրիշ օրինակ չկա, որովհետև մնացյալ բոլորը արդեն գրաբարի մեջ վերածվել են *n*-ի: Տե՛ս և §190:

§219. Գտնվելով *ձ*, *ժ* հնչյուններից առաջ՝ *p*-ն դառնում է *n*. եղած օրինակներն են՝ արածիլ >անձիլ, արծաթ >անձուրթ, բարձել >բնանձիլ, բարձ >բնոձ, գործ >գիւոձ, դերձան >դիւոձնաւ, դարձնել >դիւոձընիլ, կուրծք >գոնձք, կրծել >գրձիլ: — Բացառություն է խորձ >խօրձ:

Իսկ *g* հնչյունից առաջ մնում է *p*. այսպես են՝ որձ >վըրց, պախուրց >բախօրցք, հարցանել >հարցընիլ, փորձանք >փուրցունք:

Բացառություն են՝ փրցնել >փոցընիլ և արտասուք >անցօնք:

§220. *u* բաղաձայնից առաջ գտնվող *p*-ն դառնում է նույնպես *n*. եղած օրինակներն են՝ հարսն >հունս, հարսանիք >հանսնաք, չորս >չունս, որսալ >իոսիլ. բայց սրանց հակառակ կա պարսէտ >բարսէթ:

§221. Պայթաշփական բաղաձայններից առաջ անորոշ է *p* բաղաձայնի դիրքը, որովհետև մի կողմից ունենք՝ ապարանջան >աբըըուն, թրջիլ >դիւրջիլ, լուրջ > լօռչ «կապույտ», մրջին >միւրջօւմ, որոճալ >իոըջիլ, և մյուս կողմից էլ՝ արճիճ >արջէջ, արջ >ուրջ, բաղարջ >բնաղարջ, կարճ > գարջ:

§222. Ատամնայիններից առաջ գտնվող *p* բաղաձայնի դիրքն էլ անորոշ է. մի մասն ունի *p*, իսկ կրկնապատիկն ու ավելի ունի *n*: Դնում են այստեղ այդ բոլորի ցուցակը. *n* ունեն.

արդար > առդիւտ  
արտասուք > անցօնք

բրդել	> բըրդիլ
գորտ	> գիւտդ
դատարկ	> դիւրդուգ
երթալ	> ուտդիլ
թարթել	> թիւրթիլ
թրթուր	> թըրթօտ
խրտնել	> խըրդիլ
ծիրտ	> ձիւտդ, ձէրդ
կարդալ	> գաւդիլ
հպարտ	> հաբուտդ
մարդ	> մուտդ
մրտենի	> մըրդիւնա
յարդ	> իոդ
շերտ	> շիւտդ
շերտել	> շիւտդիլ
որդն	> վիւտդ
որթ, հորթ	> հիւտթ
պորտ	> բիւտդ
սիրտ	> սիւտդ
վարդ	> վուտթ
վարդապետ	> վաւդիւտթ
ցուրտ	> ցոտդ
ցրտիլ	> ցոդիլ
փրթիլ	> փոդիլ
քերթել	> քիւտդիլ
քրտիւնք	> քըրէնք
արտոյտ	> արդէտ
բուրդ	> բօրդ
խլուրդ	> խլօրդ
ծառգարդար	> գարգարդիւր
ծղրիդ	> ձըղըրդօգ
մակարդ	> մագուրդ
մարդակ	> մարդիւգ

*p* ունեն.

մկրտել	> մըգըրդիլ
ուղղորդ	> հւղիւրթ
պարտք	> բուրթք
սարդիլ	> սըբըրդիլ
վարտիք	> վարդաք
քարաթոթոշ	> քարթոշ

§223. Չարմանալի է ոլոր երկվանկը, որ բառամիջում տալիս է հլլ- այսպես ունենք բոլորել > բլլիլ «փաթաթել» և ոլորել > հլլիլ: Սրանք կարելի է բացատրել հետևյալ ձևով. նախ՝ եռավանկ բառի մեջ ո ձայնավորը ընկնում է և ստացվում է բոլրել, ոլրել, ապա լր խմբից հնչյունների նույնացմամբ ստացվում է լլ, որով ունենում ենք բլլիլ, հլլիլ: Նույնը գտնում ենք նաև Ջեյթունի բարբառում, ուր մի օրինակ ևս ավելացնելով, ունենում ենք բոլորել > Ջթ. բիլլիլ, որորել > Ջթ. հլլիլ, խոլորել > խիլլիլ:

§224. Մասնավոր դեպքեր են՝

Բարձր > բուևձըր, որի մեջ կրկին ռ-երից առաջինը տարմանությունամբ դարձել է ձ:

Երդումն > ուֆդոմ, որից երդնուլ > ուֆդըմնիլ, ուֆդըվնիլ. սրանց մեջ հայտնի չէ՝ ինչպես է ռ-ն դարձել ֆ:

Երիկամն > ըլլզմննէօգ, իլզմննօգ բառի մեջ ռ-ն դարձել է լ՝ հաջորդ մ-ի ազդեցությամբ:

Օրհնել > ուշնիլ բառի մեջ ռ հնչյունախումբը դառնում է շ:

Նոր բառ է ջիւրըբալիզ «մարդագայլ, բորենի», որ կարծում են, թե բարդված է ջորի + պարիկ բառերից (հմմտ. յուշկապարիկ և իշացուլ). ըստ այսմ \*ջորեպարիկ բառի մեջ ռ-ն դարձել է ղ:

## 8

§225. Ամեն դիրքում էլ մնում է ց. այսպես՝

Բառասկզբում. օրինակ՝ ցախ > ցիխ, ցած > ցուձ, ցածանալ > ցւձնիլ, ցամաք > ցւմիւք, ցաւ > ցուվ, ցերեկ > ցիրիզ, ցորեան > ցիրիձ, ցուրտ > ցոռ, ցրտիլ > ցոդիլ, ցանել > ցւննիլ և այլն:

Միայն ցնկնիլ > ձըլնիլ և ցայտել > ձիդիլ «լույսը ծագել, ցոլալ» բառերի մեջ նախահնչյուն ց-ն դարձել է ձ:

§226. Բառամիջում ց-ն նույնպես մնում է ց. օրինակ՝ ցուցանել > ցըց- ցընիլ, հարցանել > հարցընիլ, անցանել > անցնիլ, գիւղացի > գիղացա, լցու- ցանել > լըցընիլ, հաց(եմ)ի > հւցցցիձա, փրթուցանել, փրցնել > փոցընիլ, քաղցած > քւմիցում, քաղցր > քիւիցըր և այլն:

Միայն կտցել > գըդձիլ բառի մեջ ց-ն, հետևելով նախորդ դ-ին, դար- ձել է թրթուն ձ:

§227. Բառավերջում էլ ց-ն մնում է ց. օրինակ՝ առանց > առուց, բաց > բիւց, երէց > իրից «քահանա», թաց > թուց, ծոց > ձիւց, կտուց > գդէօց, գդէօնց, հանգույց > հանգայց, հացն > հուց, սղոց > սղիւց, վեց > վիցց, ցեց > ցից, ցից > ցէց և այլն:

§228. Այն օրենքը, որով ուրիշ բարբառներում բաղաձայնից առաջ գտնվող ց-ն վերածվում է ս-ի, կա նաև այս բարբառում, բայց շատ սահմանափակ օրինակներով: Այսպես են՝ օրոցք > իւրիւսգ «օրորոց», ջրաղացք > ջւմդուցք, ջւմդուսք, բայց անփոփոխ են քացախիլ > քւցցիւիլ, քւցցիլ, երիցկին > իրիցգէն, պախուրցք > բախուրցք, լցուցանել > լըցըննիլ, լցնիլ և այլն: Անցանել բայը կա թե անցնիլ և թե սսնիլ ձևով:



§229. Բառասկզբում փ-ն մնում է փ. ինչպես՝ փակել > փւագիլ, փայտ > փադ, փայտատ > փիդուդ «բրիչ», թեփակ > փիթիւզ, փեսայ > փիւսօ, փետուր > փիդէօր, փիճի > փիջա, փշրանք > փըշըրէօք, փոր > փիւր, փոս > փիւս, փուշ > փէօշ, փքոց > փքէօց «փուքս» և այլն:

§230. Բառամիջում էլ փ-ն ընդհանրապես մնում փ. ինչպես՝ թափել > թւմիլ, խեչափառ > խշիփուր, խիշիփուր, ծեփել > ձիփիլ, կոփել > գիփիլ «տաշել», տափակ > դւմփիւզ, փրփուր > փրփէօր և այլն:

Տատանվող դրութեան մեջ են՝ եփել > իբիլ, խափանել > խաքննիլ, խափանիլ, շամփուր > շւմքէօր, որոնք ցույց են տալիս փ կամ ք:

§231. Բառավերջում փ-ն մնում է փ. եղած օրինակներն են՝ ափ (ձեռքի) > ուփ, էօյփ, թեփ > թիփ (ցորենի), թիփէօգ (գլխի), թուփ > թօփ, խոփ > խիփ, ծափ > ձուփ «տապակ, թավա», շերեփ > շիրիփ, չափ > չուփ:

Դափ (երածշտական գործիքը) թուրքերենի ազդեցությամբ դարձել է դաֆ:

§232. Բառասկզբում ընդհանրապես մնում է *ք*. ինչպես՝ քառասուն >քառսուն, քար >քուր, քարաթոթոշ >քարթուշ, քարշել >քիշիլ, քերել >քիրիլ, քերթել >քիրդիլ, քիթ >քէնթ, քիչ >քէչ, քիրտն >քրորդէնք, քսան >քսուն, քուն >քուն, քրիստոնէայ >քրիսդինէ «հայ» և այլն:

§223. Բառասկզբում *ա* ձայնավորից առաջ դառնում է միշտ *ք*. օրինակ՝ քաղաք >քաղիք, քաղցած >քաղցում, քամել >քամիլ, քանի >քանիք, քարք օձ >քարքից և այլն:

§234. Բառամիջում նմանապես մնում է *ք*. այսպես են՝ աղքատ >աղքուր, կաքալ >գաղքուլ, փքոց >փքէոց «փուքս», ցամաքիլ >ցամքիլ, քրքրել >քրքրիլ:

Ստացել է *գ*՝ արտասանությունը հետևյալ բառերի մեջ. շաքար >շագգոտ, մաքի >մագա «ոչխար», հասկաքաղ >հասգիղ, ներքս >նրգձի, նրգձէ, ճեղքել >ջխգիլ:

§235. Բառավերջում նույնպես մնում է *ք*: Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը. բուք >բէօք, թուք >թէօք, թրիք >թրիք, ինքն >էնք, կնունք >գիւնէօնք, հերիք >հիրիք, շուք >շէօք, ցամաք >ցամիք, փուք >փէօք, քաղաք >քաղիք (այս բոլորի մեջ *ք*-ն արմատական է):

Հոգնակի *ք* մասնիկով կազմված (թեև այժմ այլևս չգիտակցվող) բառեր են՝ աղիք >աղիք, աղօթք >աղուրթք, աչք >աչք, արտասուք >անցօնք, եզերք >իզգիրք, երեք >ըրք, երկինք >իրգէնք, երկու(ք) >ըրգէօք, ժանիք >ջանիք (խոզի), կուրծք >գօնծք, հարսանիք >հասունաք, ձեռք >ձառք, մեք >միք, մէջք >միջք, մօրուք >մուրէօք, յօնք >էօնք, ունքվա, շողիք >շուղէնք «լորձունք», ոռք >վըրք «մի բանի հատակը», պահք >բիք, ջրաղացք >ջնղուք, վարտիք >վարդաք, փշրանք >փշըշըրէօք, փորձանք >փորքունք և այլն:

§236. Մի քանի դեպքում այս հոգնակերտ *ք* մասնիկն էլ վերածվում է *գ*-ի. այսպես են՝ լի >լիքը >ըլլաք, կողպէք >գըղբանք, գըղբագ, ուլունք >հըննէօգ, օրոցք >իրիւսգ «օրորոց»:

§237. Այս բառով հասկանում ենք զանազան ձայնավորների կրճատումը բառի միջից. ամենից ավելի եռավանկ և քառավանկ բառերի միջնավանկի ձայնավորներն են կրճատվում, որոնց մասին արդեն խոսել ենք վերևում և մեջ ենք բորով բելեր օրինակները:

Անսովոր սղումներ են բառասկզբից՝  
աճոել >ըըրգիլ  
անօսր >նուսր  
եկեղեցի >գիղիցա  
եղունգն >ղէօնգ՝  
ուղել >ղիւղ, ղէօղ  
ուղարկել >ղուրգիլ

Բառավերջից կա միայն՝ խնցի >խնից:

§238. Այս անունով հասկանում ենք այն երևույթը, երբ բառի միջից կրճատվում է մի բաղաձայն և նրա փոխարեն մի ուրիշ բաղաձայն չի դրվում:

Ամենից ավելի *ն* հանգն է, որ վերանում է գոյականների վերջից. ինչպես՝ հարսն >հոռու, հիմն >հէս, ձուկն >ձէօգ և այլն:

Մյուս բաղաձայններից ունենք՝

*ր*.- արժել >իժիլ, երբ >լիփ, կարծ >գաժ, հրամսէ՞ >հըմսէ՞, ջրաղացք >ջնղուք, քարշել >քիշիլ, տարգալ >դիգիլ:

*բ*.- Ակունք բառի վերջից *բ*-ն կրճատվելով՝ մնում է *ակում*, որ դառնում է *ագուն* և ասվում է *ագուն ուր* «տոնական, հանդիսավոր օր»:

*ռ*.- Դուրս է ընկել գրաբար առնել > միջին հայերեն *անել* բայի մեջ, որ այս բարբառում դառնում է *իճիլ*:

*գ*.- կրճատվել է բզէգ բառի վերջում, որ դարձել է *բըզ*:

*հ*.- վերացել է հավատալ >աւղիլ, հնձել >ընձիլ, պահք >բիք, սկիհ >սըզէն բառերից:

*դ*.- վերացել է հիւանդանալ բայի մեջ, որ նախ դարձել է *հիւանդնալ* (հմմտ. Պոլիս *հըվընդնալ*), ապա *դ*-ի կորստով *հիվընդնիլ*: Նման մի կորուստ կա նաև բարեկենդան >բնրգըննա բառի մեջ:

*մ*.- Դուրս է ընկել մատաղ >աղաղ բառի սկզբից:

*ղ*.- կրճատվել է ուղղորդ >իւղիւրթ բառի մեջ (զույգ *ղ*-ն պարզված):



տ.- Ընկել է պտտիլ >բարդիլ բայի մեջ, որ, անշուշտ, ներկայացնում է պտտվիլ ձևը: Ընկել է նաև քիստ >քէս բառի վերջում:

վ.- Կրճատվել է վճարել >ջարիլ բառի սկզբից:

Արագաբանության (haplologie) օրենքով կրճատված են քարաթոռոջ >քարթոռոջ, մանանեխ >մանիխ, ապարանջան >աբրոջուն, օրորոց >իրիւսգ:

Հետաքրքրական բառ է անասուն, որի միջնավանկից ա-ն վերանալով՝ դարձել է նախ \*անսուն, ապա Ե-ն նմանվելով հաջորդ ա-ին՝ տվել է աստուն ձևը: Այսպիսով, անասունը դարձել է ասուն. սովորական է բարբառիս մեջ հոգնակի ձևով՝ աստունք «տավար, կովեր և այլն»:

### ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

§239. Եղած օրինակներն են՝

դատարկ	> դատորոգ
իշխել	> իշխիլ, իխշիլ «համարձակվել»
լուանալ	> ըլվանիլ
խստոր	> սըխդիլ
մարխ	> մի'խըր
ունկի	> նուգա
սովորիլ	> սուրվիլ
ի վերայ	> ըրվա

Ամենից գարմանալին է կոթ բառը, որ շրջվելով՝ դարձել է դիւք:

### ՀԱՎԵԼՈՒՄ

§240. հ.- ազանիլ >հանքնիլ (այս հավելումը, որ հատուկ է բոլոր մեր բարբառներից, շատ հին է և, ըստ իս, կատարվել է զանազանելու համար համանուն ազանիլ «գիշերել, իջևանել» բառից, որ այժմ վերացել է), ալևոր >հանլիվիլ, արբենալ >հարբիլ, արօր >հարուր, ընտրել >հընդըրիլ, որթ >հիտթ, ուլունգ >հըննտոգ, ունդ >հետնդ:

բ.- Հոգնակիի ք մասնիկն է, որ հաճախ կցվում է բառին. այսպես են՝ աշուն >իշտունք, գարուն >գարտունք, աշխարհ >ախշուրք, բանալի >բանլենք, բարեկենդան >բարգընդիւք, երկու >ըրգէտք, մարմին >մարմենք, պախուրց >բախուրցք, սեամ >շիմք, օծիտ >ուծէդք, օրորոց >իրիւսգ (ուր ք-ն դարձել է գ):

ն.- յառաջ >յառանջ, արմուկն >արմտունգ, արտասուք >արցունք, բաղարջ >բաղըրջնա, բանալիք >բանլենք, դու >դուն, երեկոյ >իրիգուն, իրգուն, թի >թէն, ձի >ձէն, կողպէք >գըղբանք, կտուց >գդէունգ, կրուկ (ոտքի) >գըրտունգ, մեծ > միւնձ, մեք >միւնք, շողիք >շուղենք «լորձունք», պոուկ >բունգ «շրթունք». սկիհ >սըգէն:

դ.- մանր >մունդր, մանրել >մանդդիլ, ծանր >ծունդըր, կաղին >գանդունդ, բալասան >փանանդուն. -իսկ պատրոյս >բարդէս(դ):

բ.- համարել >հանբրիլ, շուրմայ >շուրբրա «վայրի սամիթ»:

մ.- մորենի >մըրմինա (ճիշտ ինչպես Պոլիս՝ մորմենի):

լ.- հայելի >հիլիլա, արմանալ >լարմընիլ «ոտքը կամ ձեռքը թմրել»:

ա.- նօթի >անութա:

ու.- շոյտ, շուտ > ուշէդ:

վ.- արին >վիրէն:

Փաղաքշական ալ, իկ, ուկ մասնիկներն են ավելացրել հետևյալ բառերը.

մերկ	> միրգանգ
լական	> լանգանանգ
արտոյտ	> արդիդանգ
բոկ, բոբիկ	> բիգանգ
ծղրիդ	> ձըղըրդոգ
բու	> բէոգ
պապ	> բարբէոգ
սիմինտր	> սըմընդըրանգ
սինձ	> սնձանգ
տատրակ	> դանդըրգանգ

Ծատ ձևափոխված է աղանի բառը, որ զանազան հավելումներով ստացել է աղվընա, աղվըննա, աղվըրնազ ձևերը:

Անսովոր ձև է ստացել աստղ >ուտղ բառը և դարձել է աղստղազ, որի ինչ լինելը հայտնի չէ:

Փոքրիկ հավելումներ են ստացել խոր >խուրո և լի >ըլլանգ (որ ի լի և լիք բառերի գումարն է երևում):

Պապ բառը բուն բուք ձևի տակ ստացել է «քահանա և կնքահայր» նշանակությունները, իսկ իր բուն իմաստը պահելու համար ստացել է փաղաքշական բարբէոգ ձևը:

Օտտ այլափոխված են հետևյալ բառերը, որոնցից ոմանք անմեկնելի են ինձ համար և ոմանք էլ թերևս արարական փոխառությունն.

աղջիկ	> <i>աջգէն</i>
երդումն	> <i>ուֆոմ</i>
թրթռչուկ	> <i>թրրորվզեօզ</i>
ժայռ	> <i>շէր</i>
լկամ	> <i>լգիւնք, լիգիւնք</i>
լողքար	> <i>լղգիւրթ</i>
լուսին	> <i>լուսընլայս</i>
կրեայ	> <i>գուրյուշ</i>
ճանապարհ	> <i>ջամբունգ</i>
ուլունք	> <i>հըննէօզ, հըննիթ</i>
փսխել	> <i>դարսվիդիլ:</i>

#### ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

§241. Հանրնի բարբառի նման Սվեդիայի բարբառն էլ սիրում է հաճախ կրկնել բառամիջի բաղաձայնը՝ ոչ թե իմաստի սաստկության համար (ինչպես վարվում ենք մենք *ամսէն* «ամենայն» բառի մեջ), այլ պարզապես բաղաձայնի արտասանությունը զորացնելու համար:

Կրկնությունը կատարվում է սովորաբար երկվանկ բառերի առաջին վանկում և միայն այն դեպքում, երբ բաղաձայնը գտնվում է երկու ձայնավորի միջև:

Ամենից ավելի *զ* բաղաձայնն է, որ կրկնվում է կանոնավոր կերպով. եղած օրինակները հետևյալներն են.

ազապ	> <i>աազոտք</i>
ազոխ	> <i>աազգիխ</i>
զգել	> <i>զզգիլ</i>
եզր	> <i>իզզիրք</i>
(ի) զատ	> <i>իզզոտ</i>
լեզու	> <i>լիզզօ</i>
լիզել	> <i>լիզիլի</i>
խազել	> <i>խաազգիլ</i>
խոզան	> <i>խիզզումն</i>
հազալ	> <i>հաազգիլ</i>

հազար	> <i>հազզոտք</i>
մոզի	> <i>միզզա</i>
վազել	> <i>վաազգիլ</i>

Պրպտելով ամբողջ բառացանկը, այս կանոնին հակասող միայն մի օրինակ գտա, որ է՝ ուզել > *ուզիլ*, բայց թերևս ու ձայնավորը խանգարում է կրկնությունը: – Իսկ բզէզ > *բբզ* բառը միավանկ լինելով՝ չի մտնում մեր բառացանկի շարքը:

Ըստ այսմ՝ *զ* բաղաձայնի համար բացառությունն չկա:

§242. *ծ, ձ, ց* բաղաձայնների կրկնության համար կան հետևյալ օրինակները.

ածել	> <i>աձձիլ</i>
լծել	> <i>լըձձիլ</i>
խածանել	> <i>խաձձիլ</i>
խայծիլ	> <i>խիձձիլ</i>
ծծել	> <i>ձըձձիլ</i>
կծու	> <i>զըձձօ</i>
կծիկ	> <i>զըձձազ</i>
հացի	> <i>հացցիհա</i>
հեծան	> <i>հիձձուհ</i>
մածուն	> <i>մաձձօհ</i>
պայծառ	> <i>բիձձուռ</i>
պիծակ	> <i>բիձձիզ</i>
ցուցանել	> <i>ցըցըցիլ</i>
քացախ	> <i>քաքցիխ</i>

Բացառությունն են այս դեպքում՝

ծածուկ	> <i>ձաձէօզ</i>
ծեծել	> <i>ձիձիլ</i>
կոծիծ	> <i>զձէձ</i>
օծել	> <i>ուձիլ</i>

Նույնիսկ հոլովման ժամանակ ունենք կրկնական ձևեր, ինչպես՝ հաց > *հուց*, սեռական *հաքցը*, հոգնակի *հաքցիթ*, *հաքցէօնք* և այլն:

§243. Մյուս բաղաձայնները այսչափ կանոնավոր չեն. կրկնավորների հետ կան նաև բազմաթիվ օրինակներ, ուր կրկնությունն տեղի չի ունեցել: Օրինակ՝ *շ* բաղաձայնը ունի հետևյալ կրկնակները.

աշուն	> <i>իշշէօնք</i>
-------	------------------

մշակ > մըշշիւզ  
 բշել > բշշիւ

որոնց դիմաց կան հետևյալ ոչ կրկնակները.

գիշեր > գիշիր  
 խարշել > խիշիւ  
 կաշի > գիշա  
 կշիոք > գիշիրոք  
 մաշել > միշիւ  
 նշան > նիշուն  
 շշուկ > շշէօզ  
 պաշար > բիշուր  
 փոշի > փիշա  
 քարշել > քիշիւ

§244. Նմանապես ու բաղաձայնի համար ունենք հետևյալ կրկնակները.

առատ > ըռոռոդ  
 առու > առուօ  
 արիշ > արոռէշ  
 զոսլ > զըռոռիւ  
 թռչիլ > թըռոռիւ  
 խոսլ > խոռիւ  
 հեռի > հիռոօ  
 միռոն > միռոն  
 շոել > շոռիւ  
 որիզ > ըռոօզ (արարք.)  
 ոեհան > ըռոռիհուն  
 ուրբ > ըռոռբ  
 փոել > փոռիւ

իսկ առանց կրկնության են՝

առանց > առունց  
 առաջ > յառաջ  
 ժառանգ > ժառունգ  
 ուտենի > ուտինա  
 պառավ > բառուվ  
 պոռուկ > բոռնգ  
 վառել > վառիւ

վառեակ > վառիզ  
 քարել > քիւռիլ «զցել, նետել»

§245. Ի նկատի ունենալով այս հանգամանքը, հաջորդ տողերով դնում են մյուս կրկնակ բաղաձայնների օրինակները, առանց հիշելու բացառությունները.

ալիկ > մլլմկ  
 աղանի > աղվըննա  
 աղել > մողիլ  
 աղիք > մողմք  
 աճուռ > մջջէօռ  
 ամէ՛ն > ամմէ՛ն (աղոթքի)  
 այգի > իգգա  
 այս > ըսսօ  
 անասուն > մասսուն  
 դդում > դըդի՛օմ  
 եօթն > յութթը  
 թթու > թըդի՛օ  
 ինն > էննը  
 լի > ըլլմկ  
 լիմոն > լըմմօն  
 լսել > լըսսիլ  
 խաբել > խաբբիլ, խաբբըդիլ  
 ծալել > ծալլիլ  
 ծլիլ > ծըլլիլ  
 ծնիլ > ծըննիլ  
 կապոյտ > գաբբայթ  
 կթել > գըթթիլ  
 հալել > հալլիլ  
 հալել > հիլլիլ  
 հաչել > հիջջիլ  
 հիսել > հիսսիլ  
 հոգի > հիգգա  
 հոսելի > հիսսիլա  
 ձագար > ձազգոդ

մուրրի	> մլլմրի
մոխիր	> մմխիւէր
մտուր	> մըսսէօր
մրսի	> մըսսի
յիսուն	> յիսսուն
յղի	> աղղա
շաքար	> շմգգոտ
պսակ	> բըսսիւգ
վայելել	> վիլլի
տասն	> դուսսը
տոլի	> դիլլա
փիլոն	> փիլլիւն
փլի	> փլլի
փտիլ	> փդդիլ
քթան	> քըթթուն

Միավանկ բառերի մեջ կրկնակ բաղաձայն ունեն՝

ոռ	> վըռռ «բունոց»
ոտք	> վըդդ
ութ	> էօթթը
վեց	> վիցց

### ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

§246. Այս օրենքի մասին բավական ընդարձակ խոսել ենք Մարաղայի, Պոլսի և Զեյթունի բարբառի քննության մեջ:

Եթե ուրիշ բարբառներում կա ձայնավորների ներդաշնակության օրենքը գոնե մասամբ, այստեղ գոյություն չունի այդ: Քննելով բառացանկի ա տառը և դուրս գցելով միավանկ բառերը, ինչպես և այն բառերը, որոնք ամբողջովին բաղկացած են կամ ծանր և կամ թեթև ձայնավորներով, նմանապես հաշվի առնելով *-իլ-*ով վերջացող բայերը, մնացյալի մեջ գտնում ենք հետևյալ բառերը.

ագոսվ	> մագոուվ
ագասպ	> մագգուբ
ակումբ	> մագուն
աղքատ	> միխքուդ
աղօթել	> մողութիլ

աման	> մամուն
այգի	> իգգա
անագան	> մագոուն
անկողին	> ունգըղէն
անուն	> մնուն
աշխարհ	> միշուրք
առջև	> յառչիվ
արիշ	> նոռէշ
արճիճ	> աքէէշ
արտոյտ	> աքդէդ
արօր	> հարուր
աւելի	> մավիա
աւետարան	> մավիդմարուն

Այս բոլորը հակառակ են ձայնավորների ներդաշնակության օրենքին, ուստի և հերքում են նրա գոյությունը բարբառում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

§247. *ա* ձայնավորը շեշտի տակ դառնում է *ու*. միայն կոկորդային և կատկային (*իւ, դ, գ, կ, ք*) բաղաձայններից առաջ դառնում է *իւ*, իսկ պայթաշփական (*ժ, ճ, ջ, չ*) բաղաձայններից առաջ անփոփոխ է մնում, նախավանկում մնում է *ա* կամ մեծ մասամբ դառնում է *աւ*, իսկ *ճ, չ, ջ, ժ, հ* բաղաձայններից առաջ դառնում է *ի*: — *ե* և *է* ձայնավորները բառասկզբում թե բառամիջում ընդհանրապես դառնում է *ի*: — *ի* ձայնավորը շեշտի տակ դառնում է *է*, անշեշտ մնում է անփոփոխ, բառավերջում դառնում է *ա*. — *ո* ձայնավորը միավանկ բառերի սկզբում դառնում է *վը*, երկվանկ բառերի սկզբում և առաջին վանկի մեջ (անշեշտ) դառնում է *ի*, միավանկ և երկվանկ բառերի մեջ, շեշտի տակ՝ *իւ*, իսկ առհասարակ *վ-ից* և *դ-ից* առաջ՝ *ու*:

*ու* ձայնավորը միավանկ բառերի սկզբում դառնում է *էօ*, բառամիջում *էօ* կամ *օ*, բազմավանկ բառերի սկզբում և անշեշտ վանկում *ու*, շեշտված վանկում *էօ*, իսկ բառավերջում *օ*:

Երկբարբառներից *այ-ը*՝ շեշտի տակ դառնում է *աւ*. անշեշտ՝ *ի*. բառավերջում՝ միշտ *օ*: — *աւ-ը* դառնում է բաղաձայնից առաջ *ու*, երբեմն էլ *էօ*, *իւ*, ձայնավորից առաջ *միվ*, իսկ բառավերջում՝ *ուվ*: — *եա-ն* դառնում է *ի*, — *եւ-ը* դառնում է ձայնավորից հետո և բառավերջում *իվ*: — *իւ-ը* դառնում է

միավանկ բառերի մեջ *այ, դ*-ից առաջ՝ *է* բազմավանկ բառերի մեջ շեշտի տակ *է*, անշեշտ՝ *ի*: —*ոյ* երկբարբառը շեշտի տակ դառնում է *այ*:

Բաղաձայնները, բացի մասնավոր դեպքերից, հետևում են հետևյալ հնչյունափոխության.

Թրթոուն պայթականները (*բ, գ, դ, ձ, ջ*) դառնում են շնչեղ *բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛*: խուլ պայթականները (*պ, կ, տ, ծ, ծ*) դառնում են պարզ թրթոուն (*բ, գ, դ, ձ, ջ*) թավերը մնում են անփոփոխ: — *գ, կ, ջ* բաղաձայնները *ա* ձայնավորից առաջ դառնում են քմային. — ունգայինից հետո թրթոունները մնում են անփոփոխ: — *ր* բաղաձայնը ձգտում է դառնալ *ռ*՝ մասնավանդ *ճ*-ից առաջ:

## Բ Մ Ա Ս

### ՋԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ՀՈԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§248. Միավանկ բառերի հոգնակին կազմվում է *իր, էօնք, վա, վաք* մասնիկներով. այս ձևերը, ըստ Սվեդիայի բարբառի հնչյունական օրենքների, առաջանում են *եր, ունք, վի, վիք* նախաձևերից, որով և համապատասխանում են միջին հայերենի *եր, ունք, ուի (= վի) և վի + ք* ձևերին:

§249. Ստորև դնում են երկար մի շարք միավանկ բառերի՝ իրենց հոգնակիներով միասին.

ալ, ալք	> ալ, ալիր
ակն	> հուգ, էօգ, անգիր, անգէօնք
աղ	> հուղ, անղիր, անղէօնք
աղբ	> հուխբ՛, անխբիր, անխբէօնք
աղտ	> հուղդ, անղդիր, անղդէօնք
ամս	> ումք, անմքիր, անմքէօնք
այծ	> աձ, հձձիր, հձձէօնք
անօսր	> անսուր, անսրիր, անսուրնա
աչք	> աչք, հչվա
աստղ	> ուսղդ, ասղդիր
արջ	> ուրջ՛, ուրջիր, ուրջէօնք
ափ (ձեռքի)	> ուփ, էօյփ, անփիր, անփէօնք
բախտ	> բախտ՛, բախտիր
բակ	> բէօգ, բիօգ, բանգիր, բանգէօնք, բագդա
բան	> բիւն, բանիր, բանէօնք
բարձ	> բիւնձ՛, բանձիր, բանձէօնք
բարձր	> բիւնձր, բանձրիր, բանձրէօնք
բեռն	> բիռ, բիրիր, բիրնիր
բզէգ	> բըգ, բըգգիր, բըգգէօնք
բոյթ	> բայնք, բայնքիր
բոյն	> բայն, բըյնիր, բըյնէօնք

բու > բէօգ, բէօգիր, բէօգէօնք  
բունն > բօն, բհիր, բհէօնք  
բուրդ > բօրդ, բհդհո, բհդհէօնք  
գայլ > գայ, գհիր, գհիէօնք  
գէր > գհո, գհոիր  
գիւն > գէն, գրնիր  
գիր > գէր, գհիր, գրէօնք  
գիրկ > գէրգ, գրգիր  
գիւղ > գհդ, գհդիր, գհդէօնք, գհդանդա  
գոգ > գհգ, գհգիր, գհգէօնք  
գոլ (բոց) > գհլ, գհլիր, գհլէօնք  
գործ > գհոծ, գհոծիր  
գորտ > գհորտ, գհորտիր, գհորտէօնք  
դալ > դհլ, դհլիր, դհլէօնք  
դահ > դհոհ, դհոհիր, դհոհէօնք  
դար > դհոտ, դհոտիր, դհոտէօնք  
դունն > դհոն, դհոնիր, դհիր, դհլւք  
գոյգ > գայգ, գրգգիր գրգգէօնք «երկվորյակ»  
էշ > հշ, հշիր, հշլւք  
թաղ > թհլ, թհլիր, թաղէօնք  
թամնր > թոննր, թաննրիր  
թաս > դհու, դհուիր, դհասիր, դհաստէօնք  
թաց > թոց, թոցիր, թացիր, թացէօնք  
թել > թհլ, թհլիր, թիլէօնք  
թի > թիլէօնք, թիանդա  
թոյլ > թայլ, թուլիր  
թոռն > թոռնն, թոռնիր, թոռոննա, թոռըննա  
թուգ > թէօգ, թըգգիր, թըգգէօնք  
թութ > թէօթ, թըթիր, թըթէօնք  
թուղթ > թէօխթ, թըխթիր, թըխթէօնք  
թուշ > թօշ, թշիր, թուշիր, թօշիր, թշլւք  
թուփ > թօփ, թփիր, թօփիր, թփէօնք, թփվա, թփլւք  
թուք > թէօք, թքիր, թքէօնք, թքվա

ծամ > ծոմ, ծանիր, ծանէօնք, ծանվա, ծանլւք  
ծանգ > ծէօնգ, ծիւնգ, ծանգիր  
իղ > հդ, հդիր, հդէօնք, հդվա, հդլւք  
լակ > լիգ, լիգիր, լագիր, լագէօնք, լագվա, լագլւք  
լար > լուր, լարիր, լարէօնք  
լոյս > լայս, լուսիր, լուստէօնք  
լու > լօ, լվիր, լվէօնք, լվլւք  
խագ > խուգ, խուգգիր, խանգգիր, խանգգէօնք  
խակ > խէօգ, խանկիր, խէօգիր, խանկէօնք  
խաղ > խիղ, խուղիր, խաղէօնք  
խաչ > խաչ, խաչիր, խիչչիր, խիչչէօնք  
խելք > խիլք, խիլքիր, խիլքվա  
խև > խիվ, խիվիր, խիվէօնք, խիվլւք  
խիճ > խէջ, խջիր, խջէօնք, խջլւք  
խուլ > խտլ, խտլիր, խլիր, խտլլւք  
ծակ > ձէօգ, ձէօգիր, ձանգիր, ձէօգվա, ձագվա  
ծայր > ձար, ձարիր, ձիրիր  
ծանր > ձունդր, ձանրիր, ձանդրտէօնք  
ծառ > ձոռ, ձառիր, ձառլւք, ձառտէօնք  
ծափ (թավա) > ձուփ, ձուփիր, ձանփիր, ձանփէօնք, ձափվա  
ծիլ > ձէլ, ձէլիր, ձիլիլ, ձըլլիր, ձըլվա, ձլլլւք  
կաթն > գէթ, գէթիր, գնթնիր, գըթվա, գըթլէօնք, գըթլւք  
կոյգ > գայգ «ողկոյգ», գայգիր, գուգիր, գըգգէօնք, գըգվա, գըգլւք  
կոպ > գուք, գիրքիրք, գուքիրք  
հայս > հաս, հասսիր, հիսսիր, հաստէօնք, հիստէօնք  
հատ > հուդ, հուդիր, հանիր  
հարսն > հոռոս, հոռոսնիր, հոռոսիր  
հաց > հուց, հուցիր, հանցգիր, հանցգէօնք  
ձայն > ձան, ձհնիր, ձանիր, ձհնվա, ձհնլւք  
ձեռք > ձառք, ձառվա, ձիրվա, ձիրվէօնք  
ձի > ձէն, ձիլէօնք, ձիյանդա

ծիւն	> ձայն, ձիւնիր, ձըյնիր
ձուկն	> ձէօզ, ձգնիր, ձգիր, ձգվա
ճանճ	> ջանջ, ջնջիր, ջնջվա
մազ	> մուզ, մազգիր, մազգէօնք
մաղ	> միւղ, միւղիր, մաղիր, մաղվա
մայր	> մառ, միրիր, մարիր, միրէօնք
մանր	> մունդր, մունդոտի, մաւնդոտի, մանրիր
մատն	> մուղ, մաղիր, մաւնդիր, մաւնդէօնք, մաւնվա
մարդ	> մուռդ, մառդիտ, մառդազ
մէջք	> միշք, միշքիր, միշկվա
մուկն	> մէօզ, մըգնիր, մըգիր
յօնք	> էօնք, էօնքիր, էօնքվա, ունքվա, ունքվաւք
նէր	> նիտ, նիտիտ, նիրվաւք, նիրվըդաւք
շուն	> շօն, շըննիր, շընվաւք
ուլ	> էօլ, ուլիր
ունկն (կանթ)	> իւնգ, իւնգիր, ունգիր, ունգվա
ուս	> էօս, ուսիր, ուսվա
չափ	> չուփ, չուփիր, չափիր
պաղ	> բիւղ, բիւղիր, բաւղիր
սան (կնքահոր)	> սուն, սաւնիր
սանդ	> սունդ, սաւնդիր
սանտր	> սունդր, սաւնդրիր
տանձ	> դունձ, դաւնձիր
տէր	> դիտ, դիտիտ, դիտվա
տիկ	> դաւգ, դաւգիր
փայտ	> փաղ, փաղիր, փիղիր, փիղէօնք
փոր	> փիւր, փիւրիր
փուշ	> փէօշ, փէօշիր, փշիր
քոյր	> քայր, քայրիր, քուտիտ, քուտվաւք, քուտվըդաւք
օր	> ուր, ուրիր, ուրվաւք

§250. Օրինակներից երևում է, որ մասնիկների մեջ ամենասովորականն է *-իր*, որ և ուրիշ բարբառներում և գրականում միակ ընդունվածը դարձավ: Բոլոր բառերն էլ ստանում են այս մասնիկը, բացի չորս բառից, որոնք են՝ *թի*, *ձի*, *ձեռք* և *կոպ*: Վերջինն էլ հոգնակիում լինում է *գիրբիրք*, որ

է *\*կոպերք*, ուր *եր* մասնիկին ավելացել է գրաբարի հոգնակերտ *ք* մասնիկը, ճիշտ այնպես, ինչպես Երևանի բարբառում *տղերք*, *աղջկերք*: — Բառ կա, որ միայն *-իր* մասնիկն է ընդունում. ինչպես՝ *բոյթ*, *գէր*, *այծ* և այլն:

§251. Երբ բառը վերջանում է *n* բաղաձայնով, սրա ազդեցությամբ հոգնակիի *-իր* մասնիկն էլ դառնում է *-ին*. այսպես են՝

բեռն	> բին, բինիր, բիննին
գէր	> գին, գինին
ծառ	> ձուռ, ձառին
մանր	> մունդր, մունդոտի, մաւնդոտի
նէր	> նին, նինին
տէր	> դին, դինին
քոյր	> քայր, քուտին

Երբեմն էլ բառամիջի *n* հնչյունը ազդում է և մասնիկը դարձնում է *-իտ*, ինչպես՝

բուրդ	> բիրդ, բինդին
գորտ	> գիտդ, գիտդին
մարդ	> մուրդ, մառդին

§252. Այս մասնիկից մի քիչ պակաս գործածություն ունի *-էօնք* մասնիկը. վերոհիշյալ 115 բառերից 60-ը (որ է կեսից ավելին) ստանում է այս մասնիկը և միայն 55-ը չեն ստանում: Երրորդ և չորրորդ հերթին գալիս են *վա* և *վաւք* մասնիկները, որոնցից ամեն մեկն ունի երկու տասնյակ օրինակ:

Բացառիկ մասնիկներ են *դա* և *աւնդա*. առաջինից ունենք միայն մի օրինակ՝ (բակ > բէօզ, բազդա) և երկրորդից 3 օրինակ, որոնք են՝

գիւղ	> գիդ, գիդաւնդա
թի	> թէն, թիյաւնդա
ձի	> ձէն, ձիյաւնդա

Պարզ է, որ *դա*-ն ծագում է միջին հայերենի *-տի* մասնիկից, իսկ *-աւնդա* -ն միջին հայերենի *աւն* և *տի* մասնիկների գումարն է:

**Մարդ** բառը, ինչպես ամեն բարբառում, նույնպես և այստեղ պահում է *մարդիկ* հավաքական ձևը, որ վերածվել է *մառդազ* ձևի:

**Խիճ** > *խէջ* բառը հոգնակիում լինում է *խջվի* (ոչ թե *խջվա*), ուր վերջնահնչյունը, ինչպես կարծում են, *խիճ* բառի *ի* ձայնավորից է:

§253. Հոգնակիի կազմության մեջ գկատելի հանգամանքն այն է, որ հոգնակին կազմվում է ոչ թե բարբառի մեջ ընդունված եզակի ուղղական ձևից, այլ համապատասխան գրաբար ձևի վրայից: Այս բանը գկատելի է հետևյալ կետերում.

Այն բառերը, որոնք գրաբարում ունեն *ճ* հանգը, բարբառում կորցրել են այն, բայց հոգնակի կազմելու ժամանակ երբեմն *ճ* որից է երևան գալիս այդ հանգը, երբեմն էլ կորչվում է. կան դեպքեր էլ, երբ երկու ձևով էլ գործածվում են. օրինակ՝

բեռն	> բին, բինին, բիննին
դուռն	> դօռ, դինիր, դինիր
կաթն	> գէթ, գէթիր, գէթնիր
հարսն	> հուռս, հառսնիր, հառսիր
ձուկն	> ձէօգ, ձգնիր, ձգիր
մատն	> մուդ, մադնիր, մադիր
մուկն	> մէօգ, մըգնիր, մըգիր

§254. Երկրորդ. երբ բառի ձայնավորը բարբառում փոփոխվել և նոր ձև է ստացել, հոգնակի կազմելու ժամանակ վերստանում է նախկին ձևը: Այս երևույթն այնքան սովորական է, որ ավելորդ են համարում բոլոր օրինակները հիշատակել, և դնում են միայն մի քանի հետաքրքրական օրինակներ. ինչպես՝

ակն	> իւգ, էօգ, ագիր, ագէօնք
աղ	> իւղ, աղիր, աղէօնք
աղբ	> իւխբ, ախբիր, ախբէօնք
աղտ	> իւղդ, աղդիր, աղդէօնք
ամպ	> ումբ, ամբիր, ամբէօնք
աստղ	> ուսղդ, աստղիր
բարձ	> բինոձ, բնոձիր
հաց	> հուց, հացգիր և այլն:

§255. Երրորդ. սղման և ամփոփման օրենքները, որոնք այնպես հաստատուն են գրաբարում, հաճախ երևում են նաև այս բարբառում: Ահա մի քանի օրինակ.

բուրդ	> բօրդ, բիդին
գին	> գէն, գընիր
գիր	> գէր, գրիր, գրէօնք

լոյս	> լայս, լուսիր, լուսէօնք
մուկն	> մէօգ, մըգնիր, մըգիր և այլն:

§256. Չորրորդ. երբեմն հոգնակին այնպես է կազմված, որ բնավ չի կարող բխել եզակիից, այլ դարձյալ գրաբարից՝ բարբառի հնչյունական օրենքների համաձայն: Այսպես՝

այծ	> աձ, իձձիր
փայտ	> փադ, փիդիր
փոք	> փիւք, փիքիր
մայր	> մառ, միրիր
ձիւն	> ձայն, ձինիր
ձայն	> ձան, ձինիր
հայս	> հաս, հիսսիր
ծայր	> ձար, ձիրիր

գալլ > գ՛ալ, գիլիր և այլն բառերի մեջ հոգնակին եզակիից չի բխում. կարելի չէ բացատրել, թե իձձիր «այծեր» բառի մեջ ա-ն ինչու՞ ի դարձավ: Բացատրությունը տալիս են միայն այծեր, փայտեր, փոքեր, մայրեր, ձիւներ, ձայներ, հայսեր, ծայրեր, գայլեր ձևերը, որոնց մեջ այ, ո, ի՛ Սվեդիայի բարբառի հնչյունական օրենքների համաձայն դառնում են ի (տե՛ս §77, 58, 91):

§257. Մի քանի խոսք էլ թուրքերեն բառերի մասին: Տեսանք, որ թուրքերեն բառերը, չենթարկվելով ա>ու հնչյունափոխության օրենքին, իրենց ինքնությունը պահում են: Այս ձևով էլ մտնում են հոգնակիի մեջ. ինչպես՝

թուրքերեն		
qaz	«սագ»	> դ՛ագ, դագիր
mal	«սարանք»	> մալ, մալիր
gaz	«նավթ»	> գագ, գագիր
jam	«սպակի»	> ջամ, ջամիր
raf	«դարակ»	> ուաֆ, ուաֆիր
say	«աջ»	> սադ, սադիր

Ինչպես տեսնում ենք, այս բոլորը ստանում են -իր մասնիկը և ոչ թե վա, վաք, էօնք: Սա նշանակում է, թե Սվեդիայի բարբառի համար էլ միավանկ բառերի սովորական և ընդհանուր մասնիկը -իր ձևն է:



§258. Այն բոլոր օրինակները, որ հիշեցիք վերը, միջոց են տալիս մեզ քննելու և լուսաբանելու մի կարևոր հարց, որ վերաբերում է ոչ միայն Ավե-դիայի, այլև ուրիշ հայ բարբառների:

Հայտնի է, որ Ագուլիսի, Ջեյթունի և Հաճընի բարբառներում վերջնա-վանկի *ա*-ն դառնում է *օ*. երեք բարբառներում էլ լինում է հաց > *հօց*, բայց հոգնակիում, ինչպես և հոլովման մեջ, այս *օ*-ն չի պահպանվում, այլ նորից վերականգնվում է *ա*. այսպես՝ *Ջթ. հացիյ*, սեռ. *հացը*, Ագ. *հաց* > *հօց*, *հւ-ցար*, սեռ. *հւցի*: Թեև Ագուլիսի բարբառում կան բառեր, որոնք ունեն թե՛ *ա* և թե՛ *օ* ձևը (ինչպես՝ Ագ. *օհ* «վախ», հոգն. *օհար*, *ւհար* և այլն, տե՛ս Քննու-թիւն Ագուլիսի բարբառի, էջ 170), բայց ընդհանրապես, ի զարմանս լեզ-վաբանների, մասնաբանության (analogie) օրենքը գործադրված չէ: Ավե-դիայի բարբառը այսպես չէ և լայնորեն գործադրում է այդ օրենքը: Կան բառեր, որոնք ազատ կերպով ներկայացնում են թե՛ *ա* և թե՛ *ու* ձայնավորը. այսպես՝

- թաղ > *թիւղ*, *թիւղիր*, *թաղէօնք*
- թաս > *դիւս*, *դիւսիր*, *դիւսսիր*
- թաց > *թուց*, *թուցիր*, *թացիր*
- լակ > *լիւգ*, *լիւգիր*, *լագիր*
- խագ > *խուգ*, *խուգգիր*, *խագգիր*
- խակ > *խէօգ*, *խէօգիր*, *խագիր*
- խաղ > *խիւղ*, *խուղիր*, *խաղէօնք*
- ծակ > *ձէօգ*, *ձէօգիր*, *ձագիր*
- ծափ > *ձուփ*, *ձուփիր*, *ձափիր*
- կաթն > *գէթ*, *գէթիր*, *գէթնիր*
- կոյզ > *գայզ*, *գայզիր*, *գուզիր*
- հատ > *հուդ*, *հուդիր*, *հադիր*
- հաց > *հուց*, *հուցիր*, *հացցիր*
- մաղ > *միւղ*, *միւղիր*, *մաղիր*
- մանր > *մունդր*, *մունդրիո*, *մամդրիո*
- չափ > *չուփ*, *չուփիր*, *չափիր*
- պաղ > *բիւղ*, *բիւղիր*, *բաղիր*
- քոյր > *քայր*, *քայրիր*, *քուրիր*

Կան մինչև անգամ բառեր, որոնք միայն *ա* > *ու* ձևն ունեն, ուրիշ խոս-քով ամբողջովին ենթարկվել են մասնաբանության օրենքին. ինչպես՝

- արջ > *ուրջ*, *ուրջիր*, *ուրջէօնք*

- դալ > *դիւլ*, *դիւլիր*, *դիւլէօնք*
- դահ > *դիւհ*, *դիւհիր*, *դիւհէօնք*

§259. Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիում ստանում են *ք*, *էօնք*, *նա*, *նաք*, *նիր* մասնիկները. սրանցից *նա*-ն ծագում է միջին հայերեն *նի* ձևից, իսկ *նաք*-ը ավելացրել է նույնի վրա *ք* մասնիկն էլ:

Ահա այս կարգի բառերի ըստ կարելվույն լիակատար մի ցանկ.

- ագի > *ագն*, *ագէնք*
- աղանի > *աղվըն*, *աղվընաք*, *աղվընաք*
- այգի > *իգն*, *իգէնք*, *իգնիր*
- անալի > *ալլա*, *ալլաք*, *ալլէօնք*
- առու > *առո*, *առվընա*, *առոնք*, *առվէօնք*
- բակլայ > *բնագլօ*, *բնագլաք*, *բնագլէօնք*
- բնեկնի > *բնվգինա*, *բնվգինաք*
- բոհնչ > *փոռնչինա*, *փոռնչինաք*
- գարի > *գնրա*, *գնրաք*
- գինի > *գինա*, *գինաք*
- գիւղացի > *գիղացա*, *գիղացաք*
- գօտի > *գիւղա*, *գիւղաք*, *գիւղաստուն*, *գիւղաստունք*
- եկեղեցի > *գիղիցա*, *գիղիցաք*, *գիղիցինա*
- եղի > *իղա*, *իղաք*, *իղէօնք*, *իղընա*
- ընտանի > *ընդանօ*, *ընդանաք*
- թթու > *թըդիօ*, *թըդիէօնք*, *թըդիըվնա*
- լեզու > *լիզգօ*, *լիզվաք*, *լիզվընա*, *լիզվէօնք*, *լիզվընիր*
- լեղի > *լիղա*, *լիղվաք*, *լիղվընա*, *լիղվէօնք*, *լիղվընիր*
- խնամի > *խնամա*, *խնամաք*, *խնամինաք*, *խնամընա*
- կաշի > *գիշա*, *գիշինա*, *գիշէօնք*
- կատու > *գնդօ*, *գնդվընա*, *գնդէօնք*, *գնդվէք*
- կիրակի > *գիրնագէ*, *գիրնագնիր*, *գիրնագիք*, *գիրնագէօնք*
- հայելի > *հիլիլա*, *հիլիլաք*, *հիլիլինա*, *հիլիլէօնք*, *հիլիլինիր*

հացեմի > հացցիմա, հացցիմաք, հացցիմիմիր  
 հեռի > հիռոո, հիռոոնք, հիռվոնք  
 հոգի > հիգճնա, հիգճնաք, հիգճնոնք, հիգճնսդունք  
 հոսելի > հիսսիլա, հիսսիլաք  
 ճնի > ջիջա, ջիջաք, ջիջնոնք  
 «շերամ» մաթուզեմի > մաթսիմա, մաթսիմաք, մաթսիմիմիր  
 մատանի > մադնա, մադնաք  
 մարգարե > մարգարա, մարգարաք, մարգարնոնք  
 մաքի > մագնա, մագնաք  
 մեղու > միդո, միդվաք, միդվոնա, միդվոնաք  
 մոզի > միզգա, միզգաք, միզվաք  
 մորենի > մըրմիմա, մըրմիմաք, մըրմիմիմաք, մըրմիմիմիր, միրնոնք  
 մրտեմի > մըրդիմա, մըրդիմաք, մըրդիմաք, մըրդիմիմիր  
 > ադդա, ադդաք  
 յղի նօթի > անութա, անութաք, անութիմա, անութնոնք  
 շումրայ > շումբրա, շումբրաք  
 ոսկի > իսգնա, իսգնաք, իսգնոնք  
 ուռենի > ուռիմա, ուռիմաք, ուռիմիմաք, ուռիմիմիր  
 չուխայ > չուխո, չուխաք, չուխնոնք  
 պախրե > բախրե, բախրիք, բախրնոնք, բախրիմիր  
 ջորի > ջիրա, ջիրաք, ջիրըսդուն  
 սատանայ > սադանո, սադանաք, սադանիմիր  
 սօսի > սուսա, սուսաք  
 տարի > դարա, դարաք, դարնոնք, դարիմիր  
 տղայ > դդո, դդաք  
 տոլի «տերև» > դիլլա «խաղողի որթ», դիլլաք, դիլլնոնք, դիլլիմաք  
 փեսայ > փիսո, փիսաք, փիսնոնք, փիսիմա, փիսիմաք  
 փիճի > փիջա, փիջաք, փիջնոնք, փիջիմաք  
 փնթի > փնթա, փնթաք

փոշի > փիշա, փիշաք, փիշնոնք  
 քուզնայ > քուզնո, քուզնաք  
 քրիստոնեայ > քրիսդիմե «հայ», քրիսդիմաք, քրիսդիմիմիր, քրիսդիմիր

§260. Ահա մի քանի օրինակ էլ թուրքերենից փոխառյալ բառերի.

դ'ալա	> «կլայել»	դ'ալաք, դ'ալիմա
մահանա	> «պատրվակ»	մահանաք, մահանիմա, մահանիմաք
լախանա	> «կաղամբ»	լախանաք, լախանիմա կամ լըխանիմա, լըխանաք, լըխանիմիր
ուսդա	> «վարպետ»	ուսդաք, ուսդիմա
մէխանօ	> «գինետուն»	մէխանաք, մէխանիմա, մէխանիմաք
մուշամբա	> «մոմլաթ»	մուշամբաք, մուշամբիմա, մուշամբիմաք

Այս օրինակներն էլ ցույց են տալիս, որ ձայնավորով վերջացող բառերի հոգնակին կազմվում է գլխավորապես *ք, նա, նաք* մասնիկներով:

Դերբայներ՝ *հնազիլ*, *հնազանցում*, *հնազանցիր*, *հնազիլա*, *հնազիլիւք*:

**Գ լծորդություն**  
(Բ տիպար)

Ստորադաս. ներկա <i>գնդում</i>	Ստորադաս. անցյալ <i>գնդներ է</i>	Սահմանական կատարյալ <i>գնդօ</i>
<i>գնդումս</i>	<i>գնդներ</i>	<i>գնդուր</i>
<i>գնդնօ</i>	<i>գնդնիր</i>	<i>գնդումվ</i>
<i>գնդումնք</i>	<i>գնդներ ինք</i>	<i>գնդունք</i>

*գնդնաք*

*գնդներ իք*

*գնդցւնք*

*գնդումն*

*գնդներ ին*

*գնդցուն*

Հրամայական՝ *գնդցէ*, *գնդցիք*, *մը՛ գնդնօ*, *մը՛ գնդնաք*:

Դերբայներ՝ *գնդնիլ*, *գնդում*, *գնդցիր*, *գնդնիլա*, *գնդնիլիւք*:

**Դ լծորդություն**  
(Ա տիպար)

Ստորադաս. ներկա <i>թուղօմ</i>	Ստորադաս. անցյալ <i>թուղէր է</i>	Սահմանական կատարյալ <i>թուղա</i>
<i>թուղօս</i>	<i>թուղէր</i>	<i>թուղիր</i>
<i>թուղօ</i>	<i>թուղիր</i>	<i>իթէօղ</i>
<i>թուղօնք</i>	<i>թուղէր ինք</i>	<i>թուղունք</i>
<i>թուղւնք</i>	<i>թուղէր իք</i>	<i>թուղւնք</i>
<i>թուղօն</i>	<i>թուղէր ին</i>	<i>թուղէն</i>

Հրամայական՝ *թէօ՛ղ*, *թուղի՛ք*, *մը՛ թուղօ*, *մը՛ թուղւնք*:

Դերբայներ՝ *թուղիլ*, *թուղում*, *թուղիր*, *թուղիլա*, *թուղիլիւք*:

**Դ լծորդություն**  
(Բ տիպար)

Ստորադաս. ներկա <i>թուքնում</i>	Ստորադաս. անցյալ <i>թուքնէր է</i>	Սահմանական կատարյալ <i>թուքա</i>
<i>թուքնուս</i>	<i>թուքնէր</i>	<i>թուքիր</i>
<i>թուքնօ</i>	<i>թուքնիր</i>	<i>իթէօք</i>
<i>թուքնունք</i>	<i>թուքնէր ինք</i>	<i>թուքունք</i>
<i>թուքնւնք</i>	<i>թուքնէր իք</i>	<i>թուքւնք</i>
<i>թուքնուն</i>	<i>թուքնէր ին</i>	<i>թուքէն</i>

Հրամայական՝ *թէ՛օք*, *թուքի՛ք*, *մը՛ թուքնօ*, *մը՛ թուքնւնք*:

Դերբայներ՝ *թուքնիլ*, *թուքնիւղ*, *թուքում*, *թուքիր*, *թուքնիլա*, *թուքնիլիւք*:

Այս բայը գրաբարում պատկանում է Ա լծորդության Բ տիպարին, ինչպես և Պոլսի բարբառում: Այստեղ բռնում է Ա և Դ լծորդությունների միջին տեղը և ներկայացնում է նրանց խառնուրդը:

**Խոնարհման քննությունը**

§310. Խոնարհումը Սվեդիայի բարբառում շատ այլափոխված է. գրաբարի Ա լծորդությունը (*սիրեն*, *պագանեն*) ստացել է Բ լծորդության վեր-

չավորությունը (*սիրիս, բաբնիս*), *Բ* լծորդությունը (*խօսիս, ագանիս*) ստացել է ընդհակառակը՝ *Ա* լծորդության վերջավորությունը (*խուսէս, հաբնէս*), *Գ* լծորդությունը (*հագամ, գողանամ*) ստացել է *Դ* լծորդության վերջավորությունը (*հաագում, գողնում*), իսկ *Դ* լծորդության վերջավորությունը (*թողում*) դարձել է *օս* (*թողօս*), որ պատահաբար հիշեցնում է գրաբարի *գոս, գոս, գոյ* բայի վերջավորությունը:

Բայց թեև վերջավորությունները այսպես փոփոխված են, սակայն դա միայն հնչյունական օրենքների պատճառով է, ըստ որում գրաբարի ամբողջ աստղծը նույնն է և նոր վերջավորություններ չեն ստեղծվել:

*Ա* լծորդության երկու տիպարների ներկայի մեջ (*ես, ես, է, եմք, էք, են, անես, անես, անէ, անեսք, անէք, անեն*), եթե *ե-ն* և *է-ն* գտնվում են բառամիջում, համաձայն §§33, 37 և 38 օրենքների, դառնում են *ի*, իսկ եթե *է-ն* գտնվում է բառավերջում, ըստ §39 օրենքի, մնում է (*սիրէ, բաբնէ*):

*Բ* լծորդության երկու տիպարների ներկայի մեջ 4 դեպքում (եզակի *Ա, Բ*, հոգնակի *Ա, Գ*), համաձայն §45 օրենքի, *ի* ձայնավորը դառնում է *է*. այսպես՝ *-իմ, -իս, -իմք, -ին > -էմ, -էս, -էնք, -էն*. —եզակի *Գ* դեմքի վերջավորությունը (*ի, անի*), ըստ §51 օրենքի, դառնում է *ա*, ըստ որում ամեն վերջնահնչյուն *ի-ն* դառնում է կանոնավոր կերպով *ա*. —իսկ հոգնակի *Բ* դեմքի վերջավորությունը (*-իք, -անիք*), դառնում է *-աք, -անաք*, ըստ որում §47 օրենքի համաձայն, *ի* ձայնավորը *կ, ք* բաղաձայններից առաջ դառնում է *ա*:

*Գ* լծորդության երկու տիպարների ներկայի մեջ 4 դեպքում (եզակի *Ա, Բ*, հոգնակի *Ա, Գ*) գրաբարը ունենալով *ա* ձայնավորը, ըստ §4 օրենքի, դառնում է *ու*. —եզակի *Գ* դեմքը ունենալով *-այ* վերջավորությունը, ըստ §22 օրենքի, դառնում է *օ* (հագայ > *հաագօ*, գողանայ > *գողնօ*). — իսկ հոգնակի *Բ* դեմքի համար պետք է դատենք հետևյալ ձևով: Այս դեմքի վերջավորությունն է *այ*, որ շեշտի տակ լինելու պատճառով պիտի դառնար *ա* (ըստ §76): Բայց այս *աք-ը*, ազդվելով *Բ* լծորդության հոգնակի *Բ* դեմքից, դարձել է *աք*, ինչպես է նաև *Դ* լծորդության հոգնակի *Բ* դեմքը (*թողաք*):

*Դ* լծորդության ներկայի մեջ գրաբարը ներկայացնում է միշտ *ու*. այս ձայնավորը բառավերջում լինում է միշտ *օ* (§75), որով եզակի *Գ* դեմքը պիտի լիներ անպատճառ *օ*. ուրիշ դեպքում *ու-ն* դառնում է *էօ* կամ *օ* (§72, 73). թերևս եզակի *Գ* դեմքի ազդեցությամբ է, որ մյուս դեմքերն էլ ստացել

են *օ*, ինչպես որ հոգնակի *Բ* դեմքն էլ *Բ* և *Գ* լծորդությունների ազդեցությամբ ստացել է *-աք* վերջավորությունը:

*Ա* լծորդության կատարյալի մեջ ունենք 6 դեպքում *ե* ձայնավորը, որ ըստ §33, 35 դառնում է *ի*. —եզակի *Գ* դեմքում ունենք *ես* երկբարբառը, որ ըստ §83 դառնում է նույնպես *ի*. —եզակի *Ա* դեմքում բառավերջի *ի-ն* ըստ §51 դառնում է միշտ *ա*. —հոգնակի *Ա* դեմքում վերջնավանկի *ա-ն* դառնում է ըստ §17 *ու*. —հոգնակի *Գ* դեմքի մեջ վերջնավանկի *ի* ձայնավորը ըստ §45 դառնում է *է*. —իսկ հոգնակի *Բ* դեմքի *է* ձայնավորը մյուսների անանությամբ դարձել է *ա*:

*Ա* լծորդության *Բ* տիպարի կատարյալն էլ դրսևորվում է նույն օրենքով:

*Բ* լծորդության կատարյալը, բացի *եք- վանկից*, որ արդեն տեսանք, 4 դեպքում ունի *ա* ձայնավորը, որ դարձել է *ու*, մի տեղ բառավերջում *այ*, որ դարձել է ըստ օրինի *օ*, իսկ հոգնակի *Բ* դեմքի *աք-ը* մյուսների ազդեցությամբ է:

*Բ* լծորդության *Բ* տիպարի կատարյալը նույնն է նախորդի հետ. պակասում է միայն *եք* վանկը:

*Գ* լծորդության կատարյալը ունի 5 տեղ միջնավանկում *ա*, որ ըստ օրինի լինում է *ա* կամ *ա*, երկու տեղ վերջնավանկում *ա*, որ դառնում է *ու*, եզակի *Ա* դեմքում վերջնաձայն *ի*, որ դառնում է *ա*, հոգնակի *Գ* դեմքում վերջնավանկում *ի*, որ դառնում է *է*, եզակի *Բ* դեմքի վերջնավանկում *ե*, որ դառնում է *ի* (§33):

*Գ* լծորդության *Բ* տիպարի կատարյալը նույնն է *Բ* լծորդության կատարյալի հետ:

*Դ* լծորդության կատարյալը նույնն է *Ա* լծորդության *Բ* տիպարի կատարյալի հետ:

Ամենից ավելի հետաքրքրականը *Ա* լծորդության *Բ* տիպարի և *Դ* լծորդության կատարյալի եզակի *Գ* դեմքն է (*իրիք, իթող*), որոնք զուտ շարունակությունն են գրաբարի (*եսագ, եթող*): Այստեղ աչքի ընկնող է ոչ միայն բայական նախադասվելված *ե-ն* (շատ հին դարերի հիշատակ), որ բառասկզբում լինելով՝ դարձել է *ի* (§28), այլև առաջին բառի մեջ *ա-ն*, որ *Դ* բաղաձայնից առաջ գտնվելով՝ դարձել է *ի* (ոչ թե *ու*), և երկրորդ բառի մեջ *ու*, որի մասին տե՛ս §62:

Այժմ պիտի խոսենք անկատարի մասին, որի կազմության եղանակը բացառիկ է հայ բարբառների մեջ:

Առանձն օրինակ *Ա* լծորդության անկատարի ձևը՝ գրաբարում.



իբից	իդ'օց, դ'ըդուվ	իլուվ	ինգուվ
բնացունք	դ'ըդունք	իլունք	ինգունք
բնացւք	դ'ըդւք	իլւք	ինգւք
բնցէն	դ'ըդուն	իլուն	ինգուն

հրամայական

բրօց, սը բւնօ	դօց, սը դընօ	ի'ն, ս'ըննէ	ինգէ', ս'ի'նէ
բացի'ք, սը բւնւք	ըդդի'ք, սը դըննաք	իլի'ք, ս'ըննիք	ինգի'ք, ս'ի'նւք

դերբայներ

բննիլ	դ'ըննիլ	ըննիլ	իյնիլ
բննիւղ, բնցիւղ	դ'ըննիւղ	ըննիւղ	իյնիւղ
բնցում	դ'ըդում	իլում	ինգում
բնցիր	դ'ըդիր	իլիր	ինգիր
բննիլա	դ'ըննիլա	ըննիլա	իյնիլա
բննիլւք	դ'ըննիլւք	ըննիլւք	իյնիլւք

կատարյալ

իջօ	մդօ	դիսօ
իջուր	մդուր	դիսուր
իջուվ	մդուվ, իմէօդ	դիսուվ
իջունք	մդունք	դիսունք
իջւք	մդւք	դիսւք
իջում	մդում	դիսում

հրամայական

իջէ', ս'ի'ջնէ	մէօդ, սը մըննէ	դի'ս, սը դիսնօ
իջի'ք, ս'ի'ջնւք	մդի'ք, սը մըննաք	դիսի'ք, սը դիսնւք

դերբայներ

իշնիլ	մըննիլ	դիսնիլ
իշնիւղ	մըննիւղ	դիսնիւղ
իջում	մդում	դիսում
իջիր	մդիր	դիսիր
իշնիլա	մննիլա	դիսնիլա

իշնիլւք մննիլւք դիսնիլւք

Ջարտուղի չեմ' ածել > ամծիլ, հանել > համհիլ, աստիլ > անսդիլ:

Կատարյալ՝ համհիցա, ամծիցա, անսդօ

Հրամայական՝ համնէ', ամծէ', անսդ' (անսդէ'):

Անկանոն բայեր

1. առնել (անել) > ինիլ

- Ներկա.** – ինիմ, ինիս, ինէ, ինիք, ինից, ինից  
**Անկատար.** – ինէր է, ինէր, ինիր, ինէր ինք, ինէր իք, ինէր ին  
**Կատարյալ.** – իրա, իրիր, իրէօց, իրունք, իրւք, իրէն  
**Հրամայական.** – իրէօ', ս'ի'նէ. իրի'ք, ս'ի'նիք  
**Դերբայներ.** – ինիլ, ինիւղ, իրում, իրիր, ինիլա, ինիլւք

2. գալ > ուզիլ

- Ներկա.** – ուզում, ուզիս, ուզօ, ուզումք, ուզւք, ուզում  
**Անկատար.** – ուզէր է, ուզէր, ուզիր, ուզէր ինք, ուզէր իք, ուզէր ին  
**Կատարյալ.** – իգա, իգիր, իգիք, իգունք, իգւք, իգէն  
**Հրամայական.** – ւրէ', ս'ն'իգօ. ւրգի'ք (= ւրի'ք), ս'ն'իգւք  
**Դերբայներ.** – ուզիլ, ուզիւղ, իգում, իգիր, ուզիլա, ուզիլւք

3. դնել > դնիլ

- Ներկա.** – դնէմ, դնէս, դնա, դնէք, դնւք, դնէն  
**Անկատար.** – դնէր է, դնէր, դնիր, դնէր ինք, դնէր իք, դնէր ին  
**Կատարյալ.** – դրա, դրիր, իդէր, դրունք, դրւք, դրէն  
**Հրամայական.** – դէ'ր, ս'ըդնէ. գդրի'ք, ս'ըդնւք  
**Դերբայներ.** – դնիլ, դնիւղ, դրում, դրիր, դնիլա, դնիլւք

4. երթալ > ուղղիլ

- Ներկա.** – ուղղում, ուղղիս, ուղղօ, ուղղումք, ուղղւք, ուղղում  
**Անկատար.** – ուղղէր է, ուղղէր, ուղղիր, ուղղէր ինք, ուղղէր իք, ուղղէր ին  
**Կատարյալ.** – գնացա, գնացիր, գնացից, գնացունք, գնացւք, գնացէն  
**Հրամայական.** – գնձ, ս'ն'ուղղօ. գնացի'ք, ս'ն'ուղղւք



Գերբայաներ. – ուողի՛ղ, ուողիւղ, գ՛ւնցիր, գ՛ւնցում, ուողիլա, ուողիլւնք

5. լալ > ուլի

Ներկա. – ուլում, ուլուս, ուլօ, ուլունք, ուլւնք, ուլուն  
Անկատար. – ուլեր է, ուլեր, ուլիր, ուլեր ինք, ուլեր իք, ուլեր ին  
Կատարյալ. – լացա, լնցիր, իլուց, լնցումք, լնցւնք, լնցեմ  
Հրամայական. – լնց մ'ն'ւլօ. լնցի՛ք, մ'ն'ւլւնք  
Գերբայաներ. – ուլիլ, լնցիւղ=ուլիւղ, լնցում, լնցիր, ուլիլա, ուլիլւնք

6. լինիլ > ըննիլ

Ներկա. – ըննում, ըննուս, ըննօ, ըննունք, ըննւնք, ըննուն  
Անկատար. – ըննէր է, ըննէր, ըննիր, ըննէր ինք, ըննէր իք, ըննէր ին  
Կատարյալ. – ինչօ, իղուր, իղուվ, իղունք, իղւնք, իղուն  
Հրամայական. – իղէ՛, մ'ըննօ. իղի՛ք, մ'ըննւնք  
Գերբայաներ. – ըննիլ, իղիւղ = ըննիւղ, իղում, իղիր, ըննիլա, ըննիլւնք

7. ուտել > ուղիլ

Ներկա. – ուղիմ, ուղիս, ուղէ, ուղինք, ուղիք, ուղին  
Անկատար. – ուղէր է, ուղէր, ուղիր, ուղէր ինք, ուղէր իք, ուղէր ին  
Կատարյալ. – գիրօ, գիրուր, գիրուվ, գիրունք, գիրւնք, գիրուն  
Հրամայական. – գիր՛, մ'ո՛ղէ. գիրի՛ք, մ'ո՛ղիք  
Գերբայաներ. – ուղիլ, ուղիւղ, գիրում, գիրիր, ուղիլա, ուղիլւնք

8. տալ > դվիլ

Ներկա. – ուղօմ, ուղօս, ուղօ, ուղօնք, ուղւնք, ուղօն  
Անկատար. – ուղէր է, ուղէր, ուղիր, ուղէր ինք, ուղէր իք, ուղէր ին  
Կատարյալ. – դվա, դվիր, իղէօր, դվունք, դվւնք, դվէմ  
Հրամայական. – դէօր, մ'ո՛ղ. դվի՛ք, մ'ո՛ղւնք  
Գերբայաներ. – դվիլ, դվիւղ, դվում, դվիր, դվիլա, դվիլւնք

9. տանիլ > դանիլ

Ներկա. – դանւմ, դանւս, դանա, դանւնք, դանւնք, դանւն  
Անկատար. – դանէր է, դանէր, դանիր, դանէր ինք, դանէր իք, դանէր ին  
Կատարյալ. – դարա, դարիր, իղուր, դարունք, դարւնք, դարէմ

Հրամայական. – դար, մ'ը՛ դանէ. դարի՛ք, մ'ը՛ դանաք

Գերբայաներ. – դանիլ, դանիւղ, դարում, դարիր, դանիլա, դանիլւնք

Պակասավոր բայեր

1. եմ > իմ

Ներկա. – իմ, իս, է, ինք, իք, իմ  
Անկատար. – էր է, էր, իր, էր ինք, էր իք, էր ին  
Մնացյալը լրանում է լինիլ > ըննիլ բայից:

2. կամ > գում

Ներկա. – գում, գուս, գօ, գունք, գւնք, գուն  
Անկատար. – գէր է, գէր, գառ (գիր), գէր ինք, գէր իք, գէր ին  
Մնացյալը լրանում է դ՛ըննըվիլ < գտնուիլ բայից:

3. ունիմ > գունւմ

Ներկա. – գունւմ, գունւս, գունա, գունւնք, գունւնք, գունւն  
Անկատար. – գունէր է, գունէր, գունիր, գունէր ինք, գունէր իք, գունէր ին  
Կատարյալ. – ունցօ, ունցուր, ունցուվ, ունցունք, ունցւնք, ունցուն  
Ստորադաս. – ունընէր ի, ունընէր, ունընիր, ունընէր ինք, ունընէր իք,  
անցյալ ունընէր ին

(Բիթիաս գյուղում այս բայի կատարյալը լինում է՝ ունէնցօ, ունէնցուր, ունէնցուվ, ունէնցունք, ունէնցւնք, ունէնցուն):

Հրամայական. – ունցէ՛, մ'ունընօ. ունցի՛ք, մ'ունընւնք

Գերբայաներ. – ունընիլ, ունցում, ունցիր, ունընիլա, ունընիլւնք

4. գիտեմ > գիղիմ

Ներկա. – գիղիմ, գիղիս, գիղէ, գիղինք, գիղիք, գիղին  
Անկատար. – գիղէր է, գիղէր, գիղիր, գիղէր ինք, գիղէր իք, գիղէր ին  
Մնացյալը լրանում է գիտենալ > գիղանիլ բայից:

Կատարյալ. – գիղւնցօ, գիղւնցուր, գիղւնցուվ, գիղւնցունք, գիղւնցւնք,  
գիղւնցուն

Հրամայական. – գիղւնցէ՛, մը՛ գիղւնցօ. գիղւնցի՛ք, մը՛ գիղւնցւնք

Գերբայաներ. – գիղւնցիլ, գիղւնցիւղ, գիղւնցում, գիղւնցիր, գիղւնցիլա,  
գիղւնցիլւնք

## Զարտուղի, անկանոն և պակասավոր բայերի խոնարհման քննությունը

§312. Թողնելով այս բայերի սովորական վերջավորությունները, որ արդեն տեսանք չորս լծորդությունների կանոնավոր խոնարհման մեջ, այժմ քննենք մնացյալ կետերը:

Բերել բայի կատարյալը գրաբարի վրայից է. առաջին չորս ձևերը՝ *բիրա, բիրիր, իբիր, բիրունք*, ներկայացնում են գրաբար *բերի, բերեր, եբեր, բերաք* ձևերը. եթե *բիրիր*-ը լիներ աշխարհաբար *բերիր* ձևից, պիտի տար *\*բիրեր*, որ չկա. եզակի Գ դեմքի մեջ ունենք գրաբարի *ե* նախահավելվածը. հոգնակի Ա դեմքի *բիրունք* ձևը, եթե աշխարհաբար *բերինք* ձևից լիներ, պիտի տար *\*բիրենք*, որ չկա. այն ներկայացնում է գրաբար *բերաք* ձևը, որի մեջ ավելացել է նոր լեզվի մուծած ունգայինը: Այս երևույթները միանգամ ընդմիջտ կրկնվում են մյուս զարտուղի բայերում:

Ասել բայն իր *ացա, ացիր, ացունք* և այլն ձևերով այնքան տարօրինակ է, որ պիտի կարծեինք, թե մի նորածն *\*ացել* բայի հետ գործ ունենք, եթե չլինեին միաժամանակ նրա շարունակության մեջ *ացուց, ացո* և այլն ձևերը: Առաջին ձևը (*ացա*) ներկայացնում է գրաբար *ասացի* ձևը. նախ իբր եռավանկ՝ կրճատվել է միջին *ա* ձայնավորը և դարձել է *\*ասցի*, որի վերջնահնչյուն *ի* ձայնավորը, ըստ օրինի, դարձել է *ա* (§51) և ապա, իբրև շատ գործածական բառ՝ կորցրել է *ս* բաղաձայնը, որ հարակից *ց*-ին մոտիկ հնչում ուներ: Նմանապես գրաբար *ասացեր* տվել է *\*ասցեր, \*ասցիր, ացիր*, ուր *ի* ձայնավորը ներկայացուցիչն է գրաբար *ե*-ի. եթե աշխարհաբար *ասացիր* ձևից լիներ՝ պիտի տար *ացեր*: Նմանապես *ացուց* գրաբար *ասաց* ձևից է՝ *ա>ու* սովորական հնչյունափոխությամբ: — *ըսա, ասա* ձևերը չեն մտել բարբառի մեջ:

Առնել բայի մեջ *առա, առիր* շարունակությունն են գրաբար *առի, առեր* ձևերի. *առի*-ն դառնում է *առա*, ոչ թե աշխարհաբար *առայ* ձևից, որ պիտի տար *\*առո*, այլ գրաբար *առի* ձևից, ըստ որում վերջնահնչյուն *ի*-ն անխախտ օրենքով դառնում է *ա*: Սակայն եզակի Գ դեմքի մեջ պահպանված չէ գրաբար *էառ* ձևը, այլ գալիս է աշխարհաբար *առա* ձևից, որ ըստ օրինի դարձել է *առու*: — Զարմանալի է հրամայական *առ>օռ* իր անսովոր հնչյունափոխությամբ, որ ցույց է տալիս, թե միավանկ բառերի մեջ *ա* ն դառնում է *օ*՝ *ռ*-ից առաջ: Բայց այս ապացուցելու համար ուրիշ ոչ մի օրինակ չկա:

Բանալ բայի մեջ առաջին չորս ձևերը ուղղակի շարունակությունն են գրաբար *բացի, բացեր, եբաց, բացաք* ձևերի. *իբից* ձևը գործածում է գրաբար *ե* նախահավելվածը և ներկայացնում է *ա>ու* սովորական հնչյունափոխությունը: Այսպես նաև հրամայականը: Մյուս բայերը (*դ՛րոօ, իլօ, ինգօ*) գրաբարի ձևերից չեն, այլ աշխարհաբար *գտայ, ելայ, ընկայ* ձևերից, որոնց վերջնահնչյուն *այ*-ը տալիս է *օ*. Եթե լիներ գրաբար *գտի, ելի, պիտի* ունենայինք *\*դ՛րոա, \*իլա*, որոնք չկան: Միայն եզակի Գ դեմքը (*իդ՛օց*) դեռ պահում է նախահավելվածը (*եգիտ*), բայց նրա հետ ունի նաև աշխարհաբար *դ՛րոու*, որ է *գտա*: — Զարմանալի է նաև հրամայական *դ՛օց* ձևը, որի *օ* ձայնավորը և *ց* բաղաձայնը ինչ համար անմեկնելի են:

Իջանել, մտանել և տեսանել բայերի ձևերը աշխարհաբարից են (*իջայ, մտայ, տեսայ*) և ոչ թե գրաբարից (*իջի, մտի, տեսի*), որոնք պիտի տային *\*իջն, \*մդա, \*դիսա*. այսպես և մյուս դեմքերը. միայն *իմէօդ* ձևը (< գրաբար *եմուտ*) գործածական է Հաջի-Հաբիրի գյուղում, *մդու* ձևի փոխարեն կամ նրա հետ: Սրա համապատասխան *\*իդիս* (գրաբար *եսես*) ձևը չկա, այլ միայն *դիսու* < տեսա:

Հրամայականի մեջ գրաբարից է *մէօդ <մնտ*, բայց աշխարհաբար է *իջէ՛ <իջի* (գրաբար *է՛ջ*), իսկ *դի՛ս* (<տես՛ս) ուրիշ բարբառներում էլ կա:

Հրամայական *ճէ՛տի՛* և *նսդէ՛* ձևերից առաջինը գրաբար է (*ճի՛ստ*), երկրորդը աշխարհաբար (*ճստի՛ր, ճստի՛ր*): Գրաբար հրամայական *հնն, մծ* ձևերը չեն պահպանվել:

§313. Անկանոն բայերից առնել *>իմիլ, իմիս* և այլն ներկայացնում են միջին հայերեն *այնել, այնեմ* ձևերը, ըստ որում բազմավանկ բառերի անշեշտ *այ*-ը դառնում է *ի* (§77): Ըստ այսմ, կատարյալ *իրա* գալիս է միջին հայերեն *այրի = ըրի* ձևից. անհայտ է *իրէօդ* ձևը՝ իբր *արեց*:

Ծատ հետաքրքրական են *գալ, լալ, տալ*, որոնք միավանկից երկվանկ անցնելով՝ դարձել են *ուգիլ, ուլիլ, դվիլ*, իսկ ներկայի մեջ երեքն էլ հավասարապես *ու* նախահնչյունով՝ *ուգում, ուլում, ուղում* (*գամ, լամ, տամ*): Որտեղի՞ց է այս *ու* նախահնչյունը:

Հայտնի է, որ *գամ, լամ, տամ* միավանկ բայերը շատ բարբառներում բացառություն կազմելով՝ կը մասնիկի փոխարեն ստանան են *կու*, որ կա նաև Սվեդիայի բարբառում (*կու գամ, կու լամ, կու տամ*): Ահա այս *ու* ձայնավորն է, որ բաժանվելով վերի ձևերից՝ կցվել է արմատին, իբր թե այդ բայերը լինեին *կ՛ուգամ, կ՛ուլամ, կ՛ուտամ*:

Շատ կանոնավոր է խոնարհման մնացած մասը. *ուգնում, ուգնու, ուգօ, ուլում, ուլուս, ուլօ* և այլն, որոնց մեջ *ու-*ն ներկայացնում է *ա-*ն, իսկ *օ-*ն ներկայացնում է բառավերջի *այ-*ը:

Կատարյալ *իգա-*ն ծագում է գրաբար *եկի* ձևից՝ վերջնահնչյուն *ի-*ն դառնալով *ա* (և ոչ թե *եկայ* ձևից, որ պիտի տար *իգօ*): Հետաքրքրական է *իգիք*՝ եզակի *Գ* դեմքը, փոխանակ *եկն*:

Տարօրինակ է հրամայական *արգիք* ձևը, որ, անշուշտ, *արիք* և *եկէք* ձևերի խառնուրդից է ձևացած:

*Դնել* բայի կատարյալ *դրա* ձևը ծագում է աշխարհաբար *դրի* ձևից (և ոչ թե գրաբար *եդի*, որ պիտի տար \**իդն*), իսկ եզակի *Գ* դեմք *իդէր* ծագում է միջին հայերեն *եդիր* ձևից:

Ջարմանալի է *երթալ* բայի փոխարեն *ուռդիլ*, ներկա *ուռդում* և այլն. նախահնչյուն *ու-*ն անսովոր է՝ փոխանակ *ե*, ուստի կարծում եմ, որ այստեղ կա գալ *>ուգիլ* բայի ազդեցությունը: Արդարև, «երթալ—գալ և կերթամ —կուգամ» այնքան հաճախ են միասին գործածվում, որ մեկի ազդեցությունը մյուսի վրա անսպասելի չէր:

Լալ բայի կատարյալ *իլուց* ճիշտ գրաբար *ելաց* ձևի շարունակությունն է՝ իր *ե* նախահավելվածով միասին:

Լինիմ *>ըննիլ* բայի ներկան *ըննում* ոչ թե գրաբար և աշխարհաբար *լինիմ*, այլ միջին հայերեն *լինամ >ըլնում* ձևից է:

Նկատելի է, որ ուտել բայի կատարյալի մեջ պահպանված չէ գրաբար *եկեր* ձևը, այլ աշխարհաբար կերալ *>գիրուվ*:

Տալ բայի կատարյալի մեջ (*դվա*) պահպանված է աշխարհաբար *տուի* և ոչ թե գրաբար *ետու*. բայց եզակի *Գ* դեմքն է *իդէօր*, որ է միջին հայերեն *ետուր* (= գրաբար *ետ*):

Սրա մեջ տանիլ բայի կատարյալ եզակի *Գ* դեմքը բխում է ոչ թե աշխարհաբար *տարալ* ձևից, այլ միջին հայերեն *ետար*:

§314. Պակասավոր բայերի մեջ կարևոր է նկատել կամ բայի անկատար եզակի *Գ* դեմքը, որ ունի երկու ձև՝ *գառ, գիր*. առաջինը ճիշտ գրաբար *կայր* ձևն է, որ, ըստ օրինի, պիտի տար *գար*, բայց վերջնահնչյունի ասատկացումով դարձել է *գառ*. զուտ բարբառային ձևն է *գիր*:

Ունիմ բայի մեջ շատ հետաքրքրական է *գունէմ* ձևը՝ կը նախամասնիկով: Արդարև, հայ լեզվի մեջ երեք բայ միայն կա, որոնք զուրկ են մնացել այս նախամասնիկից (*գիտեմ, կարեմ, ունիմ*): Սրանցից

*կարեմ* Նոր Նախիջևանի բարբառում դարձել է *կը կանամ*, իսկ այս բարբառում էլ *ունիմ* բայն է, որ ստացել է այս նախամասնիկը: — Կատարյալ *ունցօ* և այլն ձևերի մեջ *ե-*ն սղված է. այնպես որ *ունցօ* ներկայացնում է ճիշտ աշխարհաբար *ունցայ* ձևը (*այ >օ* ըստ §22-ի):

Ըստ այսմ՝ զարտուղի, անկանոն և պակասավոր բայերի քննությունը հայտնի կերպով ցույց է տալիս, որ Սվեդիայի բարբառը ձևացել է գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար ձևերի խառնուրդից:

## Բարդ ժամանակներ

### Սահմանական ներկա

§315. Կազմվում է ստորադասական ներկայի վրա ավելացնելով *զը* (*<կը*) նախամասնիկը. ձայնավորով սկսվող բառերի մոտ այս *զը-*ն սղվելով՝ դառնում է *զ*: Իսկ այն երևույթը, որ ուրիշ բարբառում կա, որով միավանկ *գամ, լամ, տամ* բայերն ստանում են *կու* մասնիկը, այստեղ ինքնին վերացել է, ըստ որում այդ բայերը ստացել են *ուգիլ, ուլիլ, դվիլ* ձևերը:

Ահա 4 լծորդությունների բայերի սահմանական ներկայի պատկերը.

<i>զը սիրիմ</i>	<i>զը խուսէմ</i>	<i>զը հնազում</i>
<i>զը սիրիս</i>	<i>զը խուսէս</i>	<i>զը հնազոս</i>
<i>զը սիրէ</i>	<i>զը խուսա</i>	<i>զը հնազօ</i>
<i>զը սիրիմք</i>	<i>զը խուսէմք</i>	<i>զը հնազումք</i>
<i>զը սիրիք</i>	<i>զը խուսւք</i>	<i>զը հնազւք</i>
<i>զը սիրին</i>	<i>զը խուսեն</i>	<i>զը հնազումն</i>

<i>զը թուղօմ</i>	<i>զը բարնիմ</i>	<i>զուդիմ</i>
<i>զը թուղօս</i>	<i>զը բարնիս</i>	<i>զուդիս</i>
<i>զը թուղօ</i>	<i>զը բարնէ</i>	<i>զուդէ</i>
<i>զը թուղօմք</i>	<i>զը բարնիմք</i>	<i>զուդիմք</i>
<i>զը թուղւք</i>	<i>զը բարնիք</i>	<i>զուդիք</i>
<i>զը թուղօն</i>	<i>զը բարնին</i>	<i>զուդին</i>

Դիտողություն. — Երբ բառն սկսվում է *ա* ձայնավորով, *զը* նախամասնիկը ոչ միայն կորցնում է ը ձայնավորը, այլև ինքն էլ վերածվում է *գ-*ի, ինչպես՝ առնել — *գնումիմ*, ասել — *գնւիմ* և այլն:

## Սահմանական ներկայի շարունակականը

§316. Կազմվում է *զը* (*կը*) մասնիկի փոխարեն դնելով *գու* (*կու*). բայց այս *գու*-ն ձայնավորով սկսվող բայերի մոտ չի սղվում, այլ մնում է միշտ *գու*:

Ջարմանալի է, արդարև, այս մասնիկի գործածությունը: Հայաստանից դուրս, Փոքր Ասիայի ամեն կողմում հայ բարբառները լեզվի մեջ մտցնելով շարունակականի դրությունը, ամեն տեղ էլ մի նոր մասնիկ են հնարել այս պաշտոնի համար ( *կոր*, *հայէ*, *ա*, *նը*, *տար*, *էր*, *ուհի*): Իսկ Սվեդիայի բարբառը, փոխանակ մի նոր մասնիկ հնարելու, պաշտոնի բաշխում է կատարել *կը*, *կու* մասնիկների միջև, առաջինին պահելով պարզ ներկան, մյուսին տալով շարունակականի դերը: Եվ որովհետև ձայնավորի մոտ երկուսն էլ պիտի նույնանային, այստեղ էլ հնարագետ մի միջոց է հնարել՝ սղումը վերացնելով:

Ահա մի քանի օրինակ շարունակական ներկայից.

<i>գու սիրիմ</i>	<i>գու բարձիմ</i>	<i>գու հազգում</i>
<i>գու սիրիս</i>	<i>գու բարձիս</i>	<i>գու հազգուս</i>
<i>գու սիրէ</i>	<i>գու բարձնէ</i>	<i>գու հազգօ</i>
<i>գու սիրինք</i>	<i>գու բարձինք</i>	<i>գու հազգունք</i>
<i>գու սիրիք</i>	<i>գու բարձիք</i>	<i>գու հազգաք</i>
<i>գու սիրին</i>	<i>գու բարձին</i>	<i>գու հազգուն</i>
<i>գու առնիմ</i>	<i>գու ուղիմ</i>	<i>գու ուլում</i>
<i>գու առնիս</i>	<i>գու ուղիս</i>	<i>գու ուլուս</i>
<i>գու առնէ</i>	<i>գու ուղէ</i>	<i>գու ուլօ</i>
<i>գու առնինք</i>	<i>գու ուղինք</i>	<i>գու ուլունք</i>
<i>գու առնիք</i>	<i>գու ուղիք</i>	<i>գու ուլաք</i>
<i>գու առնին</i>	<i>գու ուղին</i>	<i>գու ուլուն</i>

Տարբերությունը նույնն է մյուս բայերի մեջ էլ. ինչպես՝ *գուղօմ* «տալիս եմ», *գու ուղօմ* «տալիս եմ (կոր)», *գուղիւմ* «գալիս եմ», *գու ուղիւմ* «գալիս եմ (կոր)» և այլն:

*Դիտողություն.* — *Գու առնիմ...* ներկայածնը հատուկ է Յողուն-օլուկ գյուղին, իսկ Հաջի-Հաբիբի գյուղը, որի բարբառին ենք հետևել այստեղ, ունի՝

<i>գօնիմ</i>	<i>գօնինք</i>
<i>գօնիս</i>	<i>գօնիք</i>
<i>գօննէ</i>	<i>գօնինն</i>

Այս օ հնչյունը առաջանում է համաձայն այն հնչյունական օրենքի, որով *ա* ձայնավորը միանալով *ու* ձայնավորի հետ, դառնում է *օ*: Սրա համեմատ ունենք *գօղում* «կաղամ», *գօխջիմ* «կաղաչեմ», *գօնձիմ* «կարածեմ», *գօսնէմ* «կանցնիմ», *գօղութիմ* «կաղօթեմ» և այլն շարունակական ձևերը: Միայն անել բայը տալիս է *գունիմ*: Իսկ սովորական կամ պարզ ներկայի մեջ ձայնավորի սղմամբ ունենք՝

1. *գննիում*, *գննիջիմ*, *գննիութիմ* և այլն, որոնց մեջ *ա*-ն դարձել է *ն* և այդ պատճառով էլ *գ*-ն դարձել է *գ*՝
2. *գառնիմ*, *գառնիմ* (*ռ*-ի պատճառով *ա*-ն մնացել է անփոփոխ և դրա համար *գ*-ն չի քմայնանում):
3. *գասնէմ* «կանցնիմ», *գիճիմ* «կանեմ»:

## Սահմանական անկատար

§317. Սահմանականի անկատարը կազմվում է ստորադասական անցյալի վրա ավելացնելով *զը* (< կը) մասնիկը, որ ձայնավորից առաջ սղվում է, իսկ *ա* ձայնավորից առաջ ոչ միայն սղվում է, այլև ինքն էլ դառնում է *զ*՝

Որովհետև ստորադասական անցյալը բոլոր լծորդությունների մեջ էլ միևնույն ձևն է ստացած, ուստի բոլոր լծորդություններից էլ օրինակ չենք բերում և բավական ենք համարում միայն մի քանիսը.

<i>զը սիրէր է</i>	<i>զուղէր է</i>	<i>զառներ է</i>
<i>զը սիրէր</i>	<i>զուղէր</i>	<i>զառներ</i>
<i>զը սիրիիր</i>	<i>զուղիիր</i>	<i>զառնիր</i>
<i>զը սիրէր ինք</i>	<i>զուղէր ինք</i>	<i>զառներ ինք</i>
<i>զը սիրէր իք</i>	<i>զուղէր իք</i>	<i>զառներ իք</i>
<i>զը սիրէր ին</i>	<i>զուղէր ին</i>	<i>զառներ ին</i>

## Սահմանական անկատարի շարունակականը

§318. Ըիշտ նախորդի ռճով կազմվում է պարզ անկատարի *զը* (<կը) մասնիկը դարձնելով *գու*, որ ձայնավորի առաջ մնում է նույնպես առանց սղման. օրինակ՝

<i>գու սիրէր է</i>	<i>գու ուղէր է</i>	<i>գօռներ է</i>
<i>գու սիրէր</i>	<i>գու ուղէր</i>	<i>գօռներ</i>
<i>գու սիրիիր</i>	<i>գու ուղիիր</i>	<i>գօռնիր</i>
<i>գու սիրէր ինք</i>	<i>գու ուղէր ինք</i>	<i>գօռներ ինք</i>
<i>գու սիրէր իք</i>	<i>գու ուղէր իք</i>	<i>գօռներ իք</i>
<i>գու սիրէր ին</i>	<i>գու ուղէր ին</i>	<i>գօռներ ին</i>

*Դիտողություն.* — ա ձայնավորով սկսվող բայերի հնչյունափոխության համար տե՛ս սահմանական ներկայի շարունակականին վերաբերող հատվածի վերջում եղած դիտողությունը (§316):

### Պարզ ապառնի

§319. Կազմվում է ստորադասական ներկայի վրա դնելով բըր մասնիկը, որ ուրիշ բարբառների պիտի ձևին է համապատասխանում և ծագում է պիտի որ, պիտոր ձևից կրճատմամբ: Դրվում է միայն բայից առաջ (հետադաս չէ Պոլսի բարբառի մեան). մի քանի բայ իրար հաջորդելու դեպքում կարող է դրվել մի անգամ և նույնիսկ բայից բաժանվել մի որևէ բառով. բըր ուողում ի դոս, առնիս, բիրիս «պիտի երթամ տուն, պիտի առնեմ, պիտի բերեմ»:

<i>բըր սիրիս</i>	<i>բըր ուղիս</i>	<i>բըր առնիս</i>
<i>բըր սիրիս</i>	<i>բըր ուղիս</i>	<i>բըր առնիս</i>
<i>բըր սիրէ</i>	<i>բըր ուղէ</i>	<i>բըր առնէ</i>
<i>բըր սիրիճք</i>	<i>բըր ուղիճք</i>	<i>բըր առնիճք</i>
<i>բըր սիրիք</i>	<i>բըր ուղիք</i>	<i>բըր առնիք</i>
<i>բըր սիրիճ</i>	<i>բըր ուղիճ</i>	<i>բըր առնիճ</i>

### Անցյալ ապառնի

§320. Կազմվում է ստորադասական անցյալի վրա դնելով նույն բըր (< պիտոր) մասնիկը, որ նույնպես նախադաս է միայն և բայից հետո չի դրվում (ինչպես Պոլսի բարբառում է). օրինակ՝ բըր խուսէր է «պիտի խոսեի» (բայց ոչ բնավ խուսէր է բըր):

<i>բըր սիրէր է</i>	<i>բըր ուղէր է</i>	<i>բըր առնէր է</i>
<i>բըր սիրէր</i>	<i>բըր ուղէր</i>	<i>բըր առնէր</i>
<i>բըր սիրիր</i>	<i>բըր ուղիր</i>	<i>բըր առնիր</i>
<i>բըր սիրէր իճք</i>	<i>բըր ուղէր իճք</i>	<i>բըր առնէր իճք</i>
<i>բըր սիրէր իք</i>	<i>բըր ուղէր իք</i>	<i>բըր առնէր իք</i>
<i>բըր սիրէր իճ</i>	<i>բըր ուղէր իճ</i>	<i>բըր առնէր իճ</i>

Ուրիշ օրինակներ՝ բըր հաճաղէր է «պիտի հազայի», բըր թուղէր է «պիտի թողնեի»:

### Հրամայական Բ ձև

§321. Հրամայականի Ա ձևը գործածական է միայն *Բ* դեմքի համար (եզակի և հոգնակի), իսկ մյուս դեմքերի և ամբողջ անցյալի համար գործա-

ծական է այս երկրորդ ձևը, որ կազմվում է ստորադասական ներկայի և անցյալի վրա դնելով թըղ (< թող) մասնիկը: (Ձայնավորով և թրթռում բաղաձայնով սկսվող բայերի մոտ թըղ ձևով, իսկ խուլ և շնչեղ բաղաձայնների մոտ թըխ ձևով): Օտտ հետաքրքրական է և այն, որ այս թըղ մասնիկը թեև ծագմամբ համապատասխանում է թէժի բային, բայց իբրև մասնիկ գործածվելով՝ նախ իր ձայնավորը սղել է (*ը*) և երկրորդ՝ նախահնչյուն *թ*-ն մեղմելով դարձրել է *ղ*: (Ավելի ուշ պիտի տեսնենք նաև թէ-ն դարձած իբր մասնիկ *ղը*):

#### ներկա

<i>ղըխ բիրիս</i>	<i>ղըղ ասիս</i>
<i>ղըխ բիրիս</i>	<i>ղըղ ասիս</i>
<i>ղըխ բիրէ</i>	<i>ղըղ ասէ</i>
<i>ղըխ բիրիճք</i>	<i>ղըղ ասիճք</i>
<i>ղըխ բիրիք</i>	<i>ղըղ ասիք</i>
<i>ղըխ բիրիճ</i>	<i>ղըղ ասիճ</i>

#### անցյալ

<i>ղըխ բիրէր է</i>	<i>ղըղ ասէր է</i>
<i>ղըխ բիրէր</i>	<i>ղըղ ասէր</i>
<i>ղըխ բիրիր</i>	<i>ղըղ ասիր</i>
<i>ղըխ բիրէր իճք</i>	<i>ղըղ ասէր իճք</i>
<i>ղըխ բիրէր իք</i>	<i>ղըղ ասէր իք</i>
<i>ղըխ բիրէր իճ</i>	<i>ղըղ ասէր իճ</i>

Այս *ղըղ* մասնիկը (բըր «պիտի» մասնիկի մեան) չի կարող լինել հետադաս, այլ միայն նախադաս է բային, կարող է, սակայն, մի քանի բայեր իրար հաջորդելու դեպքում, միայն մի անգամ դրվել և մինչև իսկ բայից որևէ բառով բաժանվել. օրինակ՝

<i>ղըղ ուողո՞ առնէ ուգո՞</i>	«թող գնա առնի գա»:
<i>էճք զըղ ուողիր առնիր բիրիր</i>	«ինքը թող գնար առներ բերեր»:
<i>ղըղ ուողո՞ ի դոս, առնէ բիրէ</i>	«թող գնա տուն, առնի բերի»:
<i>ղըղ ի դոս ուողո՞</i>	«թող տուն գնա»:
<i>ղըղ իրիղ՝ ասիր</i>	«թող երեկ ասեր»:

## Բաղադրյալ ժամանակներ

§325. Ժիշտ Պոլսի բարբառի նման՝ Սվեդիայի բարբառն էլ ընդունակ է կազմելու բազմաթիվ բաղադրյալ ժամանակներ, որոնք առաջանում են անցյալ և ապառնի դերբայների և էական բայի հարադրությամբ: Այս ձևերը կարելի է ամփոփել հետևյալ աղյուսակի մեջ:

### Սահմանական

Հարակատար.	— սիրում իմ...
Հարակատար անորոշ.	— սիրիր իմ...
Գերակատար	— սիրում էր է...
Գերակատար անորոշ.	— սիրիր էր է...
Կրկին կատարյալ.	— սիրում իղօ...
Հարակատար ապառնի.	— սիրում բըր ընճում...
Հարակատար ապառնի անցյալ.	— սիրում իղում բըր ընճում...
Գերակատար ապառնի.	— սիրում բըր ընճեր է...
Գերակատար ապառնի անցյալ.	— սիրում իղում բըր ընճեր է...
Պարտավորական ներկա.	— սիրիլա իմ...
Պարտավորական անկատար.	— սիրիլա էր է...
Պարտավորական կատարյալ.	— սիրիլա իղօ...
Պարտավորական հարակատար.	— սիրում ընճիլա իմ...
Պարտավորական գերակատար.	— սիրում ընճիլա էր է...
Պարտավորական ապառնի.	— սիրիլա բըր ընճում...
Պարտավորական ապառնի անկատար.	— սիրիլա բըր ընճեր է...
Պայմանական հարակատար.	— սիրում գընճում...
Պայմանական հարակատար շարունակական	— սիրում գու ընճում...
Պայմանական գերակատար.	— սիրում գընճեր է...
Պայմանական գերակատար շարունակական	— սիրում գունճեր է...
Պայմանական ապառնի անորոշ.	— սիրիլա գընճում...
Պայմանական ապառնի շարունակական	— սիրիլա գու ունճում...
Պայմանական անցյալ ապառնի անորոշ	— սիրիլա գընճեր է...
Պայմանական անցյալ ապառնի շարունակական	— սիրիլա գունճեր է...

### Ստորադասական

Հարակատար.	— սիրում ընճում...
Հարակատար ապառնի.	— սիրում ընճիլա ընճում...
Գերակատար	— սիրում ընճեր է...

Գերակատար ապառնի.	— սիրում ընճիլա ընճեր է...
Ապառնի.	— սիրիլա ընճում...
Անցյալ ապառնի.	— սիրիլա ընճեր է...
Հարակատար ապառնի անցյալ.	— սիրում իղում ընճում...
Գերակատար ապառնի անցյալ.	— սիրում իղում ընճեր է...

### Հրամայական

Կատարյալ.	— սիրում իղէ'...
Հարակատար.	— սիրում իղի ընճում...
Գերակատար	— սիրում իղի ընճեր է...
Ապառնի.	— սիրիլա իղէ'...

### Դերբայ

Հարակատար.	— սիրում ընճիլ
Ապառնի անորոշ.	— սիրիլա ընճիլ

### Թեական եղանակ

§326. Պոլսի հայոց բարբառում թեական եղանակը կազմվում է ձևավորվածությամբ, որին համապատասխանում է Ղրիմի և Նոր Նախիջևանի բարբառի *ըր* ձևը: Երկուսն էլ ծագում են միջին հայերենի *նայ* ձևից: Սակայն Սվեդիայի բարբառը չունի այս մասնիկը և նրա փոխարեն դնում է հայերեն *թէ* (*եթէ*) շաղկապը, որ իր հաճախական գործածության համար թույլանալով՝ դարձել է *իլ*:

Չեմ դնում թեական եղանակի բոլոր ժամանակները և տալիս եմ մի քանի օրինակներ.

<i>իլ գը թուղօս</i>	«եթե կթողնեմ»
<i>իլ գը թուղէր է</i>	«եթե կթողնեի»
<i>իլ գը դիսնօս' քէ</i>	«եթե կտեսնես' բե'ր»
<i>իլ գուողիւմ' գառնիմ</i>	«եթե կերթամ' կառնեմ»
<i>իլ գը խուսեմ</i>	«եթե կխոսեմ»
<i>իլ գը խուսէր է</i>	«եթե կխոսեի»
<i>իլ գը հիւզգում</i>	«եթե կհագամ»
<i>իլ գը հիւզգէր է</i>	«եթե կհագայի»
<i>իլ գը սիրիմ</i>	«եթե կսիրեմ»
<i>իլ գը սիրէր է</i>	«եթե կսիրեի»

## Պատմողական եղանակ

§327. Այս եղանակի կազմության և գործածության մանրամասները տե՛ս «Քննութիւն Պոլսահայ բարբառի», էջ 139: Կազմված է թարգմանաբար թուրքերէն *imîş* ձևից և Սվեդիայի բարբառում ունի *իդիր*, բայց մանավանդ *իդիր* է (Նոր Նախիջևան՝ *էդիլ* է) ձևը, որ ավելի հաճախ բայից առաջ կամ նախադասության սկզբում է դրվում. օրինակ՝

*իս գ՛նցում իդիր իմ* «ես գացած եմ եղեր»

որ և՛

*իդիր է իս գ՛նցիր իմ,*

*իդիր է իս գ՛նցում իմ,*

*իդիր է բըր ուդհը* «պիտի ուտենք եղեր»:

## Անցողական բայ

§328. Կազմվում է *-ցընիլ* վերջավորությամբ. խոնարհվում է հետևյալ ձևով.

Ստորադասական ներկա <i>խմցընիմ</i> <i>խմցընիս</i> <i>խմցընէ</i> <i>խմցընիք</i> <i>խմցընիք</i> <i>խմցընիմ</i>	Ստորադասական անցյալ <i>խմցընէր է</i> <i>խմցընէր</i> <i>խմցընիր</i> <i>խմցընէր ինք</i> <i>խմցընէր իք</i> <i>խմցընէր ին</i>	Սահմանական կատարյալ <i>խմցըցա</i> <i>խմցըցիր</i> <i>խմցէօց</i> <i>խմցըցունք</i> <i>խմցըցաք</i> <i>խմցըցէն</i>
--	--	--

Հրամայական. — *խմցէ՛՛, մը խմցընէ, խմցըցի՛ք, մը խմցընիք*  
Դերբայներ. — *խմցընիլ, խմցընիւղ, խմցըցում, խմցուցիր, խմցընիլա,*  
*խմցընիլաք*

Մի քանի օրինակ էլ բարդ և բաղադրյալ ձևերից.

Սահմանական ներկա <i>գը խմցընիմ</i> <i>գը խմցընիս</i> <i>գը խմցընէ</i> <i>գը խմցընիք</i> <i>գը խմցընիք</i> <i>գը խմցընիմ</i>	Սահմանական ներկա շարունակական <i>գու խմցընիմ</i> <i>գու խմցընիս</i> <i>գու խմցընէ</i> <i>գու խմցընիք</i> <i>գու խմցընիք</i> <i>գու խմցընիմ</i>
--	---

Սահմանական  
անկատար  
*գը խմցընէր է*  
*գը խմցընէր*  
*գը խմցընիր*  
*գը խմցընէր ինք*  
*գը խմցընէր իք*  
*գը խմցընէր ին*

Սահմանական  
անկատար շարունակական  
*գու խմցընէր է*  
*գու խմցընէր*  
*գու խմցընիր*  
*գու խմցընէր ինք*  
*գու խմցընէր իք*  
*գու խմցընէր ին*

Ապառնի

*բըր խմցընիմ*  
*բըր խմցընիս*  
*բըր խմցընէ*  
*բըր խմցընիք*  
*բըր խմցընիք*  
*բըր խմցընիմ*

Անցողական  
ապառնի

*բըր խմցընէր է*  
*բըր խմցընէր*  
*բըր խմցընիր*  
*բըր խմցընէր ինք*  
*բըր խմցընէր իք*  
*բըր խմցընէր ին*

Հարակատար

*խմցըցիր իմ*  
*խմցըցիր իս*  
*խմցըցիր է*  
*խմցըցիր ինք*  
*խմցըցիր իք*  
*խմցըցիր ին*

Գերակատար

*խմցըցիր էր է*  
*խմցըցիր էր*  
*խմցըցիր իր*  
*խմցըցիր էր ինք*  
*խմցըցիր էր իք*  
*խմցըցիր էր ին*

Անցողական բայ կազմելու երկրորդ ձևն է ներգործականի հետ խոնարհել տալ >դվիլ բայը: Ահա մի քանի օրինակ էլ թե՛ պարզ և թե՛ կրկնակ անցողականներից.

*բիրիլ դվա, մաիլ դվա, մվչիլ դվա* «երգել տվի», *խուսըցընիլ դվա, միդմըցընիլ դվա, հմազըցընիլ դվա.*

## Կրավորական բայ

§329. Կրավորական բայերը կազմվում են ներգործական բայերից, երբեմն էլ չեզոք բայերից, վերջավորությունը դարձնելով *-վիլ, -ըվիլ, -ցըվիլ* և խոնարհվում են *Բ* լծորդության համաձայն. օրինակ՝

Ստորադասական ներկա <i>սիրվէմ</i> <i>սիրվէս</i>	Ստորադասական անցյալ <i>սիրվէր է</i> <i>սիրվէր</i>	Սահմանական կատարյալ <i>սիրվիցօ</i> <i>սիրվիցուր</i>
---	--	--

սիրվա	սիրվիր	սիրվիցուվ
սիրվէնք	սիրվէր ինք	սիրվիցունք
սիրվւք	սիրվէր իք	սիրվիցւք
սիրվէն	սիրվէր ին	սիրվիցուն

Հրամայական. — սիրվէ՛, մը սիրվէ, սիրվիցի՛ք, մը սիրվւք  
 Դերբայներ. — սիրվի, սիրվիւղ, սիրվում, սիրվիր, սիրվիւա, սիրվիււք  
 Մի քանիսը նաև բարդ և բաղադրյալ ձևերից.

Ապառնի	Անցողական ապառնի
բըր սիրվէմ	բըր սիրվէր է
բըր սիրվէս	բըր սիրվէր
բըր սիրվա	բըր սիրվիր
բըր սիրվէնք	բըր սիրվէր ինք
բըր սիրվւք	բըր սիրվէր իք
բըր սիրվէն	բըր սիրվէր ին
Սահմանական ներկա	Սահմանական ներկա շարունակական
գը սիրվէմ	գու սիրվէմ
գը սիրվէս	գու սիրվէս
գը սիրվա	գու սիրվա
գը սիրվէնք	գու սիրվէնք
գը սիրվւք	գու սիրվւք
գը սիրվէն	գու սիրվէն

Սահմանական անկատար	Սահմանական անկատար շարունակական
գը սիրվէր է	գու սիրվէր է
գը սիրվէր	գու սիրվէր
գը սիրվիր	գու սիրվիր
գը սիրվէր ինք	գու սիրվէր ինք
գը սիրվէր իք	գու սիրվէր իք
գը սիրվէր ին	գու սիրվէր ին

Հարակատար	Գերակատար
սիրվում իմ	սիրվում էր է
սիրվում իս	սիրվում էր
սիրվում է	սիրվում իր
սիրվում ինք	սիրվում էր ինք
սիրվում իք	սիրվում էր իք
սիրվում ին	սիրվում էր ին

Անցողական բայերն էլ կարող են կրավորական դառնալ. ինչպես՝  
 գիղացվիլ «գիտցվել», գուողուցվա կամ գուողուվա «կերթցվի, կարելի է  
 երթալ», ուողուցվիլ կամ ուողուվիլ «կարելի լինել երթալ»:

**Ժխտական բայ**

§330. Ժխտական բայ կազմելու համար ստորադասական ներկայի և  
 անցյալի, կատարյալի, ապառնիի և դերբայների սկզբին ավելացնում ենք  
 չը մասնիկը. ահա այս ձևերի պատկերը.

Ստորադասական ներկա	Ստորադասական անցյալ	Սահմանական կատարյալ
չսիրիմ	չսիրէր է	չսիրիցա
չսիրիս	չսիրէր	չսիրիցիր
չսիրէ	չսիրիր	չսիրից
չսիրինք	չսիրէր ինք	չսիրիցունք
չսիրիք	չսիրէր իք	չսիրիցւք
չսիրին	չսիրէր ին	չսիրիցէն

Ապառնի	Անցյալ ապառնի	Հրամայական անցյալ
չպըր սիրիմ	չպըր սիրէր է	դըխ չսիրէր է
չպըր սիրիս	չպըր սիրէր	դըխ չսիրէր
չպըր սիրէ	չպըր սիրիր	դըխ չսիրիր
չպըր սիրինք	չպըր սիրէր ինք	դըխ չսիրէր ինք
չպըր սիրիք	չպըր սիրէր իք	դըխ չսիրէր իք
չպըր սիրին	չպըր սիրէր ին	դըխ չսիրէր ին

Դերբայներ. — չսիրիլ, չսիրիւղ, չսիրում, չսիրիր, չսիրիւա, չսիրիււք  
 Հրամայական ձևը կազմելու համար մասնիկն է մը՝ թե՛ եզակի և թե՛  
 հոգնակի. սա առաջանում է մի՛ ձևից: Նկատելի է, որ Սվեդիայի բարբա-  
 ոում մասնիկները (հաճախակի գործածության պատճառով) ձայնավորը  
 սղում և ը-ի են վերածում. այսպես են՝ թող >դըղ, պիտի որ >բըր և մի՛ > մը  
 Ահա օրինակներ արգելականից.

եզակի	հոգնակի
մը սիրէ	մը սիրիք
մը բւքնէ	մը բւքնիք
մը խուսէ	մը խուսւք
մը հւքգօ	մը հւքգօք



մը հնավձէ	մը հնավձնաք
մը գուղնօ	մը գուղնաք
մը սիրվէ	մը սիրվաք
մը խմցընէ	մը խմցընիք
մը թուղօ	մը թուղաք

Այլաձև կազմություն ունեն սահմանական ներկայի և անկատարի պարզ և շարունակական ձևերը: Պարզ ներկայի եզակի առաջին երեք դեմքերն ստանում են *չըմ, չըր, չը* օժանդակները, նրա հոգնակի երեք դեմքերը և անկատարն ամբողջ ստանում են *չըր* օժանդակը, իսկ ներկա և անկատար շարունակական ձևերը ամբողջապես ստանում են *չու*, որ իհարկե *կու* և *չ* ձևերի գումարն է:

Ներկա պարզ	Ներկա շարունակական
<i>չըմ սիրէ</i>	<i>չու սիրիմ</i>
<i>չըր սիրէ</i>	<i>չու սիրիս</i>
<i>չը սիրիր</i>	<i>չու սիրէ</i>
<i>չըր սիրիմք</i>	<i>չու սիրիմք</i>
<i>չըր սիրիք</i>	<i>չու սիրիք</i>
<i>չըր սիրին</i>	<i>չու սիրին</i>

Անկատար պարզ	Անկատար շարունակական
<i>չըր սիրէր է</i>	<i>չու սիրէր է</i>
<i>չըր սիրէր</i>	<i>չու սիրէր</i>
<i>չըր սիրիր</i>	<i>չու սիրիր</i>
<i>չըր սիրէր ինք</i>	<i>չու սիրէր ինք</i>
<i>չըր սիրէր իք</i>	<i>չու սիրէր իք</i>
<i>չըր սիրէր ին</i>	<i>չու սիրէր ին</i>

### Հարցական բայ

§331. Կազմվում է լոկ ձայնի բարձրացումով. ոչ մի հարցական մասնիկ չի կցվում բային (ինչպես՝ Պոլիս *մի՞, Համշէն թե՞. գուղի՞ս «կուտե՞ս», բըր ուողի՞ս «պիտի երթա՞ս»*):

### Թուրքերենից փոխառյալ բայեր

§332. Ինչպես Պոլսի, նույնպես և Սվեդիայի բարբառում հանդիպող թուրքերեն բայերը բաժանվում են երեք խմբի: Առաջին խումբը հասարակ թուրքերեն բառեր են՝ գործածված հայերեն օժանդակով. ինչպես՝

*յաղմա ինի* «ավարի տալ, ավարել» (թուրքերեն *yagma* «ավար» բառից)։

*հավաս ինի* «փափագել» (արաբերեն > թուրքերեն *havas* բառից)։

*դարլամա ինի* «պատել, ծածկել որևէ բանով. օրինակ՝ արծաթի կամ ոսկու շերտով և այլն» (թուրքերեն *qaplama*):

Այս կարգի բառերը քերականական-արժեք չեն ներկայացնում:

Երկրորդ կարգի բայերը կազմված են թուրքերեն անցյալ դերբայից, որ մնում է միշտ անփոփոխ և խոնարհվում է նրա հետ միացած հայերեն օժանդակ բայը:

Երկու օժանդակ բայ կա, որոնք օգտագործվում են այս դեպքում. *ըննի* «լինել» և *ինի* «անել». առաջինը չեզոք և կրավորական բայերի համար, երկրորդը՝ ներգործական (որի հետ նաև պատճառական) բայերի համար:

Հայտնի է, որ թուրքերենում անցյալ դերբայը երկու ձև ունի. ծանր ձայնավորի համար –*maš*, թեթև ձայնավորների համար –*miš*. հայերենը, որ ծանր ու թեթև ձայնավորների խտրություն չունի, երկու ձևերից միայն մեկն է վերցրել իր փոխառությունների մեջ. Պոլսի հայ բարբառը (ինչպես նաև Ղրիմի և Նոր Նախիջևանի բարբառը) վերցրել են –*միշ* ձևը, որ ավելի հարմար էր հայերենին, իսկ Սվեդիայի բարբառը վերցրել է –*մըշ* ձևը:

Ահա օրինակներ.

*բաթմըշ ըննի* «չրի տակ ընկղմվել. 2. սնանկանալ, խորտակվել»

*բաթմըշ ինի* «ընկղմել. 2. փչացնել»

*բասդըրմըշ ինի* «գերազանցել»

*դավըրմըշ ինի* «տապակել, խորովել»

*շաշմըշ ըննի* «զարմանալ» և այլն:

Երրորդ կարգին են պատկանում այն բայերը, որոնց արմատը թուրքերեն է (կամ նաև արաբերենից ու պարսկերենից փոխառյալ թուրքերեն), իսկ վերջավորությունը հայերեն. այս բայերը խոնարհվում են հայերեն բայերի նման: Ահա օրինակներ.

*Բառըշի* «հաշտվել», 2. «սակարկության մեջ համաձայնության գալ»

*Բառըցընի* «հաշտեցնել»

*Բըլըշի* «սկսել», թուրքերեն *başla-maq*

*Դարդընի* «ցանուցիր անել»

*Դըմմի* «ազահել»

*Թալանի* «կողոպտել, ավարել»

*Խալիսի* «ազատել. 2. ազատվել»

*Խամազի* «քություն անել, մատնել»

Խարջի	«ծախսել, վատնել»
Ղալաջի	«կլայկել, անագազօծել»
Մշդի	«հրել, բոթել»
Նախջի	«նկարագարդել»
Սըխսի	«սեղմել», թուրքերեն səq-maq
Փառըլդի	«փայլփլել»
Փէյդահի	«երևալ, հայտ գալ»
Քուֆրի	«հայհոյել»

Կան և արաբերեն բայեր՝ այս ձևի փոխառությամբ. ինչպես՝

խաղըրի	«պատրաստել»
խիսսի	«եղծանել, փչացնել»
բլդի	«կուլ տալ» < արաբերեն bal°
շըլֆըթի	«ցավից մոմոալ»
հադ'աթի	«պատմել» < արաբերեն hikāyat

Ասացինք, որ այս երրորդ կարգի բայերը խոնարհվում են հայերեն բայերի պես, իսկ երկրորդ կարգի բայերն ունեն այն առանձնահատկությունը, որ խոնարհման ժամանակների մեջ մասնիկը դնում են օտար բառի սկզբում և ոչ թե օժանդակի վրա, այսինքն՝ ճիշտ հակառակը այն ձևի, որ ընդունված է Պոլսի բարբառում. օրինակ՝

Գը շաշմըշ ըննում	«կզարմանամ»
Գու շաշմըշ ըննում	«կզարմանամ կոր»
Գը բաղաշլամըշ ինէ	«կպարգևի»
Գու բաղաշլամըշ ինէ	«կպարգևե կոր»
Գը բասդըրմըշ ինիս	«կգերազանցեմ»
Գու բասդըրմըշ ինիս	«կգերազանցեմ կոր»
Բըր բասդըրմըշ ինիս	«պիտի գերազանցեմ»:

### ԴԵՐԲԱՑ

§333. Սվեդիայի բարբառն ունի այն զարմանալի հատկությունը, որ գրաբարի 4 լծորդություններն իրենց երկրորդ տիպարով միասին վերածել է –իլ վերջավորության: Այսպիսով, գրաբարի անորոշ դերբայի 8 ձևի վերջավորությունները վերածվել են մեկի, ճիշտ ինչպես Համշենի բարբառը վերածել է մեկի, միայն –իլ վերջավորության փոխարեն դնելով –ուլ:

Սա մի շատ գեղեցիկ նորություն է, որ մտցրել են այս երկու բարբառները հայերենի մեջ, խոնարհման 8 ձևերի բազմազանության մեջ միօրինակություն մտցնելու նպատակով:

Բայց ինչպես տեսանք, միօրինակությունը մտցրած է միայն անորոշ դերբայի մեջ և բայի խոնարհումը, ինչպես Համշենում, նույնպես և այստեղ մնում է դարձյալ բազմազան: Սվեդիայի բարբառում, ինչպես տեսանք, միայն ստորադասական անկատար ձևն է, որ հասել է միօրինակության, իսկ ստորադասական ներկան և կատարյալը և այլն մնում են: Ըստ այսմ՝ անորոշ դերբայի միաձևությունը դառնում է ոչ միայն անօգուտ, այլև խանգարիչ լծորդության ճանաչման համար, և լծորդության ճանաչման համար պետք է դիմել հենց բայաձևերին:

Լեզվի մեջ ձևափոխությունը քայլ առ քայլ է կատարվում. անորոշ դերբայի միօրինակությունն առաջին քայլն էր, երկրորդը եղավ ստորդասական անկատարը, որին պետք է հետևեր նաև մի երրորդը և չորրորդը, և բարբառը պիտի հասներ խոնարհման այնպիսի միօրինակության, որին հասել է պարսկերենը կամ թուրքերենը:

Գրական լեզուն և գաղթականությունը չթողեցին, որ այդ վիճակը հասներ:

§334. Անորոշ դերբայը գործածվում է նաև իբր գոյական և այն ժամանակ կարող է ստանալ հոդ և հոլովվել. օրինակ՝

- Ու. ուդի
- Ս. ուդիլը
- Տ. ուդիլը
- Հ. (զ)ուդիլ
- Բ. ուդիլէ
- Գ. ուդիլում

§335. Անորոշ դերբայի բացառական հոլովը ցույց է տալիս միաժամանակ կատարված գործողություն և գործ է ածվում իբր մակբայ: Ցույց է տալիս նաև պատճառ. օրինակ՝

Ուդիլէ գու ուդո «ուտելով գնում է, ուտելեն կերթա կոր»:

Օիդ ուդիլին է «շատ ուտելու պատճառով է»:

§336. Անորոշ դերբայը ուղղական հոլովով և որոշիչ հոդով, միանալով թուրքերեն *iken* մակբային, ցույց է տալիս ժամանակ. օրինակ՝

Ուդիլն իքէն, ուդիլ–խմիլն իքէն «ուտելիս, ուտելու ժամանակ կամ միջոցին»:

Ուգիլն իքէն «գալիս»:

Խուսիլն իքէն «խոսելիս», ուդիլն իքէն «երթալիս» և այլն:

Այս *և* հոդը դիմորոշ հոդի հետ կապ չունի և ամեն դեմքի հետ կապվում է. օրինակ՝

<i>իս ուղիւն իքէն</i>	<i>միճք ուղիւն իքէն</i>
<i>դ՞օն ուղիւն իքէն</i>	<i>դէօք ուղիւն իքէն</i>
<i>ան ուղիւն իքէն</i>	<i>անիւնք ուղիւն իքէն</i>

§337. Անորոշ դերբայը, ուղղական կամ սեռական հոլովով, դիմորոշ հոդով, միանալով թուրքերեն *քիմը*, *քիմի* «պես» հետադրության, ցույց է տալիս «հենց որ, անմիջապես որ». օրինակ՝

*իս ուղիւն քիմը գնացա* «հենց որ կերա՝ գնացի»  
*իս դիսնիլըս քիմի գնացա* «հենց որ տեսա՝ գնացի»

*Դիտողություն*. — Այս ձևը ճիշտ մնան է Պոլսի *պէս* ձևի գործածության. ինչպես՝ «ուտելուս պես գացի». միայն այստեղ դրված է թուրքերեն բառով: *Քիմի* գավառական թուրքերեն ձև է, որի գրականն է *ցիբի* «պես, մնան»:

§338. Ներկա դերբայը, որ վերջանում է միշտ *-իւղ* ձևով, ցույց է տալիս գործող (անձ) և գործածվում է թե՛ իբր ածական և թե՛ իբր գոյական. օրինակ՝

*ուգիւղ դարա* «եկող տարի» (որ և *ուգիւն դարա* «եկած տարի»):  
*ուգիւղը գիխից, հմասնիւղը գիխից* «եկողը զարկեց, հասնողը զարկեց»:

§339. Ներկա դերբայը հոլովվում է հետևյալ ձևով.

<b>Ու.</b>	<i>սիրիւղ</i>	<i>սիրիւղնա</i>
<b>Ս.Տ.</b>	<i>սիրիւղը</i>	<i>սիրիւղնը</i>
<b>Հ.</b>	<i>(գ)սիրիւղ</i>	<i>(գ)սիրիւղնէն</i>
<b>Բ.</b>	<i>սիրիւղին</i>	<i>սիրիւղինն</i>
<b>Գ.</b>	<i>սիրիւղում</i>	<i>սիրիւղումն</i>

§340. Անցյալ դերբայն ունի երկու ձև՝ *-իր* և *-ուձ*. առաջինը միայն դերբայ է և խոնարհվում է էական բայի ներկայի և անկատարի հետ. օրինակ՝

<i>սիրիր իմ</i>	<i>սիրիր էր է</i>
<i>սիրիր իս</i>	<i>սիրիր իր</i>
<i>սիրիր է</i>	<i>սիրիր էր</i>
<i>սիրիր ինք</i>	<i>սիրիր էր ինք</i>
<i>սիրիր իք</i>	<i>սիրիր էր իք</i>
<i>սիրիր ին</i>	<i>սիրիր էր ին</i>

§341. Երկրորդ ձևը՝ *ուձ* թե՛ գոյական է, թե՛ ածական է և թե՛ դերբայ: Իբրև գոյական հոլովվում է. այսպես՝

		եզակի	
<b>Ու.</b>	<i>սիրում</i>	<i>փախում</i>	<i>նսդում</i>
<b>Ս.Տ.</b>	<i>սիրումը</i>	<i>փախումը</i>	<i>նսդումը</i>
<b>Հ.</b>	<i>(գ)սիրում</i>	<i>(գ)փախում</i>	<i>(գ)նսդում</i>
<b>Բ.</b>	<i>սիրումին</i>	<i>փախումին</i>	<i>նսդումին</i>

		հոգնակի	
<b>Ու.</b>	<i>սիրումնա</i>	<i>փախումնա</i>	<i>նսդումնա</i>
<b>Ս.Տ.</b>	<i>սիրումնը</i>	<i>փախումնը</i>	<i>նսդումնը</i>
<b>Հ.</b>	<i>(գ)սիրումնէն</i>	<i>(գ)փախումնէն</i>	<i>(գ)նսդումնէն</i>
<b>Բ.</b>	<i>սիրումնին</i>	<i>փախումնին</i>	<i>նսդումնին</i>
<b>Գ.</b>	<i>սիրումնում</i>	<i>փախումնում</i>	<i>նսդումնում</i>

Իբրև ածական գործածության օրինակ՝

*ուգիւն դարա* «եկած տարի» (որ և *ուգիւղ դարա* «եկող տարի»)  
*իլլում դունձ* «հասած տանձ»  
 Ածականի ձև ունի նաև՝

<i>գ՛նցում դճնիս</i>	«իմ գնացած տունը»
<i>իգում դճնիս</i>	«այն տունը, ուր եկել եմ»
<i>իգում դնվէդ՛</i>	«ձեր եկած տունը»
<i>իրինց իգում դնվէն</i>	«իրենց եկած տները»

Ինչպես հայտնի է, դիմորոշի գործածության այս ձևը մնան է Պոլսի բարբառին. Երևանի բարբառը դիմորոշը դնում է բայի վրա:

§342. Իբրև դերբայ՝ էական բայի ներկայի և անկատարի հետ միանալով՝ կազմում է հարակատար և գերակատար ժամանակները.

<i>սիրում իմ</i>	<i>սիրում էր է</i>
<i>սիրում իս</i>	<i>սիրում էր</i>
<i>սիրում է</i>	<i>սիրում իր</i>
<i>սիրում ինք</i>	<i>սիրում ինք</i>
<i>սիրում իք</i>	<i>սիրում իք</i>
<i>սիրում ին</i>	<i>սիրում ին</i>

§343. Անցյալ դերբայն էլ անորոշ դերբայի մնան՝ միանալով թուրքերեն *iken* բառի հետ, ցույց տալիս «ժամանակ». օրինակ՝

*իս դիսում իքէն* «երբ ես տեսա»  
*դօն դիսում իքէն* «երբ դու տեսար»  
*ւանհւնք դիսում իքէն* «երբ նրանք տեսան»

Ինչպես տեսնում ենք, դերբայի վրա դիմորոշ հոդ չկա. կարելի է նաև հանել դերանունները և ենթակալան իմացվում է խոսքի ընթացքից. օրինակ՝  
*դիսում իքէն* «ես, դու, նա... երբ տեսա, տեսար...»  
*ուզում իքէն* «երբ եկա ես, դու, նա...»

§344. Անորոշ դերբայի նման, անցյալ դերբայն էլ կարող է միանալ թուրքերեն *քիմը*, *քիմի* «պես, նման» հետադրության և սեռական հոլովով ու դիմորոշ հոդով ցույց կտա «հենց որ, անմիջապես որ». օրինակ՝  
*գիրումիս քիմը գացա* «հենց որ կերա՝ գնացի»  
*ան դիսումը քիմի հոգիք* «հենց որ տեսավ՝ եկավ»  
*դէօք դիսումնէ՛դ՝ քիմը գիխիցիք* «հենց որ դուք տեսնեք՝ խփեցեք»  
*ւանհւնք դիսումնէ՛ն քիմը՝ բոնիցէն* «նրանք հենց որ տեսան՝ բռնեցին»  
*ւանումիս քիմի փախա* «հենց որ ասացի՝ փախա»  
*դիսումիդ՝ քիմի գիխէ* «հենց որ տեսար՝ զա՛րկ»

§345. Անցյալ դերբայը ստանալով ժխտական չ մասնիկը՝ նշանակում է «դեռ այդ բանը չեղած». սովորաբար կցվում է նաև թուրքերեն *դրիս* «դեռ» բառը. օրինակ՝  
*դրիս չիգում* «դեռ չեկած»  
*դրիս չիսում* «դեռ չիսած»

Պոլսի բարբառում դերբայն ստանում է նաև թուրքերեն –dan բացառականի մասնիկը. օրինակ՝ *չէգաձդան*, *չըսաձդան* «դեռ չեկած, դեռ չասած» (տե՛ս «Քննություն Պոլսահայ բարբառի», §405): Սվեդիայում այս ձևը գործածական չէ:

§346. Հարակատար և գերակատար կազմելու համար անցյալ դերբայը (միայն –ած ձևով) կարող է միանալ նաև *ուհիս* բային՝ փախանակ *եմ*, *էի* էականի (այս մասին տե՛ս և «Քննություն Պոլսահայ բարբառի», §408). օրինակ՝

*քիրում գունէմ* «բերած ունեմ, բերած եմ»  
*քիրում գունէր է* «բերած ունեի, բերած էի»  
*հազում գունէմ, հազում գունէր է* «հազած ունեմ, հազած էի»  
*դիսում գունէմ, դիսում գունէր է* «տեսած ունեմ, տեսած էի»  
*գիրում գունէմ, գիրում գունէր է* «կերած ունեմ, կերած էի»

Ահա վերջինս ամբողջական պատկերը.

<i>գիրում գունէմ</i>	<i>գիրում գունէր է</i>
<i>գիրում գունէս</i>	<i>գիրում գունէր է</i>
<i>գիրում գունա</i>	<i>գիրում գունիր</i>
<i>գիրում գունէնք</i>	<i>գիրում գունէր ինք</i>
<i>գիրում գունաք</i>	<i>գիրում գունէր իք</i>
<i>գիրում գունէն</i>	<i>գիրում գունէր ին</i>

§347. Օեշտի պատճառով էական բայի տեղափոխության օրենքը, որ կա Երևանի բարբառում (տեսել՝ եմ, շա՛տ եմ տեսել), գոյություն չունի այստեղ. ազատորեն կարելի է ասել՝

<i>շիդ, իմ դիսիր</i>	«շատ եմ տեսել»
<i>շիդ դիսիր իմ</i>	«շատ տեսել եմ»
<i>շիդ իմ գ՛ացիր</i>	«շատ եմ գնացել»
<i>շիդ գ՛ացիր իմ</i>	«շատ գնացել եմ»

§348. Ապառնի դերբայն էլ ունի երկու ձև՝ *լա*, *լաք*. ուրիշ բարբառներում առաջինը դերբայ է, կարող է նաև լինել ածական, իսկ երկրորդը գոյական է. նույնպես է նաև Սվեդիայի բարբառում (*սիրիլա իմ*, *սիրիլա էր է*, *սիրիլա իդօ*, *ուրիլա հուց* «ուտելու հաց»), միայն այն տարբերությամբ, որ Սվեդիայում –լա ձևը նաև գոյական է. հմմտ.

*իդօն ուրիլա գունէմ* «տանը ուտելիք ունեմ»  
*աս դարա ուրիլա խաղորիցի՞ր* «այս տարի ուտելիք պատրաստեցի՞ր».  
 բայց կարելի է նաև ասել *ուրիլաք* (երկու օրինակների մեջ էլ):

§349. Անցյալ դերբայը՝ իբր գոյական, հոլովվում է հետևյալ ձևով.

ու. *ուրիլաք*  
 U.S. *ուրիլաքը*  
 Հ. *(գ) ուրիլաքը*  
 Բ. *ուրիլիքի*  
 Գ. *ուրիլիքում*

Օրինակ՝

<i>ուրիլիքը համուր</i>	«ուտելիքի համար»
<i>առնիլաք գունէմ</i>	«առնելիք ունեմ»
<i>առնիլիքիս գորիցա</i>	«առնելիքիցս կտրեցի»
<i>առնիլիքին գորից</i>	«առնելիքիցը կտրեց»
<i>առնիլիքումիս</i>	«առնելիքովս»

հոգնակի

- Ու. ուղիլւքնա, ուղիլվուք
- Ս.Տ. ուղիլիքնէն, ուղիլվուցը
- Բ. ուղիլիքնէն (յըրմիւնը), ուղիլվուցը (յըրմիւնը)
- Գ. ուղիլիքնուս, ուղիլվուցնիրուս

§350. Գրական հայերեանում անորոշ դերբայը ժամանակ չունի. «սիրել» թե՛ ներկա է, թե՛ անցյալ և թե՛ ապառնի. բարբառում կարող ենք ասել ներկա՝ սիրիլ, անցյալ՝ սիրում ըննիլ, ապառնի՝ սիրիլա ըննիլ:

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

առաջ >յառանջ. — ըրգը դարա յառանջ «երկու տարի առաջ»  
 առջև >յառջիվը. — յառջիվիս, յառջիվիդ, յառջիվը «առջևս, առջևդ, առջևը»

այսդիս >յաւսդէն, այդդիս >յադդէն, այնդիս >յանդդէն  
 գաղտուկ >գ՛ւտդէտօգ. — յըրմի՛նիս գ՛ւտդէտօգ «իճճնից գաղտնի»  
 դէս >դիմը. — միդ դունը դիմը «մեր տան դեմը»  
 դէս, դէդ, դէն >դիսսօ, դիդօ, դինօ. — դինօ գ՛նօ «դէն գնա»  
 թայ «դեպի». թայ աւսդէն, թայ ադդէն, թայ անդէն  
 դուրս >դիրուձէ. — դիրուձէ գ՛նօ «դուրս գնա», դիրուցունց գուգնուս «դրսից ես գալիս»

եսուը >յիդդդէն, նաև իդիվդունը, որ նշանակում է պարզապես «եսուը».  
 օրինակ՝ դուգննէն իդիվդունը «խանութի եսուը», ախըռէն իդիվդունը «ախտոի եսուը»

դէ՛րը «բացի» (< արաբերեն yair). — դէ՛րը գէնը «բացի իրենից», դէ՛րը գըսը «բացի քեզանից», դէ՛րը գէս մուդ՛ չիգնար «իճճանից բացի մարդ չկար»

ըըը «միճչև». — ըըըը հուս «միճչև այստեղ», ըըըը իրիգօն «միճչև երեկո», ըըըը սաւրախաւան, ըըըը աուվըդօն «միճչև առավոտ»

թա «միճչև» (< պարսկերեն tā). — թա հուս «միճչև այստեղ», սաւրախաւան թա հաւան «առավոտից միճչև այժմ»

հաւանուր «համար, վասն». — ընձէ հաւանուր «իճճ համար», մի հաւանուր «մեզ համար», ուղիլա հաւանուր «ուտելու համար»:

հիոո «հեռի». — հիոո սիդնիս, հիոո սուֆրիս «հեռու սեղանից»

հիդ «հետ». — հի՛դիս «հետս», հի՛դիդ «հետդ», հի՛դը «հետը», էս քայրը յէս հիդն է «իմ քույրը իմ հետն է»

միջ՛ «մեջ». — միջիս «մեջս», միջիդ՛ «մեջդ», միջը՛ «մեջը», դունը միջը՛ «տան մեջը», մատդը միջ՛ «մարդու մեջ»

մուդ «մոտ». — դունը մուդը «տանը մոտը», մի մուդ է «մեզ մոտ է»

յիդ «յետ, հետո». — ք՛ւն գէս յիդ իգիք «քան գիս ուշ եկավ», ըրգը սղաթ յիդ «երկու ժամ հետո»

սուդրա, սունդրա (<թուրքերեն soñra) «հետո»

իշիլում «աշելով, նայելով, համեմատ»

նըքցէ «ի ներքս, ներս». — նըքցիս «ներսս», նըքցընէն «ներսերը», նըքցունց նըքցէ «ներսից ներս»

յախըն «մոտ» (=թուրքերեն yaqəñ). — յախըն ըրգը սղաթ «շուրջ երկու ժամ», որ և հաւան հաւան ըրգը սղաթ

չուրս դէն «չորս դիս». — չուրս դէս «չորս դիս», չուրս դէդ «չորս դիդ», միդ չուրս դէն «մեր չորս դիս»

դըր գէս «իճճ նման», դըր ըրգճայն «ձայն նման», դըրգաս, դըրգատ, դըրգան «այսպես, այդպես, այնպես», դըր ըր չուրօս գու խուսա «երեխայի նման է խոսում». — սրա հետ հմմտ. գիմը «պես, նման». — ջէօր գիմը «ջրի պես», ճայն գիմը «ձյան պես», չուրօս գիմը գու խուսա «երեխայի նման է խոսում»: — Առաջինը արաբերեն farz «ձև, կերպ, օրինակ, տարագ» բառն է, որ միշտ գ-ով հայցականի մոտ գործածվելով՝ կորցրել է իր վերջնահնչյունը, երկրորդը արևելյան թուրքերեն kimi «պես, նման» բառն է:

իվար «ի վայր». — իվար ինգուվ «վայր ընկավ», դուրսանէն գուվա «ցածրերում ման է գալիս» (դարվայր և իվիլ բառերից)

նըըըդէն «ներքև, վարը»

իվիր «վերև, վեր». — իվիր գ՛նից «վերև գնաց», վիրունց իգիք «վերևից եկավ», վիրունց իվար «վերևից ի վայր»

ըրվա «ի վերայ, վրա». — դունը ըրվա «տան վրա» (անորոշ), դունը ըրվան «տանը վրան» (որոշյալ), ըրվաս «վրաս», ըրվատ «վրատ», ըրվան «վրան», ըրվընէս «վրանիս», ըրվընէդ՛ «վրանիդ», ըրվընէն «վրանին»

դիք «տակ», դի՛քիս, դի՛քիդ, դի՛քը «տակս, տակս, տակը». տունը դիքը «տանը տակը», բադէն դիքը «պատին տակը», որ և վըրքը (ոտքը)

«տակը», դունը վըրքը «տանը տակը», ձառէն վըրքը «ծառին տակը», դունը վըրքին ջէօր գուննէ «տանը տակից ջուր է ելնում»  
 դիդ «տեղ, փոխանակ».—յէմ դիդը դօն Աէսդ՝ «իմ տեղը դու նստիր»  
 քուվ «քով», քուվիս, քուվիդ, քուվը «քովս, քովդ, քովը», քուվըննէս,  
 քուվըննէդ, քուվըննէն «քովերնիս, քովերնիդ, քովերնին», դունը  
 քուվը «տան քովը», քուրիս քուվն է «քրոջս քովն է»  
 գուրա «համեմատ» (< թուրքերեն göre).—ընձի գուրա, քի գուրա, էր գուրա  
 «ինձ, քեզ, իրեն համեմատ»  
 դիյէ «իբր» (< թուրքերեն deyu, Պոլիս դիյի). օրինակ՝ չամ՞ դիյէ «իբր ի՞նչ»,  
 դօն ամէ մուռդ՞ դիյէ միջը մդուր «դու էլ իբր մարդ մէջ մտար»:

### ՆԱԽԴԻՐՆԵՐ

Վերը (էջ 478) խոսեցինք *ի, յ, զ* նախդիրների մասին. մի քանի հավելվածական տեղեկություններ էլ տալիս ենք այստեղ:  
 Այժմ Սվեդիայի բարբառում գիտակցվում է հայցականի *զ* նախդրի գործածությունը, բայց պարտադիր չէ: Կարելի է դնել կամ չդնել:  
 Ահա մի քանի օրինակներ այս նախդիրների կամավոր գործածության.  
 (Ձայնավորից առաջ *զ*—մնում է անփոփոխ. թրթռում բաղաձայնից առաջ հնչվում է *ըզ*, խուլ բաղաձայնից առաջ՝ *ըս*, *հ* բաղաձայնից առաջ կարելի է մինչև անգամ լսել *ս*):  
*Դօնը յի՞փ շինիցիր* = *ըզդօնը յի՞փ շինիցիր* «տունը ե՞րբ շինեցիր»:  
*Ջախըռը փըլլիցա* «ախոռը փլցրի»:  
*Ջախըռը նիր շինիցա* «ախոռը նոր շինեցի»:  
*Հուցը գիրօ* = *Հահուցը գիրօ* «հացը կերա»:  
*Ըզձուռը զըդրից* = *Ջուռը գդրից* «ծառը կտրեց»:  
*Ըքուրը վիրցըցա* = *Քուրը վիրցըցա* «քարը վերցրի»:  
*Իս ըզդօնը փըլլիցա* «ես տունը փլցրի»:  
*ի* նախդիրը, որի գործածությունը այնքան սովորական է Քեսաբ և Արամո, այստեղ անսովոր է: Ես գտել եմ միայն երեք բառ, որոնց հետ *ի* մասնիկի գործածությունը պարտադիր է. այդ է նախ «տուն» բառը, որ թե՛ նախդրիվ հայցական և թե՛ ներգոյական հոլովում ստանում է անպատճառ *ի* նախդիրը. ահա օրինակներ.  
*Իդօն գ՛նից* «տուն գնաց»  
*Դօն իդօն գ՛նօ* «դու տուն գնա»  
*Իդօն նսդում է* (որ *և՛ դիճը նսդում է*) «տանը նստած է»

Այն մյուս երկու բառերը, որոնք պահել են *ի* նախդրով գործածությունը, ժամ > ժում և եկեղեցի > գիղիցա բառերն են. օրինակ՝  
*Ի ժում գ՛նցի՞ր* «ժամ գնացի՞ր»  
*Ի գիղիցէն գ՛նցի՞ր* «եկեղեցի գնացի՞ր»  
*Ի գիղիցէն նսդում է* «եկեղեցում նստած է»:  
 Բայց կարելի է առանց նախդրի էլ ասել՝  
*Գիղիցէն գ՛նցի՞ր* «եկեղեցի գնացի՞ր»  
 Ուրիշ բառեր *ի* չունեն. ինչպես՝  
*Գիդէնը ինգուվ* «գետինն ընկավ»  
*Ախըռ գ՛նից, ախըռը զը գինօ* «ախոռ գնաց, ախոռումն է կենում»  
*Դօն մնըլմն գ՛նօ, բագուրը գ՛նօ* «դու անտառ գնա, շուկա գնա»:  
 «Տուն» բառի այս բացառիկ դրությունը պատահական չէ, նույնպիսի երևույթ գտնում ենք նաև ուրիշ լեզուներում. օրինակ՝ հունարենում մնում է oikos «տուն» բառի ներգոյականը οἶκος «տանը» իբրև մակբայ.— ոուսերենում *дома* «տանը» հին ներգոյական հոլովը իբրև մակբայ կենդանի է այժմ էլ. — նույնիսկ արևելյան գրական հայերենում և բարբառներում մինչև հիմա մնում է ներգոյական *տանը*, որ գրաբար *ի տան* ձևի շարունակությունն է:  
*ի* նախդրի գործածության ուրիշ օրինակներ են՝ *իվիր* «վերև, ի վեր», *ի վար* «ի վայր, ներքև», *յըրվաս, յըրվադ, յըրվան* «ի վերայս, ի վերայդ, ի վերայն», բայց սրանք քարացած ձևեր են և նախդրի գիտակցությունը կորած է նրանց մեջ:  
 Ավելի հետաքրքրական է *յըրմիճը* ձևը, որ գրաբար *յիրմէն* բացառականի ձևն է և այժմ էլ իբրև բացառականի մասնիկ ազատ գործածվում է միշտ:  
 Դիտելի է, օրինակ, *էմ քայրը յէմ հիդն* է «իմ քույրը իմ հետն է», և նման դեպքեր, որոնց մեջ *յ*—ն հորանջի (*hiatus*) պատճառով չէ գործածված, այլ իսկական *յ* նախդիրն է ձայնավորի վրա, որովհետև առանձին գործածվելու ժամանակ էլ ասվում է *յէմ հիդը* «ինձ հետ»:  
 Գալով *ընդ* նախդրին, որ այնքան շատ հետքեր ունի Ջեյթունի բարբառում, այստեղ բոլորովին չի գործածվում: Կա միայն *դիր* «ինչպես» բառը, որ Պոլսի բարբառի *ընդոր* ձևի վրայով կապվում է *ընդ որ* ձևին:

### ՄԱԿԱՑՆԵՐ

*Ադին արիճ* «երբեմն», *ան արիճը* «այն ժամանակ»  
*Ալէ* «էլ, ևս». — *իս ամէ* «ես էլ», *դօն ամէ* «դու էլ», *արգէնիս ամէ* «աղջիկս էլ»:

Ըլլըա՛լէմ «կարծեմ, արդյոք»:  
 Ա՛մըն աղըզ «ամեն անգամ», *ւմըն զուրգ՝* «ամեն անգամ», *զուրգ՛ մը* «մի անգամ», *ըրգը զուրգ՛* «երկու անգամ»:  
*Ամսէ ամէս* «ամսե ամիս»:  
*Անջաթի* (< թուրքերեն anjaq) «հագիվ»  
*Ան ուրը* «այն օրը», *ան ուրիւրը* «այն օրերը»  
*Անութը փիրում* «անոթի փորով»:  
*Աջաթ, աջաթա* (< արաբերեն ʿajab) «արդյոք»:  
*Յառանջվընէ* «ստաջուց»:  
*Առջը ուրը* «ստաջին օրը»:  
*Առվըղօն* «առավոտուն»:  
*Դըրգաս, դըրգադ, դըրգան* «այսպես, այդպես, այնպես» (տես՝ Նախադրություններ բաժնում):  
*Քանգաս, քանգադ, քանգան* «այսչափ, այդչափ, այնչափ»:  
*Արթըխ* (< թուրքերեն artaq) «այլևս, է՛լ» — *ւրթըխ չըմ ուզօ* «էլ չեմ գա»:  
*Ավիլա* «ավելի, առավել»  
*Բւրը* (< թուրքերեն bari) «զոնե». — *Բւրը դը զը բիրիր* «զոնե եթե բերեր»:  
*Բարմընթ վերսըն* «բարեբախտաբար»:  
*Բարը* (< թուրքերեն helki) «թերևս»:  
*Բիլի* «մինչև իսկ, թեկուզ» (թուրքերեն bile). — *ըրգը հիզգն բիլի* «չիզար մինչև իսկ երկու հոգի չկար»:  
*Բիրդան* (թուրքերեն birden) «մեկեն, հանկարծ». — *բիրդան իզիք* «հանկարծ եկավ»:  
*Գինան* «նորից, կրկին, դարձյալ» (թուրքերեն gine, yine). — *գինան իզիք* «նորից եկավ»:  
*Գէոյան* «իբր թե» (< պարսկերեն guya ki):  
*Դըհա* (թուրքերեն daha) «դեռ, է՛լ ավելի». — *դըհա ամվիլը է* «էլ ավելի գեղեցիկ է»:  
*Դայմա* «միշտ» (արաբերեն-թուրքերեն daima). — *դայմա զուգիր միր դօնը* «միշտ գալիս էր մեր տունը»:  
*Դարիվայր* > *դիուվար*, դարիվեր > *դիուվիր*. տես՝ §27:  
*Դիմը* «դեմը», *դիմիս* «դեմս», *դիմիդ* «դեմդ», *դիմիրիս*, *դիմիրիդ*, *դիմիրը*

«դեմներս, դեմներդ, դեմները». բայց նաև թուրքերեն *դառզէն* (qarşu) «դիմացը», *դարշին զուզօ* «դիմացից գալիս է». — *դիմուդիմ* «դեմ դեմի», որ և թուրքերեն *դարշըդարշըյա*:  
*դիւրմիւրմը* «քիչ առաջ». օրինակ՝ *դիւրմիւրմը իզիք* «քիչ առաջ՝ դեռ նոր եկավ». թուրքերեն չկա նման բառ, ուստի կարծում եմ, որ այս բառը կազմված է հայերեն *դեռ* + պարսկերեն *bāhām* «միասին» բառերից (թեև բարբառում չկա *դեռ* բառը, բայց այստեղ պահպանվել է):  
*Դուրումէ* «դուրս». օրինակ՝ *դուրումէ զնօ* «դուրս գնա», *դուրումնաց* «դրսից». օրինակ՝ *դուրումնաց իզիք* «դրսից եկավ»:  
*Դօղըրը* (< թուրքերեն doyrusa) «իրոք էր, ճշմարիտ որ»:  
*Յիդըդիմ* «ետևից». օրինակ՝ *միզմիզի յիդըդիմ իզէն* «մեկ մեկի ետևից եկան»:  
*Յիվի* «երբ». *յի՞վի իզիք* «ե՞րբ եկավ». *յիվվընէ՞* «երբվանի՞ց»:  
*Իրիսունց* «երեսանց»:  
*Իրիդ՝* «երեկ», *իրիդ չէ միզաննուրը* «երեկ չէ մյուս օրը» (տես՝ §130):  
*Ուղդիլում* «երթալով, հետգհետե». օրինակ՝ *ուղդիլում գողվընց* «երթալով կաղվորնա, գնալով գեղեցկանում է»:  
*Դիզիդիմ* (< թէ *գիտեմ*) «կարծեմ», *դիզիդիս* «կարծես», *դիզիդէ* «կարծում է», *դիզիդիք* «կարծում եմք», *դիզիդիք* «կարծեք», *դիզիդին* «կարծեն». օրինակ՝ *դիզիդէ իս զնցում իմ* «կարծում է թե ես զնացել եմ»:  
*Դիլը* «հնչպես». օրինակ՝ *դիլը իս* «հնչպե՞ս ես»:  
*Ասիլն իքնան* «ասելու միջոցին, հենց այդ միջոցին» (թրգմ. թուրքերեն *der iken* նույնաձև ոճից).  
*Ուշէդ շուտ*. օրինակ՝ *ուշէդ արէ* «շուտ արի»:  
*Չա՞ հո՞նչ* (< պարսկերեն *čā, čī*), *չվա՞ համուր* «ինչու»:  
*Նա՞դուր* «ի՞նչքան» (< թուրքերեն *ne qadar*):  
*Իշըն* «ահա» (< թուրքերեն *işte*):  
*Գնամուց* «կամաց», *զնամուց* *զնամուց* «կամաց-կամաց», *զնամցէօզ* «կամացուկ», *զնամցէօ մը* «կամացուկ մը»:  
*Ուխդիլ* «կանուխ»  
*Հն՝ հն՝, այր՝*, *ամվիդ* «այր՝» (թուրքերեն *evvet*):  
*Հնթօ* «հապա, իհարկե»:  
*Հըմմէ՛* «հրաման, ի՞նչ ասացիր»:  
*Հնվի* «դեռ» (< թուրքերեն *hele*):

Հիրաք «հերիք, բավական»:  
Հոռո «հեռու», հոռոքում, հոռոկում «հեռվից, հեռվանց»:  
Հիրո «հերու, անցած տարի», հիրվուն, հիրվը «հերվան, անցած տար-  
վան»:

Համո «հիմա», համապետ «հիմակուց, այժմվանից», համազգլը «այժմ-  
վանից»:

Հուս, հուդ, հուն «հոս, հոդ, հոն», որ և յամսիր, յամիր, յամիր կամ  
յըսսիր, յիդիր, յիմիր «այստեղից, այդտեղից, այնտեղից», յասդիդեօնը,  
յադդիդեօնը, յանդիդեօնը «այս տեղերը, այդ տեղերը, այն տեղերը»:

Բիրդան «հանկարծ» (< թուրքերեն *birden*). Կլա մեկէն ձևը:

Միգդիդ «մեկտեղ, միատեղ, միասին»:

Միգդէն «մեկդի». օրինակ՝ միգդէն գնա «մեկդի գնա»:

Միջ՝ միջը, միջին «մեջ, մեջը, միջից», միջիրը «մեջերը»:

Նա «ահա», ըսգո «ահավասիկ», ըդգո «ահավաղիկ» (չկա ընգո), դէնգո  
«ահավանիկ»:

Նըզն «ներսը», նըզնում «ներսից»:

Նիր «նոր, հենց այժմ». օրինակ՝ նիր իգիք «հենց նոր եկավ»:

Ծիր «շատ», շիր մը մատդաք «շատ մը մարդիկ»:

Իւդիրդ՝ «ուղորդ, ճիշտ» (չկա շիտակ), իսի-իւդիրդ՝ «շիսի-շիտակ,  
շատ ճիշտ»:

Անգուն «անագան, ուշ». օրինակ՝ անգուն իգիք «ուշ եկավ»:

Չէ «չէ, ոչ»:

Դըրգըսս «այսպես», դըրգիդ «այդպես», դըրգին «այնպես»:

Սանքի «իբր թե» (< թուրքերեն *sanki*):

Սըդում «սրտով», սըդում «սրտանց». օրինակ՝ սըդում գուզիմ  
«սրտանց կուզեմ»:

Վիդը «վաղը», վաղընք «վաղվա, վաղվանից», վաղընք հուցը  
«վաղվա հացը»:

Ըրվա «վրա», ըրվաս, յըրվաս «վրաս», ըրվադ, յըրվադ «վրադ», ըրվան,  
յըրվան «վրան», յըրվին «վրանիս», յըրվինդ «վրանիդ», յըրվինդ  
«վրանիս»:

Դիքը «տակը», որ և վըրքը (ոտքը):

Դիդնուդիդ «տեղնուտեղը»:

Բ՛անը «քանի՞», ք՛անը հուդ «քանի՞ հատ»:

Բէչ «քիչ», քէչ մը «քիչ մը», քիչգէտ մը «քիչիկ մը»:

Բուվ «քով», քուխ «քովս», քուխդ «քովդ», քուխն անց «քովն  
անցա»:

Ուրի ուր «որե՞ որ, օրից օր»:

Խուր «այսօր», ադ ուրը «այդ օրը», ան ուրը «այն օրը»:

## ՇԱՂԿԱՊ

Այլ «այլ, ալ, էլ». իս ալէ, դոն ալէ, ան ալէ «ես էլ, դու էլ, նա էլ»:

Ըմը «բայց» (< արաբերեն *ammā*):

Դը դըրգան է «եթե այդպես է, ուրեմն»:

Դե («< թուրքերեն *o > de*») «և ապա». գիրո դե իգա «կերս և ապա եկա»:

Դիդ («< թուրքերեն *deyu*») «իբր թե»:

Զիրա («< պարսկերեն *zīrā*») «որովհետև»:

Ագը («< պարսկերեն *ägär*») «եթե», ագը քի «եթե որ, թե որ»:

Իսս («< թուրքերեն *ise*») «երբոր». մինք իգունք իսս «երբ մենք  
եկանք»:

Հաքո «ապա, ուրեմն». հաքո ո՞վ է կամ հաքո ո՞վն է «հապա ո՞վ է»:

Համ «թե» («< պարսկերեն *ham*»). համ իս, համ դոն «թե՛ ես, թե՛ դու»:

Ծա «կամ» («< պարսկերեն *yā*»). յն իս, յն դոն «կամ ես, կամ դու»:

Ծոխս («< թուրքերեն *yoqsa*») «թե ոչ». օրինակ՝ յոխսս չըմ ուգո «թե՛ ոչ  
չեմ, գա»:

Ու «և, ու». օրինակ՝ իս ու դոն «ես ու դու», մուդ ու գընաք «մարդ ու  
կնիկ», հուց ու քանդը «հաց ու պանիր»:

Բի «թե, որպեսզի» («< պարսկերեն *ki*»). օրինակ՝ դիսով քի իս իմ  
«տեսավ որ ես եմ»:

## ՋԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ա՛խ, ա՛հ. նշան ցավի, զարմանքի, վրեժի

Աբրէ՛ս «ապրի՛ս, կեցցե՛ս» (մեծից փոքրին է ասվում)

Բ՛արիվ «բարև, ողջույն»

Բէ՛ («բայց հետո կամ նախադասության վերջում իբր նշան հաստատ-  
ման). ինչպես՝ աջն բէ՛ «ասացի բէ», գնո բէ՛, դոն աջիր բէ՛ «գնա բէ՛, դու  
ասացիր, բէ՛»

Է՛ «բավական է»

Է՛հ (անփոյթ վերաբերմունքի համար)

Է՛յ, հէ՛յ (մարդ կանչելու համար)



Իռնի՛գ «երանի՛ թե»

Թի՛ւ (զգվանք)

Հա՛ («այո», նաև սպառնալիք)

Հա՛րո՛ «հապա՛, իհա՛րկե» (նաև ծաղր)

Հա՛յ գիդի հա՛յ (զարմանք, ափսոսանք)

Հա՛յդէ. հոգնակին հւյդիք «օ՛ն, դե՛հ» (շարժվել հորդորելու համար)

Միխ՛ք, միխ՛ք, հազգու՛ր միխք «ափսո՛ս, ափսո՛ս, հազա՛ր ափսոս»

Մեղա՛ կամ միղօ՛ (առաջինը գրաբարից է և ավելի սովորական)

Թի՛ւդ բու՛ն «շա՛տ բան» (զարմանք արտահայտելու համար). Պոլսի

բարբառում թուրքերենով միասին ասում են «չօ՛ք շէյ» «շա՛տ բան»:

Օ՛ (զարմանքի համար). ինչպես՝ Օ՛, դօ՛ն ալի իգիր «Օ՛, դու՞ էլ եկար»

Օ՛հ, օ՛խ (ուրախության)

Ու՛ֆ (ցավի համար)

Վա՛խ, վա՛՛, յազը՛խ (ափսոսանք)

Բէշգը (< թուրքերեն kyāşki) «երանի՛ թե»

Օ՛ֆ, ի՛նֆ (ձանձրույթ)

Բ՛ալօ «քա՛» (կին կանչելու համար). օրինակ՝ ք՛ալօ գնագ (բայց

արականի համար ծօ՛չկա)

Հավ կանչելու համար՝ ջու՛ ջու՛ ջու՛. վանելու համար՝ քքք, քքա՛

Շուն կանչելու համար՝ գո՛ջ, գո՛ջ, գո՛ջ... վանելու համար՝ ու՛շո՛

կատու կանչելու համար՝ փ՛ս, փ՛ս, փ՛ս. վանելու համար՝ փս՛թ:

### ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Բարդ բառերի կողմից հարուստ չէ Սվեդիայի բարբառը. ահա մի քանի օրինակ.

Ծիւղվիրէն «տաքարյուն» (շիւղ «տաք» + վիրէն «արյուն» բառերից կազմված)

Բիւղվիրէն «սառնարյուն» (բիւղ «պաղ» + վիրէն «արյուն»)

Հալըգոնէջ «հավի ջրաման» (հալ+կրիճ)

Մախըրէջ «մոխրաջուր» (լվացքի համար)

Մախըմուն «մոխրաման» (սա մի տեսակ գուռ է, որի մեջ լցնում են մոխրաջուրը և լվացքի շորերը դնում են մեջը)

Թըրըհալուդ «թերահավատ»

Յիրմիւդ «ցորենի մաղ, ձարմաղ»

Թիւդըրհուց «թոնրի մեջ եփած հաց»

Գ՛աթըրհուց «կաթով շաղված հաց»

Բաւդըրհուց «պանրահաց» (թոնրից հանած տաք-տաք հացին քսում են ժածիկ ու վրան սոխ մանրում, իսկ ժածիկ չեղած դեպքում պանիր են քսում)

Ջըրըբալիգ (ջուր + բալիգ = պարիկ) «բորենի»

### ՎԵՐՋԱՄԱՆՅԵՐ

—ական > —գուն. բարբառիս մեջ այս մասնիկը անսովոր է. վերը (§294) տեսանք, որ բաշխական թվականների մեջ վերացել է. սովորական բառերից ունենք մուրացկան > մուրացգուն, որից երևում է, որ սղմամբ դառնում է —գուն. ուրիշ դեպքերում պահպանված է —գան, —ագան ձևով, ինչպես՝ թաղագան, լալգան, ամսագան, դարեգան:

Այս բոլորը գրականի՞ց է փոխ առնված:

—ան > —ուն. օրինակ՝ խաճճուն «խածան», շոռուն (բայց է շոռան), մուռդ՝մառդասուն...

—անց > —ունց. ամութըփիրունց «անոթիփորանց», գիշիւլունց «գիշերանց»

—անք > —իւնք. համրիւնք «համրանք»

—աւոր > —վիր. ունիվիր «ունևոր», չունիվիր «չունևոր», հարսնըվիր «հարսնևոր», մուրըբվիր «մորութալոր», ժամվիր «ժամվոր», փալիւցնիւլիր «փաթթոց ունեցող, փաթթոցալոր (մուլլա):»

—է > —ը (ցույց է տալիս ինչ նյութից շինված լինելը). ինչպես՝ քնորճ «քարից», փիդճ «փայտից», իսգըրճ «ոսկորից», առճըրճ «արծաթից», իսգը «ոսկուց»:

—ենք > —իւնք (ցույց է տալիս ազգատոհմ). ինչպես՝ Ագիփիւնք «Ակոբենք», Իսիփիւնք «Հովսեփենք», Արթիւնք «Արութիւնք», Գ՛աթըրիւնք «Կարապետենք»:

—իկ > —ալ (նվազական կամ փաղաքշական). ինչպես՝ հալցալ «հատիկ», բիգիւլալ «փոքրիկ բոկեղ», փիրալ «փորիկ», քնթալ «քթիկ», բիւնալ «փոքրիկ բերան», թշալ «թշիկ», ալընըալ «ականջիկ», վըրըալ «ոտիկ», վգալ «վզիկ», քնիւցըալ «քաղցրիկ», ալիւլալ «անուշիկ», բայց և ձառնոգ «փոքրիկ ձեռք», որ է «ձեռնուկ»:

—կոտ > —գիւդ. վախկոտ > վախգիւդ, ամաչկոտ > ամըշգիւդ, պարծենկոտ > բարըրըգիւդ, խլըքոտ > խլըքիւդ:

—կան > —գուն. ինչպես՝ դիմացկան > դիմացգուն, որ և թուրքերեն դա-յաղլա:

-ունկ > -ուկ. ինչպես՝ խորունկ > խունուկ

-ծու > -ծո (կազմում է ածական). ինչպես՝ պահածոյ > բիհրձո, շինածոյ

> շինձո:

-անոց > -անից. ցույց է տալիս՝

1) դրամական արժեք. ինչպես՝ 2 փարանից, 3 դ՛ռնից, 1 լիռանից, 1 մաքրից, 5 ֆոնդից, 1 ռուսից

2) գին. ինչպես՝ սղնից «թանկանոց», ըռոտից «էծանանոց».

3) տեղ ցույց տվող մասնիկ է. ինչպես՝ հանրանից «հավանոց», միջնանից «մեղվանոց», գրքանից «գերեզմանոց».

4) շոր կամ հագուստեղեն. ինչպես՝ թիվնից «թևանոց». — իսկ «գոգնոց» բառի փոխարեն Հաջի-Հաբիբլին գործ է ածում թուրքերեն էօնգլիզ, որ Պոլսի հայոց մեջ կա էօնգլիզ ձևով, իսկ Յոդու-օլուկը թարգմանել է առջևնից. թուրքերեն գէշալըզ «գիշերանոց» մնում է նույնպես:

-ոս > -իւղ. ցույց է տալիս այն բանից ունեցող կամ շատ ունեցող կամ նրան քսված, նրանով կեղտոտված. ինչպես՝ քնքիւղ «քարոտ», խիւղիւղ «հողոտ», իլիւղիւղ «ալրոտ», միւղիւղ «մեղրոտ», իղիւղ «եղոտ», քնքիւղ «քաքոտ», միւղիւղ «աղոտ», ջրիւղ «ջրոտ», սրոտիւղ «սրտոտ», մրսսիւղ «մսոտ», հրնիւղ կամ հրնիւղիւղ (սրանք նշանակում են «կտոտ, կորիզոտ», առաջինը ծագում է հնտոտ ձևից, երկրորդը՝ նրա հոգնակի \*հնդերոտ ձևից, որ այլուր անսովոր է), փրջիւղ «փշոտ», գրագիւղ «կրակոտ», արցընքիւղ «արցունքոտ», մառցունքիւղ «մոռացկոտ, Պոլիս մոռցունքոտ», վիռիւղ կամ վիռիւղիւղ «որդնոտ»:

-ով > -ով (գործիականի մասնիկն է, որ կազմում է ածական). ինչպես՝ համով-հիդով «համով-հոտով», շինքով-շինիւղով «շենքով-շնորհքով», խիւղով «խելոք»:

-ոց > -ից (գրեթե նույնն է՝ ինչ որ -անոց). օրինակ՝ փառից «փաթոց», ձածգից «ծածկոց», բիռնընձմից «բերանի ծամոց, բամբասանքի առարկա»:

-ութիւն > -ութիւն. օրինակ՝ հաստութիւն «հաստութիւն», բնագութիւն «բարակութիւն», միանութիւն «մեծութիւն», բրզգութիւն «պատկութիւն», գնորդութիւն «կարմրութիւն», միջնորդութիւն «աղվորութիւն», չմիջնորդութիւն «սգեղութիւն»:

-ուկ > -ուկ, -իւկ, -օկ. կազմում է նվազական կամ փաղաքշական. ինչպես՝ բնիւկ «պաղուկ», շիւկ «տաքուկ», գնորդուկ «կարմրուկ», հարսնօկ «հարսնուկ», միսքնիւկ «աղքատիկ», բնիւկ «բանուկ», նակ

նրսիւկ «նստուկ, նստած», գնիւկ «կայնուկ, կանգնած», խննդուկ «խածնուկ». — ուրիշ նվազականներ են՝ դիւկ «տղեկ, փոքր տղա», բնագութիւն «բարակիկ»:

-ուք > -ուք (գոյական կազմող). ինչպես՝ քննուք «քանուք, քանած քանուք», միջնորդուք «մանրուք», փշուք «փշրած մասը, փշուք», միսք «մսմտուք», սիրոյնուք «սիրտ խառնելը», քննուք «քաշքշուք»:

-ուն > -ուն. կերտում է ածական. ինչպես՝ հիւսն «եփում, լավ եփած»:

-ուց > -ուց, -իւց, -ուց. կազմում է մակբայ և ածական. ինչպես՝ հնիւց «հնուց», յառանջուց «առաջուց», բրզգուց «պատկուց», բիռնուց «բերանացի, բերնուց», դիւց «ձվի դեղնուց», բնագութիւն «սպիտակուց»:

-ողէք > -իւղիւղ (նշանակում է աշխատավարձ). ինչպես՝ իշիւղիւղ «բժշկի վարձը», բնագութիւն «բանելու վարձը», գնորդիւղ «կարելու վարձը», փրջիւղիւղ «փորելու վարձը», վիսգիւղիւղ «վեցկիով հերկելու վարձը», ընձիւղիւղ «հնձելու վարձը»:

-ուածք > -վուածք, վուածք (ցույց է տալիս գործողություն կամ նրա ձևը). ինչպես՝ ըլվուածք «վլածք», քիւլվուածք «քայլվածք», խուսվուածք «խոսվածք», նրսիւղվուածք «նստվածք», գնիւղվուածք «կանգնվածք»:

-ցի > -ցա (տեղացի է նշանակում). ինչպես՝ քննիւղցա «քաղաքացի», գիւղացա «գեղացի», քննիւղցա «քեսաքցի», հնիւղցա «հալեացի», գնիւղցա «գնիւղցացի», մարաշցա «մարաշցի», շամցա «Դամասկոս կամ Օամ քաղաքից»:

-ցու > -ցո (հատկացում է ցույց տալիս). ինչպես՝ փիսնցո «փեսացու», հարսնցո «հարսնացու», շարքցո «շապկացու», վարդըցո «վարդիցացու», ջրբրիցո «ջուրբա շինելու կտոր», արբիցո «արբացու»:

-անակ > -ընթօկ (ցույց է տալիս ձև, կերպ). ինչպես՝ խիւղնթօկ «խիւղ պես», քիւղիւղիւղ «հայերեն, քրիստոնյայի լեզու»: (Ըստ «Ալեակներ», էջ 217, այս մասնիկը Յոդու-օլուկում ունի -ընթօկ ձևը և բացի «ձև, կերպ» իմաստից, նշանակում է նաև «լեզու»). ինչպես՝ իշընթօկ «էշի պես», ուրջընթօկ «արջի նման», խնընթօկ «զծի նման», դիւկընթօկ «տանկերեն», հոմընթօկ «հոմերեն», թաթընթօկ «ֆելլաբի լեզու», քիսընթօկ «հայերեն»:

### ՕՏԱՐ ԲԱՆԵՐ

Սվեդիայի բարբառի օտար բառերի շարքում առաջին տեղը զբաղեցնում է թուրքերենը: «Ալեակներ», էջ 218, ասում է այս մասին. «Հաճախ այդ պարագան այնքան ցավալի համեմատություններ կան, որ գրեթե ամ-

բողջ նախադասությունը թուրքերեն կըլլա ու հայերենի ձևը միայն կպահ-  
վի»:

Չեմ համարձակվում ասել, թե արդյոք Սվեդիայի բարբառը թուրքերեն  
փոխառյալ բառերի քանակով գերազանցում է Պոլսի հայոց բարբառին:  
Միայն նկատելի է, որ երբեմն Սվեդիայի բարբառը թուրքերեն բառ է  
գործածում նույնիսկ այն դեպքում, երբ Պոլսի հայոց բարբառը հայերեն  
բառ է դնում. այսպես, օրինակ՝ Սվեդիայի բարբառում *միլմի* «այո՛»,  
*դ'անշէն* «դիմացը», *միքթեմբ* «դպրոց», *դ'աղվօ* «կոնիվ», *յալընդըզ* «մենակ» և  
այլն բառերը (թուրքերեն evvet, qarşu, mekteb, qavga, yalənox) բառերը  
ազատ գործածություն ունեն և նրանց հայերենը անծանոթ է Սվեդիայի  
բարբառին. մինչդեռ ընդհակառակը՝ Պոլսի բարբառը միշտ և ամեն տեղ  
դնում է նրանց հայերեն ձևերը (*հա*, *դիմացը*, *դրոց* կամ *դրբադում*, *գոհվ*,  
*միմագ*) և համապատասխան թուրքերեն բառերը երբեք չեն գործածվում  
հայերեն նախադասությունների մեջ:

Փոխառյալ բառերի շարքում երկրորդ տեղը գրավում են արաբերեն  
բառերը, որոնցից մի քանիսը վկայված են մեզ նաև հին կամ միջին  
մատենագրությունից. այսպես են՝

խուպագ > *խուբագ* «մոլոշ» < արաբերեն xubbāz

հապալաս > *հըմբալուս* «մրտենու պտուղ» < արաբերեն habb-al-ās

որիզ > *ըռոզ* «բրինձ» < արաբերեն aruz

պատեխ > *բադիխ* «սեխ» < արաբերեն battix

շումրայ > *շումբրա* «վայրի սամիթ» < արաբերեն šumra

քուշնայ > *քուշնօ* «վիզն» < արաբերեն kušnā

քուտաթ > *քուռութ* «վայրի պրաս» < արաբերեն kurrāt

Այս բոլորը բուսանուններ են:

Դժվար է որոշել, թե սրանք հին փոխառությունների շարունակու-  
թյուն են, թե՞ նոր փոխառություն արաբերենից: — Հնչյունափոխությունը  
ընդհանրապես հին է:

Եվրոպական փոխառություններից երկուսը՝ *արմօն* «պահարան» և  
*հանօր* «բաժակ», որոնցից առաջինը մնում է Ջեյթունի բարբառում և երկ-  
րորդը Հաճընի բարբառում, չեն պահպանվել այստեղ:

Բայց Սվեդիայի բարբառում պահպանված է եվրոպական *պարոն* բա-  
ռը *բադիւն* ձևով և հին ֆեոդալական նշանակությամբ, որ է «հարուստ հո-  
ղատեր անձ, որ մուրաբաներ է պահում»:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

## ՆՄՈՒՇՆԵՐ ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻՑ

**ԱՌԱՄՆԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ**

(Քաղված դոկտ. Մ. Սալբիի «Ալեակներ և խլեակներ, հայ վրահաքաղաքին տարեգիրքը» հատորից, տպ. Ալեքսանդրիա, 1919թ.)

**Յողուճ-օլուկի բարբառով**

Էլընկէչ, գըխը կիփէչ, իս կիփչիմ, դէուն հիչչի (էջ 113):

Էնէի՛շ խմիցիր էսու էր՝ կուտալ մը շէր կը խմի (էջ 133):

Քարթուփ լերի՝ հէխիւն էրի (էջ 133):  
Ուձէն խիթէուն պարնէն շըքիւն կը վէխնու (էջ 142):

Մէղէ ծեղկէն կը վիլի, չըրքըն մարդաուն չվիլի (էջ 142):

Ջունաուղ գմորէք չկարնուր պըհել (էջ 142):

Լիշէս կը թուքցնես՝ հիրէյըս չըմ թուքըցնի (էջ 180):

Ջէղուլ ձէգ կտընցիւն կալխուայ (էջ 180):

Եւութը ծուփիւն մէյ մը կուփիւն (էջ 180):

Դիրիվիր թըղ թուքնէու՝ մըգանքի, դիրիվար թըղ թուքնէու՝ մուրէքի (էջ 180):

Քէն գէշ ետանը եախըրը մը մննէր (էջ 180):

Շաուն գէգէն չփրցնիր (էջ 180):  
Ջէիւթ չէու էփսըսնու՝ գիւրդընի՞ցն է չէս էփսըսնու (էջ 180):

Մուրէկնէյն չէնթիւն մէիւր կուտի (էջ 180):

Դէնէը գէր տէք չկարնուր կիփիլ (էջ 193):

**Թարգմանությունը**

Անվանակից, գլխի կոփիչ (թակ), ես կոփիչ եմ, դու հաչի՛ր (կատակ):

Անուշ խմեցիր ասա իրեն, մի կուծ ջուր կխմի:

Որոգայթ լարի՛, հախիցը արի՛:  
Օձից խայթվածը պարանի շվաքից կվախենա:

Մաղիկը ծաղկին կվայելի (կսագի), տգեղ մարդուն չի՛ սագի:

Ջունասչիւն իր մորուքը չի կարող պահել:

Դիակիս վրա թքել կտամ, երեսիս թքել չեմ տա:

Խորամանկ թոչունը կտուցից կըռնվի:

Յոթը ծուփց, մեկ կուփց (շատ ջուր խառնած կաթ):

Վերս թքես՝ բեղեր, ներքս թքես՝ մորուք:

Էշից առաջ ախոռը մի՛ մտնի:

Շունը իր պոչը չի գցի:  
Հարդը չես ափսոսում, հարդանո՞ցն էլ չես ափսոսում:

Մուրացկանի տոպրակից մուր (մուրացած կերակուր) կուտի:

Դանակն իր կոթը չի կարող տաշել:

Վառուծ արտէն մէգիյիս մը ցէնիր (էջ 193):

Կիրէտիրէն գիլէն լայս իշէյր, ո՞ւլ տիսէյր. – հավու՞թ (էջ 194):

Լէիւրը լիւրրէուն ըրվան իղէյր, տէունը տէուն ըրվան չիղէյր (էջ 194):

Ուձէն խիթէուն քնէցէյր, քէղուն փէիւր չէ քնէցէյր (էջ 194):

Եէբէ կիփէ, դընկէ կը թէփի (էջ 194):

Լէու, իղու, եականը ինկու (էջ 194):  
Մկէուն շէիյր ծուփէն ջրէն շու կունա (էջ 194):

Շաուն խաթըր թը չունա, շէուն տի՞րն է խաթըր չունա (էջ 194):

Հէ՛յ հէ՛յ, էյշ ձրէյր, պէտէնը ցրցքուէյր (էջ 194):

Ջէգիրէյն վէխնէուղ կիրըկ չցէնիր (էջ 194):

Մեճ ջուր առնէուղ չկարնուր գարկիր (էջ 194):

Պզտէ կ՛իձգի գքէուր, մէյնձ չկարնուր վիրցնէյր (էջ 194):

Տէ՛ու ընձի ունկըզը հէուտ մը, աճ է փէիւտ թըղ ըննու (էջ 216):

Մէ գմէ չտէրէյր՝ գէիլն է խէյր հէյտ (էջ 216):

Ըրկը խէյվ ճամբը պէրէուն մը կտրէյր ըն, ըրկը խիլէք մէնձ թէյլ մը չկարցէյր ըն կտրի (էջ 216):

Էյշը մուրէուտ ըր կ՛իճնա, քէնգ տէյր կտրէն չըննուր (էջ 216):

Աստուծ կը տըսնա զլէյր, կը թիլլի գձայն (էջ 216):

Միոնէյլ պէգ տըսնէուս, էլպէթ

Վառած արտին մանանէխ մի՛ ցանիր:

Գյուղապետի գլխին լույս է իջել, ո՞ւլ է տեսել. – իր ծառա՛ն:

Լեւը լեռան հարմարվել է, տունը տանը չի հարմարվել:

Օձից խայթվածը քնել է, քաղցած փորը չի քնել:

Ափում կեփի, եղունգում կթափի:

Լու եղա, ականըն ընկա:  
Մկան շեղը ծուփ ջրին շահ ունի:

Շունը եթէ խաթըր չունի, շան տէ՞րն էլ խաթըր չունի:

Հէ՛յ հէ՛յ, էշը ցոնէ է, պատերն է ցրցքնվել:

Թոչուններից վախեցողը կորեկ չի ցանի:

Մեծ քար վերցնողը չի կարող գարկել:

Պատիկը կցցի քարը, մեծը չի կարող վերցնել:

Տու՛ր ինձ ընկուզի մի հատ, այն էլ թող փուտ լինի:

Մակում մուկը չի սեղմվել, ավելն էլ է քաշել հետը:

Երկու խև մի հաստ պարան են կտրել, երկու խելոք մի մանածի թել չեն կարողացել կտրել:

Էշը ցեխը որ ընկնի, տիրոջիցը կտրիճ չի գտնվի:

Աստված կտեսնի լեռը, կտեղա ձյունը:

Մեռնելը երբ տեսնես, իհարկե չերմատենդին կհավանես:

ցաուրտ մզրնա գէյէլ կ'ըննուս  
(էջ 216):

**ՄՈՐ ԵՐԳԸ**

*Յողու՜ն-օլուկի բարբառով*  
Գիշիր ցիրիկ կիրցուցա  
Ծագակ ծագակ թոցուցա...  
Հաշնալար իղու ընծի,  
Սիրտս, ճիկարս վատեցա...

Էմ էօսկի հէնտ,  
Էմ շաքրը թոփախ,  
Հագցուցա, կապցուցա,  
Ձիմ նագլէն նանըրցուցա:

Էմ սարվի ծուռը սա է,  
Էմ արծաթը թոսը սա է,  
Կը թոցնիմ, կը խաղցնիմ,  
Ուշէտ կը նանըրցնիմ:

*Թարգմանությունը*  
Գիշեր-ցերեկ կերցրի,  
Ծակից ծակ թոցրի...  
Շատ ափսոս եղավ ինձի,  
Սիրտս, շիգայարս վատեցի...

Իմ ոսկե հունդ,  
Իմ շաքարի գունդ,  
Հագվեցրի, կապեցրի,  
Իմ սիրելուն քնեցրի:

Իմ բարդի ծառը սա է,  
Իմ արծաթե թասը սա է,  
Կթոցնեմ, կխաղացնեմ,  
Ու շուտով կքնացնեմ:

**Ջրուցատրություն**

*Յողու՜ն-օլուկի բարբառով*

- Բերիվ քի, խնամա:  
- Բերու՛, Աստուծը բերի՜ն,  
խնամա, բերվիկիր, շըհէլ:  
- Բերու տիսընք, խնամա, սաղ օլ,  
շըհէ՞լ դէու՜ն է:  
- Եէու՞ կիցէ՛յր ըս:  
- Դա պաղչէ գացա, միր  
ուլընէլը քէնէրը սէպէխտէն  
քէղցուծ կէու պատչտին,  
գացա ըրկ ըրգ ցէխը ճէուղ  
բիրա իրինց, գաթը  
գպաղչըկնէ չօգտան  
չտեսէուծ, արիսացա ուրթում  
տըսնէում զը, էմէս մը իղէուծ  
ըր չգէցէուծ արի:

*Թարգմանությունը*

- Բարև քեզ, խնամի՛:  
- Բարև՛, Աստուծո բարի՜ն, խնամի՛,  
բարով եկար, ի՞նչպես ես:  
- Բարով տեսանք, խնամի, ողջ  
եղիր, դու ի՞նչպես ես:  
- Ու՞ր էի՜ն գնացել:  
- Դեպի պարտեզ գնացի, մեր  
ուլիկները առավոտվանից  
պոռչտում են, գնացի երկու-  
երեք ցախի ճյուղ բերի նրանց,  
արդեն պարտեզն էլ վաղուց  
չէի տեսել, ես ասացի գնամ  
տեսնեմ այն, մի ամիս էր եղել,  
ինչ չէի գնացել:

- Նէստ հէնչի հալա, ուխդէու է  
դառ: Ձիր բակլան տիսու  
իրիգ. կէտղիցէլը տղա.  
Քրըստիս ըրկը բիո բէկլու  
կէուի. ըմմը եղվիրէ ուղբ  
դրէլըքի:

- Ամա՛ն, պօյնու գօփսուն էր  
բէկլէն. չէնէյնզը, չէու  
թուղաու՛նի. հէմու աւայ  
հէրէմէյն՝ փախցուցա միջին:  
Ջաթը իս չըմ ուտէյզ ես, միր  
չուճըգնէն է կը խիվնունը  
դէյմ:

- Ջարար չունա, թըղ գուղնուն  
աւայ մընէցէուծ ձի հիրէք է:  
Չուճըգնէն չէու՞ց ըն:

- Էղվէլըն. խնամա, գձառըղ կը  
պէզգնի: Տարէուս ձիր  
Սէրգիսէն է, Միսաք  
նիշէնիցընք:

- Հէ՛յ տղայ հազգուր շիւնիֆիւր  
թըղ ըննու. գու՞վ ուզիցէք էր:

- Մօղտըսէն էշկէյն:

- Ըմմը՞ էշկէն, Ծէղէ՞յր:

- Չէյը եճըր պգտէ՛, Վիգթէուր.  
Ծէղէլը չէ՞ կըննու, դըզ  
Վիգթէուր էշկէն չգու միր  
գէլը. փառք Աստու՛նի թամ  
գբէղվըզնէս գըտընք.  
օճազգտէ, հէրէստ, բէնուղ,  
խիլըքուրթէյնը տէլը,  
կտրճութայնը տէլը,  
եղվըրութէյնը տէլը:

- Տէմէք եղվէ՛յր ի յէ:

- Չէ՞ու ասիս, քանգատ կըննու  
դէլը. էուրթ ուր կէսիս իշէյմի.

- Նասիր հանգչիր տեսնեմ, կանուխ  
է դէն: Ձեր բակլան տեսա երեկ.  
կատաղել է, այ տղա. Քրիստոս  
(վկա) երկու բեռ բակլա կա.  
բայց լավ որ աղբել եճք այն:

- Է՛հ, բակլայի վիզը պոկվի. ինչիս  
է պետք այն, բան չէն թողնում,  
հիմա նորից մի գող փախցրի  
միջիցը: Արդե՛ն ես չեմ ուտում  
այն. մեր երեխաները գծվում են  
նրա համար:

- Վնաս չունի, ինչքան էլ գողանան,  
էլի՛ մնացածը բավական է ձեզ:  
Երեխաներն ի՞նչպես են:

- Լավ են, խնամի, ձեռքդ եմ  
համբուրում: Տարոսը ձեր  
Սարգսին էլ, Միսաքին  
նշանեցինք:

- Հէ՛յ տղա, հազար անգամ  
շնորհավոր լինի. ու՞մ ուզեցիք  
նրան:

- Մահտեսու աղջկան:

- Ո՞ր աղջկան, Ծաղիկի՞ն:

- Ոչ, նրանից փոքրին,  
Վիկտորիային. Ծաղիկն ի՞նչ  
արծի. Վիկտորիայի նման  
աղջիկ չկա մեր գյուղում. փառք  
Աստուծո, ճիշտ մեր փնտրածին  
գտանք. ազնվատոհմ,  
հարուստ, գործունյա,  
խելոքությունը տեղը,  
կտրիճությունը տեղը,  
գեղեցկությունը տեղը:

- Ասել է գեղեցիկ էլ է:

- Ի՞նչ ես ասում, է՛լ այդչափ կլինի,  
կասես յոթը օր նայեմ նրան.

դա երէջվ կեռու էսի. «Դեռուն մը ձիթի, իս պըր ձիթիս». շիտ է շըհըծծէ ունի. դրեցճէր գուվիլ կեռու գուվէյնգ:

—Ըմսը կարդիլ չգիտիր թէխմընըմ:

—Ամա՛ն, խնամա, կարդիլին չէ՞ կըննի, անճագ կեռութուն սատանութեան կեռու ուսնէն. կտրէյն ի ես, գիղէցէն կընա կտրէն կը պիտա: Բէրը մնուս հալա:

—Բէրը ճամբըք, բերիվ իրեռու տննիցէյն:

արևին ասում է. «Դու մի՛ ծագիր, ես ծագեմ». շատ էլ խնայասեր է. հարևանները անչափ գովում են նրան:  
—Բայց կարդալ չգիտի կարծում եմ:

—Է՛հ, խնամի, կարդալուց ի՞նչ դուրս կգա, միայն գնում խորամանկություն են սովորում. չէ՞ որ կտրիճ է, գյուղացու կինը կտրիճ է պետք: Դե մնաս բարով:

—Բարի ճանապարհ, բարևի տննեցիներին:  
(«Ալեականեր և խլեականեր», էջ 232-234):

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ՝ «ՀԱՅՐ ՄԵՐ» Սվեդիայի Հաջի-Հաբիբի գյուղի բարբառով

Ուվ միր դուռը, քի լըրգէնքն իս. սետրի թըղ ըննօ քի անօնը. քի թաքնավիրութեանը դըղ ուֆօ. քի կուսքը դըղ ըննօ, չուցըր լըրգէնքը, դըրգան ավէ գիղէնը: Միր ամըն ավէտը հուցը դէտը մի իսուր. միր բուրթը մի բաղըշլամըշ իրեռօ, չուցըր քի մինք ավէ միր բարգգուննիրէն բաղըշլամըշ գու իննք. ըզմէ փուրցունքը մը դանէ, հաքօ խալըսէ չիւրին. չիւնքի քէնն է թաքնավիրութեանը, դուվութը, շարթաֆը, յախտեանս յախտեանց. ամսէն:

(Գրի առնված Հաջի-Հաբիբի գյուղի բնիկ Մասիս Փանոսյանից, 1929թ. մայիսի 22-ին, Երևանում):

### Նույնը Անտիոքի Քեսաբ գյուղի բարբառով

Էօվ մեր բիւրը, սուրի եղնի քէ անուն, քէ թէքէվիրութիւնը թըղ գօ, քէ իրադէթը ըննօ, չիւց ըր քիիրգյանքը, թըրգէն էլ ի գէղինը. մեր ամէն էվիր հօըցը դուր մեզ էս էվիր էլ. մեր բօրթը մեզի բաղըշլամուշ ըրօ, չիւց ըր քի մեքը գինօնք մերոնքը. վէշըզմեզ փօրցիութեան մի՛ դանօ. հաքօ խալըսօ ի չարէն, չիւնքի քէ է թէքէվիրութիւնը, շերէֆը, դուվթը, հավիդիինս հավիդօնից. ամօն:

(«Բիրակն», 1900թ., էջ 731)

### Նույնը, ամերիկահայ բժիշկ, բնիկ քեսաբցի, Մովսես Հովսեփյանի նոր թարգմանությամբ

Ուեօվ միր բուեօքը, սիւրփ թըղ ըննիու էնէտունըք, քիու թէքէվիրութեանը թըղ իւքի՛ւ. քիու իրադէթը թըղ ըննիու, չէտըր լըրգէնքը, ըննա իլի գիղէնը. միր է՛մըն էվէտը հուեօքը դէտու մի իսուեօք իլի. միր բօրթը մի(գ) բաղըշլամիշ իրօ. չէտըր քի մինք իլի գիննք միրնիրէն, վէ ըզմի փուրցունքը մը դէ՛նէ. հէբու խլըսի չերէն. չիւնքի թէքէվիրութեանը, շարթաֆը, գուվփթը քուօ՛յննի:

հ = Կօ

(Գրի առա գիտական ուղղագրությամբ, 1915թ. նոյեմբերին, Ռոստովում)

### Նույնը Արամի գյուղի բարբառով

Յա միր Դուդա իլ գուս յերգէյնքա. սարփ ըննու քու անանա. ու ուքու քու ըրքայութեանս ու ըննու քու ռադադ չուսմա գու յերգէյնքա, հանց ըննու ի գէղէնքա. գմիր հուցա ի ամէն չնուք դադա մի ըսցօր: Ու դղշէ գմիր բուրքա, չուսմա միք դղշինք միգմիգա բուրքէրա. ու չը սալմէս ըզմի ի փուրցունքա, լաքին ճաշջի ըզմի ի չուրքէյն. լաըն քու է ըրքայութեանս ու քուաթա ու ըձգահամակա լքի յերդայնք, ամսէն:

(«Հանդէս ամսօրեայ», 1907թ., էջ 27)

### «ԱՄԷՆ ԱՄԷՆ ԱՍԵՄ ՁԵՁ»

#### Սվեդիայի Հաջի-Հաբիբի գյուղի բարբառով

Իւղիւրթ իւղիւրթ գ՛ախմ ձէ, թը ցիրինն հուղը գիղէնը չիյնը ու միոնըր, էնք բաա գը մընօ, էգէր թը գը միոնա՛ շիւղ մահսուլ գուղօ: Ուվ ըր գէր հիքքէն գը սիրէ, թըղ թուղօ գան, վէ ուվ ըր յաս ավաշուր գէր հիքքէն գ՛աղէ, էբէղի հայաթէն գը բիհէ գան. ուվ ըր գէս գը սիրէ՛ յեմ իղդը դէն դըղ ուգօ, վէ իս յէտը ըր դըննըվէմ, էմ խըզմէթէն ավէ հուն բըր դըննըվա. էգէր մէյը գէս թը գը բաշտէ, էմ դուղը գան բըր բաղվէ:

(Թարգմաննք բնիկ Հաջի-Հաբիբի գյուղից հայրենադարձ վարդան քահանա վարդերեսյանը)

### Նույնը Սվեդիայի Քերուսի գյուղի բարբառով

Իս ձի գիւղիւրթ գէսիմ, թը ցերինը հէտը չիւնէյըր գիլդէյն ու միոնայը, էնք բէս գօ, ըմսը թը գը միոնա, շիւղ մահսուլ գօ դու: Ան ըր գէյը վիւշիւղը գը

սիրիյ՝ զան գը սիրի. օ ան ըր գէյր վիւջիւղը գը զօդդի (կաստի), յաս էխշօր էբէդի էօմըրէն գօ բըհի զան. ան ըր գէյս գը բաշդի՝ յէմ իղըը դէյ գօ գու. օ իս յէօր գօ գիւօմ, էյմ խըզվէթջին է հօմ գը գիւօ. թէ գէյս գը բաշդի, էյմ դօդն է էնիւր իքրամ գիւնի:

(«Բիւրակն», 1899թ., էջ 443)

**Մաղթանք Արամո գյուղի բարբառով**

Յա Ասդուն գիմ բունգունգա բիւց ու գիմ բէրունա նաղմի քու գօրշնութէյնա:

Օրշննալ համաքում ու բըթթը հաղայ ընթծնվազ սարփ էրօթթօթէյնա գ՛ուդա ու գ՛ըթթա ու գ՛օթէյն սարփա, համազալքի յէդայն յէդայնք. ամէն:

(«Հանդէս ամսօրեայ», 1907թ. էջ 27)

**Նախորդի գրաբարը**

Տէ՛ք, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո: Օրհնեալ համագոյ և միասնական, անբաժանելի Սուրբ Երրորդութիւնս, Հայր և Որդի և Սուրբ Հոգին, այժմ և միշտ և յաիտեանս յաիտենից. ամէն:

**Սաղմոս Արամո գյուղի բարբառով**

Յա Ասդուն, շադերա եղէյն նեղէյն յէյս. ու շադերա էլայն երվաս. շադերա ասէցայն գիմ զունձայն, թի չքազէր խալաս եր Ասդունձայն:

Հաքին դուն, յա Դի՛ր, նացրն իս ու գիմ օճճն իս ու գիմ զըլուխա բանցրացնուդա դուն իս:

Ողորմությամի քով, Դի՛ր, սադգէցօ գիմ չարգումս ու զամնայն նեղիչ իմ զօճճա, յաըն իմ քում արդն իմ:

Մաջդ Դուդա ու Ջըթթա ու Հիքէն Սարփա:

(«Հանդէս ամսօրեայ», 1907թ., էջ 27)

**Նույնի գրաբարը**

Տէ՛ր, բազումք եղեն նեղիչք անձին իմոյ և բազումք յարեան ի վերայ իմ. բազումք ասէին զանձնէ իմմէ թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր:

Բայց Դու, Տէ՛ր, յոյս իմ ես և ապաւեն անձին իմոյ և բարձրացուցի զլիսոյ իմոյ:

Ողորմութեամբ քով, Տէ՛ր, սատակեա գթշնամիս իմ և զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:  
Փա՛րք Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ:

**ՆՄՈՒԾ ՍՎԵԴԻԱՅԻ ԲԻԹԻԱՍ ԳՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌԻՑ**

Յազը՛ք, Մաթիւն ի դօն մընիւց

Ափսո՛ւ, Մարիմ տանը մնաց

Դուդը, մարը լիւր գացէն,

Հայրը, մայրը սարը գնացին,

Աշգէնը, դղան ի դօն մընացէն,

Աղջիկն ու տղան տանը մնացին,

Ո՞վ գիդէ չըվի՛ր շինիցէն,

Ո՞վ գիդի ինչէ՛ր արեցին,

Լաքին յազը՛ք, սունդը չիգիք:

Սակայն ափսո՛ւ, վերջը չեկավ:

Հաջի-Խաթիւից վուոթ քալիցա,

Հաջի-Հաթիբից վարդ քաղեցի,

Դլիխէս ըզխիւթը թըրցըցա,

Խելքս զլիխիցս թոցրեցի,

Գէջ դըրո ուշէդ գուրսնիցա,

Ուշ գտա, շուտ կորցրեցի,

Յազը՛ք, Մաթիւն ի դօն մընիւց:

Ափսո՛ւ, Մարիմ տանը մնաց:

Ուղնուլուխը շամբունգը փէօշ է,

Յողուն-օլուկի ճամփան փուշ է,

Աս սնվգիւլէս շիւղ անէօշ է,

Այս սիրելիս շատ անուշ է,

Իս գիդիմ գաթը էնք խօշ է,

Ես գիտեմ արդեն նա հանելի է,

Յազը՛ք, Մաթիւն ի դօն մընիւց:

Ափսո՛ւ, Մարիմ տանը մնաց:

Ջայնը գու գօ քույլօ քույլօ,

Ջյունն է գալիս փաթիլ-փաթիլ,

Մաթիւն ի դօն նադուն գու լօ,

Մարիմ տանն է նստած՝ լալիս,

Մարը գօտէ. «Ջազէօկ, մ՛նչօ,

Մայրն ասում է. «Ջազուկ, մի՛ լար,

Աս ուրիւր ուշէդ գ՛ասնօ»:

Այս օրերը շուտով կանցնեն»:

Ջայնը գ՛ուշնա բզդէգ բզդէգ,

Ջյունն իջնում է մանրիկ-մանրիկ,

Աշգէնը լըսսից անուց. «Սիւստ՛ք.

Աղջիկը լսեց, ասաց. «Լնէ՛ք.

Չըվա՞ր դըրիդ զըրըցէն մըդէգ»:

Ինչնօ՞ խոսքին արիւր մտիկ»

Յազը՛ք, Մաթիւն ի դօն մընիւց:

Ափսո՛ւ, Մարիմ տանը մնաց:

(«Հայուն տարեցոյցը», 1914թ., էջ 183-184)

— 2ա՞ կօտ: — Ի՞նչ կըսէ:

— 2ա՞ շինիցի: — Ի՞նչ ըրիր:

— 2ուզիմ գը: — 2եմ ուզեր (զայն):

— Կի՞ն: — Կըսէ:

— Մի՞նք իզգա մը կու՞նէք: — Մենք այգի մը ունի՞ք:

Մէօթը լուցցուվ, պիծոցուվ «մուրը լուցալ, պայծառացալ»:

Շաֆաղ քիշտից, ըրվընուց «շաֆագ զարկալ, երևցալ»:

Հէօրը կիշէ դիդէս  
Թը գիտիս պըր ուտէ զէս: «Երբ կնայի դեպի ինձ,  
Կարծես պիտի ուտե՞ գիս»

Տըպըտիու, տըպըտիու, իլայթա ծարքը, ալայ քարիը անվիր  
կիփուծ ինձ «սողոսկելուվ սողոսկելուվ, ելա մին և ծայրը, բոլոր քարերը լալ  
տաշած են»:

Իլէրը կը շանիճը, կըննօ հաս. խմիր թը կը դնիս իսէ, կըննօ քանցիուն  
հուց. խմիր թը չըր դնէ՝ կըննօ բաղըրջնա հուց. պզտէկ հանցէն կանսին  
դրանի, եատա դրանիկ. հանցէն բլէթ անի կանսին:

Եիբը հուցը սիճէն ըրվան կիփին առունց խըմիր, կըննօ բաղըրջնա  
հուց. թը խմիր կը դնէն՝ կըննօ քանցիուն եա խմիրուվ հուց:

Հիսսին կը շինին բիկիդ, զիլիպիկ, տանպկուց, մանիկ, փագլալա: Կը  
շինին շա՛րէ՛ որ կըլմանա կարմեր սօղուն:

-Մճուս բարուվ:

-Մճաս բարուվ:

-Ուրթուս բարուվ, եէօ՞ կուրթուս:

-Երթաս բարուվ, ու՞ր կերթաս:

-Քանիք կուրթուն: Չա՞ պըր  
պընտիս:

-Քաղաք կերթամ: Ի՞նչ պիտի  
ապսարես:

-Լէտը մը քսիս, կիս լէտը մէս,  
լէտը մը ըոոօգ, ըրք լէտը շաքքուր:

Լիտը մը քսիս, կէս լիտը միս, լիտը  
մը բրինձ, երեք լիտը շաքար:

-Գնօ, բարը ճամբուր:

-Գնա, բարի ճանապարհ:

-Բարը լայս, քիռա:

-Ասըծօը բարին:

-Չու՞ց իս, անվիր իս:

-Շնորհակալ իմ, անվիր իմ:

-Չու՞ց ըն չուճըգնէն. չու՞ց է էմ քիռիկէնը:

-Ալայը անվիր ին. մանասուս բարիվ կինին:

-Դէօ՞ք չուց իք. անվիր՞ըր իք. չուճըգնէն չու՞ց ին:

-Անվիր ին. ճառքիդ կը պանգնին:

-Եիբը ձեր անվիրութիւնը լը լսինք. մինք ըլի անվիր կըննունք:

### ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ

պուս, պանպէօկ, պանպիր

տուտ, եատա, տէտէլը

մար, եամա, մամայը, մուրը, միրիբ, միրիբէն

մում, մամին, մամիր, մամիրուն

տանտիմար, տանտիմուր

քըրմար, քըրմուր

տուն, սանին, սանիր, սանիրին

քիռա, քնէն, քիռաք, քիռուց

քիռիկէն, քիռիկիցուց

ամմա, ամմէն, ամման, ամմից

աղբրկէն, աղբրկիցուց

գիրտիկէն, գիրտիկիցուց, գիր

տալտիկէն, տալտիկիցուց, տալ

տանգրանրէ, տագր, տիգրուց, տիգիր, տիգիրէն

սկիսէօր, սկիսրէն

սկարար, սկարուց

դանցնա, դանցուց

դանցանա, դանցանէն

դանցապա, դանցապէն

### ՎԱՀՇԻ ԱՍՍԷՕԵՔ (ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ)

ուրջ, գալ, շիրիկ (բորենի), թիպիկ (շնագայ), տլքա, տաշվուն, քրփա,  
վէթ, խիդ, մըսթ (սանսար), մէօկ

Մուսա լեռան քիստինիքը ճիճա կը ծարին, թիթինէն տիրիվը կը  
քանիկ և զճիճաքը կելկին. եիբըր ճիճաքը կը միծնուն, շըռնըր կը շինին.  
շըռնըրը պիրիսէմ կը քիշին. պիրիսմըրէ քէֆէյէ, գուտայ և շիւտ մը դայրը  
դումաշնայ կը շինին: Ռանկ ունկ գիրկըվուծ պիրիսէմը շիւտ անվիր  
կըրվընու: Մուսա լիռը շիւտ մէշհուր է էր թիթինիհիրուն պաղչապիրուվը:

աղբար, աղբուր, աղբրտաք, աղբրտոց

քայր, քուր, քուրվտիք, քուրվտուց

Հէօրը շաֆաղը կըրվընու, առվըտուն կըննօ: Հէօրը անրիվը կը ձիթէ,  
սանպանթան կըննօ: Հէօրը անրիվը քէլ մը կը բանձրնու (ըրկը մասուսա)



գուշընդ կըննօ: Արիվը եիրը իսկ-իւղիւրթ կը կայնա, կիստուր կըննօ: Եիրը արիվը կը ցածնու դիրիվար, դիրիզկուոք կըննօ: Եիրը արիվը կը միրէ, մթնէօկ կըննօ: Եիրը շիտ մէօթ կըննօ, դպշտուց կըննօ, եիտտընի գիշիր կըննօ:

Բարը լայս, բարուվ քէ. բարըվկան. գիշիր բարա, քի լայս բարա:

### ՏԵՐՏԵՐԻՆ ԱՂՈԹՔԸ

- Բարը լայս, եամա:
- Ասըծօր բարին:
- Աս չըվը՞ ձան է:
- Կու ժամբըրին, ժամբըրը ձան է:
- Ըմմօ կիղիցիէն կուգօ:
- Վիրի կիղիցիէն կուգօ. Գիրը իրից մը իկիր է, պըր քարուզէ. կուգիք ուրթանք, անընճինք. շիտ անվիր կու քարուզէ: Ջաղ իրիցոն քարուզը շիտ կը գուվին. մուրդը եիրիկ անուրթ մը իրոց որ լըսիլու բուն իր: Դըրգաս անուրթից.

«Եա Աստուծ, տիծկոն գաչքը կուրցուր և գէօմըը քէչ իրօ: Ատուր մէ՛ ըրուծ գուլումը շիտ իղուվ որ ալ չու կարինք դիմանունք»: Ջմիր ճիվան կանճիրը ասքար տարուվ. գմիր ասսօնքը գալայը գապթ իրէօց. գեր աչքը տընկուծ է միր անշընդիւրէն և հարսնիւրէն ըրվան: Արթըգ չունինք ան՛ տօն, ան՛ տիղ, ան՛ ըրգուկ. խիվ, սէֆսէրէ կիվվինք: Ալ չը կարնունք համբըրիլ:

Եա Աստուծ, դօն իմտատա հասիր. գմե՛ խալիսէ եաս փուրձանքէն: Ջիտօ տիճէլը և գիտօ եԱսըծօմէ չվախնուղ, մուրտուր Ալամանը ուշէղ ուշէղ վիրցոր եաս անշարէն:

Փառք յաւիտեանս, ամմէն»:

### ԲՈՒՑՍԵՐ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Եիրը փախունք ու Մուսա լիոը իլունք, հիչ մէտքս չիր անցնիր քի մինք եաս լիոը պըր միոնինք տէլի, ըլլի Աստուծ պըր ազատիր գմե՛ — ացա:

Մուսա լիոը շիտ բունճը լիո մ՛է, հուն շիտ մէշինա կուն քի դայէթ սըղ ին. շիտ քիքէօրնա, եանի շրիր կուն: Մէշէլըքին միջ կուն մաննա, փշը

կաղնա, մանիկ կաղնա, տուսուխ, կասլա, փինա, մուսինա, անկղթիվ, աճրում, խնկինա, խզիրա, սուսա, դաղվինա, արտինա, բիվկինա, խարթլասպա, և շիտ մը թէվիր ծառիր: Հուն կուն շիտ մը ծանկընա, մանիշիկվորդ, անրկըս, սիմպէօլ հընտըգօգ, խուրուզը վարտաք, պախըր լիգօ, կաթնէօկ, ձաքը ճըռնակ, և շիտ մը թէվըր թէվըր ծանկընա և խիտօնք: Հուն կուն կաթուվ, թըսխարանկ, սումուն, անգիկ, միղվըքուվ, ճըղճու հուվ, ճնճող, պըրը խուրուզուկ, դըրդըվուն, ծիծոնակ, դարթուվ, քարքազ. շհան, անըրկանկ, պըրտըրճըն, չէտ. չըտը մէսը քան գալայը անէօշ կըննօ:

Հուն կուն շիտ մը մայվը ծառիր. տանճինա, խնճիրինա, դամսինա, մըշմըշա, դիղճինա, թօգինա, տիլլա, քրուգ, սընճինա, մուգինա, հըմպանու, մամէօխ, մըրմընթէօթ, թըթինա, թէօթ, բիվկինա, բիվկի:

### ԾԱՌ ՄԸ

*(Ապստամբության ատեն Յողուն-օլուկցի քաջին խոսած ճառն է)*

Դիրիվի՛ր, դիրիվի՛ր, դա՛ Մուսա լիոը:  
Եա՛ քիստիճի կարճնա, իլի՛ք, դիրիվի՛ր, դիրիվի՛ր, դա՛ Մուսա լիոը:  
Արթըղ՛ հիրաք է միր քիշուծ գուլումը: Իլի՛ք, դիրիվի՛ր, դիրիվի՛ր, դա՛ Մուսա լիոը, եան սէօր սէօր քիքընին միջ, եան սըղ՛ սըղ՛ մէշէնուն միջ, ետօրըր դարթուլը էր բայնը կը շինէ, ետօրըր տիճըլը վըտ չի կարնուր կիխէ: Դէօթ դըր ըզվէթ գիտիք զըմըն ծիկ, զըմըն ծոի դ՛օվուրնա: Տարիք զճիր միրիըր, զճիր քայրիըր, զճիր անշընդիըր, զճիր չօճըղճէն, և դրէք եատ սիյանաթըր տիղոնքը, եատ սարփիրուն միջը. դէօթ առէք զճիր սիլաննին ու շարվիցիք տուշմանին դիմը. կիխիցի՛ք գմըլլէլը, կիխիցի՛ք գմըլլէլը, թաքի տուշմանին մճէ մէկ հուտ սաղ չմնօ:

Չուցըր շահանը կիշնա ճնճըկին ըրվան, դէօթ ըլի դրգան փարա փարչա ըրիք զըսսօ գալըմ տիճէլը: Ջմիր ըմմըն բունը, միր վարեաթը, միր անմուսը վատուց Գիրքիվ կիխիլէն եիտտընի, համու ըլի կուգի քի գմիր տօնն ու տիղը, գմիր ազիզ վաթանը թուղունք տէ Արապիսթանի չէօլիրը ուրթունք իղիր: Աճապա չա՞ գիտանուն գմե՛, մէկէր մինք սիրիս մը մազաք, եա իշվա՞ ինք, քի առ ըմմըն բանին պըր համբիրինք:

Չէ՛, չէ՛, ախըրտաք, դէօթ, քիստիճի կարճնա, դիրիվի՛ր, դիրիվի՛ր, դա՛ Մուսա լիոը. հուն միր պապիրը գօլուր դալինա կունին, անինք ճանկ իրուն և վիրին ֆիթուն ին. մէկէր մինք անունց ասլայը պըր թուղունք միր աս

վաթանը և մուրտուր տիճկոն վատուցը տի՞ւքը պըր կիխիրտվի՞նք:

Եա՛ դե՛օք, քիստիճի անշկըճիր, չընար պօյլու անվիւր հարսճիր, առի՛ք զսիճիրը, հուց հիփիցիք ձիր աղբըրտուցը, շանկիցիք զճիր կըժիրը ու շէօր կրիցիք քիստիճի կտրճուցը:

Եա՛ ապանը յավրաք, քիստիճի կտրճնա, քիշտիցի՛ք, ճիտիցի՛ք, ըմմըն մըլլէկ թըղ տուշմուն մը սանկըցնի և տիճկը տօն մը թըղ անիւրկէ, չուցըր անիւնք քիստիճուց տընվանքը անվըրկիցիճն:

Իլի՛ք դիրիվի՛ր, դիրիվի՛ր, դա՛ Մուսա լիոը:

### ԺԱՌԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեպի վե՛ր, դեպի վե՛ր, դեպի Մուսա լեոը:

Ո՛վ քրիստոնյա կտրիճներ, ելե՛ք, դեպի վե՛ր, դեպի վե՛ր, դեպի Մուսա լեոը: Այլևս հերիք է մեր քաշած անիրավությունը: Ելե՛ք, դեպի վե՛ր, դեպի վե՛ր, դեպի Մուսա լեոը, այն սուր-սուր ժայռերի մեջ, այն խիտ-խիտ անտառների մեջ, որտեղ արծիվն իր բույնն է շինում, որտեղ տաճկի ոտք չի կարող կոխել: Դուք եղճիկի նման գիտեք ամեն ծակ, ամեն ժայռի ծմակ: Տարե՛ք ձեր մայրերին, ձեր քույրերին, ձեր աղջիկներին, ձեր երեխաներին, և դրե՛ք այդ ապահով տեղերը, այդ ժայռերի մեջը, դուք վերցրե՛ք ձեր զենքերն ու շարվեցե՛ք թշնամու առաջ, խփեցե՛ք զճղակը, խփեցե՛ք զճղակը, մինչև թշնամուց մի հատն իսկ ողջ չմնա:

Ինչպես որ բազեն կխոյանա ճճճողուկի վրա, դուք էլ այնպես պատառկտոր արեք այս անգութ տաճկին: Մեր ամեն ինչը, մեր ունեցվածքը, մեր պատիվը ոտքի տակ կոխտուելուց հետո, հիմա էլ ուզում է, որ մեր տունն ու տեղը, մեր սուրբ հայրենիքը թողնելով Արարիայի անապատները գնանք: Արդյոք ի՞նչ կարծեցին մեզ, մի՞թե մենք ոչխարների կամ ավանակների մի հոտ ենք, որ այդ ամեն բանին պիտի համբերենք:

Չէ՛, չէ՛, եղբայրճեր, դու՛ք, քրիստոնյա կտրիճներ, դեպի վե՛ր, դեպի վե՛ր, դեպի Մուսա լեոը. այնտեղ մեր պապերը ամուր բերդեր ունեն, նրանք մաքառել և արյուն են թափել, մի՞թե մենք այդ բոլորը պիտի թողնենք մեր այս հայրենիքում և կեղտոտ տաճկի ոտների տակ պիտի կոխտուվե՛նք:

Ո՛վ դուք, քրիստոնյա աղջիկներ, բարդու հասակով սիրուն հարսներ, վերցրե՛ք սաները, հաց եփեցե՛ք ձեր եղբայրներին, շալակեցե՛ք ձեր կուժերը և ջուր կրեցե՛ք քրիստոնյա կտրիճներին:

Ո՛վ առյուծ կորյուններ, քրիստոնյա կտրիճներ, հարվածեցե՛ք, խփեցե՛ք, ամեն զճղակ թող մի թշնամի սատկացնի և տաճկի մի տուն ավերի, ինչպես որ նրանք քրիստոնյաների տները ավերակի վերածեցին:

Բարձրացե՛ք դեպի վե՛ր, դեպի վե՛ր, դեպի Մուսա լե՛ոը:

### ԿԵՐԱԿՈՒՐ = ՈՒՏԻԼԱ

- Եամա, քանդում իմ, ուտիլա կուզիմ:
  - Չա՞մ ուտում քե՛, հուց իլէն պանէր կիր:
  - Չըվը՞ հուց է, ցիրիճը՞ հուց:
  - Չէ, կիրիկը հուց է:
  - Չըմ ուտիր զը, ալապայըր կուզիմ:
  - Բրդոճ, թափթոփ, գլուր շինիմ քի՛ կիր:
  - Չէ, չուզիմ զը:
  - Կիցիր, կրկիտ անպէօր մը իփիմ քե՛:
  - Մտուցս չու քիշէ:
  - Դեռպուր մը անցիր թը քանդում իս. դըդոս անպէօր իփիմ քե՛, եա տա թրխանօ տանակըտիմ քե՛:
  - Դօն գիտիս քի ատ բանիրը չուտիմ իս:
  - Հավկա՞յթ տանակիմ, քամա՞ խիշիմ, թը լանդիկ իփիմ քե՛:
  - Մէկեր իս չուճօ՞ղ իմ, քի լանդիկ պըր լանկիմ:
  - Հանաօ չա՞մ իփիմ քե՛, իչուցիս լայը: Հիրիսա իփի՞մ:
  - Մէկեր հարսնա՞ք կուճէճք:
  - Դրգատ է իսէ ըրրոգ անպէօր իփիմ քե՛ կիր, եխտըճի լանկար մ՛ըլի կէթ իսէ:
  - Չէ, չուտիմ զը:
  - Հա, մէտքիս ինկուվ, դօն միխօթ անպէօր կուզիս:
- «Այթը քան ըզբիճը եառանց,  
 Միխօթ անպէօրը քանիճը լառանց,  
 Իս դիգուլը առնիմ քան ըզբէ եառանց»:
- Կուզիս դիգուլը օո, կուզիս շիրիփը, իս չուզիմ զը:
  - Իչուցիս լայը, հապօ չա՞մ ուտում քե՛ ուտիս:
  - Քէ՛ մը քմսօն ու իղ ծիծէ տախտըկէն ըրվան, դիլէօս մ՛ըլէ սէօխ, կտուր մ՛ըլի կիրիկը հուց տէօր ընծէ, թաթխիմ, կէօշտ մը ուտիմ զը, չիւնքիւ շիտ քանիցում իմ:
  - Աղվիւր իշտահ կուճէս իղիր տօղրուսու:

## ՀԵՔՒԱԹՆԵՐ

Ա ռ ա ջ ի ն    ճ ե ք ի ա թ  
ՀԱՆՈՒԼ ՓԱՐԱ – ՀԱՐՈՒՄ ՓԱՐԱ

Կիցիր է, չկիցիր է, անընտրող մը որ ունիցիր է մար մը և հուրս մը. աս հուրսը ըրկընդհարաբ իղի է:

Ատ տղան կուրթո ղուրպէթ, մարդո մը քույ կը մըննա անպարթին կիճէ: Օիտ ժամանակ կը մնու եատ տիղը, խըզմէթ կիճէ:

Պատըր մուրդը ուրթո, աս հարսէն կըննո տղա մը. աս տղան կը միծնու, շիտ խիլիթ կըննո և գէր տանէն խարապը տօնը կը շինըցնէ շիտ անվիր տօն մը, դըրըզ սարայա, և շիտ հարէօտ կըննո:

Տուտը շիտ տարա կը մնո եան մարդօն քույը և խըզմաթ կիճէ:

Եատ վախթը հիչ խանուր չը ղուրկիր էր մուրը և էր հարսէն, ետ կիճիը և չա շինիը մուրդ չըր գիտիր:

Որ մ'ըլէ կուգու մէտքը էր հուրսը և էր մարը, կուրթու կան էր պարթիճէն. «Պարիւն, իս պըր ուրթում եւմ սիլան. ընծի իզին տոր»:

Պարիւնն ըլի կանէ. «Մէկէր դօն ունիցի» իս սիլա եա ֆամիլ եա»:

– Հէլպէթ, կանս մուրդը: Խօշ իս գիտնէն իլուծ չիմ եա, մար ըլի կուճէմ, կճէկ ըլի:

– Էկէր քի դըրգատ է իսէ, քէ բուխասթ ուտում որ ուրթու և բանիւղչիքիղ ըլի ուտում քէ. ըմմը չու'ց փարա կուզիս, հարու'մ փարա, թը հանուլ փարա: Հարում փարա թը կուզիս իսէ, շիտ կուտում քէ. հանուլ փարա թը կուզիս իսէ, քէ կուտում քէ:

Ատ պարիւնը եալըզվերիշէն ուզուծ փարան հարում փարա կը հիշվա իղի է, ըրգակէն ուզուծ փարան հանուլ կը հիշվա իղի է:

Մուրդը կանս. «Բանգաս վախթ իս քէ կու բանիմ, էմ ճակտէս հանուլ քուտէքը ֆիթիր իմ. չըմ առնիր հարում փարա, հանուլ փարա կուզիմ իս»:

Ան անտիը պարիւնը կը հանի կուտօ էր ըրք իսկա, և կանս. «Հանուլ փարա անճաղ քանգաս կարիմ ուտում քէ»:

Մուրդը կաննի գատ փարան ու կըննի կուրթո:

Օիտ կուրթօ, քէ կուրթօ, կը հասնա գիղ մը. էնքէնք կանս. «Չա' պըր մըննիմ եատ գիղը. հուս կը պառկիմ աս գիշիրը»: Ու կը պառկա գիղիճ երգիրը ծառէ մը տիկ:

Եանդիէն կուգօ հանիվիր մը ու կը նստա մարդօն քույը: Օիտ վախթ մը կը նստէն, ըմմը հիչ չըր խուսիմ միկմիկը հիտ: Է'ն եիտքը մուրդը կանս. «Է' պանպէտօկ, խուսի»:

Հանիվիրը կանս. «Խուսէմ ըմմը, էմ անըն գրէց իսկէ մ'է: Տէօր ընծէ իսկէ մը, կանսիմ քէ գրէց մը»: Մարդօն սապը կը թմա, կը հանի կուտօ էր իսկէ մը:

Հանիվիրը գիսկէն առուծը կիպը կանս. «Հէօրը կուրթուս ճամբուրդ, ետըջիվդ կուգօ գարնաչէ մը: Իչէ' և էվէտէ մ'ընիր ասնիլա. սապր իրէօ»:

Մուրդը կանս. «Է պանպէտօկ, պէս ա'տ է անուծի, ասօ գրէց մ'ըլլէ»:

«Չէ, կանս հանիվիրը, տէօր իսկէ մ'ըլլէ, անսիմ քէ գրէց մ'ըլլէ»:

Մուրդը կը տիւզընմը ըննօ քի չարէ չիգօ, կը հանէ, կուտօ իսկէ մ'ըլլէ: Ան անտիը հանիվիրը կանս. «Կուրթուս կուրթուս կը հաննիս գիղ մը: Իշէ', միսաֆիր մըննուր եան տօնը, եիբր տուն տիրը հանիվիր, ու կանայը կանն է»:

Կէնէ ճանը կտրից:

«Ասու գրէց մ'ըլլէ, պանպէտօկ», կանս մուրդը:

«Չէ, չէ, չըննուր, կանս հանիվիրը. էմ ըմմըն գրէց իսկէ մ'է: Տէօր ընծէ իսկէ մ'ըլլէ, անսիմ քէ գրէց մ'ըլլէ»:

«Աս չըվը' փուրձուճը ինկուճը, կը տիւզընմը ըննօ մուրդը, ըրք իսկա կուճէմ, զըրք մէյն ըլլի պըր առնէ»: Կը հանի կուտօ իսկէ մ'ըլլէ:

«Հէօրը կուրթուս ի տօնի, հանիվիրը կանս, չարըր կը տիսնուս աճէլէ մ'ընիր բուն մը ընիլա. սապր իրօ»:

Առվըտօն կիննէ կուրթօ էր ճամբուր: Օիտ կուրթօ, քէ կուրթօ կը հասնա դարնաչէ մը:

Կիշի դարաչէն իլուծ է: Կը տալմը ըննօ եատ չէօրը, էփէլի տիղ կուրթօ, կը տիսնօ քի չէօրը պըր առնէ գէնք: Ան անտիը մէտքը կը բիրէ. «Իս անտիր համուր իսկէ մը տվա»: Ետ կը դառնօ կը մստա ջրէն իզիրը»:

Յանդուճ կուգօ ձիւվիր մը, կը տալմը ըննօ ետ չէօրը: Մուրդը կը շուվտէ կը շուվտէ, կը քննդէ ձիօն անգէն, ձէնը կը խնէ գէնք կը տանա: Եիբր դարնաչէն կիսը հանուն, ձիւվիրէն դըլէտը կը տաշմա, ձիօն վիրիվէն կը թապիլա կիլնա ջրէն միջը: Մուրդը, որ ձիօն անգէն բռնուծ իր, սէլամէթ անցուլ եանդըդէն: Տիսուլ քի ձիւվիրը խղիղ է: Ձէնը մնից էր:

Ձիօն ըրվան կար մեանէք մը ըլլալը իսկա: Մուրդը պիրտէն պիրտ իղով շիտ հարեօստ թիւճար մը:

Կը հիծնա ձիօն ըրվան, կուրթօ: Քէչ կուրթօ, շիտ կուրթօ, կը հասնա գիղ մը:

Գիղը հասսուծը կիպը կը հարցընի զկիրաւորէն տօնը, կուրթօ հուն: Ատ իրիկօնը կիրաւորէն տօնը շիտ մարդաք կուգուն, կը նստէն, կիճըմնէն:

Եիբր պառկիլը վախթ կըննօ, կիրաւորը կաւէ էր հաւիվիր աղէն. «Ջըսսօ մուրդը օտ պառկըցէօ քէ տօնը: Էմ տօնըսնիխորթէն է, աւ մարդօս տիղ չիգօ»:

Հաւիվիրը կառնի գատ մուրդը, կը տանա եր տօնը: Հաւիվիրէն կնէլը կը ցըցնէ էր ուտա մը որ հուն պառկա: Մուրդը կը տիսնօ որ հաւիվիրէն կնէլը կանն է, ու կը տիւշըմըշ ըննօ քի եանդըմը տօն իկուծ է: Քէչ մը եիտտընի կը լսէ վըտտուց ձան: Կամուց մը կը բանու գէր դօռը և կիշի քի կէպընտէն դլէօխը փալթօ մը կօ: Կամուց մը կը կտրի փալթօս կուճկըտէն ու կը դնա զփալթօս յեր տիղը, կուրթօ տիղը կը պառկա:

Էնք պառկուծ իքէն կնէլը կը կիճընովա. «Ամա՛ն, հա՛սսիք. իրիկօնը միր հաւիվիրը իբիր միսաֆըր մը, որ զիճից սպաննից գը: Կուգուն կը ժուղվէն գիղէն մարդաքը, և կը բոնիճ գատ միսաֆըրը և կը տաննի երսպաննիլը տիղը որ սպաննիճ գը:

Մուրդը կիշէ քի բունը ֆէնա իղով, նահաղ՝ եերէ դլէօխը պըր ուրթօ իր միկ եանդըմընթունը համուր: Կիշի քի աճ փալթօս տիրը կուգօ. փալթօս հաճուծ է, ըմմը կուճկըտա չունա: Ան անտիճը կաւի քի «Եա ճամասաթ, իզին տվիք ընծէ որ ըրկը գրէց ինիմ, սունկրա կաւիցիք գէս»:

«Ասու», կաւիճ:

